Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

472

2(075)
S-52

2010

ՓՆՆԱԿԱՆ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ի 2001

Printed in Turkey

ար.
2(075)
Տ-52

ՔՆՆԱԿԱՆ ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Տ. ՄԱՀԱՊ ՓԱՀԱՆԱՑԻ
Տ. ՍԱՐԳՍԵԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Դ. ՎԻՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. Տ. ԵՍԱՅԵԱՑ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ


ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՆԵՐՍԻՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ
ԵՒ
ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

ԱՎ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ
ՕՏՈՒՆ ԳԱԲՈՒ ՀԱՏՏԷՍԻ 463 ՏԱՄԱՑ ԽԱՆ
1874

37831-ասի.



(·579)
39
20427-60

ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ

ՄԵԾԱՊԱՏԻՒ

ՃԱՆԻԿ ԱՊԱՑԻ

ԱԼԹՈՒՆԵՑԻՆ

Նորին Բարձրութեան Ամե-
նապատիւ ՊԱՏՐԻԱՐՔԻ Կ. Պո-
սոյ Տ. Տ. Ներսէս Ա. ամաքե-
ղնոյն Սրբազան Արքեպիսկոպոսի
Վարժապետեան

Ի ՄԵԾԱՐԱՆՍ

Սրբազան Հայր

Երկար ատենէ ի վեր կրօն. ժողովոյ Ս.
Հարց կարի յոյժ զգալի ըլլալով ԿՆՆԱԿԱՆ
ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ մը պէտքը՝ յուսուն Ու-
սուցչարանայ Աղգիս, ստանձնած էինք այս
ծանր և դժուարաքիրտն աշխատասիրու-
թիւնը՝ ի ղնորհս Ս. Հոգւոյն ապաստան, զոր
ահա յաջողելով ինձ յանգ հանել՝ առաջի
արկանեմ դատաստանի եկեղեցւոյ։

Ցոյժ երջանիկ կը համարիմ զանձն՝ Սրբա-
զա՛ն Հայր, որ բարեբաղդ կը գտնուիմ ի
ղնորհաւորութիւն արժանընտիր կոչման Ձերոյ
Ամենօր պատրիարքութեան ամենայն Հայոց

Printed in Turkey

Արժանապատիւ Տ. Սահակ Քահանայ
Տ. Սարգսեան

Սիրելի եղբայր ՝ի Քրիստոս ,

Քննական կրօնագիտութիւնդ կարդացի , ուրախ եմ յոյժ այս խիստ օգտակար աշխատասիրութեանդ վրայ :

Քրիստոսի Քիսուի Տեառն մերոյ Հաւատոյ ճշմարտութեան և Հայաստանեայց եկեղեցւոյ Սրբութեան դէմ այս ժամանակի յարձակողներուն պատասխանելու համար հին և նոր շատ մը հեղինակներ աչքէ անցընելով իմաստութեամբ ընտիր խորհրդածութիւններ դասակարգեր և ուղիղ արամաբանութեամբ իմաստասիրեր էք . ճոխապէս յարդարելով Ձեր կրօնագիտութիւնը քան մինչեւ ցարդ Հայաստանեայց հեղինակաժներն :

Անեղին Աստուծոյ էութեան , Մ. Երրորդութեան , Քրիստոսի Տնօրինութեանց , Սուրբ , եկեղեցւոյ և Անոր խոհրդոց և Հայաստանեայց եկեղեցւոյ ինքնօրինութեանց վրայ դրած յօդուածներդ մեծաւ ախորժա-

Թուրքիոյ օ՛չ ձեռնհասներ եղանել առաջի Սրբազնութեան Ձերոյ , այլ ի չնորհաց Ս. Հոգւոյն՝ նաեւ զարդարեր բերելով ՝ի մեծարանս երեսաց՝ զհայրիս տարժանաւոր երկանց իմոց՝ զոր խնդրելով ընդունիլ՝

Մնամ
Ամենապատիւ Սրբազնութեան
Ձերում կանխաւ չնորհակալու և
պատրաստ միշտ ՝ի ծառայել

25 Մայիս 1874 Տ. ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՑ
Յօրթագիւղ Տ. ՍԱՐԳՍԵԱՆ

Արժանապատիւ Տ. Սահակ Քահանայ
Տ. Սարգսեան

Կրօնական ժողով Ազգային վարչութեան քննեալ զկրօնագիտութիւնն Քննական զննակեալն ի Ձէնջ՝ եգիտ ամենայնիւ ըստ անտերիւր վարդապետութեան Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, և ոչ ինչ ի նմա ամենեւին ընդդէմ ուղղափառ Հաւատոց. ուստի և հրամայէ ի տպագրութիւն յուսումն Ուխտի մանկանց Եկեղեցւոյ։

6 Յունիս 1874
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս

Ի դիմաց Կրօնական ժողովոյ
Դիւան

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ
ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԱԴԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԻԶՄԻՐԼԵԱՆ

նօք կարդացի։ կը ցանկայի որ մեզի դէմ հայհոյողներու նկատմամբ այդ խիստ լեզուն գործածած չըլլայիք. զի անախորժ թուելու է մեզ. մինչեւ անոնց ցած յատակն իջնել Հայոց եկեղեցւոյ հոգեւոր բարձրութենէն, այն վեհանձնութենէն, որ մեր եկեղեցւոյ յատկանիշն և բուն ֆրիստոնէական ոգին է; և օրսն չը կրցին և չպիտի կրնան յաղթել օտարամոլից բանդագուշանքն, և իրենց դատապարտութիւնը իրենց հայհոյութեանց մէջ պիտի գըտնեն միշտ։

Ընդ լեր ի պարծանս Հայոց եկեղեցւոյ.

30 Մայիս 1874
Ժթ. Մարերբ ՌՑԻԳ
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս

ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՕԼՍՈՑ
ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՅԱՆԿ

ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ

		ԵՐԵՍ Ը
	ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ	Ա
ՄԱՍՆ Ա.	Աստուծոյ էութեան և մնայր գոյացը վրայ	1
ԳԼԽՔ Ա.	Էութիւն Աստուծոյ և Աստղագելիք նորա	1
ԳԼ. Ա.	Գոյութիւն Աստուծոյ	1
ԳԼ. Բ.	Կատարելութիւնք Աստուծոյ . .	52
ԳԼ. Գ.	Արարչագործութիւն Աստուծոյ .	36
ԳՕԴ. Ա.	Արարչութիւն Աշխարհի	36
ԳՕԴ. Բ.	Արարչութիւն Հրեշտակաց . . .	45
ԳՕԴ. Գ.	Արարչութիւն մարդոյ	47
ԳՕԴ. Դ.	Գոյութիւն և անմահութիւն մարդկային հոգւոյ	51
ԳԼ. Դ.	Նախախնամութիւն Աստուծոյ . .	60
ԳԼՔ. Բ.	Երկրորդութիւն Աստուածային անձանց	64
ԳԼ. Ա.	Հայր	70
ԳԼ. Բ.	Որդին միածին և անօրէնութիւնք նորա	71
ԳՕԴ. Ա.	Որդին Միածին	71
ՀԱՏ. Ա.	Որդւոյ՝ Աստուածային անուն, Աստուծոյ յատուկ գործք և Աստուծոյ անհաղորդական ստորոգեալք կ'ընծայուին	74
ՀԱՏ. Բ.	Աստուածային պաշտօն և երկրպագութիւն կ'ընծայուի Որդւոյ Աստուծոյ	79

ՀԱՏ· Գ· Որդին իւեն ընծայուած Աստուածային անունն, աստղագէտքն ու պաշտօնը չվերժէր, այլ կը հաստատէ 82
ՑՕԴ· Բ· Տնօրէնութիւնք Աստուածորդւոյն 85
ՀԱՏ· Ա· Ցիսուսի Քրիստոսի համար եղած կանխագուշակ մարգարէութիւններըն իրենց կատարմանը հետ միկտեղ 85
ՀԱՏ· Բ· Մարդեղութիւն Աստուածորդւոյն 125
ՊՐԱԿ· Ա· Խորհուրդ մարդեղութեան . . . 125
ՊՐԱԿ· Բ· Պաշտօն Որդւոյն Աստուծոյ . . . 127
ՊՐԱԿ· Գ· Քրիստոս անուան այլ և այլ առումներըը, և ինչ առմամբ Ցիսուսի ընծայուած ըլլալը 130
ԲԱԺ· Ա· Քրիստոս Մարգարէ 131
ԲԱԺ· Բ· Քրիստոս Քահանայ 146
ԲԱԺ· Գ· Քրիստոս Թագաւոր 149
ՀԱՏ· Գ· Տնօրինութիւնք Ցիսուսի Քրիստոսի 152
ՊՐԱԿ· Ա· Ակնկալութիւնք դալստեան Մեսիային 152
ՊՐԱԿ· Բ· Ծնունդ նորա և կեանք երկրաւոր 157
ՊՐԱԿ· Գ· Հաւատովք հրաշից Ցիսուսի Քրիստոսի և Աւետարանապատում սքանչելեաց 169
ՊՐԱԿ· Դ· Մոլորութիւնք ընդդէմ մարդեղութեան Որդւոյն Աստուծոյ . . . 184
ԳԼ· Գ· Սուրբ Հոգին 199
ՑՕԴ· Ա· Անձնաւորութիւն Սուրբ Հոգւոյն . . 199
ՑՕԴ· Բ· Սուրբ Հոգին Աստուած է 201
ՑՕԴ· Գ· Բղխումն Հոգւոյն Սրբոյ 209
ՑՕԴ· Դ· Էջք Հոգւոյն սրբոյ 'ի Ցորդանան և 'ի վերնատունն 225

ՄԱՄՆ· Բ· Յայտնութիւն 227
ԳԻՐՔ· Ա· Աստուածաշունչ Գիրք 234
ԳԼ· Ա· Ս· Գրոց Աստուածաշունչ ըլլալը . 254
ՑՕԴ· Ա· Հնախօսութիւնք Ս· Գրոց և պատմական ստուգութիւնք . . . 238
ՑՕԴ· Բ· Ս· Գրոց Հնախօսութիւնը . . . 281
ՑՕԴ· Գ· Միութիւն Ս· Գրոց 291
ՑՕԴ· Դ· Բարոյական Ս· Գրոց 295
ՑՕԴ· Ե· Վսեմութիւն վարդապետութեան Ս· Գրոց 320
ՑՕԴ· Զ· Ս· Գրոց վարդապետութեան տարածման եղանակը կամ միջոցը . 347
ԳԼ· Բ· Բաժանումնք Ս· Գրոց և որոշումնք մատենից նորա 355
ԳԼ· Գ· Ս· Գիրք կանոնք հաւատոց և բարոյից 362
ԳԻՐՔ Բ· Աւանդութիւն 375

ՄԱՍՆ Գ· Քրիստոսի Եկեղեցին և անոր խորհուրդներն ու բարեպաշտական ծէսերը 379
ԳԻՐՔ Ա· Քրիստոսի Եկեղեցին 379
ԳԼ· Ա· Նշանք ճշմարիտ Եկեղեցւոյ . . . 382
ԳԼ· Բ· Ցատկութիւնք Եկեղեցւոյ . . . 394
ԳԼ· Գ· Ճարտարապետ հիմն և գլուխ Եկեղեցւոյ 410
ԳԼ· Դ· Կառավարութիւն Եկեղեցւոյ . . 412
ԳԻՐՔ Բ· Խորհուրդք Եկեղեցւոյ 449
ԳԼ· Ա· Մկրտութիւն 450
ԳԼ· Բ· Դրոշմ 459
ԳԼ· Գ· Ապաշխարութիւն 465
ԳԼ· Դ· Հաղորդութիւն 479
ԳԼ· Ե· Պատկ Ամուսնութեան 497

Գլ· Զ· Աչեկլութիւն կամ Օծումն Միւռոնդաց 304
Գլ· Է· կարգ քահանայութեան 308
ՑԱԻԵԼՈՒԱԾ Բ· ԳՐՈՑ· Անկախութիւն Հայ· Եկեղեցւոյ 327
ԳԻՐՔ Գ· Բարեպաշտութեան ծէսք Եկեղեցւոյ 352

ՄԱՄՆ Դ· Յաւիտենական կեանք 345
ԳԻՐՔ Ա· Յարութիւն մեռելոց 345
ԳԻՐՔ Բ· Դատաստան յաւիտենից 352
Գլ· Ա· Առանձնական դատաստան . . . 357
Գլ· Բ· Բարեխոսութիւն սրբոց 365
Գլ· Գ· Աղօթք վասն ննջեցելոց 378

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Կրօնքը՝ Աստուծոյ և մարդուն մէջ տեղը եղած ուխտը կամ պայմանն է, որով անթեղի պահպանութեամբ միայն կրնայ մարդ Աստուծոյ հնորհաց մէջ յարատեւել: Ապա՝ կրօնագիտութիւնը էրքնոսկի էնթոռին մէն է, որ կ'ուսուցանէ Հաւատալ Յաստուած, Յուսալ ՚ի Նա, և Սիրել զՆա· այս է պաշտել զԱստուած:

Այս մտօք որ կրօնքը Աստուծոյ և մարդուն մէջ տեղը հաղորդակցութեան և յարաբերութեան կապն է, մարդուն արարչութեան հետ կրօնքի պաշտպանութեան ծագումն ալ հարկաւորապէս երեւան կու գայ: Ուստի և կրօնքի մը ճշմարտութեան մեծ նշաններէն մին և առաջինը՝ անոր ծագման պատմութեան՝ նախամարդէն սկսեալ անընդհատ մեզի հասած ըլլալն վաւերական է· յորում քաջայայտ և մեկին երեւնալու է անոր վարդապետութեանց, պատգամաց, բարոյականին և այլեայլ առհմանադրութեանց ծագումն՝ ժամանակը՝ տեղը եւ, առանց հակասութեան կամ երկդիմի բանից:

Կրօնքին բնութենէն ըլլալով բովանդակել իր մէջ Աստուածային ճշմարտութիւններ և դործքեր, հարկաւորապէս կը հետեւի թէ անոր մէջ պիտի գըտնուին անանկ ճշմարտութիւններ՝ որ անհասանելի են մարդկային մտաց, և զորս կարելի չէ մարդկային մտօք դանել: — Սակից ալ յառաջ կու գայ Աստուածային Յայտնութեան հարկաւորապէս կարեւորութիւնը, որով հաճեցաւ Աստուած հաւատոյ անհասանելի խորհրդոց ճշմարտութիւններն ու իր կամքը յայտնել մեզ՝ իր ընտրեալ մարդկան ձեռօք, Աստուածաշունչ գրովք:

Կրօնքի վարդապետութեանց մէջ մարդկային

մտաց անհասանելի ճշմարտութիւններ պիտի գըտնուին ըսելով՝ ըսել չեմք ուզեր թէ մարդ և անդին վարդապետութիւններ պիտի գտնուին անոր մէջ, մանաւանդ թէ ընդհակառակն՝ լոսոսոր պէտք է ըլլան, և հապաղոն հիման վրայ հաստատուած · «Չի պատ«րաստ իցէք տալ պատասխանի ամենայնի որ խընդ«րիցէ զբանն որ է վասն յուսոյն ձերոյ : » (Ա· Պետ· Գ· 15 :)

Քրիստոնէական կրօնքի վարդապետութիւնները ամենքն ալ յայտնի և մեկին են · բայց անոնցմէ ոմանք՝ թէ՛ և ըստ նկարագրին լուսաւոր են, և կատարեալ բացայայտ միտք մը ունին, այսու հանդերձ՝ անհասանելի են մեզ այս ինչ մտաւոր : Օրինակի համար, Երրորդութեան վարդապետութիւնը, որ լիովին լուսաւոր է մեզ, և կ'ըմբռնենք թէ Աստուած մէկ է և երեք անձնաւորական որոշմունք ունի իր մէջ · անանկ որ այս երեք անձանց միութիւնը մէկ Աստուածութիւն մ'է, և ո՛չ երեք պատ պատ Աստուածութիւն · բայց՝ թէ ինչ է այս երեք որոշմունքը, և ինչ անոնց միութիւնը, ասիկայ անհասանելի է մեզ: Մարդեղութեան խորհուրդը, կ'ըմբռնենք որ Որդի Աստուածային Անձը մարդկային բնութիւն առնելով մեզի նման մարդ եղաւ · բայց թէ՝ Աստուածային բնութիւնը մարդկային բնութեան հետ ինչպէս խառնեցաւ, միաւորեցաւ անշփոթ և անայլայլելի, անհասանելի է մեզ:

Կրօնքի վարդապետութեանց մէջ ասանկ անհասանելի ճշմարտութիւններ գտնուիլը պատճառ մը չկրնար ըլլալ այն ճշմարտութեանց և կրօնից Աստուածայնութեան վրայ տարակուսանելու, քանզի աշխարհս հանայն և մանաւանդ թէ տիեզերք ինքնին այսպիսի քիւր քիւրուց գաղտնիքներովլեցուն են՝ ամեն ո՛ր կողմ որ դառնաք · և սակայն այն գաղտնիքները պատճառ չեն ըլլար մեզ թերահաւատելու ամեն օր մեր

աչքին առջեւ կատարուած բնական իրողութեանց ճշմարտութեանը : Ցորենը կը դնենք հողին տակ, գիտենք որ խոնաւութենէ և ջերմութենէ արմատ և ծիլ արձակելով խոտ կ'ըլլայ, և տակաւ աճելով պտուղ կու տայ · բայց ինչպէս կ'ըլլայ : Բուսաբաններուն հարցընենք նէ՝ պատճառը բուսական զօրութիւնն է կ'ըսեն · այլ բուսական զօրութիւնն ինչ է · ահաւասիկ անհասանելի բան մը : —Ջուրը եռալով չոգի կը դառնայ ջերմութենէ, և կամ պաղ օդին՝ ջերմութիւնը դուրս տալով ցրտէն կը սառի · բայց թէ ինչպէս Ջրոյն լոյծ մարմինը նոսր չոգւոյ՝ կամ պինդ մարմնոյ (սառոյցի) կը դառնայ : — Պակկին պինդ մարմին է, և երկու մարմնոց մէջ դիմահար արդելք է · բայց թէ ինչպէս՝ նիւթապէս երկու մարմիններու մէջ տեղը անջրպետող արդելք ըլլալով տեսութեան արդելք չըլլար, տեսութեան անցք կու տայ, թափանցիկ է (1) : Ասոնց ինչպէսներուն թէ և միտք հասցընելու չենք բաւեր, բայց այնչափ անմիտ չենք կրնար ըլլալ, որ ըսենք թէ՝ որովհետեւ չենք հասկնար թէ ինչ է բուսական զօրութիւնը, ուրեմն սերմը ցանենք նէ չբուսանիր · որովհետեւ չգիտենք թէ ինչպէս և ինչ զօրութեամբ

---

(1) Ոմանք կ'ուզեն այս յայտնի ճշմարտութիւնը՝ հաստատել ջանալով թէ բնութեան մէջ գաղտնիք, խորհուրդ չկայ, և մարդոյս միտքը այս ամեն գաղտնիք կարծուած բաներուն խորը թափանցած է : Ամբարշտութեան, ամբարտաւանութեան յատուկ է այս՝ որ յայտնի ճշմարտութիւնն ալ անարգել կը յաւակնի · կ'ըսէ թէ ապակին մարմնոյն թափանցիկ ըլլալը՝ անոր ծակոտկէն ըլլալէն է, որուն ծակերէն լոյսը շառաւիղները կտրտուելով անոր անդիի կողմը գտնուած իրերն ալ կ'երեւցընեն աչաց : Անտարակոյս՝ ասիկայ բան մը դրուցած գտնուելու համար դրուցուած խօսք մ'է, ուրիշ բան չէ · այլ ողջամիտ մարդը կը պատասխանէ · Ամեն մարմին ալ ծակոտկէն է, և ապակիին ծակոտիքէն աւելի խոշոր ծակօքը ունեցող մարմիններ ալ կան, անո՞նք ինչու թափան-

ջուրը ջրոտ կը դառնայ, ուրեմն ջուրը չջրիանար, և կամ ինչպէս ջուրը՝ տաքութիւնը դուրս տալով պինդ մարմնոյ կը դառնայ, կը սառի, չգիտեմք, ուրեմն ջուրը սառոյցի չդառնար. նոյնպէս ևս թէ ինչպէս պինդ մարմին մը թափանցիկ կրնայ ըլլալ, չեմք գիտեր, ապա ուրեմն ապակին թափանցիկ չէ՝:

Կրօնքի վարդապետութեանց մէջ սառնկ խորհուրդներ, գաղտնիքներ դոնուին՝ անուղղակի ապացոյց է անոր Աստուածայնութեան. ըստ որում ողջամիտ մարդը մի և նոյն գաղտնիքները տեսնելով թէ՛ բնական իրողութեանց և թէ՛ կրօնքի վարդապետութեանց մէջ, ազատ հաւարձակ պիտի խնամատարէ՝ թէ երկուքն ալ մի և նոյն Արարչէն բղխած են. Արարչէն՝ որ ինքնին գաղտնիքներով, խորհուրդներով լի է. հետևաբար իւր գործքերն ու ճշմարտութիւնները ալ արժան է որ այնպէս ըլլան: Ապա ուրեմն հարկաւոր է որ կրօնքի մէջ սառնկ խորհուրդներ, գաղտնիքներ դոնուին. ուր մանաւանդ՝ եթէ չդտնուէին՝ իրաւացի պատճառ պիտի ունենայինք անոր Աստուածայնութեան վրայ տարակուսելու: —Անտարակոյս այս բանը դիտելով մար-

դահնար կրօնից քիչակարևոռներն ալ, մեծ ճիգ թափած են իրենց հնարած կրօնքներնին շատ մը անըմբռնելի վարդապետութիւններով լեցընելու. միայն թէ՝ որովհետև մարդիկ էին սոնք հնարողները, սոնց խորհուրդները Աստուածային խորհրդոց չէին կրնար նմանիլ: Աստուածային խորհուրդները խելքե վեր՝ անհասանելի ըլլալով խելքե դեմ չեն, մինչդեռ մարդահնար կրօնից խորհուրդները խելքե վե՞ր չեն, խելքե դե՞մ են: — Արդարև անհնաձալի է մեզ՝ թէ ինչպէս թուաբանական հաշուոյ մը գործողութիւնը՝ (ինչպէս՝ թէ որ ուզեմք $\frac{1}{3}$ կոտորակը սառնորդականի վերածել,) կրնայ յաւիտեան չարունակել, միշտ ճշմարիտ պատասխանին կամ առաջարկութեան մօտենալով, բայց երբէք ճիշդ պատասխանին չհասնելով: Այսկայ արդարև անհասանելի է մեզ, բայց խելքի դէմ չէ՝, խելքէ վեր է. այլ ուրիշ բան է՝ թէ որ ըսեմք, երկու անդամ երկու հինգ կ՚ընէ, ասիկայ ալ խելքի դէմ է, խելքէ վեր չէ՝: Այսպէս՝ առնոյն իրաց ցաւիտենական Ամենակարող Արարիչ մը ըլլալը խելքէ վեր է, բայց երկու (բարի և չար) արարիչներ դնելը, և կամ նիւթը անստեղծ, ինքնեղ և՝ի յաւիտենից ըսելը խելքի դէմ է. և ահա այս ալ Աստուածային և մարդահնար կրօնից տարբերութիւնն է:

Կրօնից Աստուածայնութեան երրեակ հզօր և անդիմադրելի փաստերն ու ապացոյցներն են՝ Հրաշք, Մարգարէութիւն և Մշտնջենաւոր տեւողութիւն նորին:

Ա. Հրաշք կ՚ըսուին այն իրողութիւնները՝ որ իրերու յաստուկ եղած բնական ներգործութենէն տարբեր արդեամբ յառաջ կուգան: ինչպէս թէ որ երեք տղայք բորբոքեալ հնոց մը նետուիք, կրակէն այրուելու տեղը զով քամիով հովահարին. (Դան. Գ. 21—51:) Մեռեալ մը ուրիշ մեռեալի մը տակորնե-

---

ցիկ չեն: Ապակիին ծակոտիքներն այնչափ մանր են՝ որ ջուրը անոնցմէ դուրս չթորիր. թէ և նուրբ լոյսը անոնցմէ անարգել կը թափանցէ. բայց ահա տեսակ մը հողե թորակ մանրներ կան, որոց ծակոտիքը ապակւոյ ծակոտիքներէն խոշոր ըլլալով, ջուրը անոնցմէ դուրս կը թորի, բայց նուրբ լոյսը ա՛ն նոցմէ ևս չանկրկիզիր, անոնցմէ չթափանցեր, և անոնց անդիի կողմը գտնուած իրերը աչաց չեն երեւիր: Ուրեմն ի՞նչպէս կ՚ըլլայ որ միայն ապակին թափանցիկ կ՚ըլլայ և թուրակ անօթը անթափանց դիմահար կ՚ըլլայ, մինչդեռ թորակին ծակոտիքը ապակիին խոշոր են. կամ բուն մեր խնդրոյն գալով, ի՞նչպէս կ՚ըլլայ որ մարմին մը երկու մարմիններուն մէջ տեղը անջրպետող արդելք ըլլալով՝ առաւելեան ալ արգելք չըլլար:

րուն վրայ իյնալով՝ անոր հետ յաւիտենական քու-
նը քնանալու տեղ ողջանայ · (Դ · Թագ · ԺԳ · 21։)
Փրոփինքով Թրջած Թաշկինակի մը հովէն հիւանդի
մը հիւանդութիւնը վատթարանալու տեղ բուժո-
նայ · (Գործ · ԺԹ · 12։) և լոկ ձայնիւ և հրամանաւ
մը դիւահար մը բժշկուի · (Մատթ · Ը · 16։) Անդա-
մալոյծ մը ոտնդակաղի , բորոտ մը սրբուի, մեռեալ
մը յառնէ, եւ․ (Մատթ · Ը · 2—5։ Թ · 2—7։ 18—26 եւ։)
Ապա յայտնի է որ հրաշքը բնութեան օրէնքէն վեր՝
Արարիչ Աստուծոյ կամեցումն ու զօրութեամբը կը
գործուի ։

Հրաշքին միայն նպատակն ըլլալով նշան և կնիք
հաստատութեան ըլլալ կրօնքի Աստուածայնու-
թեան, հարկաւոր է որ հրապարակաւ՝ առանց դե-
ղի և պատրաստութեան՝ պէտք եղած տեղը իսկոյն
գործուած ըլլայ · (ինչպէս են Աստուածային կը-
րօնքի մէջ գործուածները՝ որ 'ի Սուրբ Գիրս կը
պատմուին · և խաբա ղուրկ են այս հանգաման-
քէն սուտ կրօնից ստայօդ հրաշքները ·) և պէտք է
յատկապէս գործուած ըլլայ 'ի վկայութիւն կրօնից
ճշմարտութեան, Առաքելութեան կամ վարդապե-
տութեան մը Աստուածայնութիւնը հաստատելու
համար ։ ինչպէս Յիսուս իւր Աստուածային Առա-
քելութիւնը հաստատելու համար՝ Ղազարոսը 'ի մե-
ռելոց յարոյց · (Յովհ · ԺԱ · 42—44։) Մեղաց թո-
ղութիւն տալու իշխանութիւն ունենալը ցուցընե-
լու համար՝ անդամալոյծը ողջացուց · (Մատթ · Թ · 6։)
և իւր՝ Աստուած և Որդի Աստուծոյ ըլլալուն հա-
ւատալ չուզող Հրէից ըսաւ · «Եթէ ոչ գործեմ ըզ
գործս Հօր իմոյ , մի՛ հաւատայք ինձ · ապա թէ
գործեմ, թէ՛ և ինձ ո՛չ հաւատայք, սակայն գոր-
ծոցն հաւատացէ՛ք · զի գիտասջիք և ծանիջիք՝ եթէ
Հայր յիս է , և ես 'ի Հայր » · (Յովհ · Ժ · 37—38։)
Մարգարէից և Առաքելոց գործած հրաշքներն ալ

անոնց Աստուծմէ խրկուած ըլլալնուն վաւերական-
ներն են ։

Քրիստոնէական կրօնից 'ի հաստատութիւն
գործուած հրաշքները 'ի Հրէից և 'ի Հեթանոսաց
վկայուած ըլլալով, (զորմէ տե՛ս առա 'ի գլուխն
Հաւատոյ Հրաշից) հաստատութեանց պէտք չունին ։
Ասոնք չկրնալով Քրիստոսի հրաշից ճշմարտութիւնն
ուրանալ , կախարդութեան և չար ոգւոյն՝ Բէեղ-
զեբուղի կու տային այն զօրութիւնը՝ որով Քրիս-
տոս կ'սքանչելագործէր · և որուն անկարելի ըլլալը
Քրիստոս ինքնին ցուցուց · (Ղուկ · ԺԱ · 14—26 ։)
իսկ հիմայ ամենևին հարկ մը չկայ ապացուցա-
նելու համար՝ թէ կախարդութիւն ըսուած արուես-
տակութեամբ անհնարին էր որ այնպիսի սքանչե-
լիքներ գործուէին ։ —փարաւոնի կախարդներն ալ՝
որ Մովսիսի հետ չափուելու ելեր էին նախանձ-
ընդդէմ սքանչելագործելու , տկարացան 'ի նոյն ,
և վկայեցին անկեղծութեամբ Մովսիսի հրաշից հա-
մար՝ թէ «Մատն Աստուծոյ է այդ » ։ (Ելից · Ը · 18
—19 ։) Ապա ուրեմն այն հրաշքները որ ճշմարտա-
պէս գործուեցան Քրիստոնէական կրօնքին հաս-
տատութեանը համար , կը վկայեն թէ Այն կրօնքը
Աստուածային է և ճշմարիտ ։

Բ · Մարգարէութիւնն է կանխաւ ծանուցանել
ապագային մէջ ըլլալիք բաները · անանկ բաներ՝ ո-
րոց կատարուելու ըլլալուն կարելիութիւնը և հա-
ւանականութիւնը բնական նշանէ մը մակաբերել
կամ գուշակել անհնար ըլլայ ։ Ասիկայ ալ հրաշքի
պէս Աստուծոյ ամենակարող զօրութեամբը միայն
ըլլալ կարելի ըլլալով, ըստ որում բացարձակապէս
անզօր է մարդկային միտքն ապագան տեսնելու ,
կրօնքի Աստուածայնութեան մեծ վկայութիւն և
հաստատութիւն մ'է , և 'ի նոյն կը տրուի ։ Աստ-
ուածային կրօնքի մարգարէութիւնները այս հան-

գամանքներով կը փայլին: — Հրէից եօթանասնամեայ գերութեան առեն Դանիէլի մարգարէանալը, թէ Հրէայք գերութենէ պիտի դառնան, քաղաքնին ու տաճարնին պիտի վերաշինեն, երբ ընկճեալ նկուն վիճակի մէջ էին՝ անոյա ամենեւին օգնական նուիթենէ, թէ տաճարնին չինելու սկսելէն չորս հարիւր ինսուն տարի ետքը Մեսիան պիտի գայ և պիտի մեռնի, Անոր պատարագաւորը Մովսիսական պատարագները պիտի դադրին 'ի սպառ, տաճարը անկանդնելի պիտի կործանի ևն. ասոնց կատարման հաւանականութիւնը անկարելի էր դուշակել, և անհնարին կ'երեւնային՝ իրերու բնական բերմանը նայելով. մանաւանդ տաճարին կործանման անկանդնելութիւնը, որ հիմայ ալ մարգարէութիւն է մեզ համար: (Դանիէլ. Թ. 23—27: Տե՛ս ևս 'ի գլուխն Բէնսոս Մարթէնէ:)—Եսայի մարգարէին Բաբելոնի կործանման համար Կիւրոսի, Պարսից և Մարաց վրայ մարգարէանալը, երբ Կիւրոս հարիւրաւոր տարիներու կարօտ էր որ ծնանէր, և Պարսից ազգը աննշան նկուն ազգ մ'էր Մարաց լուծին տակ ճնշուած. բնա՛ւ ամենեւին հաւանականութեան նշոյլ մ'ալ չկար՝ որ այն չքոտի ժողովուրդը այնքան հարհակալ կրնար ըլլալ. բայց Եսայի՝ անունովը կը կանչէ Կիւրոսը. հաւկըցնելով ալ որ այս Կիւրոս անունը իրեն պատուոյ անունն է և ո՛չ բուն անունը. մանրամասն կը տեղեկագրէ անոր ընելու աշխարհակալութիւնները. կ'ըսէ ալ որ Մարաց ազգն ևս Պարսից օգնականը պիտի ըլլար առ այն. թէ ջրերը՝ գետը պիտի կտրէր, պղնձի դռնները և երկաթի նիգերը անոր առջեւ բաց պիտի մնային, իբրահութեան գիշեր մը կերուխտումի առեն Բաբելոն քաղաքը պիտի առնուէր ևն. և անանկ ալ եղաւ կատարուեցաւ. Բաղտասարայ Մանէ, Թեկէղ, Փարէս գիշերը այս ամենը 'ի գլուխ հանեց Կիւրոս. (Տե՛ս

'ի Հնախօս. Ռօլէնէ, հատ. Ա. Գր. Դ. Գլ. Ա. պր. Բ. յօդ. Ա. Բ. Գ. Դ. եր. 417—435:) և մարգարէութենէն գիր մը գեաինը չինկաւ: ✕

Տօքթըր Ներսէն Ամերիկացի անաստուած բժիշկը՝ Քրիստոնէութեան դառնալէն ետքը Անհաւատութեան դէմ գիրք մը գրած ունի. յորում այսպէս կը գրէ ընդդէմ անհաւատից խնամատարելով Բաբելոնի առաջին և վերջին անկանգնելի կործանման վրայ. «Գիտութիւնը ծաղկած երեւելի նահանգի մը մէջ, ուր որ խնամատուն և տաղանդի տէր մարդիկ շատ կային, բարձրագոյն աստենի անդամ երեւելի անձին մէկը անդամ մը իր մէկ Քրիստոնեայ բարեկամին ըսաւ. «Լսած եմ, որ Քրիստո«նեայք Բաբելոնի կործանմանը վրայով եղած մար«գարէութիւնը՝ անոր հեղինակին ապառնի կամ «ըղձալիք բաներըը տեսած ըլլալուն իբրև փաստ կամ «վկայութիւն յառաջ բերած են: Ես քնաւ բանի «տեղ չեմ դներ ատիկայ: Ո՛ր և իցէ մարդ կրնայ «կարծեօք գանել ու դուշակել մէկ հպարտ և ամբարտաւան քաղաքի մը ապառնի կործանումը. և «ետոյ կրնայ ըլլալ որ իրերուն ընդհանրապէս յե«ղափոխութեան ենթակայ ըլլալովը՝ գինքը ճշմա«րիտ հանէ և ըսածը կատարուի: Ապահանացու«բաններուն կործանումը կանխագուշակելու համար «ներշնչելութիւն հարկաւոր չէ. . . . :

«Բայց կ'երեւնար թէ այս անձը երբէք խորհած չէր այսպիսի տարբերութեան մը վրայ՝ թէ մասնաւոր պարագայներով ըսուած կանխատացութիւն մը ուրիշ բան է, և առանց մասնաւորելու ընդհանուր դուշակութիւն մը ուրիշ բան է: Առանց պարագայներու՝ լոկ ապառնի դիպուածի վրայով եղած մարգարէութեանց, (ինչպէս հեթանոսաց պատգամները,) և ժամանակին ու կերպին վրայով պարագայիւք խօսուած մարգարէութեանց մէջ

տի յիշեմք։ «Մարդ արէութիւնները, (կ'ըսեն անոնք «որ կը վախնան հաւատալու անոնց,) կրնայ ըլլալ որ «յիշեալ դէպքերը պատահելէն վերջը գրուած ըլ«լան»։ Ասիկայ առ այժմ մեզի դժուարութիւն մը չիրնար տալ. քանզի մենք հոս չառաջ պիտի բերեմք միայն այն մարդարէութիւնները, որոնց համար անհաւատ հեղինակներէ կրնամք դիւրութեամբ վկայութիւն բերել նոյն իսկ անոնց կատարումնեբէն շատ դարեր առաջ եղած ըլլալնուն։ Երբոր բանը անհաւատ հեղինակներու վկայութեամբը կը հաստատեմք, Սկեպտիկեան ոգի կրող երիտասարդը առիթ պիտի չունենայ ըսածներուս վրայ երկբայելու, ու պիտի չդժկամակի խնդրոյն մէջ իրեն կողմնական եղող երեւելի անձանց վկայութիւնն ընդունելու։ Կան զանազան կերպեր, որոնցմով շատ դիւրաւ կրնայ ցուցուիլ ու հաստատուիլ մարդարէութեան մը ճիշդ ժամանակը. բայց հոս մենք աս կարճ ու դիւրին ընթացքը պիտի բռնենք, պիտի չառաջ չբերենք անանկ մարդարէութիւն մը, որուն խօսուած ժամանակին ու կատարմանը մէջ շատ տարիներ ու դարեր անցած ըլլալը նշանաւոր ու իսնաւուն հակառակորդաց վկայութեամբը չենք կրնար հաստատել։ Օրինակի համար, Քրիստոնէութեան ամենէն ոխերիմ թշնամին՝ Պորփիւրոս՝ կարծեմ առաջինն եղաւ այս առարկութիւնը յառաջ բերողներուն մէջ։ Չին կռապաշտներուն մէջ եղած մարդարէութիւններէն մէկ քանի հատը այնքան պարզ ու բացայայտ էին, որ կ'երեւի թէ շատ նեղը ձգեցին զինքը, անանկ որ պարտաւորեցաւ ըսել թէ մարդարէութեանց դիրքերը իրենց կատարումէն ետքը գրուած ըլլալու են։ Իր ձեռքը եղած Ասուածաշունչը՝ Եօթանասնից կոչուած մեծնուն Ծանօթ Ցունարէն թարգմանութիւնն էր. ան նոյն թարգմանութիւնը, յորմէ Տէրն մեր և

տեղի եղած տարբերութիւնը պարտիմք աղէկ նըկատել և որոշել, եթէ ոչ այսպիսի բաներու մէջ մեր ըրած դատումը անտեղի և տղայական կ'ըլլայ։ Թէ որ մարդու մը մահը յառաջնանել դուշակելու ըլլաս, ժամանակը պիտի կատարէ ըրած մարգարէութիւնդ, թէ և դուն երբէ՛ք մարգարէական չնորհք ընդունած չըլլաս։ Բայց, եթէ հանարձակիս երեք անսուտ պարագայներ ալ անոր վրայ աւելցընել, կանխատես ըլլալու համբաւդ անմիջապէս խայտառակելու վտանգին մէջ պիտի ձգես։

«Ասուածաշունչ Գրոց մէջ եղած մարգարէութիւնները՝ ամեն դարու մէջ եղած բոլոր հեթանոսական կամ կեղծ դուշակութիւններէն որոշող պարզ նշանը սա է, որ առաջինը ո՛չ թէ միայն երեք կամ վեց մասնաւոր պարագայներ ունի, այլ և ընդհանրապէս անոնցմէ շատ աւելի, ու միանգամայն մարդկային իմաստութեան սեսութեանն ու դատմանը մէջ անոնց կատարուիլը բոլորովին անհաւանական։ Վերոյիշեալ երեւելի առենակային յիշած մարգարէութեանը հետ ասանկերկուքէն աւելի մասնաւոր պարագայներ կան, որոց շատերը՝ մարդոց իրենուն վրայ ունեցած ընդհանուր հանարումին նայելով, ամենեւին հաւանական չէր որ պատահէին։ Այս մարգարէութիւնը իր պարագայներովը ուշադրութեամբ քննելու սկսելէն առաջ, աղէկ է որ հոս յիշեմք այն հնարած փախուստի ճամբանին, որ թէպէտ այժմեան դիտուն անհաւատները չեն դործածեր, բայց տակաւին անուաներուն մէջ ընդհանուր է։ Կը յուսանք թէ իսնաւուն ներողամիտ պիտի ըլլան արդէն անտեղութիւնը գիտցուած բան մը՝ համբակ և անուս անհաւատներուն բացատրելու համար հոս յառաջ բերելուս։ Այսիկայ ճշմարտութեան ձեռքէն փախչիլ ուղողներուն այն հին և ընդհանուր ապաստանարանն է որ մենք հիմայ սի-

իւր Ա. Պաւղեանները վկայութիւն կը բերէին. ու նոյնը յառուկ թարգմանուած էր Աղեքսանդրիայի գրատանը համար, և երկար ժամանակէ՝ի վեր դրուած էր անոր մէջ։ Թէ և այս Սրբազան Մատեանին հրատարակումը՝ նոյն իսկ իսնատուն անհատին անոր դէմ գրած ժամանակէն անդին չանցուներով ճիշդ նոյն ժամանակն եղած ալ սեպելիք, այն ալ մեր հիմակուան նպատակին բաւական կ՚ըլլայ։ Հազար հինգ հարիւր տարի եղած է Պորփիւրոսի մահը. և այն մարդարէից կանխադուշակած դէպքերը, որ մենք հիմա պիտի յառաջ բերենք, իր մահէն երեք հարիւրէն մինչև եօթը և ինը հարիւր և հազար հարիւր տարի եղքը պատահած բաներ են։ Եւ դարձեալ Պիպլին անուն հրաշակերտ անհատը՝ Հին Կտակարանին յիշեալ ցունարէն թարգմանութեանը վրայ խօսելով՝ պարտաւանօքս ծաղրաբանելով մը կ՚ըսէ թէ Եգիպտոսի Թագաւորը զանիկայ Հրէաստանի գիւղերէն հաւաքեց։ Բայց իւր յիշած Եգիպտոսի Թագաւորը Բրիտաոսէն երեք հարիւր տարի առաջ էր։

«Արդ վերոյիշեալ անտեղի աւարկութեան հատածողները թէ որ չեն վախնար և չեն երկբայիր անհատաութեան այս երեւելի ախոյեանին վկայութիւնը ընդունելու, ու կասկած մը չունին անոր Աստուածաշունչին կողմնապահ վկայ մը ըլլալուն վրայ, մեր հիմայ յառաջ բերելիք ու ցուցնելիք դէպքերը Հին Կտակարանին ցունարէնի Թարգմանութենէն երեք հարիւրէն մինչեւ եօթը և ինը հարիւր և հազար հարիւր և կամ երկու հազար հարիւր տարի եղքը պատահած ու կատարուած բաներ են։ Մենք այսչափ միայն կրնանք ըսել հոս անհամ հոդի ունեցող դէպքերէն ընթերցողացդ, որ եթէ այս մեր տակաւ ինչ ըսածներէն աւելի բան մը չկրնայինք ալ ըսել առջեւնիս եղած նիւ-

թին վրայ, տակաւին այսքանը բաւական պիտի ըլլայ ձեզ վարանման ու երկբայութեան մէջ ձգելու այն ձեր անհիմն ապատամնարանին հաստատութեանը և ապահովութեանը վրայ։ Չէ՞ թէ որ միտքերնիդ դրած ու որոշած էք ճշմարտութեան զօրութենէն խոյս տալու համար թաքչիլ այդ խոխոռ տեղը, ուր որ անհատատից նեաւերն անդամ ձեզ կը խոցեն, այն ժամանակը ազատ էք հոն երթալու, և ուզածնուդ չափ անոր մէջ ճնալու։ Նախ և առաջ պիտի քննենք վերոյիշեալ երեւելի քաղաքագէտին յառաջ բերած մարդարէութիւնը, այն է Բարիլոնի անկումը, որով կ՚ուզէր ցուցընել թէ ապառնի կատարումը՝ Աստուածային ներշնչելութեամբ խօսուած ըլլալուն զօրաւոր վկայ մը չկրնար ըլլալ։ Հոս արդյ ընթերցողաց մտադրութիւնը կը հրաւիրեմք Հին կտակարանին այլեւայլ գիրքերուն, և կը խնդրեմք որ աղէկ մը դիտեն թէ իրաքանչիւր մարդարէ ինչպէս նկարագրած են այս դէպքը։ Պատերազմին բանակը առաջնորդող զօրավարին անունը, (իր ծնանելէն երկու հարիւր չիսուն տարի յառաջ,) յարձակման կերպը, պատճարեալներուն վիճակը և վարմունքը, հոն յաղթողներուն գանձեր գտնելիքնին եւ. բոլոր աս բաները մանաւորիւ խօսուած են մարդարէից բերնով։ Բայց առ այժմ մեր նպատակը մարդարէութեանց միայն այն մասերուն վրայ խօսիլ է, որ Հին Կտակարանին ցունարէնի Թարգմանութենէն եղքը կատարուեցան։

«Եսայեայ. ԺԳ. 20—22։ «Հոն յաւիտեան բնա«կութիւն պիտի չըլլայ, ու ազգէ ազգ մարդ պի«տի չբնակի. ու հոն Արաբացիք վրան պիտի չը«կանգնեն, և հովիւները իրենց հօտը հոն պիտի «չպառկեցընեն։ Հապա հոն անապատին վայրե«նի գազանները պիտի պառկին, ու անոնց տու-

«ներըը ուռնացող անասուններով պիտի լեցուին. և
«հոն ջայլամները պիտի բնակին, ու հոն այծամարդ-
«ներ պիտի կաքաւեն: Եւ անոր պալատներուն մէ-
«ջը բորենիները, ու զբօսանաց տուներուն մէջը
«ճագարներ պիտի կանչուըտուեն ևս:»

« 1· Պարտիմք աղէկ դիտել, որ ասանկ մասնաւոր պարագայիւք խօսուած անյայտութիւն մը երբէք որ և իցէ քաղաքի մը պատահելիքը աւելնալու հաւանական չէր: Անանկ կարծիք մը աւելնալին պիտի չընեւմք Լօնտօն կամ Փարիզ քաղաքներուն վրայով, (թէ որ այս քաղաքները կործանելու ըլլան,) թէ անոնց մէջ ալ բնաւ մարդ պիտի չըլլնալի, քանի որ այն բարձրակառոյց պալատները և հաստաշէն բնակարանները անոնց մէջ կան, ու բոնք գրեթէ բոլի կը հրաւիրեն անբնակարան թափառականները իրենց անուշիկ պատսպարաններուն մէջ: Դարեր անցան գացին վերը յիշուած սպառնալիքները Արբազան Մատենից մէջ արձանագրուելէն ետքը: Բաբելոն՝ կործանում կործանումի վրայ, հարուած հարուածի վրայ ընդունեց· սակայն ասանկայով իր փողոցները ասկի անբնակ չեղան: Պատմութիւնը կ'իմացընէ մեզ որ ժամանակէ մը ետքը Սելևկիա ու Թեսիփոն քաղաքները չինուեցան: Ասոր Բաբելոնի ղեղմ և հեշտասէր աղնուականները պէտք էր հետեւէին իրենց ինքնակալին ու իր պալատականներուն, ու չուէին անոնց հետ դէպ'ի նորակառոյց քաղաքները: Թողուցին իրենց պալատներն ու գացին· ու այսպէս՝ ասանկ զարմանալի և անօրինակ կերպով մը իրենց հոյակապ բնակարաններն անբնակ մնացին: Այս ղեղմութեան նուիրեալ իշխանութեան և բաղդի տէր աղնուական կանաց ծառաները և իրենց գործակալները նմանապէս Թողուցին քաղաքը ու իրենց տիրոջը ետեւէն գացին, որ անոնց հռչակաւոր խնճոյքները տես-

նեն և կամ մասնակցին: Որոնց նաև հետեւեցան առուտուրի տէր եղողներն ալ, և այսպէս Բաբելոն անվախճան ու կատարեալ լռութեան մէջ թաղուեցաւ:

« 2· Արդ՝ միթէ հարկաւ կը հետեւի՞ թէ այն հոյակապ շէնքերը, որ քանի մը նկատումներով այժմեան մեր տեսածներէն աւելի՞ փառաւոր էին, վայրի գազաններուն բնակարան ըլլան: Ո՛չ· բանին բնական արդիւնքը սա չէր· քանի որչափ ալ որ բնակիչներուն մեծագոյն մասը Թողուց քաղաքը ու գնաց, տակաւին աղքատիկ ժողովրգոց մէկ մասը հոն մնաց, որոնք կրնային բանականութենէ զուրկ անդրան արարածներուն վրայ իշխել: Բայց բանին ինտոր ըլլալը տեսնելու համար, աւելի յառաջ երթալու եւք դէպքերուն ընթացքը քիչ նկատելով: Այս բանը Տէրոջը բերանը խօսած էր, և արդեօք կրնա՞ր չկատարուիլ: Այս բանին վրայ խել մը ժամանակ անցնելէն ետքը, ինքնակալին մէկը ուզեց աւելի գեղեցիկ ու փառաւոր որսարան մը հաստատել· և այս խորհրդով նորոգեց հին քաղաքին պարիսպը ու անիկայ իրեն որսի հրապարակ ըրաւ: Ան առեն անոնց տուները ռնացող անասուններով լեցուեցան, ջայլամները հոն բնակեցան, ու անոր պարիսպներուն մէջ բորենիներ, ու զբօսանաց տուներուն մէջ ճագարներ զետեղեցան:

« 3· Բայց բանը ասով ալ չէր լմննար· անանկ յուսացուելու չ'էր որ այս տուները միշտ անբնակեալ պիտի մնային, և անանկ ալ եղաւ: Բաբելոնին մինչև վերջը թագաւորական որսարան մնալն ալ յուսացուելու չէր, ինչպէս որ անանկ ալ եղաւ: Բաբելոն քաղաքը բարերար ու ընդարձակ դաշտի մը վրայ չինուած էր· ուստի երբ որ անիկայ այսպէս տնայի աւերակ դարձաւ, արդեօք հաւանական չէ՞ր որ հովիւներն իրենց հօտերը վարէին՝

«պիտի չըլլայ, ու ազդէ ազգ մարդ պիտի չբնակի»։ Պատասխան. Աստուած կրնար։ Ան ասանկ ըսաւ, և ասանկ ալ եղաւ.....։

«Յայտնութեան գրքին երկրորդ և երրորդ գլուխներուն մէջ կը կարդանք Յովհաննէս սրբազան Աստքելոյն նամակները, որոնք Փրկչին հրամանաւը Փոքր Ասիոյ մէջ գտնուած եօթն եկեղեցիներուն գրուած էին։ Ըսունցմով իւրաքանչիւր եկեղեցւոյ զատ զատ պատգամներ ու զատ ապառնալիք և կամ խոստումնքներ եղած են։ Եւ այս մարգարէական ազդարարութիւնները թէպէտեւ երկար ժամանակ վերջը ըլլալու բաներուս կը վերաբերէին, բայց ապառնի և խիստ երկար ժամանակէ ետքը ամենքն ալ ճշդիւ կատարուեցան։ Անոնք որ ժամանակագրութեան վրայով բնաւ հմտութիւն չունին, մարգարէութեանց վրայով խօսք եղած առենը սովորաբար սա խօսքը կ'ըսեն. «Գուցէ ատիկայ գրուած է այդ դիպուածը ըլլալէն վերջը»։ Ասանկներուն պատասխան հոս սա կը յիշեմք թէ՝ մեր յառաջ բերելու դիպուածը Յայտնութեան Գրքին հրատարակուելէն ինը հարիւր տարի ետքը պատահած բան է, որ ատեն Աւետարանին թշնամիները արդէն շատ բաներ գրած էին անոր դէմ, և անոր բարեկամ ճշմարտութիւնը սիրողներն ալ շատ ջատագովութիւններ անոր կողմանէ։ Եւ որովհետև չկրնար ըլլալ որ Գիրք մը դեռ՝ի լոյս չընծայուած, անոր պարունակած նիւթերուն վրայ երկայն բարակ մէճ և քննութիւն ըլլայ. վասնորոյ այս բանին մէջ ո՛ր և իցէ անձ միւնչեւ անգամ ամենատգէտ մէկը, շատ դիւրաւ կրնայ հասկընալ ու որոշել մարգարէութեան հրատարակուած ճիշդ ժամանակը և անոր կատարման թուականը. համոզիչ փաստ մը պիտի ըլլայ իւր մտքին մէջ, թէ ինը հարիւր տարի վէճ ու հակառակութեան տակ եղող գիրք մը ան-

այն գէղեցիկ ու գալարուտ դաշտին մէջ զանոնք կերակրելու համար։ Անոտարակոյս անանկ պիտի ընէին, թէ որ յաւիտենական Աստուածը յառաջնանէ Ոչ ըսած ըլլար։ Բայց աշտարականներն ալ իսկ գերբոր իսկան կործանեցան, անոնց աստրերկրեայ շէնարաններն և գեղեցիկ այրերը՝ վարդներուն գայլերուն, առիւծներուն և բորենիներուն անանկ գէղեցիկ ու յարմար բնակարաններ եղան, որ ճամբորդները կը հաստատեն թէ պինտ գժար ու գրեթէ անհնար գործ մըն է որ հովիւ մը ու իր հօտը երբէք կարենան այն կողմերը ոտք կոխել։

«4. Բայց Աբրահամիք որ սովոր են խուսի խուսի տեղէ տեղ չուել, ու կը բերկրին իրենց նիւզակները չարժելով, և ամենեւին չեն ատրատիր առիւծին կատաղի ձայնէն, անոտարակոյս իրենց վրանները պիտի կանգնէին Բաբիլոնի աւերակներուն վրայ, ինչպէս որ սովորաբար կը ճամբորդեն արեւելեան երկրին անապատներուն մէջ։ Եւ Աբրահամիք այս բանը անշուշտ ասանկ կ'ընէին ինքզինքնին անտառաբնակ վայրենիներուն կատաղութենէն պաշտպանելու համար. բայց այս երկնային ապառնալեօք կանխագուշակեալ աւերակներուն տակը այնքան թունաւոր ու մահացուցիչ գեղուններ, օձեր և կարիճներ կային, որ մարդ չէր կրնար իւր վրանին տակ՝ ապահով աչքերը գոցել և հանգչիլ։

«5. Բայց ժամանակ անցնելով կրնային այդ գեղեցիկ այրերը և Թագուն տեղերը բոլորովին անհետ ըլլալ. և այն աւերակաց չեզջերն ալ քայքայուիլ և բնաջինջ ըլլալ։ Եւ քանի՛ որ Բաբիլոն հարուստ և բարեբեր դաշտի մը մէջ էր, որ չէր կրնար Պաղեստինու բլուրներուն պէս անբերրի անապատ մը դառնալ. ուստի հաւանական չէ՞ր որ կրկին ծաղկեր ու բնակութիւն հաստատուէր անոր մէջ։ Ո՞վ կրնար հաւաքձակիլը ըսել, «Հոն յաւիտեան բնակութիւն

երկրայ այն ժամանակէն հրատարակուած ըլլալու է ։ Այս եօթը մարգարէական պատգամներուն կատարմանը վրայ խօսած ատենին՝ Քրիստոնեայ հեղինակներուն վրայ կողմնասիրութեան կասկած ունեցողներուն երկրայութիւն չտալու համար ըստ մեծի մասին անհաւատ հեղինակներէ վկայութիւն պիտի բերենք ։ Ասանկներուն վկայութեանը վրայ հազիւ թէ տարակոյս մը պիտի ըլլայ որ անոնք Սըրբազան Մատեանին կողմէն դրած ըլլան , երբոր սրտով կ'ատէին անոր անունն անգամ, և միշտ դէմ գրեցին և ուրացան անոր Աստուածային հեղինակութիւնը , և ծաղր կ'ընէին անոր վարդապետութիւնները ։ Տէրն մեր կը պատուիրէ Յովհաննէսին որ Եփեսացւոց եկեղեցւոյն գրէ ․ Միտքդ բեր «հիմայ ուսկից որ ինկար , ու ապաշխարէ , և քու «առջի գործքերդ ըրէ՛․ եթէ ոչ՝ շուտով կու գամ, «ու քու աշտանակդ իր տեղէն պիտի շարժեմ՝ թէ «որ չապաշխարես » ։

«Ծագումն և կործանումն Հռոմմայ կայսերութեան ըսուած գրքին հեղինակը՝ Կիպպոն , որ Աստուածաշունչին ամենաերեւելի ու անհաշտ թշնամիներէն մէկն էր , ու կեանքին մեծ մասը անոր դէմ գրելով անցուց , կ'ըսէ ․ «Եփեսոս քաղաքին կործանելովը՝ Քրիստոնեայք Յայտնութեան գրքին մէջ «յիշուած առաջին հրեշտակին անկումը և առաջին «աշտանակին բարձումը ողբացին» ։ Ասիկայ , կ'ըսէ , կատարուեցաւ Յաճկաց ձեռքովը , Յամի Տեառն 1312։ Եւ այս օրուան օրս Եփեսոսի մէջ մէկ եղական անձ մը չկայ Քրիստոնեայ անուն կրող․ ահա այսպէս հիմէն շարժած է անոր աշտանակը ։

«Դարձեալ․ գրէ՛, կ'ըսէ ․ Փիլադելփիացւոց Եկեղեցւոյն հրեշտակին ․ «Ինչո՛ւ որ իմ համբերութեանս խօսքը պահեցիր ․ ես ալ քեզի պիտի պահեմ քու փորձութեանդ ատենը , որ պատրաստ

«է գալու բոլոր աշխարհի վրայ՝ երկրիս երեսի բը«լոր բնակիչները փորձելու համար» ։ Արդարև բըլոր Եկեղեցիներուն՝ մեծ ու նշանաւոր փորձութեան ատեն մըն էր ։ Եւ նոյն վերոյիշեալ անհաւատ հեղինակը կը վկայէ թէ մանաւանդ Փիլադելփիայի համար բնա՛ւ հաւանական չէր երեւնար որ այս փորձութենէն ազատ պիտի մնար ։ Ու նոյն իսկ իւր խօսքերէն կ'երեւի որ այս ակամայ ըրած պատմութեանը վրայ գրեթէ ինքն ալ պլլայած ու բաքանչացած էր ։ Եւ տե՛ս թուն իր խօսքերը ․ «Միայն Փիլադելփիա ազատ մնաց , առաջուց մարգարէութիւն եղած ըլլալովը՝ կամ քաջասրտութիւնով ։ Փիլադելփիա տակաւին կանգնած է իբրև սիւն մը աւերակաց շրջանակին մէջ ։

«Լաւոդիկեայի Եկեղեցւոյն ալ այսպէս կ'ըսէ Տէրը ․ «Բայց դուն գաղջ ես , ու ո՛չ տաք՝ ո՛չ ալ պաղ․ քեզ բերնէս դուրս փսխելու վրայ եմ» ։ Աս խօսքերը Տէրոջը այս Եկեղեցւոյն վրայ ունեցած զըզուանքին աստիճանը կը յայտնեն ․ մեզի այնպէս կ'երեւի թէ վերջին աստիճան զզուանք ցուցընելու համար , աւելի զօրաւոր խօսք ու բառ մը չէր կրնար գործածուիլ։ Եւ հիմայ տե՛ս այս կանխագուշակ սպառնալիքին կատարմանը վրայով անհաւատ պատմիչին տուած վկայութիւնն ու գործածած բառերը։ «Լաւոդիկեայի մէջ եղած կրկէսը և երեք հոյակապ թատրոնները՝ կ'ըսէ , հիմայ գայլերու և աղուէսներու բնակարան եղած են» ։

«Նոյնպէս՝ նշանաւոր և մտադրութեան արժանի է Զմիւռնիոյ Եկեղեցւոյն եղած պատգամը և անոր ճշդիւ կատարումը ։ «Գրէ՛ » , կը հրամայէ Տէրը իր ծառային , «Զմիւռնացւոց եկեղեցւոյն հրեշտա«կին ․ Ահա՛ բանսարկուն ձեզմէ մէկ քանիները «բանտը ձգելու վրայ է , որ փորձուիք , և տասն օր «նեղութիւն պիտի ունենաք ․ մինչև 'ի մահ հաւա-

«տարիք եղիր, որ քեզի կենայց պատկը պիտի տամ»: Սուրբ Գիրց մէջ մարդարէական ոճով կանխատեսուած կ՚գտնենք պատահելու ժամանակները հասար գործածուած օրերը տարիներ կը նշանակեն. փոխանակ ըսելու այսքան տարի՝ կ՚ըսէ այսքան օր: Դիոկղետիանոս կայսեր ժամանակը եղած անդութ և արիւնահեղ հալածանքը, որ տասը տարի տեւեց, գրեթէ Եկեղեցւոյն պատմութեանց հնուստ անձ մը չկայ որ ուրանայ կամ չվկայէ. անանկ որ բնաւ հարկ մը չկայ հոս երկար բարակ պատմութիւններէ վկայութիւններ յառաջ բերելու: Այս դառն հալածանքը մէջ Զմիւռնիոյ Եկեղեցին ալ բաժին ունեցաւ և շատ մեծ նեղութիւն կրեց: Եւ ահա նոյն բանը երկայն ժամանակ առաջ Տէրը խնայ տուած էր անոր իւր ծառային բերնովը»: ✕

Շրէյց միշտ լքեալ, միշտ հարուածեալ, հարըստահարեալ, միշտ վայրագաբար՝ յամենայն ազգս գիտուցան՝ և սակաւաւոր ըլլալու, բայց երբէք չհատնելու և մինչև աշխարհի վերջը մնալու մարգարէութիւնը, (Եբեր. Լ. 11—24, Ժզ. 28,) որուն գրեթէ բառ առ բառ կատարումը ամեն օր աչքերնուս առջեւ կը տեսնենք. «Քնդ քեզ եմ ես՝ ասէ Տէր՝ ի փրկել զքեզ. զի արարից ես զկատարած ի մէջ ազգաց, յորս ցրուեցից զքեզ անդր. և քեզ ոչ ապրիցէ վախճան. և խրատեցից զքեզ իրաւամբք, և քաւելով ոչ քաւեցից զքեզ: Այսպէս ասէ Տէր, սաստկացուցի զբեկումն քո, և ցաւագին են հարուածք քո, ոչ ոք է որ դատի զդատաստանս քո. ի ցաւս քո բժշկեցար, և օգուտ ոչ եղեւ քեզ. ամենայն բարեկամք քո մոռացան զքեզ, և ոչ հարցանիցեն զքէն. զի զհարուածս թշնամւոյ հարի զքեզ՝ խրատ սաստիկ. վասն ամենայն անիրաւութեանց քոց, բազմացան մեղք քո: Ձի՞ գոչես ի վերայ բեկման քոյ. սաիայն ոչ արարից քեզ վախճան. բուռն

են ցաւք քո. վասն բազմութեան անօրէնութեան քոյ սաստկացան. մեղք քո արարին քեզ զայդ»: (Եբեր. Լ. 11—15:) Քրիստոնէութեան յաւիտեան տեւելուն և ընդ ալօտս սիւներուց միշտ տարածուելու ըլլալուն, Եկեղեցւոյ հալածանաց և յաւերժական յաղթանակներուն ևս ևս մարգարէութիւնները՝ որ ամեն հատանգաւորութեանց հակառակ ընդունելուն նոյն ժամանակները, և յորոց նշանախեց մ՚անդամ գետին չկնայով կատարուած են ու կը կատարուին միշտ, առանք ամենը կ՚ըսեմ, Քրիստոնէական կրօնի Աստուածայնութեան հզօր փաստերէն են:

Գ. Կրօնքի հիմնական տեսողութիւնն ալ աստուածայնութեան փաստերուն մին է, քանզի որուն բնաւ յայտնած չէ երբէք և կարելի ալ չէ յայտնել որ առանց դրսէ յաւիտեան մէկ յաւիտեան մը ունենալ: —Թէ որ ունենք ուզեն կատարելութիւն և ուրիշ կրօնական դրութիւնները մեզ ցուցընել որ տուն ըլլալուին հանդէպ երբ այսչափ երկար դարեր տեւեր են, մեծ անպատշաճութիւն մը կը գտնեն. քանդի առանք նախ յաւերժական ըլլալու հաստատութիւնը չունին: Երկրորդ տարակ ալ կ՚ընենք, տեսէք ամենեքին թէ կատարելութիւնը միօրինակ դրութեամբ այսչափ երկար դարեր տեւեր է. որովհետեւ չարունակ բիւր փոփոխութիւններու տակ ինկեր, բիւր կերպարանքներ առեր է, մէկ և նոյն քաղաքին կամ նահանգին և կամ տէրութեան մէջ մի և նոյն կատարելութիւնը այս ինչ դարուն ի՛նչ որ էր, նոյն չէր հետեւեալ դարուն մէջ, ինչպէս և հետեւեալին ալ իւր հետեւեալին մէջ: Ջմնարիտ Կրօնքին Աստուածային Հաստատութեան վրայ պատուասխանալ որ և իցէ մարդ սխալ դրութիւններէ ապ Քրիստոնէական Կրօնիս մէկ հերետիկոսութեանը պէս կը նկատուին, որոնց հետեւողը ճշմարտութիւնն

է · և այն ճշմարտութեան վրայ յօդեալ սխալներն ալ իրաւ չէ որ ամեն ժամանակ ընդունելի եղած են և պիտի հնանդիմառելեն · բայց անոնց տեղն ունենալնուն վրայօք ալ արդէն մեր փրկիչը կանխաւ ծանուցած էր : (Մ—ՈՒ · է · 15· ԻԴ · 11—24։)

Աստուածպաշտութեան կրօնքը միայն իւր ծագումէն՝ի վեր միշտ անխոտոր և անայլայլակ՝ մինչեւ ցարդ տեւեր է հակող պահպանող ջօրութեամբ մը և յաւիտեան տեւելու է : Կրօնքը՝ի նախնումն տեւեր է խիստ փոքրիկ ժողովրդեան մը մէջ, Երր ամեն կողմանէ պաշարուած էր այն ժողովուրդը սուտ և հեշտական կրօնքներով, բռնաւոր ժողովուրդներով, և ճշմարտին Աստուծոյ կրօնքը հալածող աշխարհակալներով : Կիւրոս Բաբելացին, Ասորեստանցին, Մակեդոնացին, Պարսիկն ու Եգիպտացին, Սելեւկեանք և Պտղոմեանք : — Մովսիսական կրօնից՝ի լուսին՝ Քրիստոնէական վարդապետութեան տարածումն ալ ակն յայտնի կ'ապացուցանէ իւր Աստուածայնութիւնը· տարածուելով անտահմ, աղքատ, ազէտ և ապիկար տաններիու ձկնորսներէ՝ ընդ ամենայն աշխարհ · հակառակորդ ունենալով ո՛չ միայն Հրէից ազգը, այլ և բոլոր աշխարհը, բռնաւորակ տիեզերաց օրէնք տուող Հռովմէական պետութիւնը, որով և անոր իշխանութեան տակ դոնըզող հատորէն ազգ և ազինք և լեզուք, ամենայն իշխանութիւնք և պետութիւնք · ամեն տեղ իրենց դիմացը պատրաստ կեցած ունենալով մահ, նախատինք, հալածանք, յափշտակութիւնք ընչից և տարոց եւ : Սակայն անոր Աստուածային Հիմնադիրը խոստացած ըլլալով որ մինչեւ՝ի կատարած աշխարհի եկեղեցւոյն հետ պիտի ըլլայ՝ զանիկայ պաշտպանելու և զօրացնելու համար, (Մ—ՈՒ · ԻԸ· 20 ։ ԺԷ· 19—20·) որ « Դրունք դժոխոց չնաւ մի՛ յաղթահարեսցեն» · (Մ—ՈՒ· ԺԶ· 18·) տիեզերաց ամեն

կողմը տարածուեցաւ, կեցաւ, դիմացաւ մինչեւ հիմայ, և ունի մինչեւ՝ի յաւիտեան դիմանալ՝ յաւիտենական վկայ ըլլալու համար Քրիստոնէական Կրօնից ճշմարտութեան և Աստուածայնութեան :

Շատ մը մարդահնար կրօնքներու մէջ տեղ մի միայն Քրիստոնէական կրօնքը Աստուածայնութեան և ճշմարտութեան այս կնիքն ու վաւերականը ունենալով, հարկ է որ կենաց և փրկութեան վարդապետութիւնն ալ անոր մէջ բնտռենք : — Քրիստոնէական կրօնից հաստատելոց գլխաւոր մասունքները բովանդակուած են Նիկիական Հանդանակին մէջ, զոր ամեն եկեղեցիք կ'ընդունին, յորում՝ի համառօտի կը բացատրուին

Ա· Աստուծոյ էութեան և անոր գործոց վերաբերեալ վարդապետութիւնները ·

Բ· Աստուծոյ առ մարդ յայտնութիւնը, կամ Ս· Գիրք ·

Գ· Եկեղեցին և անոր խորհուրդները · և

Դ· Յաւիտենական կեանք ·

Այս բաժանումը պահած ենք առաջնակարգ գործքերնուս մէջ, որոց ստորաբաժանմանց դասակարգութեանց համար ալ դարձեալ նոյն Հանդանակը իբր նախագաղափար ունեցած՝ անոր հետեւած ենք, յօդուտ և՝ի չինութիւն Հայաստանեայց Ս· Եկեղեցւոյ · որոյ անստերիւր վարդապետութեան թարգման միայն կ'ըլլանք՝ ինչպէս որ պարտիք՝ գործոյս մէջ։

«Ուղղափառ Հաւատոյ քո լոյս՝ Ո՛վ եկե-
«ղեցի Հայոց, ո՛չ նուազեցաւ. Ի բարի սեր-
«մանս ցորենոյդ որոճն ո՛չ խառնեցաւ. (Մ—ղ.
«ԺԳ. 25։) զաղբևր յստակ աւանդութեանց
«քոց՝ աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց
«ո՛չ պղտորեաց. (Ա—ղ. ՃՀ. 34։) Ի տուդու-
«թեան և Ի ճշմարտութեան Հայն քո կեն-
«դանական՝ մեռելական խմոր և հերձուած
«քացախութեան չարութեանն ո՛չ զանգեցաւ.
«(Ա. կ—ընդ. ե. 8։) յոսկի ամբիծ Հաւատոյն և
«յարծաթ լուսաւեսիլ բանին՝ պղինձ ժան-
«գահատ և կապար սեւաթոյր ո՛չ գտաւ։ Եւ
այսքիկ խնդրատածովք Մեծ Նահատակին
«Քրիստոսի Սրբոյն Գրիգորի՝ փկղ շնորհեցան»

(ՅՈՎՀԱՆ ԵՐԶՆԿԱՑԵՑԻ, Է Ց—ԴԴ—Ա.)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՍՏՈՒԾՈՑ ԼՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՆՈՐ ԳՈՐԾՈՅԸ ՎՐԱՑ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԼՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԼԻՔ ՆՈՐԱ

ԳԼՈՒԽ Ա.

ԳՈՅՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՑ

ԿՐՕՆՔԻՆ հին է Աստուած։ Այս է՝ այս աշխարհս ստեղծող յաւիտենական Լոկ մը կայ Ինքնագոյ, Ամենակարող։

Ողջամիտ մարդոյն համար ասիկայ ակներեւ ճշմարտութիւն մը ըլլալուն համար՝ Ս. Գիրքը աներեւոյթ էութիւնն ու յաւիտենականութիւնը՝ այսինքն է Ինքնագոյութիւնը՝ երեւելի արարածներով կը ճանչցնէ. «Գիտութիւնն Աստուծոյ յայտնի է Ի նոսա, կ'ըսէ Աստուածայինն Պօղոս. քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա։ Զի աներեւոյթք նորա Ի սկզբանէ աշխարհի՝ արարածովքն իմացեալ տեսանին. այսինքն է՝ հրամայեցողութիւն և զօրութիւն, և Աստուածութիւն նորա. զի ոչ գտանիցեն անձնեւ-

և ո՛չ իբրեւ պԱստուած փառաւորելին կամ գոհացան» : (Հռ֊վ֊ Ա֊ 19—21 :)

Եւ արդարեւ՝ երբ որ անգամ մը աչքերնիս դարձընենք տիեզերաց՝ և՛ մասնաւորի՝ մեր բնակած այս հողագնդին վրայ, կը տեսնենք որ ամենայն ինչ վսեմական է : Իսկ արդ՝ ի՛նչ որ վսեմական է՝ յաւերժական և ինքնագոյ չկրնար ըլլալ : Ս֊ Եփրեմ Ասորի՝ մը՛ի Նախկին Հարց Եկեղեցւոյ՝ կ՛ըսէ իւր գործոց մէջ֊ (հատ֊ Ա֊ էջ֊ 55 ֊ ըստ պոլսէ֊ վենետ֊) «Ցոյժ յիմարական է կարծել, թէ՛ մի՛ շնաւսոտիոս նիւթն կայցէ ինչ յաւիժական֊ պի պիա՞րդ մարթի յաւիտենական լինել վսեմականն» : —Ուրեմն բոլոր այս տեսած բաներնիս՝ իրենք իրենցմէ կայ եղած բաներ չեն : Եւ երբ որ մեր այս դիտողութիւնը և՛ս յառաջ տանելով՝ մինչեւ արարածոց գլուխը՝ առաջին արմատը երթալ ուզենք, օրինակի համար, երբոր մարդոց ծննդեան յառաջատութիւնը քննելու ելնենք, կը տեսնենք որ տունք իրենց հայրերէն ծներ են, հայրերն ալ իրենց հայրերէն եւ֊ մինչեւ կու գամք կը հասնինք ենթադրեալ առաջին մարդոյ մը՝ որ պիտի ծնող հայր մը չկրնար ունենալ֊ քանի՛ հաւնաւոր արարածներու անհուն տարիներու մէջ անհնարին յառաջատութեան մէջ չեն կրնար ըլլալ֊ որովհետեւ առանց պատճառի գործ չկրնար ըլլալ, ուրեմն բացարձակապէս կը տեսնենք որ այն առաջին ենթադրեալ մարդը՝ ինքնագոյ չէ, յաւիտենական հոգիով կամ մը յառաջ եկած՝ ստեղծուած է :

«Իսկ արդ՝ եթէ չէր հաւատացեալ ոմանց, միթէ՝ անհատատութիւն նոցա զԱստուծոյ հաւատան խափանէր֊ քա՛ւ լիցի : Այլ՝ եղիցի Աստուած ճշմարիտ, և ամենայն մարդ սուտ, որպէս և գրեալ է» : (Հռ֊վ֊ գ֊ 3—4 :) —քանզի՝ յաւիտենական հաւատ կաւոր կամ մը գոյութիւնը կրօնքին անհատանելի

խորհուրդներէն ըլլալով, երբ որ բնապաշտն ու նիւթասէրը խելքերնին չհասնելուն համար յանդգնին ուրանալ Աստոր գոյութիւնն ու արարչագործելը, կը խայտառակուի իրենց անհատատութեան ժպրհութիւնը֊ որովհետեւ այն որ կ՛ենթադրէ թէ Արարիչ Աստուած չկայ, հարկաւ կ՛ստիպուի ենթադրել, թէ նիւթը ինքզինքը յառաջ բերած է՝ ի՛նչպէ՛ երբ ինքն ոչինչ էր, որ է յետոյն անտեղութիւն եւս ըստ բնաբիտաց : Սուրբն Օգոստինոս կ՛ըսէ֊ «Զիք ինչ, որ զինքն առնէ կամ ծնանի֊ ապա թէ ո՛չ, ինչ՛ը՝ ինչպէ՛ եղէ : » (Յղ֊ առհա֊ հոփ֊ գլ֊ Ը֊)

Այս անտարակուսելի է՝ որ մենք կ՛ոմն, ինչ ենք֊ ուրեմն՝ թէ՛և մենք զմեզ գոյ ընել չենք կրնար՝ չգոյէ՝ մեր ինքնին չգոյ եղած առեններս, բայց անպատճառ զմեզ՝ ի չգոյէ գոյ ընող մը եղած է, որովհետեւ կ֊ոմն ո՛չ֊պէ՛ս : Այնչափ բռնադատիչ է այս ճշմարտութիւնը, որ զնոյն զինքն զԱստուած ստիպած է խոստովանիլ Արարիչ Աստուծոյ գոյութիւնը, (ՀեՌլեան֊ հատ֊ գ֊) յաւելլն֊ «Ո՛րչափ կը բռնադատեմ ինքզինքս Աստուծոյ անհասման խորութիւնը խորհելու, այնքան քիչ կ՛ըմբռնեմ զԱյն֊ բայց հեռի՛ք է ինձ՝ որ Անիկայ կայ֊ ո՛րչափ քիչ կ՛ըմբռնեմ, այնչափ աւելի երկրպագութիւն կ՛ընեմ֊ կը խոնարհեմ ինքզինքս, և կ՛ըսեմ Անոր֊ Ո՛վ էակդ էիր, ես կ֊մ, վասն զի Դուն կ֊ես » :

Եւ քանզի նիւթեղէնն աշխարհս ինքնին փոփոխական է, անկարելի է որ այս ինքնագոյ յաւիտենական էակը այս աշխարհիս մէջէն՝ և նիւթեղէն եղած ըլլայ֊ և որովհետեւ արարածոց մէջ հոգեղէն հոգեւոր էակներ ալ կան, ուրեմն այս Արարիչը հոգեղէն է֊ և ահա այս հոգեղէն ինքնագոյ աներեւակայելի Արարիչն է ԱՍՏՈՒԱԾ :

Բնապաշտը և նիւթասէրը ոմանք կրնան ըսել թէ՝ բնութեան մէջ չկայ իր մը որ յաշընչութիւն

գառնայ, այլ միշտ՝ միոյն ապականութիւնը միւսին ծնունդ է. որ է ըսել, նիւթը միշտ կ'այլակերպի, բայց չոչնչանար. ուստի կրնայ ենթադրուիլ, թէ բնութեան մէջ գոյ եղած ամեն բան՝ և՛ի մարդոյ այս աշխարհս, նիւթը,՛ի յաւիտենից էր, և բոլոր արարածներն ալ՛ի յաւիտենից ծննդատուրծութեան յառաջատութեան մէջ էին: Եւ առ այս ապացոյց կրնան հանարիլ մտատնջք իւիք՝ եգիպտացւոց, Հնդկաց, Չինաց և այլոց ազգաց ոմանց հնոց՝ իրենց ազգային թուականաց անհատատալի հնութիւն տալը: — Այլ սակայն՝ յիմարական է այս:

Ա. Արդարև բնութեան մէջ իր մը՝ նիւթը՝ կանհուն կ'այլակերպի, չոչնչանար. բայց սակի չհետեւիր թէ նիւթը՛ի յաւիտենից՝ ուստի և անսկիզբն էր: Թիւ մը յանհուն իր վրայ բազմապատկուելով անհունապէս կրնայ շարունակուիլ և աճիլ իր յառաջատութիւնը. բայց իր այս յառաջատութեան անհուն, անեզր ըլլալէն չհետեւիր թէ անսկիզբն եւս եղած ըլլայ. անոր սկիզբը կայ, միութիւնն է. գործողութիւն մը անմերջանալի ըլլալուն համար անսկիզբն եղած՝ չէ՛սած չըլլար: Այսպէս՝ մարմին մը ո՛րչափ և չքոտի ըլլայ՝ կանհուն կրնայ բաժնուիլ՝ բնաւ ամենեւին ո՛չ վերջ ո՛չ վախճան ունենալով. բայց անոր այսպէս անհուն մասնիկներէ բաղադրեալ՝ հետեւաբար և բաժանելի ըլլալէն՝ չհետեւիր թէ այն չքոտի իրը եւս՝ (ըլլայ թող կարի իսկ չտեսի, անհեթեթ, մեծադանդին,) անհուն. ա՛ նիկայ միշտ հանուսոր՝ կոպարաւոր է. մեր ճանչցած մարմիններուն ամենէն խոշորին հանը՝ չտեսի կոպարը պիտեւիք: Ուստի և նիւթը՝ թէ՛ և կանհուն կ'այլակերպի, բայց ինքը անսկիզբն չէ՛, ինքնակ յաւիտենական չէ՛. յաւիտենական Արարչէ մը սկիզբն առած՝ գոյ եղած է: — Կ'ըսեւիք այս ալ, որ Արարիչը ապաւարեր է՛ի նիւթեն այն բնութիւնը՝ ո-

րով միշտ կ'այլակերպի, այլ ո՛չ երբէք յոչինչ կը դառնայ:

Բ. Դարձեալ մտանաւորապէս մեր այս բնական հոդպնդին վրայ խօսելով, ապացուցուած, հաստատուած ճշմարտութիւն մըն է, որ՛ի յաւիտենից էր, և՛ի յաւիտենից անսո՛ անոր մէջ բայս, բնակիչ ևս չկար: — Բնագէտք կը հաստատեն՝ ինչպէս և ճշմարիտ է, թէ այս երկիրս՛ի սկզբան կաղային հրաւորր եռացեալ վիճակի մէջ էր, և երկրիս մակերեսութեան տակաւ սպրելով ինդ անալովը բնակելի դարձած է, և այժմ ևս մինչեւ կեդրոնը պատած չէ, (Ինչպէս կը կարծուի լուանի համար, որ առտզային դիակ մը՝ մեռելոտի մը կը համարուի,) երկրիս մակերեսոյթէն քանի մը մղոն միայն թէ որ խորը ինջնալու ըլլամք, նոյն հրատապ եռանդեան լոյծ վիճակին մէջ կը գտնեւք զայն: — Արդ՝ երբ որ երկրիս մակերեսութեան պաղելովը աշխարհս բնակելի դարձաւ, ա՛ռաջին ծնաւ առաջին անդամ առաջին մարդը՝ անառնը՝ բայսը ևն: Երկիրս հոդեղէն էակ մը չէր՝ որ կարենար զնարդ ծնանիլ. չընչաւոր, ինքնաշարժ, գնայուն չէր որ անառուններըը ծննդատործէր, ա՛չ ալ գործարանաւոր աճող էակ մ'էր՝ որ բոյսերը բողբոջէր. քանդի ծնող մը չկրնար իրմէ ծնելոյն տալ այն կատարելութիւնը՝ զոր ինքը չունի: Ապա ուրեմն ամենք ամենը այն հոդեղէն, խոհուն, ամենակարող էակին ստեղծեց, զոր մենք Աստուած կ'անուանենք, և ասոնց ամենուն ծննդական յառաջատութեան համար իրենց մէջ զրաւ ծննդական սկզբունքները, սերմերը, ևն:

Գ. Այլ եա, եթէ նիւթը՛ի յաւիտենից ըլլար, և ամենայն ինչ անկէ ծնած յառաջ եկած ըլլային ինքնածնելութեամբ, ըսել կ'ըլլար թէ նիւթը իր մէջ ծնելութեան զօրութիւն կամ յատկութիւն ունէր: — Իսկ արդ՝ նիւթը այս ծնելութեան զօրու-

թիւնը կա՛մ ՚ի յաւիտենից ունէր իւր մէջ, և կամ եղաչն առացաւ ։ ի յաւիտենից ունեցած չէր կըրնար ըլլալ · քանզի նիւթոց ներգործական զօրութիւնները միշտ հարկաւորապէս և միօրինակ շարժման մէջ ըլլալով, ՚ի յաւիտենից անտի՝ այս է՝ անբաւկիզբն ժամանակի մէջ՝ ինքը կայ եղած ըլլալով, անբաւկիզբն ժամանակի մէջ ալ պէտք էր ծնած ըլլալ այս ամեն էակները, մանաւանդ գործարանաւորները · հետեւաբար և ամեն գործարանաւոր էակներուն մէն մի տեսակէն մէյմէկ զոյգ ծնած պիտի ըլլային ՚ի յաւիտենից · որոնք ինչպէս անսկիզբն՝ նոյն և անվախճան՝ յաւիտենական ըլլալով, մինչեւ հիմա կեցած պիտի ըլլային իրենց յաւիտենական գոյութեան կենդանի ապացոյցները ըլլալու համար· բայց առանցմէ և ո՛չ մին մինչեւ ցարդ տեսնուած է ։ Ընդհակառակն՝ մենք աշխարհիս ամեն կողմերու բնակչաց՝ ապգաց՝ թագաւորութեանց սկզբնաւորութիւնները գիտենք· ամեն արուեստներու գիւտերուն պատմութիւնները ու հնարողները կը ճանչնանք, որոց թուականը մեց հաշար տարիէն անդին չանցնիր · ուր՝ եթէ ՚ի յաւիտենից եղած ըլլային՝ անոնց սկիզբները գիտնալ անհնար կ՚ըլլար · գիրն ալ չէր կրնար պահել մեզ անոնց պատմութիւնները · գի արուեստներն ու գիւտերն ալ մարդոց հետ անսկիզբն ժամանակներու անհուն տարիներէ ՚ի վեր սկիզբն առած կ՚ըլլային, մինչդեռ գըրոյն գիւտը չորս հազար տարուան բան է, Սեմիրամեան ցեղին պանծալի հնարքն է ։

Իսկ եթէ նիւթը ծնելութեան զօրութիւնը ՚ի յաւիտենից չունէր, եղաչն առացաւ · (որ ըստ բնական օրինաց անկարելի է,) ուրեմն այդ յատկութիւնն իրեն տուող մը եղաւ, և այս տուողն է Աստուած ։ Կա՛մ, եթէ այդ յատկութիւնն ունէր, բայց ՚ի յաւիտենից չծնաւ և ՚ի ժամանակի ծնաւ, (որ

նոյնպէս անկարելի է,) ըսել է այդ յատկութիւնը իւր մէջ դադարման վիճակի մէջ էր, և ՚ի ժամանակի՝ զայն շարժող մը եղաւ · ըստ որում նիւթոց դադարման վիճակը անհնար է շարժման մէջ մտնել առանց միջնորդ զօրութեան, առանց շարժողի, վասն զի ինքնաշարժութիւն չկայ · ասկա ուրեմն այս շարժողը եղած է Աստուած ։

Եւ ևս առելով ալ կ՚ըսեմք · որո՛վ և իցէ կերպիւ և եղանակաւ՝ նիւթը ինչ արտադրելու՝ ծնելութեան զօրութիւն ունենար ալ նէ, անով · հանդերձ՝ չէր կրնար մարդ՝ կենդանի և բոյս արտադրել · վասն զի իր մէ՝ իրմէ ծնեալներուն այն կատարելութիւնները միայն կրնայ տալ, զորոնք որ ինքն ունի · և իւր չունեցած կատարելութիւններէն բան մըն ալ չկրնար տալ անոնց ։ Իսկ արդ նիւթը չունի մարդոց, կենդանեաց և բուսոց յատկութեանց խիստ շատերը, ինչպէս ուրեմն անքան, անկենդան, անիմաց, անհանճար, անշունչ, անզգայ, անգործարան նիւթը կրնար ծնանիլ կամ արտադրել բանական հոգի՝ միտք՝ հանճար՝ շունչ՝ կեանք և կենաց գործարաններ ունեցող մարդ՝ կենդանի և բոյս · ո՞ր բնաւ լսուած կամ տեսնուած է թէ ծառէն մարդ մը բուսեր է, և կամ անասունէ մը բոյս կամ ծառ ծներ է ։ Ամէկայ յետին անտեղութիւն, և դէմ ընդդէմ հակառակ է բնութեան, ըստ խոստովանելոյ իսկ բնաբանից ։ Ասկա ուրեմն Հոգեղէն յաւիտենական էակ մը արարչագործած է այս ամեն բան ։

Դ· Այլ այն ամբաւ թուականներու կուտակումը որովք միլիոնաւոր կամ ևս աւելի տարիներով կը պանծացընեն իրենց նախնիքներն Չոյնք, Եգիպտացիք, Հնդիկք, Մինէացիք և այլք ոմանք յապգաց, և որովք մարդոյն արարչութեան թուականը կը հինցընեն յանպատեհս, արդէն բոլորն ալ խիստ

քննութեան քուրային մէջ պարզուած՝ զուտած են, և ըրեղէզէն անդին չեն անցնիր աւենեւին · և ո՛չ միայն Ս· Գրոց արարչագործութեան համար ցոյց տուած թուականը չեն եղծաններ, այլ նաև այն թուականներով կցկըցած աստասպելեալ պատմութիւններուինին Ս· Գրոց պատմութեանց վաւերութիւնը կը հաստատեն։

Օրինակի համար · վերը յիշուած աղբերէն Յունաց առասպելական հնութիւնը ինքզինք խայտառակած ըլլալով՝ պատասխանի յողնութիւնը չարժէր։ —Եգիպտացւոց թուականի սուտարութիւնը արդէն Եւսեբիոսի մէջ անօգտացած է · (՝ի Քրոնիկոն, հատ· Ա·) յորում կը պատմուի՝ թէ Եգիպտոսի սիրող թագաւորաց՝ Դիոց և Դիւցաղանց, Ուրուականաց և մահկանացու թագաւորաց երեք հարիւրամեայ թագաւորութիւնները՝ քանուչորս հազար ինն հարիւր տարի պայազատեցին Եգիպտոս · «Ըստ լուսնականաց տարեաց, զերեանօրեայ աւուրցն Թուոց առեմ · քանզի զայժմու մի ամիս՝ յայնժամ նոքա տարի կոչէին »։ —«Համարեալ մինին ՚ի միասին ամենայն զոր Եգիպտացիքն պատմեն՝ լինել դիցն և դիւցազանց և ուրուականացն՝ ամս լուսնականս՝ երկուս բիւրս, չորս հազարս և ինն հարիւր · որ ինին ըստ արեգական ամաց ՍՄՋ· (՝ի 2206·) զոր թէ համարեսցես ընդ երբայեցւոց ժամանակագրութեանն՝ գոյք կշիռ գտանես »։ Դարձեալ Եգիպտացւոց թուականին անհեթեթ սուտարութեան արժէքը կրնանք չափել այն Մակեդոնական և Պարսկական պատմութիւնէն՝ զոր Եգիպտական քուրքը Մեծին Աղեքսանդրի ընծայել կ՚ուզէին, երբ որ սա յաղթական Եգիպտոս մտաւ, յորում ութ հազար ամաց պատերազմներ կը պատմուէին · իբր թէ Մակեդոնացւոց և Պարսից թագաւորք ութ հազար տարիներէ ՚ի վեր կային և պատերազմ կը

մղէին իրարու դէմ· այն ատեն՝ որ (առ Աղեքսանդրիս) Մակեդոնիա հազիւ հինգ հարիւր տարուան ազգ և տէրութիւն մ՚էր, և Պարսիցը՝ երեքհարիւրեակեան։ Ուրեմն՝ որովհետև այս թուականները ակն յայտնի չափազանց էին, միւս պատմութիւններուն մէջ թուականերու ճշդութեամբ վարուած են ըսելը չմնարութիւն է։

Գալով Արիստացւոց ցոյց տուած թուականին· չը նայելով իրենց համրած չատ մը բիւրերու գումարին, կը տեսնենք որ ատոնք իրենց օրացոյցներուն մէջ խնամով նշանակած են արեւու, լուսնի և միւս թափառական աստեղց դուրընթացութիւնները, ժամանակին տիրող թագաւորին անուան և պատմութեան հետ։ Մէկ զարմանալի դուրընթացութիւն մը նշանակուած ըլլալով խիստ բազմութիւն աստեղց՝ իրենց պատմութեան սկզբնաւորութեան ժամանակ, վերջին աստեղուընէ Քասիոսի երեւելի աստեղաբաշխը հաշիւ ընելով դէպ ՚ի վեր՝ գտած է որ արդար և ասանկ դուրընթացութիւն մը պատահած է Քրիստոսէ 2012 տարի յառաջ, Աբրահամու ծնունդէն քիչ մը ետքը, որով կ՚ապացուցուի թէ Արիստացիք շատ հին ազգ են, բայց ո՛չ թէ իրենց բազմին պէս անհաւատալի տարիներէ ՚ի վեր ծագումն առած են։

Այսպէս՝ իրենց թուականներու առասպելը խայտառակուած ըլլալով, պատմութիւններնին ալ քննելու ելլենք նէ՝ կը տեսնենք որ ուրիշ բան չէ՞ բայց եթէ արարչագործութեան ճշմարիտ պատմութիւնը, որ բերնէ բերան ազաւաղելով և վրան զարդեր ու զարմանալիքներ ալ կցկցուելով՝ բոլորովին տարբեր բան մը դարձած է։ —Առնք իրենց թագաւորութեան սկիզբը՝ տասը հազար տարուան չրջան մը կը դնեն, յորում տասն թագաւորներ յաջորդաբար հազարական տարի թագաւորած ըլլան։ Ասի-

կայ բաց յայտնի՝ Ադամէն մինչև Նոյ՝ Նախաջրհեղեղեան տասն ազգաց նահապետութեան աղաւաղումն է, որք արդարև հազարական տարիներու չափ կ'ապրէին, բայց ո՛չ Ամէնացւոց ըսածին պէս, իբր ամեն մէկը հազար տարի ապրելէն ետքը իւր յաջորդը իրեն պայազատելով, այլ հայրը որդւոյն հետ իւր տարիներու չրջանը կը կատարէր։ — Ասոնցմէ ետքը կը դնեն Սատիաւարմանայ՝ որ Մենու-ալ կ'ըսուի, (որ ինչպէս կ'երեւայ յայտնապէս՝ Նոյ անուան աղաւաղեալն է,) որուն համար կ'ըսեն՝ թէ առանց հօր եղած էր. և մայրն ալ ծիածանին բոլորակին մէջ նստած. և թէ եօթն մաքուր կենդանիներ կը պահէր բարձրեալ հողիին զոհելու համար. և նա թէ՝ իւր օրով երկինք երկրիս վրայ ինկաւ և բոլոր մարդկային ազգը կործանեց։ — Մենու՝ Մոսոխա երկիրը կ'իջնայ, այդի կը տնկէ, կը գինովնայ. Քարմա (ս Գամ) որդին անոր մերկութիւնը կը հրապարակէ եղբարցը. Շերմա (ս Սեմ) և Յապետոս (ս Յաբեթ) կը ծածկեն զայն եւ։ Ասկից աւելի լուսաւոր, յայտնի ինչ վկայութիւն կ'ուզուի՝ յաւանդութենէ ազգաց՝ Ս. Գրոց պատմած արարչագործութեան, տասն նահապետաց, Ջրհեղեղի, Նոյի և երից որդւոց նորին պատմութեան առնդութեանը։

Ամէնացւոց (ինչպէս նաև այլոց ազգաց ոմանց հնոց) բուն հաճոյս իրենց ազգային թուականներն աճեցուցած ըլլալնին, հետեւաբար և անոնց հաւատ ընծայել մեռաքերելը եռակի յիմարութիւն ըլլալը ցուցընելու համար յառաջ կը բերեմք այս իրողութիւնն ալ, որ անոնք ո՛չ միայն գարուց թուականներուն, այլև ուրիշ շատ բաներու մէջ ալ թուոց չափազանցութիւն կ'ընէին։ Օրինակի համար. Ընդդիմիք՝ Սամերու անուն լեռը Ասեզական և Լուսնի Օթարան անուանելով, կ'ըսեն թէ վեց հարիւր հազար մղոն բարձրութիւն և հարիւր քսանուչորս հազար մղոն խորութիւն ունի։ Հաւատալի՞ է արդեօք հաշիւ ևմ հաղար մղոնի չափ որանագիծ ունեցող այս հողագնդին վրայ՝ եօթն հարիւր «ոնոլար» հազար մղոն խորութիւն և բարձրութիւն ունեցող լեռ մը գտնուի. մինչդեռ աստղագէտս հաստատուած է թէ աշխարհիս ամենէն բարձր լեռները հինգ մղոնէն աւելի բարձր չեն։ — Ուրեմն ո՛րչափ անյաւատալի է այս չափերու թուոց տարապայման կուտակութիւնը, նոյնչափ և անոնց ազգ ազգ անհատական տարիներու տարապայման հոծութիւնը սուտ է և ծաղրական։

Այլ բնապաշտը կամ դիպուածականք կրնան ըսել. Աստուած անուանեալ պատճառ մը դնելու հարկ չկայ. աշխարհք՝ և ամեղերք իսկ ողջոյն՝ դիպուածով յառաջ եկան, բնութեան յար շարժման մէջ ըլլալովը։ — Սակայն ասիկայ անպատասխանի չմնալու համար միայն խօսիլ՝ ձայն մը հանել է, խօսք մը ընել չէ։ Բնութիւն բուսածը առանձին ենթակայութիւն ունեցող էակ մը՝ էր մը չէ՝. բնութիւն կ'ըսուի էրերուն յարմնութեանց։ Ուրիշ ծաղրական է ըսել թէ՝ յատկութիւններն են իրաց գոյութեանը պատճառ։ Այս ըսել կ'ըլլայ՝ թէ թափանցկութիւնը զապակին գոյացուցեր է, հաչողութիւնը զրուն, զունչականութիւնը զէշը, եւ, եւ, եւ. է՛ն ծաղրականն ալ հոս է՝ որ ապակին չեղած թափանցկութիւն կայ եղեր, շուն չեղած՝ հաչողութիւն, էշ չեղած՝ զունչականութիւն կայ եղեր, եւ։ Ուրեմն բնութիւն բուսած էրոյոն գաղափարը՝ արարիչ պատճառ չէ՛ և չկրնար ըլլալ, այլ միայն՝ թէ որ բան մը կը ցուցընէ՝ բուսնին լինելութիւնը կայ եղած ըլլալը կը ցուցընէ, անոր յատկութիւնը, որպիսութիւնը ցուցընելով. կայ ըլլալուն պատճառ ինքն եղած ըլլալը չցուցընէր. կայ եղած բանի մը ինչպիսի ներգործութիւն ունենալը կը յայտնէ. բայց այն կայ եղած բանը ուստի՞ լեալ է, ահա՛ խնդիրը։ Իրերու բնու-

Ըե՜ն, բնական օբէն+ ըսուած բանը՝ ինքնին, արա-
րիչ զօրութիւն չկրնար ըլլալ. իրաց ձեւաւկերպու-
թիւն, դոյութիւն, ծնունդ առնող կ՚ուզէ. օրէնքն
օրէնադիր կ՚ուզէ, և ա՛յս այս ձեւաւկերպութիւն,
գոյութիւն, ծնունդ առնող Օրէնադիրն է Աստուած:

Իսկ եթէ յամառութիւնն ուզէ առկաւին ըսել
թէ Աստուած չէ՛ ատարիչ, Աստուած չէ՛ կայ եղած
բաները դոյ ընող, այլ Բնո՜ւ-թի՜ւնը. այն ատեն միայն
անուան դէմ յամառուած, միայն անուանական
կռիւ մը քշուած կ՚ըլլայ: Սենեկապետ խօսքն է ատ. (Յա-
ջ-բեբեր. Դ. 7.) «Ջինանա՞ս, կ՚ըսէ, դի զանուն փո-
խես Աստուծոյ. դի՞նչ այլ է բնութիւն, եթէ ո՛չ
Աստուած. և Աստուածեղէն բան՝ որ ներգոյ յա-
ւիտեան աշխարհի և՛ մասուն նորա»:

Գալով դիպուածականութեան. ատրապէս խօ-
սելով կ՚ըսենք, թէ դիպուած բուած բան չկայ.
քանզի առանց պատճառի գործք չկայ: Բուէին այս-
պէս և ո՛չ այնպէս անկումը դիպուած չէ՛, ծաններու-
թիւնն և չարժման չափն է պատճառ. ապացոյց
քուէ բանողներուն ձեռքը և դնդակախաղներուն գա-
ւազանը: Շէնքի մը առանց երեւութական պատ-
ճառի մէկէն՝ ի մէկ վայրկեան դիպուածով չէ՛, հնու-
թիւնը կամ խոնաւութիւնը՝ ծանրութեան չարժ-
ման, մզման և ուրիշ շատ մը զօրութիւններու՝ շատ
մը ծածուկ պատճառներու իրարու հետ միանալովն
է:—Բնութեան միշտ չարժման մէջ, միշտ գործօն
ըլլալէն՝ դիպուածով մարդ, հոգեղէն էակ, անա-
սուն, բոյս և՜ քառաջ չկրնար գալ, ինչպէս վերն
ըսինք, որարիչ պատճառ կ՚ուզէ առանց գոյութեան
բնութիւն ըսուած շատ մը կարգադրութիւնները՝
օրէնքները՝ յատկութիւնները՝ չարժման գործողու-
թեան մէջ գնող պատճառը կրնայ առանք գոյացը-
նել: Բնութիւնը կամ դիպուածը թէ որ ճարտա-
րապետը կամ բրուտը կրնայ առեղծել կամ ծնըն-

դագործել, ինչ՞ու համար ապարանք մը, տուն մը,
խրճիթ մը կամ ջրոյ կուժ մըն ալ չկրնար չինել: Մա-
տենագիրը դիպուածով կը գոյանայ նէ, մատենագ-
րին մատեանը ինչո՞ւ դիպուածով չկրնար գոյանալ
այն բարերար դիպուածով ինչո՞ւ համար Աստուա-
ծաշունչ մատեան մը, Վիրգիլիոս մը, Հոմերոս մը
չհազմակերպիր:

Կամ դարձեալ, ինչո՞ւ համար է որ այն բարե-
բար դիպուածը մէյ մ՚ալ չկրկնուիր. և մինչև հի-
մայ տեսած չըլլալնուս զատ՝ չեմք ալ լսեր թէ լեռ-
նէն մարդ մը բուսեր է դիպուածով, և կամ ծովէն
ուրիշ էակ մը երեւցեր է, և կամ չնչին ճճի մը (1):

Երբոր կը տեսնենք տիեզերքս սքանչելի կար-
գադրութիւնն ու ներդաշնակութիւնը, բնութեան
գործոց հրաշալի կազմակերպութիւնը, է՛ն չտղեան-
գամ մարմիններէն է՛ն փոքրիկ էքոտիներուն վեր-
բերեալ համեմատութիւնն ու կազմակերպութիւնը,
անկարելի է ողջամիտ՝ մարդուն ըսել թէ ասիկա
անգան՝ անխնամ կոյր՝ դիպուածի գործ է, ու չէ
թէ խնամատուն, խոհուն, ամենակարող, նախատես
էակի մը գործ է. և ահա այս ըսածնիս Աստուած
է:—«Մ՚իչ որ սովրած է բնութեան գազտնիքները
քննելու, դիտէ այս ճշմարտութիւնը:—Թէ և մին-
լիսոփայութիւնը բնաւ չկրնար բացարձակապէս
զոհ ըլլալ, թէ և չկրնար ո՛չ պատճառին սահման
մը, ո՛չ ալ հետեւութեան չափ մը դնել. սակայն
մտազիջ նկատող մը հետացումներու անյատակ ան-
դունդը կ՚իմնայ երբ կը տեսնէ թէ այս ամեն բը-

(1) Ա՛րդարեւ կարծիք կայ երբեմն թէ խոնաւութենէ կամ քիմիական եռայմանէ ճճիները, որդերը կը գոյանան. այլ հիմայ ապացուցուած ճշմարտութիւն է. թէ առանց սերման՝ գործադրանաւոր էակի ծնունդ չըլլար, ո՛չ գետնոց, ճճեայ, կենդանեաց, ո՛չ ալ մանկոյ կամ բուսոց, անոնց գոյատեւութեան սկզբ. բունքը սերման մէջ է միայն, առանց սերման՝ անհնարին է ծնունդ ըլլալ:

նական ոյժերը կը քայքային՝ վերատին միութիւն կազմելով։ Ամեն ինչ կը գործէ ամեն բանի համար։

«Աշխարհան ամպերը կը զննէ ուշադիր. աստղին ճառագայթային շողումը վարդէն օդուստ կը քաղէ. խորհրդածութեան սովորող ո՛ր և է մարդ չհամարձակիր ըսելու թէ ապիտակ դժնիկին անուշահոտութիւնն անօգուտ է համասեռութիւններու։ Ո՞վ կրնայ արդեօք հաշուել հիւլէի մը ընթացքը. միթէ դիտե՞ք թէ աւազի հատերու անկումներէ աշխարհներու ստեղծումներ չեն հետեւիր. ո՞վ արդեօք դիտէ ամենամեծին և ամենափոքրին փոխադարձ մակընթացութիւնները և տեղատուութիւնները, էութեան անջրպետներուն մէջ պատճառներուն ազդակի արձագանքը և արարչագործութեան ահագին կոյտերը։ Մուն մը կարեւորութիւն ունի. պղպտիկը մեծ է. մեծը պզտիկ է. ամեն բան հաւասարակշռութիւն է հարկաւորութեան մէջ. զարհուրելի՛ երեւոյթ մարդկային մտքի համար։ Էակները իրարու հետ այնպիսի յարաբերութիւններ ունին որք աչանչելիք կ'արտադրեն. այս անսպառելի ամրողջութեան մէջ՝ արեւէն սկսելով մինչեւ լուն՝ ամենքն ալ իրարու հարկաւորութիւն ունին։ Լոյսն երբ դէպ ՚ի կապտագոյն մթնոլորտը կը տանի երկրային անուշահոտութիւնները, դիտե՞ք թէ ի՛նչ կ'ընէ զանոնք. գիշերն աստղային մուգեր կը բաշխէ նիրհող ծաղիկներու։ Ամեն թեւարկող թռչուններուն թաթը անսահմանութեան թելը կը կրէ։ Բողբոջումը օդերեւութի մը ծագումովը և հաւկիթը կարող ծիծեռնիկի մը կտուցին հարուածովը կը խառնուի. և որդի մը ծնունդ տալու ժամանակ նաև կամրատաշխատութիւնը բերելու կը պարապի։ Ամէն որ հետագիտակը կը վերջանայ, մանրադիտակը կը սկսի։ Երկուքէն որի՞ն տեսութիւնն աւելի մեծ է։ Ընտրէ՛։ Բորբոս մը բիւրաւոր ծաղիկներու խումբ մ'է. ծիր

կաթի մը աստղերու բազմութիւն մ'է։ Իմացականութեան իրերը և նիւթին արտադրութիւնները նոյն խառնուրդն ունին. խառնուրդ որ եւս աւելի զարմանալի է։ Տարրերը և սկզբունքները իրարու հետ այնքան կը խառնուին, կը միաւորին, կը զուգաւորին, և իրարմով կը բազմապատկին որ վերջապէս նիւթական աշխարհը և բարոյական աշխարհը միեւնոյն ճառագայթին կը յանդին։ Երեւոյթն ուրիշ բան չէ, եթէ ոչ ինքզինքին վրայ միանձնական ուշադրութիւն մը։ Տիեզերական ընդարձակ փոխանակութիւններու մէջ հանրական կենդանութիւնը անյայտ քանակութիւններով կ'երթեւեկէ, և այս երթեւեկութեան ժամանակ ամեն բան ամիեզերական արտաբուրումներու աներեւոյթ գաղտնիքին մէջ կը տապալէ, ամեն բան կը գործածէ, չկորուսեր և ո՛չ իսկ քունի մը երազը. հոս կենդանիկ մը կը սերմանէ, հոն աստղ մը կը մանրէ, կը ճօճի և օճապէս կ'անցնի. լոյսը ոյժի մը և մոտածումը տարրի մը կը փոխէ, ցանուցիր և անբաժանելի կը ճնայ, ամեն բան կը լուծէ՝ բայ ՚ի սա երկրաչափական կէտէն՝ որ է կաթը. ամեն բան կը վերածէ դէպ անհատ մը որ է հոգին. ամեն բան կը փթթէ ամառուած. ամեն գործունէութիւնները՝ ամենաբարձրերէն սկսելով մինչեւ ամենաստորինը՝ ահարկու մեքենականութեան մը միութեան մէջ կը խառնակէ. վեհանձն մը թեւարկութիւնը երկրիս շարժումին կը յարէ. երկնից հաստատութեան վրայ մոլորակին շարժումը օ՛վ գիտէ, թերեւս գէթ օրէնքի նոյնութեամբ՝ կ'ենթարկէ կաթիլ մը ջուրի մէջ չրածին որդի մը առած շրջանին ազդեցութեանը. Մտքէ մեքենայ մ'է այս տիեզերական կենդանութիւնը. անուային ակռաներու խառնուրդ մ'է այն՝ որու առաջին շարժիչը մէղուն է՝ և որու յետին անիւն է զոդիակոսը»։ (Վիքթոր

Հիւկօ · 'ի Թշուառան · Մաս Դ· Գր· Գ· Գվ· Գ·)
— Անուաւոր ժամացուցի, չոգենաւի և կամ ուրիշ
աւելի զարմանագործ մեքենայի մը համար՝ դիպուա-
ծով եղած բան մըն է ըսող յիմարին վրայ գու-
թերնիս կը շարժի նէ, ո՛չ ապաքէն կրկնակի իրա-
ւամբ գութերնիս շարժելու է՝ այս տիեզերական
հիւսքանչ մեքենային համար դիպուածով 'ի գոյու-
թիւն եկած է ըսողին յիմարութեանը վրայ, որ
լոկ իւր խառնագնաց անզուսպ կամ անխրատ բա-
րուցը համար կը հնարի դիպուածականութիւնը,
ուզելով կամ վախաքելով որ վարձահատոյց և վրի-
ժառու Աստուած չըլլայ:

Ըսածնիս ապացուցանելու համար Ս· Գրքին սա
խօսքը մէջ կը բերեմք· «Ասաց անզգամն 'ի սրտի
իւրում, թէ ո՛չ գոյ Աստուած»: (Սաղմ· ԺԳ· 1)
Իւր հոգին մէջ չըսեր, ուր բան՝ դատողութիւնը կայ,
այլ իւր սրտին մէջ՝ ուր փափաքներ կան· ըսել ու-
զելով թէ միտքը՝ ուղիղ դատողութիւնը Աստուած
չէ՝ չէ ենթադրութիւնը չկրնար ընել, չկրնալով
բնութեան այս զարմանակարգ յօրինուածը՝ անբան
անգոյ դիպուածի կամ պիտակ անուն (անէակ)
բնութեան գործ համարել, այլ միայն իւր կամացը
և կրիցը գերի եղող անմիտը, յիմարը կրնայ փա-
փաքիլ և կը փափաքի որ Աստուած չըլլայ: Ս· Օգ-
ոստինոս առածն է սա· «Անիկայ կ'ուրանայ Աս-
տուծոյ գոյութիւնը, որուն որ լաւ կ'երեւնայ՝ որ
Աստուած չըլլայ»: Այլ սակայն՝

Աստուծոյ գոյութեան էն մեծ ապացոյցը մեր
գոյութեան մէջ ունինք: — Ինչէ՞ն է որ ապա մեն-
կուենք՝ զեռ իրենց բանաւորութիւնը չսկսած՝ Ա-
րարչի մը գոյութեան գաղափարը իրենց հոգւոյն՝
իրենց մտաց մէջ տպաւորեալ ունին, առանց ուրուք
ուսուցանելոյ, որն որ 'ի սկզբան անկերպարան գա-
ղափար մ'ըլլալով՝ տակաւ բանաւորութեան հետ

մկտեղ կատարելութեան կերպարանք կ'առնու:
— Ո՞վ դրած է անոր հոգւոյն մէջ այս գաղափարը:
— Վերնական աչխարհս՝ նկութը չէր կրնար ապդել
իրեն զայս· ապա ուրեմն Արարիչն ինքնին տպա-
ւորեց անոր բնութեան, հոգւոյն և մտացը մէջ
իւր գոյութեան գաղափարը՝ 'ի տեղծագործել
անդ զնա, իբրև ներքին վկայ իւր գոյութեան:

Ուրիշ ապացոյց մ'ալ խիղճը, որ մարդոյս հոգւոյն
ու մտացը մէջ իբրև ձայն Աստուծոյ՝ խօսուն վկայ
մ'է անոր գոյութեան: — Խիղճը եթէ 'ի մեզ բնու-
թեան ձայն ըլլար, եթէ մեր մարմնոյ բնութե-
նէն և անոր ներգործական և կրաւորական զօ-
րութիւններէն յառաջ եկած զօրութիւն մը եղած
ըլլար, մեր ամեն բարոյական գործոց համար մեր
մտաց հատանութիւն պիտի տար· բայց անանկ
չըլլար: Երբ բարիք մը կը գործեմք՝ եթէ ճշմար-
տապէս իբր բարեգործութիւն անոր մէջ կը գըտ-
նուիմք, կ'ընդարձակէ սրտերնիս և ներկրութեամբ
կը լեցընէ, նկութապէս սատիկ նեղութեան, անճ-
կութեան մէջ գտնուած առեններս ալ· իսկ եթէ
անտարբերութեամբ և առաչս կը գործեմք բարին,
այն ներկրութիւնը չենք ունենար՝ յառաջ չունենանք
նէ: Չարիք մը գործած առեններս ալ՝ կամաւ գի-
տութեամբ և խորհրդով գործելնուս՝ սատիկ յաւ
և անհնարին լքում մը կ'ապդէ մեզ· իսկ եթէ ակա-
մայ կամ յանդիպաս գործած ըլլանք, մտքերնուս
դատաստանովը կ'սիրուիմ զմեզ՝ իբր անպատասխա-
նատու այն գործոց ցոյց տալով՝ զորս ընդ հարկաւ
գործած ենք իբր անազատ մեքենայ, և չարիքը՝
իբր անազատ մեքենայէ արտադրեալ անհատներ
գործ հրատարակելով: — Այս ձայնը եթէ մեր
մարմնոյ բնութենէն մեզի ազդուած ձայն ըլլար,
ո՛չ երբէք պիտի հակառակէր մեր ղդացմանց· ինչ-
նոյն գործողական օրէնքէ յառաջ եկած ըլլալուն

համար՝ պիտի համաձայնէր մեր ամեն բարոյական գործոց · քանի՛ որ անանկ չէ՛, քանի՛ որ անաչառապէս կը դատէ մեր գործերը իբր հսկող դատաւոր մեր բարոյական գործոց և պարտեաց, ուրեմն մեր բարոյական պարտաւորութիւնները սահմանադրող Օրէնսդիր Աստուծոյ ձայնն է, որ իբրեւ անկաշառ խորհրդական կամ դատաւոր մեր բանաւարութեան ուղեցոյց տրուած է Աբարչէն:

Խղճին (իբր ձայն Օրէնսդիր Աստուծոյ, ուղեցոյց բարւոյ և չարի և կամ իբր քանոն բարոյից՝) ՝ի մարդ գոյութիւն ունենալը անանկ թախանձեցուցիչ հզօր ապացոյց մ՚է գոյութեան Աստուծոյ, որ նիւթաւոն ու բնապաշտը չհոգեւորով կը ճգնի՝ առանց յաջողելու՝ ուրանալ զայն, և կամ դէթ ընչել անոր զօրութիւնը: Ուրանալ չզօրելով քանզի ուղայ մանուկը առանց չարն ու բարին ուսանելու կ՚զգայ զայն, և եբբեւ փեռնուած չէ որ պղտոր ձոռոտուան ընդ, կ՚ըսէ՝ թէ խիղճը Անխոխոսելի Աստուծոյ ձայնը չէ՛, քանզի ամեն մարդոց միօրինակ անխոխոսելի ազդումն չ՚ընէր · ի՛նչ որ քաղաքակրթեալ ազանց իբր մեղք կ՚ազդէ, Մագքթաց և Վրկանաց վայրենեաց իբր առաքինութիւն կը հրամայէ · քաղաքակրթի ազինք՝ մինչդեռ իրենց սիրելիները՝ ծնողքնին օրհասական ցաւոց միջոցին անոնց ցաւերը դիւրել · Մագքութք և Վրկանք խղճմտին կը դրդուին զանոնք սպաննել որ տանջանքնուն ազատին · ապա ուրեմն՝ կ՚ըսէ, խիղճը Աստուծոյ ձայնը չէ՝ որ նոյն բանը քաղաքակրթելոյն իբր առաքինութիւն գործել հրամայած առեն, վայրենւոյն՝ իբր բարբարոս անգթութիւն՝ չգործել կը հրամայէ: Սակայն սխալէ այս, և սխալմունքը գործոզութեան նոյնութեան վրայ է: Առաքինութիւնն ու մեղութիւնը, բարին ու չարը՝ մեքենական գոր-

ծոզութեան մէջ չէ՛, պէտ-որ-պէն՝ նպատակին մէջ է · մի և նոյն գործոզութիւնը կրնայ մղեկան ալ ըլլալ, առաքինական ալ, անտարբեր ալ: —Նկարիչը պատկեր մը կը գծէ՝ լոկ վարպետութիւնը ցուցընելու համար, ասիկայ բարոյական գործ չէ՛, անտարբեր գործ է · կը գծէ՝ ՝ի յորդոր բարեպաշտութեան, այս ալ առաքինական գործ է, բայց թէ որ գծէ ՝ի գրգիռ մեղութեան վրէժխնդրութեան ևս, այս ալ կ՚ըլլայ մղեկան գործ: Ապա գործ մը դիտաւորութեան կամ նպատակին համար առաքինական կամ մղեկան կ՚ըլլայ: Ուրեմն քաղաքակրթի և վայրենի ազգաց իրենց սիրելեաց օրհասական ցաւերը դիւրելու համար տարած դարմաններնուն տարբեր գործոզութեանց պէտք չէ նայիլը, այլ նպատակնուն, որ միապէս բարի է · իսկ եթէ վայրենեաց գործը չար է, պատճառնին պէտ-որ-պէն է, որ զայն բարի կը վճռէ, ու չէ թէ գործոյն նպատակն՝ որ բարի է, և վասն որոյ խիղճն ալ զայն իբրեւ բարի կը վճռէ և կ՚ազդարարէ: Ապա ուրեմն խիղճը դատաւոր չէ մարդոյս պէտ-որ-պէնը, որ կրնայ մոլորիլ գայթիլ միշտ, այլ անոր գործոյ նպատակն եւ պէտ-որ-պէնան պատճառն է, որով գործ մը բարոյական կ՚ըլլայ, և ըստ այսմ ահա նոյն է Աստուծոյ խիղճը, որ բարոյից կանոնը կը տնօրինէ, բարին ու չարը կը ճանչցընէ միապէս քաղաքակրթեալին ալ, վայրենւոյն ալ: — Դարուս երեւելի հանճարներէն մին՝ Վ[illegible] Հիւգօ՝ աղօր կ՚իմաստասիրէ խղճին վրայօք · « Մարդոյս կարողութիւններուն մէկ քանին, որք են մտածումը, մտախոհութիւնը, աղօթքը, դէպ Անծանօթը (ի Անհնանալի Անըմբռնելի էակը) կը դիմեն: Անծանօթը Ովկիանոս մ՚է: Ի՞նչ է խիղճը · Անծանօթին ուղեցոյցն է: Մտածումը, մտախոհութիւն, աղօթք, ատոնք խորհրդաւոր և մեծ ճառագայթներ են, զոր պէտք է յարգել: Ո՛ր կեր-

թան հոգիին այս վեհաչուք վողիողումները. դէպ 'ի մթութիւն, այսինքն դէպ 'ի լոյս. (յ' դէպ 'ի անտեսանելի յոյն) : » ('ի Թլուսան. Մ՚՚՚ Գ. գր. Է. Գլ. Ե :)

Ուրիշ իրողութիւն մ՚ալ այս է: Ինչէ՞ն է որ բոլոր աշխարհը՝ ամենուրեք և ամեն ժամանակ, ամեն ազգ և լեզու և ամեն վիճակի մարդիկ ուսումնական և ազէտ, հարուստ և աղքատ, քաղաքակիրթ և վայրենի, ալնուական և ռամիկ, խուժ, դուժ, ատոնց ամենքն ալ Աստուածութեան պաշտօն տրած են, թէ և տարբեր եղանակաւ: «Ամեն մարդիկ՝ կ՚ըսէ Արիստոտէլ, Աստուածութեան գոյութիւնը կ՚ընդունին» : Պլիներոն. «Չկայ խուժադուժ և վայրենի ազգ մը որ չգիտնայ թէ Աստուած մը ձանչնալ պէտք է, չգիտնալով հանդերձ թէ ո՛վ է այն» : Սենեկայ. «Բոլոր մարդոց ընդհանուր է Աստուծոյ հաւատքը, և չկայ այնչափ արտաքոյ օրինաց և կարգաց ընկերութիւն մը որ աստուածոց տանց չը հաւատայ» : Նոյն բանը կը հաստատէ Եղիանոս՝ խժդժագոյն ազգաց համար ալ, ըսելով թէ անոնցմէ ո՛չ ոք երկրայեցաւ, մանաւանդ թէ խոստովանեցան միշտ թէ աստուածներ կան և մարդկային իրաց խնամք կը տանին: Պլուտարքոս 'ի յանդիմանութիւն Կոլոտեայ Եպիկուրեան փիլիսոփայի կը գրէ. «Եթէ աշխարհ ամենայն պտըտիս, կրնաս գտնել քաղաքներ՝ որ չունենան ո՛չ պարիսպ, ո՛չ դրադխուժիւն, ո՛չ ինչք, ո՛չ յարկ, ո՛չ հարըստութիւն, ո՛չ դրամ, ո՛չ տեսարան, ո՛չ ալ գպրոց. բայց չես կրնար գտնել երկիր մը, որ աստուածներէ բարիք ընդունելու և դէշ պատահարներէ ազատելու համար արբշռան բաներ չունենայ, աղօթք, երդումնք, պատգամախօսութիւն և զոհագործութիւն. ո՛չ ոք բնաւ տեսաւ կ՚ըսեմ կամ լսեց թէ անանկ տեղ մը կայ» : Մաքսիմոս Տիւրացի

ասէ. «Թէև մեծ տարաձայնութիւններ, խառնուածքներ և հակառակութիւններ ծագած կը տեսնուին մարդկան մէջ, սակայն տիեզերք ամենայն կը միաբանին և կը հաւանին այս մէկ կարծեաց և հաստատուն օրինաց, թէ ամենուն Թագաւոր և հայր միայն Աստուած է» : Սոփոկղիսէս. «Մի է Աստուած արարիչ երկնի, արեգական և երկրի, և ծովու և հողմոց» : Պոսիդոնիոս. «Կրօնքը ազգաց իրաւունքն է, վասն զի ամենայն ազինք պաշտած են» : Ե՛ւ Պլինիոս. «Այս ասոյգ է որ բնաւծին է ամենայն մարդկան և իրը թէ անունց հոգւոյն մէջ ինքնուած է թէ աստուածներ կան» :

Բոլոր հին և նոր Մասնագիրք, Պատմաբանք և Քերթողք, Մովսէսէն սկսեալ, Յովսեփոս՝ հայր պատմութեան, ամենայն պատմիչք Յունաց և Լատինացւոց՝ Հոմերոս եւ, 'ի նկատի առնել անդիրեանց՝ հնոց ազգաց օրէնքներն ու սովորութիւնները, միանդամայն կը յայտնեն թէ անոնք Աստուածապաշտ էին: Ո՛րչափ մտածենալ աշխարհիս բազմազանութեան, այնչափ աւելի յարգ և պատիւ արուած կը գտնեմք Աստուածութեան: Գրեթէ թէ բոլոր ազգերը նախանձընդդէմ կը պահծային թէ աստուածներէն ծագումն առեր են, և հին ու վխին դարերը դէց և դիւցազանց ընծայուած են: Քաղդէացին ու Եգիպտացին որ ամենէն հին ճանչցուած ազգերէն են, աւելի կրօնասէր (ցնոռիպաշտ) կը գտնեմք: Հռովմայեցիք որ պաշտօնասիրութեամբ հռչակեալ են, և ժամանակաւ յետոյ, իրենց արարողութիւններէն շատերը Եւրուբացիներէն առին, որք կարի իսկ քաջ հին ժողովուրդ էին: Եգիպտական ամբարտաւանները, չիրիմները, արբատրաշինները՝ ժամանակին ամենածախ ժանիքէն խոյս տուին այս ամենուն վկայ ըլլալու համար. ինչպէս նաև օր ըստ օրէ երկրին ընդ երքներէն հանուած

հնութիւնք, անօթք, աչտանակք, սկաւառակք, բազինք, խորաքանդակք արձանաց եւ. կան նաև մարմարիոններ, մեռաղներ կամ դրամներ, որոց վրայ աստուածներ կամ աստուածոց դասեր քանդակուած՝ դրոշմուած են. ինչպէս և նաև վիմարդեայ ամբաւ չիրիմներ՝ մեռելոց ուրուականաց ուղղեալ քանդակներով. ինչպէս են աղօթք, նուէրք, զոհք և բուրմունք, որոնցմով օգտիլ կ'կարծէին մեռելոց ուրուք։— Ուսկի՞ց արդեօք ծագած կրնար ըլլալ այս հանրական հաւատքը։ Կա՛մ՝ի բնէ և կա՛մ անաստուածեննէ։ Երկուքին ալ վկայութիւնն ունիք. Սենեկայի ու Պիկերոնի վկայութիւնը վերը յառաջ բերինք, թէ բնածին է՝ի մարդ Աստուծոյ գոյութեան գաղափարը. իսկ աւանդութեան համար կ'ըսեմք թէ ուրիշ տեղէ մը ծագած չէր կրնար ըլլալ, եթէ ո՛չ՝ նախաստեղծ մարդէն՝ իւր բոլոր սերնդոց, որն որ բուն իսկ իւր ստեղծողէն հրահանգուած էր։ Ամեն կրօնից պատմութեանց մէջ կը գտնեմք այս հանրական աւանդութիւնը, թէ երբեմն Աստուած ինքնին խոնարհած է յերկիր՝ի հրահանգել զմարդիկ։ Սաստուրնոսի՝ի Լատիոն Սկեդարու թագաւորութիւնը, և Ապողոնի՝ Թեսսալիոյ հովուաց մէջ բնակութիւնը այս անտարակուսելի ճշմարտութեան թեկորներն են աներկբայ։

Սուտ է ըստ ամենայնի՝ թէ որ ոմանք ասոր հակառակ ուզեն ըսել, թէ Աստուծոյ գաղափարը մարդոց հնարքն է, արարչագործութեան եւ պատմութիւնները ստայօղ են, քաղաքագիտութենէ կամ շահադիտութենէ յառաջ եկած են։ Վասն զի մարդկային միտքը դեռ կարող եղած չէ բնութեան մէջ կայ չեղած իրի մը գաղափարը յղանալ։ Մինչև որ ճշմարիտ դրամը չհնարուեցաւ, սուտ կամ կեղծ դրամի գաղափարը ծնունդ չառաւ, և հեծեալ մը երեւնալէն ետքը ձիամարդոյն, այծամարդոյն, յու-

կապարկի առասպելները երկնուեցան, կամ թէ ըսեմ՝ ինքնին եկան մէջ մտան։

Եւ ո՞վ կրնար հնարած ըլլալ Աստուծոյ և Անոր կրօնքին հարկաւոր գաղափարը։ Քահանայնե՞րը, ինչպէս կ'ախորժին շաղփաղփել անկրօններուն անվիտները։ Բայց ատիկայ հակաստութիւն կ'ըլլար։ Ո՞ր խօլամիտը յանձն կ'առնու այնչափ անվիտ ըլլալ, որ ամեն տրամաբանութեան հակառակ ըսէ, թէ կրօնք ըսուած բանը միևչդեռ գոյութիւն չունէր, կրօնքի պաշտօնեայներ կային, և երբ քահանայագործութիւն ըսուած բանը աշխարհի ազգերուն ծանօթ չէր, քահանայներ կային՛.՛.՛։ Աղէկ որ Ազգաց պատմութիւնը այս վայրահաս չոգմոգներուն շաղփաղփանաց հակառակ պահած է մեզ այս ճշմարտութիւնը, որ՝ի նախնումն քահանայագործութեան որոշեալ պաշտօնէից դաս մը չկար։ Յաճախակ քահանայներ չկային. Նահապետք և Հայր իւրաքանչիւր՝ իւր տան քահանայն՝ զոհագործն էր. եթէ ըսէն անցաւ այս պաշտօնը իշխանաւորաց, քաղաքապետաց և թագաւորաց։

Այլ ոմանք անմտագոյնք եւս՝ հնարեցան ցնորիլ ըսելու՝ թէ երկիւղն ու ապիտութիւնը հնարեցին Աստուծոյ և կրօնքի գաղափարը։

Ա. Մարդիկ եթէ առ երկիւղի երկնած ըլլային Աստուծոյ և կրօնքի գաղափարը, պէտք էր զԱստուած իբր անողորմ անողոք և քաումնելի էակ մը ճանչնային, միշտ չանթերով և հարուածներով ըսպառաղինեալ, ուր աշխարհս աշխարհ ըլլալէն՝ի վեր՝ անոր հակառակ՝ Աստուած ըսուած էակը իբրև բարութեան սիրոյ և ողորմութեան աղբիւր պաշտուած է միշտ։ Սկիւթացիք Մեծին Աղեքսանդրու կ'ըսէին. «Թէ որ Աստուած մըն ես դուն, պարտիս մարդոց բարիք ընել, և ո՛չ թէ անոնց ինչքերն ու ստացուածքները կողոպտել»։ (Կուրտիոս. Պատմ. Ա-

ձէ՛՛՛· Ի· 8 ։) Գրեթէ նոյն խօսքը կ՚ըսէին Ամերիկացիք՝ պիրենք նեղող և հարստահարող Եւրոպացւոց։ Աբրամպդ կամ Դիոս հայր աստուածոց և մարդկան կոչուեցաւ՝ ի Յոյն· Լատինք՝ Ժիւբիտեռ, Եօվիս կոչեցին, իբր օդնական հայր, միանգամայն Օբղիմուս մաքսիմուս, ցՙ աննախարարի՝ ամենամեծ, իբր մեծվայելչութեան և մեծ բարերարութեան համար։ Ի մեզ եւս անուանեցաւ՝ Վանադոյ, իբր հիւրընկալ և կերակրող· (Խոբէն· Բ· Գվ· Խ։ Աբ՛՛՛· ՃԺԹ։) Անահիտ եւս՝ անուանեցաւ Մայր օդնական ՀԱՅՈՑ ԸՆԵՒՆՑ, ՓԱՌՔ ՊՂԾԻՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՀԵՑՈՑԻՆ, ՇՈՒՆՉԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՀԱՊԱՆՈՒԹԻՒՆ ԱՂԵՒՈՐԻՆ ՀԱՅՈՑ։ (Աբ՛՛՛· Ե· Զ·) Մեր նախնիք՝ իրենց պաշտած երեք վեհապոյն աստուածներէն՝ յ Աբրամպդէն, Անահիտէն և Վահագնէն՝ Դայն բոլորէ՛ն կ՚ապաւէին, և այս բարեմաղթութիւնը կ՚ընէին իրարու· «Լոյսիւն՝ պարարտութիւն յաբուոյն Աբրամպդայ, խնամակալութիւն յԱնահիտ Տիկնոջէ և քաջութիւն հասցէ ձեզ՝ ի քաջն Վահագնէ»։ (Աբ՛՛՛· ԺԲ։) —Աննեկա իրեն հարցընողին՝ թէ Աստուած ի՛նչ կը խորհի և կը դործէ, այսպէս կը պատասխանէ· (Թղ՛՛· կե։) «Կը հարցնես թէ Աստուած ի՛նչ կը խորհի և կը մտածէ· ԲՈՒՆԻՆ։ Եւ թէ՝ ինչո՛ւ համար Աստուած աշխարհս արարչագործեց, վա՛ռ չէ ԲՈՒՆԻՆ է»։

Ա՛ռ ալ առոյգ է որ եթէ Աստուծոյ գաղափարը երկիւղի ծնունդ ըլլար, բովանդակ աշխարհի և բնաւին դարուց մէջ միօրինակ չէր պաշտուէր։ Քանդի միեւնոյն երեւոյթը բոլոր մարդոց միանդամայն նոյն ներդործութիւնը չկրնար ընել· այս անկարելի է· քիչուորներ միայն՝ սին երկիւղիւ վարակեալ՝ եթէ Աստուծոյ գաղափարը երկնեցին, շատերը աւելի սրտոտ անվախ աներկիւղ մարդիկ ըլլալով՝ անոնց եղջերուաքաղ խրտուիլակը ծաղր ու ծանակ կ՚ընէին· այն քիչերն իսկ՝ եաքէն իրենց

երեւակայութեան մէջ բորբոքած սին երեւոյթները կը թօթափէին։ Բայց անանկ չեղաւ, ամեն դարուց մէջ Աստուածութեան գաղափարը հզօր կեցաւ և տիրեց, չպակսեցաւ բնաւ, և չեղաւ երբէք աստեն մը՝ յորում Աստուածութեան մը պաշտօն չտարուէր։

Բ· Բայց այլոց՝ որք կ՚ըսեն թէ, ուանոնց՝ իրերու բնական Ներդործութեանց տգէտ ըլլալնին պատճառ եղած է Աստուծոյ գաղափարը երկնելու, ատոնց կոյր չարամտութեան վրայ ցաւիլ միայն կրնանք։ —Ի՞նչպէս կարելի է որ բնութեան դործոց և ներդործութեանց տգէտ մարդիկ՝ իրենց տգէտ տխմար մտքովը՝ բնական իրաց ամենաբնականն սկիզբ տուող պատճառ մը հնարեն։ Աւանկ ալ ըլլայ նէ՝ ասկէ կը հետեւի թէ Աստուածութեան գաղափարը աւելի պայծառ փայլած պիտի ըլլայ տգիտագոյն մարդոց մէջ· քաղաքակիրթ լուսաւորեալ ազգերէ աւելի՝ բարբարոսաց, տխմարաց և ապուշներու մէջ բարձրագլուխ պանծացած պիտի ըլլայ Աստուծոյ պաշտօնը։ Հապա ինչո՞ւ համար նոյն անկրօնք կ՚աշխատին արիւն քրտինք կը թափեն առանանկ տխմար տգէտ ժողովուրդ մը գտնելու և մեզի ցուցընելու համար՝ որ Աստուածութեան գաղափարն ունեցած չըլլայ։ Միթէ կարելի՞ է որ մի և նոյն տգէտ տխմար ապուշ ժողովուրդն ինքնին ըլլայ Աստուածութեան գաղափարը հնարող, ու մի և նոյն աստեն միանգամայն անդէտ ըլլայ ինքն այն գաղափարին։ . . . Ասկից աւելի լսելիր հակասութիւն կրնա՞յ մի ըլլալ . . . ։ Դարուց և ազգաց պատմութիւնը կը բողոքէ այս չարամիտ սուտին դէմ։ Ամենէն լուսաւորեալ ազանց կ՚ըսեն ականաւորը մարդիկները, Գալիլէոսի, Կարտեսիոսի, Նեւտոնի, Եւլերի, Գեըլերի պէս մարդիկ աւաւել քան զաւաւել հիացան զարմացան բնութեան Արարչին վրայ

և զայն մեծարեցին : Անգիտութիւնը ոգիտութիւնը՝ Հչմարիտ Աստուածածանօթութենէ՝ Աստուածպաշտութենէ՝ բազմաստուածութեան հեթանոսութեան կրնար իյնալ· բայց Աստուծոյ մը գաղափարը չեղած առեն՝ զայն հնարել չէր կրնար :

Ինչպէս որ Արարիչ Աստուծոյ գաղափարը տըգէտ ոխմար ժողովրդեան մտացածին հնարքը չէր կրնար ըլլալ, անանկ ալ լուսաւորեալ քաղաքակիրթ ազգաց իշխանաւորաց գիւտը չէր կրնար ըլլալ· Սուրբ պատմութեան աւանդութիւնը քաղաքագիտութենէ և շահադիտութենէ ալ շատ յառաջ է :

Է՛ն հին ազգաց և կրօնից տարեգրութեանց անտարակուսելի վկայութիւնները քննելով կը գըտնեմք որ ամենէն հին առեններըը՝ աշխարհիս ամեն կողմերն ալ ինչ ազգեր որ ծներ ապրեր են, ամենքն ալ 'ի սկզբան անդ գոյաւորութեան իւրեանց դէռ ազգութեան և կառավարութեան ձեւ չառած իրը միևնոյն հրահանգով հրահանգուած՝ ունեցեր են գոհեր, նուէրներ, խունկեր, ոծներ, աղօթքներ, քահանայներ, սեղաններ, մարդարէներ կամ հարցուկներ, սրբավայրեր· յետոյ ուրեմն պատգամներ, տաճարներ, հմայք եւ· յորմէ Հչմարտապէս սա միայն կ'ապացուցուի, թէ ատոնք ամենքն ալ բնապէս ճանչցած և ընդունած են Աստուծոյ հարկաւոր գոյութիւնը և անոր պաշտամանն այս հրահանգները, որ ուղղակի նախամարդէն աւանդութիւն էր ընդ ամենայն տիեզերս, և ո՛չ թէ ուր ուրեմն իրենց իշխաններն ու թագաւորները հնարեր էին իրենց շահադէտ նկատումունքներովը· թէ որ իշխաններն ու թագաւորները բան մը ըրին իրենց շահուն համար՝ որ շատ ուշ միտքերնին ինկաւ, այս էր որ կրօնքն ու սուրբ պաշտօններն աղաւաղեցին, Հչմարտութիւնը տուեցին, և սուրբ պաշտօնը պղծութեան փոխեցին· կայ եղած բան մը այլայլե-

ցին, նոր բա՜ն մը չհնարեցին· Կրօնքին արտաքին պաշտամունքները՝ որոցմով ռամիկը կը շլանար, իրենց քաղաքագիտութեան շահուն գործածեցին· բայց Գերագոյն Էակին գաղափարը՝ զոր իրենք չհնարեցին՝ անեղծ մնաց :

Ինչ մը աւելի թախանձեմք· ազգերուն կառավարութեանց ծագումն ալ նայինք· Աորուց, բաբէլացւոց, Քաղդէացւոց կառավարութեան հիմնադիրն Ինոս կամ Բէլ՝ իրեն թագաւորութեան ըսկիզբ դրաւ աստուած անուանելով զանձն, որուն ո՛չ ոք ընդդիմացաւ (բաց 'ի Հայկայ), երբ՝ եթէ աւանդութիւն չըլլար ժէջերնին թէ երբեմն Աստուած ինքնին յերկիր իջած է հրահանգել զնարդիկ, անհնար էր որ այս նոր գաղափարն ընդունէին: Եբրայեցւոց կառավարութիւնն սկիզբէն մինչև Սաուղ Աստուածպետական էր : Հայոց նահապետը Հայկ՝ ծանօթ է՝ Բէլայ գերաստուածութիւնը հերքելուն ու Հչմարիտ Աստուծոյ պաշտօնէն չդեռնելուվը· բայց Պարսից առաջին թագաւորին համար բան բնաւելու չէ՛· արդէն աշխարհի տիրող կրօնքը հեթանոսութիւնը տիրած էր 'ի Հայս : Եգիպտացւոց, Պարսից, Հնդկաց, և Ասիացւոց համար հերիք կը համարիմք ըսել թէ քրմապետական կառավարութեամբ ծնունդ առած և տեւած են : Ցոյներն ինքնին կը պարծին իրը աստուածներէ սերեալ, և աստուածներու պաշտամանց՝ կամ լաւ ևս ըսեմք՝ պղծութեանց զաւակատեալ : Հռովմայեցւոց Հռոմուլոսն ալ ինքզինք Կուիրինոս (աստուածորդի Արէսի) կ'անուանէ, և կամ գինքն սպանող ծերակոյտն կ'անուանէ այնպէս, իբր ոճիրը պարտկելու համար : Ի՛նչպէս ալ ըլլայ, սա ազէկ կ'երեւնայ որ ազգին մէջ արդէն չատո՛նց կը տիրէր Աստուծոյ և Անոր կրօնից գաղափարը :

Գիչ մ'ալ յառաջ երթանք, կը տեսնեմք որ հին

ազգաց աւանդութիւնները ալ ամբողջ՝ տուրք կը-
րօնքին ճշմարտութիւնները՝ Աստուծոյ արարչագե-
տութեան գործքերը կը հաստատեն։ Աշղեօք խիստ
գործնական աքանչելի ապացոյց մը չէ՞ Աստուծոյ
վեցօրեայ արարչութեան, և եօթներորդ օրը (ց
չաբաթը) սրբելու պատուէրին, է՛ն հին դարերու
մէջ անգամ աշխարհիս ամեն մասերուն մէջ ամեն
ազգաց և լեզուաց իբր՝ ի միջէ հրամանէ չաբաթը
եօթն աւուրց բաժնելնին. մինչդեռ ամսոց և տարի-
ներու չափուց մէջ բազմիցս կը տարբերէին իրարմէ։
Ամենէն հին ազգաց հնադոյն կրօնքները, որոնք
ժամանակի և տեղւոյ ահագին անջրպետութեամբ
իրարմէ հեռու ապրած ծագկած են, ըստ ղիպա՞ց
է որ ամենքն ալ անկերպարան գունդի, խաւարի,
քաւոսի, ջուրի պատմութիւններ կը կցկցեն. և
վասն՝ ի ցնո՞րս կը դանդաչեն՝ երբ միաբերան պատ-
րող օձի, առւակս բուրաստաններու, չորս վտակ-
ներու, կենաց պտուղներու, նախամարդոց որկո-
րմտութեան և անկման պատմութիւնները կ՛ընեն,
չէ նէ հրաշալի համաղիպութեամբ մ՛է որ Ասիոյ
ծայրերը առանձնացած Հնդիկն ու Ճենը՝ իբր հա-
կառնէին չաւ իրմէ հեռուն ապրող Բաբելացւոյն
և Պարսկին հետ, Ափրիկէի մէջ կղզիացեալ Եղիպ-
տացւոյն ու Թերայեցւոյն՝ Եւրոպայի Յոյնին հետ
նոյն և մի չըհեղեղի, մարդկութեան երկրորդ նա-
խահօր և երեք ճեառերու, Նաւի, ծիածանի, ա-
ղաւնիներու, մեծ զոհի մը, այդիի, գինւոյ, գի-
նովութեան, սկայներու ևս պատմութիւնները կ՛ե-
րազեն։ Աշղեօք ասոնք ու ասոնց նման խիստ
բազմաթիւ հանրական աւանդութիւնները՝ իրարմէ
այնչափ հեռու, իրարու անծանօթ և անհաղորդ
ազգերու բերնէ՝ թէ՛և շատ մը զարդերով տես-
րիւրեալ՝ պատմուած տեսնելով, Աստուծոյ և իւր
գործոցը վրայ՝ զոր Մովսէս կը պատմէ, դոյզն մինչ

տարակոյս կը մնա՞յ ճշմարտութեան. և թէ՝ Օտա-
րախոհք արդեօք այսչափ ապացուցութեանց մէկ
հարիւրորդն ունի՞ն իրենց լոկ այլանդակ էնթա-
դրութիւններին ապացուցանելու համար։ — Մենք
Պիկերոնի հետ կը կնքեմք խօսքերնիս. «Յամենայն
իրս միաձայնութիւն ամենայն ազգաց՝ Օրէնս բնու-
թեան վերկանելի է»։

Վերջապէս՝ ի մեծ զարմացումն անաստուածից
կամ անկրօնից՝ ըսեմք։ Անաստուած անկրօն ըլլալու
համար՝ մարդ ամենէն չնչահասատ ազգերէն աւելի
դիւրահաւան, և ամենէն խնամտուն խնամտասէր
մարդիկներէ աւելի գիտուն չատգէտ պէտք է ըլ-
լայ. բայց և այնպէս՝ կէս ճամբան կը մնայ։ Ամե-
նէն աւելի դիւրահաւան ըսինք, որ հաճի հաւատալ
այն ամեն անտեղութիւններուն՝ զորոնք վերը կը-
րօնքին վարդապետութեամբը լուծեցինք. և ամե-
նէն աւելի գիտուն, որ Աստուած մը Աստուած
ըլլալու համար ի՛նչ բնութիւն ի՛նչ զօրութիւն ի՛նչ
կարողութիւն ևս ունենալ պէտք է, և թէ՝ ի՛նչպէս
գործելու է նա, ասոնք ամենը գիտնայ։ Ակից
ալ աւելին։ Արարիչ Աստուած մը չկայ ըսուած
առեն քանի՛ բիւր դժուարութիւններ, անտեղու-
թիւններ, անհնարութիւններ յառաջ կու գան,
զանոնք ամենն ալ վերլուծելու և անոնց ամենուն
պատասխանելու հարկը կը մնայ վրան. որոց բնա՛ւ
չպիտի կրնայ պատասխանել՝ Ս. Կրօնքին անկրօննե-
րու առարկութեանց դէմ տուած պատասխաննե-
րուն գո՛նէ մէկ հարիւրորդին չափ։

Վերջապէս Հիւկոյի մէկ խորհրդածութեամբը կը
կնքեմք այս գլուխը, որ թէ՛ և գայթելով՝ ուղիղ
եզրակացութեան կու գայ.

«Մի՞թէ մեզնէ դուրս անսահմանութիւն մը կայ։
Մշտակա՞յ է, անփոփոխելի՞ է այս անսահմանու-
թիւնը. մի՞թէ հարկաւորապէս նիւթաւոր է քանի

որ անսահման է. և եթէ աննիւթ ըլլար, միթէ այս աննիւթութիւնը իր սահմանը պիտի չըլլա՞ր. միթէ հարկաւորապէս իմացական չէ՞ քանի որ անսահման է. և եթէ անիմացական ըլլար, միթէ այս անիմացականութեանը սահմանաւոր պիտի չըլլա՞ր: Այս անսահմանութենէն կրնա՞յ էութեան գաղափարը ծնիլ մեր մտքին մէջ, մինչդեռ մենք ինքնագոյութեան գաղափարը միայն կրնանք ունենալ: Ուրիշ խօսքով ըսեմք. միթէ անսահմանութիւնը բացարձակ չէ՞, և մենք ալ իր յարաբերականը...:

«Գիտեմք թէ փիլիսոփայութիւն մը կայ որ կ'ուրանայ անսահմանութիւնը: Ուրիշ փիլիսոփայութիւն մ'ալ կայ որ ախտաբանօրէն կը դատուորի և որ կ'ուրանայ արեւը. այս փիլիսոփայութիւնը կուրութիւն կ'անուանենք:

«Կրերու յատուկ համարձակութիւն մ'է ճըշմարտութեան ապրիլը համարիլ զգայարանք մը զոր չունի մարդս:

«Բայց աւելի հետաքրքրականը կայ. այս սխալարար փիլիսոփայութիւնը հպարտութեան, մեծութեան և կարեկցութեան կերպեր ունի այն փիլիսոփայութեան առջեւ որ գԱստուած կը տեսնէ: Կարծես խլուրդի մը աղաղակը կը լսեմք, որ կ'ըսէ.

«—Գութս կը չարժեն իրենց արեւուդը:

«Գիտեմք թէ երեւելի և հզօր անաստուածներ կան: Ճիշդը ըսելով այսպիսիները՝ նոյն իսկ իրենց հզօրութեանը դէպ 'ի ճշմարտութիւն վերադառնալով՝ իրենք ալ ապահովապէս չգիտեն թէ անաստուած են. ասոնց հետ գժուարութիւնը դրեթէ որոշ բացատրութիւն մը տալն է. սակայն եթէ Աստուծոյ չհաւատան ալ, իրենց հզօր մտքի տէր ըլլալը կը հաստատէ թէ Աստուած կայ:

«Այսպիսիները կը բարեւեմք, վասն զի փիլիսոփայ են, բայց անողոքաբար կը յայտնեմք իրենց փիլիսոփայութեան ի՛նչ անուն ունենալը: —Շարունակեմք: —Զարմանալի բան մ'ալ կայ, որ է բառերով խաբուելու դիւրութիւնը: Հիւսիսաբնակ բնազանցներու դաս մը որ մտքը ինչ մէկ տոպրուած է, ոյժ բառին տեղ կալք բառը դործածելով մարդկային մտքին մէջ յեղաշրջում մը ընել կարծեց:

«Փոխանակ տունկը կ'աճի ըսելու՝ տունկը կը կամի ըսելը իրօք արդիւնաւոր կ'ըլլար, եթէ նաև ըսուեր թէ տիեզերքը կը կամի: Ինչո՞ւ համար, — վասն զի հետեւութիւնը սա պիտի ըլլար. տունկը կը կամի, ուրեմն կալք մը ունի. տիեզերքը կը կամի, ուրեմն Աստուած մը ունի:

«Իսկ մեզի համար որ այս կարգի բնազանցներուն հակառակ ըլլալով հանդերձ՝ յատուկ բան մը չեմք մերժեր, աւելի դժուարին կ'երեւայ ընդունիլ տունկին կալք մ'ունենալը ինչպէս կը պնդեն անոնք, քան թէ տիեզերքին կամք մ'ունենալը դոր չեն ընդունիր:

«Անսահմանութեան կալքը ուրանալը Աստուած ուրանալ է. այս ուրացումը անկարելի է առանց ուրանալու նաև անսահմանութիւնը: Ասի հաստատեցինք: — Անսահմանութիւնը ուրանալուն անմիջական հետեւութիւնն է ոչութիւնը: Ամեն բան «մտքի երկնուսմ մը» կ'ըլլայ:

«Ոչութեան հետ վիճելը հնարին չէ. վասն զի տրամաբանական ոչութիւնը իր հետ խօսողին գոյութեան վրայ կը տարակուսի, և նոյն իսկ իր գոյութեան նկատմամբ անդամ քալ վստահ չէ: Իր տեսութեամբը նկատելով կարելի է թէ նոյն իսկ՝ ինք իրեն համար «մտքի երկնուսմ» մ'ըլլայ միայն: Սակայն չգիտեր որ իր բոլոր ուրացած բաները ամենը մէկէն կ'ընդունի մի միայն Որ բառը արտասանելով:

«Վերջապէս այն փիլիսոփայութիւնը որ ամեն

բան ՈՉ միավանկին կը յանդէ, առնենեբին ճարբայ մը չգտանար մտքին համար։

«ՈՉԸ մէկ պատասխան ունի միայն, որ է Ա՛յո։

«ՈՉՈՒԹԻՒՆԸ նշանակութիւն, զօրութիւն չունի։

«ՉԷՈՒԹԻՒՆ չկայ։ ՉՐՕ չկայ։ Ամեն ինչ բան մ՛է։ Չկը ինչ որ չկը ըսուի.... » (Ի թլսոսոան Մասն Գ. գր. է. գլ. ե. Չ.։)

ԳԼՈՒԽ Բ.

ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒԾՈՅ

Երբ որ աչուընիս՝ աիեզերաց կազմուբեան, անոնց բնութեանն ու օրէնքներուն վրայ յածելնք, առաջին հայեցուածքով անդամ կը տեսնենք՝ անոնց Ընարչին ազատ անսահման անհուն կարողութիւնը, բարութիւնը եւ։ Ապա ուրեմն հարկաւորապէս մի է Աստուած. քանզի անհուն ու անսահմանը կը վանէ զմիւս եւս անհուն ու անսահմանը. երկու անհուն անսահման ի հոմ քանի չեն կրնար ըլլալ. անհուն ու անսահմանը ընկեր չկրնար ունենալ. ինքն չինքեան կրնայ ըլլալ։ — Դարձեալ՝ եթէ մէկէն աւելի ըլլալ հնար ըլլար, անոնցմէ և ո՛չ մին՝ ամենակատարեալ կ՛ըլլար. ինչու որ՝ այն քաղմաորոշ ընթացը հարկաւորապէս պիտի ըլար՝ ա՛ն կատարելեան. հետեւաբար՝ մին միւսին օգնութեան կարօտ պիտի ըլար հարկաւորապէս։ Եւ քանզի իւրաքանչիւրն աշխոյժ կամքներ պիտի ըլլային հարկաւ, մին միւսին հակառակ կ՛ըլլար. միոյն չինածը՝ միւսը կ՛աւերէր՝ իւր ազատ կամեցողութեամբ, որով արարչագործութեան այս հրաշակերտը՝ հակառակութեանց՝ խառնակութեանց արգանդէն վիժած մը կ՛ըլլար, և կամ՝ ի գոյութիւն գալու միջոցին վերստին չքանալու թիւն կը դառնար։

Իսկ թէ ցունաց, Եգիպտացւոց, Հռովմայեցւոց պէս իմաստասէր՝ գիտուն ազգերու մէջ բազմաստուածութիւն կը տիրէր երկար դարեր, խաժամուժին դաւանանքն էր այդ, զոր յօգուտ քաղաքագիտութեան և՝ ի շահ՝ քաջալերեցին իշխանաւորք։ Բայց ինչպէս որ Ովրատիոս կը նշանակէ, հին ազգաց մեծ մասը՝ ի վաղուց անտի ընդհանրապէս ճեղ ճեղոքոյն Աստուած մը կը դաւանէին՝ տէր և գլուխ և տնօրէն մարդկութեան, որուն կերպով մը հպատակներն ու արբանեակներն էին միւսները։

Մանաւանդ թէ աւելի լուսաւորեալ ազգերը՝ կամ թէ ըսեմք՝ աւելի լուսաւորեալ մարդիկ՝ կ՛ընտասիրէին թէ, այն չատ մը աստուածներու անուններով միեւնոյն Գերագոյն Աստուծոյ ամբաստորոգելիքն ու զօրութիւնները կը նշանակէին։ Այսպէս կը խօսի Սենեկայ. (Ցշ. եբ-թոռ. Դ. 7։) «Այս ամեն յորջորջնուքները ճեռնոյն Աստուծոյ անուններն են, որ այլ և այլ եղանակաւ կը վարէ իւր իշխանութիւնը»։ — Ազդի կոտպարիչք եւս այս մտքի վրայ են։ — Ոմանք եւս՝ ի Հարց՝ Տերտուղիանոս և Լակտանտիոս՝ դիտողութիւն ըրած են իրենց ժամանակները թէ՝ խառնիճաղանճ ժողովուրդը թէև խիստ շատ աստուածներ կը պաշտէր, բայց երբ երդուման ընէին, Աստուածային օգնութիւնը հայցէին, և կամ գոհութիւն տային Աստուծոյ, ի միայն Աստուած մը (և ո՛չ շատ աստուածները) կը կոչէին. «Ո՛վ Աստուած՝ կ՛ըսէին, Աստուած բարերար. Աստուած պահէ. Աստուած օգնական ըլլայ քեզ եւ», որով քաջ՝ ի յայտ կուգայ թէ՝ իրենց մէջ բնաւրէնը կը խօսէր այս ամենաբնական ճշմարտութիւնը՝ ընդդէմ իրենց տխմար գործոց։

Քրիստոնէական եկեղեցեաց մէջ պաշտեցեալ Եպիկիական Հանգանակն ալ՝ մեծ կարեւորութիւն կու տայ Անոր ճռնելեան, «Հաւատամք՝ ի մի Աստուած»

ըսելով · բայց կը տեսնենք որ սոյն այս Ա֊իկիական Հանգանակը՝ Անոր միւս ստորոգելեաց այնչափ կարեւորութիւն չտար , որչափ՝ անոր միութենէն յետոյ՝ Ամենակարողութիւնն ու Արարչութիւնը մէջ կը բերէ , ըսելով , «Ի Հայրն ամենակալ , ՅԱրարիչն երկնի և երկրի , երեւելեաց և աներեւութից » : Պատճառը ուրիշ բան չէ , եթէ ոչ՝ վասն զի Անոր ամեն կատարելութիւններն ՅԱրարչութեան անդ կը տեսնուին : Արարիչ է , ուրեմն Անեղ է · (Յ֊Վ · Ա· 1 · 3·) քանզի եղականաց ֊կ[illegible]֊ չկրնար ըլլալ : Անեղ է , ուրեմն և յաւիտենական է · (ԵԲր · Ա· 8 : Հ֊Վ · Ա· 20·) սկիզբ չունեցողը՝ վերջ ալ չկրնար ունենալ : Անեղ և յաւիտենական է , ուրեմն և անխոտխոս է · (ԵԲր · Ա· 19 · 12 · Յ֊Ի· Ա· 17·) ՝ ամենազարդ , ամենատուրբ, մշտընջենաւոր հոգի է · քանզի փոփոխութիւնը՝ եղական բնութեան յատկութիւնն է : Որովհետեւ ամենազարդ հոգի է , ուրեմն տարածութեան տակ չի կրնար , չչափուիր · անհունապէս մեծ և ամենուրեք է : Ամենուրեք ըլլալն ու ամենատես ըլլալն անբաժանելի լծորդ են միմեանց , (ԵԲր· Դ· 13: ԵբՒ· ԼԲ· 19·) յորմէ յառաջ կու գայ սրտագիտութիւնն ու ամենիմաստութիւնը · (Ա֊Ղ· ԼՀ· 3—16·) և այս ամենքն ունեցողը անհնար է որ ամենակալ՝ ամենակարող՝ ամենազօր չըլլայ : (Բ· Օրէն· ԼԲ· 39: Ա֊Ղ· կե· 8:)

Անեղ հոգին՝ միանգամայն ամենատուրբ և ամենաբարի կ'ըլլայ , մանաւանդ իրեն արարչութեան նպատակին նայելով : (Ա֊Ղ· ՃԻԵ· 6—9:) Ապա ուրեմն և արդար՝ յոյժ արդար է · (Ա· Պէտ· Ա· 17 : Ա֊Ղ· ՃԺԸ· 137—142: Գ֊ծ· ԺԷ· 31·) վասն զի սուրբըն ու բարին՝ ո՛չ միայն արդարութեան հակառակ բնութիւն չկրնար ունենալ, այլ նոյն իսկ արդարութեան հեղինակ ըլլալու էութիւն պէտք է ունենայ , ինչպէս որ էն :

Ատոնց ամենէն ալ կը հետեւի թէ ինքն անհունապէս ճշմարիտ է · վասն զի հարկաւորապէս ճշմարիտ է իւր էութիւնը , և իւր բոլոր պատգամները ճշմարիտ եղան · (Յ֊Վ· ԺԴ· 6: Ր· Օրէն· ԼՐ· 4·) հետեւաբար և հաւատարիմ է · վասն զի անհուն ճշմարտութիւնը չկրնար ստել · (ԵԲր· Զ· 18·) և զի ամեն ինչ որ խօսեցաւ՝ կատարեց կէտ առ կէտ , և խոստացած է ՚ի ապառ կատարել իւր խոստումները : (Ա· Կոր֊Ր· Ա· 9: Ա· Թես· Ե· 24: Ս֊Ղ· ՁԹ· 4: Տէտ· Ա· 2 : ԵԲր· Ժ· 23:) Եւ ըստ որում սիրոյ պըտուղները սիրոյ արդիւնքներ են ատոնք , ուրեմն իւր էութիւնը՝ բուն իսկ Սիրոյ էութիւնն է · ինքն իսկ Սէր է , ինչպէս Ս· Գիրք կ'ըսեն՝ թէ «Ատուած սէր է» : (Ա· Յ֊Վ· Դ· 7—8: ԵբՒ· ԼԱ· 3 : Ր· Օր· Է· 13) եւ:

Ուստի և ըստ Յայտնութեան՝ Քրիստոնէական եկեղեցին կը դաւանի Ատուած բարձրեալ և Ամենակատարեալ հոգի · (Մ֊Ր· Ե· 48: Յ֊Վ· Դ· 24: Գ֊ծ· Է· 18·) Հոգի անեղ, (Գ֊ծ· ԺԷ· 25·) անակիզբն անվախճան, (Յ֊Յ· Ա· 8—11: Գ· 14· ԻԱ· 6 · եւ) անէզծ , (Հ֊ Ա· 23·) անմահ , (Ա· Տէտ· Ա· 17· Զ· 16 ·) անխոտխոտ , (Յ֊Ի· Ա· 17·) յաւիտենական , (Ր· Օրէն· ԼԳ· 27: Յ֊Յ· Դ· 8—10·) և միանչենաւոր : (Ա· Տէտ· Ա·19:) Հոգի անքննելի անհասանելի աներեւոյթ :(Յ֊Վ· ԺԱ· 7· Ս֊Ղ ՃԻԴ· 3—4· եւ: Յ֊Վ· Ա· 18: Ե· 37: Կ֊Ղ Ա· 15 եւ:) Ամենիշխան (Եփես· Ա· 11·) ամենակալ, ամենակարող, ամենազօր , (Յ֊Վ֊ Լէ · 22—23 : Մ֊Ր· ԺԹ· 26·) հոգի ուղիղ, ամենաբարի , (Ս֊Ղ Ծ· 12—14: Մ֊Ր· ԺԹ· 17·) ամենատուրբ , (Ա· Պէտ· Ա· 13—16·) մի միայն և անհուն իմաստուն , (Հ֊Վ· ԺՁ· 27: Ա· Կոր· Ր· 7·) ամենագէտ : (Ս֊Ղ ՃԼՀ· 1—6: Ա֊Ի· Ե· 21·) սրտագէտ , (Ս֊Ղ ԼՀ· 7—17·) ամենուրեք, (Ս֊Ղ ՃԻԴ· 18: Գ֊ծ· ԺԷ 26—28·) արդ արարատ , (Հ֊Վ· Ր· 11: Ե֊· Խե· 21·) գթած , ողորմած , երկայնամիտ (ԵՀ· ԼԴ· 6·) ցաւակից և կարեկից , (Դ· Թ֊Ֆ·

ժԳ· 23·) անհունապէս ճշմարիտ և հաւատարիմ։ Ց-ՀՀ· ԺԷ· 17։) ևս, ևս։

Աստուածային ստորոգելեաց վրայ ասկից աւելի խօսիլ Աստուածաբանին անկ ըլլալով, կը դառնանք մեք Աբարչութեան մեծ գործին։

ԳԼՈՒԽ Գ·

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ՑՕԴՈՒԱԾ Ա·

Աբ-ը-ր-ին Աշխ-ր-հ

Աստուած ստեղծ գտիեղերս ոչինչէն։ Բնագանցութիւնը առ այս անհաւար ապացոյցներ ունի· բայց մեզ՝ մինչեւ հիմայ պրուցածներնիս կրկնել պէտք կ'ըլլայ՝ կրօնքին սա անտնօրինելի սկզբունքը բնութենէ ապացուցանելու համար, թէ Ն-ին՝ Յ-էրենէ չէր։ Քանզի ի՛նչ որ 'ի յաւիտենից է՝ անփոփոխ անայլայլակ է· իսկ նիւթը յարաւիտենից այլայլուկ ապականակիր է· ապա ուրեմն անակիզբն՝ 'ի յաւիտենից չէ՛· և զի այժմ կ-այ, ուրեմն ինչ կայ եղած անակիզբն անայլայլակ պատճառէ մը (Աստուածմէ) ակիզբն առած՝ գոյ եղած է 'ի չգոյէ։

Բնագէտք որովհետեւ ջրջէն պատճառին կը ձեռնարկեն, բնութեան մէջ տեսնելով որ չկրնան թէ չըլլար, ոչ ալ ըսել չկ'ըլլայ, զի շատ մը գրօներ միւթիւն մը չեն կազմեր, ոչ ալ նիւթին ամենէն մանրամասն փոշին չկրնար կը դառնայ՝ թէ՛ և յաւիտեանս բաժնուի, ասոնք ձեռնարկեցին թէ աշխարհք և տիեզերք ողջոյն՝ անկարելի էր որ ոչնչէն 'ի գոյութիւն գային, և առ այս՝ նիւթը 'ի յաւիտենից՝ յաւէտակից Աստուծոյ

դնել յօժարեցան։ Այլ այս հակասական է։—Բնանպաշտը և նիւթամոլը անո՛ր համար կ'ուրանան Աստուծոյ գոյութիւնը, որովհետեւ՝ կ'ըսեն՝ մարդս չէ կարող ըմբռնել թէ ի՛նչպէս կրնայ ըլլալ էակ մը որ միշտ կայ եղած ըլլայ ինքնագոյ անակիզբն և յաւիտենական։ Բայց ասիկայ կ'ըսեն՝ միայն Աստուծոյ գոյութիւնը ուրանալու համար· նիւթին համար ըլլայ նէ՝ լեզուներին կը փոխեն և հակասութեամբ կ'ըսեն, թէ նիւթը 'ի յաւիտենից ինքնագոյ և յաւիտենական է· ահա բաց յայտնի՝ անարուեստ խնաստակութիւնն խնաստասիրաց արդեանց։ Բայց մենք նիւթին այլայլականութենէն ձեռնարկելով ճշմարտապէս կ'ըսեմք, որովհետեւ նիւթը այլայլական՝ ապականակիր է, անակիզբն՝ 'ի յաւիտենից չկրնար ըլլալ, ինքը անակիզբն՝ անայլայլակ պատճառէ մը կայ եղած կրնայ ըլլալ, և այն պատճառն ալ Աստուած է։

Նիւթը 'ի յաւիտենից ըսելը ինքեանց իսկ բնագիտաց վարդապետած բնական օրէնքին դէմ է։—Նիւթը թէ որ 'ի յաւիտենից ըլլար՝ անայլայլելի անփոփոխելի բնութիւն պիտի ունենար· հետեւաբար՝ նիւթը անայլայլակ ըլլար նէ ծնունդ չէր կրնար արտադրել, և եթէ արտադրէր, իր սեռէն կամ տեսակէն տարբեր բաներ չէր կրնար 'ի լոյս բերել վասն զի՝ ծնունդը այլայլութիւն է նիւթոյն։ Ուստի և հանդոյք՝ հարկ էր որ ուրիշ անփոփոխելի պատճառի մը ձեռօք՝ փոփոխական՝ ա՛ստեղծական (ա՛ն անվնիզբն, «կրճնաւոր) լինէ մը գոյանային։—Նիւթը եթէ անայլայլելի ըլլար, հոգեղէն եղած պիտի ըլլար· բայց հոգի չէ՛ նիւթ է։ Նիւթը եթէ անայլայլելի ըլլար՝ աշխարհս միշտ մի և նոյն վիճակի մէջ պիտի մնար· բայց աշխարհք սկիզբէն կազային կրակուբոց վիճակի մէջ էր, հիմայ ալ մասամբ իւրք՝ անոր արտաքին մակերեւոյթը միայն բնութիւնը փոխեր է,

պնդացեր է, ընդերքն ալ՝ մինչեւ կեդրոնը նոյն յետզոհոութիւնը պիտի կրէ մինչեւ երբ որ ըլլայ, երկրիս արբանեակին պէս գրեթէ անկենդան դի մը, կամ կենաց գերեզման մը պիտի դառնայ։ Այնուհետեւ ինչ պիտի ըլլայ՝ եթէ տեւէ . . . ինչ պիտի ըլլայ լուսինն ալ, ինչ պիտի ըլլան այն մոլորակները, այն բիւրաւոր արեւներն ալ, որոց բոլորտիքն ալ թերեւս բիւրաւոր երկիրներ ծիր կը գործեն նոյնպէս բիւրաւոր արբանեակներով. ինչ պիտի ըլլան անոնք ամենն ալ, երբ մեր երկրագունդին պէս իրենք ալ դիակնանան . . . : — Ասիկայ փորձած չենն բնագէտք. ասոր բան մը ըսելիք չունին. ենթադրութիւններ միայն մէջ կը բերեն՝ կը բոնքին վճռաբար զրուցածներուն դէմ. բայց ենթադրութիւնները պատասխան չե՛ն։

Կրօնքը կ'ըսէ. Աստուած 'ի չգոյէ գոյ ըրած է այս աշխարհս. ուրեմն կրնայ եւս 'ի չիք դառնալ, երբ Աստուած կը հրամայէ։ Բայց բնագէտն ու նիւթաւորը չենն ընդունիր. միութիւնը քանի բիւրիցս եւ բաժնուի՝ զրօ չըլլար կ'ըսեն։ Սակայն նոյն բանը աշխարհիս գոյատեւելուն մասին մենք ալ կ'ըսեմք. բիւր բիւրուց զրօներ մէկտեղ բերեմք՝ միութիւն մը՝ ինչ մը չգոյանար։ Աշխարհս 'ի յաւիտենից չէր. նիւթը յաւիտենական չէր. սկիզբէն ունէր. տեսանք ասիկայ մինչեւ հոս. այսու ամենայնիւ աշխարհս կայ, տիեզերք կան, մենք կամք. ապա ուրեմն այս ամենը եղան ունէրէն՝ Արարիչ Աստուծոյ ձեռամբ։ Ուստի Այն՝ որ յոչընչէ ընչացոյց այս ամենը, կրնայ դարձեալ յոչինչ դարձնել զանոնք ամենը, կամ մէկ մասը. և ինչ որ ըսել ուզեր է Արարչապետը «երկինք և երկիր անցցեն» ըսելով, նոյն բանը պիտի պատահի անվրէպ։

Սկիզբէն Աստուած ստեղծեց ոչինչէն զաշխարհս, որ է ըսել՝ աշխարհիս անկերպարան նիւթը, անբնաւոյ

և անպարփակ, ինչպէս կ'ըսէ Գիրքը. (Ծննդ. Ա. 1—2.) և խառն 'ի վերոյ անդնդոց. որ է ըսել ըստ բնաբանից՝ հրաբորբոք կազերու լոյծ կոյտը անկերպարան, բոցերու ալէկոծութեանց անդունդներով, ու բոցակէզ ծուխերու միգամած խաւարաւ պարաւանդեալ։ Ետքէն երբոր հաճեցաւ բնակելի ընել այս խառնակութեանց կրակեղը, վեց օրուան մէջ հրաշակերտեց՝ ամենայն ինչ բանիւ արարչագործելով.

Օր ըսելով՝ Ս. Հարք ոմանք արեգակնային օր կ'իմանային, պատճառելով որ վասն զի Գիրքը օրուան մասունքն ալ մէջ կը բերէ, «Եւ եղեւ եղեկ՝ և եղեւ վաղորդի՝ օր մի» ըսելով։ Բայց այլք որ քիչ ուր չենն՝ կ'ըսեն թէ Արարչութեան մինչև չորրորդ օրը արեւ չկար, ուստի չենք կրնար ըսել որ Գիրքը ճիշդ այժմու արեգական օր ըսել դիտած ըլլայ. (և այս ճշմարիտ է։) Ուրեմն եղեկ, վաղորդի, օր ըսելով գործողութեան մը ժամանակին սկիզբը, վերջը և տեւողութիւնը միայն նշանակել դիտած է Գիրքը, և ո՛չ քանուշերորդ ժամու օր։ Ինչպէս որ Ս. Գրոց մէջ շատ տեղեր ալ օր բառը գործածուած է՝ անորոշ ժամանակ, տարի, հազար տարի, յաւիտենականութիւն ևս նշանակելու համար։ (Ծննդ. ԻԴ. 6։ Բ. Պետ. Գ. 8. 18։ Թուոց. ԻԴ. 34։ Եղեկ. Դ. 5—6։ Սաղ. ԺԹ. 10 ևն։) — Եւ դարձեալ վասն զի այն մէն մի օրերուն մէջ կատարուած գործողութիւնները այնպէս նկարագրուած է, որ իբր թէ հոգիս առաջած՝ և օրն եղեկան եղեր է։ Սակայն Աստուած հրամանն մը միայն ըրած է, և իւրաքանչիւր հրամանը գործ եղած է. ասիկայ օրուան չէ՝ վայրկենի մը գործ է։

Ուրեմն Օր ըսելով գործողութեան մը սահմանեալ որոշ ժամանակի չափ մը կ'իմանանք։ Բայց թէ այս ժամանակ ըսուած միջոցին չափն ի՛նչ է,

որոշակի չեւք գիտեր · այս միայն ատոյգ է որ չափուած առեններեն· հարիւրաւոր , հազարաւոր , բիւրաւոր տարինե՞ր են մի , որոչ չափը չեւք գիտեր · բայց շատ երկար միջոցներ ըլլալն աղէկ յայտնի է· վասն զի կան բիւր մը անասնոց կմախքներ՝ որ անասնոց Ա.րարչագործութեան ամաց այսչափ հնութիւնը կը հաստատեն : Նկատելու արժանի այս է որ անոնց մէջ ամենեւին չեն գտնուիր մարդկային ոսկերոտի · ինչու որ մարդը ամեն արարածներէն վերջը՝ վեցերորդ օրը ստեղծուեցաւ : (Ծննդ· Բ· 4—8 ·) յորմէ հետէ աստեղաբաշխական օրերը տիրեցին : Ուրեմն վեցօրեայ արարչութիւն ըսելով կ'իմանանք երկրիս կազմակերպութեան վեց յեղափոխութիւնները , որովք կարելի եղաւ բուսոց անասնոց և մարդկան բնակարան ըլլալու պատչաճիլ երկիրս : Եւ Էքէնց վաղդ՞ոյը այն վեց յեղափոխութեանց սկիզբներն ու կատարածները կը յայտնեն , որովք հաճեցաւ Աստուած իւր արարչութեան մեծ գործը 'ի գլուխ հանել :

Կան՝ նորասիրութիւնն անցած անկրօնութեան համբակ աշակերտներ՝ որք բնութեան դիրքը, ամբողջ չհարդացած՝ հազիւ անոր մէկ երկու էջերը դարձընելով՝ իրեւ կրօնքը խայտառակող պատանձեցընող խնդիր մը մէջտեղը կընետեն սա , թէ արեւ չեղած ինչպէս կայ կրնար ըլլալ երկիրս , (իբր թէ անոր գոյութենէն կախուած ըլլար ասոր գոյութիւնը ,) և ինչպէս իւր չրջանը կը կատարէր : — Բնաքանցութիւնը՝ երկու խօսքով կը վճարէ ասոր պատասխանը · Տիեզերաց արարչութիւնը՝ հրաշալիք մ'է , հնբաշալեաց պատճառն ալ Աստուծոյ կամքն է · Աստուծոյ կամաց վրայ նախապէս ծանօթութիւն մը չունինք թէ ինչ է և ո՛րչափ զօրաւոր է , գործքերէն կ'իմանանք՝ որ անոր կամքը գործ կատարեալ է : Այս է ահա՛ բնաքանցութեան պատաս-

խանը : — Բայց մենք բնութեան դիրքը քիչ մը աւելի՛ կարդացող բնաբաններուն խօսքովն ալ կ'ըսեմք , թէ երկիրս 'ի սկզբնաւորութեան անդ արեւու դիրքն ու վիճակն ունէր · և արեւէն՝ թերեւս հազարապատիկ ալ աւելի մեծ էր , իւր կազային լոյծ հրանիւթ վիճակին պատճառաւ · (որ ետքէն քանի՛ խտացաւ՝ պլպիկցաւ և կեղեւ պատեց ·) արեւ մ'էր ինքն ալ , և պէտք չունէր արեւու, ինչպէս որ մեր արդի արեւն ալ ուրիշ արեւու պէտք չունի՝ գէթ առ երեւոյթս : Մեր արեւը հիմա իւր մանկութեան խանձարրոց մէջ է դեռ , երկրիս կազմակերպութեան անցուցած տարիքներուն նայելով · դեռ հրաբորբոք կազային լոյծ վիճակին մէջ է այն , ինքն ալ երկրիս կրած ամեն փոփոխութիւններն ունի կրել , և մոլորակ մը դառնալ թերեւս՝ նոր ծնանելի արեւի մը, որ իրեն ծրին կեդրոնն ու լուսոյ և ջերմութեան աղբիւրն ըլլայ . . . : Ապա ուրեմն անհնարին էր որ նա երկրիս հետ կամ երկրէս առաջ դոյ եղած ըլլար , և Ա· Գրքին անոր արարչութիւնը ստեղծագործութեան չորրորդ օրը (ս չորրորդ յեղափոխութեան առեն) դնելը յայտ բնական և արդի բնաբաններէն ապացուցուած ճշմարտութիւն մ'է · մինչդեռ երկրիս հետ կամ անկէ առաջ դրած ըլլար՝ (որ կրնար ընել անանկ խաւարային դարու մէջ՝ ուր յանդիմանող իմաստուն չկար , և կ'ընէր ալ եթէ խաբեբայներու հնարքն ըլլար այն ,) սուտ կ'ըլլար , և արդի բնաբանութիւնը պիտի խայտառակէր այդ սուտ իւնը :

Ըսող ալ կայ , թէ լուսինն ու արեւը մի'եանոյն չորրորդ օրը արարչագործեալ ըլլալով՝ ինչպէս կ'ըլլայ որ արեւը դեռ մանկութեան խանձարրոց մէջ կ'օրօրուի , մինչդեռ լուսինն իր դերեզմանն է իջեր , անկենսաւոր անբնակելի վիճակն է առեր : — Ասոր պատասխանն իրենց քանակաց տարբերութեան մէջ

5. Լուանի փոքրամարմին զանգուածը այն ամեն յեղափոխութիւնները կատարելու համար այնչափ երկար մեծ դարերու կարօտ չէր՝ ո՛րչափ արեւը, նման սոսկալիթիթառ փղին և չքոտի որդին կենաց շրջաններուն. նման մեծ ապարանքի մը և փոքրիկ խղիկի այրելու ժամանակաց տեւողութեան, և կամ հալած կապարի և երկաթի կամ պղնձի և կամ ոսկւոյ պաղելու տարբեր միջոցներուն:

Վօլթէրի երեւակայած անդր—տիտանեան հրաշակայները՝ Միքրօ—Մեղան ու իր գաճաճը, կամ Սիրիացին (որ ութ մղոն՝ ք 120,000 ոտք բարձր հասակ ունի,) և Երեւակցին՝ (որ 1000 կանգուն երկայն հասակ ունի,) հապա հինգ ոտք հասակ ունեցող այս երկրի բնակչին հետ մի և նոյն չափուած տեղի մը մէջ համաչափ կենաց ժամանակի շրջան չեն բոլորէր, համահաւասար տիք և տարիք չեն ունենար. Սիրիացին տասնուվեց միլիոն տարիներու՝ և Երեւակցին տասնեւհինգ հազար տարիներու մէջ շրջանին կը բոլորեն, մինչդեռ երկրածին մարդը դարու մը շրջան չկրնար հոլովել: Վօլթէրի ենթադրած Սիրիացին, Երեւակցին և երկրացին մի և նոյն ժամանակի մէջ ծնած ենթադրելով՝ Սիրիացին տղայ եղած տեղն՝ դեռ մանկութեան չհասած՝ արդէն ծեր կը դառնայ Երեւակցին: Իսկ երկրածինը՝ մեռնել լմնալէն եռքը՝ իր թոռնիկն ալ արդէն ծեր կամ մեռած կը դտնուի: Լուսինն ալ այսպէս արեւու հետ ծնանելով ծեր կամ պիտակ կը դտնուի այսօր, հանելատութեամբ ինքն ալ թերեւս մը ըլլալով սիրտանման արեւու քով:

Խնդիր կայ նաև երբ Լուսինն քանի արեւը շրջրոյր օրը ստեղծուեցաւ ենէ՝ հապա ինչ էր կայ որ ստեղծուց Աստուած առաջին օրը. արեւ չկար՝ ըստ, երեկո, վ-ըրդ-ոյ կրնա՞յ մի ըլլալ: Բայց այժմ այդ խնդիրը լուծուած է. ինչպէսնք իսկ բնագէտք հաստատած

են փորձով, որ լոյսը արեւէն անկախ՝ զատ գոյացութիւն մը ունի, առանց արեւի կայ կրնար ըլլալ և եղաւ:

Արարչապետն Աստուած՝ որ յարարչագործութեան անդ միանգամայն և բնութեան անանձնելի օրէնքներն ունէր հաստել, ա՛չ յախտէն անկարդ կերպով և կամ հանկարծ առնչն գոյացոյց և կազմակերպեց բանիւ այն անհրատարան նիւթէն զոր այս հանդոյնն, այլ յոյժ օրինաւոր կարգաւ, իւրաքանչիւր հանդոյնի գրոշմիլը բնութեան պահանջմանց համեմատ մին քան զմիւսն յառաջ կամ յետոյ գոյատրելով, անանկ որ երկրիս կազմակերպութեան վրայ արդի երկրաբաններուն բնութենէ առած բացատրութիւններուն լրիւ չափ կը պատասխանէ:

Առաջին օրը լոյսը ստեղծեց, որով ոչնչութեան խաւարին մէջ աներեւոյթ մնացած նորաստեղծ անպատրաստ նիւթը երեւան եկաւ, որով և լոյսը Օր և խաւարը Գիշեր ըսուեցաւ: Երկրորդ օրը գործարանաւոր էակաց կենաց անհրաժեշտ պէտք եղած հատատութիւնը ձեւացոյց, այս է երկինքը կամ մթնոլորտը. երկիրս հասապարփակ շուրջ պատող ջրերուն մէկ մասը յերկինք վերցընելով: երրորդ օրը վարը մնացած ջրերը մէկտեղ ժողվելով՝ ծովը, լիճերը և աղբիւրները ձեւացոյց, որով ցամաքն երեւցաւ, ուր հրամայեց որ ամեն խոտ, բոյս, ծառ բուսանին՝ սերմերնին իրենց մէջ ունենալով: Չորրորդ օրը, արեւը՝ լուսինը և աստղերը կախեց անսահմանութեան խորանին մէջ՝ օրերու, ամիսներու, տարիներու, եղանակաց և ժամանակաց շրջաբերութեանց համար: Հինգերորդ օրը՝ ջրային և օդային կենդանիները, , ձկներն ու թռչունները, և վեցերորդ օրը՝ բոլոր ցամաքային կենդանիները ստեղծեց, չորքոտանիները, սողունները, զեռուն-

ները եւ. և ամենէն վերջը՝ մարդը ստեղծեց. (Ծննդ. Ա.)։ Իսկ եօթներորդ օրը՝ ընդմէջ հանգիստ անուանեց. քանզի այն օրը հանգեաւ Աստուած իւր արարչութեան գործքերէն. և սրբելով այն օրը՝ հրամայեց որ սուրբ պահուի (Ծննդ. Բ.) ՚ի յիշատակ Արարչութեան իւրոյ և բարերարութեան։

Աստուծոյ այս վեցօրեայ արարչութեան, և եօթներորդ օրը սրբելու հրամանին՝ անժխտելի վկայութիւն մըն է հաւօրէն հին և նոր ազգաց շաբաթը եօթն օրերով հաւրելնին և եօթներորդ օրը սրբելնին։ Այսպէս կը հաստատեն Յովսեպոս (՚ի վերջ Բ. Գրոց ընդդէմ Ապիոնի.) «Զկայ քաղաք մը թէ՛ Յունաց և թէ՛ Բարբարոսաց, որոց մէջ ըստ օրինակի Հրէից եօթներորդ օրը շաբաթանալու սովորութիւնը չպահուի»։ Փիլոն կը գրէ թէ՝ եօթներորդ օրը «Տօնի օր է՝ չէ թէ քաղաքի կամ գաւառի մը, այլ համօրէն աշխարհի»։ Տիւուդորոս, Սիկելիոտ Աղեքսանդրացի՝ Հեսիոդոսէն. առնելով (՚ի ե. գիր. է.) Նոյնպէս Հոմերոս և Կալիմաքոս կ՚ըսեն թէ «եօթներորդ օրը սուրբ է»։ Եւսեբիոս՝ Արիստաբուղոսէն առնելով (Գլ. ԺԳ. 12.) Թէոփիլոս Անտիոքացի՝ առ Աւտոլիքոս (Գլ. 2.) «Յաղագս աւուրն եօթներորդի սրբելոյ յամենայն մարդկան»։ Սուետոն. «Դիոգինէս դրամատիկ վիճէր ՚ի Հռոդոս վասն աւուրն չարաթու»։ Լուկիան, «Մանիւնք սովորաբար խաղային յեօթներորդ աւուրն»։ Իսկ Կեղտաց, Գերմանացւոց, Գաղղիացւոց, Բրիտանացւոց, և Ամէնց չաբաթը պահելնին յայտնի կը ցուցընեն՝ եօթնեկի օրերուն անուններըն (Փլատոն. Գ. Գ. 13։ Դիոն. Կասիոս. Գ. 13։)

ՅՕԳՈՒԱԾ Բ.

Աբրահամեան Հրեշտակաց.

Բովանդակ տիեզերաց արարածոց մէջ է՛ն կատարեալներն ու ամենէն գերազանցներն են Հրեշտակք և մարդիկ. քանզի ՚ի պաշտօն և ՚ի սպասաւորութիւն փառաց Արարչին հաստեցան, նովաւ և ՚ի նմա յաւիտեան երջանիկ ըլլալու համար։

Հրեշտակք բանական ազատ հոգի են, հոգեղէն պարզ գոյացութիւն են, սուրբ, անմահ և իմաստուն, որք ՚ի Հին և ՚ի Նոր օրէնս՝ մարդոց փրկութեան մեծ գործին մէջ՝ Աստուծոյ առ մարդ յայտնութիւններուն միջոց և գործիք ըլլալնուն, Աստուծմէ առ մարդ պատգամաւոր իշխանութեան համար՝ ընտրեցան հրեշտակք, ս. խորհուրդ, դասպան, բանբեր եւ։ — Հրեշտակներն էին որք պատգամաւորեցան Աբրահամու, (Ծննդ. ԺԸ. 5—7։) Մովսիսի, (ելք. Գ. 2։) Գեդէոնի, (Դատ. Զ. 11.) Դաւթի, (Ա. Թագ. ԻԴ. 16։) Զաքարիայի, Մարիամու, Հովսեայ, (Ղուկ. Ա. 13. 31.։ Բ. 10—12.) և այլոց բազմաց։

Հրեշտակաց արարչութիւնը Աստուածաշունչին մէջ որոշակի նշանակուած չէ, թէ արարչութեան ո՛ր օրն եղաւ, ըստ որում Ս. Գիրքը աւելի՝ նաեւանդ թէ միմիայն այս մեր հողագունդին արարչութիւնը դիտած է պատմել, այլոց մոլորակաց և երկնից վրայ խօսած է գրեթէ ոչինչ։ Սակայն Յովհին գիրքէն դիտենք՝ որ երբ չորրորդ օրը լուսաւորք ստեղծուեցան, հրեշտակք գովէին զԱստուած և փառաւորէին. (Ղբ. 7.) ասկէ կ՚իմաստասիրենք՝ որ չորրորդ օրէն առաջ ստեղծուած էին անոնք, հաւանականաբար երկրորդ օրը, ՚ի ստեղծագործութեան երկնից։

Հրեշտակներ յոյժ բազմաթիւ են, և կը բաժանուին յերկուս· քերովբէ հրեշտակ կամ հրեշտակ ըսուց, որք ի հնագանդութեան միացին իրենց պաշտամունքի մէջ, և ըստ հրեշտակ կամ ոգիք են, որք մեղանչելնին ընդդէմ Աստուծոյ և դատապարտեցան յաւիտենական պատժոց· ըստ այնմ, թէ «Եւ զհրեշտակս որ ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւնն, այլ թողին զիւրեանց բնակութիւնն, ի դատաստան մեծի աւուրն՝ միանչեւնաւոր կապանօք պահեաց ի խաւարի:» (Յուդ· 6: Բ· Պետ· Բ· 4·) —Ասոնք թէպէտ և յառաջ քան զԲրիատոս Քրիստոս՝ իշխանութիւն ունէին որդւոց մարդկան վրայ, որոնք իրենց պէս Աստուծոյ արդար բարեկութեան տակ ինկած ըլլալով պատուիրանազանցութեամբ առաքեցան, դադնար մոլորութենէ ի մոլորութիւն կը քաշքշէին ու կը ձգձգէին, և ազգի ազգի ախտանօք կը չարչարէին ու կը տանջէին, բայց Մեսիայի մերկապատութեան արեւտիւք անոնց բռնակալ իշխանութիւնն ալ վերնան առաւ· «Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ, բուռ Փրկիչը· այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեցի արտաքս····: Ձի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է····:» (Յովհ· ԺԲ· 31: ԺԶ· 11:) Այժմ առաւել եւս գոյշ ըլլալու են Քրիստոնեայք ի յաղթըս և յորոգայթս նորա չընկնելու համար· ինչու որ հիմայ Փրկչին մարտ ասիրութեամբն իւր բռնական իշխանութիւնը ջախջախ, մարդն իւր աստի յանցանքէն սրբուած և փառաց նախատահմանեալ ժառանգով, (Գործ· ԺԶ· 38) առ յոյժ կատաղութեանն վառնդաւորագոյն պինաք ապատանեալ է մարդոյն դէմ· անոր պէնքն է մեղքը քաղցրացընել յոյժ ի քիմս մարդոյ, դիւրագոյն ևս որսալու համար հոգւոյ անդուած դիւրագոյն մարդկութիւնը· որպէս զի ի դերեւ հանէ Աստուածոյ ըսոյն փրկա-

գործ տնօրէնութիւնը (Գործ· ԻԶ· 18·), և մարդը վերստին վիճակակից ընէ իւր դատապարտ վախճանին· (Բ· Կորնթ· Բ· 11: Ա· Տիմ· Ե· 15:) «Դուք որ մեռեալն էիք ի մեղս ձեր և յանցանս, յորս երբեմն գնայիք ըստ յաւիտենի աշխարհիս այսորիկ, ըստ իշխանին իշխանութեան օդոյս այսոյ, որ այժմ ընդմտեալ է յորդիսն ապստամբութեան· յորս և մեք ամենեքեան ընդէաք երբեմն, ի ցանկութիւն մարմնոյ մերոյ, և առնէաք զկամս մարմնոյ մերոյ և զմտացս, և էաք արդարեւ որդիք բարկութեան իբրեւ այլքն: Այլ Աստուած որ մեծ է ողորմութեամբ, վասն սիրոյն իւրոյ զոր սիրեաց զմեզ, մինչդեռ մեռեալք էաք ի մեղս մեր, կենդանիս արար զմեզ ի Քրիստոս····:» (Եփես· Բ· 1—8:) Այժմ «իրաքանչիւր ոք փորձի՝ առ ի յիւրոցն ցանկութեանց ձգեալ և պատրեալ: Ապա այնուհետեւ ցանկութիւնն յղացեալ՝ զմեղս ծնանի, և մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին:» (Յակ· Ա· 14:) «Ջի ոտքն ձեր սատանայ իբրեւ զառիւծ գոչէ, շրջի և խնդրէ՝ թէ զո՞վ կլանիցէ· որուն ի դիմի հարկանիջիք հաստատեալք հաւատովք:» (Ա· Պետ· Ե· 8—9:) «Տըւաւ ինձ խայթ մարմնոյ· հրեշտակ սատանի՝ կըռտվել զիս:» (Բ· Կորնթ· ԺԲ· 7:)

ԳՕՂՈՒԱԾ Գ

ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՐԴՈՅ

Աստուծոյ գլխաւոր հրաշակերտներն են հրեշտակք և մարդիկ, գերազանց քան զամենայն արարածս: Հրեշտակք, վասն զի բոլորովին հոգեղէն պարզ արարածներ են, և ըստ այսմ գերազանց են քան զմարդիկ, որք ի հոգւոյ և ի մարմնոյ բաղ-

կացեալ են : Բայց ըստ որում հրեշտակք կարգեալ են 'ի սպասաւորութիւն փրկութեան մարդոյն, (Եբր Ա· 14·) մարդն գերազանց է քան զհրեշտակս : — Ի նահատակելով եւս՝ թէ մարդիկ հողեղէն բնութեամբ հրեշտակներէն չուտ գայթողլլալով՝ թէ որ յաղթեն մեղաց՝ քան զհրեշտակս անյանցս գերի 'ի վեր կը գտնուին· սակայն հրեշտակներէն մաս մը միայն մեղանչեցին, մինչդեռ մարդիկ ազգովին ողջոյն մեղան· և գի մարդիկ սահմանեալ են անկելոց հրեշտակաց թիւը լեցընելու, անոնց գունդերուն խառնուելու, (Բ· Թես· Ա· 7·) ուրեմն հաւասարապատիւ համափառ ըլլալ ունին ասոնք անոնց· հետեւաբար և չիք ինչ նախապատուութիւն անոնց և ասոնց մէջտեղը : — Ի'նչ ալ որ է, հրեշտակք և մարդիկ Աստուծոյ արարածոց հրաշակերտներն են, և երկոքին ևս 'ի սպասաւորութիւն կարգեալ փառաց Արարչին, իրենց երանութեան վախճանին համար· մարդիկ անկեալ հրեշտակաց դասերը ունին լեցընել· («Լցէ՛ք զտեղի անկելոցն ազատամթողական թշնաւոյն, որ 'ի յերկնից վայր անկեալ» Շուրխ·) և այն վիճակին մէջ իրենց ծայրագոյն երանութեան ժառանգութեանը մտնել :

Աստուած բոլոր արարածները միայն բանէ ըստեղծեց· իսկ զմարդ՝ գետնէն հող առաւ, ձեւակերպեց, և յետոյ անոր կենդանի շունչ փչելով՝ զանիկայ կենդանի ոգւով մարդ չինեց ի՛ւր պատկերն և նմանութիւնը պես : (Ծննդ· Ա· 27: Բ· 7:) — Ի՞նչ է այս Աստուածային պատկերն ու նմանութիւնը, ուսանք կ'ըսեն մարդկային մտաց երեք գործողութիւնները, իրր 'ի նմանութիւն երից անձնաւորութեանց Երրորդութեան· այլք՝ անոր անձնիշխանութեան ազատ կամքը, անմահութիւնը և հոգեւորութիւնը, կէսք՝ անոր սկզբնական սրբութիւնը, անձնիշխանութիւնը և բանականութիւնը· այլ բազումք՝ (և այս հաւա-

նականագոյնն է) մարդոյն հոգեղինութեան, անմահութեան, սրբութեան, բանաւորութեան և անձնիշխան ազատ կամեցողութեան, գիտակցութեան և դատողութեան մէջ՝ (խղճիւ՝ իբր ձայնիւ Աստուծոյ՝) կը գտնեն այն աստուածային պատկերն ու նմանութիւնը : — Եղան կարծողներ ալ որ Աստուծոյ առ մարդ յայտնուելու համար ընտրած ձեւն ու կերպարանքն ըլլայ այդ պատկերն ու նմանութիւնը· այլ պատկեր ըսուածը այս չէր կրնար ըլլալ· որովհետեւ այն առեն մարդուն մեղանչելովը՝ Աստուծոյ պատկերը եղծուած չէր ըլլար· մարդս մեղանչելով ի'նչ որ կորոյս՝ անոր մէջ է Աստուածային պատկերը· այլ նմանութեան համար կրնայ ըսուիլ ասիկայ՝ մասամբ իւիք :

Վինը՝ Աստուած մարդոյն կողին ոսկորներէն մին առնելով ձեւացոյց (Ծննդ· Բ· 21·)· գլխուն ոսկորներէն չէ՛, որ չիշխէ անոր, ո՛չ ալ ոտից ոսկորներէն, որ անոր անարգ գերին չըլլայ, այլ կողէն՝ որ անոր սրտակից ու օգնական ըլլայ : Բայց երբ նա իւր կոչումնքին տահմանը կոխեց անցաւ, խորհրդակցութենէ անդին՝ հրամայելու ելաւ, 'ի մեղս առաջնորդեց իւր տիրուհին, դատապարտուեցաւ իրաւամբք իւր Արարչէն 'ի հնազանդութիւն առնն· (Գ· 7—16) :

Աստուծոյ մարդս բանաւոր արարած ստեղծելէն՝ իրեն (Արարչին) և մարդոյն (Արարածին) մէջ տեղ առնչական կապ՝ կրօնքը կը ծնանէր : Արարչապետն Աստուած խիստ թեթեւ պայմանաւ ուզեց կռել այս կրօնք ըսուած դաշինքը· միայն բարւոյ և չարի գիտութեան ծառին պտուղէն (որ անգիտելի է մեզ) պատուիրեց որ չուտէ, ապրելու կ'ըսէ՝ մահկանացու կ'ըլլայ ըսաւ, մինչդեռ ազատօրէն վայելել թոյլ տուած էր ուտել եդեմայ դրախտին ազգի ազգի պտուղներէն : (Ծննդ· Բ· 16—17:) Բայց

սկիզբն մեղանչող չարեաց հնարապէտ սատանայն ՚ի կերպարանս օձի պատրելով զկինը, երբ մարդն ալ կնոջ ապրանօք մեղաւ, եղծաւ իւր վրայ դրոշմուած Աստուածային պատկերը, ս սրբութիւնը կամ անմեղութիւնը, որով և նմանութիւնը, մտաց պայծառ տեսութիւնը, հետեւաբար և անխառն երջանկութիւնը եւ: (Ծննդ. Գ. 1—11:) Նախաստեղծք երբ մեղայ գիտակցութիւնն ունեցան և տիշցան իրենց մերկութեան վրայ, մինչդեռ յառաջն մերկ կ՚ին և չէին ամչնար իրենց անմեղութեամբ փառաղարդեալ, նիւթ Աստուծոյ զիրենք պատժելու, և պատժոյն մէջ անդամ գթած գտնուելով՝ մխիթարութիւնն ալ խոստացաւ, կնոջ զաւակին՝ օձին գլուխը ջախջախելու, որով և եղծեալ պատկերը նորոգելու առիթն ալ տուաւ: (Համաշ 15:)

Նախածնողաց այս առաջին մեղքը (զոր բաղումք «ԿՂԲՈՒԱՆ ԴԷՒ անուանեցին,) իրրև Թոյն ամենց բնութիւնը բոլորովին թունաւորեց, ուստի և իրենց բոլոր ծնունդներն ալ ՚ի նմին ՚ի մեղս ծնան և ծնանին: յայս իմաս կ՚ըսէ Գիրքը Աղամայ ծընդեան համար. «Եկեաց Ադամ զան երկերիւր և երեսուն, և ծնաւ ըստ կերպարանաց իւրոց և ըստ պատկերի իւրոյ. և անուանեաց զանուն նորա Սէթ»: (Ծննդ. Ե. 3.) հետեւաբար և նոյն դատապարտութեան տակ պարտաւորեալ են նոցին որդիք, որով դատապարտեց Տէր Աստուած զնախածնողսն տատապագին կենաց կելու, ցաւոք զաւակ ծնանելու և վերստին ՚ի հող դառնալու: (Ծննդ. Գ. 13—19:)

Աստուած վասն զի աննպատակ՝ ըստ դիպաց և յանդիսաս չէր որ մարդս ստեղծեց, նորէն ՚ի չիք դարձընելու համար ալ չէր որ զայն գոյացոյց, անիկայ իւր անմահութիւնը տատուիրանապանցութեամբ կորուսս ալ նէ, գթութեամբ խոստացաւ վինքը կենսանորոգ վերինծագել և վերստին անդամ օժտել՝ իւր անպատնեշ նպատակին համար՝ ՚ի ձեռն Հանդերձեալ Ջատակին. Նախ Ադամայ անկման դատնութեան խօսքերուն մէջ այս խոստումը իրրեւ պատասան խառնելով, ետքն ալ հետզհետէ երեւելով նահապետաց և մարգարէից, անոնց բերնով զորդիս Ադամայ մխիթարելով:— Ինչպէս որ միոյն յանցանօքը բոլոր ծնունդները անկման դատապարտուեցան, նոյնպէս և Միոյն արդարութեամբ բոլորին ալ օրհնութեան և փրկութեան հասանելիքը աւետեց: (Հռով. Ե. 12—21:)

Անիրաւ է ըսելը թէ միայն նախածնողք մեղան, ինչո՞ւ բոլոր մարդկային ազգը և անոնց ծնունդները դատապարտուեցան. վասն զի այն յամենայն ամբողջ մարդկային ազգը և անոնց ծնունդները բոլանդակեալ էին ՚ի նախածնողս. կամ թէ ըսեմ՝ այս երկու նախածնողք ոչ միայն իրենց մարդկային ազգը կը ներկայացընէին իրենց ծնունդներովը մէկտեղ և երկոքին ևս մեղանչելովնին՝ բոլանդակ մարդկային ազգը մեղանչած եղաւ. ուստի և փրկութիւն ամբողջ մարդկութիւնը ՚ի նախածնողս՝ իւր ծնունդներովը, և ինչպէս միոյն յանցանօքը բոլոր իւր ծնունդները պատիժ ժառանգեցին, նոյնպէս և միոյն արդարութեամբը օրհնութիւն պիտի ժառանգէին նոյն իրաւամբք, եթէ այն Միոյն արդարութիւնը ընդունէին յանձինս իւրեանց:

ԳՕՂՈՒԱԾ Դ.

Գոյութիւն եւ Անհատութիւն Մարդկային Հոգւոյ

Աստուած ստեղծ գմարդ հոգւով և մարմնով, միանգամայն և ազատ կամօք:— Բնապաշտը հոգւոյ գոյութիւնն ալ կրնայ ուրանալ. այլ սակայն ոչ-

ինչ դժուարութեամբ կրնայ ապացուցուիլ անոր գոյութիւնն 'ի մարդ։

Նիւթը՝ յորմէ գոյացեալ է մարդ՝ ըմբռնելու, մտածելու, խորհելու, դատելու, իմաստասիրելու, երեւակայելու, յիշելու, երազելու կարողութիւնները չունի և չկրնար ունենալ, ինչպէս կը հաստատեն բնագէտք. ապա ուրեմն՝ նիւթէն զատ ուրիշ աննիւթ էութիւն մըն ալ կայ 'ի մարդ, որ նիւթոյն ունենալ չկրցած այս կարողութիւնները ունի, և այս է հոգին։

Դարձեալ, նիւթեղինաց գործողութեան օրէնքը միօրինակութեան մէջ է, ա նիւթը միշտ մի և նոյն կերպով կը գործէ, մի և նոյն ներգործութիւնն ու արդիւնքը կ'ունենայ նոյնչափ ժամանակի մէջ, քանի անգամ ալ նոյն գործողութիւնը կատարէ, և բացարձակապէս անկարելի է որ մէկ անգամ ուրիշ կերպով գործէ, եթէ պահանջուած հանգամանքները պահուած են, փոխուած չեն. ասիկայ՝ նիւթոյն բնութիւնը՝ նիւթոյն յատկութիւնն է։ — Իսկ 'ի մարդ երկու տեսակ գործողութիւններ կան. մէկը՝ նիւթոյ յատուկ եղած միօրինակութեամբ, ինչպէս է արեան շրջանը, մարսողութիւնը, աճումը, մարմնոյ մասնկաց կիսովին ապականութիւնը և կիսովին վերանորոգ բողբոջումը եւ, որք մեքենապէս միշտ միևնոյն կերպիւ կը կատարուին։ Միւս գործողութիւնը բոլորովին տարբեր է այս կանոնաւոր գործողութեան միօրինակութենէն, և ամենեւին ազատօրէն ազդակի կը կատարուի. որն որ բնաւ չը յարմարիր նիւթոյն յատուկ եղած բնական գործողութեան. այս է՝ ուզէ կը խորհի, չուզէ չխորհիր. խորհելու առենն իսկ՝ յանկարծ կ'ընդմիջէ, վերըսկսին կ'սկսի, կը շարունակէ. կը հաճի կամ ոչ. կը սիրէ կամ կ'ատէ։ Նաեւ՝ նոյն իսկ մարմինը երբեմն մեքենական գործողութեան մէջ եղած առենն

անգամ՝ ինքն յինքեան կը գործէ անկախաբար ազատութեամբ. նիւթ չէ այս. նիւթոյն բնութեան հակառակ է այս. ուրեմն աննիւթ էութիւն մ'է այս գործողը, զոր հոգի կ'անուանենք։

— Դարձեալ՝ ինչ բան է որ երբ մենք խոր 'ի քուն կը ննջենք, անիկայ նորէն կը գործէ 'ի մեզ երեւակայութեան երազներու տեսիլներով. անդ ևս կը խորհի, կը դատէ, կ'ուսանի. և շատ անգամ՝ առանց մեր արթննալուն՝ մեզի երգել, խօսիլ, ձայներ հանել և շարժմունքներ ընել կու տայ, 'ի քուն կը շրջեցընէ, գի'ր գրել կու տայ, և հասցէին կը խրկէ՝.... Նիւթը չկրնար գործել ատոնք, նիւթէն աննիւթ ներգործութիւններ չեն կրնար ծնանիլ. խորհուրդ՝ երազ՝ դատողութիւն, ատոնք նիւթեղէն բաներ չեն, աննիւթ ենթակայութիւններ են. ուրեմն նիւթը չկրնար ունենալ այս գործողութիւնները. ապա ուրեմն աննիւթ հոգին է՝ որ մեր քնացած ատենն անգամ՝ ինքն արթուն կը գործէ ատոնք 'ի մեզ։

Նիւթը չէ ըսինք այս խորհող տրամաբանող գիտուն էակը. քանզի թէ որ նիւթն ըլլար՝ նիւթը պիտի ըլլար գիտուն էակը, և մենք դիտցած պիտի ըլլայինք այսօր՝ թէ աշխարհիս սկիզբէն 'ի մեր կամ 'ի յաւիտենից և այսր մեր մարմինը կամ մեր մանկնոյն բաղադրիչ մասունքները քանի՛ բիւր մարմիններու խառնուած՝ ո՛րչափ բիւր կերպարանափոխութիւններ կրած է, և թէ այն մարմիններուն մէջ ի՛նչ բաներ սորված էր։ Բայց մենք հաւատարեալս տղէտ կը ծնանիմք, և ատկաւ աստիճանաբար կ'ուսանիմք։ Ուրեմն նիւթը չէ՝ այս խոհուն գիտուն բանը՝ որ 'ի մեզ, և 'ի մարդն՝ գործարանաւոր էակաց ունեցածէն աւելի և տարբեր բան մը կայ՝ հոգին, որ նիւթոյն բնութեան հակառակ եղող այս աննիւթական վերացեալ գործողութիւնները կը կատարէ։

Դարձեալ, եթէ նիւթն ըլլար խորհող դատողը՝ ի մարդ, ո՛րչափ հակայական մեծութիւն ունենար ոք հասակաւ, այնքան քաջ և շատ պիտի խորհէր նա, և ո՛րչափ փոքրիկ կամ դաճաճ ըլլար, այնչափ սակաւ պիտի խորհէր և դատէր։ Հերակլ՝ Սոկրատէն աւելի քաջ պիտի իմաստասիրէր · Եսոպոս իր գերեվարչէն աւելի ապուշ պիտի ըլլար։ — Նա եւս, եթէ ոք անդամատուէր, ձեռքը կամ ոտքը կտրուէր, կորուած նիւթոյն չափովը պակաս պիտի խորհէր քան զառաջինն · և եթէ երբէք հիւանդութեամբ խաղաւարտներ, ուռոյցքներ, աճող վէրքեր ունենար, լաւ եւս քան զոր յառաջն պիտի տրամախոհէր։ Բայց պատմութեան վկայութիւնն ու մեր անձնական փորձերը հակառակը կ՝ապացուցանեն · ապա ուրեմն նիւթը չէ՝ ի մեզ այս իմացական գործողութիւնները կատարողը · և՝ ի մարդ՝ հոգի ըսուած անյուիթ էութիւն մը կայ որ այս գործողութիւնները կը կատարէ։ Լոք ինքնին՝ որոյ վկայութեան յառեալ կան նիւթամոլք, թէ՛և տեղ մը կը գրէ, թէ իրեն անկարելի չերեւնար նիւթոյն խորհող ըլլալը, բայց ուրիշ տեղ կ՝ըսէ · Ինչպէս որ ոչինչէն ինչ յառաջ չիւնար ջուր, նոյնպէս և նիւթէն իմացողութիւն չիւնար յառաջ գալ, (ի ճշմարիտ մարդկեղէն իմացողութեան, Գր· Բ· Գլ· ԺԹ· ԻԳ, և Գր· Դ· Գլ· Ի·)։

Եթէ մարդս գործարանաւոր էակաց մէջ անոնցմէ տարբեր բան մը չունենար, բուսոց պէս միայն աճում և անասնոց պէս աճման հետ բնական զգացում, բնական վայելմունքներ պիտի ունենար և ամեն բան ըստ բնական բերման պիտի գործէր ու վայելէր, և ըստ այնմ պիտի տեւէր և վերջանար։ «Ի՛նչ տրտմալի նպատակ և ի՛նչ անշուք փառասիրութիւն է վայելելը։ Անասունն ալ կը վայելէ։ Հոգին ճշմարիտ յաղթանակն է մտածել»։ (Վէրոր Հիւգո, ի Թշուառան · Մաս Գ· Գր· Ե· Գլ · Զ·)

Բայց ինչպէս տեսանք՝ մարդս բանիւ կը վարուի, և բնական բերման ալ այնչափ միայն կը ծառայէ, ո՛րչափ որ բանը կը հրամայէ ծառայել, և առիպ բնութեան պիտոյից և պահանջից դէմ ալ կը վարուի կամաւ։ — Բոյսը՝ անկարելի է որ՝ արմատները հողի կամ ջրոյ մէջ եղած առեն իրեն սնունդ չը ծծէ · ո՛չ ալ անօթի անասուն մը տեսանուած է՝ որ որսը առջեւը եղած առեն անասունութեան տայ ինքզինքը · ո՛րչափ ալ հատատարիմ ըլլայ շունը՝ զարկած առենդ կը հալչէ՝ բնութենէ դրդուելով ի վրէժխնդրութիւն, եթէ խածնել ակնածէ · և գայլ մը ո՛րչափ կուշտ ըլլայ՝ ոչխար մը կը փողոտէ բնական որկրոտութեամբը · մարդը միայն՝ իր բնութեան սէտքերը կը նուաճէ «ոչ ինչ երր որ «ի կամ չ»։

Պարզ և բոլորովին գուհիկ բաղդատութիւն մը լաւ եւս երեւան կը հանէ այս, որ՝ ի մարդ՝ գործարանաւոր էակներուն մէջ եղածէն տարբեր բան մը կայ, զոր մենք հոգի կ՝անուանենք։ — Թէ որ մարդիկ բուսոց պէս կը բուսնին կ՝ապրին ու կը մեռնին՝ բոյսերէն տարբեր բան մը չունենալով իրենց էութեան դոյութեան մէջ, ուրեմն և բուսոց պէս մահ պիտի ունենան։ Պտուղը երբ որ ծառէն կտրենք, կամ ծառ մը արմատէն հանենք նետենք, և կամ ծառի մը ճիւղը բրջնենք ձդենք, կը տեսնենք որ անոնց մէջ եղած գործարանները դեռ եւս կը շարունակեն պաշտօննին · անոնց մէջ եղած արիւնը (որ է՝ անոնց կենդանութիւնը պահող կենսական ջուրը) իր շրջանը կը կատարէ անվրէպ, և պէտք եղած տեղերը իր սնունդը մատակարարելէն ետոյ՝ ապականութեան ջուրն ալ դուրս կու տայ բնական օրինօք · և եթէ պատահմամբ այն կտրօնին մէկ տեղն ալ վիրաւորուի, նոյն կենսական ջուրը անոր ալ օգնութեան կը վազէ որ բուժէ, ըստ

բուսական զօրութեան, որ է ըսել՝ իւր կենսական գործողութիւնները ամբողջ կը կատարէ, դեռ կ՚ապրի. և երբ ա՛լ արմատներէն ջուր չկրնալ առնելուն համար շրջանի մէջ եղող ջուրը գործարաններուն անունդ տալէն պակսի և ա՛լ ջուր չմնայ մէջը շրջան ընելու և անոր կենդանութիւնը պահելու, դարձեալ իւր պաշտօնը կը կատարէ դիմել դէպ՚ի փոսուիկն։ . . . — Փորձենք արդ, նայինք մարդն ալ բուսոց պէ՞ս կ՚ընթանայ։ Մարդ կը մեռնի կամ կ՚ապականուի. անոր մարմնոյն նիւթը կամ թէ ըսեմ բուսական մասը արդարև ի՛նչպէս օրէն է՝ կը դիմէ դէպ՚ի փոսուիկն. բայց անոր կենաց գործարաններն՝ ա՛լ վախճան կառնուն մահուամբ՝ դործելէ. անոր արիւնը կը պաղի կը սառի անշարժ կը մնայ. անոր մէջտեղը ձեղքես նէ՝ արիւնը այն ձեղքուածը բուժելու չդիմեր. ուրեմն անոր արիւնը ոգեւորող կենդանացընողը՝ բուսոց կենսական ջրերուն պէս միայն բուսական զօրութիւնը չէ՛. միայն գործարանները չեն որ ընչաւորութեամբ մարդոյս արեան կենդանութիւն կու տան. քանզի նոյն գործարանները դարձեալ կան ու կը մնան մեռեալ մարդուն մէջ. բայց ո՛չ ընչաւորութիւն և ո՛չ արեան կենդանութիւն կ՚ըլլայ հոն։ Ապա ուրեմն գործարանաւոր ամէն էակներուն ներգործական զօրութիւնն տարբեր զօրութիւն մը՝ աննիւթ դոյացութիւն մը կայ՝ի մարդ, որով կ՚ոգեւորի անոր արիւնը, և երբ կը պահպի նա կամ կը բաժնուի նիւթական մարդէն՝ կը մահանայ կը դադրի կ՚անդամալուծի և արիւնը։

Շատ հաւանական է որ նիւթապաշտութեան անուս հաւրակներ ելլեն ըսեն, թէ ջերմութեան պակասութենէ է արեան սառիլը, և մահն ալ անոր հետեւանքը. բայց մենք կը ցուցընեմք չատ մը մահեր որ արեան բորբոքումներէ, բուռն ջերմութիւններէ

յառաջ եկած են. կը ցուցընեմք ծերեր՝ որ ծերութենէ միայն մեռած են, և ո՛չ հիւանդութենէ մը. ասոնց արեան ինքնին պաղելու պատճառ մը չկար, մարմինն անբարեխառնութեամբ խանգարուած չէր, և զայն չպաղեցընելու՝ տաք պահելու ամեն միջոցներ՝ի գործ դրուեցան, բայց դարձեալ պաղեցան մեռան։ Դարձի արձանչելի օրինակը կը ներկայացընէ ըսածնուս։ (Գ. Թագ. Ա. 1—4։)

Դարձեալ, մեռած մարդու մը երակներուն մէջ կենդանի մարդոց տաք արիւն ալ քալեցընելիք, անկարելի է որ այն արիւնը կենդանութեան շրջան առնու, և մարդուն կենդանութեան պարտուպատշաճ անունդը մատակարարէ, և սակի վերոսին ընդհատեալ ընչաւորութիւնը շարունակել (1), մինչդեռ ծառոց կտրոններուն մէջ կրնանք ջուր քալեցընելով ոգեւորել և հողէն հանուած արմատ մը ջրոյ կամ հողոյ մէջ դնելով վերկենդացուել. ամենուն գիտցած ու փորձածն է որ թռուած ծաղկի մը կոթը ջուրը դնելով նորէն կը կենդանանայ, չթացուած կոկոններն ալ կը բացուին։ Ահա յայտնի տարբերութիւն մը որ կը ցուցընէ թէ բուսոց կենսական ջու-

(1) Ճիշդ յարմար ժամանակին լաթիերէն այս բառնուս առցոյցը տուին։ — Հնդկաստանի մէջ ծնած Սիամցի երկուորեակ երկու եղբայրներ որք կողերնուն տակէն մասկապով մը քովէ քով փակած էին, երկուքն ալ Հիւսիսային Ամերիկոյ Գաբօլինա կոչուած նահանգը մեռնելով կին առեր, և մեկը հինգ՝ միւսը վեց զաւակաց հայր եղեր էին. ասոնք միևնոյն վախճանն երեք տարեկան հասակնին ապրելէն ետքը՝ այս տարի (1874 Յունուար 5/17) ասանկ մին մեռաւ գիշերը՝ երբ միւսը կը քնանար. ոչն որ արթննալուն՝ այն ինչ առաւ որ իւր անբաժանելի եղբայրը մեռած էր. ասոնցմէ ջղաձգութիւն մը եկաւ վրան և մեկ քանի վայրկեանէն ինքն ալ մեռաւ. Բժիշկները քննելով իմացան որ կենդանի եղբօր արիւնը մեռեալ եղբօրը երակաց մէջ քալեր է, զորն որ չկրնալ յառաջանալէն զատ՝ կենդանի եղբօրն ալ մեռնելուն պատճառ եղեր է։ (Տե՛ Օրագիր կ. Պոլսոյ. թի՛ 1181. Դ 6 Մարտ. 1874։)

ը ոգեւորող բուսական զօրութիւնը չէ որ մարդուն կենդանութեան արիւնը կ'ոգեւորէ, մարդուն արիւնը կենդանացընողը ուրիշ զօրութիւն մ'է։

Բուսոց և մարդկան ապրելու և մեռնելու վիճակներուն մէջ եղած տարբերութիւնը միայն այս չէ՝ Բոյսը ապրի կամ մեռնի՝ անոր ֆոյոլիան մէջ բան չպակսիր. ապրած աստեն կը գործէր աճելու համար, մեռնելուն ալ դարձեալ կը գործէ փտելու համար. ո՛չ կենաց ո՛չ ալ մահուն՝ աւելի գործողութիւն մը չունի. նոյն անզգայ անխնամ անբան գոյացութիւնն է կ'ապրի և կը մեռնի։ Բայց մարդուն մեռնելուն, այո՛ կը մնայ անոր մէջ 'ի փտութիւն դիմող նիւթեղէնն մարդը. այլ անոր գոյութեան մէջ պակասած է խոհուն խօսուն խմաստուն բանը. ապա ուրեմն այս պակասած խոհուն խօսուն խմաստուն բանին աննիւթական գոյացութիւնն է որ զոյն կը կենդանագործէ, որուն պակսելովը նիւթեղէն մարդը կը դիակնանայ. և մենք այս աննիւթական գոյացութիւնը կ'անուանենք հոգի։

Հոգին անմահ է. մարդուն հետ չմեռնիր, և չկրնար մեռնիլ։ Քանի որովհետև հոգին նիւթեղէն չէ՝, մանրիկներէ բաղկացեալ չէ՝, պարզ գոյացութիւն մ'է, կամ եթէ կրնայ ըսուիլ՝ կենսական տարրը է. տարրը կամ պարզ գոյացութիւնը բաղադրիչ մասունք չունենալուն անլուծանելի է. և որովհետև գոյացութեան մը մահը անոր բաղադրիչ մասունց լուծումն է, ոգին բաղադրիչ մասունք չունենալուն համար անմահ է։ Գիրքն ալ այսպէս կը վարդապետէ։ Յովհաննու Յայտնութեան Գիրքը ծայրէ՝ 'ի ծայր ոգեւոց յաւիտենական վիճակին վրայ կը խօսի։ Այնչափ անտարակուսելի և հարկաւոր ճշմարտութիւն կը համարի Ս. Գիրքը հոգւոյ գոյութիւնը ու անմահութիւնը, որ Աստուծոյ գոյութեան պէս իրրև հանրածանօթ և անկարօտ ուսուցման՝ ամենեւին չանք

չցուցընէր ապացուցանելու, միայն յաւիտենական կենաց վրայ կը խօսի. (ղուկ. ԻԳ. 43. Մատթ. Ի.)

Հանրածանօթ և անտարակուսելի ճշմարտութիւն անուանեցինք հոգւոյ գոյութիւնն ու անմահութիւնը. վասն զի ի՞նչ հնագոյն կրօնքներէն սկսեալ աշխարհիս ամէն կողմերն երեւցած ամէն դեղ և աղանդ՝ հոգւոյ գոյութեան և անմահութեան ճշմարտութիւնը խոստովանեցան, և ոչ ոք՝ ոչ ուրեք՝ տարակուսեցաւ բաց 'ի Սադուկեցիներէն, որ հին դրին թերեհաւատութեանն՝ հոգւոյն անմահութիւնը ուրանալով, և վերջին դարուս անկրօն անհաւատութիւնն ու նիւթապաշտ սկեպտիկեանութիւնը զայն լրացուց. հոգւոյ գոյութիւնն ալ ուրանալով ընդդէմ բանականութեան։ — Եգիպտական մումիայն՝ հոգւոյ անմահութեան դաւանանքի անջրելի ապացոյցն է Եգիպտացիս, որք ոգեփոխութեան հաւատալնուն համար մումիայն հնարած ըլլալով՝ անհնարին էր որ ոգւոյ անմահութեան հաւատացած չըլլային. միթէ մեռեա՞լ յոչնութիւն դարձող կամ գոյութիւն չունեցող անուանակա՞ն հոգւոյ համար անոր մարմինը անեղծ անապական պահելու չանահնար կը ճգնէին։ Պատմութիւնը մեզի կը տրվէցընէ թէ Եգիպտացիք հաւատալով որ մարդիկ մեռնելնուն ետքը երբոր իրենց մարմինները փտին, այնուհետև հոգիներնին մարմիններնուն լուծուելով այսչափ հաղար տարի հետզհետէ այլ և այլ անասնոց անբանից մարմիններուն կը փոխուին՝ 'ի քաւութիւն իրենց գործած մեղանաց, և ապա վերստին կու գան կը միանան իրենց մարմնոց հետ երջանիկ կեանք մը վայելելու համար. ուստի որպէս զի այն հոգիները իրենց ապաշխարութեան կամ քաւարանի տարիները այլ և այլ անասնոց մարմնոց մէջ չանցուներն, հնարեցան մումիայն, մարմինը անփուտ պահելու համար մինչև

այն սահմանեալ ապաշխարանաց չրջանը, որ մարմնոյն անխուտ մնալովը հոգին ալ 'ի նմին անբաժան բնակի մնայ։ — Յունաց, Հռովմայեցւոց և այլոց ամենայն դեղից առասպելներու մէջ յիշուած մեռելոց ուրուականները, ոգիները, տուեըները, ընտանի դիքերը, Պղուտոնի արքունիքը, մեռելոց դատաստանները, սեմոնները, կերբեր, Քարոն, Եղիսեան դաշտ, Տարտարոս, յուղարկաւորութիւնք, մեռելոյթք եւ, եթէ նշանակութիւն մը ունին՝ բան մը կը սորվեցընեն մեզի ճշմարտապէս, այս ալ ոգւոց գոյութիւնն ու անոնց անմահութիւնն է, որ 'ի հառարակի՝ կը դաւանէին ամենայն ազգք և աղինք. անշուշտ նախասորդէն սորված և ընդ ամենայն ոլորտս երկրի ցրուեալ ցանեալ ուսուցին և աւանդեցին սերունդք նորին՝ նահապետք իւրաքանչիւր ազգաց։

Աստուծոյ գոյութեան պաշտօնին անբաժանելի կցորդ է հոգւոյ գոյութեան և անմահութեան վարդապետութիւնը, մին առանց միւսին անկարելի է դաւանիլ կամ ուրանալ։

ԳԼՈՒԽ Դ.

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՑ

Աստուծոյ նախախնամութիւնը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ շարունակ արարչութիւն։ Արարչին այն նախահոգ խնամքն՝ որով իւր ստեղծածները կը կառավարէ ու կը պահպանէ, նախախնամութիւն կ'ըսուի. (Մ՟ոպ. Զ. 25—34։ Ղ՟ոկ. ԺԲ. 22—30։) Ի՛նչ և ո՛րչափ զօրութիւն ակտը էր արարչագործութեան, նոյնչափ զօրութիւն հարկաւոր է անոր կառավարութեան և պահպանութեան։

— Ժամագործը եթէ նախահոգ ղուչութեամբ ժամացոյցը չկարէ, իւր նպատակին չծառայեր. ո՛չ ալ տունը կանգուն կը մնայ՝ եթէ նորոգող ձեռքը 'ի սպառ անոր վրայէն քաշուի։

Այս վարդապետութիւնը ըստ որում Աստուծոյ գոյութեան վարդապետութենէն հարկաւորապէս կը բղխի, հարկաւորապէս ալ ակտը էր այն ամեն հին և հնագոյն ազգերն ու կրօնքներն ընդհանրապէս ընդունած և պաշտած ըլլային, որոնք որ Աստուծոյ գոյութիւնը իբր անուրանալի ճշմարտութիւն ընդուներ ու կը պաշտէին։

Իրօք ալ անանկ եղան։ Ամեն հին կրօնքներու մէջ կար տիեզերաց նախախնամող և արարածոց պահպանող աստուածութիւն ոմն։ Հայաստան իր Անահիտն ունէր «փառք և կեցուցիչ, չունչ և կեանդանութիւն աշխարհին և Ազգին Հայոց». (Ագ-Ղ. ե. 47. Զ. 57։) Հռովմայեցին՝ իւր Եուբիդեր կամ Ժիւբիդեսը. Յոյնն՝ իր Դիոսը «Հայր աստուածոց և մարդկան, խնամող տիեզերաց». և ուրիշ շատ մը խնամակալներ՝ աշխարհաց, գաւառաց, քաղաքաց, թագաւորաց, տանց եւ։ Անանկ ալ միւս ամեն կրօնքներն իրենց յատուկ խնամակալ աստուածներն ունեցան, զորս թէ որ յայտնի յայտնապէս դաւանած խոստովանած ալ չըլլային, գործքովնին կ'ապացուցանէին. առ ինչ արդեօք Աստուածութեան աղօթք կ'ուղղէին, եթէ ոչ յատուկ խնամք և պարգեւք և բարիք ընդունելու համար. «Յորժամ կայցէք յաղօթս, կ'ըսէ երկնային վարդապետն մեր, մի՛ շատախօսք լինիք իրրեւ զհեթանոսան, զի համարին թէ 'ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին. արդ՝ մի՛ նմանիցէք նոցա. զի գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչեւ ձեր խնդրեալ ինչ իցէ 'ի նմանէ»։ (Մ՟ոպ. Զ. 7—8։)

Կրկին է Աստուծոյ Նախախնամութիւնը. հա-

ապրակ և յաւուրկ : Հաստատակ Նախախնամութիւնը կը պահպանէ ու կը կառավարէ զամենայն արարածը , բնական օրինօք հոդալով անոնց պէտքերն ու կարիքը , և խնամելով միանգամայն արդարն ու մեղապարտը , երկիւղածն ու աստուածանարտը : Իսկ յաւուրկ Նախախնամութիւնը կ'ապահովէ ու կը խնամէ իւր եկեղեցին միանչեղնաւոր և անպակասելի , և 'ի նմին' զայս ոք երկիւղած և զայն ոք քան զայլս : — Հին և Նոր Եկեղեցւոյ յարարչութենէ անտի մարդոյն ցայս վայր այնչափ բիւր վիճակ՝ անընդհատելի տանջանաց և հալածանաց տանելով անպակասելի տեւելն ու արմատանալը հիանալի ապացոյցն է յաւուրկ Նախախնամութեան . և 'ի նմին' մանաւորաց ոմանց Նախախնամութեան օրինակներն են Աբրահամ՝ , Յակովբ , Յովսէփ , Մովսէս , Դաւթեալք , Սողոս եւ :

Յաւուրկ Նախախնամութիւնը անխրատութիւն չէ Աստուծոյ կողմէն . իւր արարածներէն զայս ոք քան զայն առաւել խնամելը մէկու մը պրկանք ընել չէ՝ . մանաւորաց ոմանց առաւոտաձեռնելը՝ այլոց համար ժլատ գտնուիլ չէ : Յիրաւի Նախախնամութիւնը կրնայինք թերեւս անխրատութիւն համարել անոնց դէմ՝ որք այդ յաւուրկին մէջ մտան չունէին , եթէ Աստուած զանոնք ամենը հաստարակ խնամոք չխնամէր : Ինչպէս հայր մը որ իւր բնական - սիրովն ու գործովը բոլոր որդիքը կը խնամէ , եթէ անոնցմէ միոյն մէկ բարեմասնութեան համար աւելի խնամք մը ունենայ , և կամ միւսոյն անառակութեան համար՝ զանիկայ որպէս զի 'ի լաւ անդր առաջնորդէ՝ աւելի հոգ և խնամք տանի անոր , անխրատութիւն ըրած չըլլար միւսներուն : Եւ կամ ինչպէս ազարակին տէրը ժամ մը բանող մշակին ալ առտուդ աւուրչէք տալուն՝ առտուդ օրը աշխատող մշակին տակաւին վարձուց անխրատութիւն

մը ըրած չըլլար : (Մ-ՈՐ· Ի· 1—16։)

Աստուծոյ յաւուրկ Նախախնամութեան չնորհին արժանի լինելու համար պարտիմք կարի խոնարհել զանձինս առաջի Աստուծոյ , և ստէպ աղօթիւք եւ պաղատանօք խնդրել Աստուծմէ . (Ղ-Կ· ԺԸ· 1—8։) յանձնելով ինքզինքնիս Անոր , (Մ-ՈՐ· Զ· 33—34 ։ Ժ· 29—31։) և միշտ նոյն յաւուրկ խնամոց մէջ մըշտընջենաւորելու համար աղաչել զԱստուած , (Մ-ՆԴ· ԻԴ· 12—14։ ԻԸ· 20—21։ Գ-ԹԴ· Ա· 21·) զանազ՝ գուն գործեմք միանգամայն այն խնամքին չզրկուելու համար սուրբ սիրտ և մաքուր աւիւծ հաստոք ունենալ առ Աստուած , և սէր անկեղծ ու աննենգ առ ընկերս ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆԵՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ԱՆՁԱՆՑ

Քրիստոնէական վարդապետութեան հիմն է Նորոյ ուխտին վարդապետիւնը. քանի կ'ուզեմ Նոր կտակարան և Քրիստոնէական եկեղեցւոյ հիմնադրութիւնը կը կատարեալ Հնոյ ուխտին վարդապետութեան մէջ. Այժիկայ քանի չէ՛ թէ Քրիստոս հիմնադիրն նոր վարդապետութիւն մը ուսանողից իւր Եկեղեցւոյն՝ ամենեւին անծանօթ հին Եկեղեցւոյն. քանզի կրօնքը Հաւատոյ մասունքն եղող վարդապետութեանց մասին՝ նոր՝ի նորոյ յայտնութիւն չկրնար ընդունիլ եղբէն՝ ամենեւին անծանօթ և իսկ հակառակ նախկին յայտնութեանց. Որովհետեւ Աստուած ըլլալով յայտնութեան հեղինակ, և Աստուած իմն ճշմարտութիւն և ճշմարտութեան Աստուածն ըլլալով՝ անկարելի է որ Անոր հեղհեղուկ տուած յայտնութիւնները՝ իրերայց անձնաւն ներհակ կամ պլրտոմին հակառակ ըլլան.

Յայտնութիւնը հեղհեղուկ տուելէն՝ ի վեր՝ ան քանց սրբոց ընտրելոց՝ Աստուածային նոյն և մի կրթանիչ հաւատոյ ճշմարտութեանց ամփոփուցիչ տիտուղքն են. այս ինչ որ այս յայտնութիւնները ամփճանարար լոյս սփռելով այն ճշմարտութեանց վրայ՝ անոնց մթութիւնները կը փարատեն. Որպէսի հեղհեղուկ սրտուած յայտնութիւնները իրր բացատրութիւնք են առաջիններուն, և ո՛չ հիմնադիրն նոր վարդապետութիւնք՝ ի տեսին փրկարար ճշմարտութեանց. Իրր այն իմ ուրեք ծագելուն՝ նախ լեռներուն գագաթները կը լուսաւորէ, և ապա հեղհեղուկ դաշտերն ու ձորերը. Լեռներուն գագաթները լուսաւորած առեն դաշտերն ու ձորերը

չկոյրն չէ՛, կոյրն, բայց մութին մէջն է. ուսկա լուսաւորելով երեւան կու գան. Այսպէս է Նորոյ ուխտեան վարդապետութիւնը.

Հին օրինաց մէջ Նորոյ ուխտեան վարդապետութիւնը բացայայտ քարոզուած չէ՛. քանզի բազմաստուածութեան միտեալ խառնապարանոց ապրելու էր, որ հեթանոս ազգ եղել ալ չիջապատեալ էր, եթէ յայտնապէս բացնեւութիւն ըլլալ քարոզուէր Աստուածային անունից մէջ, անհնարին էր զայն կատարիչս ըլլալն ապրիլ առնել. Վասն որոյ Աստուածային Նախախնամութիւնը կանուխ հոգ տարաւ անունց կորսուեան առաջքն առնելու, և միայն Աստուծոյ միութիւնը յստակիլ բանիւք ուսուցանել ևս անունց. Բայց և կանխահոգ խնամովք՝ թէ՛ անունց և թէ՛ ապագայիցն Հաւատոյ՝ հին օրէնքին մէջ պահեց այս վարդապետութեան պաշտօնեայքն ու ձայները, որ երբ Աւետարանն լուսաւորէ բարձրելնի իջնալով պաշտօնեայքն ու ձայները լուսաւորելու, ասոնք իսկոյն երեւան պիտի գային Քրիստոսեայ աշխարհին առջեւ, և երբեմն վկայեալ ծանօթի վարդապետութիւն՝ վկայութիւն պիտի լլլային բնդունելութեան Աստուածային վարդապետութեան.

Հին կտակարանին մէջ չատ վկայութիւններ կան, որք յայտնապէս կը քարոզեն Քրիստոսի՝ Քրիստոսի մի և նոյն եռանձին պայմանին բնութիւնն ևս, բայց այս մի Աստուածութեան և կամ Աստուածային միութեան մէջ անձնաւորական բազմութիւն մը կայ. Այս կարգէն են հետեւեալները. «Արդ ելցուք մեք ի Բեթղեհէմ և տեսցուք զբանն զայն որ եղեւ, զոր Տէր ցուցին մեզ. Եւ եկին փութանակի, և գտին զՄարիամ և զՅովսէփ, և զմանուկն դրեալ ի մսուրի. Եւ տեսեալ՝ ծանուցին վասն բանին որ խօսեցաւ ցնոսա վասն մանկանն զայնմիկ. Եւ ամենայն որ լսէին՝ զարմանային վասն բանից որ խօսեցան ցնոսա հովիւքն. Եւ Մարիամ զամենայն բանս զայնոսիկ պահէր՝ համակելով զնոսա ի սրտի իւրում. Եւ դարձան հովիւքն ի փառս և ի գովեստ Աստուծոյ վասն ամենայնի զոր լուան և տեսին՝ որպէս ասացեալ էր ցնոսա. Եւ յորժամ լցան աւուրք ութ՝ թլփատել զմանկանն, եւ կոչեցաւ անուն նորա Յիսուս, որ կոչեցաւ յանդիման քան զի յղանալ զնա ի արգանդի. Եւ յորժամ լցան աւուրք մաքրութեան նոցա՝ ըստ օրինացն Մովսիսի, տարան զնա յԵրուսաղէմ՝ մատուցանել զնա Տեառն. Եւ ի տալ ընծայս՝ ըստ որոյ ասացեալ է յօրինացն Տեառն՝ եթէ ամենայն արու արական որ ծնանիցի՝ սուրբ Տեառն կոչեսցի. Եւ ի տալ պատարագ՝ ըստ որոյ ասացեալ է յօրինացն Տեառն՝ զոյգ հաւուց կամ երկուց աղաւնեաց. Եւ ահա էր այր մի յԵրուսաղէմ՝ որում անուն Սիմէոն, և էր այր արդար և երկիւղած՝ ակն ունելով զմխիթարութիւն Իսրայէլի, և Հոգին Սուրբ էր ի նմա. Եւ էր նմա յայտնեալ ի Հոգւոյն Սրբոյ՝ եթէ մի տեսցէ զմահ՝ մինչեւ տեսցէ զՔրիստոս Տեառն. Եւ եկն ի Հոգւոյն ի տաճարն. Եւ ի մտանել ծնողացն զմանկանն Յիսուս՝ առնել նմա ըստ սովորութեան օրինացն՝ և նա առ ինքն ընկալաւ զնա ի գիրկս իւր, և օրհնեաց զԱստուած և ասէ. Արդ արձակեա զծառայ քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութեան. Զի տեսին աչք իմ զփրկութիւն քո զոր պատրաստեցեր յերեսս ամենայն ազգաց. Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց և փառս ժողովրդեան քո Իսրայէլի. Եւ էր Յովսէփ և մայր նորա զարմացեալ ի վերայ բանիցն որ ասէին ցնա. Եւ օրհնեաց զնոսա Սիմէոն, և ասէ ցՄարիամ մայր նորա. Ահա այս դրեալ է ի հարուած և ի յարութիւն բազմաց յԻսրայէլի, և ի նշան որոյ հակառակեսցին. Եւ քեզ անցցէ սուր հոգւոյ՝ զի յայտնեալ լիցին ի սրտից բազմաց խորհուրդք. Եւ էր Աննա մարգարէ՝ դուստր Փանուէլի՝ ի ցեղէն Ասերի՝ յորում տարիս ի մանկութենէ իւրմէ ապրեալ էր ամուսնոյ իւրմէ. Եւ էր ինքն ի տարիս ութսուն և չորս՝ որ ոչ հեռանայր ի տաճարէն՝ պաշտելով զԱստուած ի պահս և ի պաղատանս գիշեր և ցերեկ. Եւ նա ի նմին ժամու ելեալ՝ խոստովանէր Տեառն, և խօսէր վասն նորա ամենեցուն որ ակն ունէին զփրկութիւն Երուսաղէմի. Եւ իբրեւ կատարեցին զամենայն ըստ օրինացն Տեառն՝ դարձան յԳալիլեա ի Նազովրէթ քաղաք իւրեանց. Եւ մանուկն աճէր և զօրանայր հոգւով՝ լցեալ իմաստութեամբ, և շնորհք Աստուծոյ էին ի նմա. Եւ երթային ծնողքն նորա յԵրուսաղէմ ամ ըստ ամէ յտօնի Զատկին. Եւ յորժամ եղեւ նա ամաց տասն և երկուց՝ ելեալ նոցա ըստ սովորութեան տաճարին՝ և կատարեալ զաւուրսն՝ յորժամ դառնային նոքա՝ մնաց մանուկն Յիսուս յԵրուսաղէմ՝ և ոչ գիտացին ծնողքն նորա. Եւ կարծեցին զնա ի խումբն եղեալ՝ և եկին զաւուր մի ճանապարհ՝ և խնդրէին զնա ի մերձաւորսն և ի ծանօթսն. Եւ ոչ գտեալ՝ դարձան յԵրուսաղէմ՝ խնդրելով զնա. Եւ եղեւ յետ երից աւուրց՝ գտին զնա նստեալ ի մէջ վարդապետացն՝ լսելով նոցա և հարցանելով զնոսա. Եւ ամենեքին որ լսէին՝ զարմանային ի վերայ իմաստութեան նորա և պատասխանեաց նոցա. Եւ տեսեալ՝ զարմացան. Եւ ասէ ցնա մայր նորա. Որդեակ, զիարդ արարեր մեզ այսպէս. Ահա հայր քո և ես տագնապեալ խնդրէաք զքեզ. Եւ ասէ ցնոսա. Զիարդ խնդրէիք զիս. Ոչ գիտէիք եթէ յինս հարցն իմոց պարտ է ինձ լինել. Եւ նոքա ոչ իմացան զբանն զոր խօսեցաւ ցնոսա. Եւ իջեալ ընդ նոսա եկն յՆազովրէթ, և էր հնազանդ նոցա. Եւ մայր նորա պահէր զամենայն բանս զայնոսիկ ի սրտի իւրում. Եւ Յիսուս յառաջադիմէր իմաստութեամբ և հասակաւ՝ և շնորհօք առաջի Աստուծոյ և մարդկան.»

Ասոնք ամենքն ալ Աստուածային անձանց մէջ անձնաւորական բազմութիւն մը կը ցուցնեն. Ասոնք ամենքն ալ Աստուածային միութեան

ատ կաղնեատն Մամբրէ, մինչդեռ նստէր առ դուռն խորանին իւրոց ՚ի միջօրէի, աւրհնարձակ զոյշ իւր եառեալ, և ահա երիս եղեալ կացին ՚ի վերոյ քան զնա։ Եւ իրրև եառնու՝ ընդ առաջ նոցա ՚ի դրանէ խորանին իւրոյ, և երկնրեաւթ ՚ի վերայ երկրի և ասէ. Տէր՝ եթէ գտի շնորհս առաջի ք՝ մի՛ զանց առնիր ՚ի ծառայէ քոմմէ. այլ առիցս ասկաւ մի ջուր և լուացին զոտս ձեր, և ընկուզեր ընդ ծառոյս, և առիցս հաց՝ և կերիջիր, և ապա երթիջիր զճանապարհս ձեր, փոխանակ որ դարձաւթ առ ծառայ ձեր. և ասէ՝ այսպէս արա։ ։ ։ Եւ առ կոյր և կաթն, և զորիսն զոր հատոյց, և եդ առաջի նոցա և կերան. և նա կայր այր առաջի նոցա ընդ ծառոյն. և ասէ ցնոսա՝ Ո՞ւր է Սառա կին քո ձեր» (Ծննդ. Ա. 26. 27։ ԺԸ. 7։ ԺԹ. 24։ ԺԷ. 1—33։) «Եւ ասէ ցնա Տէր ։ ։ Որ ուղղեցոյց զուղիս իմ, և մրրկեցից զնոսա Տէրոջ Աստուածով իսրաելացւոց» (ՈՀԵ Ա. 7։) Ի վերայ հովուաց բարկացաւ սրտմտութիւն իմ, և ՚ի վերայ գառանցդ այցելութիւն առից, և այց առից Տէր Ամենակալ զհօտ իւր զտանն Յուդայ ։ ։ ։ Եւ զբ-ցնէց զնոսա ՚ի Տէր Աստուած նոցա, և յանուն նորա պարծեսցին՝ ասէ Տէր» (Զաքար. Ժ. 3 ։ ։ ։ 12։) «Ո՛վ անձն այսորիկ օձ գքեզ Աստուած Աստուած ի՝ իւղով ուրախութեան առաւել քան զընկերս քո» (Ա՝ՂՀ. ԽԵ. 8։) «Աստուած Տէր ցՏէր իմ». (ՃՓ. 1։) «Տէր Տէր առաքեաց զի՝ և հնչէ նորա». (Ե՝ՕՅ. ԽԼ. 6։) եւ այլն։

Անկէ և առնց նման ուրիշ շատ մը վկայութիւններ Աստուած այնպէս մը ներմանելց մարդկանէ և ուրիշ ընտրեալ մարդկան ձեռօք Հին Կտակարանին մէջ, որ Նոր Կտակարանի յայտնեալ վարդապետութեան հաստատութիւնը ըլլալու չափ պարզն է, բայց խոստովանելու ենք որ մութ կ՚ին այն առանն վկայութիւններէն Հնոյն մէջ, և քառակուսի չկ՚ին Աստուածաբանական վարդապետութիւնը գիտնալ

պարտութեամբ բացատրելու՝ առանց նորոգ յայտնութեան՝ որ եղեւ ՚ի ձեռն Միածնի Որդւոյն «Որդանան գնաց՝ կ՚ըսեն մեր Հայրերը, ու Երրորդութիւնը կը տեսնեմ» ըսել ուզելով որ անոր կը տեսնուին առաջին անգամ որոշակի՝ Հօր անձնաւորութիւնը՝ յերկնից վկայելով Որդւոյն հասնար, և Որդւոյ անձնաւորութիւնը՝ մկրտելով ՚ի Յորդանէ և վկայուելով ՚ի Հօրէ և ՚ի Հոգւոյն, և Հոգւոյն անձնաւորութիւնը՝ աղաւնակերպ առաւնելով ՚ի վերայ Էակցին ՚ի վկայութիւն։ Այս ուրիշ բան չէր ըսել, եթէ ոչ՝ Հին Կտակարանը բացայայտ չտրուելը այս վարդապետութիւնը։ Հին կտակարանը մեկի պատմական եղաւ միայն։ (Գաղատ. Գ. 24։) ուսուցիչ՝ վարդապետ՝ Եորն էր։ (Մատթ. ԻԳ. 10։)

Եկեղեցւոյ Հայրերէն եղան ոմանք՝ ինչպէս Յուստինոս վկայ, Իրանոս, Տէրտուղիանոս, Որոգինէս, Եւսեբիոս, Թէոդորիտոս, Գրիգոր Նիւսացի, Բարսեղ և այլն, ինչպէս և Հայաստանեայց Հարք մեծաւ մասամբ, որք Ս. Գրոց մէջ այնչափ յանախ Հայր, Որդի, Խնամութիւն, Բան Հօր, Հոգի Ճառնչ Աստնական անուններն, եւս և նշխարակրկնեալ մէջ Աստուծոյ անունը նշանակող եղհիմ, Ադամայէ, Գաշէմ անուններուն յոգնակի ձեւը առնելով կարծեցին թէ այս վարդապետութիւնը քաջ ծանօթ կ՚ը Հրէից։

Եւ արդարև՝ հնարդոյն կրօնքներուն առաւելաբանից ընդ միմեանցիք դատակարգութեանց՝ եթէ փշ մը առնի ուշադրութիւն ընելու ըլլանք, պիտի տեսնենք որ անոնց գրեթէ ամենուն մէջ ալ իրր գլխաւոր գիր կամ իրր առաւելաբանութեան լրութիւնը կրող եղեռնք կան մէջ թեքուած, ընդ որում կը դատակարգին այլք ՚ի գլխ։ Ինչպէս են Պղխտական Ոսիրիան, Խրան ու Թագաւոր։ Զանգիկ ազանգ ցն Զրուան Ակարանն, (յորմէ) Արտաշղ

(կամ Որմիզդն) և Խարտման (կամ Անհմն)· Յունաց Դիոն, Պոսիդոնն ու Պղուտոնը, կամ Ուրանոս, Կռոնոս ու Դիոսը· Հայոց Արամազդն, Անահիտն ու Վահագնը, և աստղց ամենէն նմանագոյնը՝ Հնդկաց երեքութեան Բրաման, Վիշնուն և Շիւան: Աստղց ամենուն նայելով կ'ըսեմ՝ արդարև փորձութիւն կու գայ մարդուն ենթադրել թէ հնագոյն աստղաբաշխութիւն մ'ըլլայ Աստուածային անձանց երեք ոճոյնց վրայօք: Այլ սակայն այս հանրական աստղաբաշխենէն եառքը որուած Ս· Գիրքին վկայութեանց և անոր մէջ այս մասին եղած յայտնութեանց նայելով՝ ճշմարտութիւնը և անկեղծութիւնը կ'ստիպէ զմեզ խոստովանելու որ անունք բաւական չէին երրորդութեան վարդապետութիւնը լուսաւոր երեւան հանելու· Հրէից ազգին (ինչպէս նաև բոլոր մարդկութեան) դէպ 'ի բազմաստուածութիւն ուղեցած անհնարին միտումին պատճառաւ՝ յայտնութիւնը 'ի հնումն զայս չէ պարզաբանած: Ասիկայ շատ տարօրէն է որ Հրէայք մինչև 'ի Քրիստոս որոշ լուսաւոր գաղափար մը չունէին այս վարդապետութեան վրայ· Աստուածային վարդապետին պահուած էր Հին Կտակարանին մէջ թաքուն այս վարդապետութեան վրայ լոյս սփռել և քարոզել, (Յովհ· Դ· 25·) անանկ ալ եղաւ կատարուեցաւ· Յիսուս Քրիստոս իւր Առաքելութեան իւր երեք տարուան ընթացին մէջ յոյժ պայծառ եղանակաւ քարոզեց պարզաբանեց զայս· (ինչպէս որ հետեւեալ գլուխներուն մէջ պիտի տեսնենք·) և առ Հայր հանգստանալու ժամանակը որոշ պատուէրով մը կնքեց իւր քարոզութիւնը, ըսելով աշակերտացը· «Գնացէ՛ք այսուհետև, աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոս, մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ»: (Մտթ· ԻԸ· 19:)

Երրորդութեան վարդապետութիւնն այս է:

Աստուած Ի է էութեամբ գոյութեամբ բնութեամբ· բայց այն Ի-ն՝ Ի-ութեան մէջ երեք որոչմունք կան, զորս անձն բառով բացատրած են եկեղեցւոյ Ս· Հարք· ցի՝ երեք անձինք կան, Հայր Որդի՝ և Հոգի, որոց երրորդութիւնը 'ի միութեան է, կամ թէ որ կրնայ ուղղափառաբար ըսուիլ Ի-ն կը նշէ· Հօր և Որդւոյ և Հոգւոյ երեք որիշ անձինք՝ մի են, յերիս անձինս՝ մի Աստուածութիւն է, մի էութիւն և մի բնութիւն: Իբրև Հոգի՝ միտք և բան· իբրև արեգակն՝ լոյս և ճառագայթ· և իբրև ակն՝ աղբիւր և ջուր:

Այս ալ գիտնալու ենք որ՝ երբ անձն բառը արարածոց համար կը գործածենք, էութեամբ գոյութեամբ բնութեամբ են տարբեր՝ որիշ անհոգ նշանակելու համար 'ի կիր կ'առնուի: Բայց Աստուածութեան համար նոյն միտք չենք գործածեր: Անձն կ'ըսենք Երրորդութեան երեք որոչմանց համար՝ չէ թէ ըսելու համար թէ անունք երեք տարբեր տարբեր անհատներ են բնութեամբ, այլ ցուցնելու համար միայն Աստուածային մի էութեան այն երեք որոչմանց առնչակցութիւնը և առնչակցաց հակադրութիւնը (ց որոչմունքը), թէ Հայրը՝ Հայր է, Որդի կամ Հոգի չէ՝· Որդին՝ Հայր չէ՝՝ ոչ ալ Հոգի է· և Հոգին՝ ո՛չ Հայր է և ո՛չ Որդի: — Հայրը՝ ծնող է Որդւոյն, և բղխող Ս· Հոգւոյն· բայց ինքը ծնեալ կամ բղխեալ չէ՝· Որդին՝ ծնեալ է 'ի Հօրէ 'ի յաւիտենից, այլ ինքն ծնող կամ բղխող չէ՝: Եւ Հոգին Սուրբ՝ բղխեալ է 'ի Հօրէ անժամանակապէս· սակայն ինքը ո՛չ ծնող է և ո՛չ բղխող: Եւ այս երեքս՝ երեք աստուածներ չեն, մի Աստուածութիւն է:

Կատակար կը խոստովանինք՝ որ Երրորդութեան վարդապետութիւնը անմատչելի է մեզ իւր բարձրութեանն ու խորութեամբը, բնութեամբ ան-

հաւանելի գոլով. մենք ալ ասկից աւելի բացատրութիւն չենք կրնար տալ ատոր վրայ: Կը մնայ մեզ արդ երից Անձնաւորութեանց վրայ ուրոյն ուրոյն խօսիլ, զատ զատ գլուխներով:

ԳԼՈՒԽ Ա.

Հ՚Այր

Հ՚Այր անունը կրկին նշանակութեամբ կը գործածուի Ս. Գրոց մէջ. մէկ մը Հայր՝ բնութեամբ, նկատմամբ իւր Որդւոյն, մէկ մ՚ալ Հայր՝ ՚ի հատարակի՝ նմանութեամբ: Հայր կ՚ըսուին մեզ բնութեամբ անոնք՝ յորոց ծնած ենք. իսկ հայր ՚ի հատարակի՝ նմանութեամբ անոնք՝ որք մեր հարց տարբերն ունին, կամ մեզ հօր խնամք կը տանին, մեր օգուտը մեզ կը ճանչցընեն, կը բարերարեն եւ. ասոնք են մեր բարերարները, Խմբաններըը, Քահանայներըը, Վարժապետներըը եւ:

Հանդ անակին մէջ «Հաւատամք ՚ի մի Աստուած, ՚ի Հ՚այր Ամենակալ» ըսելնուս՝ Հ՚այր անունը հատարակ նշանակութեամբ քննելով, խնամող ըսելու մտօք գործածուած չէ. այլ առաջին նշանակութեամբ, իբրեւ մի անձն երրորդութեան, որ Հայր անուամբ կ՚որոշուի, և է պատճառ Որդւոյն ծնընդեան, և Հոգւոյն բղխմանց:

Ս. Գրքին մէջ շատ անգամ Հ՚այր անունը կը գործածուի նաեւ անանկ տեղեր որ Աստուածութիւնը ց երրորդութեան երեք անձինքը համանդամայն կը նշանակէ. ըստ որում Հայր անունը իւր մէջ կը բովանդակէ ամեն այն խնամքները՝ որոց արդիք կ՚ապաւեն իրենց բնական ծնողքներէն. և Աստուած ինքն իրեւ գթած Հայր՝ այն ամեն խնամքները խոստացած է և կը տանի իւր արարածոց, զորս

որդի կ՚անուանէ: Որեմն անանկ տեղուանք Հ՚այր անունը չէ թէ իբրեւ երրորդութեան մի անձը որոշող անուն մը գործածուածի պէս պէտք է նկատուիք, այլ «Աստուած որ մեր Հայրն է» ըսելու պէս: Որովհետեւ դարձեալ Ս. Գրոց մէջ Հայր կ՚անուանի Աստուածութիւնը իբրեւ ստեղծող՝ ըստ երբայրաբանութեան, յորս սովորութիւն էր Հ՚այր անուանել գիւտի կամ արուեստի մը հնարողը. ըստ այնմ թէ «Յոբաղ, որ Հ՚այր երգոց և քնարից». (Ծննդ. Դ. 20—22:)

Բայց երրորդութեան վարդապետութեան (ինչպէս նաեւ Ս. Գրոց) մէջ Հայր կ՚ըսուի երրորդութեան մի անձն՝ Որդւոյ անձին առնչակցութեան նկատմամբ, զոր չենք կրնար գիտնալ, թէ ի՛նչ է: Եաեւ Քրիստոսի Ցիսուսի (յ՚որ մարգարէացաւ Որդւոյ Աստուծոյ) նկատմամբ, զոր իբրեւ Փրկիչ և Բարերար խրկեց յաշխարհ, հրահանգել և փրկել զաշխարհ: ըստ որոյ և Քրիստոս Ցիսուս (բանեն մարգարէացաւ) կ՚ըսուի Որդի Աստուծոյ, թէ՚եւ Որդի մարդոյ և Որդի Աստուծոյ է նոյն և մի անձն:

ԳԼՈՒԽ Բ.

ՈՐԴԻՆ ՄԻԱԾԻՆ ԵՒ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՔ ՆՈՐԱ

ԾՕԴՈՒԱԾ Ա.

Որդի Աստուծոյ

Որդին Աստուծոյ՝ որ և բան Հօր՝ է մի անձն երրորդութեան, միածին ծնունդ Հօր ՚ի յաւիտենից՝ անժամանակ: Ծնունդ՝ չէ թէ արարած, և ո՛չ արարչական՝ ախտաւոր, այլ յիւթենէն Աստուծոյ.

Աստուած յԱստուծոյ , լոյս ՚ի լուսոյ ծնուեալ . նոյն ինքն է աւետեաց բնութեանն Հանդերձակից Հօր , եւ ոչ ըստ արարածական ծննդոց՝ ՚ի ֆառնաՀէ ծըննած . կամ թէ ըսեմ՝ ըստ որում ծնեալ՝ ժամանակի յաջորդութեան ոտկ ինկած , հետեւաբար և ժամանակաւ յետոյ եղած ըլլալ քան զՀայրն , որ է ըսել կրտեր քան զՀայրն . այս ըսել կ՚ըլլայ թէ՝ «Էր երբեմն՝ յորժամ ո՛չ էր Որդին» , զոր բառդներդը կը նզովենք Հանդանակին մէջ . այլ՝ որպէս Հայր միշտ և ՚ի յաւիտենից , ընդ նմին և Որդին միշտ՝ ծնեալ ՚ի յաւիտենից ։

Թէ ի՞նչ է այս Ձեռնադր ըսուածդը , և ի՞նչ՝ եղանակը , կ՚ըսեմք՝ թէ Որդւոյ անձին ՚ի Հօրէ յաւիտենական յառաջ խոպոպումն՝ երեւին է , բայց ի՞նչ է , ինա՞ր կ՚ըլլայ , չգիտեմք , անհասանելի անդիտելի է այս ուսոյցկան , ՚ի վեր քան զբան ըլլալուն . միայն այս յայտնի գիտեմք որ՝ Հօր անձին և Որդւոյ անձին մէջտեղը եղած անձնաւորական տարբերութեանց Հակադրութիւնն է Ծնեալդը . Ձեռքը՝ Ձեռնային հետ մի և նոյն անձը չէ՝ , որիշ անձն է . և Ձեռնադը՝ Ձեռքին հետ մի և նոյն անձը չէ՝ , որիշ անձն է ։ Ակկից աւելի բան չեմք կրնար գիտնալ այս Աստուածային երեւոյթին վրայ ։

Ինչպէս Հայր անեռան հասնար ըսինք ։ Որդի անեռանն ալ նոյնպէս տարբեր առանձնաւորութիւն է ։— Որդի կ՚ըսուին մէկ յիւր անուանք՝ որ բնութեանն որդիք են ։ Որդի կ՚ըսուին նաև որդեդիրք ։ եւս և աւելի անուանք որ որդիական Հանդամանքներ ունին ։ ինչպէս են աշակերտք՝ նկատմամբ վարդապետին , ժողովուրդք՝ նկատմամբ Քահանային , Խմբոյ , թեզ առաքեալ եւ ։ մեր ամենքս Աստուծոյ կը կոչուինք , որդեդրութեամբ՝ շնորհօք եւս ։ (Եփես. Ա։ 4—17։) Որդիք Աստուծոյ կը կոչուինք այնուհետեւ լիզուաց մէջ բոլոր քրիստոնէական աստուածաբանութեան Հիմ մէջ Աստուծոյ փոխանորդ ընելը և երեսփոխանելը կը սեպուէին , իրրեւ պատկերը կրող և իւր իշխանութիւնն ընդունած ։ (Սոլ. Ձ։ 27։ ՁԱ։ 1։) Ադամ ալ ըստ որում անմիջապէս Աստուծոյ ձեռքէ ստեղծուած՝ Որդի Աստուծոյ ըսուած է ։ (Ղուկ. Գ։ 38։)

Հանդանակին մէջ « (Հաւատամք) եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ Որդին Աստուծոյ » կ՚ըսեմք նէ՝ հոս Որէ Աստուածոյ անունը առանձին նշանակութեամբ առնուած է , այ՝ բնութեան Որդի Հանդերձակից Հօր նշանակութեան ։ և որպէս պէտ առաջ կամ ուրեք նշանակութեան չառնուի , Տէր բառէն զատ՝ որ Յիսուս Քրիստոսի վրայ դրուած է , « և ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս» ըսելով , կ՚ուզեմք նախ ածնեալն Աստուծոյ Հօրէ մեծին , այ Հետեւեալ Հօրէ » , որ է ըսել՝ բնութեան Որդի ծնած է , և միւկ հատիկ ծնած է , իրեն նման ուրիշ որդի ծնած չկայ՝ իրմէ յառաջ կամ յետոյ ։

Հանդանակը մեզ կը ներկայացնէ Որդւոյ գործը իրրեւ Աստուած և Որդի Աստուծոյ՝ բնութեանն , ընդդէմ այն պղծանաւորներուն՝ որք զՈրդին Աստուծոյ կրտեր Հաւնորեցին քան զՀայր՝ և արարած . և ընդդէմ նոցին նզովք կը կարդէ յասելն « Եսկ որք պնեն է՛ր երբեմն՝ յորժամ ո՛չ էր Որդին , կամ է՛ր երբեմն յորժամ ո՛չ էր Ս. Հոգին . կամ թէ՝ յոչնչէ եղեն , կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զՍ. Հոգին , և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք՝ զայնպիսիսն նզովէ Սուրբ Առաքելական Ս. Եկեղեցի » ։

Ինկիսկան Հայր՝ որք Հանդանակիցն այս գաւանութեան Հաւատոյ մնասունքը , ուրիշ բան չըլլին , քայց եթէ այն պղծանաւորներուն դէմ Ս. Գրոց բացայայտ պատգամներն յառաջ բերին և իրաւ մեկնեցուցին , և այնպէս մեզ նեպիտիք կը Հաս-

տառեցք Որդւոյ Աստուծոյ Աստուածութիւնը իւրեւ
մի անձն Երրորդութեան։

Ս. Գիրքը կ'ուսուցանէ մեզ որ

Ա. Որդւոյ՝ Աստուածային անուն, Աստուծոյ
յատուկ գործք, և Աստուծոյ անհաղորդական առ-
րոգելիք կ'ընծայուին։

Բ. Որդւոյ՝ Աստուածային պաշտօն և երկրպա-
գութիւն կ'ընծայուի։

Գ. Որովհետև իրեն ընծայուած Աստուածային
անունն՝ առրոգելիքն ու պաշտօնը չվերժիլը, այլ կը
հաստատէ։

ՀԱՏՈՒԱԾ Ա.

Որդւոյ՝ Աստուածային անուն, Աստուծոյ յատուկ գործ
և Աստուծոյ անհաղորդական առրոգելիք կ'ընծայուին

Ա. Շատ հանրներէ կան Հին և Նոր Կտակա-
րանայ մէջ, յորս յոյժ բացայայտ ելանելու Աս-
տուածային անուն կ'ընծայուի Որդւոյ, ինչպէս են
հետեւեալներէն. «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր
առ Աստուած, և Աստուած էր Բանն»։ (Յովհ. Ա. 1)
«Զայն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք
ճանապարհ Տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս Աս-
տուծոյ մերոյ»։ (Եսայ. Խ. 3։ Մատթ. Գ. 3։ եւն։)
«Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ, և տեսցէ զճանա-
պարհս առաջի իմ. և յանկարծակի եկեսցէ Ի տա-
ճար իւր Տէր՝ զոր դուքն խնդրէք»։ (Մաղաք. Գ. 1)
«Զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ
իշխանութիւն իւր Ի վերայ ուսոյ իւրոյ. և անուն
կոչեցաւ նմա հրեշտակ մեծի խորհրդոյ, սքանչելի
խորհրդակից, Աստուած հզօր, Իշխան խաղաղութեան՝
Հայր հանդերձեալ ազգացն»։ (Եսայ. Թ. 6) «Իսկ յՈՒր-

դին ասէ. Աթոռ քո Աստուած յաւիտեան յաւի-
տենից. գաւազան ուղղութեան, գաւազան արք-
քայութեան քոյ. սիրեցեր զարդարութիւն և ատե-
ցեր զանօրէնութիւն, վասն այսորիկ հաճ զքեզ Աս-
տուած՝ Աստուած քո իւղով ուրախութեան՝ առաւել
քան զընկերս քո։ (Աւետ. Խ. 7։ Եբր. Ա. 8։) —
Զարարիա ալ այս ամենուն վրայ՝ կ'անուանէ զինքը՝
Աստուծոյ ընկեր ևրդ։ «Զարմի'ր տալ 'ի վերայ Հո-
վուի իմոյ՝ և 'ի վերայ առն ընկերի իմոյ՝ ասէ Տէր Ա-
ստուածական։ Հարիր զՀովիւն և ցրուեսցին խաշինքն»։
(Զաք. ԺԳ. 7։)

Նոր Կտակարանի մէջ անհամար վկայութիւններ
կան առ այս։ (Հռով. ժ. 13։ Ա. Կորնթ. ժ. 9։ Կող. Բ.
9։ Ա. Տիմ. Գ. 16։ Տիտ. Բ. 13։ Եբր. Ա. 8։ Ա. Պետ.
Ա. 1։ Յայտ. Ի.Գ. 5—7։ եւն եւն եւն։)

Բ. Ս. Գիրոց մէջ Որդւոյ անանկ գործքեր կ'ընծայուին, որ Աստուծոյ՝ Աստուածային կատարելութեան յատուկ է, և զորս արարած ոչ կրնայ ընել, բայց եթէ անկարելի ըլլալով. ինչպէս է

Աշխարհաստեղծութիւն։ «Աստուած էր Բանն. Նա էր
'ի սկզբանէ առ Աստուած. ամենայն ինչ նովաւ
եղեւ, և առանց նորա եղեւ և ոչինչ՝ որ ինչ եղե-
եալն. . . . Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղեւ,
և աշխարհ զնա ոչ ծանեաւ»։ (Յովհ. Ա. 1—3. 10։)
«Զի ՚ի նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկ-
կինս՝ և որ ինչ յերկիր, զոր երեւին, և զոր ոչն
երեւին. եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ
պետութիւնք, եթէ իշխանութիւնք. ամենայն ինչ
նովաւ՝ և ՚ի նոյն հաստատեցաւ. և նա է յաւուրս
քան զամենայն, և ամենայն ինչ նովաւ եկաց յա-
վիտեանս»։ (Կող. Ա. 16—17։) «Պարսաւեցաւ Տէրտն
մի եղեւ երկիր, և Բանիւ Տեառն երկինք հաստա-
տեցան, և Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրու-
թիւնք նորա»։ (Աղաղ. ԼԳ. 6։) «Ի վաղճան աւուրցս

պատճիկ խօսեցաւ (Աստուած) ընդ մեզ Որդւովն, զոր եղ ժառանգ ամենայնի, որով և ստեղծանս արար»։ (ԵԲր. Ա. 2։) — Ս. Գրոց այս խօսքերուն կրկնութիւնն է պրեծէ բաւ առ բաւ չարտհիւանուած Հանդանակին մէջ. «Ոյն ինքն ի բնութենէ Հօր, Որով ամենայն ինչ եղեւ յերկինս և ի վերայ երկրի, երեւելիք և աներեւոյթք»։

Կեանք տալ. »Ոմանք կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան. . . . Զի հաց Աստուծոյ է, որ իջանէն յերկնից՝ և կեանս տայ աշխարհի. . . . Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զնոսա, և զկնի իմ գան, և ես տամ նոցա զկեանս յաւիտենական. . . . Ես իմ եմ յարութիւն և կեանք . . . Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք . . . » (Յհ. Ա. 10։ Զ. 33։ Ժ. 27։ ԺԱ. 25։ ԺԴ. 6։)

Մեռեալներ յարուցանել. «Զի՛ արդեօք Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և Որդի՝ զորս կամի կենդանի առնէ. . . . Ամենայն որ լսեսցէ զՈրդւոյ և հաւատացէ ՚ի նա, ընկալցի զկեանս յաւիտենական. և ես յարուցից զնա յաւուրն յետնում. . . . Ոչ որ կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա. և ես յարուցից զնա յաւուրն յետնում. . . . Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենական. և ես յարուցից զնա յաւուրն յետնում»։ (Յհ. Ե. 21։ Զ. 40. 44. 53։)

Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն, ծիլ-բուսիկ, հաւատք, յոյս, ջուր, խոստովանիլ պտ. «Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն Աստուծոյ Հօրէ մերմէ, և ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ»։ (Հռ. Ա. 7։ ԺԶ. 20—24 տես։) «Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն Աստուծոյ Հօրէ՝ և ՚ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ»։ (Ա. Տիմ. Ա. 2։ Բ. Տիմ. Ա. 2։ Տիտ. Ա. 4։) Ոմանք այսուհետեւ Քահանապետին մեծ՝ անցեալ ընդ երկինս, զՅիսուս Որդի Աստուծոյ . . . Մատիցուք այսուհետեւ համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհացն նորա, յիւ ընկալցուք զողորմութիւն, և գտցուք շնորհս ՚ի պէտ ժամանակի՝ օգնականութեան»։ (ԵԲր. Դ. 14. 16։) «Ա.Տ. ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս, և Աստուած Հայր մեր, որ սիրեցաւ զմեզ՝ ևետ մեզ մխիթարութիւն յաւիտենից՝ և յոյս բարեաց շնորհօք, մխիթարեսցէ սիրտս ձեր, և հաստատեսցէ յամենայն բան և ՚ի գործս բարութեան»։ (Բ. Թես. Բ. 15—16։) «Ես սպասէի բերան և խնամութիւն, որում ո՛չ կարծիցեն կալ հակառակ կամ ասել զնամանի ամենայն հակառակորդք ձեր»։ (Ղ—ի. ԻԱ. 15։) «Եւ առեն Աստուածքն ցՏէր. յաւել մեզ հաւատս»։ (ԺԷ. 5։) «Բանիլ հաստատուն օր, յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ, ՚ի ձեռն առնն՝ որով սահմանեալ ասլ հաւատն ամենեցուն՝ յարուցեալ զնա ՚ի մեռելոց»։ (Գործ. ԺԷ. 31։) «Որդին Աստուծոյ եկն, ևետ մեզ միտս, զի ծանիցուք զՃշմարիտն»։ (Ա. Յհ. Ե. 20։)

Աչքերուն փոխել. «Եւ ո՛չ եթէ Հայր զատէ զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ. . . . Եւ իշխանութիւն ետ նմա և դատաստան առնել. . . . Ո՛չ կարեմ ես յանձին առնել՝ և ոչինչ, այլ որպէս լսեմ՝ դատիմ, և դատաստանն իմ արդար է»։ (Յհ. Ե. 22—30։) «Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրով՝ և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց. և ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք, և մեկնեսցէ զնոսա ՚ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնէ զոչխս յայծեաց, և կացուսցէ զոչխարն ՚ի ձախ»։ (Մտթ. ԻԵ. 31—46։) Զսոյն զայս կը դաւանինք և ՚ի Նիկիական Հաւատոյն. «Գալոց է նովին մարմնաւորեալ և փառաւոր Հօր՝ դատել զկենդանիս և զմեռեալս»։

Գ· Ս· Գիրք Աստուծոյ անհաղորդական ստորոգելիքները Որդւոյ կ'ընծայէ · ինչպէս են՝

Յովհաննէսեան · «Եւ դու ինձ տուն Եփրաթայ սակաւաւոր՝ իցես լինել ի հազարաւորս ըստ Յուդայ · ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի , և ելք նորա ի սկզբանէ աստուց աշխարհի » : (Միք· Ե· 2:) «Տէր ստացաւ զիս ի սկիզբն ճանապարհաց իւրոց ի գործս իւր · յառաջ քան զյաւիտեանս հաստատեաց զիս » : (Առակ · Ը· 22—23 եւ :) Հաւատացէք մէջ այս ալ կը գտանենք · «Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան · · · : Իսկ ոչք ասեն էր երկնի՝ յորժամ՝ ոչ էր Որդին · · · զայնպիսին նզովէ կաթուղիկէ և Առաքելական Ս· Եկեղեցի » :

Ընտհանրական · «Զոր Աստուած յարոյց՝ լուծեալ զերկունս մահու · քանզի ոչ էր հնար ընկալեալ նմա ի նմանէ » : (Գործ · Բ· 24:) «Որ միայն ունի անմահութիւն բնակեալ ի լոյս անմատոյց» : (Ա· Տիմ· Զ· 16 :)

Անհամանչէսեան , ահննելեան · «Ո՛չ ոք ճանաչէ զՈրդի , եթէ ոչ Հայր · և ոչ զՀայր ոք ճանաչէ , եթէ ոչ Որդի · և ում կամիցի Որդին յայտնել » : (Մատթ· ԺԱ· 27:) «Ինձ , որ արտաքս եմ ամենայն սրբոց՝ տուան չնորհս այսոքիկ ի հեթանոս ուեւտրանալ զանքննին մեծութիւնն Քրիստոսի» : (Եփես · Գ· 8:)

Անէոփեոսեան · «Ցիտուս Քրիստոս՝ երէկ և այսօր , նոյն և յաւիտեան» : (Եբր· ԺԳ· 8 : Բաղդատե ընդ Մատթ · Գ· 6: Եբր· Ա· 12:) «Ես եմ Ալփա և Ովմ· Որ էն , և Որ է՛ և Որ գալոցն է Տէր Ամենակալ » : (Յայտ· Ա· 8:)

Անգիականոսեան · «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի» : (Մատթ· ԻԸ· 18:) «Ակն ունիմք Տեառն Յիսուսի Քրիստոսի , որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ՝ կերպարանակից լինել մարմնոյ փառաց իւրոց , ըստ գործութեանն՝ առ ի կարող լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրեւ զամենայն » : (Փիլիպ· Գ· 20—21:) «(Ցառաս Քրիստոս) միայն հզօր , թագաւոր թագաւորաց , և Տէր տերանց » : (Ա· Տիմ· Զ· 15:) «Եթէ ըզվարձ ինչ խնդրէք զՔրիստոսի , որ ինեւս ընդ ձեզ խօսի · որ հզօրացեալն է ի ձեզ , և ո՛չ տկարացեալ · զի թէպէտ և խաչեցաւ ի մերմէ տկարութենէ , այլ կենդանի է զօրութեամբն Աստուծոյ » : (Բ· Կորնթ· ԺԳ· 3—4:)

Անդրէասեան · «Ուր լցեն երկուս և երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա · » (Մատթ· ԺԸ· 20:) «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի» · (ԻԸ· 20:) «Եւ ո՛չ զք յերկինս ել, եթէ ո՛չ՝ որ էջն յերկինից Որդին մարդոյ՝ որ էն յերկինս » : (Յովհ· Գ· 13:)

Անդրէասեան · «Այժմ գիտեմք՝ եթէ գիտես զամենայն » : (Յովհ· ԺԶ· 30:) «Տէ՛ր , գու զամենայն գիտես , և գու իսկ զամենայն ճանաչես» : (ԻԱ· 17:)

Արտքէոսեան · «Եւ ծանիցեն ամենայն եկեղեցիք՝ եթէ ես եմ, որ յանդիմանեմ զերիկամունս և զսիրտս » : (Յայտ· Բ· 23, եւս, եւս, եւս:)

ՀԱՏՈՒԱԾ Բ·

Ա·ստուածային պաշտօն և եկեղեցական կ'ընծայուած Որդւոյ Աստուծոյ

Ս· Գրքին մէջ անանկ կրօնական պատիւ և պաշտամունք ընծայուած կը տեսնենք Որդւոյ Աստուծոյ , որ յաստուկ է միոյն Աստուծոյ ընծայիլ· և ամբարշտութիւն՝ կռապաշտութիւն է արարածի ուղիք այնպիսի նուէրներ ընել : Ինչպէս է ,

Հաւատք, կամ Հաւատալ· «Որ հաւատայ յՈրդի ընդունի զկեանս յաւիտենականս ... : Որ հաւատայ չիս, ո՛չ երբէք ծարաւեսցի : ... Զի թէ ո՛չ հաւատայցէք թէ ես եմ, մեռանիցիք ՚ի մեղս ձեր : Որ հաւատայ չիս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ, և ամենայն որ կենդանի է՝ և հաւատայ չիս, մի՛ մեռցի ՚ի յաւիտեան : ... Դու հաւատա՞ս Որդին Աստուծոյ ... » եւն (Յ-ՂՀ· Գ· 36: Ե· 15: Զ· 35: Ը· 24· ԺԷ· 37: ԺԱ· 25: ԺԳ· 1:) «Զայս գիտեմք՝ եթէ ո՛չ արդարանայ մարդ ՚ի գործոց օրինաց, եթէ ո՛չ՝ ՚ի հաւատոցն Յիսուսի Քրիստոսի »: (Գ-Ը Ը· 16:)

Եւհղոքիան· «Այլ յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ· երկիրպագցեն նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ »: (ԵԲր· Ա· 6:) «Աստուած զնա առաւել բարձրացոյց և շնորհեաց նմա անուն՝ որ ՚ի վեր է քան զամենայն անուն· զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկին նեսցի, երկնաւորաց և երկրաւորաց, և ստնդարամեռեալոց, և ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս ՚ի փառս Աստուծոյ Հօր »: (Փիլիպ· Բ· 9—11:)

Պաշտպան ապրուստ ընկերակից եւն· Եթէ ոք զիս պաշտեսցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ : (Յ-ՂՀ· ԺԲ· 26:) «Այսպէս հաւատացին զմեզ մարդիկ, իբրեւ զպաշտօնեայս Քրիստոսի »: (Ա· Կր· Գ· 1:) «Մկրտեցէք զնոսա յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ »: (Մտթ· ԻԸ· 18:) «Եթէ սիրէք զիս՝ պահեցէք՝ և ես· քանզի և ե՛ս եթէ չնորհիցեմ, զոր ինչ չնորհեցեմն՝ վասն ձեր ՚ի դէմս Քրիստոսի ... : Զի հոտ անուշ եմք Քրիստոսի»: (Ա· Կր· Բ· 10—15:) «Ընկեղեցւոյդ Աստուծոյ որ է ՚ի Կորնթոս, ... ՚ի Քրիստոս Յիսուս ... » : (Ա· Կր· Ա· 2:) «Եւ զամենայն զոր և առնիցէք բանիւք և արդեամբք, զամենայն յանուն Տեառն Յիսուսի արասջիք ... » : (ԿՂ Գ· 17:)

Աղաւ- ողջել· « (Մոեփանոս) կարդայր և աստէր· Տէ՛ր Յիսուս՝ ընկալ զոգի իմ, եղ ծունր, և աղաղակեաց ՚ի ձայն բարձր· Տէ՛ր, մի՛ համարիր զոգա զայս մեղս »: (Գործ· է· 59: Տե՛ս և եէ՛ե· Զ· 23: Բ· Կր-նր· ԺԳ· 13: Հռով· ԺԶ· 24—27:) « Յիշեա՛ զիս Տէ՛ր՝ յորժամ գայցես արքայութեանդ քով »: (Ղ-ի· ԻԳ· 42:)

Աղերս լսել և դիմդրոաժս կատարել· « Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ: Զի եթէ գիտեմք՝ եթէ լսէ հայցուածոցն մերոց, ապա գիտեմք՝ եթէ առնուք զհայցուածսն՝ զոր հայցեմք առ ՚ի նմանէ »: (Ա· Ցո-ՂՀ· Ե· 14—15:)

Մաղթանք և օրհնութիւնք յանուն նորա· «Այլ ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս, և Աստուած Հայր մեր, որ սիրեացն զմեզ՝ և ետ մեզ մխիթարութիւն յաւիտենից՝ և յոյս բարեաց չնորհօք, մխիթարեսցէ՛ զսիրտս ձեր և հաստատեսցէ յամենայն բան և ՚ի գործս բարութեան»: (Բ· Թես· Բ· 15—16:) « Այլ ինքն Աստուած և Հայր մեր՝ և Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ուղղեսցէ զճանապարհս մեր առ ձեզ ... : » (Ա· Թես· Գ· 11:) «Չնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւս: (յոհնեայն Ղուկաս Աստեղոյ)

Փառաբանութիւն· « Եւ այնմ որ կարող է հաստատել զձեզ անսայթաք և ամբիծս, հաստատեալ առաջի իւրոյ փառաց անբիծ ցնծութեամբ, միոյն Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ՝ փառք, մեծութիւն, զօրութիւն իշխանութիւն՝ յառաջ քան զամենայն յաւիտեանս, և այժմ և յամենայն յաւիտեանս· ամէն »: (Յ-Ք· 24—25:)

ՀԱՏՈՒԱԾ Գ։

*Որբին էրեն ընձայուած Աստուածային անունն, որ-
բութենէն ու պաշտօնը ընդունիլը, այլ կը հաստատէ*

Մինչեւ հիմայ մէջ բերուած վկայութիւններէն տեսանք, որ Ս. Գիրքը Քրիստոսի Յիսուսի Աստուածային անուն, Աստուծոյ յատուկ անհաղորդական սուրբ էնլիք և միւս միայնոյ Աստուծոյ Արարչի ընծայելի նուէրներ և պաշտօններ ընծայուած ըլլալը կը հաստատեն։ Կան շատ մը հանգամներ ալ յորս քալ կը տեսնուի, թէ ինքն իսկ Յիսուս Քրիստոս նոր տըն-տեսութեան մէջ՝ երբ սատնկ Աստուածային ընծայներ կ'ընծայուէին իրեն, ո՛չ միայն չէր մերժէր, այլ և կ'ընդունէր։ և ո՛չ միայն կ'ընդունէր, այլ նաեւ կը պահանջէր իրեն հարկաւոր միջոց փըրկութեան։ և կը հաստատէր թէ անոնց այս նուէրը ո՛չ միայն արժան և վայելուչ էր, այլ միանգամայն և հարկաւոր։ Ինչպէս, երբ Պետրոս կինքը Ոդէ Աստուծոյ կենդանւոյ դաւանեցաւ, (Մտթ. ԺԶ. 16—17.) երբ Թովմաս անոր վէրքերը շօշափելով գոչեց. «Տէ՛ր իմ և Աստուած իմ»։ (Ց-Ղ. Ի. 28.) երբ Աստքեալները և անոնց հետ մէկտեղ Գեննեսարէթի նաւարկող ընկերներին եկան «երկրպագին նմա և ասեն, արդարեւ Որդի Աստուծոյ ես դու»։ (Մտթ. ԺԴ. 33.) երբ ուրիշ շատ պարագայներու մէջ՝ շատեր երկրպագութիւն կ'ընէին իրեն՝ կ'ընդունէր։ (Մտթ. ԻԸ. 9—17։ Ղ-ի. ԻԴ 52 եւ։) և երբ Հըրէայք իրեն ըսին՝ «Դու մարդ ես և դանձն քո Աստուած առնես», Յիսուս չըսաւ թէ դուք վըրպարտութիւն կ'ընէք, այլ ընդունեց որ պրուցածնին ճշմարիտ էր, և հաստատելու ապացուցանելու

համար անոնց իւր Աստուածութիւնը՝ պատճառաբանելով ապացոյցներ ու վկայութիւններ բերաւ ու ըսաւ. «Ո՞չ յօրէնս ձեր գրեալ է. ես ասացի թէ աստուածք իցէք. իսկ եթէ զնոսա աստուածս ասէ, առ որս բանն Աստուծոյ եղեւ, և չէ՛ մարթ եղծանիլ գրոյն. իսկ զոր Հայր սրբեաց և առաքեաց յաշխարհ, դուք ասէք թէ հայհոյես, զի ասացի թէ Որդի Աստուծոյ եմ։ եթէ ո՛չ գործեմ զգործս Հօր իմոյ, մի՛ հաւատայք ինձ. ապա թէ գործեմ, թէ և ինձ ո՛չ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք. զի գիտասջիք և ծանիջիք, եթէ Հայր յիս է, և ես ՚ի Հայր։։։ Եւ բազումք հաւատացին ՚ի նա անդ»։ (Ց-Ղ. ժ. 32—42.) Քահանայապետն ալ երբ որ պինքը երդուընցընելով ըսաւ. «երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, զի ասասցես մեզ՝ թէ դո՞ւ ես Քրիստոսն Որդի Աստուծոյ», Քրիստոս ո՛չ միայն չէ ջրսաւ, այլ հաստատեց ալ միանգամայն՝ ըսելով. «Դու ասացեր. բայց ասեմ ձեզ, յայսմհետէ տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեանն՝ և եկեալ ընդ ամպս երկնից»։ (Մտթ. ԻՁ. 63—64։) Իւր աշակերտներուն ալ երբ որ պէտք եղաւ՝ ըսաւ. «Դուք կոչէք զիս վարդապետ և Տէր, և բարւոք առնէք, քանզի եմ իսկ։ Իսկ արդ եթէ ես լուացի զոտս ձեր՝ Տէրն և վարդապետս ևս»։ (Ց-Ղ. ԺԳ. 13—14.)

Ա՛սկից զատ՝ կը պահանջէր ալ ըսինք Յիսուս՝ որ հաւատան իրեն իբրեւ Աստուծոյ և Որդւոյ Աստուծոյ, ինչպէս որ ըսաւ ՚ի ծնէ կուրին. «Դու հաւատա՞ս Որդին Աստուծոյ. Նա պատասխանի ետս և ասէ. Տէ՛ր, ո՞վ է, զի հաւատացից ՚ի Նա։ Ասէ ցնա Յիսուս. Եւ տեսեր զնա, և որ խօսիդ ընդ քեզ՝ Նա է։ Եւ նա ասէ. հաւատամ Տէ՛ր, և երկրպագ նմա»։ (Ց-Ղ. Թ. 35—38։) Յիսուս Քրիս-

աոա իւր վերջին կտակին մէջ կը դո-հ-ՆԷ զայս՝ որ գինքը Աստուած ճանչնալէ, հաւատալէ իրեն. և աղօթք ուղղելէ. միանգամայն խոստանալով որ մեր աղօթքներուն լսէ և խնդրուածքնիս կատարէ. «Ա՛յս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ (Հա՛յր) միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս . . . : Մի՛ խռովեսցին սիրտք ձեր, այլ հաւատացէ՛ք յԱստուած, և յիս հաւատացէք . . . : Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարից զայն, զի փառաւորեսցի Հայր յՈրդի . . . : Եթէ կայցէք յիս, և բանքն իմ՝ ի ձեզ կայցեն, զոր ինչ կամիցիք խնդրեսջիք՝ և լինիցի ձեզ . . . : Մինչեւ ցայժմ ոչինչ խնդրեցէք յանուն իմ. խընդրեցէ՛ք և առնուցուք, զի ուրախութիւնն ձեր լցեալ եղիցի . . . : Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ. և ո՛չ ասեմ ձեզ՝ եթէ ես հարցից զՀայր վասն ձեր, զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ, զի դուք զիս սիրեցիք, և հաւատացէք եթէ ես յԱստուծոյ ելի» (Յ-ՀՓ. ԺԴ. 3. ԺԶ. 1. 13. ԺԹ. 7. ԺԶ. 24. 26.)

Այս ամեն բաներնիս առաւելապէս կը տեսնուի հետեւեալ հատուածներուն մէջ: «Կայ իսկ ի դրի, եթէ ահաւասիկ դնեմ ի Սիոն վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական, և որ ի նա հաւատ ածէ մի՛ ամաչեսցէ» : (Ա. Պետ. Բ. 6:) «Այս է պատուէրն նորա, զի հաւատասցուք յանուն Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի» : (Ա. Յովհ. Գ. 13:) «Զայն խորհեցի իւրաքանչիւր որ ի մէնջ, որ և ի Քրիստոս Յիսուս. որ ի կերպարան Աստուծոյ է, ոչինչ յափշտակութիւն հատարեցաւ զկինն հաւասար Աստուծոյ. այլ զանձն ունայնացոյց զկերպարանս ծառայի առեալ՝ ի նմանութիւն մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրեւ զմարդ. խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չարի, և մահու խաչի, վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց.

և չնորհեաց նմանն անուն որ ի վեր է քան զամենայն անուն. զի . . . Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր» : (Փիլիպ. Բ. 5—11:) «Եւ չէ այլով է-է+ էզի-ՐԷ-Ն. զի և ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժան իցէ կեալ մեզ» : (Գործ. Դ. 12:)

«Այլ այս՝ այնչափ ինչ գրեցաւ, զի հաւատայցէք եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ, և զի հաւատալովքդ կեանս յաւիտենականս ընդունիցիք յանուն նորա» : (Յ-Ո. Ի. 31:)

ԳՕԴՈՒԱԾ Բ.

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ Աստուածորդւոյն

Յիսուսի Քրիստոսի Տնօրէնութեանց վրայ խօսելու համար մէջ պիտի բերուի՛ք,

Ա. Յիսուսի Քրիստոսի համար եղած կանխագուշակ մարգարէութիւնները.

Բ. Մարգեղութիւն Աստուածորդւոյն, և

Գ. Անոր տնօրէնութիւնները:

ՀԱՏՈՒԱԾ Ա:

Յիսուսի Քրիստոսի համար եղած կանխագուշակ մարգարէութիւնները՝ իրենց կատարումը հետ միասին

Յիսուս Քրիստոս պիտի ձնունդէ կինոջ ծնեալ. «Եւ եդից թշնամութիւն ի մէջ քո և ի մէջ կնոջդ, և ի մէջ զաւակի քոյ և ի մէջ զաւակի նորա. նա ընդհատեսցէ քում գլխոյ, և դու ընդհատեսցես նորա գարշապարիւ» : (Ծննդ. Գ. 15:)—Կոպտութեամբ. «Այլ իր-

բեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր՝ որ եղեւ ի կնոջէ» : (Գաղ. Գ. 4:)

Աբրահամ ցնծէր. «եւ հաստատեցից զուխտ իմ ընդ իս և ընդ քեզ, և ի մէջ զաւակի քո յետ քո յազգս իւրեանց յուխտ յաւիտենական.... եւ օրհնեցին ի զաւակի քում ամենայն ազգք երկրի» : (Ծննդ. ԺԷ. 7: ԻԸ. 18:) —Կոչումն. «իսկ Աբրահամու խոստացան աւետիքն, և զաւակի նորա, և ո՛չ ասէ զաւակաց՝ իբրեւ բազմաց, այլ իբրեւ զմիոյ, թէ՝ և զաւակի քում, որ է Քրիստոս : » (Գաղ. Գ. 16:)

Իսահակն աղաղակէր, և ո՛չ լսէին. «Սահակա կոչեցի քեզ զաւակ.... : Ահա իսմայէլի ահա լուայ քեզ, և օրհնեցից զնա, և աճեցուցից զնա և բազմացուցից զնա յոյժ. երկոտասան ազգ ծնցի, և տաց զնա յազգ մեծ. բայց զուխտ իմ հաստատեցից ընդ Սահակայ, զոր ծնցի քեզ Սարրա» : (Ծննդ. ԻԷ. 12: ԺԷ. 20. 21:) —Կոչ. «Աբրահամ ծնաւ զԻսահակ, Իսահակ ծնաւ զՅակոբ.... յորմէ ծնաւ Յիսուս» : (Մատթ. Ա. 2. 16:)

Յոհաննէս ազգէն. «Մի՛ պակասեցէք իմաստութեան Յուդայ, և մի՛ պետ յերանաց նորա, մինչեւ եկեսցէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց» : (Ծննդ. ԽԹ. 10:) —Կոչ. «Յուդայ ծնաւ զՓարէս.... յորմէ ծնաւ Յիսուս» : (Մատթ. Ա. 3. 16:)

Յեսուէ ծոռնէղէն. «Եւ բղխեցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ, և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի : Եւ հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ.... : Եւ եղիցի յաւուր յայնմիկ արմատն Յեսսեայ, և որ կանգնելոցն է՝ իշխան հեթանոսաց : » (Եսայ. ԺԱ. 1—19:) —Կոչ. «Քրիստոսի սպասաւոր թլփատութեանն լինել՝ վասն ճշմարտութեան Աստուծոյ էր, առ ի հաստատուն առնելոյ զաւետիս հարցն.... (զորմէ) ետայր ասէ. Եղիցի արմատն Յեսսեայ,

և որ կանգնելոցն է իշխան հեթանոսաց, ի նա հեթանոսք յուսացին» : (Հռովմ. ԺԵ. 8. 12:)

Դաւիթ ըսաւն. «Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ և ո՛չ ստեսցէ նմա, ի պտղոյ որովայնի քումմէ նստուցից յաթոռ քո» : (Սաղմ. ՃԼԱ. 11:) «Եւ յարուցից Դաւթի ծագումն արդարութեան, և թագաւորեսցէ թագաւոր, և ի միտ առցէ, և արասցէ արդարութիւն և իրաւունս ի վերայ երկրի» : (Երեմ. ԻԳ. 5:) —Կոչ. «Ի տոհմ զաւակէ Աստուած ըստ աւետեացն յարոյց Իսրայէլի փրկիչն Յիսուս» : Գործ. ԺԳ. 23:) «Յառաջ խոստացաւ (Աստուած) ի ձեռն մարգարէից իւրոց Գրովք սրբովք, վասն Որդւոյ իւրոյ, եղելոյ ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ» : (Հռ. Ա. 2—3.)

Որչափ ժամանակէ մը ետք, ու Յոհաննէս ըսէր նոր ինքնութիւնը բնորոշելով : «Մի՛ պակասեցէք իշխանի (ըստ երբ. իշխանութիւն) Յուդայ, և մի՛ պետ յերանաց նորա, մինչեւ եկեսցէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն» : (Ծննդ. ԽԹ. 10:) —Կոչ. «Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհեմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յարեւելից եկին Երուսաղէմ և ասեն. Ո՞ւր է՝ որ ծնաւ արքայն Հրէից» : (Մատթ. Բ. 1—2:) Յուդայի ցեղի Մակաբեանց ճիւղին վերջինը այն ինչ դադրեր էր ապրելէ, և առաջին օտարազգի իշխանն էր Եդոմացին Հերովդէս՝ որ ընդ իշխանութեամբ Հռովմայեցւոց կը տիրէր Հրէաստանի, ծնաւ փրկիչն աշխարհի :

Տաճարի շինութիւնն հոծ պրոտած հրվաքարէն մը ժամանակին ծղնտասուն ծղնեբորդ ամոց (ա ըրբ հազար տարի) եղէր : «Դանիէլ՝ այժմ եկի խնդամուտ առնել զքեզ.... ի մի՛ առ զտեսիլդ : Եօթանասուն եօթներորդք հատաւօտեցան ի վերայ ժողովրդեան քոյ և ի վերայ քաղաքին սրբոյ.... : Եւ գիտաս-

ցեա և խելամուտ լինիս յելից բանին տալ պատաս-
խանի · (կամ ըստ երր · եթ ջէրուսղէմ և խելամուտ լի-
ցիս , չէ սելնց հրամանին ընդունելութեան միջև 30ա-
ւուրն են) և ի լինելն երուսաղէմի մինչեւ 30ական
առաջնորդ եօթներորդք եօթն , և եօթներորդ
վաթսուն և երկու ... եօթներորդ մի և կէս եօթ-
ներորդի , բարձցին զոհք և նուէրք են »: (Դան· թ·
25—27:)—կոփ· եօթանասուն եօթնեակք տարինե-
րու եօթանասուն չաբաթներ նշանակելով , տաճա-
րի վերաշինութեան համար արուելիք հրամանագ-
րին ժամանակէն հաշուելով չորս հարիւր ինսնսուն
տարի պիտի էր Մեսիայի գալուն՝ զոհուելուն են:
Իրօք ալ այնչափ ատեն անցաւ երկայնաբազուկ
Արտաշիսի Բ· ի հրամանէն , որ տաճարը նորոգելու
համար չնորհեց Էզրէից , մինչեւ Քրիստոսի յայտարա-
գալուստը և տնօրինութեանց կատարումը : Արտա-
չէս իւր գահակալութեան քսաներորդ առաջներորդ
տարին տուաւ այս հրամանը , ըստ հասարակ թը-
ւականին՝ 455 տարին (նախ· Ք·) և Հռովմայ չինու-
թեան 299 տարին , ուսկից մինչեւ Տիբերիոս կայ-
սեր հնգետասաներորդ տարին , (ու Հռովմի չինու-
թեան 782 թուականը ,) որ ատեն եղաւ Քրիստո-
սի հրապարակաւ գալուստն ու յայտնութիւնը ·
(Ղուկ· Գ·) և մինչեւ այն ատեն արդէն անցեր էին
վաթսուն և լինն եօթներորդներ , (ու չորս հարիւր
ութսուն երեք տարիներ ,) և եօթանասներորդ եօթ-
ներորդին կէսին՝ ու իւր երեք ու կէս տարիէն ետ-
քը Օծեալը պիտի զենուր :

Ի Հբէոպոն՝ Յոպպէի Բեղեզկիա՛ եպսկոպոսը պիտի ձնանէր:
«Եւ դու Բեթղեհէմ տուն Եփրաթայ սակաւաւոր՝
իցես լինել ի հազարաւորս Յուդայ · ի քէն ելցէ
ինձ լինել իշխան Իսրայէլի , և ելք նորա ի սկզբանէ
աւուրց աշխարհի» · (Միա· ե· 2:) — կոփ· «Եւ և
Յովսէփ ի Գալիլէ ի քաղաքէ Նազարէթէ ի Հրէ-

աստան , ի քաղաքն Դաւթի , որ կոչի Բեթղեհէմ ,
վասն լինելոյ նորա ի տանէ և յազգէ Դաւթի ,
մտանել յաշխարհագիր Մարեամայ հանդերձ զոր
խօսեալն էր նմա , և էր յղի : եւ եղեւ ի հասա-
նելն նոցա անդր , լցան աւուրք ծննանելոյ նորա ,
և ծնաւ զորդին իւր զանդրանիկ · · · : եւ իբրեւ
լցան աւուրք ութ թլփատել զնա , և կոչեցաւ անուն
նորա Յիսուս» · (Ղուկ· Բ· 4—7· 21: Տե՛ս և Մատ·
Բ· 1:)

Կոյս աղջիկ մը պիտի ձնանէր , և էմմանուէլ պիտի
կոչուէր · «Վասն այդորիկ տացէ ձեզ Տէր ինքնին
նշան · ահա կոյսն յղասցի՝ և ծնցի որդի , և կո-
չեսցեն զանուն նորա Էմմանուէլ» : (Եսայ· է· 14:)
Այս խօսքիս եբրայական բնագրին մէջ գործածա-
ւած աղջիկ նշանակող «ալմա բառը՝ Հին կտակա-
րանի մէջ եօթն տեղ գործածուած է · (Ծննդ· իդ·
43: եբ· Բ· 8: Սաղմ· կէ· 26: եբէր· Ա· 2· Զ· 7: Առակ·
լ· 19: եսայ· է· 14·) ամեն տեղ ալ կոյս , աղջիկ , ան-
պսղ տիկնոջ , անպսակած կոյս նշանակութեամբ · և այս
մտօք միայն նշան՝ սքանչելի կրնար ըլլալ անոր որդի
ծնանելը : — կոփ· «Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն
էր այսպէս · խօսեալ զմայր նորա Մարիամ Յով-
սէփու , մինչչեւ եկեալ առ միմեանս՝ գտաւ յղա-
ցեալ ի Հոգւոյն Սրբոյ · · · : (Եւ Յովսէփ) ո՛չ գի-
տէր զնա , մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ ,
և կոչեաց զանուն նորա Յիսուս» : (Մատ· Ա· 18—
25:) Աւետարանիչը կը յաւելու եւս թէ՝ Հրեշտակը
Յովսէփին երեւնալով ի տեսլեան կ'ըսէ : «Ծնցի
որդի , և կոչեսցես զանուն նորա Յիսուս , զի նա
փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց : Այլ
այս ամենայն եղեւ , զի լցցի որ ասացաւն ի Տեառ-
նէ ի ձեռն եսայեայ մարգարէի · ահա կոյսն յղասցի
և ծնցի որդի , և կոչեսցեն զանուն նորա Էմմա-
նուէլ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած» : (Մատ·

Ա· 21—22։) Ուրեմն էմմանուէլ և Յիսուս անուն-
ները՝ ըստ մեզի՝ նոյն հոմանիշ են, որ հրեշտակը կը
հրամայէ Յիսուս դնել անոր անունը՝ որպէս զի
կատարուի «անոր անունը Էմմանուէլ պիտի կոչեն»
մարգարէութիւնը կ'ըսէ։ Եւ արդարեւ Էմմանուէլ՝
Աստուած մեզի հետ ըսել է· Յիսուս բառն ալ՝ թէ՛ևս
փրկիչ կը նշանակէ, բայց ինչպէս որ ուսանք կը պի-
տեն, Եբրայեցերէնի մէջ փրկիչ նշանակող բառին
վրայ Աստուածութեան յատուկ եհովայ անունին
երկու գրերն աւելցընելով չինուած բառ մին է, որ
կը նշանակէ փրկութիւն Տէրէն կամ Տէրն փրկիչ, ուր
ահա այս մտօք Էմմանուէլ անունին հետ այն նիւա-
նութիւնը կ'ունենայ, թէ Աստուած ընդ մեզ լինի՝ ի փր-
կութիւն մեզ։

Ինչպէս որ Աստուածաշնչեամբ հոգին մեր, հոգին
պէս և մարդկութեամբ մեզի պէս ըլլար· այ մեկ
հաւատիկ, որ է ըսել՝ մայրը ուրիշ զաւակ չպիտի ու-
նենար, այս է՝ կոյս պիտի մնար, որ ուրիշ զաւակ
չծնէր, որով և Յիսուս՝ եղբայր և քոյր չունենար։
«Փրկեա՛ ի սրոյ զանձն իմ, և ի ձեռաց շանց զմիա-
մօրութիւն իմ։ ։ ։ Նայեա՛ առ իս և ողորմեա՛
ինձ, զի միամօր և աղքատ եմ ես։ ։ ։ Իբրեւ
արա զանձն իմ ի խորամանկութենէ նոցա, և յա-
րիւծուց զմիամօրութիւն իմ»։ (Սաղ· ԻԵ· 21։ ԻԹ·
16։ ԼԴ· 17։) — կաթ· «Եւ զարմացեալ Յովսէփ
ի քնոյ անտի, արար որպէս հրամայեաց նմա հրեշ-
տակն Տեառն, և առ զինքն զկինն իւր, և ոչ գի-
տէր զնա, մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ և
կոչեաց զանուն նորա Յիսուս»։ (Մատթ· Ա· 24—25։)
Հոս Աւետարանչին դիտումն ըլլալով Յիսուսի ան-
հայր ծնունդը պատմել, ու չէ թէ Մարիամու կեն-
սագրութիւնն ընել, անոր ապագային մէջ առուս-
նական յարաբերութիւններու մէջ մտնալուն կամ
չմտնալուն ակնարկութիւն ամենեւին չուներ, միայն՝

Յովսէփ Մարիամու հետ ի՛նչ կարգադրութիւն որ
ունէր ցայնժամ, նոյնը պահած ըլլալը կը դիտէ
հասկցընել Քրիստոսի ծնունդը։ Ուստի մինչեւ
Յիսուսի ծնունդը կարգաւած չէր ըսելը՝ Յիսուսի
ծնանելէն ետեւ կարգուելուս ըսել չէր։ — Կը
խոստովանինք որ Քրիստոս բուռը խօսքին մէջ նշա-
նակուած գործողութեան չափ ու սահման կը դնէ,
բայց ըստ արեւելեան լեզուաց և ըստ Եբրայեցա-
նութեան՝ շատ անգամ կը գործածուի Քրիստոս բառը
նաեւ անանկ տեղուանք որ խօսքին գործողու-
թեան անսահման շարունակութիւնը կ'ակնարկուի,
ըստ որոյ կ'ըսուի· «Ի հովանի թեւուց քոց յուսացայց
մինչեւ անցցէ անօրէնութիւն։ ։ ։ Մինչեւ յալե-
ւարիլ և ի ծերանալ, Աստուած իմ մի՛ թողուր
զիս։ ։ ։ Բարձր լեր մինչեւ յերկինս Աստուած։ ։ ։
Աստ Տէր ցՏէր իմ· նի՛ստ ընդ աջմէ իմում, մին-
չեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց»։
(Սաղ· ԾԶ·2։ Հ· 18։ ՃԽ· 6։ ՃՓ· 1· եւն։) Հասարակ
խօսակցութեան մէջ անգամ՝ թէ որ ամուլ ծերի
մը համար ըսուի, թէ մինչեւ իր ծերութեան հա-
սակը զաւակ չէ ծնած, այս ըսել չէ թէ ծերու-
թենէն ետքը զաւակ ծնած է· և կամ հիւանդի մը
համար թէ որ ըսուի, հիւանդացած օրէն մինչեւ
մեռած օրը բան չխմեցաւ, ասկէ չհասկցուիր թէ
մեռնելէն ետքը կերաւ, եւն։

Նմանապէս Աւետարանչին զՅիսուս անդրանիկ
Որդի անուանելը ակնարկել չէր թէ յետագային եղ-
բայրներ ալ ունեցաւ Յիսուս· քանզի յօրէնսն անդ-
րանիկ կ'ըսուէին նախածին մանկուկը, յետագին
եղբայր, քոյր ունենալին կամ ոչ։ (Ելից· ԺԳ· 1—13։)
Եւ որովհետեւ պատմութիւնը կ'երաշխաւորէ որ
Մարիամ չամուսնացաւ մէկու մը հետ, և ո՛չ իսկ
Յովսէփայ հետ, միանձնաւորապէս պահեց իր
կուսութիւնը· հետեւաբար յետագին զաւակները

ալ չունենալով Ցխուս իրեն միանօր որդի ունայ ։ —իսկ Նոր Կտակարանաց մէջ եղբ֊ր և ֆոր֊ Ցխուսի ըսուածները՝ անոր մօտաւոր ազգականներն էին , ինչպէս որ սովորութիւն է Ս· Գրոց այսպէս անուանել մերձաւոր ազգականները · Արդարհամ իւր Դ֊ոլս եղբօրորդին (Ծննդ· ԺԲ· 5·) եղբայր կ'անուանէր (ԺԳ· 8·) և Դ֊ոլս՝ իւր քաղաքակիցները ։ (ԺԹ· 6—7։) Բանդի բաց ՚ի պատուիրենէ որ կը հաւաստէ անոնց հասնածին հասնելայր եղբայր և քոյր չըլլալնին , այլ միայն մերձաւոր ազգական , նոյն իսկ աւետաւորիրն Մարկոս՝ որ յայտնէ անուանէ կը յիշէ անոր եղբայր ըսուածները , յատկէն · « Ո՞չ սա է ուռնուկ հիւսանն , և Որդին Մարեամայ , եղբայր Յակոբայ և Յովսեայ , և Յուդայի և Սիմոնի» (Մ֊իկ · Զ· 3·) եռքէն բացորոշակի կը յայտնէ՝ թէ անոր եղբայր անուանելով Յակոբին և Յովսէին մայրը՝ Մարիամ անուն ուրիշ կին մըն էր· « Էին և կանայք որ հայէին ՚ի հեռաստանէ , յորս էր Մարիամ Մագդաղենացի , և Մ֊իամ Յ֊ակոբոս փոքրկան և Յովսեայ մայր ևս» ։ (Մ֊իկ· ԺՉ· 40։) Ուրեմն ինչպէս որ անխորհ կոյս էր նախ քան զծնունդն , նոյնպէս կոյս մնաց յետ ծննդեանն , և բաց ՚ի Ցխուսէ ուրիշ զաւակ չունեցաւ ։ Եւ վասն որոյ երբ Ցխուս ՚ի խաչին ատեան իւր մայրը՝ որ անզաւակ ատած և անխնամ պիտի մնար , յանձնեց զայն իւր սիրելի աշակերտին խնամոցը · Թէ և իւր եղբարք անուանելով Յակոբ և Յովսէ ողջ էին այն ատեն՝ և այնուհետեւ չատ տարիներ ալ ապրեցան , բայց Ցխուս՝ դուն անզաւակ ես մայր իմ կ'ըսէ , այսուհետեւ Յովհաննէս քու որդիդ Թող ըլլայ , ու զքեզ խնամէ · « Ա֊ն դու , ահա որդին քո ։ ։ ։ և յայնմ ժամանակէ առ աշակերտն զնա առ իւր» ։ (Յ֊վհ· ԺԹ· 26—27։)

Աղբարոհմ ՚ղէպէ ուռնուալ էրմէ եպէտ , ար էրմուվ էր

ազբարոհի բառերը դէպի քրէնուր · « Եւ զայդ առհաւն նորա ո՞ պատմեսցէ , մի բառնան յերկրէ կեանք նորա » ։ (Եսայ· ՆԳ· 8։) « Անժառանգ եղ զանձն իմ խորհեցան յորդւոց ՚ի մարդկանէ » ։ (Ս֊ղմ· ԼԴ· 12։)—կամ· « Մշակքն իրրեւ առեին զորդին , առեն ընդ միմս · սա է ժառանգն , եկայք սպանցուք զսա , և կալցուք զժառանգութիւն սորա ։ Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան զայգին և սպանին» ։ (Մարկ· ԻԱ· 38—39։) Եւ ևս Ցխուս Յուդայի ցեղէն իւր սպառնալին վերջին ճեան ըլլալով , երբ մահու խաչի առնր երկրաւոր կեանքը բարձաւ , առնր սպառնալին պատուիրեան վերջի էջը դոցուեցաւ ։ Որ է ըսել թէ՝ առնուին , զաւակ ալ չպիտի ունենար և չունեցաւ · որով իւր ճեառ վերջացաւ Յուդայի ցեղին մէջ ։

Թարգմանիչ առնր երկպարբերութեան պէտ էին և ընծայեր տարօրինակ էին · « Թագաւորք Թարսիսի և կղզեաց պատարագս մատուսցեն նմա · թագաւորք Արաբացւոց և Սաբայ պատարագս բերցեն նմա· երկիրպագցեն նմա ամենայն թագաւորք երկրի» ։ (Ս֊ղմ ՀԱ 10—11։) « Ամենեքեան ՚ի Սաբայ եկեսցեն , բերել ոսկի և կնդրուկ՝ և ականս պատուական · և զիրկութեան Տեառն ասցեն զաւետս» ։ (Եսայ· Կ· 6։)—կամ· « Ահա մոգք յարեւելից եկին · ։ ։ ։ և իրրեւ մտին ՚ի տուն , տեսին զմանուկն հանդերձ Մարեամայ մօրն իւրոյ , և անկեալ երկիրպագանէին նմա , և բացեալ գգանձս իւրեանց՝ մատուցին նմա պատարագս՝ ոսկի և կնդրուկ և զմուռս ։ (Մ֊թ· Բ· 2—11։) Իսկ և բոլոր թագաւորները որ առնուն ՚ի գրիստոնէութիւն գալուն և ցարդ ՚ի նմին կան ։

Հ֊մայէ ԹԼ առնէր֊ ը֊ զդ պէտ եւսէր Ո֊ենք զրօ֊ (բնիկ֊մին ցեղէ հանկաց) խօսքին գամ֊ա֊ա· « Այսպէս առէ Տէր · Զայն ՚ի հառասոյ լսելի եղեւ

ողբումն և լալումն և գոչմունն. Ռաքէլ լայր զորդիս իւր, և ո՛չ կամէր մխիթարել 'ի վերայ որդւոց իւրոց՝ զի ո՛չ գոյին» : (եբէմ. ԼԱ. 15:) — կ՚ըսէ. «Յայնժամ լցցին եառեալ Հերովդէս թէ խաբեցաւ 'ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ, և առաքեաց սրոտրեաց զամենայն մանկունս որ էին 'ի Բեթղահէմ և յամենայն սահմանս նորա՝ յերկեամենից և 'ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ուսուցեալ 'ի մոգուցն» : (Մ՚ած. Բ. 16:)

Եէյպուէն պէտ է ըսէր զինչը Աստուած 'ի մանկութեան. «Ընդ առաւօտս ընկէցաւ թագաւորն Իսրայէլի. քանզի տղայ էր Իսրայէլ, և ես սիրեցի զնա. և յեգիպտոսէ կոչեցի զորդի իմ» . (Ըստ եբր : Ովէե. ԺԱ. 1:) — կ՚ըսէ. «Եւ 'ի վախճանելն Հերովդի, ահա հրեշտակ Տեառն 'ի տեսլեան երեւէր Յովսէփայ և ասէր. արի առ զմանուկդ և զմայր իւր, և գնա՛ յերկիրն Իսրայէլի, զի մեռան որ խնդրէին զանձն մանկանդ : Եւ նա յարուցեալ ա՛ռ զմանուկն և զմայր նորա, և եկն յերկիրն Իսրայէլի : (Մ՚ած. Բ. 14—21:)

Անոր աքէն եղէ (եղէյէ Նէթանյով վաստաձ ջէնը) կ՚ըսէր պէտ ըլլար՝ անոր ճամբայները հարթել համար. «Ահա ես առաքեմ առ ձեզ զհեղիա Թեզբացի, մինչչեւ եկեալ է օր Տեառն մեծի և երեւելոյ, որ պատրաստեսցէ զսիրտս հօր առ որդի, և զսիրտս առն առ ընկեր իւր» : (Մ՚ալ՚ած. Դ. 5—6:) «Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ, և սեսցէ զճանապարհս իմ առաջի իմ» : (Գ. 1:) «Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհս Տեառն, և ուղիս արարէք զյառիջս Աստուծոյ մերոյ . . . : Եւ երեւեցաւ փառք Տեառն, և տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ» : (Եսայ. Խ. 3. 5:) — կ՚ըսէ. «Յաւուրսն յայնմիկ գայ Յովհաննէս մկրտիչ՝ քարոզել յանապատին Հրէաստանի, և ա-

սէ. ապաշխարեցէ՛ք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից. զի սա է՝ վասն որոյ ասացաւ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ ասէ. Ձայն բարբառոյ յանապատի եղբ» (Մ՚ած. Գ. 1—3:) «Հարցին ցնա աշակերտքն և ասեն. զիա՞րդ դպիրքն ասեն, եթէ Եղիայի նախ պարտ է գալ. պատասխանի եւ Յիսուս և ասէ ցնոսա. Եղիա՝ գայ, և հաստատեսցէ զամենայն. այլ ասեմ ձեզ՝ զի Եղիա եկեալ իսկ է, և ոչ ծանեան զնա . . . : Յայնժամ 'ի միտ առին աշակերտքն, թէ վասն Յովհաննու մկրտչի ասաց ցնոսա : (Մ՚ած. ԺԷ. 10—13:)

Ա Հ-ԳՔՆ պէտ գծուէը, Մ՚վէ-է պէ- տ՚ըէ-էք, Մեր Տիրոջմէ կ՚ըսէին տոհմանց և յուդեացոց ընտրուելու ըլլալ : — Այս մարգարէութեանց և անոնց կատարման վրայ ուրոյն ուրոյն պիտի խօսիմք ետքէն, (Հետեւեալ Հատուածին մէջ, Պրակ Գ:)

Նոյն է Աիոն պէտ ըսէր, և Տէրը Յիսուս պէտ ուր անոր ծնաւ՝ հետեւոնները ընդ ուղղոյ երթալ. «Եւ կացի թագաւոր 'ի նմանէ 'ի վերայ Աիոնի լերինն սրբոյ նորա՝ պատմել ինձ զհրամանս Տեառն. Տէր ասաց ցիս Որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ: խնդրեա՛ յինէն և տացե քեզ զհեթանոսս 'ի ժառանգութիւն, և իշխանութիւն քեզ զամենայն ծագս երկրի» : (Սաղմ. Բ. 6—8:) — կ՚ըսէ. «Որք եղբարք՝ որդիք Աբրահամեան տոհմին, և որ 'ի ձեզ երկիւղածք իցեն յԱստուծոյ, ձեզ բանս այս փրկութեան առաքեցաւ . . . : Ա՛ւ ձեզ նախ պարտ էր քարոզել զբանն Աստուծոյ. և քանզի դուք մերժէք զնա, և ո՛չ արժանիս հաստարիք զձեզ կենացն յաւիտենից, ահաւասիկ դառնամք 'ի հեթանոս: զի այսպէս պատուիրեաց մեզ Տէր: եդի զքեզ 'ի լոյս հեթանոսաց, լինել քեզ 'ի փրկութիւն մինչեւ 'ի ծագս երկրի : Զայս լուեալ հեթանոսացն՝ ուրախ լինէին, և փառաւորէին զբանն Տեառն, և

հաւատացին որք էին կարդեալ ՚ի կեանսն յաւիտենական. և հրջէր բանն ընդ ամենայն գաւառն» (Գոծ. ԺԳ. 28. 46—48։) եւ, եւ, եւ։

Տէրոջը Հոգին իւր ասոյ պիտի ըլլար, ՚ի հնչէն տարբերութեան իւրոյ. «Հոգի Տեառն ՚ի վերայ իմ. վասն որոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս եւ» ։(Ես. ԿԱ. 1։)—կոփ. «Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ե՛լ վաղվաղակի ՚ի ջրոյ անտի, և ահա բացան նմա երկինք, և տեսս զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի և գայր ՚ի վերայ նորա. և ահա ձայն յերկնից՝ որ ասէր. դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ» ։ (Մատ. Գ. 16—17։)

Ի՞նչ տարբերութիւնը պիտի ունենար Գալիլեացին. «Հապա նախ զայդ արբ. վաղվաղակի հետ արա. երկիր Զաբուղոնի՝ և երկիր Նեփթաղեմի՝ ճանապարհ Ծովու և այլք որ բնակեալէք կծովեզերքդ և յայնկոյս Յորդանանու Գալիլեա հեթանոսաց, կողմանք Հրէաստանի ։ Ժողովուրդ որ գնայր ընդ խաւար՝ տեսս լոյս մեծ. և որ բնակեալէք յաշխարհի և ՚ի սուերս մահու, լոյս ծագեցաւ ձեզ» ։ (Ես. Թ. 1—2։) —կոփ. «Եւ իբրեւ լուաւ Յիսուս՝ եթէ Յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ գնաց ՚ի Գալիլեա, և թողեալ զնազարէթ, եկն բնակեցաւ ՚ի Կափառնաւում ՚ի ծովեզերին, ՚ի սահմանս Զաբուղոնի և Ներփթաղիմայ ։ Զի լցի բանն ասացեալ» ։ (Մատ. Դ. 12—13։)

Ջրոյն երկրէ ելոյ՝ այս խօսքն ալ պիտի ըլլար. «Պատմեցաք առաջի նորա իբրեւ զնանուկ, իբրեւ զարմատ ՚ի ծարաւուտ երկրէ» ։ (Ես. ԾԳ. 2։) «Ելայեա առ իս և ողորմեա ինձ, զի միամօր և աղքատ եմ ես։ ։ ։ Ես աղքատ և տնանկ եմ Աստուած օգնեա՛ ինձ» ։ (Սաղ. ԻԴ. 16։ ԿԶ. 6։) — կոփ. «Անուխաւոց որդիք դուն, և թռչնոց երկնից՝ դատարք. և որդւոյ մարդոյ ո՛չ գոյ՝ ուր զիցէ զգլուխ իւր» ։ (Ղուկ. Թ. 58։)

Մեղմ՝ հեղ պիտի ըլլար, հակառակը ինչո՞ւ պիտի ըլլար. «Մի՛ աղաղակեսցէ և մի՛ վիճեսցի, և մի՛ ոք լուիցէ արտաքոյ զբարբառ նորա. զեղէգն ջախջախեալ մի՛ բեկցէ, և զպատրոյկն առկայծեալ մի՛ շիջուսցէ» ։ (Ես. ԽՒ. 2։) —կոփ. «Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ արարին զնմանէ՝ թէ ո՛րպէս կորուսցեն զնա ։ Եւ Յիսուս իբրեւ գիտաց, մեկնեցաւ անտի, և զնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զամենեսեան. և սաստեաց նոցա՝ զի մի՛ յայտնեսցեն զնմանէ ումեք. զի լցի որ ասացաւն ՚ի ձեռն Եսայեայ մարգարէի. Ահա մանուկ իմ զոր ընտրեցի, և սիրելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ, եդից զոգի իմ ՚ի վերայ նորա, և իրաւունս հեթանոսաց պատմեսցէ. ո՛չ հակառակեսցի, և ո՛չ աղաղակեսցէ, և ո՛չ ոք լուիցէ ՚ի հրապարակս զբարբառ նորա եւ։ ։ ։ Ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ» ։ (Մատ. ԺԲ. 14—21։ ԺԱ. 29։)

Գլուխ պիտի ըլլար, և ներքինապետ ցուցապետին պիտի ուներ. «Իբրեւ հովիւ ոմի հովուեսցէ զխաշինս իւր, և բազկաւ իւրով ժողովեսցէ զդառինս, և ՚ի ծոց իւր կրեսցէ զնոսա. և մխիթար լիցի յղեացս» ։ (Ես. Խ. 11։)—կոփ. «Քանզի ո՛չ եթէ ունիւք քահանայապետ, որ չիցէ կարող չարչարակից լինել տկարութեան մերոյ. այլ փորձ է ամենայնիւ, ըստ նմանութեան, առանց մեղաց ։ Մատիցուք այսուհետեւ համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհացն նորա, զի ընկալցուք ողորմութիւն, և գըտցուք շնորհս ՚ի դէպ ժամանակի՝ օգնականութեան» ։ (Եբր. Գ. 15—16։ տես նաև ՚ի վերն Հոփ. Գ. ՊՐ. Բ։)

Ներքինապետ, անբեղունի պիտի ուներ. «Անօրէնութիւն ո՛չ գործեաց, և ո՛չ գտաւ նենգութիւն ՚ի բերան նորա» ։ (Ես. ԾԳ. 9։)«Տէր Աստուած իմ, թէ արարից զայս, թէ իցեն անօրէնութիւնք ՚ի ձեռս իմ...

անհայտ և ես 'ի թշնաւեաց իմոց ընդունայն »։ (Ա–ղ. Է. 4—5։)—կ–ա. «Զի և Քրիստոս վասն ձեր մեռաւ, և ձեզ եթող օրինակ՝ զի դիմեսջիք հետոց նորա։ Որ ոչն արար մեղս, և ո՛չ գտաւ նենգութիւն 'ի բերան նորա » ևն։ (Ա. Պետ. 21—22։)

Պ–ՀՀ և –ՂՄԻ–, համառօտ ՓԼՀԲ–ՂՄԻ–՝ ԻՓՊԻՓ ԳԻՐ ԻԱՆ–ՐՀՆՂՆԵՐ. «Յոհնարհեցուցի զահօք զանճն իմ, և եղեւ ինձ այն նախատինք ... ես յաղօթս կայի առ քեզ Տէր, 'ի ժամանակ ընդունելի։ Լսեսցայ 'ի զիշերի ընդ սրտի իմում հոգայի և տառապէր յիս հոգի իմ։ ... Ի տուէ պատուիրեսցես Տէր զողորմութիւն իւր, զիշերի զօրհնութիւն նորա և աղօթք իմ առ Աստուած վասն կենաց իմոց»։ (Ա–ղ. ԿԲ. 11. 14։ ՀՂ. 7. ԽԱ. 9։)—կ–ա. «Պահեալ զքառասունն ութ և զքառասունն զիշեր, ապա քաղցեաւ»։ (Մ–ղ. Գ. 2։) «Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս, և կայր յաղօթս ... Եւ 'ի տուէ 'ի առաջարին ուսուցանէր, և զիշերս ելեալ ապաւինէր 'ի լերինն որ կոչիւր Ձիթենեաց ... Եւ հանէր զիշերն յաղօթսն Աստուծոյ» ևն։ (Ղ–ս. Ե. 16 Ջ 12։ ԻԱ. 37։)

Ն–ՒՒՆՅԱՍՐ պէտ ԸԱԸՐ Ի–Ր ՓՐՂ–ՐՒՆ–ՆԻՆ ՌԵՔ «Ղախանճ ասեն քոյ եկեր գիս. Ձախատինք նախատչաց քոց անկան 'ի վերայ իմ ... Աչեաց գիս նախանճ քո, զի մոռացան զբանս քո Քրիստիք իմ»։ (Մ–ղ. ԿԲ. 10։ ՃԺԸ. 139։)—կ–ա. «Եւ եդիտ 'ի առաջարին՝ զի վաճառէին զարիաւս և զոչխարս և զաղաւնիս, և զլուսնայափոխան. և արար խարազան չուանեայ, և եհան զամենեսին 'ի տաճարէն ... և ասէ ցնոսա. առէք զայդ ասոր, և մի՛ առնէք զտուն Հօր իմոյ տուն վաճառի. ապա յիշեցին աշակերտքն նորա՝ թէ գրեալ է, նախանձ տանն քո կերիցէ զիս»։ (Ղ–ս. Ե. 14—17։)

Ա–ՒՒՆԵՐՈՎ Ի–Ր–ՐՂ–ՐՒՆ–ՆԻՆ ՊԷՏ ԸՆԵՐ. «Բացից առա-

կօք զբերան իմ, խօսեցայց զառակս 'ի սիրգանէ ...։ Խոնարհեցուցի յառակուածն զունկն իմ. բացից զառակս օրհնութեան 'ի սիրգանէ »։ (Ա–ղ. ՀԷ. 2։ ԽՔ. 3։)—կ–ա. «Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովրդեան, և առանց առակի ոչինչ խօսէը ընդ նոսա»։ (Մ–ր. ԺԳ. 34—35։)

Ի ՃԱՆԿ–ՐՒՆՆ Ա–Ր–Ջ–Ն –Ա–Ե–Լ ՊԷՏ ԸԱԸՐ. Ի ՐՒՆՆ –Ա–ՃԱՆ –Ր–Ժ ՂՊԻՐ ԸԱԸՐ. «Աստուած իմ, աստուցեր գիս 'ի մանկութենէ իմմէ, և ցարդ ևս պատմեցից զարդ արուեստիւնս քո»։ (Ա–ղ. Հ. 17։) —կ–ա. «Եւ իբրեւ եղեն նորա ասք երիսուանան ... գումն գնա 'ի տաճարին զի նստէր ընդ վարդապետան. լսէր 'ի նոցանէ՝ և հարցանէր զնոսա։ Զարմանային ամենեքեան որ լսէին 'ի նմանէ՝ ընդ խնաստութիւնն և ընդ պատասխանիս նորա, և իբրեւ տեսին զնա աբանչացան»։ (Մ–ր. Բ. 42—46։) Զարմանային Հրէայքն և ասէին. գիա՞րդ գիտէ սա, զի ուսեալ բնաւ չիք»։ (Յ–Վ. Է. 15։ Ա–Մ–ր. ԺԳ. 54—57։ Մ–ՒՒ. Զ. 2։)

Ա–ՐՀ ՀՐՆ–Ն–ՆԵՐՔՆ ՀՆ–ՐՀ ՊԷՏ Ր–ՓԵՐ. «Սիրեցան չնորհք 'ի շրթանց քոց. վասն այնորիկ օրհնեաց զքեզ Աստուած յաւիտեան»։ (Ա–ղ. ԽԴ. 3։)—կ–ա. «Եւ ամենեքին վկայէին վասն նորա, և զարմանային ընդ բանս չնորհացն որ ելանէին 'ի բերանոյ նորա»։ (Ղ–ս. Դ. 22։)

Իշխ Ե–Ա–Ն–ՂԷ ՀՐ–Յ Ն–Ր–Ք ՅԵՐ–Ա–Ա–ՂՀ ՊԷՏ ՃՆԵՐ. «Որպես լեր յոյժ գուսար Աիուխի, քարոզեա գուսանդըր Երուսաղէմի, ահա թագաւոր քոյ գայ առ քեզ, արդար և Փրկիչ, նոյն հեզ՝ և հեծեալ 'ի վերայ իշոյ՝ և յաւանակի նորոյ»։ (Զ–ա. Թ. 9։) կ–ա.— «Ածին զէշն և զյաւանակն, և արկին վնջօք ձորձս, և նստաւ 'ի վերայ նոցա. և բազում ժողովուրդք տարածեցին զհանդերձս իւրեանց 'ի ճանապարհին, և այլք հատանէին ոստս 'ի ծառոց՝ և տարածա-

նէին 'ի հանապարհին : Եւ ժողովուրդքն որ առաջին և գնին երթային՝ աղաղակէին և ասէին . Օրհնութիւն Որդւոյ Դաւթի . Օրհնեալ որ գայ յանուն Տեառն, Օրհնութիւն 'ի բարձունս : Եւ 'ի մտանելն նորա յԵրուսաղէմ՝ դղրդեցաւ քաղաքն ամենայն» (Մ—ի. իԱ. 6—11 եւ :)

Ի—ր ո—ճ—րը պէտ է—ր ին—ը , և ա—ց խ—ղա—ղ—ին պէտ ո—ր, ո—վ երէկ ո—ճ—րին է—ս—ը —— Քին— —ելի ձեզ պէտ ըլլա—ր . «Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ, և տեսցէ զճանապարհս իմ առաջի իմ, և յանկարծակի եկեսցէ 'ի տաճար իւր Տէրն զոր դուք խնդրէք , և հրեշտակն ուխտի զոր դուք կամիք» (Մ—ղ. Գ. 1:) «Որ 'ի ձէնջ տեսանել կէտ զտունն դայս 'ի փառաւորութեան իւրում զառաջինն . և որպէս արդ տեսանէք զդա որպէս զսկզբնէ առաջի ձեր : Եւ արդ զօրացիր դու Զօրաբաբէլ՝ ասէ Տէր . և զօրացիր Յեսու Յովսեդեկեայ քահանայ մեծ , և զօրացի ամենայն ժողովուրդ երկրին՝ ասէ Տէր . և գործեցէք զի ես ընդ ձեզ եմ ասէ Տէր Ամենակալ : Եւ բանն զոր ուխտեցի ընդ ձեզ՝ յելանելն ձերում ի Եգիպտացւոց , և Հոգին իմ որ կայ 'ի միջի ձերում . քաջալերացարուք . . . ապագային դայդ փառաց՝ ասէ Տէր Ամենակալ . զի մեծ եղիցին փառք տանդ այդորիկ վերջինդ քան զառաջինն՝ ասէ Տէր Ամենակալ : Եւ 'ի տեղւոջդ յայդմիկ տաց խաղաղութիւն՝ ասէ Տէր Ամենակալ . և խաղաղութիւն ոգւոց փրկութիւն ամենայնի , որ գործիցէ յարուցանել զտաճարդ» : (Անգէ . Բ. 4—9:)— կ—ա . «Եւ այն էր այր մի յԵրուսաղէմ, որոյ անունն էր Սիմէոնէ . և էր այրն այն արդար և երկիւղած , և անկն ունէր մխիթարութեանն Իսրայէլի , և Հոգի սուրբ էր 'ի նմա : Եւ էր նորա հրաման առեալ 'ի Հոգւոյն սրբոյ՝ մի՛ տեսանել զմահ , մինչեւ տեսցէ զՔրիստոսն Տեառն . և եկն Հոգւոյն 'ի տաճարն : Եւ

իբրեւ ածին ծնողքն զմանուկն Յիսուս , առնել նոցա ըստ սովորութեան օրինացն 'ի վերայ նորա , և նա առընկալաւ զնա 'ի գիրկս իւր , օրհնեաց զԱստուած , և ասէ . արդ արձակես զծառայ քո Տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն . զի տեսին աչք իմ զփրկութիւն քո , զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց . լոյս 'ի յայտնութիւն հեթանոսաց , և փառս ժողովրդեան քում Իսրայէլի» : (Ղ—ի. Բ. 25—32:)

Հր—ջ—ն—ր , բ—շ—ն—ն—ր պէտ ըլլ— . « Ահաւասիկ Աստուած մեր հատուցանէ դատաստան՝ և հատուցցէ . ինքնին եկեսցէ՝ և փրկեսցէ զմեզ . յայնժամ աչք կուրաց բացցին՝ և ականջք խլից՝ լուիցեն . յայնժամ վազեսցէ կաղն իբրև զեղջերու , և պարզ լիցի լեզու ծանրախօսաց» : (Ե—յ. Լե. 4—6: իԲ: 18: Յօբ. 7:) — կ—ա . »Գնացէ՛ք պատմեցէ՛ք Յովհաննու , զոր լուայք և տեսէք . կոյրք տեսանեն , կաղք՝ գընան , բորոտք՝ սրբին , և խուլք՝ լսեն , և մեռեալք յառնեն , և աղքատք աւետարանին» : (Մ—ղ. ԺԱ. 4—5:) Ժողովեցին քահանայապետքն և փարիսեցիք ատեան , և ասեն . զի՞նչ արասցուք . զի այրն այն բազում նշանս առնէ» : (Յ—ն. ԺԱ. 47:)

Եղ—ց—ն—ր—ա— եր—ն— պէտ է—ա— . «Ծառայ եղէ ես եղբարց իմոց , և հիւր որդւոց մօր իմոյ . . . զան զամենայն թշնամիս իմ եղէ ես նախատ դրացեաց իմոց . յոյժ ահ և երկիւղ ծանօթից իմոց» : (Ա—ղ. ԿՀ. 9: Լ. 12:) —կ—ա . «Յաշխարհի էր և աշխարհ նովաւ եղեւ , և աշխարհ զնա ո՛չ ծանեաւ . յիւրան եկն , և իւրքն զնա ո՛չ ընկալան . . . քանզի և եղբարքն իսկ չէին հաւատացեալ 'ի նա» , (Յ—ն. Ա. 10—11. Է. 5:)

Զ—ր՝ ք—ք—ս—ց պէտ ա—ն— պէ—ը . «Բազում եղեն զան զհեր գէմոյ իմոյ , ոչ աւելին զիս 'ի տապալարուց . զօրացան յիս թշնամիք իմ և աւերիք

իմ 'ի նանիր . . . : Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ ոչ ասելն միս տարապարտուց» : Ս-ՂՀ. ԿԸ. 3: ԼԴ. 19: Ես-յ. խթ. 7:) — կոփ. «Ելիէ զգործան չէր գործեալ 'ի նոսա՝ զոր ոչ այլ ոք գործեաց , մեղ ինչ ո՛չ գոյր նոցա . բայց սրտ՝ տեսին , և ատեցին՝ և զիս և զՀայրն իմ. այլ զի լցցի բանն , որ յօրէնս նոցա գրեալ է . թէ ատեցին զիս 'ի ստոյգ» : (Յ-ՎՀ. ԺԵ. 24—25:)

Գ-ր ՅՈՎՀԱՆՆԷՍ պիտի ըսէր Հրէից . «Զակէր զօրութեանց ինոյն սուրբ պարկեշտ , և նա եղիցի քեզ յերկիւղ . և եթէ 'ի նա յուսացեալ լինես , եղիցի քեզ 'ի սրբութիւն . և ոտն քո վթարի ո՛չ հարկանիցի . և պատմակղութիւնն քեզ ո՛չ պատահիցէ : Բայց տուն Յակովբայ յորոգայթ և 'ի ծուրծուրս պատահականաց ելուսաղէմի . վասն այնորիկ ակարասցին 'ի նոսա բազուկք . անկցին և խորտակեսցին . . . » (Ես-յ. Ը. 13—15: Տե- Ա- ԻԸ. 16:)— կոփ . «Իսրայէլ եթէպէր ինձ օրինացն արդարութեան , և յօրէնս արդարութեանն ո՛չ ժամանեաց . ընդէ՞ր . միթէ՛ 'ի հաւատոց , այլ իբրեւ 'ի գործոց օրինաց . քանզի գթեցին նոքա ոտ վիմին գայթակղութեան , որպէս գրեալ է . Ահաւասիկ դնեմ 'ի Սիոն քար գայթակղութեան և վէմ գլաբման , և ամենայն որ հաւատասցէ 'ի նա մի՛ ամաչեսցէ » : (Հ-. Թ . 31—33 : Ա. Պետ. Բ. 8:)

Հրէից էշխանքն ընդդէմ պիտի անարգէին , և ինչ պիտի խօսէին երեն վրայ . «Վէմն՝ զոր անարգեցին շինողք , նա եղեւ գլուխ անկեան . . . : Իմասնք հալածեցին զիս 'ի նանիր , և 'ի բանից քոց երկեաւ սիրտ իմ . . . : Բանզի նաւան իմասնք և չարախօսէին զինէն , այլ ծառայ քոյ խորհէր յիրաւունս քո » : (Ա-ՂՀ. ՃԺԸ. 22. 23. 161:) — կոփ . «Ասէ ցնոսա Յիսուս . չիցէ՞ երբէք ընթերցեալ ձեր 'ի գիրս , զվէմն եւ ես : ի Տեառնէ եղեւ այս , և է սքանչելի յաչս մեր :

վասն այսորիկ ասեմ ձեզ , զի բարձցի 'ի ձէնջ արքայութիւն Աստուծոյ , և տացի ազգի որ առնիցէ պտուղս նորա : Եւ որ անկցի 'ի վերայ վիմիս այսորիկ՝ փշրեսցի , և յոր վերայ անկցի՝ հոսեսցէ զնա» : (Մ-ՂՀ. ԻԱ. 42—44:)

Հրէայք և հեղինակք , ընթերցք և իշխանք անոր հակառակ պիտի ելնային . «Ընդէ՞ր խաւարեցան հեթանոսք , և ժողովուրդք խորհեցան 'ի սնոտիս . յանպիտան եղեն իմացաւորք երկրի , և իշխանք ժողովեցան 'ի միասին վասն Տեառն և վասն Օծելոյ նորա» : (Ա-ՂՀ. Բ. 12:) — կոփ . «Յաղագ արդարոյ քոյ Յիսուսի զոր օծեր , Հերովդէս և Պոնտոս Պիղատոս, այդօր և ժողովրդովք իսրայէլի , առնել որչափ ձեռն քո և կամք յառաջադոյն սահմանեցին լինել» : (Գ-ՐՔ. Դ. 26—28: Ղ-ՒԻ. ԻԳ. 11—13:

Թշնամիք ընդդէմ պիտի խորհէին , եւ կրօնաւոր պիտի ուզէին . «Թշնամիք իմ ասացին ինձ չար . ե՞րբ իցէ դի մեռցի և կորիցէ անուն նորա» , (Ա-ՂՀ. Խ. 6:) — կոփ . «Բանզի լինդրէին Հրէայքն սպանանել զնա» : (Յ-ՂՀ. Ե. 18: Է. 1. 20. 25: Ը. 37. 40:) Սբ. բազում անգամ քահանայապետքն և գպիրք «Աբրահմին խորհուրդ՝ զի ներսուէտեան կալցեն գՅիսուս՝ և սպանցեն» : (Մ-ՂՀ. ԻՁ. 3—4: ԻԷ. 1: Մ-ՐԿ. ԺԳ. 1. 55: Յ-ՂՀ. ԺԱ. 53. ԺՓ. 10. եւ :) Ա-ՏԻՆ իսկ՝ «Զինչ արուցուք , զի այրն այն բազում նշանս առնէ . եթէ թողուցք զնա այնպէս , ամենեքին հաւատան 'ի նա , և գայցեն Հռոմք՝ և բառնացեն զտեղիս մեր և զազգս . . . : Լաւ է մեզ՝ զի այր մի մեռանիցի 'ի վերայ ժողովրդեան , և մի՛ ամենայն ազգս կորիցէ . . . : Ա-պա յայնմ օրէ խորհուրդ արարին՝ զի սպանցեն զնա» : (Յ-ՂՀ. ԺԱ. 47—53:)

Իրեն թաքնիմը , եւ հայը ուղղը պիտի ճանչէր . «Բանզի և այրն խաղաղութեան իմոյ յոր և վստ

յուսացայ · որ ուտէր զհաց իմ, յամախեաց առնել ինձ խարէութիւն · ։ ։ Զի թէ թշնամւոյն նախատեալ էր՝ հաւրերկի արդեօք, կամ առելոյն մեծարանեալ էր 'ի վերայ իմ՝ թաքչէի արդեօք 'ի նմանէ · իսկ դու մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ և ծանօթ իմ· ապաքէն 'ի նոյն քաղցրացուցեր ինձ և քեզ կերակուր , ի դնայաք միաբանութեամբ 'ի տան Աստուծոյ»: (Ա—ջ· Ժ· 10· ՄԴ· 13—15 ։) — կ—ի· «Զայս իբրեւ ասաց Յիսուս , խռովեցաւ յոգի իւր , վկայեաց և ասէ · ամէն ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն 'ի ձէնջ մատնելոց է զիս · · · ։ Եւ թացեալ զպատառն՝ տայ Յուդայի Իսկարիովտացւոյ , և յետ պատառոյն՝ ապա եմուտ 'ի նա սատանայ · · · ։ Իսկ նորա առեալ զպատառն եւ արտաքս վազվազակի ։ (Յ—վհ· ԺԳ· 21· 26· 27· 30։) «Եւ մինչդեռ խօսէր , ահաւասիկ ամբոխ , և որ կոչէրն Յուդա՝ մի յերկոտասանիցն առաջնորդէր նոցա ։ Իբրեւ մերձեցաւ առ Յիսուս՝ համբուրեաց զնա , քանզի զայն նշան տուեալ էր նոցա , թէ ընդ որում ես համբուրեցից՝ նա է , զնա ունիջիք։ Ասէ ցնա Յիսուս · Յուդա՛, համբուրելո՞վ մատնես զՈրդի մարդոյ»։ (Ղ—ի· ԻԲ· 47—48։)

Եբեռան ապծալի ֆնոց պէտէ ծախսէր · «Եւ ասացի ցնոսա , թէ բարւոք թուի յաչս ձեր՝ տուք զվարձս իմ· ապա թէ ոչ՝ զրոյց արարէք ։ Եւ կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի»։ (Զ—ի· ԺԱ· 12—13) —կ—ի· «Յայնժամ գնաց մի յերկոտասանիցն անուանեալն Յուդա Իսկարիովտացի՝ առ քահանայապետսն , և ասէ · զի՞նչ կամիք տալ ինձ , և ես մատնեցից զնա ձեզ· և նոքա կշռեցին նմա երեսուն արծաթի »։ (Մ—տ· ԻՁ· 14—15։)

Այն մատնողին ֆինը էրտէ աֆտրակի պէտէ պրռէր · «Եւ կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի · և ասէ ցիս Տէր · ա՛րկ զու զայդ 'ի բովս · (ջ—ի· Եբր· 'է

բրուան ·) և քննեա՛ թէ փո՞րձ իցէ , որպէս և ես գտայ փորձ վասն նոցա ։ Եւ առի զերեսուն արծաթին , և արկի 'ի տուն Տեառն՝ 'ի բովս»· (ջ—ի· Եբր· 'ի բրուան ։ Զ—ի· ԺԱ· 12 13 ։) —կ—ի· «Յայնժամ տեսեալ Յուդայի՝ որ մատնեացն զնա , թէ պարտաւորեցաւ , զղջացաւ , և դարձոյց զարծաթն առ քահանայապետսն և ծերս ժողովրդեանն՝ և ասէ · մեղայ զի մատնեցի զարիւն արդար · և նոքա ասեն · մեզ չէ փոյթ , դու գիտես ։ Եւ ընկէց զարծաթն 'ի տաճարին՝ և գնաց , և չոգաւ խեղդեցաւ · իսկ քահանայապետիցն առեալ զարծաթն՝ ասեն · ո՛չ է արժան ընդունել զայդ 'ի կորբանն , քանզի գինք արեան են · խորհուրդ արարեալ , գնեցին այնու զագարակն բրտի 'ի գերեզման օտարաց եւ»։ (Մ—տ· ԻԷ· 3—10։)

Աշէկերտներըը պէտէ էսէլէն նոր մտնօլիան ապեն · «Հարից զհովիւն և ցրուեսցին խաչինքն»։ (Զ—ի· ԺԳ· 7։) — կ—ի· «Յայնժամ աշակերտքն ամենեքին թողին զնա և փախեան»։ (Մ—տ· ԻՁ· 56· 31 ։ Մ—րկ· ԺԳ· 7 ։)

Անոր էրայ անօրէն ֆնոլիան պէտէ ըսէր , պռոսպռնէ պռոսպռան պէտէ յէյէսէր · «Քննեցին զանօրէնութիւն , պատրաստեցան 'ի քննել զքննութիւն»։ (Ա—ղ· ԿԳ· 7։) «Վա՛յ ինձ , վա՛յ ինձ մայր իմ, իբրեւ զո՞ ոք ծնար զիս , այր դատափետեալ և ձգձգեալ 'ի դատաստան յամենայն երկրի , ո՛չ պարտիմ ինչ եւ»։ (Եր—ի· Ժե· 10։) — կ—ի· «Ամէն Իսրայէլացիք , լուարուք զբանս զայսոսիկ , զՅիսուս Նազովրեցի զայր ցուցեալ յԱստուծոյ 'ի ձեզ , զօրութեամբ և նշանօք և արուեստիւք , զոր արար նովաւ Աստուած 'ի միջի ձերում, որպէս և դուք իսկ գիտէք, զնա նկատեալ խորհրդով և կանխագիտութեամբն Աստուծոյ , մատնեալ 'ի ձեռաց անօրինաց՝ բեւեռեալ 'ի փայտի սպանէք»։ (Գ—ծ· Բ· 23։) «Իսկ նոցա կալ-

վկայութիւնն նոցա»: (Մ-ի· ԺԴ· 55—57:)

Անդ ՚ի լերայ անօրէնութեան յանցանս պիտի դնէին· «Զի-նէն չընդկնին ամենայն թշնամիք իմ, խորհեցան չար ՚ի վերայ իմ, բան անօրէնութեան եդին ՚ի վերայ իմ»: (Ա-ղ· Խ· 8—9:) —կու· ժողովեցին քահանայապետքն և փարիսեցիքն ատեան՝ և ասեն· զինչ արասցուք զի այրն այն բազում նշանս առնէ· եթէ թողուցուք զնա այնպէս, ամենեքին հաւատասցեն ՚ի նա, և գայցեն Հռոմք և բառնասցեն զտեղի և զազգ: Մի ոմն ՚ի նոցանէ՝ անուն Կայիափա, որ քահանայապետ էր տարւոյն այնորիկ, ասէ ցնոսա· դուք ոչինչ գիտէք, և ո՛չ բնաւ խորհիլ իսկ· թէ լաւ է մեզ, զի այր մի մեռանիցի ՚ի վերայ ժողովրդեանս, և մի՛ ամենայն ազգս կորիցէ··· Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին՝ զի սպանցեն զնա··· Եւ առ նոսա արտաքս Պիղատոս և ասէ· զինչ չար բախտութիւն մատուցանէք զառնէն զայնմանէ· պատահանի եւտուն և ասեն ցնա· եթէ չէր չարագործ այրն այն, ապա ո՛չ մատնէաք զնա քեզ··· մեք օրէնս ունիմք, և ըստ օրինաց մերոց պարտի մեռանել»: (Յ-ղ· ԺԱ· 47—53· ԺԸ· 29—30· ԺԹ· 7·) «Գնաք զսա՝ զի թիւրէր զազգս մեր, և արգելոյր ՚ի տալոյ հարկս կայսեր, և ասէր զանձն՝ թէ Քրիստոս իցէ թագաւոր»: (Ղ-ի· ԻԳ· 2:) «եթէ զդա արձակես, չես բարեկամ կայսեր· ամենայն որ որ թագաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր»: (Յ-ղ· ԺԹ· 12:)

Իբրեն դէմ ընդհանրութեան ընդդիմերան ատեն-խօսէ եւ հոմբէ պէս պէտ կենալ· «Եղի սպահապան բերանոյ իմոյ ՚ի հակառակիլ մեղաւորին առաջի իմ· խուլ եղէ և խոնարհեցայ··· խուլ եղէ և ո՛չ բացի զբերան իմ, զի դու արարեր··· Բանադատէին զիս և խրնդրէին զանձն իմ այք խորհէին չար ՚ի վերայ իմ· խօսեցան զանօրէնութիւն, և զնենդութիւն զոր-

եալ ղՅիսուս՝ ածին առ Կայիափա քահանայապետ՝ ուր դպիրքն և ծերք ժողովեալ էին···: Իրրեւ այդ եղեւ, խորհուրդ արարին ամենայն քահանայապետքն և ծերք ժողովրդեանն վասն Յիսուսի՝ սպանանել զնա: Կապեցին զնա, և առին գնացին, և եւտուն ՚ի ձեռս Պոնտացւոյ Պիղատոսի դատաւորի»: (Մ-ր. ԻՋ· 57: ԻԷ· 1· 2:) «կոչեաց Պիղատոս զքահանայապետսն և զիշխանս և զժողովուրդն, և ասէ ցնոսա· ածէք մատուցէք ինձ զայրս զայս··· և զինչս ինչ ո՛չ գտի յառնս յայսմիկ··· Եւ ո՛չ հերովդէս, քանզի եւտու տանել զդա առ նա···» (Ղ-ի· ԻԳ· 13—15:) «Պատահանի եւտուն նմա Հրէայքն· մեք օրէնս ունիմք, և ըստ օրինաց մերոց պարտի մեռանել, զի զանձն իւր Որդի Աստուծոյ արար···» (Յ-ղ· ԺԹ· 4—9: Տե՛ս նաեւ հետեւեալ երկու տողերուն ծանօթութիւնը:)

Իրեն դէմ սուտ վկայներ պիտի ելլէին· «Յարեան ՚ի վերայ իմ վկայք չարեաց, զոր ինչ ոչ գիտէի հարցանէին զիս···: Բացին ՚ի վերայ իմ զբերան իւրեանց, և ասացին այո՛ այո՛ տեսին աչք մեր»: Ա-ղ· ԻՋ· 12: Լ Գ· 11—21:)—կու· «իսկ քահանայապետքն և ամենայն ատեանն խնդրէին սուտ վկայութիւն զՅիսուսէ, զի սպանանիցեն զնա, և ո՛չ գտանէին ՚ի բազմաց սուտ վկայիցն մատուցելոյ: Ետուն մատուցեալ երկու սուտ վկայք···» (Մ-ր. ԻՋ· 59—60:) «իսկ քահանայապետքն և ամենայն ատեանն՝ խնդրէին հակառակ Յիսուսի վկայութիւն ինչ, զի սպանանիցեն զնա, և ո՛չ գտանէին· զի բազում սուտ վկայութիւն վկայէին զնմանէ, և երկուքեան միմեանց՝ ո՛չ էին վկայութիւնքն: Ապ՛ք՝ յարուցեալ վկայէին սուտ զնմանէ, և ասէին, թէ մեք լուաք ՚ի դմանէ զի ասէր, Ես քակեցից զտաճարդ զայդ ձեռագործ, և զերիս աւուրս շինեցից այլ առանց ձեռագործի: Սակայն և այնպէս՝ չէր նման

հանապազ խորհեցան . այլ ես որպէս խուլ պի ո՛չ լսէ , որպէս համր որ ո՛չ բանայ զբերան իւր . եղէ ես մարդ որ ո՛չ լսէ , և ո՛չ գոն խօսք 'ի բերան նորա ։ (Ա-ղ· Լը· 2· 3· 10։ Լէ· 13· 15։)—կ-ա· «եւ 'ի չարաչօսելն նորա 'ի քահանայապետին և 'ի ծերոց , ոչինչ ետ պատասխանի . յայնժամ ասէ ցնա Պիղատոս . ո՞չ լսես՝ որչափ դոքա հակառակ քո վկայեն . և ո՛չ ետ նմա պատասխանի և ո՛չ բան մի, մինչեւ զարմանալ դատաւորին յոյժ» ։ (Մ-ա-ր· ԺԵ· 12—14։)

Յ-ն-ր-ւ պէտ պ-ա-պ-ր-ա-ր ե-ր ն-պ-ր ս-բ-ն-ը ը-ֆ-ը-ա- . «Որպացան զանձն արդարոյ , և զարիւն ամբիծ պարտաւոր առնէին» . (Ա-ղ· Ղ. 21։)—կ-ա· «Ո՞ յանդ իմանեացէ դիս վասն մեղաց» ։ (Ց-վ· Ը· 46։) «Ածէք մատուցէք ինձ զայրս զայս իբրեւ զխոտոր բեցուցիչ ժողովրդեանն . և ահաւասիկ առաջի ձեր դատեցայ , և ընտ ինչ՝ ոչ գտի յառնս յայսմիկ՝ զորոց դուք չարաչօսէքդ զդմանէ . այլ և ո՛չ Հերովդէս , քանզի ետու տանել զդա առ նա . և արդ՝ ոչինչ մահու արժանի է գործեալ դորա . . . ոչինչ ընտ մահու գտի 'ի սմա» . (Ղ-ղ· Ի. 14—22։) «գաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ , դուք գիտասջիք» ։ (Մ-ա-ր· ԻԷ· 24։)

Ս-ա-ի ն-ղ-ր-ն-ն և ա-ֆ-ն-պ-ն-ր-ա- զէ պէտ է-ն-ր· «Բացին 'ի վերայ իմ զբերան իւրեանց , որպէս առիւծ զի մռնչէ և յարիշտակէ . ես որպէս զջուր հեղայ . և ցրուեցան ամենայն ոսկերք իմ, և եղեւ սիրտ իմ որպէս մոմ հալեալ 'ի մէջ որովայնի իմոյ. չորացաւ որպէս խեցւոյ զօրութիւն իմ , լեզու իմ 'ի քիմս իմ կցեցաւ » ։ (Ս-ղ-ս· ԻԱ· 14—16։)—կ-ա· «եւ առեալ ընդ իւր զՊետրոս և զերկուս որդիսն Զեբեդեայ , սկսաւ տրտմել և հոգալ· յայնժամ ասէ ցնոսա . տրտում է ոգի իմ մինչեւ ցմահ » ։ (Մ-ա-ր· ԻՋ· 37—38։) «Ոգիս յօժար է բայց մար-

մինա տկար» ։ (Մ-ր-ւ· ԺԴ· 38։) «եղ ծունր՝ կայր յաղօթս , և ասէր . Հայր՝ եթէ կամիս՝ անցո զբաժակըս զայս յինէն . բայց ո՛չ իմ կամք՝ այլ քոյդ լիցին . և երեւեցաւ նմա հրեշտակ յերկնից՝ և զօրացուցանէր զնա . և էր 'ի տագնապի . և մատոդիւրութեամբ ևս կայր յաղօթս . և հոսէին 'ի նմանէ քրտունք իբրեւ զկայլակս արեան՝ ոլոռն ոլոռն հեղեալ յերկիր» ։ (Ղ-ղ· ԻԲ· 41—44։)

Զ-ր ը-ե էր յ-ն-ն-ն-ւ-ն՝ այլ ո-ր-ի-ն-ե-ր-ա- հ-մ-ր պէտ պ-տ-ժ-ա-ե-ր ա- ը-ր-ը-ա-ե-ր· «Նա զմեզս մեր բառնայ՝ և վասն մեր չարչարի . և մեք համարեցաք զնա 'ի ցաւս և 'ի հարուածս և 'ի չարչարանս իբրեւ յԱստուծոյ . բայց նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց , և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց» ։ (Ե-յ· ԾԳ· 4—5։) — կ-ա· «Զի և Քրիստոս վասն ձեր մեռաւ , և ձեզ եթող օրինակ՝ զկնա երթայցէք հետոց նորա ։ Որ ոչն արար մեղս , և ո՛չ գտաւ նենգութիւն 'ի բերան նորա . որ բամբասեալ՝ և ո՛չ փոխարէն բամբասէր . չարչարեալ՝ և ո՛չ պահէր սպառնալիս . բայց իւրաւամբք մատնէր դատաւորին . որ զմեր մեղսն իւրով մարմնովն վերացոյց 'ի խաչափայտն . . . » (Ա· Պ-ա· Բ· 11—25։ Ե-ր· թ· 28 եւ։)

Ի-ր ը-ր-ն-ց ա- յ-ն-ց ն-ջ պէտ հ-մ-ե-ր-ր է-ր ք-հ-ց- ա-ք- . «Ահա մի 'ի հարուածս , և գիտէ հասանել ցաւոց . . . ։ եւ նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր , իբրեւ ոչխար 'ի սպանդ վարեցաւ , իբրեւ որոջ առաջի կտրչի անմռունչ կայ . այնպէս ո՛չ բանայ զբերան իւր» ։ (Ե-յ· ԾԳ· 3—7։) —կ-ա· «Եւ Յիսուս լուռ կայր (առաջի քահանայապետին . . . և առաջի Պիղատոսին) ոչինչ ետ պատասխանի» ։ (Մ-ա-ր· ԻՋ· 63։ ԻԷ· 12—14։) «Որ բամբասեալ՝ և ո՛չ փոխարէն բամբասէր . չարչարեալ՝ և ո՛չ պահէր սպառնալիս» ։ (Ա· Պ-ա· Բ· 21—25։)

Պ-ե- ձ-ե-ա-ե-ր ա- ա-պ-ա-ե-ր· «Մատուսցէ հար-

կանելեաց զծնօտս իւր · լցցի նախատանօք»։ (Ողբ· Գ· 30։) «*Արդ պաշարեսցի զուստրն ցանգով՝ զի նեղութիւն կացուսցեն ՚ի վերայ ձեր · զաւազանաւ հարցեն զծնօտս ազգաց Իսրայէլի*»։ (Միք· Ե· 1։) «*Զքիվուէնս իմ եւս ՚ի հարուածս, և զծնօտս իմ յապտակս*»։ (Եսայ· Ն· 6։) — կոր· «*եւ ունիցէք սկըսան ձորձ զգլխով արկանել՝ կտրիլ և ասել· մարդարէացո մեզ Քրիստո՛ւ՝ ո՞վ է այն որ եհարն զքեզ · և սպասաւորքն ապտակս հանէին նմա*»։ (Մ-ին· ԺԴ· 65։) *Յայնժամ ա՛ռ Պիղատոս զՅիսուս, և զան եհար · և պինուորացն արարեալ պսակ ՚ի փշոց՝ եդին ՚ի գլուխ նորա, և պղեղսացին նմա հանդերձ ծիրանի · և գային առ նա՝ և ասէին · ա՛զդ լեր արքայ Հրէից · և հանէին նմա ապտակս*։ (Յ-ՀԽ· ԺՔ· 1—3·)

Անոր երեսին պիտի ըմբնէին · «*Զերեսս իմ ո՛չ դարձուցի յամօթոյ ընդ երեսս թքանելոյ*»։ (Եսայ· Ն· 6։) —կոր· «*եւ ունիցէք սկսան թքանել ընդ երեսս նորա ... և ծեծէին զդլուխն եղեգամբ, և թքանէին ընդ երեսս*»։ (Մ-ին· ԺԴ· 65։ ԺԵ· 19 *նմա*։)

Իր բեմտը պիտի սրտաբեր անչտանալ *մարդոցմե*։ «*Անհաւասիկ ՚ի մէտ առաջ մանուկ իմ՝ վերասցի և բարձրասցի և փառաւորեսցի յոյժ · զոր օրինակ զարմացան բազումք ՚ի վերայ քո, այնպէս անչքեացի տեսիլ քո ՚ի մարդկանէ ... ՚Ո՛չ դոյր նորա տեսիլ՝ և ո՛չ փառք · տեսաք մեք զնա՝ և ո՛չ դոյր նորա տեսիլ՝ և ո՛չ դեղեցկութիւն · այլ տեսիլ նորա անարգ՝ նուազեալ քան զամենայն որդւոց մարդկան*»։ (Եսայ· ՃԲ· 13—14· ԾԳ· 2—3։) — կոր· «*Գրեալ է զՔրիստոյ մարդոյ մի բազում ինչ չարչարեսցի և անդամանեսցի ... Զի եցուսցանեն նմա քաղմիթ կարմիր և ծիրանիս, և եդին ՚ի գլուխ նորա պսակ արարեալ ՚ի փշոց ... կատակեցին*»։ (Մ-իկ· Թ· 11· ԺԵ· 17—20։) *Անհաճարհեաց ինա և չէրտիղ էս հանդերձ*

իւրովք զօրականօքն · և այպն արարեալ՝ արկ զնովաւ հանդերձս սպիտակս»։ (Ղ-ին· ԻԳ· 11։) «*եւ բարձեալ էր ինքնին գխաչափայտն ... և ՚ի խաչն խակ հանին զնա · և ընդ նմա երկուս եւս այլս առ ի և անտի, և ՚ի միջի զՅիսուս ...*»։ (Ց-ՀԽ· ԺԹ· 17—33։)

Ձեռքն ու ոտերը պիտի ծակին · «*Փակեցին զձեռս իմ և զոտս իմ, և թուեցին զամենայն ոսկերս իմ, և նոքա հայեցան և տեսին զիս*»։ (Սղ· ԻԱ· 18։) «*Եւ ասացի ցնա · զի՞նչ են վէրքդ այդոքիկ ՚ի մէջ ձեռաց քոց · և ասասցէ, զորս վիրաւորեցայ ՚ի տան սիրելւոյ իմոյ*»։ (Զ-ի· ԺԳ· 6։) — կոր· «*Ահա ժեղայիք · լուարուք զբանս զայսոսիկ · զՅիսուս Նազովրեցի ... մատնեալ ՚ի ձեռս անօրինաց՝ բեւեռեալ ՚ի փայտի սպանիք*»։ (Գ-ծ· Բ· 22—23։) «*Եւ նա (Թովմաս) ասէ ցնոսա · եթէ ո՛չ տեսից ՚ի ձեռս նորա զնչան բեւեռացն, և արկից զմատունս իմ ՚ի տեղիս բեւեռացն · և մխեցից զձեռս իմ՝ ՚ի կողս նորա, ո՛չ հաւատամ · ևս*»։ (Ց-ՀԽ· Ի· 25 *ևս*։)

Անոր հանդերձները խաչահանողք բաժնին պիտի բաժնեն, այլ պատճառանին վրայ վիճակ պիտի ձգեն · «*Բաժանեցին զհանդերձս իմ ՚ի մէջ իւրեանց, և ՚ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին*»։ (Սղ· ԻԱ· 19։)—կոր· «*Իսկ զինուորքն իբրեւ հանին ՚ի խաչ զՅիսուս, առին զհանդերձս նորա՝ և արարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուորի մասն · իսկ զպատմուճանն քանզի էր առանց կարանի ՚ի վերուստ՝ ողջ անկեալ առեղծուին, ասեն ցմիմեանս, մի՛ պատառեսցուք զայդ, այլ արկցուք վիճակս ՚ի վերայ դորա ո՛ւմեւ ելցէ · զի լցցի գիրն ևս*»։ (Ց-ՀԽ· ԺԹ· 23—24։)

Անօքինները հետ պիտի սեղանէ, և այդ անօքինները եղիս հետ պիտի ըմպէին · «*Ի մահ մատնեցաւ անձն նորա, և ընդ անօրէնս համարեցաւ*»։ (Եսայ· ՃԳ· 12։) «*Ի մէջ երկուց գազանացն (կամ կենդանեացն) ծանիս-*

ցիս »։ (Ա՛ք· Գ· 2։) —կ՚ըսէ· եւ ընդ նմա հանին ՚ի խաչ երկուս աւազակս, մի ընդ աջմէ եւ մի ընդ ահեկէ նորա· և լցաւ գիրն «։» (Մ՚րկ· ԺԵ· 27։)

Քո՞ւթէ ու ընչն պէտ ներշնչէին անոր· «Եհուն ՚ի կերակուր ինձ լեղի· և ՚ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ »։ (Սաղմ· ԿԸ· 22։ —կ՚ըսէ· «Եհուն նմա ըմպել գինի ընդ լեղի խառնեալ, և իբրեւ ճաշակեաց, ո՛չ կամէր ըմպել »։ (Մ՚տ՚ր· ԻԷ· 34։) «Ցետ այսորիկ իբրեւ գիտաց Յիսուս եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է, զի կատարեսցի գիրն, ասէ՝ ծարաւի եմ· և անդ կայր աման ինչ՝ լի քացախով· և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ՝ չուրջ եդեալ զնչտկաւ զոտային, մատուցին ՚ի բերան նորա· իբրեւ առ Յիսուս զքացախն հանդերձ լեղւովն՝ ասէ· ամենայն ինչ կատարեալ է »։ (Յ՚ովհ· ԺԹ· 28—32։)

Ծ՚ա՛ր ու ձանձ պէտ ըլլար գինւոյ ՚ի հոգ պաշտօնեից· «Ամենեքեան որ տեսանէին՝ արհամարհէին զնա, խօսէին շրթամբք՝ և շարժէին զգլուխս իւրեանց· յուսացաւ ՚ի Տէր և փրկեացէ զնա, կեցուսցէ զնա զի կամի զնա։ ... Որպէս զի նշաւակ եղէ ես բազմաց ...։ Ամացին թշնամիք իմ ինձ, և ոչք պաշարեցին զանձն իմ, խորհեցան ՚ի միասին և ասացին· Ամուսած եթող զնա, հալածեացուք և հասցուք նմա, զի ո՛չ ոք է որ փրկէ զնա ... Գարձին առ ժամայն ամաչեցեալք, ոչք ասէին ինձ վա՛շ վա՛շ»։ (Ս՚ղ՚ ԻԱ· 8—9։ Հ· 7—11։ ԿԲ· 4։ Ի՚ա՛ 16։ Լ՚Դ։ 25· եւն։)—կ՚ըսէ· «եւ որ անցանէին՝ հայհոյէին զնա· շարժէին զգլուխս իւրեանց, և ասէին· վա՛հ, որ քակէիր զտաճարն և զերիս աւուրս չինէիր զնա· ապրեցո՛ զքեզ, եթէ որդի ես Ամուսծոյ՝ էջ ՚ի խաչէդ· նոյնպէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն և ասէին· զայլս ապրեցոյց, զինքն ո՛չ կարէ ապրեցուցանել· եթէ թագաւոր է Իսրայէլի՝ իջցէ այժմ ՚ի խաչէդ՝ և հաւատասցուք զմա-

եթէ յուսացաւ Ամուսած, փրկեսցէ այժմ զդա՝ եթէ կամի զդա· քանզի ասաց՝ եթէ Ամուսծոյ Որդի եմ· զնոյն և աւազակքն՝ որ խաչեալ էին ընդ նմա, նախատէին զնա»։ (Մ՚տ՚ր· ԻԷ· 38—44։)

Ամո՞ւթ եղեւ պէտ Յիսուս· Ամուսած Ամուսած իմ նայեաց առ իս, ընդէ՞ր թողեր զիս· հեռի եղեր ՚ի փրկութենէ իմմէ՝ վասն բանից յանցանաց իմոց· ... Ասացին թշնամիք իմ ինձ, և ոչք պաշարեցին զանձն իմ, խորհեցան ՚ի միասին և ասացին· Ամուսած եթող զնա, հալածեացուք և հասցուք նմա, զի ո՛չ ոք է որ փրկէ զնա»։ (Սաղմ· ԻՁ· 2։ Հ· 10—11։) —կ՚ըսէ· «եւ զինն ժամուն գոչեաց Յիսուս ՚ի ձայն մեծ՝ և ասէ· Էլի, էլի, լամա սաբաքթանի· այսինքն է՝ Ամուսա՛ծ իմ, Ամուսա՛ծ իմ, ընդէ՞ր թողեր զիս»։ (Մ՚տ՚ր· ԻԷ· 46։ Տե՛ս Նախորդ մեկնութիւնն կատարումը·)

Բաւար պղծականներն ու ծանօթները պէտ հեռանային էրեն· Բարեկամները մօտ պէտ ըլլային·) Հայր իմ և մայր իմ թողին զիս, և Տէր ընկալաւ զիս։ ... Քան զամենայն թշնամիս իմ եղէ ես նախատս զրացեաց իմոց՝ յոյժ ահ և երկիւղ ծանօթից իմոց· Ամենեքեան որ տեսանէին զիս, արտաքս փախչէին ինէն ...։ Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին, և մերձաւորք իմ հեռի եղէն ինէն ...։ Հեռի արարեր ինէն զծանօթս իմ և զծանօթս իմ վասն թշուառութեան իմոյ»։ (Ս՚ղ՚ ԻՁ· 10։ Լ· 12—13։ ԼԷ· 12։ ՁԷ· 19։)—կ՚ըսէ· «Զայնժամ թողին զնա աշակերտքն ամենեքին և փախեան»։ (Մ՚րկ՚ ԺԴ· 50։) «Կային և ամենայն ծանօթքն նորա ՚ի հեռաստանէ, և կանայք որ եկեալ էին զհետ նորա ՚ի Գալիլէէ՝ և տեսանէին զայն»։ (Ղ՚ած՚ ԻԳ· 49։

Բնա՞ւ դէմ-դէմ ըլլալ չէ՞ր ուզեր· «Ակն ունէի թէ ո՛ տրտմեսցի ընդ իս, և ոչ ոք էր· և մխիթարիչ

ոք ո՛չ գոան ։ ։ ։ Մի՛ 'ի բացեայ առներ յինէն, զի նեղութիւնք մերձեալ են, և ո՛չ ոք է որ օգնէ ինձ »։ (Ա-ել. ԿԸ. 21։ ԻԱ. 12։)—կոպ. «Ահա եկեաց ժամ, և եկեալ իսկ է. զի ցրուեսջիք յիւրաքանչիւր տեղիս, և զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է »։ (Յ-ՀՌ. ԺԶ. 32։)

Զքնութը ընտրութեան և սպանութեան համար ասէ՝ քրիստոսին և հրէութեին պէտ ընէր ատ Հոյտ. «Ասացին. Եկա՛յք խորհեացուք խորհուրդ 'ի վերայ Երեմիայի. զի ո՛չ կորնչին օրէնք 'ի քահանայէ, և խորհուրդ յիմաստնոց, և բան 'ի մարգարէէ. եկա՛յք և հարցուք զնա լեզուաւ, և ո՛չ լսիցուք զամենայն բանս նորա։ Լո՛ւր ինձ Տէր, և անսա՛ բարբառոյ իրաւանց իմոց, իցէ՞ թէ հատուցանիցի չար փոխանակ բարւոյ, զի խորհեցան 'ի միասին բանս զանձնել իմիք, և զտանջանս իւրեանց թագուցին. յո՛ւշ լիցի քեզ 'ի կալն իմում ատացի զո, խօսել վասն նոցա բարութիւն, դարձուցանել ղբարկութիւն 'ի նոցանէ։ » (Երե. ԺԸ. 18. 20։) «Նա զնեղս բազմաց վերացոյց՝ և վասն անօրէնութեանց նոցա մատնեցաւ։ » (ըստ ԵԲԲ. «Եւ վասն յանցուցելոց մինչև դեաց »։ Եսայ. ԾԳ. 12։) — կոպ. «Իրրեւ չոգան 'ի տեղին՝ կոչեցեալ Գագաթն, անդ հանին զնա 'ի խաչ. և զչարագործսն՝ զմին ընդ աջմէ՝ և զմին ընդ ձախմէ խաչեցին։ Եւ Յիսուս ասէ. Հա՛յր, թո՛ղ դոցա՝ զի ո՛չ գիտեն զինչ գործեն »։ (Ղ-ւկ. ԻԳ. 33—34։)

Երէէ էջ էլ ոչխարներ՝ մըտոց կենաց կէս պատէն ըէ պէտ ապերէ։ «Ասուրք իմ՛ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցանաքեցայ։ ։ ։ Չնուագուխիւն ասուրց իմոց ասա ինձ, և մի՛ հաներ զիս 'ի կէս ասուրց իմոց։ ։ ։ Ընտազ արարեր զասուրս ժառանգակաց նորա, և հեղեր զնովաւ զամօթ»։ (Սաղ. ՃԱ. 12. 24—26։ ՀՀ. 46։) — կոպ. «Յիսուն ամ չեւ ես

է քո, և զԱբրահա՞մ տեսեր»։ (Յ-ՀՌ. Ը. 57։) «Եւ ընդ Յիսուսի մկրտիլն՝ և կալ յաղօթս ։ ։ ։ ինքն Յիսուս էր ասաց իբրեւ երեանիցի»։ (Ղ-ւկ. Գ. 21—23։) Իբր երիք տարի քարոզութենէ յետոյ՝ վարեցաւ 'ի մահ անարգանաց յազգէն Հրէից։

Ինչպէս էր կամէը պատրաստ պէտ մատուցանէր էր անյ, լեռը՝ էուչի վրայ։ «Պատրաստ արարեր առաջի իմ զտեղան, ակն յանդիման նեղչաց իմոց։ ։ ։ Առաքեա՛ Տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեացեն ինձ և հանցեն զիս 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո։ Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։ ։ ։ Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. խոստովան եղէց անուան քումմ, Տէր, զի բարի է։ ։ ։ Ո՞վ ելցէ 'ի լեառն Տեառն, կամ ո՞վ կացցէ 'ի տեղւոջ սրբութեան նորա։ Որ սուրբ է ձեռօք և ամիծ սրտիւ ։ ։ ։ »։ (Ա-ղ. ԻԲ. 5։ ԽԲ. 3—4։ ԾԳ. 8։ ԻԳ. 3։) — կոպ. «Ո՛չ զի բազում անգամ մատուցանիցէ զանձն պատարագ՝ որպէս քահանայապետն որ մտանէր 'ի Սրբութիւն Սրբութեանցն ամէ ամի արեամբ օտարաց. ապա թէ ոչ՝ պարտ էր նմա բազում անգամ չարչարել 'ի սկզբանէ աշխարհի. բայց արդ՝ ա՛ւասիկ մինգամ 'ի կատարած յաւիտեանց՝ յանարգութիւն մեղաց իւրով պատարագաւն յայտնեալ է ։ ։ ։ Սրինն Քրիստոսի, որ 'ի ձեռն Հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն պատարագ Աստուծոյ, սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց»։ (ԵԲԲ. Թ. 25—26. 14։ Տեսնաս հետեւեալ մարգարէութեան կատարումը։)

Իւր հոգին Հօրը պէտ յանձնէր ու էր կամէը պէտ ունէր։ «Դու ես պաշտպան իմ Տէր, և 'ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ»։ (Ա-ղ. Լ. 6։) «Վասն այնորիկ նա ժառանգեսցէ զբազումս, և զօրաւորս հզօրաց բաշխեսցէ. փոխանակ զի 'ի մահ մատնեցաւ անձն

նորա»· (ըստ եբր· «փոխանակ պի՛ի մահ մատնեաց զանձն իւր»: եւս· ՃԳ· 12:)— կոպ· «վասն այնորիկ սիրէ զիս Հայր իմ· զի ես դնեմ զանձն իմ, զի միւսանգամ առից զնա: Ո՛չ ոք հանէ զնա յինէն· այլ ես դնեմ զնա անձամբ իմով· իշխանութիւն ունիմ դնել զնա, և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա· զայս պատուէր առի՛ ի Հօրէ իմմէ»: (ՅՀ· ժ· 17—18:) «եւ կարդաց Ցիսուս՝ ի ձայն մեծ՝ և ասէ· Հա՛յր, ի ձեռս քո աւանդեմ զոգի իմ· զայս իբրեւ ասաց՝ եհան զոգի»: (Ղ—ի· ԻԳ· 46:)

Ի մահուան պէտ ազաչէր· զոնէ ծննդեան օրն պէտ խաւարէր կէս օրին, երկիրը պէտ դողար, էրկնաւոն գէմ նորին պէտ ծռիէր որնաս լայր· «ժամանեցին ինձ ոդոգայթք մահու· ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, և առ Աստուած իմ աղաղակեցի· լուաւ ինձ ի տաճարէ սրբոյ իւրմէ ձայնի աղօթից իմոց, և աղաղակ իմ առաջի նորա մտցէ յականջս նորա: Խռովեցաւ և դողաց երկիր՝ և հիմունք լերանց սասանեցան և խռովեցան՝ զի բարկացաւ ի վերայ նոցա Աստուած»: (Ա—ր· ԺԷ· 6—8:) «եւ եղիցի յաւուր յայնմիկ ասէ Տէր Տէր՝ մտցէ արեգակն ի միջօրէի, և խաւարեսցի յերկիրի լոյս ի տուէ· և դարձուցից ի սուգ զտօնս ձեր· · · և արարից նմա իբրեւ սուգ սիրելոյ, և որոց ընդ նմայն իցեն իբրեւ օր ցաւոց»: (Ամ—ս· Ը· 9—10:) «Արեգակն դարձցի ի խաւար, և լուսին յարիւն, ևս»: (ՅՔ· Բ· 30:) «եւ եկեսցէ հասցէ Տէր Աստուած իմ և ամենայն սուրբք ընդ նմա, և եղիցի յաւուր յայնմիկ՝ ոչ եղիցի լոյս, և ցուրտ և պարղ՝ եղիցի օր մի, և օրն այն յայտնի Տեառն, ոչ տիւ իցէ և ոչ գիշեր· և ընդ երեկս եղիցի լոյս»: (Զ—ա· ԺԴ· 6—7:)— կոպ· «եւ էր իբրեւ վեցերորդ ժամ· և խաւար եղեւ ի վերայ ամենայն երկրի մինչեւ ցինն ժամ· խաւարեցաւ ա-

րեգակն»: (Ղ—ի· ԻԲ· 45:) «եւ գինն ժամուն գոչեաց Ցիսուս ի ձայն մեծ, և ասէ· էլի, էլի· · · և Ցիսուս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ, և արձակեաց զոգին· և ահա վարագոյր տաճարին ցեղաւ յերկուս, ի վերուստ մինչեւ ի վայր, և երկիր շարժեցաւ, և վէմք պատառեցան և գերեզմանք բացան· · ·»: (Մ—ռ· ԻԷ· 45—53:)

Անոր ուխտնէրէն և օ՛ր ալ պէտ կորսուէր, որ հաստատէ ըլար պէտ ըսէր· «եւ ոսկր մի՛ բեկանիցեն ի նմանէ»: (Յ—ո· Ժ· 12: եբ ԺԲ· 47:) «Բազում նեղութիւնք են արդարոյ, յամենայնէ փրկէ զնա Տէր, և պահէ զամենայն ոսկերս նորա, և մի՛ ի նոցանէ ո՛չ փշրեսցի»: (ըստ եբր· Ս—ղ· Լ· 20—21:) «փրկեա՛ ի սրոյ զանձն իմ, և ի ձեռաց շանց զմիաւորութիւն իմ: · · · Ի սրոյ չարէ փրկեա՛ զիս՝ և ապրեցո՛ զիս և ի ձեռաց որդւոց օտարաց»: (Ս—ղ· ԻԱ· 22: ՃՀԳ· 10—11:)— կոպ· «Իբրեւ եկին առ Ցիսուս, և տեսին զի այն ինչ մեռեալ էր, ո՛չ խորտակեցին գբարձս նորա· · · Այս եղեւ զի լցցի գիրն, եթէ ոսկր նորա մի՛ փշրեսցի»: (ՅՀ· ԺՔ· ՅՅ· ՅԸ:)

Անկից պէտ խոցուէր· «եւ հայեսցին առ իս՝ յոր խոցեցինն, և կոծեսցին ի վերայ նորա կոծ՝ իբրեւ ի վերայ սիրելւոյ ևս»: (Զ—ա· ԺԲ· 10:) — կոպ· «Մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նորա, և վաղվաղակի եկ արիւն և ջուր· · ·: Այս եղեւ, զի լցցի գիրն· · · եթէ հայեսցին ի նա յոր խոցեցինն»: (ՅՀ· ԺՔ· ՅԴ—ՅՇ:)

Թէ՛ ոչխարչիներու (ու ասալինէրու) հետ քնելու պէտ գոպտպոքտուէր, քայց ի հոգւոյն հետ պէտ ըլար: «եւ տայ զչարս փոխանակ գերեզմանի նորա, և զմեծամեծս փոխանակ մահու նորա»· (ըստ եբր· «եւտու գերեզման նորա ընդ անպարիշաս, այլ իբրեւ մեռաւ՝ եղեւ ընդ մեծատան»· եւս· ՃԳ· 9:) — կոպ· «եւ իբրեւ երեկոյ

եղեւ, եկն այր մի մեծատուն յԱրիմաթիայ, որում անուն էր Յովսէփ, որ աշակերտեցաւ իսկ Յիսուսի· սա մատուցեալ առ Պիղատոս խնդրեաց զմարմինն Յիսուսի· յայնժամ հրամայեաց Պիղատոս տալ զմարմինն· և առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւովք, և եդ ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ի վիմի· և թաւալեցուցեալ կաւիարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝ գնաց» : (Մատթ· ԻԷ· 57· 60·)

Վէրտռլեռլ ֆերեզմն պէտ ըրռեր, պռ ի Գռեռը ոզռ՝ ռրնռն պէտ ըռռը : « ես ննջեմ և սիրտ իմ արթուն կայ» : (երգ· ե· 2·) «եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, և ի մեռեալս ազատ, որպէս վիրաւորս, որ ննջեն ի գերեզմանի· · · · : եղին զիս ի գբի ներքնումն, ի խաւարի և ի ստուերս մահու» : (Սաղ· Հէ· 6· 7·) — կոտ· «Որպէս էր Յովնան ի փոր կիտին գերիս տիւս և գերիս գիշերս, նոյնպէս եղիցի և Որդի մարդոյ ի սիրտ երկրի» : (Մատթ· ԺԲ· 40·) «Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի, զոր և ես ընկալայ, թէ և Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց ըստ գրոց, և զի թաղեցաւ» : (Ա· կորնթ· ԺԵ· 3·) Ռռլ «ո՛չ էր հնար ընկռնել նիռ ի նմանէ· Դաւիթ իսկ ասէ զնմանէ· յառաջատես առեալն զՏէր առաջի իմ յաւիտեան ժամ, զի էր ընդ աջմէ իմում, զի մի՛ սասանեցայց· վասն այսորիկ ուրախ եղեւ սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ· և ևս և մարմին իմ բնակեսցի յուսով» : (Գործ· Բ· 24—26·)

Անոր հարցինը պռխանոռթիւն ընէտ պեռնէր· ֆերեզ հանին ռչ ընէտ ձառ· «Զի ո՛չ թողցես զանձն իմ ի դժոխս, և ո՛չ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն· · · · Բայց սակայն Աստուած փրկեսցէ զանձն իմ ի ձեռաց դժոխոց, յորժամ ընդունիցէ զիս· · · · Զի՛նչ օգուտ է քեզ յարենել իմմէ, թէ իջանեմ ես յապականութիւն· · · · Ուրախութիւն ցուցեր ինձ ներկութիւն քոյում և չարչարանս,

դարձեալ միսիթարեցեր զիս, և ի խորոց անդընդոց երկրէ հաներ զիս» : (Սաղ· ԺԶ· 10· ԽԹ· 10· ԽԸ· 16· Հ· 20·)—կոտ· «Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոստումն որ առ հարսն եղեալ էր· զի զնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա՝ յարուցեալ զՅիսուս· որպէս և ի Սաղմոսին գրեալէ՝ յերկրորդում· Որդի ես դու, ես այսօր ծնայ զքեզ: Եւ զի յարոյց զնա ի մեռելոց, և ո՛չ եւս դառնալոց է յապականութիւն· · · զոր Աստուած յարոյց, ո՛չ եռաս զապականութիւն» : (Գործ· ԺԳ· 32—37·)

Յոռնիան պէտ ռռնէր· «Յարիցէ Աստուած և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա· · · · ես նընջեցի և ի քուն եղէ, զարթեայ· · · · Տէր Աստուած իմ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս· Տէ՛ր, հաներ ի դժոխոց զանձն իմ, փրկեցեր զիս յայնցանէ՝ որ իջանեն ի գոբ» : (Սաղ· կէ· 2· Գ· 6· ԻԹ· 3—4·) — կոտ· «Զի՛ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս· չէ՛ աստ, այլ յարեաւ» : (Ղռկ· ԻԴ· 6· ևռ·)

Երե+ օրռռն ռչ, կռմ երէ՛կ օրը· «Ինա ես կհար զմեզ՝ և նոյն բժշկեսցէ· վիրաւորեաց՝ և պատեսցէ զմեզ· և ողջացուսցէ զմեզ՝ յետ երկուց աւուրց· և յաւուրն երրորդի յարիցուք և հեցցուք առաջի նորա» : (Ովսէ· Ջ· 2—3· տե՛ս Ես Մատթ· ԺԲ· 40·) — կոտ· «Ցիսուս որ ի Նազարէթ, զոր օ՛ծն Աստուած Հոգւով սրբով և զօրութեամբ· · · · սպանին կախեալ զփայտէ, զնա Աստուած յարոյց յերրորդ աւուր ևս» : (Գործ· Ժ· 38—41·)

Աստուռնց կռնռխ· Ջարթի՛ք փառք իմ զարթիք սաղմոսիք և օրհնութեամբ· և ես զարթեայց առաւօտուց· · · · Ընդ երեկոյս (1) հանգիսցին լալիք,

(1) Այս խօսքը կը մեկնուի էջ 120 ներքոտ գտնուած ծանօթութեան մէջ տեսնել։

առաւօտու եղիցի ուրախութիւն» (Ա-ղ. ԺԶ. 9։ Իթ. 6։ ՃԷ. 3։ ՃԽԹ. 8։ ՁԷ. 14։) — կ-պ. Բայց ՚ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ առաւօտն, եկին ՚ի գերեզմանն . . . և գտին զվէմն թաւալեցուցեալ գերեզմանէ անտի, և մտեալ ՚ի ներքս՝ ո՛չ գտին զմարմին Տեառն Ցիսուսի . . . Ասեն ցնոսա (Հրեշտակքն) . զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս . չէ՛ աստ . այլ յարեաւ» (Ղ-ի. ԻԴ. 1—6։)

Եւկինի պիտի համբառնար . «Հաստարձակ Աստուած օրհնութեամբ, և Տէր մեր ձայնիւ փողոյ . . . և ՚ի բարձունս գերեաց զգերութիւն» (Ա-ղ. Խէ. 6։ կէ. 19։) — կ-պ. «և ինքն Տէր Ցիսուս յետ խօսելոյն ընդ նոսա՝ համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր» (Մ-րկ. ԺԶ. 18։)

Հոր Ա-պ-ծոյ ՚ի կողմէ՝ Բ-հանայութիւն պիտի ընէր . «Այսպէս ասէ Տէր Ամենակալ . ահա այր՝ և ծագումն անուն նորա . և ՚ի ներքոյ իւրմէ ծագեսցէ, և շինեսցէ զտուն Տեառն . և նա առցէ զքաջութիւն . նստցի և տիրեսցէ ՚ի վերայ աթոռոյ իւրոյ, և եղիցի քահանայ ընդ աջմէ նորա» (Զ-ա. Զ. 12—13։) — կ-պ. «Քրիստոս Ցիսուս՝ որ մեռաւն, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է, և է ընդ աջմէ Աստուծոյ, որ և բարեխօս իսկ է վասն մեր» (Հ-ո. Ը. 34։) «իսկ սա՝ վասն յաւիտեան կեցոյ՝ առանց անցանելոյ ունի զքահանայութիւնն . ուստի և կենդանի առնել համօրէն կարող է՝ զմատուցեալսն նովաւ առ Աստուած . քանզի միշտ կենդանի է՝ լինել բարեխօս վասն նոցա» (ԵԲ. Է. 24—25։)

Գէթսեմանէ պարտէզին մէջ Մովսիսական Նահէտ և զհետ պիտի վերնայէր, պատրաստելով Աստուծոյ ժողովուրդ մը Տիրոջ համար։ (Ղ-ի. Ա. 17։ Բ. 41։ Գ. 13։ Ե. 1—11։ Զ. 12—16։ Է. 37։ Ը. 1։ Թ. 1—6։ Ժ. 1։ ԺԲ. 1—6։ ԺԳ. 1—3։ ԺԴ. 26—31։ ԺԵ. 1—7։ ԺԶ. 7—8։ ԺԷ. 1—5։ ԺԸ. 1—3։ ԺԹ. 1—2։ ԻԲ. 1—2։ ԻԳ. 1—2։ ԻԴ. 1—2։ ԻԵ. 1—2։ ԻԶ. 1—2։ ԻԷ. 1—2։ ԻԸ. 1—2։ ԻԹ. 1—2։ ԼԲ. 1—2։ ԼԳ. 1—2։ ԼԴ. 1—2։ ԼԵ. 1—2։ ԼԶ. 1—2։ ԼԷ. 1—2։ ԼԸ. 1—2։ ԼԹ. 1—2։ ՂԲ. 1—2։ ՂԳ. 1—2։ ՂԴ. 1—2։ ՂԵ. 1—2։ ՂԶ. 1—2։ ՂԷ. 1—2։ ՂԸ. 1—2։ ՂԹ. 1—2։ ՃԲ. 1—2։ ՃԳ. 1—2։ ՃԴ. 1—2։ ՃԵ. 1—2։ ՃԶ. 1—2։ ՃԷ. 1—2։ ՃԸ. 1—2։ ՃԹ. 1—2։ ՄԲ. 1—2։ ՄԳ. 1—2։ ՄԴ. 1—2։ ՄԵ. 1—2։ ՄԶ. 1—2։ ՄԷ. 1—2։ ՄԸ. 1—2։ ՄԹ. 1—2։ ՆԲ. 1—2։ ՆԳ. 1—2։ ՆԴ. 1—2։ ՆԵ. 1—2։ ՆԶ. 1—2։ ՆԷ. 1—2։ ՆԸ. 1—2։ ՆԹ. 1—2։ ՇԲ. 1—2։ ՇԳ. 1—2։ ՇԴ. 1—2։ ՇԵ. 1—2։ ՇԶ. 1—2։ ՇԷ. 1—2։ ՇԸ. 1—2։ ՇԹ. 1—2։ ՈԲ. 1—2։ ՈԳ. 1—2։ ՈԴ. 1—2։ ՈԵ. 1—2։ ՈԶ. 1—2։ ՈԷ. 1—2։ ՈԸ. 1—2։ ՈԹ. 1—2։ ՉԲ. 1—2։ ՉԳ. 1—2։ ՉԴ. 1—2։ ՉԵ. 1—2։ ՉԶ. 1—2։ ՉԷ. 1—2։ ՉԸ. 1—2։ ՉԹ. 1—2։ ՊԲ. 1—2։ ՊԳ. 1—2։ ՊԴ. 1—2։ ՊԵ. 1—2։ ՊԶ. 1—2։ ՊԷ. 1—2։ ՊԸ. 1—2։ ՊԹ. 1—2։ ՋԲ. 1—2։ ՋԳ. 1—2։ ՋԴ. 1—2։ ՋԵ. 1—2։ ՋԶ. 1—2։ ՋԷ. 1—2։ ՋԸ. 1—2։ ՋԹ. 1—2։ ՌԲ. 1—2։ ՌԳ. 1—2։ ՌԴ. 1—2։ ՌԵ. 1—2։ ՌԶ. 1—2։ ՌԷ. 1—2։ ՌԸ. 1—2։ ՌԹ. 1—2։ ՍԲ. 1—2։ ՍԳ. 1—2։ ՍԴ. 1—2։ ՍԵ. 1—2։ ՍԶ. 1—2։ ՍԷ. 1—2։ ՍԸ. 1—2։ ՍԹ. 1—2։ ՏԲ. 1—2։ ՏԳ. 1—2։ ՏԴ. 1—2։ ՏԵ. 1—2։ ՏԶ. 1—2։ ՏԷ. 1—2։ ՏԸ. 1—2։ ՏԹ. 1—2։ ՐԲ. 1—2։ ՐԳ. 1—2։ ՐԴ. 1—2։ ՐԵ. 1—2։ ՐԶ. 1—2։ ՐԷ. 1—2։ ՐԸ. 1—2։ ՐԹ. 1—2։ ՑԲ. 1—2։ ՑԳ. 1—2։ ՑԴ. 1—2։ ՑԵ. 1—2։ ՑԶ. 1—2։ ՑԷ. 1—2։ ՑԸ. 1—2։ ՑԹ. 1—2։ ՒԲ. 1—2։ ՒԳ. 1—2։ ՒԴ. 1—2։ ՒԵ. 1—2։ ՒԶ. 1—2։ ՒԷ. 1—2։ ՒԸ. 1—2։ ՒԹ. 1—2։ ՓԲ. 1—2։ ՓԳ. 1—2։ ՓԴ. 1—2։ ՓԵ. 1—2։ ՓԶ. 1—2։ ՓԷ. 1—2։ ՓԸ. 1—2։ ՓԹ. 1—2։ ՔԲ. 1—2։ ՔԳ. 1—2։ ՔԴ. 1—2։ ՔԵ. 1—2։ ՔԶ. 1—2։ ՔԷ. 1—2։ ՔԸ. 1—2։ ՔԹ. 1—2։ ևայլն։)

այսինքն երկու իրիկուն՝ երկու գիշեր . ուրբաթ իրիկունէ առտ , լուսէ պիտի ըլլար մինչեւ շաբաթ գիշեր , յորում յարեաւ Տէրն վաղ քաջ ընդ առաւօտն և եղեւ ուրախութիւն։

կանխենէ . «եւ յետ վաթսուն և երկուց եօթնեւորդաց , բարձցի օծութիւնն , (ըստ եբր. «հատցի Օծեալն».) . . . եօթներորդ մի և կէս եօթներորդի դադարեցուսցէ զսեղանս և զպատարագս . . . եօթներորդ մի և կէս եօթներորդի բարձցին զոհք և նուէրք . և ՚ի վերայ տաճարին պղծութիւն աւերածոյն կացցէ . և մինչեւ ՚ի վախճան ժամանակի կատարած տացի ՚ի վերայ աւերածին» : (Դ-ան. Թ. 26—27։) — կատարուեցաւ լիովին ՚ի ձեռն Տիտոսի հիմն ՚ի վեր տապալելով և գրեթէ արօրադրուելով տաճարը , որով սեղաններն ու զոհերը վերցան մինչեւ ցայսօր , և անկանգնելի ու աննորոգելի կան ու պիտի մնան մինչեւ ՚ի յաւիտեան : (Տե՛ս հեթեւ Հոռոմացին ԹՂ. Գ. Բ-ած. Ա։)

Արժան կը համարինք յաւելուլ հոս Սողոմոնի իմաստութեան գրոց մէջ մէկ երկար մարգարէութիւնը Ցիսուսի Քրիստոսի մնօրէնութեանց և անհաւատ Հրէից վրայ , զոր ընթերցողը աւետարանական պատմութիւնը կարդալու պէս ըլլալուն՝ ալ Աւետարանէն անոր կատարման վկայութիւնները յառաջ չբերինք :

«Դարանակալ լիցուք Արդարոյն՝ զի դժպհի եղեւ մեզ . և հակառակ կայ գործոց մերոց . և նախատինս դնէ մեզ զյանցանս օրինացն , և բամբասէ զմեղօք մանկութեան մերոց . խոստանայ ունել զգիտութիւն Աստուծոյ , և Որդի Տեառն զանձն իւր անուանէ . և եղեւ ՚ի յանդիմանութիւն մտաց մերոց : Ծանր է մեզ և տեսանելն զնա . զի անման են այլոց կեանք նորա՝ և այլազգի շաւիղք նորա : Ի գարշութիւն համարեցաք նմա . և խորշի ՚ի ճանապարհաց մերոց՝ իբրեւ ՚ի պղծութեանց . երանէ զվախճան արդարոց , և հպարտացեալ՝ կոչէ Հայր զԱստուած : Տեսցո՛ւք թէ ճշմարի՞տ իցէն բանք նորա . և փորձեսցուք զվախճան նորա : Եթէ իցէ

արդարեւ Որդի Աստուծոյ՝ պաշտպանեսցէ նմա. և փրկեսցէ զնա Աստուած ՚ի ձեռաց հակառակորդաց: Թշնամանօք և դանիւք խոչտանգեսցուք զնա եթէ մինիցի՞ այցելութիւն նմա. զի գչատի առցուք ժինգութեան նորա, և խելառնուա լիցուք անոխակալութեան նորա: Մահու խայտառակութեան դատեսցուք զնա. եթէ լինիցի՞ այցելութիւն ՚ի բանից իւրոց: Զայս խորհեցան և խաբեցան. զի կուրացոյց զնոսա չարութիւն իւրեանց. և ո՛չ ծանեան զխորհուրդս Աստուծոյ, և ո՛չ վարձուց ակնկալան սրբութեան . . . : Զի հաճոյ եղեալ Աստուծոյ սիրեցաւ, և կենդանւոյն ՚ի միջոյ մեղաւորաց փոխեցաւ . . . կատարեալ ՚ի սակաւուն եղից ժամանակս երկայնս. զի ցանկալի էր Ցեսուն անձն նորա. վասն այնորիկ տագնապեցաւ ՚ի միջոյ չարեաց: Իսկ ժողովուրդք տեսին և ո՛չ իմացան. և ո՛չ եդին այսպիսի ինչ . . . զի տեսցեն զվախճան իմաստնոյ, և ո՛չ իմացեն՝ զինչ խորհեցաւ վասն նորա և առ իմ՞ զգուշացաւ նմա Տէր. տեսցեն և անպատեսցեն զնա, այլ զնոքօք Տէր ծիծաղեսցի: Եւ եղիցին յետ այնորիկ ՚ի կործանումն անարգութեան և ՚ի թշնամանս՝ ընդ մեռեալսն յաւիտենից . . . Ցայնժամ կացցէ Արդարն բազում հանդիսակութեամբ դէպ ընդդէմ նեղչաց իւրոց. և որոց անպատուէին զվաստակս նորա, տեսեալ զնա՝ խռովեսցին անհնարին երկիւղիւ, և զարհուրեսցին ՚ի վերայ սքանչելի փրկութեան նորա: Եւ զղջասցին ՚ի միտս իւրեանց. և առ նեղութեան անձանց յոգւոյ հանցեն և ասասցեն. այս այն այր է զոր երբեմն մեք ծաղր առնէաք, և յաւուրս Նախատանաց. մեք անմիտք զվարս դորա մոլորութիւն համարէաք՝ և զվախճան դորա անարգութիւն . . . : » (Իմաստ. Բ. 12—23: Դ. 10—15: Ե. 1—5:)

ՀԱՏՈՒԱԾ Բ.

Մ-ՐԴԵԼ-Լ-Ն Ա-ՈՒ-Ա-Ծ-Ո-Յ

ՊՐԱԿ Ա.

Խորհուրդ Մարդեղութեան

Քրիստոսի մարդեղութեան խորհուրդը ըսելով կ'իմանամք Որդւոյն Աստուծոյ (Երրորդութեան երից անձանց միոյն) մարդկային մարմին՝ մարդկային բնութիւն առնելով՝ կարեօք և նմանութեամբ մեզի պէս մարդ ըլլալը, որուն գաղանիքը մարդկային հասուցութենէն վեր ըլլալով Աստուածային իմաստութեան մէջ պահուած է:

Այլ սակայն՝ Աստուածային բնութեան մարդկային բնութեան հետ միաւորելու եղանակը արդարև անհասանելի է մեզ, բայց իրողութիւնը խելքի և տրքի դէմ չէ՛. և ոչ միայն մարդոյն բանականութիւնը գոհ ընելու չափ վկայութիւն և ապացուցութիւն ունի: Աստուածային բնութեան մարդկային բնութեան հետ միաւորելու եղանակին գաղտնեացը չափ անհասանելի են մեզ մարդկային հոգւոյ մարդկային մարմնոյ հետ միաւորութեան գաղտնիքը. և սակայն մեր անձին գոյութեան վրայ ունեցած փորձառական գիտակցութիւնիս՝ ապացուցած ճշմարտութիւն մ'է:

Հաւատոյ հանգանակը զոր ամեն Քրիստոնեայ պարտի ուսանիլ, Քրիստոսի մարդեղութեան վրայ ասոնք կ'ըսէ. «Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւոյն Սրբով: Որով էառ մարմին՝ հոգի

և միտ, և զամենայն որ ինչ է՝ ի մարդ, ճչմարտապէս և ո՛չ կարծեօք. ևն»: — Ասոնցմէ կ՛ուսանինք որ՝ Որդւոյն Աստուծոյ Աստուածային անձը՝ Ս. Կոյս Մարիամէն մարմին առաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալապէս. ք՝ մարդկային բնութիւնն ամեն ի՛նչ բաներ որ ունի՝ մարմին, հոգի, միտք, կամք ևն, ամենքն ալ առաւ ճչմարտապէս, ու չէ՛ թէ կարծեօք կամ երեւմամբ. և մարդկային բնութիւնը իւր Աստուածային բնութեանը հետ միաւորելով անխառն և անշփոթ միաւորութեամբ, կ՛ըսուի մէկ Քրիստոս, մէկ Որդի Աստուծոյ, կամ՝ թէ որ կրնայ ըսուիլ ուղղափառապէս՝ մէկ Աստուածամարդ. ուստի՝ ի Քրիստոս՝ թէ՛եւ միմիայն անձ կը դաւանիմք Աստուածախառն մարմնով, բայց միանգամայն՝ ի մի և՛ ի նոյն անձին Քրիստոսի երկու բնութիւնք, երկու կամք կը խոստովանիմք. Աստուածային և մարդկային. չէ թէ միմեանց ներհակ կամ հակառակ, այլ աքանչելի խառնմամբ միացեալ, անխառն և անբաժանելի. և վասն որոյ ան նոյն մի անձին վրայ կը գրուցեմք ճչմարտապէս անոր թէ՛ Աստուածային ստորոգելիքներն ու թէ՛ մարդկային յատկութիւնները: Անխտրաբար կը գրուցուի ան նոյն Աստուածային անձին համար՝ որ մարմին առած էր, «Որդին Աստուծոյ» — «Տէր փառաց» — «Լոյս փառաց և նկարագիր էութեան նորա» — «Որդին մարդոյ՝ որ էն յերկինս» — «Եա և հայր իմ մի եւք» — «Հայր յիս է և ես ի Հայր» — «Եմ ի Հօրէ և եկի յաշխարհս» — «Յառաջ քան զինեալն Աբրահամու եմ ես» — «ՉՏէրն փառաց ո՛չ ի խաչ հանէին» — «Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ՝ որ է Օծեալ Տէր» — «Որդին Աստուծոյ ծնաւ» — «Աստուած խաչեցաւ» — «Աստուած մեռաւ, թաղուեցաւ». և Անոր արեան համար կ՛ըսուի «Արիւն Աստուծոյ» ևն, ևն, ևն: (Մ-ՊՂ. ԻՋ. 63: Տէր. Ա. 3:

Ղ-Կ. Բ. 11: Յ-Վ. Գ. 13: Ժ. 30. 38: ԺԶ. 28: Ը. 58: Ա. Կ-ՆՂ. Բ. 8. ևն, ևն, ևն:)

Թէ՛ ի Քրիստոս երկու բնութիւնք երկու կամք կը գանուին անխառն և անբաժանելի միաւորութեամբ միացեալ, Ս. Գրոց շատ համարներէն յայտնի կ՛երեւնան. բայց մենք հետեւեալ մէկ քանի վկայութիւնները հերիք կը համարիմք. «Ինքն Յիսուս ո՛չ հաւատայր զանձն նոցա, քանզի ինքն գիտէր զամենայն. և զի ո՛չ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյ. զի ինքն իսկ՝ գիտէր զինչ կրէր ի մարդն: . . . Աբրահամ Հայր ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ.ետես և ուրախ եղեւ: . . . Դու մարդ ես և զանձն քո Աստուած առնես. Պատասխանի ետ նոցա Յիսուս. . . Եթէ ո՛չ գործեմ զգործս Հօր իմոյ, մի՛ հաւատայք ինձ, ապա թէ գործեմ, թէեւ ինձ ո՛չ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք. . . : Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար: . . . Հա՛յր, եթէ կամիս՝ անցո՛ զբաժակս զայս ինէն. բայց ո՛չ իմ կամք՝ այլ քոյդ լիցին: . . . Ի՞նչ ես յերկինից, ո՛չ զի զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ որ առաքեացն զիս»: ևն, ևն, ևն: (Մ-ՊՂ. ԻՋ. 41: Ղ-Կ. ԻԲ. 42: Յ-Վ. Բ. 24—25: Զ. 38: Ը. 56: Ժ. 33—38. ևն:)

Լաւ ևս կը բացատրէ զայս ի Հարց եկեղեցւոյն Հայոց Շնորհալին Ներսէս. Ա՛ռ Կիւ Մանուէլ գըրելով (Ընդհ. էր. 78—81:) «Եւ որպէս խոստովանիմք յերկուց բնութեանց մի լեալ, և ի միաւորթեանն ո՛չ կորուսեալ զմի ոք ի յերկոցունցն. այսպէս և զկամն ո՛չ այլ և այլ ասեմք, որպէս թէ Աստուածային կամքն հակառակ լինել մարդկայնոյն կամց, և կամ մարդկայինն՝ Աստուածայնոյն. այլ ի միոյ էութենէն կրկին եղելոյ կամաց՝ ըստ այլ և այլ ժամանակի, երբեմն Աստուածային՝ յորժամ Աստուածութեանն կամէր ցուցանել զղօրութիւն. և երբեմն

մարդկային՝ յորժամ վնարդկութեանն կամէր յայտնել զխոնարհութիւն։ Եւ այս ո՛չ հակառակութեան, այլ անձնիշխանութեան են ցոյցք. զի ո՛չ եթէ մարդկային կամքն զԱստուածայինն բռնադատէր՝ որպէս և 'ի մեզ, զի կամք մարմնոյն ցանկայ հակառակ հոգւոյն, այլ մարդկայինն՝ Աստուածայնոյն հետեւեր կամեցաւ . . . ։ Զի թէ ամենայն՝ որ ինչ Հօր է, Որդւոյ է, և որ ինչ Որդւոյ՝ Հօր. յայտ է թէ՝ և կամքն Հօր՝ կամք են Որդւոյ. և կամք Որդւոյ՝ կամք Հօր ։ Բայց կամացս օրինակի զոր ասացաք, 'ի միոյ անձնիշխան կամաց Աստուածութեանն՝ երկուց լինել անհակառակութեամբ, Աստուածայինն և մարդկային ։ Հաւատաւոր և ներքնորածութեանն նոյնպէս լինել՝ Աստուածայնոյն և մարդկայնոյն 'ի միաւորութեան անդ. ո՛չ պրաբձրատոյնն՝ Աստուածութեանն մերձ մարդոյ յերկինից իջեալ, կամ Աստուած խաչեալ, և արիւն Աստուծոյ լեալ։ Այլ միոյ անձնաւորութեան վերոյին զայսոսիկ խոստովանիլք. երբեմն որպէս զԱստուած՝ զԱստուածայինն ներգործելով, և երբեմն որպէս զմարդ՝ զմարդկայինն. զոր յայտ առնեն և անօրէնութեան նորա գործք 'ի միգրանէն մինչեւ ցկատարումն . . . ։ Ձաշակեաց 'ի մահուանէ մարմնով ո՛րդւոյն ինքն կամեցաւ որպէս զմարդ. և ելոյծ մահուամբն զմահ որպէս զԱստուած ։ Ո՛չ ոմն մեռեալ և ոմն լուծիչ մահու. այլ ինքն մեռեալ և ինքն կենդանի և կենդանարար մեռելոց. քանզի մի և նոյն Քրիստոս՝ մարդ գոլով բնութեամբ մահկանացու, և Աստուած գոլով բնութեամբ անմահ ։ Ո՛չ 'ի յերկուս բաժանեալ զան 'ի յերկուց միացեալ բնութիւնն, որպէս թէ ոմն չարչարելի և մեռեալ, և ոմն անչար-

չարելի և անմահ, այլ միաւորեալն յերկուց ընդդիմակացն և մի լեալն՝ կրէր զերկաքանչիւր հակառակացն զկիրս, մարդկային բնութեամբն զչարչարանս և զմահ, և Աստուածայինն բնութեամբն զանեղջարչարութիւն և զանմահութիւն»։

Հոգւոյր ըզկրիցըն տըրտմաբար՝
Երիւքն եղեալ առանձնաբար,
Փրկել զաշխարհ հոգիս յօժար՝
Բայց է բնութիւն մարմնոյս տըկար.
Ո՛չ ոմն ուժեղ և զօրաւոր
Եւ ոմն անզօր վտանգաւոր,
Այլ մի և նոյն գոլ միաւոր
Կերկր ըզկիրսըն կամաւոր »։

(Շարակ. ՀԱՅոց անճառն. եբէ. Մեծի Ուրբ.)

ԳԼՈՒԽ Ը

Պաշտօն Որդւոյն Աստուծոյ

Մարդկային բնութեան եղծեալ Աստուծային պատկերը նորոգելու համար միջնորդ մը հարկաւոր ըլլալով մարդոցմէ, որ ըստ ամենայնի անպարտ առնարատ ըլլար մարդկային թերութենէ, միանգամայն Աստուածային բնութեան հաղորդ, որ կարենար միջնորդել. քանզի անկարելի էր մարդկային պարտաւոր բնութեան մէջ մնալ այս միջնորդը, 'ի յաւիտենից նախատահմանեալ էր Որդւոյ Աստուծոյ մարդեղութիւնն ու միջնորդութիւնը։ (Գործ. Գ. 28։ Ժէ. 31։ Եբր. Ա. 5—9։) — Մարդկային ազգը եղծած ըլլալով այն ուխտն ու դաշինքը՝ զոր Աստուած դրաւ մարդուն հետ. (Ծննդ. Ե. 16—17։ Գ. 6—24։) որով և մեղքը իբրեւ թոյն մէջ մտած՝ բոլոր մարդկային սեռը ու անոր սերունդը ապականած ըլլա-

լով, այնուհետեւ Ադամայ ծնունդները բոլորն ալ՝ անօրէնութեամբ յղացեալ 'ի մեզս կը ծնանէին. (Ա-ԼՂ. Ը. 7:) «Ըստ կերպարանաց իւրոց և ըստ նմանութեան իւրում» (Ծննդ Ե. 3.) վայրահակ բըննութեամբ՝ Բոլորվին մութին. (Անդ. Զ. 3—5.) չէր կրնար գտնուիլ մարդ մը՝ մինչեւ անգամ մէկ մարդ մը՝ որ այն դատապարտեալ բնութենէն չըլլալով, անպարտ ըլլալով անձամբ, կարենար փոխարինութիւն ընել և հին ուխտը նորոգել, անձամբ երաշխաւոր մնալով անոր. ուստի և կը հետեւի թէ նոր ուխտին միջնորդը պէտք էր անանկ մարդ մը ըլլալ որ կարող ըլլար մարդուն անկեալ բնութիւնը վերականգնել՝ արբարար վարդապետութեամբ անոր բարոյականն ուղղելով, Աստուծոյ արդարութիւնը հատուցանել՝ փոխարինութեամբ. և իբր նորոգած ուխտին անխղելի յարատեւութեան երաշխաւոր մնալ իւր հզօր զօրութեամբն ու կարողութեամբը: Անկարելի էր արարածական ոգիներէն գտնել մէկը՝ և ոչ իսկ հրեշտակ կամ հրեշտակապետ մը՝ որ այս երեք մեծ պաշտօնները իւր վրայ կեդրոնացընելով՝ եղծեալ Աստուածային պատկերը որ 'ի մարդ՝ նորոգել, դատապարտութիւնը խղել ջնջել և կորուսեալ անմեղութիւնն ու անմահութիւնը վերստին մէջ բերել բաւէր տեւէր: Եւ ահա այս պատճառաւ Աստուած անհնարին մարդասիրութեամբ՝ իւր յաւիտենական խորհրդոցը մէջ՝ (իմա՛ երրորդութեան երից անձանց համաձայն կամքը կամ խորհուրդը կամ նախատահմանութիւնը,) առաջադրած էր Որդւոյ Աստուծոյ, և զԱյն որոշած տահմանած էր առ այն մեծ գործ փրկութեան մարդոյն. Որդին ալ՝ ըստ որում հաճակամ Հօր՝ սիրով յանձն առած էր զայն, և Ս. Հոգին կամակից և գործակից եղեւ 'ի նոյն:

Պօղոս Առաքեալ այսպէս կը հաստատէ ասիկայ.

«Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ յերկինսաւորս 'ի Քրիստոս. որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զինելն աշխարհի, լինել մեզ սուրբս և անարատս առաջի նորա սիրով: Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, 'ի նոյն ըստ հաճութեան կամաց իւրոց, 'ի գովեստ փառաց շնորհաց իւրոց, որով զուարճացոյց զմեզ սիրելեաւն, որով ունիմք զփրկութիւն 'ի ձեռն արեան նորա, զթողութիւն մեղաց ըստ մեծութեան շնորհաց իւրոց. որ առաւելաւ 'ի մեզ ամենայն իմաստութեամբ և գիտութեամբ. եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց, ըստ հաճութեան իւրում, զոր յառաջագոյն եդ նովաւ, 'ի տնտեսութիւն լրման ժամանակաց, բովանդակել զամենայն Քրիստոսիս որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի, 'ի նոյն. որով և վիճակեցաք յառաջագոյն հրաւիրեալք, ըստ առաջադրութեանն Աստուծոյ. որ զամենայն յաջողէ ըստ խորհրդոց կամաց իւրոց. լինել մեզ 'ի գովեստ փառաց նորա՝ յառաջագոյն յուսացեալոցն 'ի Քրիստոս: Որով և դուք իբրեւ լուսաւուք զբանն ճշմարտութեան, զԱւետարանն փրկութեան ձերոյ, որով հաւատացեալ կնքեցաք Հոգւոյն սրբոյ աւետեաց. որ է առհաւատչեայ ժառանգութեան մերոյ 'ի փրկութիւն նուաճութեան, 'ի գովեստ փառաց նորա»: (Եփես. Ա. 3—14:)

Փրկագործութեան այս մեծ գործոյն բազմադիմի պաշտամանց նկատմամբ 'ի յաւիտենից նախատահմանեալ Աստուածային Մեծ Միջնորդը՝ անուանեալ է 'ի Ս. Գիրս Մեսիա կամ Մեսիա, որ առ Յոյնս՝ Քրիստոս, և 'ի մեզ՝ Օծեալ կը թարգմանուի:

ՓՐԱԿ Գ

Քրիստոս անուան այլ և այլ առումները, և ի՛նչ առնելոց Ցիսուսի ընծայուած ըլլալը

Ի հնուն առ Եբրայեցիս՝ երեք դաս մարդիկ Մեսիան, Օծեալ կ՛անուանէին.

Ա. Մարգարէք. ըստ որում երբ որ աստնք իրենց պաշտանեան գլուխը կ՛անցնէին կամ պաշտօնի կը կոչուէին, երբեմն սրբութեան իւղով կ՛օծուէին. ինչպէս Աստուած կը հրամայէ Եղիային որ գնդիսէ՝ մարգարէ օծէ իրեն տեղը. (Գ. Թագ. ԺԹ. 16:) Շատ անգամ ալ աստանց օծուելու իսկ՝ մարգարէական ոգին ընդունած ըլլալնուն համար Օծեալ կ՛ըսուէին, որով նշանակին էր նիւթական իւղոյն օծութիւնը: (Ա. Թագ. Ժ.Զ. 13:) «Մի՛ մերձենայք ասէ յՕծեալս իմ, և՝ ի մարգարէս իմ մի՛ մեղանչէք»: (Սաղմ. ՃԴ. 15:) «Հաւատարիմ այր. զոր կացոյց Տէր յՕծեալ Աստուծոյ՝ ի վերայ Ցակովբայ, և վայելուչ են երգք Իսրայէլի: Հոգի Տեառն խօսեցաւ յիս ես». (Բ. Թագ. ԻԳ. 1—2:) «Քանզի ո՛չ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբէք, այլ՝ ի Հոգւոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ յԱստուծոյ»: (Բ. Պետ. Ա. 21:)

Բ. Օծեալ կ՛անուանէին և քահանայք. յատուկ արարողութեամբ նիւթական սրբութեան իւղով օծուելնուն համար, յորմէ՝ ի քահանայութիւն կը կոչուէին. «Օծցես զնոսա՝ կըսէ Աստուած, և սպասես զձեռս նոցա, և սրբեսցես զնոսա՝ զի քահանայացին ինձ: . . . Եւ զՀարոն և զորդիս նորա օծցես՝ և սրբեսցես ինձ զնոսա՝ ի քահանայութիւն: . . . Եւ մատուսցես զորդիս նորա. և զգեցուսցես նոցա պատմուճան՝ և օծցես զնոսա, զոր-

պէսզի զՀարոն նոցա օծէր, և քահանայացուցին ինձ, և եղիցի նոցա օծումն քահանայութեան յաւիտեան յազգս նոցա»: (Ելից. ԻԸ. 41: Լ. 30: Թ. 13 եւ:)

Գ. Օծեալ կ՛անուանէին և թագաւորը. զի և տեսա յատուկ արարողութեամբ կ՛օծուէին նիւթական իւղով թագաւորական գահը եղած առեններին: (Ա. Թագ. ԺԱ. 15: ԺԵ. 1—17: Բ. Թագ. Բ. 4. եւ:) Այս պատճառաւ Սաւուղ կը կոչուի «Օծեալ Տեառն». (Ա. Թագ. ԻԴ. 7.) և Դաւիթ «Օծեալ Աստուծոյ Յակովբայ»: (Բ. Թագ. ԻԳ. 1:) եւ: Մինչեւ իսկ Կիւրոս պարսից թագաւորը՝ որ չէր օծուած իւղով, բայց Աստուծոյ որոշած մէկ գործին իրրեւ գործակատար թագաւոր կոչուած ըլլալուն համար՝ նմանութեամբ Օծեալ կոչուած է՝ ի Ս. Գիրս, ըստ մարգարէին, թէ «Այսպէս ասէ Տէր ցՕծեալն իւր ցԿիւրոս»: (Եսա. ԽԵ. 1:)

Այս Օծեալ անունը Ցիսուսի տրուած է իրրեւ հանդերձեալ Փրկչի, ո՛չ իրր լոկ մարգարէի, կամ լոկ քահանայի և կամ լոկ թագաւորի, այլ համանգամայն իրրեւ Մելքիսեդեկ—Քահանայ—Թագաւորէ, իւր գործառնեայ հատանգամայն Մարգարէի, Քահանայի և Թագաւորի ըլլալով: «Հոգի Տեառն՝ ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւք, քարոզել գերեաց զթողութիւն և կուրաց Տեսանել, կոչել զամ Տեառն ընդունելի և օր հատուցման Աստուծոյ մերոյ. . . »: (Ե. կԱ. 1—2: Ղ.ա.կ. Դ. 18—19:)

ԲԱԺԱՆՈՒՄ Ա.

Քրիստոս Մարգարէ

Մարգարէք տուրբ մարդիկներ էին, զորոնցմէ Աստուծոյ ծառայութեանը նուիրեալ, զոր Աս-

ուած 'ի ձեռն Ս. Հոգւոյն կը խրիչէր իւր ընտրեալ ժողովուրդին, զանոնք յուղղութիւն վարուց հրաւիրելու, յանդիմանելու, խրատելու, Աստուծոյ հաւատքին մէջ հրահանգելու և խոստացեալ Մեսիային ապագայ փրկութեան յուսոյն քաջալերելու և մխիթարելու համար: Իրենց մարգարէութեան հոնրական նպատակն էր Հ-ՆԴԵՒՆԵԼ ՄԵՒԻՈՆ. և առ այն իրենց առաքելութիւնը ժողովրդեան հաւատարմացընելու համար՝ դրսէն ուրիշ բաներու, քաղաքներու, թագաւորութիւններու, և ուրիշ մանաւանդ իրողութեանց վրայ ալ ինչ ինչ մարգարէութիւններ կ'ընէին: Ոմանք ևս իրենց մանաւանդ մարգարէութեանց վրայ հրաշքներ ալ կը յաւելուին: —Օրինակ Սամուէլ որ կանխաւ խօսեցաւ Հեղեայ՝ անոր տան մօտալուտ կործանումը, «եւ ո՛չ անկաւ յամենայն բանից նորա 'ի գետին, և ոտաց ամենայն Իսրայէլ 'ի Դանայ մինչեւ ցԲերսաբէէ՝ թէ հաւատարիմ է Սամուէլ 'ի մարգարէս Տեառն»: (Ա. Թագ. Գ. 11—21:) Նոյն և Սաւուղայ գուշակեց անոր հօրը Կիսին երեք օրուընէ 'ի վեր կորուսած էշերուն գտնուած ըլլալը՝ 'ի հաւատարմացուցանել զնա յաւաքելութիւն իւր օծանել զնա թագաւոր Իսրայէլի, ինչպէս նաեւ ուրիշ երեք նշաններ ալ անոր մարգարէացաւ: (Ա. Թագ. Թ. 19—20: Ժ. 1—7:) Օրինակ Եղիա, որ Իսրայէլի ժողովրդեան նշան տուաւ՝ ճշմարիտ Աստուած երկինից Աստուածն ըլլալուն և իւր անոր մարգարէն լինելուն՝ երկինից կրակով իւր զոհին ընդունումը: (Գ. Թագ. ԺԸ. 21—40:) Օրինակ Եղիսէէ, որ կրկին ոգին ուներ Եղիայի. (Դ. Թագ. Բ. 9:) 'ի հաւատարմացուցանել Իսրայէլի արքային որ Ճշմարտին Աստուծոյ մարգարէն ինքն էր, գուշակեց թէ առանց հովի և անձրեւի ջուր պիտի ուենենան ընդ հուպ՝ յանկրդի անապատի անդ, և ստիպի ու կատարեալ յաղ-

թութիւն մը պիտի տանին ընդդէմ Մովաբացւոյն: (Դ. Թագ. Գ. 11—27:) Օրինակ Մովսէս՝ որ իւր առ Իսրայէլ առաքելութիւնը հաւատարմացընելու համար երեք նշան առաւ Աստուծմէ, և հաւատարմապէս 'ի գործ դրաւ Իսրայէլացւոց առջեւ: (Ելէք. Դ. 1—9:)

Այս Մովսէս զառաջինն մարգարէացաւ յոյժ բացայայտ լեզուով Քրիստոսի մարգարէութիւնը՝ ըսելով. «Մարգարէ յեղբարց քոց իբրև զիս յարուսցէ Տէր Աստուած քո, նմա լուիջիք: . . . եւ ասէ ցիս Տէր . . . Մարգարէ յարուցից նոցա յեղբարց իւրեանց իբրեւ զքեզ, և տացց զպատգամս իմ 'ի բերան նորա. և խօսեսցի ընդ նոսա որպէս և պատուիրեցից նմա. և մարդ՝ որ ո՛չ լուիցէ զոր խօսիցի Մարգարէն յանուն իմ, ես խնդրեցից զվրէժ 'ի նմանէ: . . . Ապա թէ ասիցէք 'ի սրտի. զիա՞րդ գիտասցուք զբանն զոր ո՛չ խօսեցաւ Տէր: Զոր ինչ խօսիցի Մարգարէն յանուն Տեառն՝ և ո՛չ ելնիցի բանն և ո՛չ դիպիցի, այն բան է զոր ո՛չ խօսեցաւ Տէր. . . .» (Բ. Օրին. ԺԸ. 15—22:)

Ջհաւս Քրիստոս լիովին կատարեց մարգարէական պաշտօնը գեր քան զմարգարէս ըլլալով. քաղքէ քաղաք, գիւղէ գիւղ, դաւառէ դաւառ պտըտեցաւ Իսրայէլի բոլոր երկիրը, առ որ առաքեալն էր 'ի Հօրէ. (Մատ. ԺԵ. 24.) քարոզեց ամենուրեք. (Մատ. Թ. 35: Մարկ. Ա. 38.) Տաճարը, (Մատ. ԻԶ. 55.) ժողովարանը, (Ղուկ. Դ. 16: Զ. 6.) տունը, (Մատ. Թ. 10—17: Ղուկ. Ե. 29.) լեռներուն գլուխը, (Ե. Զ. Է.) դաշտերը, (Ղուկ. Զ. 17—49.) արտերուն մէջ, (Զ. 1—5.) ծովուն եզերքը, (Մարկ. Բ. 13.) ծովուն վրայ՝ նաւակի մէջ նստած, (Մատ. ԺԳ. 1—36: Մարկ. Գ. 9: Դ. 1-34.) անապատները, (Ղուկ. Դ. 43—45.) ճամբայներուն վրայ, (Յովհ. Դ. 5—40: Թ. 1—7.) ցորեկ (Ղուկ. ԻԱ. 37.) և գիշեր, (Յովհ.

Գ· 2·) առուռանց կանուխ, (Ղ–ԿՒ· ԻԱ· 38·) և իրիկուան ուշ առեն · (Մ–ՐԿ· Ա· 32·) չէ՛ թէ Դպրաց և փարիսեցւոց և օրինաց վարդապետներուն պէս աչառանաք և մարդահաճութեամբ, այլ անաչառութեամբ, (Ղ–ԿՒ· Ի· 21·) հաւատարմակութեամբ (Մ–ՐԿ· Ը· 31—32:) և իշխանութեամբ· (Մ–ՈՂ· Է· 29·) ո՛չ միայն հարուստներուն, (Մ–ՐԿ· Ժ· 17: Ղ–ԿՒ· Զ· 24·) այլ և աղքատներուն, (Ղ–ԿՒ· Դ· 18: Զ· 20: Է· 22·) ո՛չ ալ արդարոց և օրինապահաց միայն, (Յ–ՀԿ· Ա· 45—51·) այլ մանաւանդ՝ մաքսաւորաց և մեղաւորաց: (Մ–ՈՂ· Թ· 10—13:)

Եւ որովհետեւ մարգարէք՝ ի նշան իրենց առաքելութեան՝ մարգարէութիւններ կ'ընէին և հրաշքներ կը գործէին, և Յիսուսի համար Մովսէս յատկապէս խօսելով ըսեր էր՝ ինչպէս վերն յառաջ բերինք, թէ Անյն Մարգարէն մարգարէութիւններ պիտի ընէր և բոլոր ըրած մարգարէութիւններն ալ պիտի կատարուէին, ուստի Քրիստոս ալ շատ մարգարէութիւններ և հրաշքներ ըրաւ: (Քրիստոսի հրաշքներուն վրայ տես հետեւեալ Գ· Հատուածին Գ· Պրակը:)

Ա· Քրիստոս մարգարէացաւ նախ իւր անձին համար, թէ Որդի մարդոյ պիտի մատնուի իւր հացը ուտող տասնուերկու աշակերտներուն մէկուն ձեռքովը· (Ղ–Կ· ԺԴ· 18·) որոշեց ճանչցուց այն աշակերտն ալ երկու նշաններով, որ Յուդան էր· (Մ–ՈՂ· ԻԶ· 23: Յ–ՀԿ· Ժ· 18—27·) և թէ նա պինդը պիտի մատնէր դպրաց գահանայապետից և փարիսեցւոց, յորոց պիտի դատապարտուի՝ ի մահ և «մատնեցի հեթանոսաց, և կատակեսցի, և հարկանիցեն և ըսպանանիցեն զնա, և յերիր աւուր յարիցէ»· (Ղ–Կ· ԺԸ· 31—33: Մ–ՈՂ· ԺԶ· 21· ԺԷ· 21—22: Ի· 18—19: Մ–ՐԿ· Ժ· 34 եւ·) և ո՛չ միայն իւր մահուան համար ըսաւ թէ Մովսէսի օձին պէս բարձրանալով պիտի ըլլայ,

(Յ–ՀԿ· Գ· 14·) այլ՝ որոշակի ըսաւ ալ թէ պիտի խաչուի· (Մ–ՈՂ· Ի· 18—19·) տեղն ալ անուանեց, Երուսաղէմի մէջ պիտի ըլլայ ըսաւ· «Զի ո՛չ է մարգ՝ կ'ըսէ, մարգարէի կորնչել արտաքոյ քան զԵրուսաղէմ»: (Ղ–Կ· ԺԳ· 33:) Ճշդիւ ժամանակը ևս կանխաբանեց· երեք օրը չլրացած յարութիւն առնելու ըլլալուն հետ՝ խաչուելու օրն ալ գրուցեց· «Բժշկութիւնս առնեմ՝ ըսաւ, այսօր և վաղիւ, և յերիր աւուր կատարիմ»: (Ղ–Կ· ԺԳ· 32—33:) «Գիտէ՞ք, զի յետ երկուց աւուրց Զատիկ լինի, և Որդի մարդոյ մատնի՝ ի խաչ ելանել»: (Մ–ՈՂ· ԻՁ· 2:)—Ասոնք ամենը անանկ մարգարէութիւններ էին, որոց իրողութիւնքն ու պարագայները կարելի չէր բնական նշանով մը գուշակել· քանզի ամենուն կատարումնալ ներքնդունական պատճառներէ՝ թըշնամեաց կամքէն կախուած էր· իսկ ինքնիշխան յարութիւնը գլխովին Աստուածահրաշ անլուր բան մ'էր, և ամենեւին անհատատալի· և սակայն՝ մազ անվրէպ՝ ինչպէս որ մանրապատում կանխաճառեց, այնպէս և կատարուեցան տեղն՝ ի տեղը և ժամանակաբը:

Բ· մարգարէացաւ Յիսուս իւր աշակերտաց համար: Կանխաբանեց՝ ինչպէս Յուդայի համար՝ որ պինդը պիտի մատնէր, (Մ–ՈՂ· ԻԶ· 21· եւ·) ամենուն համար ալ՝ թէ այն գիշեր պինդը պիտի թողուին ու փախչէին՝ երբ ինքը մատնուէր, թէ՛ եւ անոնք հակառակը կը պնդէին՝ թէ մինչեւ ի մահ չպիտի թողուին պինդը· (ԻԶ· 31—35·) Պետրոսի համար ալ՝ թէ պինդը երիցս պիտի ուրանար հաւաս խօսքն առաջ, բայց հաւատքը չպիտի պակսէր: (ԻԶ· 33—35· Մ–ՐԿ· ԺԴ· 29—30:) — Մարգարէացաւ նաեւ թէ՝ իւր հարթառնալէն ետքը Ս· Հոգին անոնց վրայ պիտի իջնայ, (Յ–ՀԿ· ԺԴ· ԺԵ· ԺԶ· եւ·) Երուսաղէմի մէջ, (Գ–ԹԺ· Ա· 4—8·) և թէ՝ մեծա-

մեծ աքանչելիքները պիտի գործեն անոնք՝ ինչպէս նաեւ ամենայն հաւատացեալք · (Մ–էն· ԺԲ· 17—18· Ց–Վ· Ժ·Դ· 12·) և վերջապէս՝ ամենքն ալ Իրեն անուանը համար պիտի հալածուին չարշարուին խայտառակուին , և շատերուն ալ մահ պիտի պատահի , (Մ–ՈՒ· ԺԸ· 17: ԻԴ· 9: Ղ–Կ· ԻԱ· 12: Ց–Վ· Ժ·Ե· 20·) բաց 'ի Յովհաննեսէն՝ որ չպիտի մեռնէր մինչեւ Քրիստոսի թագաւորութիւնը : (Յ–Վ· ԻԱ· 22:) Ասոնք ամենքն ալ կատարուեցան , ամենքն ալ նահատակուեցան · միայն՝ Յովհաննէս եռացեալ կաթսայի մէջ նետուեցաւ ալ նէ՝ որովհետեւ Մեսիհ Մարգարէն ըսեր էր անոր համար թէ «կամիմ զի կացցէ դա՝ մինչեւ ես գամ» , չէր կրնար մեռնիլ և չմեռաւ , և յետոյ աքսորուեցաւ 'ի Պատմոս :

Դ· Մարգարէացաւ Յիսուս Աւետարանի քարոզութեան և Եկեղեցւոյ համար · ըսելով թէ Աւետարանը աշխարհի բոլոր ծայրերը պիտի քարոզուի՝ Հրէից ալ Հեթանոսաց ալ · (Մ–ՈՒ· Ը· 11: Մ–էն· Ժ·Գ· 10: Ղ–Կ· ԻԴ· 47: Գ–ծ· Ա· 8·) և Եկեղեցին ոչ միայն պիտի հաստատուի երկրի վրայ , այլ նաև մինչև աշխարհի վերջը պիտի տեւէ՝ դժոխոց զօրութեանցն ալ յաղթելով · (Մ–ՈՒ· Ժ·Զ· 18: ԻԸ· 20: — Շահնազարեան երջանկայիշատակ կարապետ վարդապետը Քրիստոսի այս մարգարէութեանց վրայ խորհրդածելով կ'ըսէ · «Ե՞րբ գուշակեց փրկիչն այս ամենը · — Այն ատեն՝ երբ մարդկային տրամաբանութեամբ բոլորովին հակառակը կը յուսացուէր · քանզի այն ատեն պինքը չրջապատեր էին անանկ ահեղ թշնամիները , որ իրենց ձեռքին մէջ ամփոփած էին երկրին բովանդակ իշխանութիւնը · և իւր առջին պատրաստ կեցեր էր խաչին վրայ մեռնելու մահը : Բայց նա՝ այս ամենը յառաջտեսութեամբ կը քարոզէր ուղղակի հակառակ մարդկային խնամատութեան և հանճարոյ : Նա իւր վարդապետութիւնը տարածե-

լու համար իւր տասուերկու աշակերտներէն զատ մարդ չունէր , որոնք ամենքն ալ գրեթէ անդրագէտ մարդիկ էին · և իւր նախապուշակութեան նայելով անոնց ամենուն ալ առջեւ պատրաստ կը կենային հանրական ատելութիւն , աքսոր , հալածանք , և վկայական մահ · · · : Ուրեմն ինչպէս կարելի էր վճռել բացարձակապէս թէ Աւետարանը բոլոր աշխարհք պիտի տարածուի , և թէ զանիկայ ընդունողները անանկ միաբանութիւն մը պիտի կազմեն , որ մինչեւ աշխարհի վերջը անսասան պիտի կենայ ու մնայ : Ամենատես և ամենազօր Աստուծմէ զատ ուրիշ մէկը կրնա՞յ ընել այս բաները» : (ի կէնաֆէթ :)

Գ· Ի վերջոյ Քրիստոս Յիսուս կը մարգարէանայ Ս· Հոգւոյն և տաճարին համար , թէ երուսաղէմ կոխան ազգաց պիտի ըլլար , սոսկալի քշուառութեամբ և տագնապներով վերջ պիտի տրուէր քաղաքին , թագաւորութեան և սրբութեան տաճարին և զոհից եւ ըստ ը–ն , այն ազգը չանցած , ք' ժամանակակից մարդկանց աչքին առջեւ : (Մ–ՈՒ· ԻԳ· Մ–էն· ԺԳ· Ղ–Կ· ԺՔ· ԻԱ·) Ասոնց մանրամասնութեանց չմտնելով միայն կատարումը պատմենք հոս՝ արտաքին պատմութենէ քաղելով , զոր Աւետարանագրաց հետ բաղդատող ոք պիտի հիանայ ասոնց անշա՛փ նոյնութեան վրայ :

Հռովմայեցիք կործանեցին երուսաղէմն ու տաճարը Քրիստոսի 67—70 թուին , Անոր համբառնալէն 37—40 տարի ետքը , Վեսպասիանոսի և Տիտոսի ձեռամբ , քանզի Հրէայք Քրիստոնեայս յաւէնային զօրութենէ ամենուրեք հալածած ժամանակնին՝ կալիգուլա կայսրը չանալով որ իւր արձանը տաճարին Սրբութիւն Սրբութեանց ըսուած տեղը կանգնել տայ , զոր Փրկիչը կանխաս ըսած էր , (Մ–ՈՒ· ԻԴ· 15: Մ–էն· ԺԳ· 14:) խռովապեցան Հր-

բէայք, Թոզին պՔրխատոնեայս, և եկեղեցին չունչ առաւ, մեծ խաղաղութիւն ըլլալով Հրէից երեսէն (գործ. թ. 31.) որք իրենց փրկութիւնը հոգալ սկսան. և առ Ներոնիւ ապստամբեցան յայտնապէս վաթսուն երեք թուին ցեսու անունով մէկը երեցաւ՝ որ եօթն տարի չարունակ կը պտըտէր ու կը գոչէր. «վա՛յ տաճարին, վա՛յ քաղաքին, վա՛յ ժողովրդեան». 65 թուին Ջատկին՝ կէս գիշերուն՝ տաճարի պղնձի դուռն ինքնին բացուեցաւ, օդին մէջ անհնարին պայծառութիւն մը երեւցաւ, և յետոյ արեւմուտքի կողմէն պատերազմական կառքեր, պատերազմիկ գունդեր. (Քոփ Տրքմբէոլ֊Ներ֊ֆրնէլ՝ Ղ֊կ. ԻԱ. 11.) իսկ Պենտեկոստէի տօնին՝ քահանայք տաճարին մէջ ազմուկ մը լսեցին գիշերը, և ձայն մը որ կ'ըսէր. «Գնանք աստի, գնանք». (Յովսեպոս Հրէակ. պատեր. Տակիտ. Ե. գլ. ժԳ.) բայց՝ ի զուր, չխրատուեցան Հրէայք. Եղիազար՝ Հայոց համար սահմանուած զոհը վերցուց, որով ապստամբութիւնը զօրացուցին, վաղեցին Հռովմէական զօրաց վրայ, Ջարդեցին զանոնք, և ամեն խաղաղութեան յոյս վերցաւ։ Կեստիոս Գալղոս Ասորւոց կուսակալը 25,000 զօրքով վազեց պաշարեց քաղաքը, մտաւ իսկ առաջին քաղաքը և վերի քաղաքն ու տաճարը այն ինչ սկսեր էր ձեռնել, յանկարծ առանց բնաւ պատճառի մը՝ վերցուց պաշարումն ու դարձաւ, և իր դարձը աւելի փախուստի կը նմանէր, որով Հրէայք եւեւէն իյնալով 4000 մարդ, 400 ձի և երիվար կորսնցուց։ Այս նշանն էր Քրիստոս տուաւ Քրիստոնէից՝ փախստեան, (Ղ֊կ. ԻԱ. 20.) որոնք յայնժամ յիշելով այս մարգարէութիւնը՝ փախան յայնկոյս Յորդանանու Պելլա ըսուած փոքրիկ քաղաքը։ Վեսպասիանոս և որդին Տիտոս եկան, ամեն ջանք ըրին առանց արեան անձնատուր ըլլալու յորդորել զանոնք. Վեսպա-

սիանոսէն ետքը Տիտոս առանձինն ալ չատ ջանաց ի նոյն, բայց Հրէից անձասիրութ անձին «Աբիւն դորա ի վերայ մեր և ի վերայ որդւոց մերոց» (Մ֊թ. ԻԴ. 25.) անէծքը իրենց վրայ կը ծանրանար. և հնար չեղաւ։ Տիտոս քաղքին բոլորտիքը փորուած խրամներուն վրայ պատեր քաշեց՝ թէ՛ քաղաքը սովի բռնելու համար, (Ղ֊կ. ԺԹ. 43.) և թէ՛ բնակչաց դուրս փախչելն արգիլելու համար. ամենէն սոսկալի պատիժները իրարու վրայ տեղացին այն անիծապարտ քաղքին վրայ. երեք հուսակտութիւններու բաժնուած՝ անխնայ զիրար կը ջարդէին. սովը անհնարին տագնապներով ծանրացաւ, մինչեւ քանի մը օրուան նեխեալ՝ կէս փտած մեռելներու մարմինները գերեզմաններէն կը հանէին ուտելու. տոհմիկ սիկին մ'ալ առ յուսահատութեան՝ իւր մանկիկը մորթեց կերաւ անօթութենէ չմեռնելու համար. (եղէկ. Ե. 10. 12.) ամենածախ ժանտախտ մ'ալ՝ որ ամեն պատերազմներու հետեւորդ արհաւիրքն է, սոսկալի կերպով ճարակուեցաւ հոն, այնպէս որ ըստ Յովսեպոսի՝ Ապրիլի 14 էն մինչեւ Յուլիս մէկ՝ քաղքին մէկ դռնէն միայն 116,000 մեռեալ հանեցին, և 600,000 դիակ պարիսպներէն նետեցին։ (եղէկ. Չ. 12—13.) փախստականներն ալ Տիտոսի հրամանաւը խաչը կը հանուէին, և գինուորք անոնց փորերնին կը պատռէին ոսկի մարգարիտ և ակունք գտնելու համար. քանդի լսեր էին թէ անոնք հարստութիւններին կլլելով կը փախչէին։ (է. 19.) Հուսկ ապա Հռովմայեցիք սոսկալի յարձակմամբ առին քաղաքը, սուր ի վերայ եղեալ անողորմ Ջարդեցին զտաճարին, մինչեւ քաղաքն ու անոր շրջակայքը քանի մը մղոն տարածութեամբ եւս և Յորդանան բոլորովիմբ ներկեցաւ արեամբ սպանելոց, և անանկ ապականեցաւ քաղաքը որ ամենեւին աւերակաց կոյտ մը դարձաւ, և ի նմին

խառնակութեան՝ զինուորի մը անզգուշութեամբ տաճարն ալ կրակի տրուելով, այն աստեն սուրն ու հուրը կեցան, երբ տաճարին երիտու դռներէն զատ ուրիշ բան չմնաց. և քանզի ապստաւրաց գլուխներուն կենաց ապաւութիւն չշնորհուեցաւ, ստորերկրեայ կամարաց և նկուղներու մէջ պահուըտած ըլլալնուն համար՝ զինուորք քաղաքին հիմերը բրեցին որ գանձք դուրս հաներն, որով և մարդ արկութիւնը կարծես բառ առ բառ կատարել ուզելով (Ղ-ի. ԻԴ. 2.) արօրի տակ մը ձեռքերնին անցաւ, և անով գրեթէ արօրադրեցին բովանդակ երկիրը: Միլիոնէն աւելի մարդիկ ջարդուեցան պաշարման միջոցին, որ ըստ կանխակալ փրկչին՝ քիչ առեն տեւեց. (Մ-ի. ԻԴ. 22.) ըստ որում Տիտոս՝ ինչպէս Յովսեպոս Հրէան կը պատմէ, Հռովմ դառնալու կը փութար. իսկ բոլոր գերելոց թիւն անհամար էր, որ չնչին գիներով ծախուեցան յԵգիպտոս և այլուր: (Եզեկ. Ե. Զ. Է. եւ: Ղ-ի. ԻԱ. 24:)

Եռքերը երթալեցիք փորձ փորձեցին տաճարին վերականգնելու՝ Ադրիանոս կայսեր առեն՝ բարկութեամբ կամ բարկութեան անուն մէկու մը առաջնորդութեամբ, որ ես Քրիստոսն եմ կ'ըսէր. բայց՝ ի զուր ճգնեցան: Վեց հարիւր հազարէն աւելի Հրէայներ ալ այս պատերազմին մէջ ջարդուեցան, և մնացեալները գերեցան ցրուեցան ընդ ամենայն աշխարհ: Եղիոս Ադրիանոս կայսրը նոր քաղաք մը կանգնեց հոն յանուն իւր Եղիա- կամ Հեղիա- անուանելով, և՝ ի նմին մեհեան մը կառոյց Կապիտոլեան Արամազդայ, նոր բնակիչներ և նոր աստուածներ տեղաւորելով այն տեղ. և Հրէից խստաւորելով այն քաղքին մօտէն անգամ անցնիլը, մինչեւ ուր ուրեմն խիստ ծանրագնի՝ հրաման տրուեցաւ իրենց՝ տարին անգամ մը միայն երթալ և իրենց կործանեալ քաղքին ու տաճարին աւերակաց

վրայ լալու մխիթարութիւնն ունենալ, ուր այնուհետեւ կուսապաշտութեան պղծութիւնը կ'տիրէր. մինչեւ որ Հռովմայեցւոց հեթանոսաց ժամանակը լրացաւ: (Ղ-ի. ԻԱ. 24:) Եւ կոստանդիանոսի տիրեց Քրիստոնէութիւնը քաղաքին՝ մինչեւ ցայսօր:

Հրէայք կոստանդիանոսի աստեն ալ փորձ փորձեցին տաճարը վերստին հիմնելու, բայց թող չտրուեցաւ իրենց. (Ըստ Ռ-ֆէ. Ն ձ-ոն Գ. ընդդէմ Հրէից:)—Եորքէն Յուլիանոս ցանցող ո'չ միայն հրաման տուաւ իրենց տաճարնին վերականգնելու, այլ մեծաւանդ ինքնին ուրացողը՝ Քրիստոսի կանխատեսութիւնը սուտ հանելու համար ապստրեց Ալիբիոս Անտիոքացւոյ երբեմն իշխանին Բրիտանիոյ՝ արքունի գանձէն հոգալ այն ծախքերը, և որպէս զի փութով գլուխ եկայ գործը, յատուկ վերակացուներ զինուորներ սահմանեց. այլ հապա հիմնարկութեան համար, ահագին բոցեր ցոլացան փորուածքներէն՝ ի վեր. և գործաւորք բոցակիզք՝ մօխիր դարձան. Կրկին՝ վերստին փորձելու եղան, այլ ամեն անգամ ապառող ծախիչ բոցերը վերերեւեցան, մինչեւ ինքեանք Հրէայք պարտաւորեալք՝ և՝ ի սպառ յուսահատք՝ հարկադրուեցան յետս կասիլ ձեռք զարկած գործերնուն, Յուլիանոս ալ իւր ամբարիշտ խորհուրդէն. — Քրիստոսեայ մատենագիրներէն չատերը կը պատմեն այս հրաշալի իրողութիւնը. բայց արտաքնոց համար՝ զօրաւորագոյն է Ամմիանոս Մարկելինոս հեթանոս պատմագրին վկայութիւնը, որ Յուլիանոս պինուազրական պաշտօնեայներէն մին էր:

Յուլիանոսէն ետքը որ՝ ի զուր փորձեց Դանիէլի և Յիսուսի մարգարէութիւնները սուտ հանելու, ԺԲ. դարուն պահուած էր տաճարի վերաշինութեան այս անպարիշտ փորձը նորոգել. և ահա այս նոր տաճարականաց չահասակն եղաւ Տ'Ասանկեւ Մա-

Թեմաթիկոս Փիլիսոփան · ինչե՞ր չըրաւ ինչ ճիգեր չթափեց՝ որ Փեղերիկոս Ե · Աւստրիացւոց և Օսմանեցւոց մէջ տեղը միջնորդութիւն ընելով՝ երբ առնք կը պատերազմէին, հաշտութեան պայմաններուն մէջ սպրդեցնէ այս ալ որ Սուլդան Մուստաֆա թոյլ տայ Հրէից Սիոնի մէջ իրենց ցանկալի տաճարը նորէն չինելու, որ առ ժամանակաւն չատ դիւրին կ'երեւնար մարդկօրէն մտածելով : Այսպէս կը գրէ մարդաբէութիւնները տեսը հանելու ուխտող, այս մելեդնեալ չահատակը իւր թղթերէն մէկուն մէջ որ ի 14 օգոստ · 1772 : «Այս վերաշինութիւնը՝ ո՛վ թագաւոր, իմ մելեդնութիւնս է» : Նոյն տարւոյն Հոկ · 9ին ալ կը գրէ · «Սատիկ կը խրխնայ սիրտս և ինծի սէս եղբայրակիցներս ալ կը ցաւին՝ որ պաշտպութեան ծածուկ պայմաններուն մէջ իրը չնչին յօդուած մը չկրնար դրուիլ տաճարին վերաշինութիւնը, որ Երուսաղէմի մեծագոյն չինութիւնն է» : Նոյ · 20ին ալ կը գրէ թէ մեծ անձկութեամբ կը սպասէին տեսնել որ անդամ մը հաստութիւն տայ Սուլդան Մուստաֆա · · · · : — Այլ ի զո՛ւր · թէ որ մարդկային խորհրդով ըլլար տաճարին կործանումը, և մարդկային ամրիկարութիւնը վճռած ըլլար անոր անկանգնելիութիւնը, թերեւս յաջողէր անոր վերականգնումը · բայց Հօր յաւիտենական խնամատարութիւնը Բանն Աստուած՝ անոր շինութեանը համար «ՈՉ» վճռելէն ետքը՝ «երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն» ըսաւ · (Մատթ· ԻԴ· ՅՏ·) անոր համար Հրէայք ալ, Ցուլիանոս ալ, Տ'Աւալտէռ ալ իրենց ճգանցն ու մելեդնութեանցը մէջ խայտառակուեցան և այնի խայտառակութին ի յաւիտեան ամեն անոնք որ իրենց զօրութիւնը ի կըշիռ դնել ուզեն Աստուածային զօրութեան հետ, Անոր «ԼԵԼԼՈՒ» ըսածը «կ'ըլլայ» ընելու համար :

Վերջապէս այս ամեն ըսածներնուս յայտնապէս

կ'երեւնայ թէ Երուսաղէմի և տաճարին վրայ Յիսուսի ահաւոր մարգարէութիւններէն նշանաւոր մ'ալ չմնաց դեռ, և վասն որոյ նախկին ախոյեանք Քրիստոնէութեան՝ Քրիստոսի այս մարգարէութիւնը յառաջ կը բերէին հակառակորդաց դէմ՝ յաստացոյց Աստուածայնութեան Քրիստոնէական կրօնի : (Ո-ՀԲ· ԸՆԴՐԵՄ Հրէից· Թէոդորէտ· ՃՈ· ԺՈ·)

Այս մարգարէութեանց աւելի ահաւորագոյնը որ միանգամայն Հրէից ազգին և քաղաքին հանդերձեալ նաւոր թշուառութիւնները կանխաւ կը պատմէ, և որք բառ առ բառ կատարուած են Տաճարին և քաղաքին կործանմանէն ի վեր, նախամարգարէն Մովսէս ալ հազարաւոր տարիներ առաջ մանրամասն նկարագրած ըլլալով, արժան է որ հոս դնենք, առնոնց կատարմանը հետ բազդատելու դիւրութիւն մը ըլլալու համար : «Եւ եղիցի եթէ ո՛չ լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ քոյ, պահել և առնել զամենայն պատուիրանս նորա զոր ես պատուիրեմ քեզ այսօր, եկեսցեն ի վերայ քո անէծքս այսոքիկ · · · : Եւ հալածեսցեն զքեզ և հասցեն քեզ մինչեւ սատակեսցեն զքեզ և մինչեւ կորուսցեն զքեզ· զի ո՛չ լուար ձայնի Տեառն Աստուծոյ քոյ, պահել զպատուիրանս նորա և զիրաւունս նորա զոր պատուիրեաց քեզ : Եւ եղիցին ի քեզ նշանք և արուեստք, և ի զաւակի քում մինչեւ յաւիտեան· փոխանակ զի ո՛չ պաշտեցեր զՏէր Աստուած քո ուրախութեամբ և ճչմարիտ սրտիւ, վասն բազմութեան իրաց ամենեցուն · պաշտեսցես զթշնամիս քո՝ զոր առաքեսցէ ի վերայ քո Տէր, ի սով և ի ծարաւ և ի մերկութիւն և ի նուաղութեան ամենայնի · և դիցէ անուր երկաթի ի պարանոցի քում մինչեւ սատակեսցէ զքեզ : Ածցէ ի վերայ քո ազգ ի հեռաստանէ ի ծագաց երկրի իբրեւ զվտռանալ արծուոյ · ազգ՝ զորոյ ո՛չ լուիցես զձայն նորա · ազգ՝

ժպիրհ երեսօք , որ ո՛չ աչառիցէ երեսաց ծերոց և ո՛չ ողորմեսցի տղայոց· և կերիցէ զծնունդս խաչանց քոց և զարդիւնս երկրի քոյ· և ո՛չ թողուցու քեզ ցորեան , գինի , եւղ , զանդեայս արջառոց քոց և զհօտս ոչխարաց քոց, մինչեւ կորուսցէ զքեզ· եւ նեղեսցէ զքեզ յամենայն քաղաքս քո , մինչեւ կործանեսցին պարիսպք քո բարձրացեալք և ամուրք՝ յորս դուն յուսացեալ իցես յամենայն երկրին քում· և նեղեսցէ զքեզ յամենայն քաղաքս քո՝ զոր Տէր Աստուած քո ։ Եւ կերիցես զծնունդս որովայնի քոյ , զմիս ուստերաց քոց և դստերաց քոց՝ զոր Տէր քեզ Տէր , յանձկութեան քում և ի նեղութեան քում , որով նեղեսցէ զքեզ թշնամին քոյ ։ Գիրգն որ ի քեզ և փափուկն յոյժ , չարաչնեսցէ յեղբայր իւր և ի կին ծոցոյ իւրոյ , և ի մնացեալ որդիսն որ մնայցեն նմա , առ միում ի նոցանէ ի մարմնոյ որդւոց իւրոց յորոց ուտիցէ , վասն չմնալոյն նմա ինչ՝ յանձկութեանն քում և ի նեղութեան , որով նեղեսցէ զքեզ թշնամին քո յամենայն քաղաքս քո։ Եւ գիրգն որ ի քեզ և փափուկն յոյժ , որոյ ո՛չ իցէ սահն իւրոյ առեալ զմորճ զնոյոյ ի վերայ երկրի վասն փափկութեան իւրոյ և զրդութեան , չարաչնեսցէ յայր ծոցոյ իւրոյ · և զաստրն իւր և զդուստր , և զազն եղեալ ի միջոյ իւրմէ , և զծնունդն զոր ծնանիցի՝ խորտկեսցէ ի նոցանէ և կերիցէ· և վասն նուազութեանն յամենայնէ թաքուսցէ յանձկութեանն և ի նեղութեանն , որով նեղիցէ զքեզ թշնամին քո յամենայն քաղաքս քո ։ Եւ եթէ ո՛չ լսիցէք առնել զամենայն բանս օրինացս այսոցիկ , զգրեալս ի գիրս յայսմիկ , երկնչել ի պատուականն և ի զքանչելի անուանէ Տէրն Աստուծոյ քոյ , նորա՛ն արասցէ Տէր զհարուածս քո և զհարուածս զաւակի քոյ , զհարուածս մեծամեծս և զարմանալիս , և զցաւս չարաչարս և զհիւանդութիւնս ։ Եւ ածցէ ի

վերայ քո զամենայն ախտս չարաչարս զԵգիպտացւոցն՝ յորմէ սոսկայիրն յերեսաց Ծոցա , և միանցին ի քեզ։ Եւ զամենայն հիւանդութիւնս և զամենայն հարուածս գրեալս ի գիրս օրինացս այսոցիկ , ածցէ Տէր ի վերայ քո՝ մինչեւ սատակեսցէ զքեզ· և մնասցիք թուով սակաւք , փոխանակ զի էիք դուք իբրեւ զաստեղս երկնից բազմութեամբ , և ո՛չ լսեսրուք ձայնի Տեառն Աստուծոյ ձերոյ ։ Եւ եղիցի որպէս ուրախ եղեւ ի ձեզ Տէր բարի առնել ձեզ , և բազմացուցանել զձեզ , նոյնպէս ուրախ լինիցի Տէր ի ձեզ՝ սատակել զձեզ · և բարձջիք յերկրէն յոր մտանելոց էք ժառանգել զնա ։ Եւ ցրուեսցէ զքեզ Տէր Աստուած քո ընդ ամենայն ազգս ի ծագս երկրի մինչեւ ի ծագս երկրի , և ծառայեսցես անդ աստուածոց օտարաց , փայտից և քարանց՝ զորս ո՛չ գիտէիր դու և հարք քո ։ Այլ և յազգն յայնմանիկ ո՛չ հանգուսցէ զքեզ , և ո՛չ լինիցի կայ քաթից ոտից քոց · և տացէ քեզ անդ սիրտ սրտմտեալ , և աչս տրտմեալս , և անձն հարեալ ։ Եւ եղիցին կեանք քո կախեալ առաջի աչաց քոց և զարհուրեսցիս գյայդ և գկերակ , և ո՛չ հաւատասցես կենացն քոց ։ Ընդ առաւօտս ասիցես թէ ե՛րթ լինիցի երեկոյ · և ընդ երեկոյս ասիցես թէ ե՛րթ լինիցի առաւօտ , ի զարհուրանաց սրտի քոյ զոր երկնչիցիս , և ի տեսլեանց աչաց քոց զոր տեսանիցես ։ Եւ դարձուսցէ զքեզ Տէր անդրէն Եգիպտոս նաւաք , հազարաւոր ճամբօք · և ընդ ճանապարհ ընդ նոյն ո՛չ յաւելուսցաք տեսանել զնա · և վաճառեսջիք անդ թշնամեաց ձերոց ի ծառայս և յաղախնայս , և ո՛չ ոք իցէ որ գնիցէ» ։ (Բ· Օրէն · ԻԸ· 15 · 45—68։)

Մարգարէացաւ Յիսուս Նաւե սպրդարձի կատարածին , մեռելոց յարութեան , հաստատակաց պատուհանի , արդարոց վարձուց և մեղաւորաց պատժոց համար (Ղ—կ· ԻՍ· 34—36 ։ Մ—թ· ԻՔ· 30—32։

Իե· 31—46։) — եւ որովհետեւ ատոնք ժամանակաց վերջին կը վերաբերին , և անոնց կատարուելու ժամանակը դեռ չէ եկած , այս տեղ չեմք կրնար ատոնց վրայ խօսիլ ։

ԲԱԺԱՆՈՒՄ Բ.

Քրիստոս Քահանայ

Ինչպէս որ մարդ արէն տեսակ մը միջնորդ՝ դեսպան է Աստուծոյ և մարդկան միջեւեղը՝ Աստուծոյ պատգամները մարդոց քարոզելու համար , այսպէս ալ քահանայն միջնորդ՝ դեսպան մըն է մարդոց և Աստուծոյ միջեւեղը՝ մեղաց քաւութեան համար զոհ և պատարագ մատուցանելու , (Եբր· ե· 1·) վարդապետին ներքին կողմը՝ ի Սրբութիւն Սրբութեանց մտնելով ժողովրդեան մեղքերն ու անօրէնութիւնները խոստովանելու , (Ղեւտ· ԺԶ· 21·) անոնց համար բարեխօսութիւն ընելու , (Յովհ· Բ· 17·) և դառնալով՝ Սրբութիւն Սրբութեանցէն դուրս ելլելով Աստուծոյ կողմէն ժողովուրդն օրհնելու ։ (Թուա· Զ· 23—26։)

Յիսուս Մեսիան ալ Աստուծոյ կողմէն ընտրեալ էր քահանայապետ յաւիտենից · (Եբր· ե· 3· 6·) «երդուաւ Տէր և ո՛չ եւս զղջայցի , թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի» , կամ «քահանայ» չըսեր · ըստ կարգին Մելքիսեդեկի» ; և «յաւիտեան» , յ՝ ինչպէս որ Մելքիսեդեկի քահանայութեան ո՛չ նախորդը և ո՛չ յաջորդը կար , այնպէս Յիսուս ալ յաւիտենական քահանայապետ եղաւ , ո՛չ նախորդ ո՛չ ալ յաջորդ ունենալով · ինչպէս Մելքիսեդեկ՝ Բաբելոնի Աստուծոյ քահանայ , Ասորեստանի թագաւոր , Խալդեացւոց թագաւոր էր , այնպէս եղաւ դերապանցօրէն և Որմին Աստուծոյ ։ (Եբր· է· 1—28։)

Ահարոնի կարգի քահանայութեան պաշտօնն էր ամէն պահել Իսրայէլի որդւոց հետ Աստուծոյ հաստատած ուխտը ։ — Քրիստոսի քահանայութեան պաշտօնը դեր քան զայն՝ հոգւոյն աչքովհէ և հոգւոյն ոչխոց հետ հաստատուելիք նոր ուխտին քահանայութիւնը , Աստուածային միջնորդութիւնն էր ։ Ահարոնի կարգի քահանայք՝ առանց երդման և միայն Սրբութեան իւղով օծուելով կը քահանայանային · բայց Քրիստոս Յիսուս՝ Հոգւով սրբով օծուեցաւ ի քահանայանալն , որում և Աստուած Հայր յերկինից վկայեց ։ (Մատթ· Գ· 16· 17։) — Քրիստոսի օծութիւնը ահաւորին Աստուծոյ անաւուտ երդմամբը եղաւ · քահանայք Ահարոնեան կարգի «առանց երդման են կացեալ քահանայք · բայց սա՝ երդմամբ , ի ձեռն Այնորիկ որ ասացն ցնա · երդուաւ Տէր՝ և ո՛չ եւս ղղջասցի , թէ դու ես քահանայ յաւիտեան · և այնչափ լաւագոյն ուխտի եղեւ երաշխաւոր Յիսուս» ։ (Եբր· է· 20—22։)

Քրիստոս՝ Ահարոնեան քահանայից այլ անթաւ անաւուններ պատարագ չհանեց Աստուծոյ սեղանը, այլ ինքզինքը · ինքնին միանգամայն քահանայ և պատարագ ըլլալով ։ (Եբր· Ը· 3։ Թ· 1—15։ 26—28։ Եփես· ե· 2։ Ա· Պետ· Ա· 19։ Բ· 24։ Գործ· Գ· 13։ Ես· ԾԳ· 10։) — Ահարոնեան քահանայից այն՝ որոնք էն առաջ ինքզինքնուն համար պատարագ կը մատուցանէին Աստուծոյ , հաւատարմագոյն իրենք ալ մարդկային տկարութեամբ զգած ելլալով · (Եբր· ե· 2· 3։) Քրիստոս ինքզինքին համար զոհ չըրաւ , ինքը «սուրբ , անմեղ , անարատ , զատեալ ի մեղաւորաց» էր · (է· 26·) ինքը զոհուեցաւ ի սեղան խաչին միայն այլոց համար , յ՝ բովանդակ աշխարհի մեղաց և անօրէնութեանց համար · (Մատթ· Ի· 28։ Մարկ· ժ· 45։ Ա· Տիմ· Բ· 6·) «Գնեցաք զմեզ յանիծից օրինացն , եղեալ վասն մեր անէծք» · (Գաղ· Գ· 13·)

որով և վերջացուց յանցանքը, հատուց մեղքը, անօրէնութիւնը քաւեց, և յաւիտենական արդարութիւն բերաւ, իւր անպարտական մահը բոլոր աշխարհի համար փրկանք տալով յաւիտենական։ (Գաղ. Բ. 21։)

Վերջապէս Ահարոնեան կարգի քահանայք անբան անասնոց արեամբը առժամայն յանցաւորութիւնը քաւելու քահանայութիւնն ունէին. իսկ Քրիստոս յաւիտենից մեղքը՝ յաւիտենական զատապարտութիւնը քաւելու, նոր ուխտ հաստատելու, Աստուածային հաշտութիւնը կնքելու, և այն հաշտութեան անխզելի մնալուն երաշխաւոր լինելու միանձնաւոր քահանայութիւնը և միջնորդութիւնը առանձնելու սահմանուած ըլլալուն, հարկ էր որ Մելքիսեդեկի կարգին քահանայութիւնն ունենար, ինչպէս որ ունեցաւ 'ի Հօրէ' երդմամբ. «՝ անար պէս «անհայր՝ անմայր՝ չհամարեալ յազգս. . . . քահանայ միանձնաւոր», (ԵԲր. է. 3.) անանցանելի անմահ ունենալով քահանայութիւնը, ինչպէս անննախորդ՝ նոյնպէս և անյաջորդ քահանայապետութեան մէջ. և յաւիտենից մեղքին յաւիտենական հատուցում ընելու և յաւիտենական արդարութիւնը բերելու համար՝ Մելքիսեդեկի առաւելապծած նուիրապծած հայեցուածքին՝ (Ծննդ. ԺԴ. 18.) իւր անմահական մարմինն ու արիւնը պատարագէր։ — Այսպէս քահանայացաւ Յիսուս Քրիստոս, որ իւր անձը պատարագելով Աստուածային անպարտական արեամբ մտաւ վարդապետին ներսի կողքը 'ի Արքութիւն Արքութեանց յերկինս, նստաւ «ընդ աջմէ Աստուծոյ, որ և բարեխօս իսկ է վասն մեր», (Հռոմ. Ը. 34. Ա. Յովհ. Բ. 1—3.) միանձնաւոր երաշխաւոր մնալով իւր միջնորդութեամբը հնչած հաշտութեան ուխտին. (ԵԲր. է. Ը. Թ. Ժ.) «Օրէնքն զմարդիկ կա-

ցուցանեն քահանայապետս զգածեալս տկարութեամբ. իսկ բանն երդմանն յետ օրինացն՝ զՈրդի որ յաւիտեան կատարեալ է։ . . . Եւ բազում են կացեալ քահանայք, վասն մահու արգել լինելոյ 'ի միանձնաւորել։ Իսկ սա՝ վասն յաւիտեան կենդանի առանց անցանելոյ ունի զքահանայութիւնն. ուստի և կենդանի առնել համօրէն կարող է զմատուցեալսն նովաւ առ Աստուած. քանզի միշտ կենդանի է՝ լինել բարեխօս վասն նոցա. . . . Բայց արդ առաջադոյն եւս պաշտամանն եհաս Յիսուս, որչափ լաւադոյն եւս ուխտի է միջնորդ՝ որ 'ի յաւուրսն աւետիսն օրինադրեցաւ։ . . . Եւ այնչափ լաւագոյն ուխտի եղեւ երաշխաւոր Յիսուս», (ԵԲր. է. 28. 22. 25—25. Բ. 6.) որով և «օրհնեաց զմեզ (Աստուած Հայր) ամենայն հոգեւոր օրհնութեամբ յերկինսաւորս 'ի Քրիստոս». (ԵՓես. Ա. 3.) կատարելով Աբրահամու հետ կնքած ուխտը, թէ «'ի զաւակի քումմէ օրհնեսցին ամենայն ազգք երկրի». (Գործ. Գ. 25. 26.)

ԳԱԺԱՆԴՈՒՄ Գ.

Քրիստոս Թագաւոր

Քրիստոսի թագաւորութեանը համար Ս. Գրոց մէջ գրուցուած է. «Ես կացի թագաւոր 'ի նմանէ 'ի վերայ Երուսաղէմ Սիոնի սրբոյ նորա՝ պատմել ինձ պհրամանս Տեառն». (Ս-ղմ. Բ. 6.) «Ահա աւուրք գան՝ ասէ Տէր, և յարուցից Դաւթի ծագումն արդարութեան, և թագաւորեսցէ թագաւոր և 'ի միտ առցէ և արասցէ իրաւունս և արդարութիւն 'ի վերայ երկրի». (Երեմ. ԻԳ. 5.) «Հաւատարիմ լիցի անուն նորա և արքայութիւն նորա առասպի իմ մինչեւ ցյաւիտեան, և ամենայն ազգք կացցեն կանդուն առաջի իմ մինչեւ ցյաւիտեան». (Բ. Թագ. Է. 16.)

Նաւուքրոդոնոսորայ երազին առանց ձեռին հատեալ քարը՝ որ ոտիզերաց յաչորդաբար աշխարհակալող չորս թագաւորութիւնները նկարագրող արձանը փշրելով ինքն լեցուց աշխարհս, այս երկնից յաւիտենական թագաւորը կը նշանակէր, ինչպէս որ մեկնեց պարզեց Դանիէլ. «Եւ յաւուրս թագաւորացն այնոցիկ յարուցցէ Աստուած երկնից թագաւորութիւն որ յաւիտեանս ոչ եղծանի. և թագաւորութիւն նորա ազգի այլում ո՛չ մնասցէ. ջանդեսցէ և հատեսցէ զամենայն թագաւորութիւնս, և ինքն կացցէ յաւիտեան»: (Բ. 44:)

Առնցմէ բացայայտ կ'երեւնայ թէ Քրիստոսի թագաւորութիւնը բոլորովին հոգեւոր էր և երկնաւոր, ինչպէս ինքն իսկ վկայեց, թէ «իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ». (Յ-Վ. ԺԸ. 36.) և իւր արքունիքը՝ արքայութիւնը ոտիզերաց ազգերէն և լեզուներէն կազմեալ ժողովուրդը. (ԵՓԷ. Ա.Գ. 28.) որոց վրայ յաւիտեանս թագաւորելու համար՝ ինչպէս էր յայտնութեան դիտումը՝ իսպառ հնազանդեցոյց ընդ իւրեւ զանոնք. անոնց հաւատոյ անսնօրինելի սկզբունքներ, բարոյից վսեմական օրէնքներ և եկեղեցւոյ կառավարութեան վարչութեան նոր սահմանադրութիւններ տուաւ. և իբրեւ վերին Իշխան և Գլուխ թագաւորութեան եկեղեցւոյ, (Մ-Ա. ԻԸ. 18.) նուաճեց իրեն՝ և իւր թագաւորութեան թշնամիները, Սատանան՝ մեղքը՝ մահը և դժոխքը. և իւր թագաւորութիւնը այլ եւս մինչեւ ի յաւիտեան անոնց երեսէն ապահով ըլլալու վիճակի մէջ դնելով, Ե՛լ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր՝ յաթոռ յաւիտենական թագաւորութեան հօր իւրոյ Դաւթի, հոգեւորապէս յաւիտեան իշխելու և պաշտպանելու համար իւր եկեղեցւոյն: (ԵՓԷ. Բ. 6—18:)—Այսպէս աւետեցին Մարգարէք կանուխ. «Ուրա՛խ լեր յոյժ

դո՛ւստր Սիովնի, քարոզեա՛ դո՛ւստր Երուսաղէմի. ահա թագաւոր քո գայ առ քեզ, արդար և փրկիչ, նոյն հեզ՝ և հեծեալ ի վերայ իշոյ՝ և յաւանակի նորոյ. և ոտնակոխեցէ զկառս յԵփրեմայ, և զերիվարս յԵրուսաղիմէ, և խորտակեսցէ աղեղն պատերազմող, և բազմութիւն և խաղաղութիւն յազգաց. և տիրեսցէ ջրոց ի ծովէ մինչեւ ի ծով, և ի գետոց մինչեւ ի ծագս երկրի: Եւ դու արեամբ ուխտի քոյ արձակեցեր զկապեալս քո յանջրդի գբոյ. . . : Եւ Տէր եղիցի վերակացու նոցա. և ելցէ իբրեւ զփայլակն նետ նորա. և Տէր, Տէր Ամենակալ փող հարցէ, և դնասցէ շարժմամբ սպառնալեաց իւրոց. Տէր Ամենակալ պաշտպանեսցէ նոցա. . . : Եւ փրկեսցէ զնոսա Տէր Աստուած նոցա յաւուր յայնմիկ՝ իբրեւ զոչխարս զժողովուրդ իւր. . . :» (Զ-ա. Թ. 9—17:) «Այլ նոքա կամէին թէ հրաշիւք լեալ էին. զի Մանուկ ծնաւ մեր, Որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն իւր եղեւ ի վերայ ուսոց իւրոց. և անուն կոչեցաւ նմա Հրեշտակ մեծի խորհրդոյ. Սքանչելի խորհրդակից. Աստուած. հզօր. իշխան. հայր հանդերձելոց աշխարհին: Եւ ես ածից զիշխանութիւն ի վերայ իշխանաց նորա, և առողջութիւն նմա. մեծ է իշխանութիւն նորա, և խաղաղութեան նորա չիք սահման: Ցաթոռն Դաւթի նստցի, և զարքայութիւն նորա յաչողեսցէ. և զօրացուսցէ զնա իրաւամբք և արդարութեամբ, յայսմհետէ և յաւիտեանս ժամանակաց»: (Ե-ա. Թ. 5—7:) — Այսպէս ալ կատարուեցաւ. «Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն. . . Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ վկայէն, որ է Անդրանիկ ի մեռելս, և իշխան թագաւորութեանց երկրի, որ սիրեաց զմեզ, և ելոյծ զկապանս մեղաց մերոց արեամբն իւրով. և արար զմեզ թագաւոր և քահանայ Աստուծոյ և Հօր իւրոյ»: (Յ-ա. Ա. 4—6:) «Դուք

ազգ էք ընտիրք, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական, որպէս զի զմեր առաքինութիւնան նուիրիցէք այնմ, որ զձեզ 'ի խաւարէն կոչեաց յիւր զքանչելի լոյսն. որք երբեմն չժողովուրդ, բայց արդ ժողովուրդ Աստուծոյ. որք չողորմեալք, այժմ ողորմութիւն դտէք» : (Ա. Պետ. Բ. 9. 10:) Յովհաննու տեսիլքի երիցունք «Օրհնէին երգս նորս և ասէին. արժանի' ես (Գառնդ զննեալ,) առնուլ զդիրդ' և բանալ զկնիք դորա. զի զնար' և գնեցեր զմեզ Աստուծոյ արեամբդ քով' յամենայն ազգաց և 'ի լեզուաց և 'ի ժողովոց հեթանոսաց. և արարեր զսոսա Աստուծոյ մերոյ թագաւորս և քահանայս' թագաւորել 'ի վերայ երկրի» : (Յայտ. Ե. 9. 10:) Զի Աստուած Հայր «Յարոյց զՆա 'ի մեռելոց, և նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս, 'ի վերոյ ամենայն իշխանութեան, և պետութեան, և զօրութեան, և տէրութեան և ամենայն անուան անուանելոյ. ո՛չ միայն յաշխարհիս յայսմիկ, այլ և 'ի հանդերձեալումն. և զամենայն ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նորա : Եւ զնա եդ գլուխ 'ի վերոյ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա. լրումն՝ որ զամենայն յամենայնի լնու» : (Եփես. Ա. 20—23 :)

ՀԱՏՈՒԱԾ Գ.

ՏԵՐԵՂՈՒԹԻՒՆ ՅԱՒԻՏԱՅ ՔԱՀԱՆԱՊԵՏԻ

ՊՐԱԿ Ա.

ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ ԳԱԼԱՏԵԱՆ ՄԵՍԻԱՅԻՆ

Որպէսզի Աստուծոյ 'ի կերպարանս մարդոյ յաշխարհի երեւելոյ ժամանակը հասնիշխարհական ապականութիւն մը կար բոլոր Տիեզերաց ազգաց մէջ

Տիեզերական փրկչի մը, որ պիտի յայտնուէր և զաշխարհ ընդ իւրեւ պիտի նուաճէր. անտարակոյս մասամբ մը նախասահմանութենէն և ըստ նմանէ նահապետներէն առ ընդհանուր մարդկութիւնն իջեալ աւանդութեննէն, մասամբ մ'ալ բաղաւոնս՝ առ Մովաբացիս՝ գՀրէից հարդարէութեննէն, որ առ Բաղակաւ (1), և առաւելութեամբ ինն՝ Նաբուքոդոնոսորայ երազէն, որ բովանդակ երկրի աշխարհակալելու սահմանեալ չորից թագաւորութեանց և ազգաց մէկզմէկ յաջորդելու կարգը կը գուշակէր, և զոր քալ մեկնեց Դանիէլ առ Բաբելացիս : (Բ. 44:) — Եւ քանզի շատ տարիներէ 'ի վեր արդէն ցրուած ցանուած էին Հրէայք տիեզերաց գոգցեա ամեն ոլորտները, Բաբելոն, Հայաստան, Պարսկաստան, Միդիա, Բերիա, Փիւնիկէ, Եգիպտոս, Հնդկաստան, Չինաստան, և մինչեւ իսկ Ամերիկայ, (Խրեն. Գր. Գ. եր. 156. 163. 200: Հմտ. պատմ. Ապօստ. Պետ. 'ի Բեթրոպ. եր. 440: Լ'Ադե Սէնէք. 'ի հմտ. փիլիս. չէթէց ճնուած:) Ու նաեւ իբր 200 տարիէ 'ի վեր թարգմանուած էր Աստուածաշունչ Մատեանը 'ի ցոյն լեզու, և բնականաբար ժամանակին գիտնականաց՝ իմաստնոց և իմաստասիրաց ձեռքը կը պտըտէր, Աստուածային Նախախնամութեան կամելովը որ կանխաւ պատրաստէ ազգերը ակնկալութեան հանդերձեալ Մեսիային : Հրէայք եւս իրենց բոլոր սփռուած տեղերնին տանելով Ս. Գիրքերը հետերնին, և շատ անգամ ըստիպուած ըլլալով բանիւ բերանոյ մեկնել բացատրել իրենց օրէնքներն ու մարգարէութիւնները այն

---

(1) «Ձագիսոյ առաջն Բաղաւոյ, և յարիցէ այր յիրայէլէ, և հարցէ զիշխանս Մովաբայ և առցէ աւար զամենայն որդիս Սեթայ, և եղիցի նմա եդեմն ժառանգութիւն եւսաւ թշնամւոյ իւրոյ. և իրայէլ արար զօրութեամբ. և յարիցէ այր 'ի Յակովբայ, և կորուսցէ զապրեալսն 'ի քաղաքէ անտի . . . » : (Թուոց. ԻԴ. 17—19:)

ամենայն ազգաց հեթանոսաց՝ յորս բնակէիրն, և որք հետաքրքիր էին յոյժ ամենայն ազանց աստուածներն ու օրէնքներն գիտնալու. կարելի չէր որ Հրէից այս հիմնական աւանդութիւնը հանուրց ազգաց չաճանցուէր։ Սինն իրի և Յաւիտենական բանին Հօր մարդեղութեան ժամանակ՝ հանդերձեալ աշխարհական փրկչի մը ակնկալութիւնը կար բովանդակ աշխարհի ազգաց և ազանց մէջ, որոց և պաշտամանց մէջ ալ անոր հետքը կ'երեւնար։ Աթենացւոց Անծանօթին Աստուծոյ բադինը, (Գործ. ԺԷ. 23.) եգիպտացւոց փրիէ Տըդիոն դիքը, և Հիւսիսային ազգաց դիցարանութեան մէջ յիշուած այն աստուածութիւնը որ կը կոչուէր՝ Գերագոյն Էակն Մէ-Ֆէն, Մէ-Ընդ Աստուծոյ և Տըդիոն, Ֆէթ վէլոպն ելոհիմ ծնող, յայտնապէս նոյն հիմնական աւանդութեան բեկորները՝ և իրենց ակնկալութեանց յայտարար անխաբ նշաններն են։

Տակիտոս կը վկայէ, թէ (Գերէ. Ե. Գլ. 13.) նոյն ժամանակ արեւելք նոր զօրութիւն պիտի ղրկուի, և թէ՝ անոնք որ Հրէաստանէն պիտի գան՝ աշխարհի պիտի տիրեն (1)։ Սուետոն աւելի ապուշ կը խօսի.

(1) Տարակոյս չկայ որ արեւելից այս աւանդական ակնկալութեանց հիմն ու հաստատութիւն եղած են՝ վերը գրուցուած պատճառներուն հետ մեկտեղ՝ հետեւեալ մարգարէութիւնները, զորս կրնային կարդացած կամ լսած ըլլալ. "Եկուցէ ի Սիովն փրկիչ, և դարձուցէ զամբարշտութիւնս Յակովբայ՝ ասէ Տէր, և այս նոցա որ յինէն ուխտ՝ ասէ Տէր. . . զի սպրդ և Թագաւորք որ քեզ ոչ ծառայիցեն՝ կորիցեն. և սպրդն աւերելով աւերեսցին. . . . Եւ եկեսցեն առ քեզ զարհուրելոք որդիք նեղչացն քոց՝ զայրացուցչացդ, երկիրպագցեն հետոյ ոտից քոց, ամենեքին որ զարհուրեցուցանէիրն զքեզ. և կոչեսցիր քաղաք Տեառն Սիրոյն Իսրայելի." (Ես. Ծ. 20. կ. 12—14.) "Զարթուցից զորդիս քո Սիոն՝ ի վերայ որդւոցն Յունաց. և շո. շախինցից զքեզ իբրև զսուսեր պատերազմողի. և ցէր եղիցի վերակացու նոցա. և ելցե իբրև զփայլակն նետ նորա, և Տէր, Տէր Ամենակալ փող հարցէ, և գնասցե շարժմամբ սպառ-

«Բոլոր արեւելք յոյժ վաղնջական հաստատուն կարծիք մը տարածուած կայ. իբր թէ անոնք որ նոյն ժամանակ Հրէաստանէն պիտի երեւնան՝ նախահաստատուած է որ երկրի պիտի տիրեն»։ (Ի վերլիպոխոն. Գէ. Դ.) Նոյն բանը կը կրկնեն և Փիլոն, (Հոփ. Բ. եր. 449. 499. 435.) Քլարիոս, (դոռերոչեն Հրէից. Գր. Գ. Գլ. 28. և Գր. Դ. Գլ. 31.) և Եհեղիպպոս։ (Յղ. պորոմէ. երուսղ. Գր. Ե. Գլ. 44.) Վիրգիլիոս ալ ի Տարտածականն իւր (Գ. 4—10.) կ'ըսէ. «Կը դառնայ հիմայ կոյսը. կը դառնայ կառնոսի թագաւորութիւնը. հիմայ երկինքէ բարձունքէն. . . կ'իջնայ նորածին մանկան նոր գարմը, որով երկաթի դարը դադրելով՝ ընդհանուր տիեզերաց վրայ Ոսկեղէն դարը պիտի յառնէ»։ —Հայաստանի հարեւանին գաւառները՝ և կամ ինչպէս Աւետարանիչը կ'անուանէ՝ Արեւելք այնչափ հորունկ արմատ բռնած էր Յակովբայ Աստղին գուշակութիւնը, որ երեք մոգերը անտարբեր աստղը տեսածնուն պէս՝ Հրէից աշխարհական թագաւորին Աստուածային ծնունդը գուշակեցին (1) և երուսաղէմ

Նաւեաց իւրոց. . . ո. (Ջոփ. Թ. 9—17.) "Ո՞ տացե ի Սիոն՝ նէ փրկութիւն Իսրայելի. ի դարձուցանել Տէառն դերութիւն ժողովրդեան իւրոյ, ցնծասցէ Յակոբ և ուրախ եղիցի Իսրայէլ։" (Սաղմ. ԺԳ. 7.)

(1) Հրէից Թագաւորին Աստուածային ծնունդը գուշակեցին Մոգք, ըստ որում մոգերուն այցելութիւնը Յիսուս Թագաւորին իրրեւ աշխարհիկ տիեզերական Թագաւորի մը չէր, այլ Աստուածային էրինաւոր Նախնարի. Աստուածային ծննդեան, Քանզի՝ աբեւելից ընդարձակ երկիրներէն՝ ուսկից կու գային մոգք չէր կրնար ազգութիւն, Հրէից իշխանութեան տակ չէին, որ Յիսուսի իրրեւ իրենց վերհասեալին Թագաւորանոց ծիրանածնի ծննդեան խնդակցութեան գային. Հռովմայեցիք կ'իշխէին աշխարհի. և Հրեաստան ալ Օգոստոսի իշխանութեան տակ՝ Հերովդէսիս կը կառավարուէր. ապա ուրեմն հասարակ Թագաւորի մը չէր իրենց այցելութիւնը։ Մոգերը Հերովդէսի պալատին մէջ ալ չբնակեցին այն Օգոստական մանուկը, ուր պետք էր բնակէին՝ եթէ

վազեցին։ Զինացւոց հասար ալ նոյն բանը կ'ըսեն երկրին պատմիչները, պատմելով թէ Քրիստոսի ծնունդէն 65 տարի ետքը Զինաց ինքնակալը քննիչ հանած է 'ի Պաղեստին, ստուգելու հասար, թէ երկնից Գերագոյն Աստուածը իրաւ ծնա՞ւ։

Իսկ Հրէից գալով, Ճշմարիտ Մեսիայի գալստեան ժամանակը եկած հասած լրացած ըլլալուն գաղափարը անանկ ընդհանրացած էր մէջերնին, որ նոյն ժամանակ խիստ շատ սուտ Մեսիաներ երեւցան և այնչափ հետեւողներ ունեցան, ինչպէս կը պատմէ Փլաւիոս։ (ղ-ոբերոլէն Հրէից։ Գր։ Գ։ Գլ։ 8։ Պր։ 9։ եւ Գր։ Դ։ Գլ։ 10 Պր։ 7։) Ղուկաս աւետարանչն թեւդան և ցուղա Գալիլիացին կը յիշէ յանուանէ, որոց ետքինը բուն իսկ Յիսուսի ծնած աւուրն՝ աշխարհագրին օրերը երեւցաւ։ (Գործ։ Ե։

աշխարհական Թագաւորի մը ծննդեան այդ եղած ըլլալին։ Երուսաղէմի մէջ սուր անուր կը հարցընէին Հրէից, թէ "Ո՞ր է որ ծնաւ արքայն Հրէից, զի տեսաք զաստղն նորա յարեւելս, և եկաք երկիրպագանել նմա»։ (Մտթ։ Բ։ 1—2։) Ու երբ որ աստղին առաջնորդելովը եկան գտան մանուկը, չե թէ արքունի փառաց և պերճութեանց մէջ պայիկներէ և ծառայներէ շրջապատեալ, շքեղ ոսկեձեղուն ապարանից մէջ, այլ անշուք աղքատին խղիկի մը՝ անասնոց գոմի մը մէջ, խոնաւարրուկ պատած՝ մուրը դրուած։ Հդարձան յետս դայթակղելով և աչհամարհելով, այլ Աստուածօրէն պատուելին վինքը երկրպագութեամբ, և պատարագ մատուցին նմա՝ իբրեւ մարդոյ և Թագաւորի՝ ոսկի։ իբրեւ Աստուծոյ մարգապետ՝ խունկ։ և իբրեւ մարդացեալ Թագաւոր — Ասորոց որ հանդերձեալ է մեռանել՝ զմուռս։ (Մտթ։ Բ։ 8—11։) — Ապա ուրեմն յիրաւի է ասել թէ ընդ ամենայն արեւելս արմատացեալ ակնկալութիւնը չէ թէ երկրաւոր Թագաւորի մը համար էր, այլ երկնաւոր Աստուածային Թագաւորի մը որ գտնելոցս ընդ իւրեաս նուաճելու համար պիտի գար յայտնուելոց։ Ասոր մեծ վկայութիւն մեծ ապացոյց մ'ի նաև վերը յառաջ բերուած Զինացւոց ինքնակային 'ի Պաղեստին քննիչ հանելը, երկնից Գերագոյն Աստուածին ծնունդը ստուգելու համար։ (Տե՛ս ապացոյն եւ փաղդիդիոս պղպոնոյան էվսեբեոյին վկայութիւնը հերետիկոս գ։ գրոյին գլ։)

38—37։) Աւետեան Իսրայէլ այնպէս անձկանօք կ'ըսպասէին այցելութեան Մեսիային, որ այն ինչ երեւցան մոգերը յԵրուսաղէմ և սկսան հարցընել Նորածին Թագաւորը, բոլոր Երուսաղէմ իրար անցաւ և Հերովդէս աւելի. Նորածին Թագաւորի անունը լսելո՛ւն պէս՝ հասկըցաւ որ Մեսիան էր այն, զորմէ ստէպ Հրէից խօսիլը լսեր էր։ և Հրէից ծերակոյտը ժողվելով չհարցուց անոնց թէ ձեր հին Թագաւորաց ցեղերէն որի՞ն զաւակ ծնած է, այլ թէ՝ «Ո՞ւր ծնանիցի Քրիստոս»։ (Մտթ։ Բ։ 2—5։) Մանաւանդ Հարբին ալ կ'ըսէ, թէ բոլոր Հրէաստան ապստամբեցան Հռովմայեցիներէն վրէժ պահանջու և Տիտոսի օրերը, լաւ համոզուած ըլլալով որ Դանիէլի եօթանասուն եօթներորդները լցուած էին, և հարկ էր որ Մեսիան յայտնուէր։ Սմին իրի և ամենեքին «Ակն ունէին փրկութեանն Երուսաղէմի»։ (Ղ-ա։ Բ։ 38։) և գՅովհաննէս մկրտիչն ալ երբ տեսան որ արդարութեան ճամբան կը քարոզէր ապաշխարութեան մկրտութեամբ, կարծեցին թէ Քրիստոս ինքն է։ (Ղ-ա։ Գ։ 15։)

ՓՐԱԿ Բ.

Ծնունդ Նորա և կեանք երկրաւոր

Երբ որ՝ 'ի յաւիտենից նախատահմանեալ մարդկային ազգի փրկագործութեան ժամանակները լրացան, աշխարհի արարչութեան 4000րդ տարին (ըստ միջին հաշուոյ պատմագրաց Թուականութեան, և կամ՝ ըստ եօթանասնից Թուականութեան՝ 5508 երորդ ամին,) երեւեցաւ փրկիչն աշխարհաց, Բեթղեհէմի մէջ մանուկ մատաղ ծնանելով։ և առ յոյժ աղքատութեանն՝ այրի կամ ախոռի մէջ խանձար-

բանալաւ՝ 'ի մեռս եղեալ· (Ղ--Կ· Բ· 1—7։) Այն՝ որ աւետեաց Գաբրիէլի յղացեալն էր Հոգւով սրբով յարդանդ մաքրուսարդեալ՝ անհարանացեալ Սրբոյ կուսին խօսեցելոյ Յովսէփայ· (Ա· 26—38·) և ուխտօրեայ թլխամաեալ ըստ օրինաց՝ անուանեցաւ Յիսուս, ինչպէս որ պատուիրած էր Հրեշտակն Յովսէփայ։ (Բ· 21։)

Յայտնեցաւ բացօթեայ հովուաց, (Բ· 8—20·) ընծայեցաւ մոգուց· (Մ--Ր· Բ· 1—13·) քառասնօրեայ տաճարը բերուեցաւ՝ յանդիման լինել Տեառն. (Ղ--Կ· Բ· 22·) 'ի դիմի Սիմէոնի դրուեցաւ, Աստուած և փրկիչ ծանուցաւ ամենայն ժողովրդեան, հեթանոսաց լոյս և Իսրայէլի ժողովրդեան փառք· (Բ· 25—33·) և այրեցաւ 'ի կուսորսկէ մանկանցն Բեթղեհէմի 'ի ձեռն Յովսէփայ, որ գիշերադնաց եւ գիպուամս փախուց պինքը մօրը հետ մէկտեղ՝ յապրտարարութենէ հրէշտակին. (Մ--Ր· Բ· 13—19·) ուր մնաց մինչեւ Հերովդի մահը իբր 3 կամ 7 տարի, ուսկից դարձաւ անդրէն իր հայրենի երկիրը Նազարէթ, վասն որոյ և կոչեցաւ առ յապային Նազովրեցի։ (Բ· 19—23։)

Աւետարանաղխրք շատ քիչ բան աւանդած են Քիստոսի երեսնամեայ կեանքէ վրայ՝ որ յառաջ քան զհրապարակական յայտնութիւն Առաքելութեան իւրոյ· քանզի զանոնք չարժող Հոգին՝ այս նպատակին համար չէր թելադրած զանոնք· ուստի և այսչափ մը կը գրեն անոր մանկութեան վրայ՝ թէ Հոգւով և իմաստութեամբ կը զօրանար և Աստուծոյ չնորհքը վրան էր· (Ղ--Կ· Բ· 40·) և թէ երկուտասնամեայ՝ Երուսաղէմի տաճարը գտնուեցաւ անդամ մը երեք օր ինստուելէն ետքը՝ գիտուն ռաբբիներու և օրինաց ուսուցիչներու մէջ, որոց անանկ խելացի հարցումներ կ'ընէր, և անանկ իմաստուն պատասխաններ կու տար, որ բոլոր լսող-

ները կ'զարհուրէին անոր իմաստութեանը վրայ։ Մինչեւ իր երեսնամեայ հասակը հնազանդ և հպատակ էր իր ծնողաց· (Բ· 41—52·) և իր հայրը սեպուող Յովսէփին ձեռնատու կը գտնուէր, ինչպէս կ'ըսէ աւանդութիւնը, անոր հետ հիւսնութիւն կ'ընէր։ (Մ--Կ· Զ· 3· ըստ Յն։)

Երեսուն տարուան հասակին երեւցաւ Յորդանանու եղերքը, ուր Յովհաննէս մկրտութեան մկրտութիւն կը քարոզէր՝ 'ի պատրաստութիւն ընդունելութեան Նորին· (Մ--Ր· Գ· 1—13·) մկրտեցաւ 'ի նմանէ 'ի Յորդանան, ուր Հայր յերկնից վկայեաց, և աղաւնակերպ եկն էջ Հոգին 'ի վերայ նորա· (Մ--Ր· Գ· 13—17։)—Վարեցաւ Հոգւովն յանապատ, և յետ քառասնօրեայ անեռազրութեան՝ փորձեցաւ 'ի սատանայէ և յաղթեաց նմա։ (Դ· 1—11։) Եւ յետոյ ուրեմն եկն 'ի Կանա Գալիլեացւոց 'ի հարսանիսն, ուր յայտնեաց զիտաւս իւր, իւր հրաշից նախանշորհքովը, (Յ--Ը· Բ· 1—11·) և իբր առաքելական պաշտօնը Գալիլեայէն սկսելով՝ (Մ--Կ· Ա· 14—15·) քարոզեց ընդ ամենայն տեղիս Հրէաստանի· (տես 'ի վերն Հատուած Բ· Գրակ Ա· Բաժանում Ա· Գլխոցս Մ--Ը--Ը·) հրաշագործեց ամենատեսք, ա'զր և ալեաց և հարկ տեսաւ· բժշկեց շատերը իրենց հիւանդութիւններէն և հարուածներէն· դեւերը հանեց, կոյրերուն աչքը լուսաւորեց, խուլերուն ականջները բացաւ, համրները խօսեցուց, կաղերը ոտք հանեց, անդամալոյծները զօրացուցեց և մեռեալներն ողջնացուց։ (Ղ--Կ· Է· 21—22· եւ։) —Զառաջինն հրաշագործելուն՝ չուրը գինիի փոխեց· (Յ--Ը· Բ· 1—11·) երկրորդ՝ հինգ և եօթն հացերը քիչ մը ձկներուն հետ օրհնելով՝ հինգ և չորս հազարներ կշտացուց· (Մ--Ր· Ժ· 17—21· Ժ· 34—38·) երրորդ՝ ծովը ամենեւին ծուխ չգտնուած տեղներ՝ հրաշիւք առատ ձուկ բռնել տուաւ որսորդաց·

(Ղ–ԿԱ· Ե· 4—7։ Ց–ՂԿ· ԻԱ· 3—6·) երկդրամեանի սահմերը՝ ծովը լողացող ճկան բերանին մէջ ստեղծագործեց · (Մ–ԴՐ· ԺԷ· 26·) լոկ սաստիւ՝ մրրկաց, հողմոց և ալեկոծութեանց կատաղութիւնները սանձեց · (Ը· 24—27։ Մ–ՒԿ· Դ· 37—40· եւն·) 'ի հարկաւորութեան՝ ծովուն վրայէն քալելով անցաւ գնաց · (Մ–ԴՐ· ԺԴ· 25—32։ Մ–ՒԿ· Զ· 48—52·) և երբ իւր առաքելութեան պայմանները չկատարած՝ թշնամիք առ յոյժ կատաղութեան՝ քշեցին զինքը լերան գլուխը որ անդունդները գահավիժեն, հրաշիւք «անցեալ ընդ մէջ նոցա գնայր» ։ (Ղ–ԿԱ· Դ· 28—30։)

Ցայտնեց իւր փառքն 'ի թաբոր · (Մ–ԴՐ· ԺԷ· 1—8·) այլ յայտնագոյն ևս առաջի բազմութեան ժողովրդեան յԵրուսաղէմ 'ի ժօնին, յորժամ գոչեաց · «Հայր փառաւորեա զՈրդի քո · եկն բարբառ յերկնից · ե՛ւ փառաւոր արարի, ե՛ւ դարձեալ փառաւոր արարից ։ Եւ ժողովուրդն որ կայր և լսէր, ասէին՝ որոտումն լինել · Կէսքն ասէին, հրեշտակ խօսեցաւ ընդ նմա ։ Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ · ո՛չ վասն իմ ինչ եկն բարբառս այս, այլ վասն ձեր» ։ (Ց–ՂԿ· ԺՒ· 28—30։) Նոյն Աստուածային փառաց զօրութիւնն էր, որով «յեսս յեսս չոգան և զարկան զգետնի» որք զինքը բռնելու եկեր էին · (ԺԸ· 6·) որ և 'ի մահուն՝ հանուրց աշխարհի յայտնեցաւ՝ խաւարմամբ արեգականն (Ղ–ԿԱ·ԻԳ·44։)

Երեք տարիէն աւելի ժամանակ ընդ ամենայն Հրէաստան շրջելով՝ քարոզեց, խրատեց, յորդորեց, յամենայնի օրինակ տալով զանձն՝ ամենաւնաքուր սրբութեան, առաքինութեան և Աստուածպաշտութեան՝ առնելով և ուսուցանելով ։ (Գ–ՊԾ· Ա· 1։) Իւր բոլոր քարոզութիւնը Սէր էր · սիրոյ մեծ վարդապետն էր ինքը · սէր կը քարոզէր, (Ց–ՂԿ· ԺԳ· ԺԴ· ԺԵ·) և սէր կը գործէր յամենայնի · սէր առ Աստուած Հայրն, (Ց–ՂԿ· Զ· 38։ ԺԴ· 31·) սէր պատիւ և

հնազանդութիւն առ մարմնաւոր ծնողս, (ԺԹ· 27։ Ղ–ԿԱ· Բ· 5·) սէր առ ազգակիցս ըստ մարմնոյ և ծանօթս · (Ց–ՂԿ· ԺԱ· 5—36։ ԺԳ· 23·) սէր առ հայրենիս · (Մ–ԴՐ· ԺԵ· 24։ ԻԳ· 37։ Ղ–ԿԱ· ԺԹ· 41։) սէր առ մանկունս · (Մ–ԴՐ· ԺԹ· 13—15·) սէր առ աշակերտսն · (ԺՀ· 1—5 եւն·) առ մեղաւորս իսկ · (Թ· 10—13։ Ղ–ԿԱ· ԺԹ· 10·) և առ թշնամիս խաչահանուն, որոց վասն աղօթէր 'ի խաչին, (Յ–ՂԿ· Գ· 16։ Ղ–ԿԱ· ԻԳ· 34։)

Այնչափ աղքատ և ընչատեաց եղաւ, որ իւր գլուխը դնելու տեղ չունէր · (Մ–ԴՐ· Ը· 20·) օտարներուն տուները կը պահակէր երբ հիւրընկալէին զինքը · իսկ եթէ հրաւիրող չըլլար, ցորեկները տաճարին մէջ ուսուցանելէն ետքը՝ Ձիթենեաց լեռը կ'ելլար կը պահակէր գիշերները ։ (Ղ–ԿԱ· ԻԱ· 37։) Իւր մարմնաւոր պիտոյից կարեաց անվոյթ՝ (Մ–ՒԿ· Գ·20։ Ց–ՂԿ· Դ· 31—34· եւն·) հաւատացեալք «պաշտէին զնա ընչիւք իւրեանց» · (Ղ–ԿԱ· Ը· 1—3։ Ց–ՂԿ· Դ· 33·) և այն դոյզն նպաստներէն ալ մասն կը հանէր աղքատաց կարօտելոց· (Ց–ՂԿ· ԺԳ· 29·) բայց և հանդերձ այսու ամենայնիւ՝ չատ անգամ այն օգնութիւններէն ալ զուրկ գտնուելով՝ անձնդիւրութեան համար չէր հրաշագործէր · մի անգամ միայն կը յիշուի՝ թէ քառասնօրեայ անասուղութենէն յետոյ «Հրեշտակք մատեան և պաշտէին զնա» · (Մ–ԴՐ· Դ· 11·) և երկդրամեանի հարկին սահերը հրաշագործելն ալ դարան գործոցաց հնարած գայթակղութեան առաջքն առնելու համար էր · (ԺԷ· 26·) մինչ քանիւ՝ յետին աղքատութեան մէջ մեռաւ, հագած զգեստներէն զատ ուրիշ ինչք չթողուց, և անունք ալ գինուորները մէջերնին բաժնելնուն համար՝ մօրը ապրուստին համար գանկ մը չմնաց · և վասն որոյ զայն խնամելոյ հոգը՝ իւր սիրոյ աշակերտին յանձնեց ։ (Ց–ՂԿ· ԺԹ· 25—27։)

Միշտ հեզ և խոնարհ եղաւ · (Մ–ՈՒ· ԺԱ· 29·) մաքսաւորաց և մեղաւորաց հետ հացակից ըլլալը, (Մ–ՈՒ· Թ· 10—13 եւ ·) մեղաւորներէն օձուիլը, (Ղ–Կ· Է· 37—39·) և քաղաքականութեամբ՝ բարեպարիշտ երեւցող մարդկան իրեն դէմ ցոյց առած քաղաքավարական անհրաժեշտ ձեւերու զանցառութիւնը՝ (Յ–Ն· 44—46·) նախատինք չսեպեց իրեն · մինչեւ իր աշակերտներուն ոտքերը լուալու խոնարհեցաւ : (Յ–ՀՌ· ԺԳ· 4—15:) ժողովրդական ցոյցերէ կը խորշէր, (Ղ–Կ· Դ· 43—44·) պատուասէր մարդիկներէ իրեն ընծայուած պատուաղիր անունները կը մերժէր · (Մ–ԻԿ· Ժ· 17—18·) և երբ խնացաւ որ Հրէայք պինքը բռնի թագաւոր սիսի պսակեն, փախաւ լեռը՝ միայն ընդ միայն · (Յ–ՀՌ· Զ· 15·) և ժողովուրդը իր այշխատ անձնուրացութեանը այնպէս լաւ հասոզուած էր որ առաջին անդամ պինքը հեծանելոյ վրայ տեսնելով թէ՛եւ անարդ իշոյ և յաւանակի վրայ նստած, (Զ·Բ· 14·) այն իրեն մեծ փառաւորութիւն հաւաքեց, և յաղթող թագաւորի մը յաղթանակի հանդիսիս ընդունեց պինքը ·

Իր բոլոր կեանքը մէջ աւետեաին արատ մը չերեւցաւ անոր վրայ · ոչ միայն վկայութեամբ աշակերտացն, թէ «Ո՛չ արար մեղս, և ո՛չ գտաւ նենգութիւն 'ի բերան նորա» · (Ա· Պետ· Բ· 23·) իր ամենէն ոխերիմ թշնամիներն անդամ չկրցան ամենեւին պատասխան գտնել, երբ ինքը լուռ 'ի լուռ հրապարակաւ բողոքեց · «Ո՞ ոք 'ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղացս» · (Յ–ՀՌ· Ը· 46·) և ո՛չ իսկ մինչեւ հիմայ կրցան արատ մը բիծ մը քսել անոր վրայ : — Քահանայապետաք դպիրք ծերք, բովանդակ Հրէական ազգն անգամ՝ գոնէ առաջին վկայութիւն մը կը փնտռէին սպաննելու համար զայն՝ ու չէին գտներ : (Մ–ՈՒ· ԻՋ· 59:) Յուդա դիւրաւին դնաց առ յուսահատութեան՝ «զի մատնեցի՛ արեան

րիւն անպարտս» : (Ի՛ն· 4:) Պիղատոս եւս ուզի ուշով քննութիւն ընելով Հրէից ամբաստանութեանց գՅիսուսէ, հրապարակաւ ըսաւ · «Ահաւասիկ ձեր թագաւորդ» · (Ղ–Կ· ԻԳ· 14—15:) «Անպարտ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ, դուք դիտացջիք» : (Մ–ՈՒ· ԻԷ· 24:) «Եւ մինչ նստէր յատենին, առաքեաց առ նա կինն իւր և ասէ · Չկայ ինչ՝ քո և Արդարոյն այնորիկ, զի բազում անցք անցին ընդ իս այսօր յանուրջս վասն նորա» : (ԻԷ· 19:) — Վերջապէս անհուն սիրոյ՝ դըթութեան և ողորմութեան անզուգական տիպար մը եղաւ իր աշակերտելոց · մինչեւ իսկ իր անձը դրաւ պանոնք իր մահուամբը փրկելու համար · յանդիմանութեան մէջ անդամ գթած հեզ ու չափաւոր գտուեցաւ · Ցուդայի մատնութեան ներողապատիր համբոյրը երեսին գարնելու համար՝ հերիք սեպեց միայն ըսել, «Յուդա՛, համբուրելո՞վ մատնես զՈրդի մարդոյ» · (Ղ–Կ· ԻԲ· 47—48·) և պինքը յաւէնի քահանայապետին արտաքոյ օրինաց և իրաւանց ատեանին՝ (1) չատացաւ միայն հեզութեամբ արտի ընելու, «եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա՛ վասն չարին · իսկ եթէ բարւոյ, ընդէ՞ր հարկանես զիս» : (Յ–ՀՌ· ԺԸ· 22—23 :) — Անպարտ գերիի մը դնով՝ (ԵԼԼՅ· ԻՄ· 32·) երեսուն արծաթի (ս երեսուն սատերի՝ որ է 390 դրչ·ի) ծախուիլն (Մ–ՈՒ· ԻՉ· 15·) ամօթ չհամարեց իրեն · տարտուհամարատար երկայնմտութեամբ ամէն տուտ զըր-

(1) Աւանդութիւն է թէ՝ յաւէնի քահանայապետին այս տասնամեայ ապտակը զարնող սպասաւորին՝ Գրապատիկէի տապանի Ջուրց յուզուելուն ոգեստոյ երեսուն և ութ ամայ հետէ անդամալոյծ գտնուողն էր · զոր Քրիստոս բժշկեց " Ա՛ի՛ և մեղանչեր ո ըսելով · (Յ–ՀՌ· Ե· 5—15·)

պարտութեանց, հայհոյութեանց, թուքերուն և ծեծերուն. չալկեց ըստ անձին՝ իւր անարգ տանջանաց գործին, (Յ-ՂՀ. ԺԹ. 17.) և մինչդեռ Պիւրենացւոյն օգնութեամբը (Գ-ԱԿ. ԻԳ. 26.) քարշ՝ի քարշ կառավինատեղին կ՚երթար ցաւոց տանջանաց և մահաբոյր հեծանին բեռան տակ խոնջ՝ ընդ քիրտն և ապաժոյժ եկեալ, գթաց՝ լացաւ և ողորմեցաւ՝ի վերայ բազմութեան ժողովրդեանն որ երթայր ձեռ նորա, և կանանց՝ որ կոծէին և աշխարէին զնա. (ԻԳ. 27.) մինչեւ տարին գամեցին գինքը իրրեւ չարագործ՝ի խաչափայտն՝ գլուխկան գաւին մատուցուած օրը, և կախեցին մերկ՝ զմեկուքիւն Աղամայ, ինչպէս որ սովորութիւն էր Հռովմայեցւոց ամենէն անարգ գերիները այսօրինակ խայտառականահ պատուհասել: Խաչին վրայ ալ էն կսկծագին ցաւոց մէջ՝ դարձեալ անօրինակ հաւերժութեամբ ընդունեց լուիկ այն աւետն կծու նախատինքները, կատակներն ու ծաղրաբանութիւնները զորս կը տեղային իւր վրայ ո՛չ միայն քահանայապետք դպիրք և ծերք անխծապարտ ապստին Հրէից, (Մ-ՂՒ. ԻՀ. 39—43.) այլ նաեւ այն անարդ անօրէն աւազակներն ալ, որք իւր երկու կողմերը խաչուեր էին՝ի նախատինս Քիստոսի: (ԻԴ. 47, Մ-ՒՒ. ԺԵ. 32. Ղ-Ի. ԻԳ. 39.) — Չհանդուրժեց երկինք այս տիրասպան անպարշտութեան, ՚ի վեց ժամէ աւուրն խաւար պատեց երկիրը, խաւարեցաւ արեւը՝ մինչեւ երեք ժամ. սասանեցաւ երկիր, վէմք պատառեցան, գերեզմանք բացան, ցելաւ ընդ մէջ վարագոյր տաճարին յերկուս՝ի վերուստ մինչեւ՚ի վայր. . . : (Մ-ՂՒ. ԻՀ. 45. 51. 52. Ղ-Ի. ԻԳ. 44. 45. եւն:)

Մեռա՛ւ և պատարագեցաւ իններորդ ժամուն՝ տաճարին մէջ օրինաց հրամայած զոհից մատուցուելու պահուն: (Ղ-Ա. ԻՀ. ԻԹ.) Մեռա՛ւ ամպա-

րըշտին արժանաւոպարտ մահուամբը, իւր մօրը, իւր սիրելեաց և բոլոր արեանաբրուտ քրիստեաց աչացն առջեւ: (Յ-ՂՀ. ԺԹ. 25. 26. Ղ-Ի. ԻԳ. 48.49.) Մեռա՛ւ կախուելով, անէծք եղաւ մեր սիրոյն, (Գ-ՂՐ. Գ. 13.) ընդ անօրէնս համարեցաւ, (Մ-ՒՒ. ԺԵ. 28.) այլ՚ի նոցունց իսկ՚ի խաչահանութենէ՝ վկայեցաւ թէ «Արդարեւ Որդի Աստուծոյ էր Սա»: (Մ-ՐՆ. ԻԷ. 54.) Մեռա՛ւ անօրէններուն հետ կախուելով, բայց հարուստին հարուստ գերեզմանը քաղուելով հարուստներու ձեռքով, և վիմափոր նոր գերեզմանին մէջ սուրբ կտաւօք և խնկօք պատանդուելով՚ի Ցովսէփայ նախարարէն և՚ի Նիկոդիմեայ իշխանէն, (Մ-ՒՒ. ԺԵ. 42—46. Ղ-Ի. ԻԳ. 50—53. ՑՂՀ. ԺԹ. 38—41.) հարուստին հետ եղաւ ըստ մարգարէին: (Ե-Յ. ԾԳ. 9.)

Յարեա՛ւ Աստուածահրաշ սքանչելեօք յաւուր երրորդի՝ «Առաջին պտուղն ննջեցելոց», (Ա. Կ-ՆԹ. ԺԵ. 20.) յաւուր՝ յորում հնձող որպէս երախայրեաց նուէրը կը մատուցուէր՚ի տաճարին. (ԵՂ. ԻԳ. 16 ևն.) և քառասուն օր չրջելով յերկրի ստէպ երեւմամբ աշակերտացն՝ ծնողին և այլոց բազմաց հաւատացելոց, հանեց աշակերտները Ձիթենեաց լեռը, օրհնեց՝ և Ս. Հոգին իրենց զօրավիդ խրկելու խոստմամբ մխիթարելով զնոսին՝ համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր: . . . (Մ-ՒՒ. ԺՋ. Ղ-Ի. ԻԴ.)

Քիստոսի Քրիստոսի վրայ երեւցած այսօրինակ դերասանքուր սրբութիւնն ու անմեղութիւնը՝ որ անբնական է մարդկան, մանաւանդ արդեան անկեալ վիճակնուն մէջ. (Հ-ՒՂ. Է.) և անոր վրայ միշտ փայլած այն Աստուածային անհուն իմաստութիւնը՝ որով մարդոց սրտերն ու խորհուրդները գիտէր, (Մ-ՐՆ. ԺՌ. 25. Մ-ՒՒ. ԺՌ. 8. Ղ-Ի. Ր. 8. ՑՂՀ. Ա. 47. Ր. 25.) և ապագայից կանխագէտ էր,

(տե՛ս Նախագր. Գ. Պրակի Ա. Բաժանումը, Բէնսոս Մ-բէ-ըէ.) և իբր գործած անհամար սքանչելիքները որոց մէկ քանին վերեւն յիշեցինք, զորս Քրիստոս կը գործէր իբր Աստուածային Ազաքելութիւնը հաստատելու և ցուցընելու համար թէ ինքը Աստուած և Որդի Աստուծոյ էր. (Յ-ՀԿ. ժ. 37—42. ԺԱ. 42. եւ.) և որոց աւելնէն մեծը՝ գեր քան զհրաշս հրաշալիքն էր՝ իբր ինքնաղօր Յարութիւնը. — ասոնք ամենը՝ կ'ըսեմ, սիներեւ յայտնի կը ցուցընեն, որ Ցիսուս՝ Քրիստոսն էր, և թէ նա ինքն՝ լոկ մարդ չէր, այլ Աստուածային անձն էր մարմին զգեցեալ, Աստուած էր մարդացեալ. կամ՝ ինչպէս որ ինքը հաճեցաւ անուանել զանձն՝ Որդի Աստուծոյ, և Որդի մարդոյ:

Իրօք ալ այսպէս դասեցին բազումք յարատաքնոց: — Տերտուղիանոս կը գրէ (Ի Պոռոխ. Գլ. Ե.) թէ՝ «Երբ որ Պաղեստինացւոց Աստրիքէն (1) Աստուածեղէն մարդոյն Ցիսուսի յայտնութեան վկայութիւնները պատմեցին Տիբերիոսի՝ որու աստենը Քրիստոնէութիւնը մտաւ յաշխարհ, Տիբերիոս բոլոր այն վկայութիւնները Ծերակուտին առջեւն հանեց՝ իբր վճիռն ալ վրան աւելցընելով: Բայց քանզի Ծերակոյտը ինքը չէր քննած, մերժեց: Իսկ Կայսրը

(1) Անտարակոյս Պաղեստինացւոց Աստրիքէն բառածը Հայաստան էր, ուսկից գրեց մեծ Աբգար Արշամեան առ Տիբեր, զոր մէջ կը բերէ Խորենացին՝ Տիբերիոսի պատասխանոյն համ գերձ. (Խոր. Բ. Գլ. ԼԳ.) յորում այսպէս կը գրէ Տիբեր. "Ի բաղմաց լուեալ մեր յառաջագոյն, եղոյց և Պիղատոս... վասն որոյ և ես կամեցայ առնել զայդ զոր և դու խորհեցար (տալ պաշտել զՔրիստոս իբրեւ Աստուած)... և իմ յայտնեալ զբանս զայս Սինկղիտոսին՝ արհամարհեաց Սինկղետոսն, զի ծշ քննեցաւ նա յառաջագոյն ի սմանէ: Այլ մեք հրաման առաք ամենայն ումեք որուժ և հաճոյ թուեսցի Ցիսուս, քննպատիլ ինա ընդ աստուածս, և սահ այնոցիկ սպառնացեալ, որ չորոշոտ կայցեն զՔրիստոսեմէնն»:

իբր առջի խորհուրդին վրայ կնեցաւ, պատիժ սպառնալով Քրիստոնեայներուն ամբաստանողներուն»: — Լաւրբիանոս հեթանոս պատմիչն՝ որ կայսերական պատմութեանց մատենադիրներուն մին էր, Աղրիանոս կայսեր համար կ'ըսէ, թէ հրամանն առաւ որ ամեն քաղաքներու մէջ՝ ի պատիւ Ցիսուսի Քրիստոսի տաճարներ չինուին, առանց դրօչելոց և կռոց. այլ թող չտուին, որ մի' դուցէ ամենքը Քրիստոնեայ դառնան, և մեհեանք մնակուին: Աղեքսանդր Սեւերոսի համար ալ կ'ըսէ թէ միտքը դրաւ Ցիսուսի Քրիստոսի տաճար մը կանգնել, և ընդ աստուածս դասակարգել զայն, զոր արդէն իբր առանին դից կարգը դասեր էր: — Պորփիւր Քրիստոնէութեան ոխերիմ թշնամին՝ կը համարէր զՑիսուս Քրիստոս իբրեւ երկինքէն իջեալ աննման մարդ մը, որ սիրելի էր աստուածոց և արժանի անմահութեան: (Եւսեբ. Նախապարաս. Ա-եւս. Գ. Ե. Օէոսր. յղ. տղտ. Ա.սիդ. ժ.Թ. 29.) Ինչպէս նաեւ Հերոկղէս՝ նոյնպէս թշնամի քրիստոնէից, զՑիսուս Քրիստոս կը կոչէ «Այր մեծ և բարեհամբաւ դից»: (Ի էոլգն ճշմարտասէր. որոն եւսեբիոս պատասխան էրած է.)

Ցովհաննու երրայեցին առանկ կը խօսի Անոր վրայ. «Այն պատճառներն էր Ցիսուս իմաստուն մարդը, թէ որ արժան է մարդ կոչել զայն. վասն զի սքանչելագործ էր նա և ուսուցիչ անոնց որք մեծ դիւրութեամբ կը հնազանդին ճշմարտութեան. բայց ի Հրէից և ի հեթանոսաց հետեւեցան անոր, և հաւատացուեցաւ թէ Քրիստոսն է: Եւ Պիղատոս՝ առ նախանձու իշխանաց մերոց գինքը խաչը հանելէն ետքն ալ հաստատ կեցան իրենց սիրոյն մէջ անոնք որ գինքը սիրեցին յառաջն. վասն զի երրորդ օրը կենդանի երեւցաւ անոնց, որուն համար մարգարէից գրքերը աւետեր էին այս ամենը

և ուրիշ հրաշալի բաներ ալ. և մինչեւ ցայսօր չը նուազեցաւ յանուն Ն֊որին անուանեալ Քրիստոնէից ազգը»։ (ի Հնոխ. Հբէից. ԺԸ. 3։)

Խառնեմք այս կարգին Ռուսսոյի վկայութիւնն ալ՝ որ իւր առողջ մտածմանց մէջ խօսած է. «Ո՞ւր կը դտնուի անանկ իմաստուն մարդ մը որ գիտնայ այսպէս վարուիլ, հաւրերել և մեռնիլ՝ առանց դժկամակութեան, և առանց զանձն ընծայեցընելոյ։ Երբ որ Պղատոն մտացածին արդարոյ մը նկարագրութիւնը կ'ստեղծաբանէ, անանկ արդար մարդու մը՝ որ առաքինութեանց բոլոր յարդին արժանի է և յանցաւորութեան ամենայն անարգանաց մատնուելոր է, կարծես Յիսուս Քրիստոսը նկարագրեց։ Նմանութիւնն այնչափ է որ՝ բոլորը հայրեսրուն խելքը առոր տեղ ըրաւ, և կարելի չէ՛ որ ճշմարիտ ըլլալէ վրիպի»։ Եւ բաղդատելով զՅիսուս Սոկրատայ հետ՝ վրայ կը բերէ. «Ո՛րչափ սխալ մըտածութիւն և ո՛րչափ կուրութիւն պէտք է ունենայ մէկը որ Սոփրոնիսկոսի որդին Մարիամու Որդւոյն հետ ուզէ բաղդատել։ Բաւէ՛. ո՛րչափ հեռաւորութիւն կայ երկուքին մէջ տեղը։ Երբ Սոկրատես մեռաւ ցաւ չքաշելով և չխայտառակուելով, իւր մեծանձնութիւնը դիւրաւ պահեց մինչեւ իւր յետին շունչը. բայց թէ որ անանկ դիւրին մահ մը պատուած չըլլար իւր կեանքը, մարդ կրնար տարակուսիլ, թէ մի՛ գուցէ Սոկրատ իւր բոլոր ոգւովը իմաստակ մ'ըլլայ»։ Ուստի և լաւ եւս կը կնքէ իւր խօսքը. «Թէ որ Սոկրատինը իմաստունի մը կեանքն ու մահն էր, Յիսուսինը Աստուծոյ մը կեանքն ու մահն է»։

ՊՐԱԿ Գ.

Հաւատամիք հրաշից Յիսուսի Քրիստոսի և Աւետարանաւոր աքանչելեաց

Յիսուս Քրիստոս հրաշք կը գործէր ամեն ուր որ պէտք ըլլար, առանց դէղոյ և պատրաստութեանց, վաղվաղակի, մէկ խօսքով և հրապարակաւ, առանց բազմութեան հաւատացելոյ և անհաւատից, բարեկամաց և թշնամեաց։ Անդամալուծին՝ Մուխդ առ քեզ՝ կ'ըսէր, հիւանդը կ'ողջնար կ'երթար. (Մարկ. Թ. 6.) ձեռքը չորցած մարդուն Ձեռքդ երկնցո՛ր կ'ըսէր, ձեռքը կ'ըմբնանար. (Ժբ. 13.) կոմի «բէե՛ց կ'ըսէր բորոտին, բորոտութիւնը անոր վրայէն կ'երթար, (Ը. 3.) և չորս օրուընէ 'ի վեր թաղուած հոտած մեռելին «Ղազարէ՛, արի եկ արտաքս» կ'ըսէր, մեռելը վերկենցաղեալ՝ կենդանի դուրս կու գար գերեզմանէն։ (Յովհ. ԺԱ. 43.)

Յիսուսի մահացու թշնամիք՝ քահանայք և դպիրք և փարիսեցիք, ևս և Սադուկեցիք և Հերովդիանոք ընդ որս և ծերք և իշխանք Հրէից, խիստ մանր քննեցին կրկտեցին անոր հրաշքները, ստուգեան՝ կեղծեաց կամ խարդաւանաց դոյզն ինչ նշան կամ երեւոյթ մը վնտռեցին գինքը խայտառակելու համար. և այս հերիք էր իրենց. զի երկրին իշխանութիւնը կառավարութիւնը իրենց ձեռքն ըլլալով, ժողով ընդ ժողով կրնային գինքը կորանցընել հրապարակելով միայն անոր կեղծիքը։ Այլ ընդ վայր յոգնեցան. վկայ 'ի ծնէ կուրին մանր և երկար քննութիւնը, (Յովհ. Թ.) յորում երբ 'ի դերեւ ելաւ այն մեծ հրաշքը սուտ հանելու ճիգ երնին (1), ջանային

(1) Նոյն մանր քննութիւնն ըրին յետոյ Յիսուսի աշակերտաց հրաշիցալ, ինչպէս Պետրոսի և Յովհաննու 'ի ծնէ կաղին բը-

գէթ հաստատել, թէ «Ո՛չ է այրն այն Աստուծոյ, ով զարանիս ս՛չ պահէ»· իսկ այլք պատասխանեցին· «իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր՝ այսպիսի նշանս առնել»· և երբ նոյն իսկ բժշկելոյն ըսին, թէ «Տո՛ւր փառս Աստուծոյ, մեք գիտեմք զի այրն մեղաւոր է», նա պատասխանեց· «Թէ մեղաւոր իցէ՝ ես ո՛չ գիտեմ· բայց զայս գիտեմ, զի կոյր էի՝ և արդ տեսանեմ· · · եթէ ո՛չ Աստուծոյ էր այրն այն, ո՛չ կարէր առնել ինչ» ևն։

Թշնամիք ինքնին անոր հրաշից տուժգութեան և հրաշագործ կարողութեան այնչափ քալ համոզուած և վառահ էին ականատես ըլլալնին, որ իրենք իսկ ծերք Հրէից կ՝ազաչէին զՅիսուս հարիւրապետին ծառային համար միջնորդելազ ասէլ՝ «և ասէին· արժանի է որում զչնորհս զայս առնիս»։ (Ղ.-Կ· Է· 1—10։) Եւ յորժամ տեսան որ անոր անհամար հրաշագործութեանց պատճառաւ այնչափ մարդիկ (Ցվն· ԺԱ· 45·) միշտ իսկ Իսրայէլ և «աշխարհ ամենայն» հաւատացին և անոր ետեւէն կը չրջէին, (ԺԲ· 42·) անհնարին վարանման մէջ մնան· չկրցան և չկամացին ալ տուտ հանել անոր հրաշքները· այլ մանաւանդ խոստովանեցան եւս թէ «Զի՞նչ արասցուք, զի այրն այն բազում նշանս առնէ»։ (ԺԱ· 47։) Քաղաքական պատճառներ մէջ բերին, միշտ իսկ ճգնեցան քաղաքական յանցաւորութեան դարանի մէջ ձգել զինքը՝ ոտգայթ լարելով· ինչպէս Մատթէոս կը պատմէ· «փարիսեցիքն առին խորհուրդ ընտանել, թէ ո՛րպէս զնիցեն նմա որոգայթ բանիւք· և առաքեն առ նա

Ժշկութեան քննութիւնը։ (Գործ· Գ· Դ·) յորում Հրէից ծերակոյտ առեանը տախտուեցաւ խոստովանելու և նոցին հրաշից առաքելութիւնը· «Զի՞նչ արասցուք այսոցիկ· զի երեւեալ նշան եղեւ ի նմանէ ամենայն իսկ բնակչաց Երուսաղէմի յայտ է և ո՛չ կարեմք ուրանալ»։ (Գործ· Դ· 16։)

զաշակերտան իւրեանց Հերովդիանոսեաքն հանդերձ՝ և ասեն· · · «Պա՞րտ է հարկս տալ կայսեր՝ թէ ո՛չ» ևն· (Ի՞· 15—22։) Երբ որ ասոր միջ ալ խայտառակուեցան և անհնարին եղաւ մտան, սուտ վկայութեանց դիմել բռնադատուեցան, չէ թէ անոր հրաշքները առնլու, այլ ո՛ւ իցէ յանցաւորութիւն մը անոր վրայ չմեղլու համար, որ գինքը կորընչեն· այն ալ չկրցան նէ՝ կեղծաւորութեամբ երդուցուցին գինքը որ ըսէ թէ Աստուածորդին ի՞նքն է· և զայն պատրուակ առած մատնու դատապարտեցին գինքը իրենց օրինաց և մարդ սրէից անտեղեակ գիշատասին ասելանը· ըսելով թէ «Մեք օրէնս ունիմք, և ըստ օրինաց մերոց պարտի մեռանել, զի ընդ Ը-ր Ոբդ Ա-ծո-ծոյ ա-ր-ր»։ (Ց-ՀՀ· ԺԹ· 7։) Այս պատճառը՝ գիտնալով Պիղատոս որ սուտ էր և առ նախանձու յօդեր էին, բանի տեղ չդրաւ նէ՝ այն ատեն աւելնէն խորամանկ քաղաքագիտական դաւը նենգեցին ըսելով· «Եթէ զդա արձակես, չես բարեկամ կայսեր· ամենայն որ զոր թագաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր»· (ԺԹ· 12·) և յաջողեցան այս դաւին մէջ։

Անկից ետքն ալ՝ Հրէայք որ քալ գիտէին թէ ամենէն մեծ հրաշքն ունի գործել Յիսուս, ցանել ի մեռելոց, ըստ որում կանխաւ բսած էր այս բանը, ամեն զգուշութիւն ձեռք առին անոր առաջքն առնելու համար՝ Պիղատոսն ու պինդարներն ալ իրենց աջակից ունենալով, անշուշտ նախախնամութեան առաջնորդելովը։ Քանզի Հրէայք կախուածներուն ծնգուրները կտրտելու համար Պիղատոսէն հրաման առնելնուն՝ որպէս զի շուտ մեռնին անոնք, զի մի՛ անդէն ի խաչին ազանիցին մարմինքն, և թաղուին, որովհետեւ մեծ շաբաթու ուրբաթ երեկոյն էր· երբ որ երկուց աւազակաց ծնգուրները կտրտելնուն ետքը Յիսուսի քովն եկան

և տեսան որ այն ինչ մեռեալ էր, թէպէտ անոր ծունկերը չկարդացին, որով և մարգարէութիւնը կատարած եղան, բայց «մի ոմն 'ի պինուորացն սուր բաւ խոցեաց զկող նորա» · (Ց֊Ո· 34·) զի այս արարուածքն եւս պէտք էր լեցուիլ, որ կողածնին պատրանքը՝ յանցաւորութիւնը կողին հարուածով քաւուէր · Հռովմէական սկզբէ խոցուելով, որ մեռելը կ'ողջացընէր բացած մեծ վէրքին պատճառաւ, որ եթէ մարած՝ չմեռած ըլլար, անշուշտ պիտի սթափէր · բայց Նա՝ իւր կամօքը իւր Հօրը ձեռքն աւանդեր էր իւր հոգին արդէն : Եկաւ Արեմաթացին Յովսէփ, խնդրեց Պիղատոսէն իրեն չնորհել Յիսուսի մարմինը, անթաղ՝ գազանաց կերակուր ձգուելու, այրուելու և կամ ծովը նետուելու խայտառակութեան չմատնել : Եւ թէ'ևս Յովսէփ Նախարար էր և մեծատուն և Պիղատոսի համար ալ պատուաւոր, (Մ֊Ղ· ԻԷ· 57· Մ֊Ւ· Ժ·Ե· 43· Ղ֊Կ· ԻԳ· 50·) Պիղատոս չուտ մը չտուաւ մարմինը · և «Զարմացաւ՝ թէ այնչափ վաղ մեռաւ · և կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց ընդ և ասէ, թէ արդ՝ երբ այնչափ վաղ մեռաւ · և իրրեւ տուեղեաց 'ի հարիւրապետէ անտի, չնորհեաց զնարմինն Յովսեփայ» : (Մ֊Ւ· Ժ·Ե· 43—45·)

Քահանայապետք և դպիրք այսչափ դգուշութեամբ գոհ չեղան : Երբ Յովսէփ և Նիկոդիմոս մխիթար քարէ մորուած նոր գերեզմանի մը մէջ գՅիսուս թաղելէ յետոյ՝ վրան մեծ քար մըն ալ գլորեցին, գոցեցին դուռը և գացին, 'ի վաղիւ անոր անոնք եկան Պիղատոսին քովը ժողվուեցան, հոգ չընելով ամենեւին՝ թէ Պասեքատօնին մեծ շաբաթու օրը հեթանոսի բնակութիւնը մտնելով ինչ օրինազանց սղծութիւն կը գործէին· «Տէ՛ր, ըսին, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն՝ ասէր մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ : Արդ հրա-

մայեա՛ զգուշանալ գերեզմանին մինչեւ ցերիս աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա, և ասիցեն ժողովրդեանն, թէ յարեաւ 'ի մեռելոց» : (Մ֊Ղ· ԻԷ· 62—64·) Պիղատոս օրինաւոր դատաւ իրենց պահանջը, բայց յանձն չառաւ ինքը պահապաններ տալու · «Ունիք զգօրականս՝ ընտրեցէք, երթայք զգուշացարուք որպէս և գիտէք» · (ԻԷ· 65·) իրենց հրամանին յանձնուած զինուորներ կային · այն զինուորներէն պահապաններ դրէք ըսաւ, որ ձեղմէ կախեալ ըլլալով՝ անոնցմով ապահովապէս զգուշանաք · այս ի'ըսէր պահպանութեան պատասխանատուութիւնը վրան չառնելու համար · անոնք ալ գացին, նախ ինքեանք գերեզմանին դուռը՝ զինուորներուն հետ մէկտեղ, և յետոյ այն զինուորները պահապան թողուլ գնացին : (ԻԷ· 66·)

Բայց Քրիստոս յարեա՛ւ : Պահապանները վազեցին քահանայապետներուն, որք չատ տակ տուին անոնց ըսել տալու համար՝ թէ մեր քնացած ատեն աշակերտները եկան գողցան անոր մարմինը · այլ ո՛րչափ արդեօք չատ տակ տուին նաեւ իշխանութեան որ այն զօրականները դատի չկոչեն · քանզի Հռովմէական զինուորութեան անառարինելի օրէնքն էր՝ մահու դատել այն զինուորը՝ որ պահնորդութեան ատեն նիրհէր կամ մրափէր : Սակայն և այնպէս հաճեցուցին քահանայք դատաւորը՝ ընել ի'նչ որ իրենք ծերակուտիս որոշեցին · (Մ֊Ղ· ԻԸ· 11—15·) «և եղ համբաւս այս 'ի Հրէից մինչեւ ցայսօր» : Աշխարհի վիճակութեան Յիսուսի յարութեան համբաւը սուտ հանել հնարեցան ահա մինչեւ մեր ժամանակը նորա · «Ասացի՛ք, երթ աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ մեք 'ի քուն էաք» · և ո՞ր ատեանն է որ՝ մարդու մը քնացած ատեն պատահած բանի մը համար՝ այն մարդուն վկայութիւնն ընդունի :

Արդարեւ ամենէն մեծ հրաշքը գործուած կ'ըլլար, եթէ Յիսուս Քրիստոս ամենեւին հրաշք մը գործած չըլլար, և առ կենդանութեամբ իւրով՝ «մեռնելէս ետքը յարութիւն պիտի առնեմ» ըսէր, յարութիւն չառնէր, «ոչ եւս», և այլազան հազարաւոր բիւրաւոր միլիոնաւոր մարդիկ քիչ ժամանակի մէջ անոր հաւատքին դառնային. և անոր՝ մեռելներէն յարութիւն առնելուն վկայելու համար անգթութեան և վայրենութեան հնարել կրցած ամենէն սոսկալի տանջանքներով մեռնէին, որս գտնուէին մանաւանդ իմաստասէրներ, քահանայներ, օրէնսգէտներ, և ամեն երկրէ ու լեզուէ դիւաններ, հարուստներ, նախարարներ, իշխաններ եւն»: (1)

Եւ ինչո՞ւ չհաւատային, չհաւատալի ինչ կար: Այն որ կարող էր իշխանաբար յարուցանել զայլս, կարող էր և զանձն յարուցանել, յանձն իւր ուներով կենսատու զօրութիւնը. միջին ճամբայ չը կայ. կա՛մ պիտի հաւատայիք ասոր, և կամ Քրիստոսի վկայեալ բոլոր աքանչելիքները պիտի ուրանայիք, որ անհնար է: — Ս. Օգոստինոս կ'ըսէ. (Ա-

(1) Քրիստոնէական կրօնիս Աստուածայնութեան մէկ ուրիշ վկայութիւնն ալ այս է: — Ի՞նչ բան է. ի՞նչ զօրութիւն եր որ այն տկար կիները. փխիկասուն հարսերն ու օխերդները և մատաղ մանուկները կը զօրացընէր այն անլուր տանջանաց մէջ, որոց յոյժ թեթեւ նկարագրութիւնը միայն լսելով մեք կը զարհուրինք, և գող կը բռնեն մեր երիկամունքը. եթէ ոչ այն Աստուածային ընթերցակայ զօրութիւնն ու Հոգւոյն օգնականութիւնը, որով "Ես պահեցից զքեզ ի ժամ փորձութեան քո որ եւս փրկիչը: (Յայտ. Գ. 10:) "Առջիք զօրութիւն ի հասանել Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձեր. և եղիջիք ինձ վկայք. . . մինչեւ ի ծագս երկրի»: (Գործ. Ա. 8: Դ. 33: Փիլէմ. Գ. 15. Եբր. ԺԱ. 34. Ե. Տիմ. Գ. 17. և այլն) — Սուտ կրօնքներուն բնաւ մեկնելն մէջ՝ բնաւ ուրեք չերեւցաւ այս զօրութիւնը. . . . Ապա ուրեմն Աստուածային է Քրիստոնէական կրօնքը որ ի փորձութիւնս իսկ կը զօրացընէ զհաւատն՝ յաղթել տանջանաց և մահու:

ԻՈՒՍՏ. Ա. Թ. 5) «Քրիստոսի յարութիւնը հիմայ բոլոր ուժերնիս կը քարոզուի, և հաւատովը կ'ընդունուի. եթէ անհաւատալի բան մ'ըլլար, ինչպէս կը հաւատար բոլոր աշխարհ»:

Քրիստոսի յարութիւնը այնչափ ճշմարիտ իրողութիւն մ'է, որ հռչակաւոր անաստուածներէն Սվինոզա՝ այսպէս կ'ստիպուի խոստովանիլ. «Կը խոստովանիմ, թէ Քրիստոսի յարութիւնը անանկ պատրաստ պատմուեցաւ, որ անհնար է մեղ ուրանալ, թէ Աւետարանիչք ինքնին Քրիստոսի մարմինը յարուցեալ տեսած չըլլան. և թէ անհաւատք չէին կրնար զանիկայ տեսնել՝ ինչպէս որ պնդիք եաւան, եթէ գտնուած ալ ըլլային այն տեղուանք, ուր Քրիստոս երեւցաւ իւր աշակերտաց»: Ուստի եւս որ ամեն պատեհ առթիւ յայտնեալ կրօնքը կ'զգծանէ, կ'ստիպուի ասանկ ըսել իւր Եմիլիոսին մէջ. «Սոկրատայ գործքերը՝ զորս ո՛չ ոք երկրայութեան տակ կը ձգէ, վկայութեան այնչափ հաւաստիք չունին, որչափ Յիսուսի Քրիստոսի գործքերը»:

Եւ քանի իսկ. քանզի Յիսուսի Քրիստոսի գործած հրաշքները՝ ինչպէս նաեւ անոր երկրաւոր կեանց գանազան պարագայներն ու զուգընթաց դէպքերը թշնամիք իսկ՝ Հրէայք և Հեթանոսք և անաստուածք կը հաստատեն. միայն թէ ատոնք այն հրաշից զօրութիւնը դեւերուն ընծեղծերուղ իշխանին կու տային, զՔրիստոս՝ Աստուածայնութենէ օտար՝ վարպետ կախարդ մը երեւցընել ջանալով, զոր ինքն քաջ հերքեց Քրիստոս Աւետարանն. (Մատթ. ԺԲ. 24—29: Ղ-ի. ԺԱ. 15—20:)

Թաքնուտը գրողները նոյնպէս չկրնալով ուրանալ Քրիստոսի աքանչելագործութիւնը, կը հաստատեն զայն. ըստ որում՝ ջանալով ցուցընել որ նա Աստուածորդի չէը, ո՛չ ալ Մարգարէն, և թէ՝ ո՛չ անձին ոչ ալ Աստուածային Հոգւոյն զօրութեամբ

կը գործէր այն հրաշքները, կ'ըսեն թէ՝ Յիսուս քար մը գողցած էր Սբ-ՈՒն Սբ-ՈՒԵՆՅԷՆ, յորում դրոշմուած էր Աստուծոյ աքանչելագործ անթարգմանելի անունը՝ ԵՀՈՎԱՀ կամ ԻՎԷ, ՅՈՒ ԷՅ. հրաշագործելու համար այս անունը աղէկ արտասանելը միայն հերիք էր, զոր և Յիսուս քալ կը ձայնէր։ . . . (Ահա՛ ընտիր օրինակ մը՝ որ լուսին կը զգացընէ՝ թէ անմիտ նախանձն ու առելութիւնը յո՛ր աստիճան կուրութեան կը հասցընէ զմարդ։)

Երեք Հրեայ մատենագիրներ՝ Յովսեպոս, Փիլոն և Յուստոս Տիբերիացի՝ որ ժամանակակից էին, ամենեւին լռութիւն կը պահեն Աւետարանչաց Հրէից ազգին և քահանայապետաց դէմ ըրած բոլոր ամբաստանութիւններուն, և Յիսուսի գործոց վրայօք գրածներուն։ Ապա ուրեմն յայժ ճշմարիտ էին անոնք, որ ո՛չ ոք մանաւանդ այս Հրէայ մատենագիրները՝ չյանդգնեցան հերքելու ժպրհութիւնն ունենալ իրենց ազգին դէմ եղած այս բողոքներն ու ամբաստանութիւնները՝ այն ժամանակակից ժողովրդեան առջեւ, որք գոցես ամենեքին ականատես վկայ էին իրաց ճշմարտութեան։ —Այլ սակայն Յովսեպոս բոլորովին լուռ չանցնիր, Յիսուսի անձին հանգամանաց, անոր երկրաւոր կեանց և հրաշից, առ նախանձու իշխանաց Հրէից՝ Պիղատոսի մատնուելուն, խաչուելուն և յարութեանը վրայօք յայտնապէս կը խօսի. (Ի Հնախօս. Հրէից, ԺԸ. Յ, Ա՛ ՎԻՈՒՆԸ ՆԱԽՆԻՑ ՊԻՒՒՆ ՔՐՔՐԸ ՅՈՒԱԼ ԲԵՐԱՅ ԵՒՏ։) Կը յիշէ նաեւ Յովսեպոս՝ Օգոստոս կեսարու հրամանը առ Կիւրինոս դատաւոր Ասորւոց՝ վասն աշխարհահամարին Հրէից, Աննա և Կայիափա քահանայապետաց անուններըը, Աքեղայոսը, Ագրիպպաս թագաւորը եւ, որ Ս. Գրոց պատմութեան ստուգութեանը վկայութիւն են։

Հեթանոսներէն վկայ ունինք Պոնտացի Պիղատոս

դատաւորին առ Տիբերիոս կայսր գրած արձանագրութիւնը կամ յայտարարական թուղթը, յորում կարգաւ կը դրէ Յիսուսի կենցաղը, մահու դատաստանը, յարութիւնն ու հրաշագործութիւնքը, ցթէ ցաւագարները բժշկեց, մեռեալներն յարոյց, և 'ի մահուն՝ արեւը խաւարեցաւ։ Այս արձանագրութեան հարազատութեանը կը վկայեն Յուստինոս վկայն. (Ի Պարսախ. կամ Ի Լարտֆով. Ա. Գլ. 35—48.) Տերտուղիանոս, (Ի Լարտֆով. ընդդէմ հեթանոսաց. Գլ. 21.) Եւսեբիոս, (Ի Պար. ԵՒԽ. Գր. Բ. Գլ. Բ.) Ոսկեբերան, (Ի Ռոշըն Բ. կորն. ՃԱ. ԻԶ.) և այլք։

Քաղկիդիոս Պղատոնական փիլիսոփայն Յիսուսի ծնունդը գուշակող աստեղ, Աստուածային մանկան ծննդեան և մոգուց երկրպագութեան յիշատակութիւնը կ'ընէ յայտնապէս. (Ի Ռկ. Տիմէն Պլատոնի.) «Յոյժ նուիրական և յայտնի պատմութիւն մ'ալ կայ որ աստղի մը ծագումը կ'աւանդէ. անանկ աստղի մը՝ որ չէ թէ ախտ և մահ կը նշանակէ, այլ ահաւորին Աստուծոյ իջումը՝ 'ի շնորհս պահպանութեան մարդկան և իրաց մահկանացուաց։ Եւ այդ աստղը դիւցերային ճառիւորդութեան մէջ տեսան երկնաւոր մարմնոց ընթացից իմաստուն գաղդէացիներ. և կ'ըսուի թէ այն Աստուածային նոր ծագումը փնտռելու ելան, և գլուխնալով այն մանկացեալ Մեծվայելչութիւնը՝ յարգանօք մեծարեցին. և այնպիսի Աստուծոյ վայելուչ ուխտեր ձօնեցին»։ —Մակրոբիոս (Ի Սաթուրնաղան գիրն.) կ'ակնարկէ Հերովդի բնիկ Եդեմացւոյ մանկանց ջարդն ալ։

Կելսոս Եպիկուրեան փիլիսոփայն որ Քրիստոնէութեան մոլեգին թշնամին էր, չկրնալով ժխտել ապտել Քրիստոսի վկայեալ աքանչելիքները, կ'ըսէ. (Ա՛ Հրէնեայ. Գ. 2.) «Քեզի կ'երեւայ թէ (Քրիստոս) Որդի Աստուծոյ է, վասն զի հաղերը և կոյ-

բերը թժշկեց» . բայց՝ վասն կը բերէ նա , մեղա-
բեանի և կոխարդումբեանի կը գործէ այդ պատա-
հելիքները , զոր Եգիպտոսի մէջ տուած էր ազա-
յութեան առեն հան տարուած ըլլալով (1) : — Ո-
բացայտ եւս Յունան՝ Յիսուսի հրաշագործութեանց
պղծեցութիւնը կատելու ջանացած առեն , և եւս
կը զգացընէ դէպի , հաստատելով որ հրաշքներ գոր-
ծեր է . այսպէս յառաջ կը բերէ Աղեքսանդրացին
Ալբեզ իր խօսքերը . (Գ. Ը.) «Ինչ բաներ ըրա-
նաւ կ'ըսէ , իր կենաց ընթացքին մէջ , եթէ մեծ
բան չհասնելի մարդ սեռում համար չարչարութիւնը ,
կուրաց աչաց բացումը , Բեթսայիդայի և Բեթա-
նիայի կոչվելը ազատելի ու ապրումբիւնը» :

Փլեգոն՝ Տրայիանոս կայսեր ազատագիր հեթա-
նոս պատմիչը կը դրէ (Ի Պաոմ. Ալեքսէոս.) թէ երկու
հարիւրերորդ Ողիմպիատը չորրորդ տարին՝ ամ-
ռանելորդ աւի կայսերութեան Տիբերիոս՝ (որ
Յիսուսի մահուան թուականն է ,) անսովոր մեծ ա-
րեւու խաւարում մ'եղաւ , որ աներ նմանը երբէք

(1) Եթէ քանի՛ պատճառ անտեղութիւն և երես առ երես
առած մ'է՝ Բրեռասի Աղեքսանդրացի ծագումբիւն սովոր ըլլալը ,
և ծագումեանէ այն օրինակ հրաշքներ գործուիլ կարելի ըլլալը ,
բացատրուիլեան պէտք չկայ : Աբգէն պատմութիւնը լաւ ապա-
ցուցած է որ Յիսուս Աղեքսանդրիոյ իր ծնանելին իրք քա-
ռասուն օր եղաբ , ուր երթալ կամ քսան պղպջ՝ եօթն տարի միջոց
կեցաւ , մինչև Հերովդէս մահը , և ապա դարձաւ Ի Դալիլեա .
և բնաւ ուրեք չհիշուիր թէ ուրիշ անգամ նորէն Աղեքսան-
դրիա գնացած ըլլայ : Ա/եմն երկիր կամ եօթն տարիներուն ազգ մա-
սակը սովորեցաւ ծագումբիւնը կախարդումբիւնը : — Դարձեալ՝
մը երբէք լսուած է կախարդումեանէ ծագումեանէ մեռեալ-
ներ յարուցանել , Ի մէնէ կոչերը կազեր թժշկել , և այլն : Ապա
ուրեմն կարի յշմ պատճառ կ'երեւի և հեթանոսաց՝ Յիսուսի
արձակելուց Աստուածգործութեան դէմ կարկառած այս փյուն
փաստը , որով ան կը զբաղեցնայ անոր արձակելուց Հչմարտու-
թիւնը , որով ալ Յիսուսի՝ խոստացեալ Մեսիային , Աստուած և
Որդի Աստուծոյ ըլլալը :

եղած չէր . քանզի անանկ մեծ մի կոխակ երկրի
վրայ որ երկնքի աստղերը երեւցան , և աստիկ
երկրաշարժութիւն մը Բիւթանիոյ Նիկիա քաղաքը
շատ չնքեր կործանեց : — Տաղտիս Յոյն մեծանուն
պրն ալ կը պատմէ (Ի Պաոմ. Ալեքսէոս. Գր. Գ.) թէ
Տիբերիոսի կայսերութեան ութուտասներորդ տա-
րին՝ յանկարծ աշխարհ մթնցաւ օրին .

Պօղոսէր Պաատնական փիլիսոփան և իրեն
Ժամանակակից խնամատարներ ճանչցան և խոստա-
վանեցան Քրիստոսի հրաշքները , միայն թէ ատոնք
ալ կոխարդութիւն կ'ընծայէին այն հրաշագործ
կարողութիւնը : (Ալեքսիոս ընդդէմ հեթանոսաց Գր. Ա
Նաեքս. պաղտատ. Ասեղ. Գր. Ե. Գլ. Ա.) Ամենայայտ
ապրեցրնելու և աստղաբաշխական յիշատակաց
մէջ կը տեսնուի նոյն Ժամանակ պատահած արեւու
անսովոր խաւարումի մը : Ինչպէս որ կը տեսնուի
Ա. Դիոնէս Արեոպոլի Ձմնաց պատմութեան մէջ :

Ահա՛ Ա. Ղուկասէ ետք Օրէնսդրին վկայութիւնն ալ ,
որ իր Յերկնատոր պատճառ ծնունդ ը մէջ կը դրէ .
«Ձեր ինձմէ խնդրածը Ի դուրէ . վասն որ Ի՛ն և
այնպիսի մեծանշոյժ և բազմապատիկ նշաններ գոր-
ծէի , ինչպէս որ գործեց Յիսուս Քրիստոս , ասկա-
րան չէիք հաւատար ինձ» :

Վերջապէս ահա խոզութիւն մ'ալ որ ըստ ե-
րեւութին մեծ բան մի չպատուին համարելով՝ ոչ ան-
նշան վկայութիւն է բոլոր հեթանոսաց Նեղոսին և
խորին հանճարները , Ի՛ն Յիսուս Քրիստոս հրաշքներ
գործեց ա՛չ միայն իր երկրաւոր կեանց մէջ , այլ
նաեւ յետ մահուն՝ իրեն Աստուած՝ վրէժխնդիր
բազում իրեն դէմ ոգորող աստուածանախրանելոյն
Յուդայեան՝ իր ասկաւօրեայ կեսարութիւնն ժանիւ-
նակը ոչնչի՝ Յիսուսի կրօնքին դէմ առնել կեցոյ
հանգամանութիւնն կառնեցաւ , այս ամենուն գերա-
զանց է . և անոր մահէն՝ Յիսուսի Աստուածութիւն

մեծ վկայութիւն մ'եղաւ։ Երբոր նա վերջին անգամ Երուսաղէմէն դէմ պատերազմելու դնաց՝ ի Պարս, իւր դիմաց առաջին յաջողութեանց լուրը տարածուելուն պէս՝ Հիւրանիոս իմաստակը Անտիոքի մէջ Երուսաղէմի մը պատահելով՝ որ իւր բարեկամն էր, կատակով ըսաւ անոր. «Ի՞նչ կ'ընէ հիմայ հիւանդին Որդին»։ առ որ բարեկամը դոյգեա տարտարձակաւ։ «Ձեր դիւցազնին դատարկը չինէ»։ Իրօք ալ անանկ պատահեցաւ։ պատերազմին մէջ անյայտ ձեռքէ մը՝ ի մահ վիրաւորեցաւ Յուլիան նեռին, և իւր երուսաղէմական անպարկեշտութեան արիւնոտ փոխարինին ըլլալը քաջ ճանաչելով առ մոլեզնութեան սրտին և անձէն կատաղութեանն՝ (ըստ Թէոդորէտոսի) վէրքին արիւնը ձեռքովը երկինք ցանեց գոչելով, «Յաղթեցեր՝ Գա'լիլեացիդ»։ և ոգին փչեց։ Որուն այս Աստուածամարտէ պատահմանին վրայ հեթանոսք պատճառաբանել սրտնցան ալ ընդդէմ Երուսաղէմի։ «Ձի՞րդ Երուսաղէմայք մարթին պարծել երբէք ընդ երկայնմտութիւն Աստուծոյ իւրեանց որ այդպէս պիրտապատառած է ի ցասումն։ պի՛ տ'չ կարաց առ վայր մի առնել զդ բարկութիւն իւր»։ — Ս. Հերոնիմոս կը վկայէ թէ ինքը իւր ականջովը լսած է հեթանոսաց այս ըսելուն։

Այս ուրեմն Յիսուսի Երուսաղէմ Աստուածահրաշ նշանագործութիւններէն այսչափ թիւնամի հատկանշականներէ և վկայութենէ եղբը, զորս կը գործէր Նա ի վկայութիւն Որդի Աստուծոյ ըլլալուն, արդեօք ալ տարակուսելու տեղի կը մնա՞յ անոր Աստուածայնութեան վրայ։ —Իրենք ինքնին վկայեցին այս բազմապատիկ հրաշքները գործող Յիսուսի համար՝ թէ «Մեք օրէնս ունիմք, և ըստ օրինացս մերոց պարտի մեռանիլ, զի ընչն է-ր Որդի Աստուծոյ արար»։ (Յ-ՀԵ. ԺԹ. 7։) Մինչ

չեւ ցայսօր ալ կը վկայեն թէ՝ Յիսուսը անոր համար խաչին վրայ սպաննեցին, որովհետեւ Որդի Աստուծոյ և Աստուած ինք կ'ըսէր. իսկ արդ՝ կամ այն է որ Յիսուսի գործած այս ամեն վկայեալ հրաշքները պէտք է ուրանանք, և ըսենք թէ առանց բնաւ հրաշք մը տեսնելու՝ աշխարհ ամենայն մէկէն՝ ի մէկ Յիսուսի այս նոր կրօնքին դարձան՝ նահատակուելու սկենգալութեամբ միայն, և դարուց՝ ի դար արմատացեալ հայրենական կրօնքնին ուրացան՝ միակ մեռնելու համար, որ հրաշքներուն ծայրագոյնը կ'ըլլար, և կամ՝ պէտք է ըսել թէ Յիսուս Երիտասարդ թէպետև գործեց այս ամեն Աստուածային գործերը, բայց ինքը մեծ խաբեբայ տասիոս խաղդաս մ'էր. և Աշխարհ անուանեալ Աստուած ալ առանց տասիոս խաբեբայի մը Աստուածութիւնը խարէութիւնը հաստատելու համար անոր ձեռքով տասնկ հրաշքներ գործեց։ Եւ թէ որ տասնց երկուքն ալ բանի և տրամաբանութեան հակառակ են, հարկ է ճշմարտութիւնը խոստովանիլ, թէ Նա էր սկիզբնական Մեսիան, Աստուած և Որդի Աստուծոյ։

Կրօնից թշնամիք չկարենալով այս անխուսափելի հետեւանքէն փախչիլ, հեթանոսաց շատ մը առասպելապատում հրաշքները մէջ կը բերեն, ըսել ուզելով թէ Յիսուսի գործերն ալ արտաքոյ կարգի բաներ՝ իրօք հրաշքներ չէին, անոնց պէս բաներ էին։ Հերոդէս առաջինն եղաւ որ այս բազդատութիւնն ըրաւ. «Քրիստոնեայք մեծամէծ կը համբաւեն՝ կ'ըսէ, և մեծագոչս կը դոչեն զՅիսուս Քրիստոս, որ կոյրերը կը լուսաւորէր, և ուրիշ սքանչելիքներ կը գործէր. բայց մենք լաւ եւս հատուցումն կը գանենք. քանզի կարող եմք շատ մը ականատես մարդկանց նոյնպիսի հրաշքները յառաջ բերել. ինչպէս է Ապիսաէոսն, Պիւթագորաս,

և առջի ուրիշ մարդոց և Պողոսիոսի՝ որ Ներոնի թագաւորութեան առեն ապրեցաւ»: Ս. Օգոստինոս և Լակտանտիոս ուրիշ հակառակորդներ ալ կը յիշեն որ այսօրինակ արուեստակութեանց կը դիմեն: Սակայն ասիկայ ուրիշ բան չէ՛ եթէ ոչ՝ հաստատել թէ Յիսուս Քրիստոս իրօք անուրանալի ճշմարտութեամբ կատարած է այն ամեն հրաշքներն զորս Քրիստոնեայք կը հաստատեն: Ո՛չ ասկաքէն եթէ հրաշք գործած չըլլար Յիսուս առաջի բազմութեան վկայից Հրէից և հեթանոսաց, հերիք պիտի սեպէին Յիսուսի համար զրուցուած հրաշքները միայն հերքելն ու մէկդի անցնիլը. ինչո՞ւ կը ճգնին այլոց հրաշք անուանեալ սուտ գործքերը մէջ բերելու և Յիսուսինին հետ բաղդատելու. եթէ ոչ՝ անոր հրաշից մեծ և ճշմարիտ ապացուցութիւնը կատրել հնարելու համար, թէ որ յաջողել գոյէին: —Բայց մենք կ՛ըսենք, թէ Յիսուսի գործած աքանչելեաց պէս թշնամեաց խուռն բազմութեան ներկայութեանը գործուած, անոնց պէս խիստ քննութեան ենթարկեալ և բոլոր հակառակորդներէ ու բարեկամներէ վկայեալ միայն մէկ հատիկ աքանչելիք մը կարող չեն ցուցընել հակառակողք: Ապա թէ ոչ՝ եթէ ամեն սուտ կրօնից մէջ այնչափ աքանչելիք կը գործուէին հանուրց ապացոյց մէջ, հնա՞ր էր որ Քրիստոսի և Առաքելոց գործածները անոնց աչքին մեծ և Աստուածային երեւէին, և այն հրաշից պատճառաւ սիրելիք հանային Քրիստոնէութեան աշակերտուէին:

Ոմանք ալ կ՛ըսեն, թէ Ս. Գիրքը ըսած են որ սուտ քրիստոնեաք՝ սուտ մարգարէներ պիտի յայտնուին եաքի օրերը, որոնք զմարդիկ խաբելու համար նըշաններ պիտի գործեն. ինչպէս նաեւ դեւեր կան որ լուսոյ հրեշտակներու կերպարանքը կ՛առնուն: Ապա ուրեմն Յիսուսի և անոր աշակերտաց գործած հրաշքները մեծ և Աստուածային նըշաններ չեն, քանի որ նոյնպիսի հրաշքներ դևրապքիստոսներն ուղղեւերն ալ կ՛ընեն և պիտի ընեն:
—Այս խորհրդական է այս. Աստուծմէ զատ՝ ոչ ոք կարող է հրաշագործել· ոչ երկնից հրեշտակները, ոչ ալ բովանդակ երկրի սուրբերը· և բոլոր այն սուրբերը որոց աքանչելագործութեանց սուրբ Մատեաններն կը վկայեն, ո՛չ թէ իրենք իրենց կարողութեամբ՝ այլ Աստուածային զօրութեամբ գործեցին ի՛նչ որ գործեցին, իրենց վարդապետութեան և Առաքելութեան Աստուածայնութիւնը ցուցընելու համար: Իսկ եթէ երբեմն թոյլ կու տայ Աստուած խաբեբայից ունանց նշանագործելու, ճըշմարիտ նշաններ չեն անոնք, և շուտ մը կամ քիչէն խայտառակուելով՝ Աստուածային հրաշից փառքը կը յաւելուն: Անոնք եղան Փարաւոնի մոգերուն, Սիմոն մոգին և այլոց սուտ նշանները:

Այլ՝ անմոռոգն եւս՝ կ՛ուրանան հրաշից հնարաւորութիւնը· (այսչափ իրական ապացոյցներ ունենալէն եաքը·) իբր թէ ամենազօրն ամենակալն Աստուած անկարող ըլլար հրաշագործելու, պատճառ բերելով թէ Աստուած անխոտոր է: Բայց թէ որ Աստուած հրաշք չկրնար գործել, ուրեմն ամենազօր ամենակար չէ՛, իբր արարածներուն պէս տկար՝ ապիկար է: Թէ որ Աստուած չկրնար հրաշք գործել, ա՛յսչափ վկայեալ հրաշքները որո՞յ գործք են: Թէ որ Աստուած հրաշք չկրնար գործել՝ վասն զի անխոտոր է, իբր անխոտորելի բարութեան և նպատակին ինչ փոփոխութիւն եղած կ՛ըլլայ՝ երբ բնութեան մէջ վայր մի փոփոխութիւն երեւնայ Անոր մի և անխոտոր նպատակին գործադրութեան համար: Այո՛, Աստուած անխոտոր է, բայց բնութիւնն անխոտոր չէ՛· բնութիւնը Աստուած չէ՛: Այն որ բնութեան կարգը տուեր է, հարկաւ կըր-

նայ՝ երբ որ ուզէ՝ ի կախ թողուլ կամ փոխել ա-նոր մէկ ներդործութիւնը՝ իւր խորին խորհրդոց համար։ Թողուիք որ Աստուծոյ լինքն խոյտառակէ այս խօլ անմտութիւնը, որ կ՚ըսէ. «կարօղ է Աստուած աքանչելիք գործել. ցՙ կրնա՞յ իւր սահմանած օրէնքները տնօրինել։ Ասանկ անվայել խնդիր մը թէ որ աշխարհաբար քննութեան առնուի, ամբարշտական կ՚ըլլայ, թօղ թէ անտեղի. ատիկայ ժխտողը պատասխանելը իրեն չափազանց պատիւ տալ է, գինքը կատղել փակելը հերիք է»։

Աստուած կը հրաշագործէ յայտնելու համար գինքն իբրեւ հաստիչ և Տէր բնութեան։ Ցիսուս Քրիստոս կ՚աքանչելագործէր ի վկայութիւն Աստուածութեան իւրոյ, եւս և՝ իւր իսկ անձին՝ Աստուած և Որդի Աստուծոյ լինելուն. ապա ուրեմն՝ աքանչելիքն ըլլալով Աստուածութեան պանծալի նշանակներն ու վաւերական կնիքը, Ցիսուս Քրիստոս ալ ճշմարիտ Աստուած, ճշմարիտ Մեսիայ Մարգարէն, ճշմարիտ Աստուած և ճշմարիտ Որդի Աստուծոյ է։

ՊՐԱԿ Դ.

Մօրուութիւնք ընդդէմ մարդեղութեան Որդւոյն Աստուծոյ

Որդւոյ Աստուծոյ մարդեղութեան գէմ առաջին հերձուածն ու մոլորութիւնն է Հրէից, որ ո՛չ միայն Որդի Աստուծոյ չէին հաւատար զՑիսուս, այլ և ո՛չ Մեսիա։ — Ցիսուսի Աստուած և Որդի Աստուծոյ ըլլալը արդէն բաղմադիմի եղանակօք հաստատեցինք. իսկ անոր Մեսիա՝ ցյ բոլոր գարուց ակնկալութեանց Քրիստոս Մարգարէն ըլլալն ալ թէ՛եւ անոնցմով և նոյնչափ մարգարէութեամբք և ուրիշ վաւերօրոք ցուցուցինք այլ և այլ գլուխներու մէջ,

բայց կրկնել արժան է հոս, թէ՝ Մարգարէից կանխատեսութեանց նայելով արդէն չատոնց անցած է Մեսիայի գալու ատենը. թէ որ ըստ ասից Հրէից՝ եկած չէ նա, ալ գալիք չունի. և որովհետեւ ըր կրնար տալ Աստուածային մարգարէութիւնը, ուրեմն եկած և անցած է ժամանակը։ — Դանիէլի եօթներորդները (Թ. 23—27.) ինչ հաշուով ալ հաշուեւք, չատոնց լմնցած և հաղարաւոր տարիներ ալ վրայէն գլորած են։ Զօրաբաբէլի երկրորդ Տաճարը պիտի գար Մեսիան, և այնտեղ ոգւոց խաղաղութիւն պիտի տար։ (Ագէ. Բ. 4—9։ Մալ. Գ. 1։) Զօրաբաբէլի տաճարին կործանումէն ի վեր ութ հազար տարիներ անցան, զհերն ու պատանդները, արքունիքն ու սեղանները՝ որք Մեսիայիս քաւութեան առաւելական նշանակութիւններն էին, հազար ութ հարիւր տարիներէ աւելի է որ բարձան։ Յուդայի ցեղէն իշխանութիւնը չվերցած պիտի գար Մեսիան, (Ծննդ. խթ. 10.) ինչն իսկ Յուդայի չատաւիղէն պիտի ըլլար։ Յուդայի ցեղի թագաւորութիւնը Հերովդէսէ վերջացաւ. անկից ի վեր հազար ութ հարիւրէն աւելի երկար տարիներ անցան գացին. ո՞ւր է Հրէից սպասած Մեսիան, որ եթէ մինչեւ հիմայ եկած չէ, այսուհետեւ թէ որ գալու ըլլայ՝ անկարելի է անոր Յուդայի գաւազանին չատաւիղն ըլլալը ապացուցանել. արձանագրութեան տումարներն տաճարին հետ այրեցան, գալիք Մեսիայի մը Յուդայի արմատէն ըլլալը ապացուցանելու վաւերականը ալ չունինք։ — Ապա ուրեմն անկարելի է որ Քրիստոս եկած չըլլայ. և որովհետեւ թէ ատենք և թէ միւս բոլոր մարգարէութիւնները որ վերը յառաջ բերինք, Ցիսուսի վրայ բառ առ բառ կէտ առ կէտ կատարուեցան կիսվին, և չունինք մարգարէութիւն մը որ անոր վրայ չկատարուէր, ապա ուրեմն կ՚ըսեմք՝ Ցիսուս ինքն

է խոստացեալ Օծեալ Փրկիչը, և չկրնար ուրիշ մը ըլլալ. և յոյժ անմատուցելի է նոր Մեսիայի սպասելը:

Եղան հերետիկոսներ որ Քրիստոսի Աստուածութիւնն ուրացան. ինչպէս որ Արիոս ստեղծական հոգին կը համարէր զայն, թէ՛ և պերճ՝ի վեր բոլոր արարածական ոգիներէն. այլ ո՛չ իւրք Աստուած: Ըստ որում կ՚ըսէր թէ՝ Յիսուս ըսաւ. «Հայր իմ մեծ է քան զիս». (Յ-ՂԷ. ԺԴ. 28:) — Բայց այս Հօր Աստուծոյ յորդոյ մեծութիւնը՝ Որդւոյ Անձին ըստ Աստուածութեան՝ ՚ի Հօրէ ծնած ըլլալուն, և ըստ մարդկութեան՝ ՚ի Հօրէ խրկուած ըլլալուն և մարդոյ ծնունդ դառնալուն նկատմամբ է, ինչպէս որ կ՚իմանան բովանդակ Հարք Եկեղեցւոյ, և ինչպէս քալ կ՚երեւնայ Աւետարանաց մէջ՝ եթէ աղէկ միտ դրուի ասացուածին. ըստ որոյ կ՚ըսուի նաեւ «փոքր քան զհրեշտակս». զոր այսպէս կը մեկնէ Աւաքեալը. «Այլ զփոքր մի խոնարհեալ քան զհրեշտակս, տեսանեմք զՅիսուս՝ վասն չարչարանաց մահուն, փառօք և պատուով պսակեալ, զի շնորհօքն Աստուծոյ վասն ամենեցուն զնահ ճաշակեսցէ»: (ԵԲր. Բ. 7—9:) Իսկ Աստուածութեան նկատմամբ ինքն փրկիչն կ՚ըսէ. «Ես և Հայր իմ մի եմք . . . : Հայր յիս է և ես ՚ի Հայր . . . : Որ տեսանէ զիս՝ տեսէ զՀայրն»: (Յ-ՂԷ. ժ. 30—38, ԺԴ. 9:) «Ի նմա (՚ի Քրիստոս Յիսուս) հաճեցաւ ամենայն լրումն Աստուածութեանն բնակել . . . : ի նմա բնակէ ամենայն լրումն Աստուածութեանն մարմնապէս»: (Կող. Բ. 19: Բ. 9:) Քրիստոսի Աստուածութեանը վրայ վերը լսուին խօսեցանք: — Արիոսի այս մոլորութիւնը դատապարտեցաւ ՚ի Տիեզերական ժողովն Նիկիոյ ՚ի 325. յորում ներկայ էր մերս Արիստակէս Ս. Հայրապետ՝ կրսեր որդի Ս. Լուսաւորչին:

Արիոսի այլափառութիւնը նորոգեց Աբրահացւոց Օրէնսդիրն ալ, այսու տարբերութեամբ որ սա

խաչեալ ալ չէր ըսեր զՅիսուս. Յիսուս Բարաբբան կ՚ըսէր խաչուեցաւ անոր տեղ: Այս դատանութիւնն ունին մինչեւ հիմա իրեն հետեւողները:

Եղան հերետիկոսներ ալ որ Քրիստոսի մարդութեան դէմ մոլորութիւններ մոլորեցան: Որոնք ըսին թէ Յիսուսի մարմինը աներեւոյթ մեր մարմիններուն նման և մեր բնութենէն չէր. այլ երկինքէն բերած էր իւր մարմինը, ընդ կոյն իրրեւ ընդ խողովակ անցանելով. պատճառելով թէ մեր մարդկային ապականեալ մեղաւոր մարմինն զգենուլ անձամ էր Որդւոյն Աստուծոյ: Որոնք ալ ըսին թէ առաջօք ինչ էր անոր մարդութիւնը: Որոնք ալ՝ ինչպէս նաև վերջին օրերս Պիոսի Թ. Պապին Հռոմայ գումարած Վատիկանու հանդիսարհական ժողովը՝ հրաշափառապէս սխալանօք վարդապետեցին, թէ որովհետեւ Յիսուս Քրիստոս Սուրբ Կոյս Մարիամէն մարմին պիտի զգենոյր, անձամ էր որ Ս. Կոյսը սկզբնական մեղաք ծնած ըլլար, ըստ որում իրմէ ծնեալ Յիսուս ալ սկզբնական մեղաք ծնած կ՚ըլլար իւր բնութենէն անոր տալովը. ապա ուրեմն Ս. Կոյսն ալ անարատ յղացած էր յԱննայէ (1): — Ասկայ ըսել է՝ թէ Ս. Կոյսը առանց բնական և և բարոյական սերման ծնած է. բայց մոլորութիւն մ՚է այս, և մոլորադոյն մոլորութիւն մը, յորմէ չատերը բարեմտաբար վարակեալ են յանզգոյշս. քանզի ըսել կ՚ըլլայ թէ Աղտայ սերնդոց մեղուցեալ և դատապարտեալ բնութենէն տարբեր բնութեամբ ծնած է Մարիամ, ուստի և անկէ ծնած Յիսուս ալ Աղտածին մարդկութեան սերունդէն

(1) Այդ խնամատարութեամբ՝ Աննա ալ, անոր ծնողքն և ծնողաց ծնողքն ալ, մինչեւ նախամայրն Եւա ալ պէտք էր սկզբնական մեղքէ ազատ ըլլային, որ ծնունդներնին ալ նոյնպէս ըլլար: — Բայց ինչու համար, քանի որ մեր մեղքը իւր մարմնովը շալկելու եկած էր Քրիստոս . . .

և անոր քնութենեն չէր, տարբեր բնութեամբ՝ ուստի և անոր քնութենէն օտար քնութիւն ընդ էր. նոր բնութիւն մ'ունէր թէ՛ ինքը, և թէ իր ծնողքն եղող կոյսը։—ևթէ Ս. կոյսը ըստ կրօնական մեղքէ ազատ ծնած էր, ուրեմն սկըզբնական մեղքը՝ ի Յովակիմ և յԱննա դադարեալ էր, մեղքը վերցած էր, ուրեմն պատապարութիւնն ալ վերցած էր. ապա ուրեմն Յիսուսի եկաւորութիւնը՝ Որդւոյ Աստուծոյ մարմնաւորութիւնը՝ աներբդ անօգուտ էր.... Բայց մեղքին հաստուցումը ո՛վ ըրաւ որ վերցած ըլլար. և ի՞նչ գան էր որ Որդին Աստուծոյ իր վրան՝ իր մարմինին քըննութեանը վրայ՝ իր կռնակը բարձած բերաւ գամեց խաչափայտին վրայ. ի՞նչ թշնամութիւն էր որ իր մարմնոյն մեղքը ապաննեց. «(Նա) ընդ մեզ խոտ մարմնովն վերացոյց՝ ի խաչափայտն, զի մեղսք վերծեալք՝ ի մեզաց անտի»։ (Ա. Պետ. Բ. 24։) «Նա ընդ մեզ եղև երանոյ, և վասն մեր չարչարի.... Նա զմեղս բազմաց վերացոյց, և վասն անօրէնութեանց նոցա մատնեցաւ։» (Ե. ՍԳ. 4—12։) «Զի նա է խաղաղութիւն մեր, որ արար զերիսեան մի, և զմիջնորմ ցանկոյն քակեաց, ընդ ինքեան՝ ի մարդի խաղաղ.... զանգի ոգւոյն ընդ ամենայն յանձին ի նմա, եկն աւետարանեաց խաղաղութիւն»։ (Եփես. Բ. 14—16։) «Եւ զձեզ որ երբեմն մեռեալն էիք՝ ի մեղս՝ և յանթլփատութիւն մարմնոյ ձերոյ, կենդանացոյց յանձին ի նմա. չնորհեաց մեզ զամենայն յանցանս մեր, և ջնջեաց զձեռագիր մերոյ հակառակութեանն հրամանօքն իւրովք, որ կայր մեզ հակառակ, երարձ զայն՝ ի միջոյ՝ և բեւեռեաց ընդ խաչափայտին. մերկեաց զիշխանութիւնս և զպետութիւնս. յայտ յանդիման խայտառակեաց. նշաւակեալ զնոսա յանձին ի նմա՝ ի յարութեան իւրում»։ (Կող. Բ. 13—15։) —Թէ որ Որդւոյն Աստուծոյ անմեղ անարատ անպարտ մարմնոյն վրայ՝ մարդկային բնութեան առաջին մեղքը և անոր դատապարտութիւնը՝ բարոյական մահը բեռցուած չէր, ինչպէս կրնար մեր մահը իր անպարտական մնհուամբը ապաննել. կ՝ինչպէս կրնար մեր մեղաց պատիժը կրել անպարտ՝ մեղը՝ զայն՝ ի միջոյ բառնալու համար. մեր մեղքը և մեղաց պատուհասը իր մարմնին վրայ առած չըլլար նէ, իր անպարտ անձին պատասխանը՝ ինչպէս փոխարինութիւն փրկանք կ՝ըլլար մեր տղատութեան։ (Ղեւտ. ԺԶ. 10։) Ի՞նչ կը նշանակեն Ս. Գրոց այն հատուածները որ կ՝ըսեն. «Մեռաւ ընդ Քրիստոսի՝ ի տարերց աշխարհիս». (Կող. Բ. 20։) «Զայս գիտացէք զի հին մարդն մեր խաչեցաւ ընդ նմա. զի խափանեսցի մարմին մեղացն.... Որ մեռաւն, ազատեալ է.... » (Հռ. Զ. 6—10։) Ինչ է այս հին մարդը, մարմին մեղաց, և անոր ցիսուի խաչելից ելանք։ Ինչո՞ւ կերգուինք և Շարականաց մէջ. «Որ իմեր յերկինից վասն մեր. գառնըջին առեր դիանցանաւ Աբրամայ, ձերով բնութեամբ բարձեր՝ ի վերայ խաչին անեծրատ ձեռօք եւս.» (Կան. հանգիպ. Բէ. Որդի. յԲ. տուն.) «Որ ցօղեցեր՝ ի մեզ յառնելոյ օրինաց Որդիդ այսօր ընդ կոյան Մարիամ, յորմէ ծնար մարմնով և բարձեր նովաընդ նախասրինջին Աբրամայ եւս.» (Կան. Ծննդ. Աստուածածնի։)

Յիսուսի Ս. կոյսէն առած մարմինը ո՛չ յերկինէն բերեալ էր, որովհետեւ՝ ինչպէս որ մինչեւ ի՛նչ անտանք՝ ամենեւին երկինքէն բերուած՝ նորաստեղծ՝ և մեր բնութենէն տարբեր կամ օտար բնութիւն ունեցող, և կամ առաջօք երեւցած մարմնոյ երեւոյթի բնաւ ամենեւին չպատշաճիր անոր ունեցած յատկութիւնները, և առ այն տեղի տալու պատճառ մ'ալ չկայ։ Ինամեսցեայ Ծնաւ, ի խանձարուրս պատեցաւ, զի թանձրացաւ բանն և մարմին եղեւ, (Յովհ. Ա. 14.) «Ընդ որ հայեցաքն, և ձեռք մեր

չօշափեցին 'ի վերայ բանին կենաց» : (Ա· 3-ՀՏ· Ա· 1:) ժամանակաւ վարդապետ անուանեցաւ, բայց 'ի մեղանչականէ՝ ամեն մարդկային կիրք կրեց· բռնուեցաւ, դատուեցաւ, վճռացաւ և վճռակից-եցաւ, լացաւ, թքաւ, հոդաց, տրտմեցաւ եւ :

Ո՛չ ալ Աղամային մեղքէ անտարտ ծնողքէ առաւ իւր մարմինը· ապա թէ ոչ՝ ինչ էր որ սրբեց Ս· Հոգին 'ի Մարիամ· (Գ-ած· Ա· 35: Մ-որ· Ա· 20:) «Որ մաքրեցեր Հոգիդ սուրբ ընէր և զարգանդ մօր քո վճռակցին»· (Շ-ակ:) Ի՞նչ ըսել է մտածել-էրը, եթէ ոչ՝ անոր մեղանչական կիրքերը, անկարգ վատթաքներըՙ որ Աղամային մեղայ հետեւանքն են և 'ի սիրտն կը բարախեն, և զորս սրբեց Հոգին ինչպէս նաեւ արգանդըՙ սուրբ մարմնարան մը պատրաստելու համար իւր Էակին :

— Լսեցք այս ամենուն վրայ Ս· Հարց վարդապետութիւնն ալ :

Ս· Յովհան Ոսկեբերան կը գրէ· «Առաքեալն ասէ, Ան և եղեւ 'ի ննջել, առ 'ի ըմբերանել զայնոսիկՙ որք ասեն, եթէ իրրեւ ընդ ցնցուղ ինչ էանց Քրիստոս : Զի եթէ այնպէս էր, ինչ պէտք արգանդին էին, կամ ընչաց հաղորդակցութիւն առնէր ընդ Դեղ· եթէ այլուստեք էր մարմինն, և ո՛չ 'ի Դէմ ընդոստոյն, պիտոյ էր յարմատոյն Յեսսեայ· . . կամ ընդ ընչեղութիւն ծառայէ էառ» : (Ի Դէն· Մ-որ· Ճռ· Դ· եր· 48:)

Ս· Լուսաւորիչ Հայրն· «Սակայն յորժամ կամեցաւ՝ ա՛ռ զնարդկային կերպարանս, և զգեցաւ մարմին, և էջ 'ի մեր նմանութիւն· . . : Ճշմարիտ իսկ մարդ եղեւ, և էջ յանարգութիւն· . . : Որ ա՛ռ զմարմին ըմբռնելի, և չօշափեցաւ և ըմբռնեցաւ մարմնով և ընդնայն անցս մարդկայն յանձն առ· . . : Եմուտ յարգանդ կուսին և ո՛չ գաղտնեցաւ· . . Հինաւուրցն վասն մեր մանկացաւ· և ա՛ռ ընչեղութիւն

մարդկոյ պղտութենէն Դերոյ, զի զմեզ փոխեսցէ յանմահութիւն իւր· . . : » (ԱՓՐԱՀԱՆ· Դ-ած-ՈՒ· 'ի մարդեղ· Քրիստ· տղ· ՅՕՐԼՈՓԻՂ· եր· 132—133:)

Ս· Մեսրովբ· «Որ առաքեցար 'ի Հայրական ծոցոյ ծածկեալ խորհուրդ ընդ Հօր յաւիտեան, և առեր մարմին զմեզ ուսուցելոյ նախատառեղծին»· (Շ-ՒՐԱԿ· Մեծի պահոց· կան· Բ· կէր·) «Զհին մարդն նորոգելով Փրկիչն 'ի մկրտութիւն գայ այսօր, զի զապականեալ զբնութիւնս ջրով նորա գործեսցէ» : (Անդ 'ի կան· Ծննդ· Ը· ա-ած:)

Ս· Ներսէս Շնորհալի· «Այլ և խառնի ընդ մարմնոյ անմարմին բանն· . . առնելով ընդունելութեան Աստուծոյ՝ ո՛չ ընդ յանդգնութեանն և 'ի դժոխոյն, այլ ընդ յիւր դեղանոցն և ապականութեան· Զի եւ կոյսն Մարիամ՝ ցորմէ մարմինն առ Քրիստոս՝ ի մեղաւնէն Ադամայ բնութենէն էր· . . : Բոլանդակեցաւ յորովայնի կուսին անբոլանդակելին առաքարածոց, յորմէ առեալ ընդ դեղանկան և ապականաւէր բնութիւն՝ զհոգի և զմիտս և զնմարմին, խառնեալ միացոյց ընդ անմեղ և անապական բնութեան իւրոյ, և եղեւ նոքօք մի և անբաժանելի, փոխելով ոչ զբնութիւն մարմնոյ յանմարմնութիւն, այլ զընդունելական մարմինն յանմեղութիւն և զապականացուն յանապականութիւն· . . (Որով) Որդին Աստուծոյ եղեւ Որդի մարդոյ· ո՛չ ումն Աստուծոյ Որդի, և ումն՝ մարդոյ, զմին Որդի յերկուս բաժանելով որդիս, ըստ հայհոյութեան Նեստորի: Քանզի բանն ո՛չ 'ի մարմին բնակեցաւ, այլ նանչեցաւ 'ի մարմին· ո՛չ ֆոֆոխմամբ, այլ Դասրութենամբ· և ո՛չ 'ի կուսին արգանդի արարչագործութեամբ թանձրացոյց իւր մարմինն՝ ըստ չարաբաստաց ումանց ասելոյ, այլ 'ի կուսէն առ մարմին· ո՛չ օտար 'ի նմանէ, այլ 'ի նորին բնութենէ· և ո՛չ առաչօք իրրեւ ընդ խաղովակ ինչ անցեալ՝ ըստ Եւտիքեայ և հաւանող

հից Նորին, այլ ճշմարտապէս մարմին գգեցեալ ՚ի զանգուածոյն Ադամայ՝ նոր խառնուածով և սքանչելի խառնուածով, օրինակաց գերագոյն գոլով ամենայնի։ . . . » (Լիդհանդ. տպ. կ. Պօլ։ եր. 57. 77—78։) Եւյնն և ՚ի Շարականս. «Ընկալեալ փութայր Հայրն վառաց գիր պարտեաց մեր յանցանաց. որով գգեցաւ Որդին գթած ՚ի վեց դարուն ըմբռին դէմ»։ (Աբուլեանց. եր. Զ. առաք.։)

Սարգիս Շնորհալի. «Իսկ իրրեւ երեւեցաւ Շնորհն Աստուծոյ՝ փրկիչ, ո՛չ միայն արդարացոյց զմեղաւորքս՝ և լուսաւոր արար վխաւարեալքս, այլ և արձակեաց զկապեալքս՝ և լուաց ՚ի տղմոյ անօրէնութեան, այլ և չինչն ընկալաւ զնուաղաւոր զեռս և զաղքատիկն բնութիւն մեր՝ և խառնեալ միացոյց ընդ լուսաւոր և ամենասուրբ բնութեան Աստուածութեան իւրոյ . . . : Արդ՝ զայն մարդին դէմս՝ ոսոխ սլբեբութեամբ եպիեցին դէմն յոհնայն մարդին, ՚ի ձառն խաչեաց ՚ի վերայ փայտին պատուարտութեան, որպէս պի ըստինեցան զնեղ խաչեացն ՚ի խոլափայտն՝ և բարձցէ ՚ի մարմնոյն»։ (՚ի ընդդէմ Ա. պետ. ճառ. Զ. ՚ի բանն Բ. 24. տպ. կ. Պօլ։ եր. 281։) և և և։

Ապա ուրեմն՝ Յիսուս Քրիստոս Ս. կոյս Մարիամէն առաւ իւր մարմինը, ըստ Եբրայեցոյ բնութենէն. երկինքէն չբերաւ զանիկայ. առերեւոյթ մարմնաւորութեամբ ալ չանցաւ ընդ կոյսն իրրեւ ընդ խողովակ. ոչ ալ յարդանդի կուսին նորոգ արարչագործեց իրեն մարմին մը՝ օտար ՚ի Մարեմայ մարմնոյն բնութենէն. և Մարիամ իսկ ընդ սկզբնական մեղաց և դատապարտութեամբ ծնած ըլլալով, Յիսուս Քրիստոս անկէ Ադամին մեղուցեալ և դատապարտեալ բնութիւնն առաւ. «Ո՛չ զոր յանմեղութեանն և ՚ի դրախտին, այլ զոր յետ մեղանացն և դատապարտութեան», ցՙ «զմեղաւոր զեռս և զաղքատիկն բնութիւն մեր». ցՙ «զմերս մեղանչական

և ապականակիր բնութիւն»։ Եւ այն մարդկային դատապարտեալ բնութիւնն էր զոր իւր անպարտական անձին վրայ՝ դատապարտեց և գամեց ընդ խաչափայտն, ինչպէս որ կ՚ըսէ Գիրքը. «Աստուած առաքեաց զորդին իւր ՚ի նմանութիւն մարմնոյ մեղաց, և վասն մեղաց. և դատապարտեաց զնա՝ ՚ի մարմնի անդ»։ (Հռով. Ը. 3։) Եւ դարձեալ. «Զայն որ ո՛չ գիտէր մեղս, վասն մեր մեղս արար, զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ»։ (Բ. Կորնթ. ե. 21։) «Որ զնեղ մեղն ՚ի մարմնի իւրում վերացոյց ՚ի խաչափայտն»։ (Ա. Պետ. Բ. 24։)

Սարհլ Լիբէացին և անոր հետեւող Հայրաշարչարեանք ալ երրորդութեան՝ անձնաւորական երեակ անորիչ բաժանումնէն ուրացան, վարդապետելով թէ լոկ անուանական էր այդ բաժանումնքը, և թէ՝ Հայր Որդի և Հոգի անուանները՝ Աստուծոյ տարբեր յայտնութիւնները՝ կամ Աստուածային գործոց տարբեր յարաբերութիւնները ու եղանակները կը ցուցընեն. չարաչար մեկնելով Ս. Գրոց այս տեսակ խօսքերը թէ՝ «Հայր յիս է և ես ՚ի Հայր». — «Ես և Հայր իմ մի եմք». — Որ տեսանէ զիս, տեսանէ զՀայր». եւ։ Բայց անհնարին կասկածութիւն է Գիրքին խօսքերը սասանկ քաշկռտելը. Արդեօք նո՞յն անձն էր ՚ի ցորդանան մկրտուողը, նո՞յն անձն՝ յերկինս ստ վկայողը, և նո՞յն դարձեալ՝ աղաւնակերպ նոյն անձին վրայ եկաւորողը։ Արդեօք նոյն և մի՞ անձին համար կ՚ըսէր ինքն Յիսուս՝ Հայր, Որդի և Հոգի, և անոնց անուամբ մկրտել կը հրամայէր զհաւատացեալս։ Ի՞նչ կը նշանակեն Գիրքին այն հաւասարները որ Աստուածութեան մէջ անձանց բազմաւորութիւն կը նշանակեն. (տե՛ս ՚ի Վերն Գիրք Բ։) Ի՞նչ կը նշանակեն այն հաստարները՝ որ անձանց որոշակի բաժանում՝ և իրարմէ երկութիւն կը նշանակեն. «Եւ ՚ի Հօրէ, և ինչ յաշխարհ, դարձ-

եալ թողում զաչխարհն, և երթամ առ Հայր . . . : Հոգին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ . . . : Մխիթարիչն Հոգին Սուրբ, զոր առաքեսցէ Հայր յանուն իմ». եւ: (Յ-ԷՒ. ԺԶ. 28: ԺԸ. 28: ԺԹ. 26:) Ապա ուրեմն անվիճ ըրաբանութիւն մ'է այս, որոյ վրայ ամկից աւելին չարժեր խօսիլ:

Ընտառ և հետեւողքն ևս՝ ի Քրիստոս ոչ միայն երկուց բնութեանց կանապանութիւն կը դնէին, այլ և երկուց անձանց՝ Քրիստոս մարդ և Քրիստոս Աստուած՝ երկու լրացեալ անձնաւորութիւն կը մոլորէին, երկու դէմք, երկու անձինք և երկու բնութիւնք բաժան ի միմեանց, որք պատասխատեցան ի Տիեզերական Ս. ժողովն Եփեսոս ի 431. յորում ներկայ էին՝ ըստ փափազեան Հ. Իգնատիոսի (ի Պատ. ելել. տր. ե. Գլ. Զ.) աշակերտք Արքոյն Սահակայ և Մեսրովպայ: Ասոր հետեւողները երկու բաժանեալ բնութիւններ պատահաբար առ միմեանս եկաւորեալ դաւանելնուն համար՝ ըստուեցան Եւէ-բնակ. և ասոնք ու ասոնց նմանիքն են զոր կը նզովենք ըստ կարգաւորութեան Ժխատրանի մերում Մաշտոցի՝ ի ձեռնադրութեան՝ ասելով, «Նզովեմ զամենայն հերձուածողն, զԱրիոս, զՄակեդոն, և զՆեստոր, և զամենայն երկաբնակաց դասն». ու չէ թէ ի Քրիստոս անխառն՝ անշփոթ և անբաժանելի միաւորութեամբ միացեալ երկու բնութիւններ ուղղափառապէս դաւանողները, ինչպէս չարամտաբար կը պրպարտէ զմեզ Հայաստանեայց Եկեղեցւոյ ուխտեալ թշնամին գաթըրճեան, (ի Կեղծ- ի- ը եր. 63.) որուն անշուշտ այս շաղփաղփութիւնը խայտառակելու համար Մխիթար Աբբան իւր բառգրքին մէջ ըսեր է. «Մերթ եւս ասին Եւէ-բնակ նոքա, որք երկուս բըննութիւնս ասեն ի Քրիստոս՝ հանդերձ երկու դիմօք և անձամբք. և այսպիսիքս են Ընտառականք»:

(ի Բառ Եւէ-բնակ:) Արդարեւ Ժխատրանի կարգաւորութենէն՝ Եւէ-բնակ ըստացները քաղկեդոնիկնեըուն համար կրնայ պրուցուած հանդուրժել. բայց դարձեալ Հայոց այս կարգաւորութիւնը յոյժ ուղղափառական է. ըստ որում այս նզովքը սահմանած էին այն ժողովքին և անոր դաւանակցաց վըրայ, անոր համար որ պիտէին թէ այն ժողովքը նեստորեամիտ է, և երկու բնութիւն ըսելով երկու դէմք և երկու անձ կ'իմանայ. և առ այս ձեռքերնին վկայութիւն ունէին Յունաց՝ միանգամայն Ընտառականաց վկայութիւնքը, և և Լեւոնի տումարին բառական աղաւաղ թարգմանութիւնը, որ արդարեւ նեստորեամիտ խնատա կու տայ, (որ +Ջ կ'ընծանայ վինեպիկի Մեծաբութեան հրատարակած Լեռնի տումարի ընդմանութեան ձանձրութեանց Ջէջ.) ապա ուրեմն սեւ պրպարտիչներ են անոնք որ Հայոց եկեղեցւոյ այս դաւանութիւնը քաջ գիտնալով՝ կը զրպարտեն թէ այս նզովքը ուղղափառապէս երկու բնութիւն դաւանողներուն դէմ սահմանուած է և կը տեւէ. մինչդեռ Հայոց Եկեղեցին ինքն ալ ի Քրիստոս երկու բնութիւն կը դաւանի ուղղափառապէս, միացեալ և անշփոթ. և- ահա իւր դաւանութիւնը. «Անուիք մի բնութիւն ի Քրիստոս, ո'չ շփոթմամբ ըստ Եւտիքեայ, այլ ըստ կիւրղի Աղեքսանդրացւոյ՝ զոր ի գիրս Պարապմանցն ասէ ընդդէմ Ընտառի, եթէ մի է բնութիւն բանին մարմնացելոյ, որպէս և հարքն ասացին. և հարս կոչէ զԹէոդորոս և որ յառաջ քան զնա: Եւ մեք յաւանդութենէ սրբոցն ասեմք զայս, և ո'չ ըստ չարափառացն կարծեաց շփոթումն կամ յեղուման կամ այլայլութիւն արկանելով ի միաւորութիւն Քրիստոսի՝ մի ասել բնութիւն, Այլ փոխանակ միանձնաւորութեանն՝ զոր դուք ասէք ի Քրիստոս, որ է ուղիղ և խոստովանեալ ի մէնջ, է՛ և մերս մի բը-

նութիւն ասելն պէտ և նման, և ո՛չ հերձուածողութեան կարծեաց աղագաւ: Եւ յայտ յայտնանէ է, զի յորժամ բանիւ խօսիք վասն նորին իրի՝ ո՛չ ի նմին միայն դադարեիք, այլ և զերկուցն յատկութիւն ցուցանեիք, որպէս և չարչարանացն և մահուն վերաստացեալքն յայտնի են ի սրբոյն Աթանասէ· այն զի առ թէ Աստուած դոլով բանն՝ անչարչարելին էր բնութեամբ, սակայն ընդ չարչարելի մարմնոյն անբաժանելի միացեալ անհարիւնն· և որ այսպիսիք՝ բազումք: Քանզի մի բնութիւն ո՛չ վասն այլ իրիք ասի ի միմեանց· այլ յաղագս անբաժանելի և անճառ միաւորութեան բանին և մարմնոյն:—Նաեւ յերկու բնութիւն ասելոյն՝ յորժամ ոչ վասն բաժանման լինին ասացեալքն՝ ըստ Նեստորի, այլ վասն զանշփոթութիւնն ցուցանելոյ ընդդէմ չարաւիրացն Եւտիքեայ և Ապողինարի՝ ո՛չ վախչիմք: . . . » (Եբր-էս Շնորհալի, ի գէդ հատոր ԺԹ — Մանուել Ալէքս· Ընդհանր· եր· 61· Տղ Կոստնդ:)

Նեստոր՝ Աստուածածին, Աստուածամայր, Տէրամայր ալ չէր ըսեր Ս· Կուսին· այլ Քրիստոսածին, մայր Քրիստոսի կ'ըսէր· (որու կը ձայնակցին և հինգերորդ բողբականք·) ըսելով թէ Մարիամն ծնածը լոկ մարդ էր, Աստուած չէր· Աստուած չծնիր· բայց Աթանարանիչը կը պատմէ, թէ եղիսաբեթ մարդ արէական ոգւով Մայր Տեառն, Տէրամայր անուանեց զԿոյսն· (Ղուկ· Ա· 43:) «Եւ ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ Մայր Տեառն իմոյ առ իս» ըսելով· Այսպէս և Տիեզերական Ս· ժողովն Եփեսոս վճռեց Աստուածածին, Աստուածամայր, Տէրամայր անուանել զՍ· Կոյսն· զի անկէ ծնած Քրիստոսը ո՛չ թէ լոկ մարդ էր ըստ հաւատոյ Նեստորի, այլ Աստուած, որ հաճեցաւ մարմին առնուլ անկէ, առաւ անոր արիւնէն, թանձրացաւ բանն Աստուած ի նմա, և մարմին եղեւ բանն· (Յ-վհ· Ա·) առանց Աստուածութիւնն

ի մարմին փոխուելու· . . . Ըսողներ ալ գտնուեցան եղեր որ ի Քրիստոս մի միայն Աստուածային կամք կար· մարգկային բնական հոգի ալ չունէր, և անոր տեղը իւր Աստուածութիւնը կը լեցընէր: Այլ ասոնք Ս· Գրոց յայտնապէս և ուղղակի դէմ կ'ելլեն, ինչպէս և Նիկիոյ, Կ· Պոլսոյ և Եփեսոսի Ժողովքները վճռեցին և անոր տեղ ուղղափառ վարդապետութիւնը հաստատեցին:

Նիկիական Հարք՝ Ամենասուրբ Երրորդութեան վրայ Ս· Գրոց պարզ և մկիրն բանիւք ուսուցածները հանգանակելով, որուն վրայ եղեր Եփեսոսի և Կ· Պոլսոյ Տիեզերական Ս· Ժողովներն ալ ի'նչ ինչ բացատրութիւններ աւելցուցին· յոյժ դիւրիմաց ոճով սահմանեցին և ուսուցին դաւանիլ այսպէս: Մի Աստուածութիւն, որ ունի երեք բաժանումն՝ առընչակից հակադրութեամբ, երեք անձինք, երեք դէմք· բայց անանկ երեք բաժանում մը՝ որ երեքութիւնն չհալմեր, այլ Երրորդութիւն· Երրորդութիւն անբաժանելի· միութիւն յերիս որիշ անձինս· մի կամք· մի ներգործութիւն· և երեք որիշ անձինք և դէմք ի միութեան Աստուածութեան: —Իսկ Որդւոյն Աստուծոյ մարդեղութեանը գալով կ'ուսուցանէ թէ Որդին Աստուծոյ Աստուած է, Աստուած յԱստուծոյ Հօրէ ծնեալ, հաւասարակից Հօր, կամ բացատրութեամբ՝ նոյն ինքն ի բնութենէ Հօր, մի անձն յԵրրորդութենէ, որ եկն էջ յերկնից յարդանդ մաքրազարդեալ Մարեմայ Կուսին, իննամսեայ ժամանակաւ ժուժկալեալ ըստ օրինի մարդկութեանս, մարմնացաւ մարդացաւ ծնաւ կատարելապէս Հոգւովն Աբրամ· որով էառ մարմին հոգի և միտ և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ո՛չ նուազեաւ: — Ուստի և ի Քրիստոս երկու բնութիւնք երկու կամք կ'ուսուցանեն, Աստուածային և մարդկային, անշփոթ՝ անխառն և անո-

բաժանելի միաւորութեամբ միացեալ. որով կ'ըսուի, մէկ Քրիստոս, մէկ Որդի. պի մի և նոյն Աստուածային անձն է՝ որ մարմին զգեցաւ. անյեաոր մըմնի մը հեռ ըֆ-ցաւ. այլ ինքն՝ նոյն անձն մարմնաւորեցաւ. վասն որոյ և մի և նոյն անձին՝ որ Աստուած և մարդ է յերկուց բնութեանց միացեալ քանչելի խառնուածով, կ'ընծայուին անխտրաբար անուն թէ Աստուածային աստղոգ եվքն ու ներգործութիւնքն, և թէ՛ մարդկային յատկութիւնները ու կիրքերը. (կամ որ նոյնն է, երբ եմն մարդկային ները անուն Աստուածութեանը կ'ընծայուին, և Աստուածայինները՝ մարդկութեան,) ըստ այնմ, թէ՝ «Որդին մարդոյ որ էն յերկինս»: (Յ-ՎԿ. Գ. 13:) «Երկրորդ մարդն Տէր՝ յերկնից . . . գՏէրն փառաց ո՛չ՝ի խաչ հանէին» (Ա. Կ-ՆԹ. ԺԵ. 47: Բ. 8:) «Ի՞մի ե՞ յերկնից, ոչ մի զկաս իմ ատարից . . . . Տեսանիցէք զորդի մարդոյ՝ մի ելանիցէ ուր էր զառաջինն:» (Յ-ՎԿ. Զ. 38—63:) — Մի և նոյն անձը՝ կ'ըսուի Որէէ Աստուած և Որէէ մարդ. մի և նոյն անձը՝ իբրեւ Աստուած և Որդի Աստուծոյ՝ պաշտօն և երկրպագութիւն կ'ընդունի. մի և նոյն անձը դարձեալ իբրեւ Որդի մարդոյ միջնորդ փրկութեան մարդկան՝ պաշտօն և երկրպագութիւն կը մատուցանէ Աստուածութեան: Սմին իրի և առած է Աստուածաբանութեան. «յերրորդութեան՝ այլ ոմն և այլ ոմն. այլ ո՛չ՝ այլ իմն և այլ իմն. այլ՝ի Քրիստոս՝ այլ իմն և այլ իմն, այլ ո՛չ՝ այլ ոմն և այլ ոմն». որ է ըսել՝ երրորդութեան մէջ երեք որիշ անձինք կան, բայց երեք որիշ բնութիւնք չկան. իսկ՝ի Քրիստոս՝ երկու տարբեր բնութիւնները կան, այլ երկու տարբեր անձինք չկան: կամ՝ ինչպէս որ Գրիգոր Աստուածաբան կ'ըսէ, «յերրորդութեան երեք ոմն, և մի ինչ. իսկ՝ի մարդեղութեան՝ մի ոմն՝ և երկու ինչ». ց՝ յերրորդութեան՝ երեք անձինք և մի բնութիւն. իսկ՝ի մարդեղութեան՝ երկու բնութիւնք և մի անձն:

Հին հայրերէն շատերը երկար տարիներ քնարեն բառին վրայ երկար վէճեր քշեցին. ուանք բնութիւն ըսելով անձնաւորական որոշմունք՝ անյն կ'իմանային, ուստի և՝ի Քրիստոս՝ յետ միաւորութեան երկուց բնութեանց՝ մի բնութիւն կայ, այլ եւս երկու չկայ կ'ըսէին, ընդդէմ անոնց՝ որ երկու բնութիւն կ'ըսէին՝ի Քրիստոս. և բնութիւն բառով յոհաննէն կ'իմանային: Բայց վերջերը երբ որ բնութիւն բառին սահմանը որոշեցաւ, ձայները միացան, վէճերը և հակառակութիւնները վերջացան, և այսօր յայտ՛ միաբան են ամենայն եկեղեցիք:

ԳԼՈՒԽ Գ.

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

«Հաստատեա և՛ի Սուրբ Հոգին, յանէնէ և՛ի հաստատեալն»

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Անյեաոր-ութիւն Սուրբ Հոգւոյն

Ս. Երրորդութեան երից անձնաւորութեանց մին է և Ս. Հոգին. ինչ որ են յերրորդութեան՝ Հայր և Որդի, նոյն է և Հոգին: — Ս. Հոգւոյն՝ի Հօրէ և յՈրդւոյ որիշ՝ զատ անձ մ'ըլլալուն՝ անթիւ վկայութիւններ կան՝ի Ս. Գիրս, որոց գլխաւորները միայն ատոնք են. «Հոգի Աստուծոյ շրջէր՝ի վերայ ջուրց». (Ծննդ. Ա. 2:) «Ես աղաչեցից զՀայր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ, պի ընդ ձեզ բնակիցէ՝ի յաւիտեան. զՀոգին ճշմարտութեան: . . . Իսկ Մխիթարիչն Հոգին Սուրբ՝ զոր առաքիցէ Հայր յա-

նուն իմ, նա սատոյե ձեզ զամենայն . . . : Յորժամ եկեսցէ մխիթարիչն , զոր ես սատեցից ձեզ 'ի Հօրէ , զՀոգին ճշմարտութեան որ 'ի Հօրէ ելանէ , նա վկայեսցէ վասն իմ. . . : եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ո՛չ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, սատեցից զնա առ ձեզ: եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհս . . . : Յորժամ եկեսցէ նա՝ Հոգին ճշմարտութեան , սատիպոդիսցէ ձեզ ամենայն ճշմարտութեան . . . : » (Յհ. ժԴ. 15—17: 26: ԺԶ. 26: ԺԹ. 7—13 եւ :)

Ջատաս Քրիստոս Հօր անձէն և իւր անձէն որոշելով զՀոգին՝ իւրեւ զատ անձ մը կը նկարագրէ . ինչպէս սուրբ մխիթարիչ կ'ըսէ , սատեղէն անձն կը նշանակէ , ըր Հայր առաքեցէ կ'ըսէ . առաքուողը՝ կատարեալ անձնաւորութիւն մ'է . և կատարելիք պաշտօնն ալ անհատ անձնաւորութեան յատուկ է . այս է՝ ընդ Յիշ բնակիլ , սատիպոդիսցէ Յիշ ըստ նմին , վկայեսցէ վասն իմ , յանդիմանեսցէ աշխարհս , սատիպոդիսցէ Յիշ եւ . եւս և զատ դէմք կը յատկացընէ անոր . ն՝ վկայեացէ , ն՝ ուսուցէ , ն՝ յանդիմանեացէ , եկեսցէ ն՝ , առաքեցից զն՝ եւ : եւ Ապա ուրեմն Հոգի Աստուծոյ , Հոգի Քրիստոսի , Հոգի Որդւոյ եւ ըսելով Հոգի անուանի զատ անձնաւորութիւն մը կ'իմանանք . և չեմք կրնար անանձնաբար՝ զբօղիան Ապտծոյ եւ իմանալ, ըստ բարբանջելոյ Սոկինեանց, քանզի ատոնց անհատութեան դէմ ալ Գիրքին սա խօսքերը կրնանք մէջ բերել. «Աստուած յուսոյ՝ լի սրտացէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առատելով ձեզ յուսով՝ զբօղիանօք Հոգւոյն սրբոյ . . . : Գործեաց Քրիստոս ինեւ՝ . . . զբօղիանօք Հոգւոյն սրբոյ» : (Հռով. ժե. 13—19:) «Քահանայապետս զՅովհաննէս զՅիսուս որ 'ի նազարէթէ , զոր օծն Աստուած Հոգւով սրբով և զբօղիանօք» : (Գործ. ժ. 38:) «Ս բանն իմ և քարոզութիւն , ո՛չ պատիր

բանիւք իմաստութեան , այլ սրբօք Հոգւոյն և զբօղիանօք» : (Ա. Կորնթ. Բ. 4:) Այս համարներուն մէջ յայտնապէս կ'երեւնայ որ Հոգի անունը զօրութիւն չնշանակելէ զատ՝ ըստ ամենայնի զատ անձնաւորութիւն՝ անձնական որոշ յատկութիւն ունեցող զատ դէմք կը նշանակէ , որ իրեն յատուկ զօրութեամբը կը լեցընէ յուսով . որով յատուկ զբօղիանօք կը գործէ Որդին . և թէ՝ Աստուածային զբօղիանն ուրիշ է , և Հոգւոյ անձը ուրիշ է . ըստ որոյ կ'ըսէ . «Զոր օծն Աստուած Հոգւով սրբով և զբօղիանօք» , —«Սրբօք Հոգւոյն և զբօղիանօք» :

Հոգւոյն սրբոյ՝ 'ի Հօրէ և Որդւոյ զատ՝ երրորդ անձնաւորութիւն մը ըլլալու մասին՝ ունինք 'ի Ս. Գիրս շատ մը վկայութիւններ , որովք յատուկ անձի վերաբերեալ ամեն յատկութիւն և ներգործութիւն կը տեսնենք որ ունի Ս. Հոգին . ըստ որում կը խրկուի , կու գայ , կ'ելլայ կը վերնայ , կը ջանայ , կը շարժի , կ'երթայ , կը մղի , կը խօսի , կը լսէ , կը սովրեցընէ , կը յիշեցընէ , կը վկայէ , գաղիքը կը յայտնէ , կը մխիթարէ , գիտէ , կ'օգնէ , կը բարեխօսէ , կը շարժէ , կը տրտմի , կը նեղանայ , միտք՝ դիտաւորութիւն՝ հաճութիւն կ'ունենայ , հրաշք կը գործէ , պարգեւներ կու տայ , կեանք կ'ընծայէ , կը սրբէ , կը վերածնէ , եւ , եւ , եւ : (Ծննդ. Ա. 2: Զ. 3: Ելից. ԿԳ. 10: Ցվկ. Զ. 63: ԺԴ. ԺԵ. ԺԶ: Հովէլ. Ը. 26—27: ԺԵ. 19: Ա. Կորնթ. Բ. 10—11 : Զ. 11: ԺՀ. 8—10: Եփես. Դ. 30: եւ եւ եւ)

ՑՕԴՈՒԱԾ Բ.

Ս. Հոգին Աստուած է

Թէ՛ Ս. Գրոց և թէ՛ Եկեղեցական գրեանց մէջ ամեն անգամ որ Հոգի անունը Ամենասուրբ եր-

րորդութեան մէկ անձը նշանակող անուն մը պէս կը գործածուի ․ Սուրբ ստորոգելին ալ ընդհանրապէս անոր վրայ կը դրուի՝ իբր Նորին բնութիւնը բացատրող յատուկ ստորոգելի , արարածական հոգի նշանակելէ որոշելու համար , որոց յատկութիւնը չէ անփոփոխելի ինքնաբուն սրբութիւն ունենալ ։— Նիկիական Հանգանակին մէջ «Ընդ» և «Կատարեալ» ստորոգելիքն ևս ստորոգուած են՝ անոր Աստուածային կատարեալ անձնաւորութիւն մը ըլլալը որոշելու համար՝ յանելն «Հաւատամք 'ի սուրբ Հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն» ընդդէմ Սաբէլեանց , որ Երրորդութեան երեք անձինքն իբար կը խառնէին կը շփոթէին ․ և 'ի նմին իսկ Նիկիոյ Տիեզերական Ս. Ժողովն դատապարտեցան ․ ևս և ընդդէմ Մակեդոնի հոգեմարտին , որ արարած ըսաւ զՀոգին ․ և դատապարտեցաւ 'ի Տիեզերական Ս. Ժողովն Կ. Պոլսոյ 'ի 381 , յորում ներկայ կը գտնուէր և մեր Ներսէս Մեծ Ս. Հայրապետը ․ ('Ի Պատմ. Եկեղ. Հ. Իգնատիոսի Փափազեան Գիր. Գ. Գլ. Ի.) այլ ևս ընդդէմ Սոկինեանց , որ զՀոգին՝ արարածական Հոգի ալ չըսին , Հոգի անունը Աստուծոյ զօրութեան լոկ մէկ նշանակը համարէցին , որոց ամենուն դէմ հանգանակը այս դաւանութիւնը տալէն ետքը՝ կը յաւելու նզովքն ալ․ «իսկ որք ասենն էր երբեմն՝ . . . յորժամ ոչ էր Ս. Հոգին ․ կամ թէ յոչէից եղեն կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զՍ. Հոգին , և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք՝ զայնպիսին նզովէ կաթուղիկէ և Առաքելական Եկեղեցի» ։

Ս. Հոգւոյն Աստուածութիւնը ապացուցանելու դժուարութիւն մը չունիմք ։ Ս. Գրոց մէջ՝ Հօր և Որդւոյ առանձնաւորութեանց ինչ բաներ որ կ'ընծայուին իբրև Աստուածութեան , նոքին իսկ կ'ընծայուին և Հոգւոյն ․ (բաց 'ի Հայրաբնէ և Որդեաբնէ ։) Նախընթաց յօդուածին մէջ տեսանք անոր ազատ անձնաւորութիւն ընծայուիլը ․ կ'ընծայուի նաև ուրէշ եղածն և Աստուածային անուն՝ յատկութիւնք՝ գործք և պաշտօն ։ Այսպէս ուրեմն՝ ինչպէս որ Հայրը և Որդին՝ համագոյակից այլ և այլ անձինք են 'ի միում Աստուածութեան , նոյնպէս և Ս. Հոգին հարկաւորապէս մէկ անձն է Ս. Երրորդութեան՝ համագոյակից Հօր և Որդւոյ ։

Ա. Ուրէշ եղածն ընծայեալ Ս. Հոգւոյն ։ Յիսուս Քրիստոս՝ ինչպէս որ իւր անձին համար կ'ըսէ ․ «Ելի 'ի Հօրէ» (Յովհ. ԺԶ. 26.) նոյնպէս և Ս. Հոգւոյն համար կ'ըսէ ․ «Հոգին ճշմարտութեան , որ 'ի Հօրէ ելանէ» ։ (Յովհ. ԺԵ. 26։)

Բ. Աստուածային անուն ընծայեալ Ս. Հոգւոյն ։ «Անանիա , ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ քո , ստել քեզ Հոգւոյն սրբոյ . . . ո՛չ ստեցեր մարդկան , այլ Աստուծոյ» ։ (Գործ. Ե. 3։) «Թէպէտ և բաժինք շնորհաց են՝ այլ Հոգի նոյն է ․ եթէ բաժինք պաշտամանց են , այլ Տէր նոյն է , եթէ բաժինք յաջողութեանց են , այլ Աստուած նոյն է» ։ (Ա. Կորնթ. ԺԲ. 4։) «Զի Տէր Հոգին է , ուր Հոգի Տեառն է , անդ ազատութիւն է» ։)Բ. Կորնթ. Գ. 16։) — Պօղոս առաքեալ՝ Եսայեայ (Զ. 9.) խօսքը՝ զոր Եսայի Պատգամ Աստուծոյ , Բարբառ Տեառն ըսելով մէջ կը բերէ , Ս. Հոգին էր կ'ըսէ՝ այն խօսող Տէրը և Աստուածը ․ «Բարւոք խօսեցաւ Հոգին սուրբ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի առ հարսն մեր , և ասէ ․ երթ ևն» .(Գործ. ԻԸ. 25.) —Ստեփաննոս՝ Իսրայէլացւոց առ Մովսէսիւ Աստուծոյ դէմ հակառակելնին՝ Ս. Հոգւոյն դէմ հակառակել կ'անուանէ ․ «Խստապարանոցք և անթլփատք սրտիւք և ականջօք ․ դուք հանապազ Հոգւոյն սրբոյ հակառակ կայք ․ որպէս հարքն ձեր՝ և դուք» ․ (Է. 50—51.) դարձեալ Պօղոս առաքեալ տաճար Աստուծոյ կ'անուանէ զհաւատացեալս , և

կ'ըսէ թէ Հոգին կը բնակի 'ի ձեզ. «Ո՞չ գիտէք, եթէ տաճար էք Աստուծոյ, և Հոգի Աստուծոյ բնակեալ է 'ի ձեզ». (Ա. Կոր. Գ. 16.) և 'ի նմին խոկ թղթին կ'ըսէ ևս. «Ո՞չ գիտէք. զի մարմինք ձեր տաճարեն Հոգւոյն որ է 'ի ձեզ՝ զոր ունիքն յԱստուծոյ. և չէք անձանց ձեր, քանզի գնոց գնեցայք. փառաւորարարէք զԱստուած 'ի մարմինս ձեր և յոգիս ձեր»: (Զ. 19—20:)

Գ. Ա-ՓՈՍՏՕՂԱՅԻՆ ՓՈՐՁԵԼՔ ԸՆԴԱՅԵԼ Ս. ՀՈԳՈՅՆ:

ՅԱՒԻՏՆՈՒԹԻՒՆ: «(Ցմահս Քրիստոս) 'ի ձեռն Հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ սատարագ Աստուծոյ»: (ԵԲՐ. Թ. 14:)

ՍԷՐՈՒԹԻՒՆ: Ս. Գրոց մէջ առեն ուշ Սուրբ Հոգի, և երբեմն՝ ՍԷՐՈՒԹԻՒՆ Հոգի կ'ըսուի, իբր ինքնաբուն սուրբ, նաեւ պարգեւիչ սրբութեան: «Եւ մի՛ տրտմեցուցանէք զՀոգին սուրբ Աստուծոյ»: (ԵՓԵՍ. Գ. 30:) Սահմանեալ Որդւոյն Աստուծոյ՝ ըստ Հոգւոյն սրբութեան»: (Հռ. Ա. 4:) «Ընտրեաց զմեզ Աստուած 'ի սկզբանէ 'ի փրկութիւն՝ սրբութեամբ Հոգւոյն»: (Բ. ԹԵՍ. Բ. 13:) «Եղիցի պատարագն հեթանոսաց ընդունելի, սրբեալ Հոգւովն սրբով»: (Հռ. ԺԵ. 16:)

ԲԱՐՈՒԹԻՒՆ: «Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ»: (Սաղմ. ՃԽԳ. 10:) «Եւ զՀոգի քո սուրբ ընդ ընդէրս՝ եառուր նոցա իմանալ զօրէնսն»: (ՆԵԵՄ. Թ. 20:)

ԱՌՆՈՒԹԻՒՆ: «Զի Հոգին զամենայն քննէ, և զխորս Աստուծոյ: Զի ո՞ ոք 'ի մարդկանէ գիտէ զինչ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն որ 'ի նմա. նոյնպէս և ո՛չ զԱստուծոյն ոք գիտէ, եթէ ոչ Հոգին Աստուծոյ:» (Ա. Կոր. Բ. 10—11:)

ԱՌՆՈՒԹԻՒՆ: «Յո՞ երթայց ես յՈգւոյ քումմէ, և կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց: Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես ես»: (Սաղմ. ԻԼՀ. 7—12:)

ԱՓՐԻԼՈՒԹԻՒՆ և ԱՆՆԱԽՈՒԴՈՒԹԻՒՆ: «Հոգի Աստուածեղէն է որ արար զիս՝ և չունչ Ամենակալին է որ ուսուցանէ զիս»: (ՅՈՎԲ. ԼԳ. 4:) «Բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա»: (Սաղմ. ԼԲ. 6:)

Դ. Ա-ՓՈՍՏՕՂԱՅԻՆ ՓՐԿԱՀ ԸՆԴԱՅԵԼ Ս. ՀՈԳՈՅՆ: Հոգեւոր չնորհաց և պարգեւաց առաքութիւնը որ Աստուածային բնութեան յատուկ է, անհաղորդական ընդլայով արարածական բնութեան, Ս. Հոգւոյն կ'ընծայուի 'ի Գիրս: «Իբրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն Հոգւոյն՝ առ իբրաքանչիւր օգուտ: Ումեմն տուեալ է 'ի Հոգւոյն բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին Հոգւոյ, միւսում հաւատք նովին Հոգւով. այլում շնորհս բժշկութեանց նովին Հոգւով, այլում ազդումն զօրութեանց, այլում մարգարէութիւն, այլում ընդրութիւն հոգւոց, այլում տեսակ լեզուաց, այլում թարգմանութիւն լեզուաց. այլ զայս ամենայն յաջողէ միւնոյն Հոգի, և բաժանէ իբրաքանչիւր որպէս և կամի»: (Ա. Կոր. ԺԲ. 7—11:) «Ի Հոգւոյն սրբոյ կրեալք խօսեցան մարդիկ Աստուծոյ»: (Բ. ՊԵՏ. Ա. 21:) «Սէրն Աստուծոյ սփռեալ է 'ի սիրտս մեր 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ, որ տուաւ մեզ. . . . Եթէ Հոգի այնորիկ՝ որ յարոյցն զՅիսուս 'ի մեռելոց՝ բնակեալ է 'ի ձեզ, ապա և որ յարոյցն զՔրիստոս 'ի մեռելոց՝ կենդանացուսցէ զմահկանացու մարմինս ձեր բնակեալ Ոգւովն իւրով 'ի ձեզ. . . . Նոյնպէս և Հոգին 'ի թիկունս հասանէ տկարութեանս մերում, զի զոր կաքն չգիտեմք, որպէս արժան իցէ՝ ոչ գիտեմք. այլ ինքն Հոգին բարեխօս լինի 'ի հեծութիւնս անմռունչս: Բայց որ քննէն զսիրտս, գիտէ զինչ խորհուրդ է Հոգւոյն. զի ըստ Աստուծոյ բարեխօսէ վասն սրբոց»: (Հռոմ. Ը. 5. Ը. 11, 27:) «Ա-ղաչացարուք յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-

տասք և 'ի Հոգին Աստուծոյ։ (Ա· Կոր· Զ· 11։) «Ապրեցայց վասն զի 'ի ձեռն աւազանին միաւանգամ ծննդեանն, և նորոգութեամբ Հոգւոյն սրբոյ»։ (Տիտ· Գ· 5։) «Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս»։ (Մատթ· ԺԲ· 28։) «Ասէ Հոգին ցՓիլիպպոս· Մատի'ր և յարեա'ց 'ի կառսդ յայդոսիկ։ . . . Մինչդեռ Պետրոս դնտաւ ածէր վասն տեսլեանն, ասէ Հոգին ցնա· ահաւասիկ արք ոմանք խնդրեն զքեզ· այլ արի' էջ՝ և երիր ընդ նոսա առանց իրիք խղճելոյ, զի ես առաքեցի զնոսա։ . . . Ասէ Հոգին ցնա· որոշեցէ'ք ինձ զԲառնաբաս և զՍօղոս 'ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ' զդոսա»։ (Գործ· Ը· 29։ Ժ· 19· ԺԳ· 2։) եւ այլ եւս։

Ե· Պաշտօն Ա֊ոգւոյն ընդ այլեւս Ս·Հոգւոյն։

Արդէն յայտնի է փրկչին հրահանգը՝ Մկրտութեան համար, որ կատարուի յանուն Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ· (Մատթ· ԻԸ· 19· եւ·) որ է ըսել՝ յանուն երից գոյակից անձանց Ս· Երրորդութեան։

Առաքեալը հաւատք յոյս և սէր հաստատել կ'ըսէ 'ի Հոգին· աղօթելով առ նա, և կը յաւելու թէ Ս· Հոգին պինդը պիտի փրկէ եւ· «Այլ մեք սիրելիք՝ եղիցուք չինել զանձինս սրբութեամբն հաւատոց 'ի Հոգին սուրբ· կացցուք յաղօթս, պահել զանձինս սիրոյն Աստուծոյ· ակն ունելով ողորմութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի կեանն յաւիտենականս»։ (Յուդ· 20—21։) «Ոմանք առ հեստութեան զՔրիստոս պատմեն, այլ ո'չ սրբութեամբ· քանզի հաւատին նեղութիւնս յարուցանել՝ 'ի վերոյ կապանաց խոց· քայց այս միմիայն է՝ որո'վ օրինակաւ և խոչ, եթէ պատճառանօք՝ և եթէ ճշմարտութեամբ, Քրիստոս պատմի· և ընդ այս խնդամ՝ այլ և ուրախ եւս եղէց· զի գիտեմ եթէ այս պահիլ ինձ 'ի փրկութիւն 'ի ձերոց

խնդրուածոց, և 'ի պարզեւաց Հոգւոյն Ցիսուսի Քրիստոսի, ըստ ակնկալութեան և յուսոյն խնդ . . .։» (Փիլիպ· Ա· 14—30։) «Իսկ պտուղ Հոգւոյն այս է· սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն, եւ»։ (Գաղատ· Ե· 22—24։)

Առաքեալը բարեմաղթութիւն ընելով ժողովրդեան համար՝ Հոգւոյն սրբոյ շնորհքը խաղաղութիւնն ու հաղորդութիւնը կը մաղթէ անոնց։ «Շնորհք Տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի, և սէրն Աստուծոյ, և հաղորդութիւն Հոգւոյն սրբոյ, ընդ ձեզ պահեսցին· ամէն»։ (Ր· Կորնթ· ԺԳ· 13։) «Ի Յովհաննէ առ եօթն Եկեղեցիս՝ որ են Ասիա, շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն Յ Աստուծոյ . . . և յեօթն ոգւոցն Հոգւոյն . . . և Ցիսուսէ Քրիստոսէ . . .» (Յայտ· Ա· 4—5։) «Այլ Աստուած յուսոյ՝ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն սրբոյ»։ (Հռ· ԺԵ· 13։)

Պօղոս Առաքեալ երդումն կը կնքէ Ս· Հոգւոյն անուամբը՝ Քրիստոսի անուանբ երդուընցած առնելով «Աստուածն ասեմ 'ի Քրիստոս՝ և ո'չ ստեմ· վկայեն ինձ միտք իմ 'ի Հոգի սուրբ»։ (Հռ· Թ· 1։)— Երդումը ըստ հին և նոր օրինաց՝ միայնոյ Աստուծոյ պաշտելի անուան վրայ հնգուած առնն օրինաւոր կրնայ ըլլալ· քանզի ինքնին Աստուած այնպէս հրամայած է, յիւր անուն երդնուլ· (Բ· Օրինո· Զ· 13։ Ժ· 20։ Ս֊ղմ· կԲ· 12։ ե֊դ· Խե· 25։ կե· 16։ Եբեմ· Դ· 2·) և ո'չ բնաւ յօտարի անուն երդնուլ։ (Եբեմ· ե· 7։ ԺԲ· 16։) Բնական ալ էր· երդումը՝ երդուընցողին կողմանէ ճշմարտութեան կամ խոստմնապահութեան՝ հաւատարմութեան երաշխաւորութիւն և կնիք ըլլալով, անանկ էակի մը անուան կ'ընե-

քել արժան է, (ինչպէս և անանկ դասուած է ամեն հին և նոր ազգաց մէջ,) որ երդմնապրժութիւնը՝ սուտիւնն և անհաւատարմութիւնը պատժելու, և հաւատարմութիւնն ու ուխտապահութիւնը վարձատրելու կարող, միշտ ամենուրեք ներկայ, ամենազէտ՝ ամենատես՝ ամենազօր ըլլայ, միով բանիւ՝ Ճշմարիտ Աստուած ըլլայ։ Հեթանոսք իսկ՝ որ շատ աստուածներ կը պաշտէին, երդումը Գերեզման էնէն անոնցմէ միայն (եզակիանապէս) կը կնքէին։ Ապա Պօղոսի երդնուլն՝ի Հոգին աստուած, իր բանից Ճշմարտութեան վկայ պՍ. Հոգին կոչելը՝ քարոզել է թէ Ս. Հոգին Աստուած է. հետեւաբար մի անձն է պաշտելի և երկրպագելի Ս. Երրորդութեան, որուն անուան երդնուլն օրինաւոր է և հրամայեալ։

Ի վերջոյ՝ Ցիսուս Քրիստոս Ս. Հոգւոյն Աստուածութեան վրայ այնչափ պայծառութեամբ քարոզելէն ետքը՝ անոր ձեռքով գործած զօրութիւնները մէջ բերելով իբր անտարակուսելի ապացոյց նորին Աստուածութեան, ըսաւ. «Որ ոք ասիցէ բան ընդդէմ Որդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զՀոգւոյն սրբոյ ասիցէ՝ մի՛ թողցի նմա»։ (Մատթ. ԺԲ. 32։) Որ ըսել է. եթէ ոք զՈրդին Աստուծոյ մարդկային կերպարանաւք՝ մարդկային կարճաք և կրիւք (անմեղանչականաք) պաշարեալ տեսնելով զինքը Աստուած անուանել վարանի, և մարդ անուանէ, մեծ մեղք չդործեր այնչափ՝ որչափ Ս. Հոգւոյն սքանչելագործ զօրութիւնն տեսնելով հանդերձ՝ զինքը Աստուած չդաւանի. ըստ որում հրաշքն՝ սքանչելիքն Արարիչ Աստուծոյ յատուկ է գործել. արարածական բնութենէ եղող ոք անհնար է որ զայն զօրաթեամբ կարենայ հրաշագործել։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Բղխումն Հոգւոյն Սրբոյ

Բղխումն Հոգւոյն սրբոյ է՝ յաւիտենական յառաջխաղացումն Հոգւոյն՝ի Հօրէ անժամանակապէս. որ կ'ըսուի ելումն կամ բղխումն էքսորթան, այլ ո՛չ բնաւ ծնունդ, ինչպէս կ'ըսուի բանին Աստուծոյ՝ի Հօրէ յաւիտենական յառաջ խաղացմանը։ Քանզի բանն Աստուած՝ի Ս. Գիրս կ'անուանի Ոբդի Աստուծոյ, էմանոթելիւն, Լբան, Ջ-ձին Հօր, և Ձնեալ. այլ ո՛չ Բղխեալ. իսկ Հոգին՝ բնա՛ւ Ձնեալ կամ Ոբդի Հօր չըսուիր, այլ միայն Ելեալ կամ Բղխեալ, Հոսէ և Շառնչ Ադնոպոլքն։

Թէ ի՞նչ արդեօք զանազանութիւն կայ այս երկուցն Ծագման մէջ, Որդւոյ ծննդեան և Հոգւոյն բղխման մէջ, անգիտելի է մեզ, զի անհասանելի իսկ է. և հաւատոյ վարդապետութիւնը սահման կը դնէ ասոնց միայն տարբեր ծագումներ ըլլալնուն, այլ այն տարբերութեանց ի՛նչ ըլլալը որոշակի չկրնար սահմանել. քանզի և բացատրելի չէ, արարածական ծնունդէ և ելմանէ անհունապէս տարբեր և հեռու ըլլալով, որով և արարածոց անհասանելի անիմանալի դառնալով։ Այսպէս կը վարդապետէ Ս. Օգոստինոս ասոր վրայ. (ընդդէմ Մաքս. Գ. 14.) «Ահա այս է մեր պատասխանի, թէ պէտ իմանայցես և թէ ոչ. ի Հօրէ է Որդի, ի Հօրէ և Հոգին սուրբ. այլ նա ծնեալ, սա ելեալ. . . . իսկ թէ դի՛նչ խորհր ընդ ծնունդն և ընդ բղխումն կայցէ՝ ո՞ կարէ մեկնել՝ի խօսել զայնմ գերահրաշ բնութենէ, Ո՛չ ամենայն որ ելանէ՝ ծնանի, թէպէտ ամենայն որ ծնանի՝ ելանէ. . . . Զայսոսիկ գիտեւք, այլ սահմանել ընդ ծնունդդ և ընդ ելումն՝ անդի-

տանամք, անկարանամք, չեւք բաւական» : — Հասկընամք՝ կամ ո՛չ, այս առոյգ է որ Հոգւոյն բըղխումն ու Որդւոյն ծնունդը տարբեր յաւաչ խաղացումներ են. անանկ որ՝ թէ՛եւ երկուքին ալ միօրինակ (հոմանուանաբար) Թափառական և Ելլոգ կրնայ ըսուիլ, բայց Որդւոյն՝ Բղխոգ և Բղխեալ, և Հոգւոյն՝ Ընտանի և Ընկալելի կրնար ըսուիլ. անոր համար Որդին և Հոգին իրարու եղբայր չեն կրնար ըսուիլ, ո՛չ ալ Հայրը Ընդ կրնայ ըսուիլ Հոգւոյն, այլ Բղխոգ կամ Բղխոգ Ներգործական (1) :

Հոգւոյն Սրբոյ բղխանելը միայ Հայաստանեայց Եկեղեցւոյ գաւանութիւնն այս է:—Հոգին սուրբ բղխի

(1) Պատկան Աստուածաբանից անունց իմաստակութիւնն է այս, թէ Հոգին եթէ միայն Հօրէ բղխի ըսուի՝ Իշխոյ եղած կ'ըլլայ ընդ Որդւոյ : — Բայց այս սուտ է. վի Հայրը՝ Ընդ չէ կրնար ըսուիլ Հոգւոյն, Բղխոգ կ'ըսուի. Հոգին ալ Ընկալ չըսուիր, որ ուղտոյ կամ Իշխոյ անուն առնու : Բղխոգ ու Ընտանեօք՝ կամ թէ Նմանութեամբ քակլով՝ ըսուի Իշխոյ և Էութ Իւրեց մի և նոյն բան չեն. ըսուիը և Էութ Նմանօրինակ ծագումն՝ Հոմածին չեն կրնար ըլլալ. Նա՝ փչուած է, ասի՝ Ծնեալ : — Սակայն եթէ Հոգին Հօրէ և Որդւոյ ծագումն առած ըլլայ, այն ժամանակ Եբրայեցւոց երից անձանց անհաղորդական առանձնութիւնները երեք խառնուելով՝ մէկ պղպէ, երկու Հօր կամ Ներգործական բղխողի, երկու եղբօր (քան Պապականաց խօսելով) և մէկ Թոռին գաղափարները երեւան կու գան: Հօր անձը՝ Յայեցմամբ Որդւոյ Հայր ըսուիլ չէ, Յայեցմամբ Հոգւոյ բղխող՝ վիճակուած և պատ պիտի ըլլայ միշնորդութեամբ Որդւոյն Որդւոյ անձը՝ Յայեցմամբ Հօր Որդի ըսուիլ չէ՝ Յայեցմամբ Հոգւոյն Հայր՝ միանգամայն և եղբայր պիտի ըլլայ (քան Պապականն Աստուածաբանութեան). Հոգւոյ անձը՝ Յայեցմամբ Հօր և Որդւոյ բղխուն կրնար ըսուիլ՝ Նկատմամբ Հօր բըղխումն և Թոռն, և նկատմամբ Որդւոյ՝ որդի միանգամայն և եղբայր պիտի ըլլայ . . . Ցանկի՛ խորհրդալոյր և օտարածոյն պղպէ ասոնք գաղափարները Ա. Գրոց վարդապետութեան չգտած ոտիկեցուցածնիերուն գէմ, և քանի՛ գատապարտելի՝ Հոգւոյ Եկեղեցւոյ. բայց և այնպէս՝ Հօրէ և Որդւոյ բղխանն վարդապետութիւնէ Հերիաթագրէս կը ծագին: Ե. Գիրք առանձին լոյսերէ տակաւին չեն . . .

կամ ելանել՝ Ի Հօրէ, և առնու Որդւոյ. ու ելանել՝ Ի Հօրէ իբրեւ՝ Ի բղխող ականել, և առնու Որդւոյ՝ իբրեւ յընդունարան ազբերէ : կամ, Հայր բղխէ զՀոգին (Յհ. ժե. 26.) և տայ Որդւոյ, (Յ-ԼՀ. Գ. 34—35.) և Որդւոյ կամ Որդւոյ սիրուքը երեւի Հոգին : Եւ կամ, ինչպէս Ներսէս Շնորհալի կ'ըսէ. «Յոտնաւանիւք և զՀոգին սուրբ . . . յաւաչ եհեաղ յանկիզնականէն Հօրէ անսկզբնապար անձնաւորութիւն կատարեալ, անխնամալի և անճառ յհիցս գոլով. ըստ եւրիեան գործոյ — Ի Հօրէ ՄԻԱՑՆՈՑ. իսկ ըստ ուսնակութեան և Ընտրակութեան՝ հաւասարապէս Հօր և Որդւոյ » : (Ընդհ. եր. 75.) Ախանքն է՝ Հոգին սուրբ Եւթեանէ յաւաչագալոյ Ի Հօրէ գոյոյ. բայց որովհետեւ ինչպէս Հայր՝ նոյնպէս և Որդին ունի զՀոգին, (Քէպէս և Հայր չինքեանէ՝ և Որդին Ի Հօրէ.) ուրեմն և բաշխել գՆորին Նորին, կամ Ի ձեռն Նորա Ընորհաբաշխել : Վասն որոյ՝ թէ՛ և Ի Հօրէ միայնոյ է Հոգին, ասոր և պէտք էր ըսել Հօր գործ, բայց Որդին ևս Հոգւով Ընտրակութեան Հասնար՝ կ'ըսուի ևս Հոգին Հօր և Որդւոյ, այլ ո՛չ թէ Ի Հօրէ և Որդւոյ :

Գրիգոր Աստուածաբան ալ կ'ըսէ. «Ակն բիծ, և աղբիւր, և գետ պետաւ ածի . . . թէ երեւս աղբեաւ միտանի Հայր, և միտանի Որդի, և միտանի Հոգին սուրբ յաղուարապ ոչնչ ինչ իցէն» : (Ճառգան. Ի բանն ԻԸ Հօր:)

Յովհաննէս Դամասկացի. «Հոգի Հօր ասիկա Ի Հօրէ ելլեալ. վի ոչինչ չաթժուցին առանց Հոգւոյ. եւս և Որդւոյ Հոգի, ո՛չ ասիկա Ի նմանել (բղխեալ կամ յաւաչ եկեալ). այլ ասիկա ՆՈՎԱՒ Ի Հօրէ ելլեալ, վի ինչ պատճառ Հայրն (է) » : (ՃԱ. ԳԼԲ. ՃՈՂՈՓՈՍ ՀԱՑՈՑ. ԳԼ. ԺԲ:)

Ճան Բարսեղ. «Ճառնձիւնն է Հօր՝ առնձին և առ-

ակիզբն գոլն · իսկ Որդւոյ՝ ծնունդ և սկսեալ ՚ի Հօրէ անժամանակաբար · և Հոգւոյն Սրբոյ բղխումն ՚ի Հօրէ, և յՈրդւոյ երեսուն անհատաբար և անժամանակապէս» : (՚ի դէմ. Մ-բէ· ՚ի բ-ան. ԺԲ· 26։)

Անժամանօթ մեկնիչ ֆերրականին (Մ-վ-ե- ֆերրոզ կամ Սրեփաննո· տե՛ս ՚ի Բ-ց-տր· Շ-ր-կ· էջ· 378։) «Հոգին սուրբ քերեալ գիծ՝ յերկաքանչիւրոց եզակաբար ընդ պատճառաւ · քանզի բղխէ ՚ի Հօրէ իբրեւ յականէ, անհատաբար դադարէ յաղբեր, և յՈրդւոյ (ք յաղբերէն) ելանէ խոհականագոյն գետ» :

Շարականք· «Որ ՚ի Հարաշարժ (ք Հայրաշարժ) ՚ի յաղբերէն յառաջ բղխեալ անհատաբար ՚ի յՈրդւոյ տիրապէս Ս· Հոգին» : «ի Հայրաշարժ աղբերէն անհատահոդ վտակ, կենդանաբար Ս· Հոգի» : (կան· Հոբեք·)

Պապականաց և բողոքականաց Հոգւոյն Սրբոյ և յՈրդւոյ բղխման վարդապետութիւնը չատ եռքէն մէջ մտած է · եկեղեցւոյ սկիզբէն ամենեւին չկար ատիկայ, ո՛չ Ցիսուս Քրիստոս վարդապետեց, ո՛չ Առաքեալք և ո՛չ Առաքելական Հարք կամ հետեւողք նոցին · մինչեւ իսկ Կ· Պօլսոյ Տիեզերական Ս· ժողովը ընդդէմ Հոգեմարտից սահմանեց յաւելուլ ՚ի հանդանակն միայն «ոչ ՚ի Հօրէ ելննէ» յաւելուածը, և յՈրդւոյն պէս բան ամենեւին մտքէն չանցաւ : Առաջին անգամ վեցերորդ և եօթներորդ դարերուն սկսաւ երեւիլ ՚ի Սպանիա և ՚ի Գաղղիա այդ նոր վարդապետութիւնը · և կամաց կամաց Լատինացւոց եկեղեցեաց մէջ ալ մուտ գտաւ իբր խնդիր հաւատոյ յիններորդ դարու : Եւ երբ Մեծն Կարոլոս Գաղղիացւոց թագաւորը թոյլտուութիւն խնդրեց Լեւոն Գ· Հռովմայ քահանայապետէն հանդանակին վրայ «և յՈրդւոյ» յաւելուածն ընելու, Լեւոն մերժեց զայն՝ իբր արտաքոյ Ս· Գրոց վարդապետութեան՝ այլափոխութիւն · և որպէս զի այն

առաջարկութիւնը ա՛լ խնդիր հաւատոյ ըլլալէն գադրի, երկու արծաթի տախտակներու վրայ հանդանակը փորագրել տուաւ՝ մէկուն վրայ Յունարէն և միւսին Լատիներէն՝ առանց «և յՈրդւոյ» յաւելուածին, և զանոնք Ս· Պետրոսի գերեզմանին վրայ կախել տուաւ : Բայց և այնպէս պապականք երեքտասաներորդ դարուն այս «և յՈրդւոյ» յաւելուածը մուծին ՚ի հանգանակն · Բողոքականք ալ անոնցմէ փոխ առին այս այլափոխ ուսմունքը՝ որ տե՛ս Վ-յ-ֆ-ե- Ս· Գրոց :

Իսկ Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնը առ այս յայտնի էր : Ս· Գրոց մէջ լուսաւոր բանիւք չբացատրուած վարդապետութիւն չէր ընդունէր երբէք · մանաւանդ Աստուածային էութեան մասին · Հոգւոյն և յՈրդւոյ բղխումն ալ Ս· Գրոց մէջ չգտնուելուն համար, այս վարդապետութիւնը պապականաց մէջ արմատ բռնելէն և ՚ի Յունաց մերժուելէն ետքը, Հայոց Ազգին՝ Յունաց հետ (և ո՛չ Հռովմայեցւոց հետ) միաբանութեան խօսք ընել և «Հոգին յառաջ եկեալ . . . առ ՚ի Հօրէ միայնոյ» ըսելը՝ անտարակոյս՝ ջոջքնոյն պէտ ըսուած եղանակաւ ՚ի լոյս աշխարհ հանել էր իր դաւանութիւնը, թէ ընդունելի չէր իրեն պապականաց կարկատած այն նորահնար դաւանութեան ձեւը :

Ս· Գրոց մէջ յայտնապէս քարոզուած չէ Հոգւոյն և յՈրդւոյ բղխումը, միայն ՚ի Հօրէ ելննէն չատ յայտնի աւանդուած է : (Յ-վ-ն· ԺԵ· 26։) Ուրեմն պատճառ մը չունինք՝ Աստուածային իսկութեան ելմանց դաղտնեացը՝ որ ծածկեալ է ՚ի մէնջ՝ թափանցելու ժպրհիլ : Տրամաբանական ձեռնարկութիւնները չեն որ մեր դաւանութիւնը պիտի յօրինեն · Հոյս Հայաբարեան (նախաքրիստոսեան) այլանդակ մոլորութիւնք այդ փիլիսոփայութեան պտուղք են · «Կարելի չէ անանկ անտեղի բան մը հնարել՝ որ

իմաստասէրներէն մէկը առաջուընէ տրվեցուցած չըլլայ » կ'ըսէ Կիկերոն : Քրիստոնէական դաւանութեան ձեւը Ս. Գրոց յայտնեալ վարդապետութեամբ կը յօրինուի. «Ծածուկքն Տեառն Աստուծոյ մերում, և յայտնիքն մեզ և որդւոց մերոց յաւիտեան» : (Բ. Օրին. ԻԹ. 29:) Ս. Կիւրեղ Երուսաղէմայ Հայրապետան ալ ասանկ կ'ըսէ. «Աստցի այսուհետեւ և ի մէնջ վասն Հոգւոյն սրբոյ, որպէս և էրեւելէ ըսի ձեզ. ապա թէ էրեւելիք չէք՝ լսել և դնել ձեր էլէեցուած : Ինչն Հոգին սուրբ խօսեցաւ ի Գիրս Սուրբս, ինչն վասն իւր ասաց՝ ո՛րչափ և ո՛րպէս կամեցաւ, ո՛չ եթէ որչափ և կամեցաւ, այլ ո՛րչափ մեք ընդունելոյ մարթացաք. Արդ՝ ասացի՛ն, որչափ ասացին. մի դու ուն ասաց, լսել և դնել չէք խոլեր» : Եւ դարձեալ. «Շատ է մեզ այդչափ գիտել, այլ զարտ և զօրութիւն մի՛ քննէր. մի երբէ էր էրեւելիք, ասէտ. չէ՛ էրեւելիք, ձ՛ էլէեցուած ասել : Շատ է գիտել մեզ առ ի սիրելութենէ մերմէ գՀայր և գՄարդի և գՀոգին սուրբ, թէ մի է» : (Ի Կոլոն ընծայութեան. ԳԼ. ԺԶ. եր. 337. 336 :)

Բողոքականք ասոր ըսելիք չունին. իրենք Հայրապետաց վկայութիւն աւանդութիւն չեն ընդունիր, միայն Ս. Գրոց վկայութիւնը կ'ուզեն. Ս. Գրոց մէջ ալ Որդւոյ բվնաւոր բան ամենեւին չկայ. ընդ աղօտ պրուցուած տեղ մը կայ. առումն ալ ի Հայրաշնչիկ պէքէրէ արտահայ եղեւոր է, և ոչ այլ ինչ. ի Հօրէ ելանէ, Որդին դադարէ, և Որդւոյ կամ Որդով արտաքս երեւի կամ առաքի : Ննանութեամբ խօսելով՝ ընդհակառակն է Հայր. աղբիւր ասող՝ Որդին. որով դեռ յաւէտ խաղացեալ՝ Հոգին : — Բնա՛ւ ամենեւին ասկից աւելի խնամտուղ բան մը չեմք գտնար ի Ս. Գիրս. ուրեմն անթարգմանելի է մեզ բողոքականաց արտաքոյ Ս. Գրոց և Որդւոյ բվնաւոր դաւանելնին. և միանգամայն յայտարարելնին՝ թէ իրենց դաւանութեան հաւատոյ մասանց ամեն մէկը՝ Ս. Գրոց վկայութենէ հաստատութիւն ունի, և ոչ աւանդութենէ :

Ահա՛ ա՛սասիկ Ս. Հոգւոյ բվնաւոր համար Գրքին յայտնի խօսքերը. «Յորժամ եկեսցէ Մխիթարիչն, զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ, զՀոգին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ. . . : Յորժամ եկեսցէ Նա Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեան. . . : Նա զիս փառաւորեսցէ, զի ի չէմէ առնու առնու՝ և պատմէսցէ ձեզ: Զամենայն ինչ զոր առնէ Հայր՝ իմէ, վասն այսորիկ ասացի՛ առնու ի չէմ, ըէ չէմէ առնէ առնու և պատմէ ձեզ: . . . Զի ո՛չ եթէ չափով տայ Աստուած զՀոգին (Որդւոյ:) Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ՝ ետ ի ձեռս նորա» : (Ցովհ. ԺԶ. 26: ԺԴ. 13—15: Գ. 34—35:) Ցիշուած է նաեւ քանի մը տեղ Հոգի Աստուծոյ, Հոգի Հօր, Հոգի Որդւոյ, Հոգի Ցիսուսի, Հոգի Քրիստոսի (Մատթ. Գ. 16: Գործ. Դ. 6: Ա. Պետ. Ա. 11: Գործ. ԺԴ. 7:)

Ինչպէս յայտնի կ'երեւնայ, այս ամենուն մէջ միայն «Որ ի Հօրէ ելանէ» խօսքն է՝ յորում պատճառական բանը կ'իմանանք : Աստուծոյին մէջ չկայ աստիկայ. վասն զի աստր մէջ ալ ի Հօրէ կ'ըսէ. և ո՛չ չինեն. «Զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ». և արդէն առաքումն ալ եղեալ բվնաւոր անձի կը պատճառէ : Եւ դարձեալ առաքել, գալ, չրջել, վերադառնալ, լքանել ևն երբ որ Աստուածութեան վրայ կը պրուցուին, Աստուածային ներգործութիւններ կ'իմացուին, ո՛չ ըստ նկարագրին տեղափոխութիւն և ոչ պլատանօթէն բվնաւոր կ'իմացուին: Քանզի Որդւոյ համար ալ պրուցուած է թէ Հոգիէն խըրկուեցաւ. այսպէս կ'ըսէ Որդին ինքն. «Մատերո՛ւք առ իս՝ և լուարուք զայս. ո՛չ ի սկզբանէ ծածուկ ինչ խօսեցայ, և ո՛չ ի տեղւոջ խաւարին երկրի.

յորժամ լինէրն իսկ՝ ես անդ էի : Եւ արդ՝ Տէր Տէր ---ից ձե- , և Հոգէ նը- : Այսպէս ասէ Տէրն՝ որ փրկեաց զքեզ Սուրբն Իսրայէլի» : (Ես. խԷ. 16 17:) —Ս. Օգոստինոս կ'ըսէ . «Հաւատալ արժան է՝ զի Որդի ո՛չ միայն առ Հօրէ՝ այլ և Հոգւոյն սրբոյ առաքեցաւ» : (Գր. Բ. յԱ Եբրայ. Գլ. Ե.) «Եարաւանք . «Որ զառաքումն առ Հօրէ և Հոգւոյդ բանին յայտարէ՝ մարգարէիւն ծանուցեր . զոր Հ պիտոյ մարգացելոյն բարբառիւր առ մարգկութիւնս Տէր Տէր առաքեաց զիս և Հոգի նորա» . (կաս. Հռիփս . Գ . ---ր.) : Ս. Գրիգոր Լուսաւորիչ մեկնելով իմն կ'ըսէ . «Եկն կատարեաց ինքն Հոգին Սուրբ , որ առաքեցաւ Հ Հօրէ և Որդւոյ . զի որպէս Որդին առաքեցաւ և եկն Հարրն և Հոգւոյն , այնպէս և Հոգին առաքեցաւ Հարրն և Որդւոյն , զի երեքութեամբ միանական միաբանն ջրոքին» : (Հաէ-ր . թե՛ և Հ բացատր. Շարկ. եր. 394 :) Ըսած այսմ և Շնորհալին կ'ուսուցանէ .

«Եւ զաւետիսըն Հայրական ,
«Որ է Հոգին սուրբ մանրական ,
«Աչեր ինքեամբ առաքական ,
«Որպէս մի Տէր և հաւասար» : (Ճառս Որէ , Հ բան հատոր , Խոսովանիմ . Տող 1297—1300 :)

Ճշմարիտ անոր աստուածային մեկնութիւնն ալ ինքն փրկիչն տուաւ . Հօր ամէն անէծքէն իր ընտրեալ հօտը Յիսուս ըսէ «յիմիէ անտի առնու» կ'ըսէ . քանզի Հայր՝ առանց Հարուն՝ լրութեամբ կու տայ Որդւոյ զՀոգին : — Դարձեալ «յիմիէ անտի առնուցու» , «ես առաքեցից» խօսքերուն մէջ «առնուցու» և «առաքեցից» բայերուն ապառնի ժամանակաւ եղանակաւորութիւնը ամենէն մեծ ապացոյցն է , որ առումն ու առաքումը անոր անձնաւորական ելոյթութեան մասին ամենեւին խնամատ չտար . Եթէն պիտի առնէ , Եթէն պիտի Էլէմ կ'ըսէ , Էլիլը բղխել , առնուլը

բղխիլ նշանակէր կամ անանկ խնամատ մը ակնարկէր նէ , ըսել կ'ելլար թէ Հոգին սուրբ՝ Յիսուսի այս խօսքերս ըսած ատեն դեռ բղխուած՝ անձնաւորած չէր . Եթէն՝ Էլէմն՝ Հ ժամանակի պիտի բղխուէր անձնաւորէր . ուրեմն Հ սկզբանէ Հոգի Աստուծոյ ո՛չ էրէր Հ վերայ ջուրց . ուրեմն Հոգին սուրբ արարիչ չէր . ուրեմն Հոգին սուրբ կրսեր էր քան զՀայր և զՈրդին . ուրեմն էր երբեմն յորժամ ո՛չ էր Հոգին , զոր ըսելը կը նզովեցք Նիկիական հանգանակաւ . «Իսկ որք ասեն էր երբեմն յորժամ ո՛չ էր ... Ս. Հոգին ... զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և Առաքելական Սուրբ Եկեղեցի» :

Իսկ թէ որ Հոգի Աստուծոյ , Հոգի Հօր , Հոգի Որդւոյ , Հոգի Յիսուսի , Հոգի Քրիստոսի ըսուած է Հ Ս. Գիրս , բնաւ ամենեւին պատճառ մը չունինք համարելու թէ Աստուծոյ , Հօր , Որդւոյ , Յիսուսի և Քրիստոսի անուններէն իւրաքանչիւրը պատճառ՝ իւրաքանչիւրը սկիզբ՝ իւրաքանչիւրը բղխող յատկացուցիչ եղած են Հոգւոյն , ընդհակառակն՝ չշահելի պատճառ ունինք հաւատալու թէ այդ անուններէն իւրաքանչիւրը յատկացուցիչ են Հոգւոյն : Անտարակուսելի է թէ Հօրին Հօր կ'ըսուի՝ վասն զի բղխէ ինքն , և ունի . բայց Հոգին Աստուծոյ ըսուած ատեն , երկրորդութեան երեք անձինքն ալ կ'իմացուին . Որդւոյ ըսուած ատեն ալ միայն երկրորդ անձը կ'իմացուի . որ թէև ունի զՀոգին՝ բայց Հ Հօրէ , ինչպէս վերն ըսինք : Թէ որ այս յատկացուցիչները անպատճառ իրրեւ բղխող նշանակութեամբ առնուլ պէտք ըլլար , հապա ինչ պիտի ըսէինք Յիսուս և Քրիստոս անուններուն համար : — Յիսուս՝ Որդւոյ Աստուծոյ մարդկութեան անունն է . Քրիստոս ալ՝ անոր իրրեւ Աստուած և մարդ միջնորդական պաշտօնին մակդիրն է . ուրեմն Յիսուս՝ Էրէթ մարդ , կամ Քրիստոս՝ Էրէթ Աստուած և մարդ բղխող է Հոգւոյն , և բըղ-

խեալ Հոգին ալ հարկաւորապէս ըսէր, կամ Աւետարանն ալ ըսէր է էութեամբ զոյութեամբ. որ ըսել կ'ըլլայ թէ Հոգին նոյնագոյ նոյնաբուն հանճարեղ եւ չէ ընդ Հօր և ընդ Որդւոյ. այլ՝ այլ իմն, տարբեր, օտար է Աստուածային բնութենէ, և արարած. ուստի և այլայլելի՝ փոխոխելի բնութիւն ունի. և ահա այս ալ կը նեղուինք ըստ վերնոյն՝ ի հանգանակին:

Լաւբրոնացին Ս. Ներսէս կ'ըսէ. «Զհոգին Քրիստոսի ասեմք՝ ո՛չ թէ՝ ի նմանէ յառաջ ելիցէն առեալ և ընկալեալ, որ է հաւասար նմին և համարիա բըղխուսն, այլ՝ ի Հօրէ: . . . Հոգի Քրիստոսի ասեմ, իբր անօրինարար առեալ՝ ի Հօրէ և ո՛չ երթե՝ ի նմանէ ընկալեալ»: (Ի մէկն. պատասխ, ի բանն Հոգի Քրիստոսի:) Դարձեալ. «Որպէս Որդին Հօր միածին, նոյն և Հոգին նմին ասէին աստիճանն»: (Անդ. ի բանն Հօր հղոր Հոգի:)

Սարգիս վարդապետ Շնորհալի. «Հոգին Քրիստոսի ասել այն է՝ զոր Պօղոս միտս Քրիստոսի ասէ: Եւ դարձեալ թէ, որ զՀոգի Քրիստոսի ո՛չ ունի, սա չէ նորա: Զայս ասելով ոգա (յ՝ Պետրոսի և Պօղոսի) և խոստովանելով, զմիակամութիւնն և զնոյն էութիւն և զբնութիւն և զԱստուածութիւնն նշանակեն: Զի զՀոգին Քրիստոսի ասել՝ ո՛չ ի նմանէ ել էր ի պարծանս, զի պատճառ Հայր միայն է որպէս Որդւոյ՝ նմանապէս և Հոգւոյ. միոյն ծննդեամբ՝ և միւսոյն ելոզութեամբ ըստ անսուտ Տեառն ճայնին. Ես ասէ Հոգին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ: Իսկ զիւրն առ Հոգին զհամակամութիւնն. և զհաւասարութիւնն երեւեցուցանէ խոստովանի ևս»: (Ի մէկն. կաթ. ընդ. պեր. ճռ. բ. ի բանն Ա. պեր. Ա. 11. եր. 204. տպ. կ. Պոլսոյ.) Դարձեալ. «Պատճառ Հայր միայն է որպէս Որդւոյ՝ նմանապէս և Հոգւոյ»: (Անդ. եր. 56—57:)

Շնորհալւոյն դաւանութիւնը տեսանք ի վերն,

թէ բղխումն Հոգւոյն «ըստ էութեանն պատճառի առ ի Հօրէ միայնոյ» է. այլուր՝ կ'ըսէ եւս. «Հայր է պատճառ անպատճառիցն, (յ՝ իբարու պատճառ չեղողներու,) Որդւոյ ծննդեամբ, Հոգւոյն բղխմամբ»: (Ի բան հաւատոյ, ուր տե՛ս Ս. Եղիազարեան. Տող. 45—46:)

Դարձեալ՝ «Թոն թագուհանէ մեզ սիրտարար՝
«ԶՀոգւոյն բղխումն անբընաբար.
«Թէ ի Հօրէ է յոգեբոյր,
«Առնու յՈրդւոյ անճառաբար»:
(Ի բան հաւատոյ վասն Անեղին և եղելոց բարեառնեբար, Տող 53—36:)

Ի Ս. Գիրս կայ նաեւ Քրիստոսի միշտմբ յԱռաքեալն՝ «Առէ՛ք Հոգի սուրբ» ըսելը: (Յովհ. ի. 22:) Բայց անտարակոյս փչելը բղխել չէ. փչելը նշան է առնողականի, այլ ո՛չ պատճառողութեան: Ինչպէս մենք ալ արտաշնչութեամբ կը փչեմք նէ՝ նշան է որ չունչ առնիմ, և ո՛չ թէ չունչ կը գոյացնեմ: Յարդեանց իրաց ալ ապացուցեալ է այս արդէն. Քրիստոս փչելով «Առէ՛ք Հոգի սուրբ» ըսելուն՝ զՀոգին սուրբ չէր որ առաւ Առաքելոց, այլ նոցին ի պաշտօն Առաքելութեան կոչման սրբաբար շնորհն էր սուրբ Հոգւոյն, որով կը հաստատէր զանոնք Առաքելական պաշտաման մէջ. բայց ի նմին զօրանալու համարձակելու համար՝ Հոգւոյն սրբոյ եկաւորութեան պէտք ունէին Առաքեալք: — Անտարակոյս՝ Հռովմէական վարդապետք ալ՝ երբ մկրտութեան ջուրին վրայ և երախային երեսը կը փչեն, զՀոգին Բղխեցնէն չեն ցուցուներ. զի փչելը՝ բղխել չէ:

Թէ որ Քրիստոս փչելով զսուրբ Հոգին տուաւ Առաքելոց, հապա ինչո՞ւ «Պատուէր տայր նոցա յԵրուսաղէմ մի՛ մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր՝ զոր լուարուքն յինէն». (Գործ. Ա. 4.) ի՞նչ խոստում էր որ ըրաւ Առաքելոց՝ յասելն, թէ՝

«Ահա՛ ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ ՚ի ձեզ. և դուք նստարուք ՚ի քաղաքիս Երուսաղէմ, մինչեւ զգենուցուք զօրութիւն ՚ի բարձանց» : (Ղ--ի. ԻԴ. 49:) Եւ ի՞նչ էր Պենտեկոստէի առնը կատարելու համար վերնատան մէջ խմբուած Առաքելոց և հարիւր քսանի չափ բազմութեան վրայ իջածը և առնոնց ՚ի հրեղէն լեզուս ընդունածը : (Գ-ծ. Բ. 1—4:) — «Զի դեռ եւս գալոց էր Հոգին՝ կ՚ըսէ Ոսկեբերան, զիա՞րդ վաղապոյն երբեմն ասէր ցնոսա թէ Առէ՛ք Հոգի սուրբ : Այեղչապէս. զի նախ մասամբ ինչ ընդելս գնոսա կաղմեսցէ Հոգւոյն, և բաւական առ ՚ի ընդունել: Զի թէ հրեչտակ երեւեալ Դանիէլի՝ յերկիւղէն հանդերձեալ էր լուծանիլ իսկոյն, յոյժ մանաւանդ սոքա յանուանելոյն Աստուծոյ կրեն : Արդ կամ զայս պարտ է ասել, կամ թէ նախ պիտելոցն իբրեւ զհեղեալ ասաց, որպէս զայն թէ Եառ ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս : Այլ ընդէ՞ր ոչ մերձ գոլոյն առ նոսա դեռ եւս Քրիստոսի եկեալ մինչեր Հոգին նախ քան զերթալ նորա. Այեղչապէս. զի նախ պարտ էր յերկինս ելանել մերոյ բնութեանն և հաշտութեանցն աւարտել, և ապա գալ Հոգւոյն և հաստատել զհաշտութիւնն. և այլ ազգ. զի մի՛ ցուրտ կամ աւելորդ թուիցի նոցա գալուստ Հոգւոյն, այլ աստուածային և շահաւէտ : Զի թէ Քրիստոսի մերձ գոլով եկեալ մինչեր Հոգին, և Սա գնացեալ և Նա մնացեալ, ո՛չ արդեօք թուեցեալ մինչէր գալն նորա իրք միսիթարութեան աշակերտացն : . . . Նախ քան զչարչարանն խոստացաւ զՍ. Հոգին, և այժմ զարձեալ կրկնէ՝ զեռ նոս աստուց ոչբեանց . . . : » (ի ծին. գոլթ. ձռ. Ա. ՚ի բան Ա. 4. ևէ :) — Մեկնիչն Ղուկայ Իգնատիոս եւս կ՚ըսէ. « (Քրիստոս ասէ.) Ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ առ ձեզ : Փոքր ինչ առժամայն եհեղ ՚ի

նոսա զընդունելս Հոգւոյն ՚ի տէրէն յերեսս նոցա» : (ի ծին. Ղ--ի. ՚ի բան. ԻԴ. 48:) Ս. Օգոստինոս խնդրոյն լաւ եւս խորը մտնելով կ՚ըսէ. «Ո՛չ այնչափ քաջադէպ գնուաւ ածելով ունանց ՚ի Հարց կարծեցիք, թէ յայն ընթերցուած գրոյն «մինչեւ Առաքեալն յերեսս նորա «(Ագաւոյ) չունէր կենդանի, և եղեւ մարդն յոգի «կենդանի» . (Ծննդ. Բ. 7.) ո՛չ եթէ յայնժամ առաւ հոգի առաջին մարդոյն, այլ որ էրն արդէն ՚ի նմա՝ կենդանացաւ Հոգւով սրբով : Յայս յօժարեցան նոքա՝ այնու զի տէր Քիստոս յետ յարութեանն ՚ի մեռելոց՝ մինչեւ ասելով յաշակերտսն, «Առէ՛ք «Հոգի սուրբ» . որով համարին նոյնպիսի ինչ գորս ծեցեալ Առաքեալն՝ որպիսի առ նախնիսն եղեւ . որպէս այն թէ ըստ նմին բանի ասէր և Աւետարանիչն, եւ եղեն աշակերտքն յոգի կենդանի : . . . (Այլ ո՛չ այնպէս :) Այնու զոր տէրն արար՝ փչելովք և ասելով «Առէ՛ք Հոգի սուրբ», յայտ արար թէ Հոգին սուրբ ո՛չ Հօր միայն, այլ և միածնին Հոգի է . նոյն ինքն է Հոգի Հօր և Որդւոյ, որով է երրորդութիւն Հայր և Որդի և Հոգի սուրբ . ո՛չ առարած, այլ արարիչ : Քանզի ջուրն այն էլաւն ՚ի նոսին քերանոյ յատաքափեալ՝ ո՛չ երեք ջրաստինն եւ քնաստինն էր Հոգին պէտ, այլ նշանակ իմն առ ՚ի միտ առնուլ՝ ըստ որում ասացիմք, թէ Հոգին սուրբ հասարակ է Հօր և Որդւոյ : . . . Բայց առնն . փչումն կամ չունչ Աստուծոյ իմանի՝ եղանիլ ՚ի նորա բերանոյն . . . (ըստ այնմ) «Ես ՚ի բերանոյ «բարձրելոյն եղի» : (Սիրաք. ԻԴ. 5:) Սակայն ո՛չ առաջ գինքն իմաստութիւնն ՚ի բերանոյն Աստուծոյ փչեալ այլ՝ եղեալ. և զորօրինակ մէք կարող եմք՝ ո՛չ ՚ի մերոյին բնութենէ որով մարդս եմք, այլ ՚ի շրջանաւիւրն օդոյ աստի՝ տուրբեւառիկ լինելով չունչ տալ ՚ի փչելն, նոյնպէս հնարաւոր էր Աստուծոյ առնն նաղօրի՝ ո՛չ յիւրական բնութենէ, և ո՛չ յքանթա-

բակաց ինչ արարածոց, այլ յանգոյից առնել չունչ (՝ի վիշէն յերեսս Աղաւնոյ)։ . . . Բայց զի զգաք՝ զոր ՝ի գրոց խօսել կամին, և ո՛չ ուշ ունին առացուածոց Գրոց, գիտասցեն թէ ՝ի բերանոյն Աստուածոյ ելանել ո՛չ զայնևանէ և եթ ասի՝ որ նորա բնութենակից իցէ, թո՛ղ լուիցեն կամ ընթերցցին գրեալն ՝ի դիմաց Աստուածոյ. «Ջի գաղջ ես, և «ո՛չ ջերմ, և ո՛չ ցուրտ, հանդերձեալ ես փսխիլ «՝ի բերանոյ իմմէ»։ (Յայտ. Գ. 16։) . . . » (Օխսոփ. ԻՀ. էջ. Աստուծ. Գր. ԺԳ. Գլ. ԻԴ։)

Արդ՝ առնիւտելով խօսքերնիս կ՚ըսեմք. Ս. Գիրքը Ս. Հոգւոյն համար ՝ի Հօրէ և Որդւոյ ելանել բղխել սորվեցուցած չէ՛ մեզի. մեզ ալ արժան չէ՛՝՝ մանաւանդ Աստուծոյ էութեան վրայ՝ որ խորհրդոց խորհուրդն է, Աստուծոյ մեզի յայտնել չուզած գաղտնեաց թափանցել ճգնիլ. Ս. Գիրքը մեկին բանիւք կ՚ուսուցանէ թէ Հոգին Հօրմէ կ՚ելլայ, և Որդիէն կ՚առնու. իրաւունք չունիմք Աստուծոյ այս խօսքը փոխելու, և մեր ժպիրհ խորհրդովք դաւանութեան նոր ձեւ մը յօրինելու այն բանին վրայ, որ երբէք մեր քննութեան չկրնար ենթարկիլ. Աստուածային էութեան վրայ Աստուած ո՛րչափ բան որ յայտնել ուզած է Ս. Գրովք, անկից աւելի բան չեմք կրնար գիտնալ, և պէտք չէ՛ գիտնալ ուզեմք, քանզի և առ այն չեմք կրնար ժառանգել։ Ս. Ալբերդ կը վերջացընէ այս խնդիրը. «Ջի՞ քննես զայն, զոր Հոգին սուրբ ինչ ո՛չ գրեաց ՝ի գիրս սուրբս։ Իսկ արդ՝ եթէ գրեալն չգիտես, զիա՞րդ գչգրեալն քննես։ Բազում քննութիւնք են ՝ի գիրս Աստուածաշունչս. արդ գրելոցն չհասանելիք, ընդէ՞ր բնաւ գչգրեալն քննեմք։ . . . Արդ՝ ա՛ղէկ, եւ ա՛կ ասա՛ դու նախ ցիս ո՛վ ժպիրհ և չարայօժար, զի՞նչ ՝ի վեր է աթոռ քան զպետութիւնս. եւ ա՛կ ասա՛ դու ցիս, զի՞նչ է տէրութիւն, զի՞նչ է պետու-

թիւն, զի՞նչ է իշխանութիւն, զի՞նչ է զօրութիւն, զի՞նչ են հրեշտակք. և ապա գԱրարիչն այսր ամենայնի քննել մարթասցես. զի ամենայն ինչ նուաւեղէս»։ (Ի կոչմն ընծայ. Գլ. ԺԱ։)

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Էջք Հոգւոյն սրբոյ ՝ի Յորդանան և ՝ի վերնատունն

«Ու էջն ՝է Յորդանան փոքրկաց զԱստուածն
և քնարկեցաւ ՝է առաքեան»

Հանգանակը կը յաւելու այս խօսքն ալ իբր ապացոյց Հոգւոյն անձնաւորութեան։

Որդւոյն Աստուծոյ փրկագործութեան միջնորդական մեծ գործին մէջ Հոգւոյն սրբոյ պաշտօնը և գործակցութիւնն էր Օծել Անոր Առաքելութիւնը, քարոզել ծանուցանել զնա Առաքեալ յերկինից, և բնակելով ՝ի սուրբն՝ յարատեւել զնոյն փրկութիւն յեկեղեցւոջ, յիշեցուցանելով և ուսուցանելով զվարդապետութիւնս փրկչին, և ՝ի նոսին զօրացուցանելով զնոսին։ Այս է որ կը դաւանիմք ՝ի Հանգանակն հաւատոյ։

Յիսուս Քրիստոս երբ կը պատրաստուէր իւր Առաքելական Աստուածային մեծ պաշտօնը ձեռք առնուլ, և եկաւ մկրտուեցաւ ՝ի Յորդանան ՝ի Յովհաննէ, իջաւ Ս. Հոգին աղաւնակերպ երեւմամբ իւր էակցին վրայ, յօծանել զնա Քահանայապետութեան, ինչպէս որ կանխաձայնեալն էր ՝ի ձեռն Եսայեայ. «Հոգի Տեառն ՝ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս ետ», (ԿԱ. 1.) և վկայել Առաքելութեան նորա ՝ի Հօրէ, որ ձայնիւ բարբառոյ ծանոյց թէ «Դա է Որդի իմ սիրելի»։ (Ղուկ.

Գ· 21—22։) Այս Հայրական բարբառը յետոյ Առաքելոց ալ կրկնուեցաւ 'ի վկայութիւն' 'ի թաբօրացւոց լերինն· ըստ որոյ կ'ըսէ Պետրոս· «Ո՛չ եթէ պահուճեալ ինչ առասպելեաց գհնոտերթալով ցուցաք ձեզ գՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գզօրութիւն և գդալուստն· այլ մեզէն եղեալ ականատեսք նորա մեծութեանն։ Քանզի առեալ յԱստուծոյ և 'ի Հօրէ պիտուս և զպատիւ, յեկեալ յայնպիսի բարբառոյ՝ մեծվայելչութեան փառաց անտի, եթէ դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ։ Եւ զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից՝ որ ընդ նմա իսկ էաք 'ի սուրբ լերինն»։ (Բ· Պետ· Ա· 16—18։)

Ս· Հոգւոյն մարմնաւոր տեսլեամբ Յիսուսի վրայ իջնելը՝ որ Յովհաննու տեսանելի էր, (Մատթ· Գ· 16·) նշան մըն էր առ ինքն տուեալ 'ի Ս· Հոգւոյն, որով պիտի ճանչնար գՄեսիհ Առաքեալն· «Վկայեաց Յովհաննէս' և ասէ· Թէ տեսանէի զՀոգին՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի յերկնից, և հանգչէր 'ի վերայ նորա։ Եւ ես ոչ գիտէի զնա· այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով, նա ասաց ցիս· Յորմէ վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ և հանգչիցի 'ի վերայ նորա, նա է՝ որ մկրտէ Հոգւովն սրբով։ Եւ ես՝ տեսի, և վկայեցի՝ եթէ սա է Որդին Աստուծոյ»։ (Յովհ· Ա· 32—34։)

Ովանք՝ Հանգանակին՝ այս խնամտները չօշափած ըլլալը միտք չընելով, և տեսնելով որ Ս· Հոգին 'ի Յորդանան ձայնիւ չբարոզեց գԱռաքեալն, թէ «Սա է Քրիստոս», կարծեցին թէ Հանգանակին Առաքեալ անունը որ զՅիսուս կը նշանակէ, յոգնակեցան այն պիտի ըլլար «Քարոզեաց գԱռաքեալն»· և մեկնեցին թէ՝ Հոգին ուսոյց գԱռաքեալն (զաշակերտն Յիսուսի)՝ բնակելով 'ի նոսին։— Այլ այս օտար է ամենեւին, և Հանգանակին դիտմանն ալ

հակառակ· քանզի Հանգանակը չըսեր «վերնատունն իջաւ», այլ «Յորդանան իջաւ ու քարոզեց»· վերնատան իջումն ալ կ'ակնարկէ՝ «բնակեցաւ 'ի սուրբսն» ըսելով եռքէն։

Ս· Հոգին՝ Աստուածային Առաքեալը աշխարհի ճանչցընելէն յետոյ, երբ Սա իւր փրկագործ տնօրէնութիւնները աւարտեց, մարդկային բնութիւնը երկինք ելաւ, հաշտութիւնը կնքուեցաւ· «Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր», յետոյ ապա Ս· Հոգին վերստին իջաւ 'ի վերնատունն՝ իւր էակցին գործը լրացընելու համար, 'ի տօնի Պենտեկոստէին, յորում երկրին երախայրիքը կը մատուցուէր 'ի տաճարն, և բնակեցաւ ընդ միշտ 'ի սուրբսն· (Գործ· Բ· 1—21·) Նորոգեց զանոնք, սրբեց, ուսոյց, զօրացոյց և խրատեց 'ի վկայութիւն յարութեան փառակից իւրոյ, և այնուհետեւ իւր բնակութիւնը հաստատեց մշտընջենաւորեց 'ի սուրբսն· (Ա· Կորնթ· Գ· 16։ Զ· 19։ Բ· Կորնթ· Զ· 16 եւ·) «Որ է առհաւատչեայ ժառանգութեան մերոյ 'ի փրկութիւն նուաճութեան, 'ի գովեստ փառաց նորա»։ (Եփես· Ա· 14·) «Որ և կընքեաց զմեզ և ետ զառհաւատչեայ Հոգւոյն 'ի սիրտս մեր»։ (Բ· Կորնթ· Ա· 22։ ե· 5։) — Ապա սուրբ և նուիրական պարտք է Քրիստոնէին՝ միշտ սուրբ և մաքուր պահել իւր սիրտը յամենայն չար խորհրդոց և յանկարգ ցանկութեանց՝ 'ի բնակութիւն տաճար և առագաստ պահելու զայն Ս· Հոգւոյն· և Հանալ չտրտմեցընել և չմխիթարել զնա, որ միայն բնակէ 'ի սուրբսն։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

« Հաւատամ և ՚ի Սուրբ Հոգին, յորում և ՚ի կոպրեալն,
որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս և յԱւետարանս »

ՅԱՑՏՆՈՒԹԻԻՆ

Աստուծոյ հարկաւոր գոյութիւնը բնական եղանակաւ եւս ճանչնալէն յետոյ՝ կու գամք անոր գործոցը և կանացը և նպատակին, զորս անկարելի է մեզ գիտնալ բնականապէս : — Անկարելի կ՚ըսեմք բնականապէս գիտնալ նէ, չէ թէ Աստուած գործք, կամք և նպատակ ունեցե՞ր է մի՝ կամ ոչ՝ այլկայ չեմք կրնար գիտնալ ըսել կ՚ուզեմք, այլ թէ անոնց՝ ինչ, ինպէս, և ինչու՞ներուն համար կ՚ըսեմք որ անկարելի է բնական եղանակաւ գիտնալ : — Վասն զի մեր և բոլոր արարածոց անտարակուսելի գոյութենէն բնականօրէն կը հետեւցընեմք թէ Արարչին ձեռքի գործքն ենք, այլկայ բացարձակ աստուածութեամբ գիտեմք · բայց Արարչին արարչագործ բանիւը և անոր ամենազօր ձեռքին մէջ ասոնք ի՞նչպէս գոյացան, այլկայ կ՚անկարանամք գիտնալ : Նոյնպէս մեր բանական և ազատ արարածները ըլլալնուս վրայ տարակոյս մը չունենալով՝ բնականաբար կը հետեւցընեմք թէ՝ ինչպէս որ առընչակցութիւն մը ունիմք մեր Արարչին հետ՝ նոյնպէս և ազատ համաղորդակցութեան ուխտի՝ պայմանի մը մէջ ըլլալու ենք Անոր հետ, այս ալ աստուածպէս գիտեմք · բայց թէ ի՞նչ է այն ուխտը կամ պայմանը, ինքնին չեմք կրնար գիտնալ : Նմանապէս՝ բանական հոգեւոր ուսաի և անմահ հոգւով օժտեալ արարածները ըլ-

լալ նուս վրայ կասկած մը չունենալով, հարկաւ նպատակի մը համար ստեղծուած ըլլալնիս գիտեմք, բայց թէ ինչ է այն նպատակը և ինչ վախճանի համար այսպէս ապատ բանական և անմահ ոգւով արարչակերտեալ ենք, կարելի չէ որ մեզմէն գիտնանք։

Անիրաւութիւն կ'ըլլար Աստուծոյ կողմէն եթէ մարդս ստեղծելէն յետոյ անոր հետ ուխտի չմըտնար, իւր կամքը անոր չյայտնէր։ — Ըրաւ ասիկայ Աստուած, անոր յայտնուելով · (ինչպէս Առաջին Մասին մէջ ըսինք ·) բայց մարդոյս կողմէն այն ուխտին դաշինքին դէմ անիրաւութիւն ըլլալով, մարդս չկենալով իրեն տրուած պատուէրին պայմանին մէջ, խզեցաւ ուխտը, ինկաւ մարդն իւր անմեղութենէն, ընդ նմին և հոգին մեղաց խաւարով պատած՝ ալ կարող չէր ըլլար յաւակ ունութիւն ունենալ իւր Աստուծոյն կամացը, որոյ կատարեմքը միայն կարող պիտի ըլլար իւր վախճանին հասնիլ։ Բնական լոյսն որ 'ի նմա՝ առ այնքան չէր · բնական լոյսը Աստուծոյ հարկաւոր գոյութեան ծանօթութիւնը միայն կը պահէր իւր մէջ · Անոր կամքին գիտութեանը չէր կրնար օգտել · ո՛չ ալ այն խզեալ ուխտը նորոգելու, և ո՛չ նաեւ անկեալ բնութիւնը վերականգնելու՝ բարոյականը վերաշինելու հնարը իմանալ։ — Վկայ բոլոր այն ազգերը՝ որոնք յարաբերութենէ մարդոյն՝ եկան դացին · կան եւս որք կ'ապրին, որոց հետ նաեւ նոր ազգեր ալ, յորս մուտ չգտաւ յայտնութեան լոյսը, անոնց մէջ կրօնքն ու բարոյականը յետին ապականութեան մէջ մնացին։ Իմաստասէրներ՝ բարոյագէտներ՝ օրէնսդիրներ շատ ծագեցան, շատ քերտինքներ թափեցին կրօնքն ու բարոյականը ուղղելու կամ գէթ դարմանելու, և երկուքին մէջ ալ ըստ ամենայնի վատթարացան, ձեռնթափ յետս կացին կատեցան։

Սոկրատ և Պղատոն յուսահատելով մոլորութեանց և ապականութեանց անմաքրելի հեղեղէն՝ ըսին թէ՝ ամեն մարդ պէտք է իւր երկրին կրօնից հետեւի և փոխոխութիւն մը չընել ընդունուած կրօնքին մէջ։ Նահանջ իմաստասիրաց երեւելիները խոստովանեցան իրենց տկարութիւնը, և հարկաւորապէս կարեւոր է ըսին գերբնական լուսոյ յայտնութիւնը՝ ճանչնալու համար Աստուծոյ բնութիւնը, պայն պաշտելու եղանակը և մարդուն պարտքն ու վախճանը։

Պղատոն կը յորգորէ Օրէնսդիրը «Որ փոխոխութիւն մը չընէ կրօնից մէջ, չըլլայ որ՝ կ'ըսէ, աւելի անստոյգ բան մը դնես անոր տեղը, քանզի անհնար է մահկանացու բնութեան կրօնքի բաներէն բան մը հաստատի գիտնալ»։ (Տեղինոմ։) Ուրիշ տեղ մ'ալ 'ի դիմաց Սոկրատայ կ'ըսէ · «Սպասել պէտք է որ մէկը գայ տալիցքնէ մեզի թէ ինչ վարմունք պէտք է ունենանք առ Աստուած և առ մարդիկ · · ։ Աւելի աղեկ է մինչեւ այն ատեն դադրեցընել պատարագները, քան թէ պատարագել առանց գիտնալու թէ աստուածահաճոյ են մեր պատարագները»։ (Ալկիբիադ։) — Սոկրատ ալ Հոգւոյ անմահութեան վրայ գրելով կ'ըսէ · «Այսր վրայ պայծառ գիտութիւն ունենալ անհնարին է կամ գէթ յոյժ դժուարին · ապա իմաստուն մարդը պէտք է խոնարհի հաւանականապոյն կարծիքին, թէ որ իրեն առաջնորդելու համար ապահովապոյն ծանօթութիւն կամ Աստուածային բան չունի»։ ('Ի Փեդոն։) — Փիլերոն՝ Հոգւոյ անմահութիւնը հաստատելու կամ հերքելու համար հնոց վարդապետութիւնները մէջ բերելով՝ կ'ըսէ · «Մարդկային ոգին որչափ ալ ներքաւիւտ համարուի, անկարող կ'ըլլայ երկինք ելլելու, կամ երկրին խորը մխուելու»։ դարձեալ՝ «Աստուա՛ծ կրնայ գիտնալ թէ այս կարծիքներէն

ո՛րը ճշմարիտ է. իսկ մենք չեմք կրնար սահմանել թէ ո՛րը որմէ աւելի հաւանական է» : (՚ի Տ-ո-ւ-կ-ո-վ-ե-ան :) Պլուտարքոս՝ Պղատոնի և Արիստոտէլի պէս խորհելով՝ կը հաստատէ թէ տիեզերաց արարիչ Աստուծոյ, նախախնամութեան և հոգւոյ անմահութեան հաւատոց վարդապետութիւնը նախնի աւանդութիւններ են ու չէ թէ իմաստասիրութեամբ գտնուած բաներ են. և կ՚ըսէ իր ճառը թէ իմաստուն մարդը պէտք է աստուածներէն խնդրէ աւեն բարիք և մանաւանդ զանոնք ճանչնալու շնորհը, քանզի կ՚ըսէ, «մարդս ճշմարտութենէ աւելի մեծ բան մը չկրնար ընդունիլ Աստուծմէ, ո՛չ ալ Աստուած աննկից աւելի արժանաւոր չնորհ մը կրնայ ընել մարդուն» : (յի-ւ-ս Ա-յո-ե-ի-ւ :) Յամբլիկոս ևս. «Պէտք է որ մարդ Աստուծոյ հաճոյքը կատարէ. բայց դիւրին բան չէ անիկայ ո՛րն ըլլալը գիտնալ, թէ որ զանիկայ Աստուած ինքնին և կամ ոգիները մէկը սովրեցուցած չըլլայ, կամ թէ Աստուածային լուսով լուսաւորեալ չըլլայ անիկայ» : Եւ դարձեալ. «Անհնար է որ մարդ բարւոք աստուածարանէ (կամ դիցաբանէ), թէ որ աստուածներն ինքնին չսովրեցընեն մեզի» : (՚ի վ-ր- Պ-լ-ո-տ-ա-ր-ք-ո-ս :) Նոյն բանը կը կրկնեն և կը հաստատեն Պորփիւր, Պրոկղ և Սիմպլիկոս. (՚ի Դ-ե-ն- Ե-ա-է-ո-ե- .) — Ապաուրեմն անչուշտ կարեւոր էր մարդուն՝ գերբնական լուսոյ յայտնութիւնը՝ Աստուածպաշտութեան և բարոյից մէջ հրահանգուելու համար :

Ուստի և՝ ինչպէս որ յայտնութեամբ տրուեցան նախամարդոյն կրօնքի սկզբանց նախահրահանգները, ըստ որոց նահապետք մինչեւ ՚ի Մովսէս ընդունելի պատարագներ ընծայեցին Աստուծոյ և Աստուածահաճոյ կենցաղ մը վարեցին. նոյնպէս յետ նախամարդոյն՝ նահապետաց բազմաց մանաւանդ յայտնութիւններ եղան, որոնցմով մարդկային ազգին կրօնական և բարոյական աւանդներ աւանդուեցան. ընդ որս և Աստուածային Միջնորդի մը քաղցր ակնկալութեան խոստումը, թէ յետ ժամանակաց պիտի յայտնուէր, մարդոյն պատուիրանազանցութեան համար մեծ և ամբիծ պատարագ մը հաստուցում լինելով Աստուծոյ արդարութեան՝ խլեակ ուխտը պիտի նորոգէր, և մարդոյն բարոյական ապականութիւնը պիտի սրբէր մաքրէր յարդարէր՝ ճշմարիտ Աստուածպաշտութեան կանոնին մէջ դաստիարակելով զայն :

Ապացոյց նախահարց մանաւանդ յայտնութիւններուն՝ աշխարհիս սկիզբէն ՚ի վեր աւեն ազգաց և լեզուաց մէջ պատարագներ, զոհեր, ողջակէզներ, սեղաններ, բագիններ, քուրմեր, քահանայներ եւ դոնուիլը, (և բոլոր տիեզերալուր բարբառոց մէջ այս տեսակ նուիրական բառեր սկիզբէն գտնուիլը,) որք չէին կրնար բնական լուսով մտածուիլ :— Բնական լոյսը ո՛չ իւրք կրնար իմաստասիրել թէ անբան անասնոց արիւնները կամ անոնց ողջակիզումը՝ որք աստուերական նշանակք էին ՚ի հինն՝ Գողգոթայի մեծ և անկրկնելի պատարագին, անոր արեան հեղումանն և բոլորապտուղ հատուցմանը, երբէք կըրնային յանցաւորութիւնը քաւել և վրէժխնդիր Աստուծոյ արդար բարկութիւնը իջեցընել :— Վասն զի պատարագաց մատուցմունք կը յայտնեն թէ մատուցողք (ամենայն հին և նոր ազինք) Գերագոյն էակի մը կը հաւատային, ատ որ կը մատուցանէին պատարագները. մեղաց գոյութիւնը՝ յանցաւորութիւնը կը խոստովանէին (որ անտարակոյս պոռնկ պատուիրանի մը զանցառութենէն գոյացած կը համարէին) որուն համար կը պատարագէին, և թողութեան կամ քաւութեան յոյսերնին կը յայտնէին, որով կը մատուցանէին զոհերնին : — Սկիզբ նախամարդոյն եղած առաջին յայտնութեան աւան-

գուխենէն կը ծագէր, ըստ որմէ և հեթանոսք իրենց հարցուկները, հմայքները, պատգամներն և գուշակներն ունեցան: Բնակ՞ն լուսով արդեօք իմաստասիրեցին հեթանոսք ամենայն՝ այս անբնական յայտնութեան երազները:

Ի սկզբան հարկաւ բանիւ կ'ըլլար այս յայտնութիւնը, մերթ տեսլեամբք, մերթ երազովք և մերթ հրեշտակաց միջնորդութեամբք· (Ծննդ· ԺԸ· Լէ· ԺԹ·) և առ՝ի չգոյէ գրոց՝ աւանդութեամբ կը պահուէր՝ ի մարդիկ: որոց երկարակեցութիւնը այն աւանդութեան անխոտորելի մնալուն երաշխաւորութիւնն էր: Ադամայ Աստուծմէ առած աւանդը՝ մինչեւ Աբրահամ՝ իբրու քանուսմէկ դար միջոցը՝ երկու նահապետներու միջնորդութեամբ ամբողջ անարատ կրնար հասնիլ: Ադամ իւր լսածը կրնար Ղամէքայ աւանդել, որոյ հետ յիսուն և հինգ տարուան չափ ապրեցաւ· Ղամէք ալ Սեմայ որդւոյ ներկի՝ ընդ որում իննսուն ու հինգ տարւոյ չափ կենակից եղաւ, և Սեմ Աբրահամու, որու հետ մէկտեղ դար մը հոլովեցին:

Բայց ապա երբ կեանքերը կարճցան և աւանդութիւնը բերնէ բերան այլայլելու վտանգին ենթակայ կը գտնուէր, Մովսիսէ սկսաւ գրաւոր յայտնութիւնը: Եւ դարձեալ, նահապետական դարուն՝ Աստուած իբր տղայոց խնամք տանելով՝ հաճեցաւ Աստուածգիտութեան և բարոյականին սկզբունքները միայն մարդոց մտաց և սրտին մէջ տեղի ունենալ և տարրացընել· ապա քանի՛ մօտենար աւետեաց ժամանակը՝ այնքան էր այն հրահանգները ըն ալ երթալով աւելնային և ընդարձակուէին· և դի կարելի չէր բանիւ լրիվ անայլայլելի տեւէին այդ հրահանգաց չատութիւնը, գրաւոր յայտնութեան պէտքը կարիք կ'ըլլար այնուհետեւ: Այն ատ ո՛չ բովանդակապէս վիճակաւոր յայտնութեամբ

կրնար ըլլալ ան նոյն պատճառաւ, այլ տակաւ առ տակաւ հրահանգելով զմարդիկ, մինչեւ որ կատարեալ հասակը գայիւն· ո՛ր առեն Քիստոս Քրիստոս անձամբ գալով այն հրահանգները պիտի կատարելագործէր լիուլի և լրացընէր՝ ինչպէս որ ըրաւ· և վասն որոյ իբր հազար հինգ հարիւր տարիներու մէջ բովանդակուեցաւ այն ցայտնութեանց Ս· Գիրքը, որ կ'ըսուի Աստուածաշունչ: «Բազում մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք· ՚ի վախճան աւուրցս այսոցիկ՝ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն, զոր եդ ժառանգ ամենայնի· որով և զյաւիտեանսն արար»: (Եբր· Ա· 1—2:)

Կը մնայ արդ մեզ ուրոյն խօսիլ Աստուածաշունչ Ս· Գրոց և Աւանդութեան վրայ:

ԳՐՔԵՐ ԱՌԱՋԻՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳԻՐՔ (1)

ԳԼՈՒԽ Ա·

Ս· ԳՐՈՑ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԸՆԴԱՆՐ

Աստուածաշունչ կամ Ս· Գիրք կ՚անուանեմք Հին և Նոր կտակարանաց Սրբազան Մատեանը, որոյ Գրքերը գրեցին Մարգարէք և Առաքեալք՝ Հոգւոյն սրբոյ ներշնչելովը կամ աղդեցութեամբը։ — Ներշնչե՞լ կամ աղդե՞լ Աստծոյ ըսելով կ՚իմանամք այն գերբնական շարժումը որով Աստուածային Հոգին այն սրբազան մատենագիրները վարած է գրելու, գրելիքնին ալ իրենց թելադրելով, և գրիչնին ուղղելով՝ որ գրածնուն մէջ բնա՛ւ վրիպակ մը չսպրդի, ո՛չ ՚ի հաւատոյս և ո՛չ ՚ի բարոյս։

(1) Ս· Գրոց այս գիրքը կրօնագիտութենէ պահանջուածէն քիչ մը աւելի մանաւանդ թէ շատ աւելի ընդարձակեցինք. ըստ որում կրօնից և Աստուածաբանութեան առաջին և ընկերական աղբիւր Ս· Գիրքն ըլլալով, անոր Աստուածայնութիւնը ուսանողաց մտացը մէջ անդամ մը խորհրմատ հաստատուելէն եաքը՝ կրօնքին ամեն դժուարին խնդիրները լուծուած կ՚ըլլան. անհասանելեաց լուծման համար ուրիշ աղբիւրներու դիմելու հարկը չմնար· ուսանողք ինքնին Աստուծոյ և մարդուն, կամ ճշմարտութեան և խաբէութեան ձայները ճանչնալ որոշել կարենալով, դասատուն ալ շատ մը խառնաշփոթ խնդիրներու պատասխան տալու ձանձրոյթէն ազատ կ՚ըլլայ։ Միայն կը խնդրուի Արժանապատիւ Ուսուցիչներէ՝ որ ո՛րչափ կարելի է խնամօք աշխատին այս գլուխները մանր բաժանելէ ուսանողաց, միանդամայն համառօտութիւնն ալ՝ իբր հաւաքաբանութիւն՝ առջևնին դնել։

Սրբազան Մատենագիրք ինքնին կը պահանջեն որ իրենց մատեանները իբրեւ բան Աստուծոյ և Աստուածային ճշմարտութիւն նկատուին։ — Ամենայն Գիրք Աստուածաշունչ օգտակարք ՚ի վարդապետութիւն են ևս» ։ (Բ· Տիմ· Գ· 16։) «Եւ զոր լսեսիք՝ ո՛չ եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեան բանից, այլ ևս երդ-պերոլնեամբ Հոգւոյն, ընդ հոգեւորս զհոգեւորսն համեմատեմք ։ ։ ։ Իսկ որդ՝ ո՞վ է բերող զիմս Տեառն, որ և խրատուսցէ ինձի նմա, այլ մեք զիմս միտս Քրիստոսի ունիմք» ։ (Ա· Կորնթ· Բ· 13—16։) «եթէ զվարձ իմոյ խնդրէք գՔրիստոսի, ոչ ինեա՛ք ։» ։ (Բ· Կորնթ· ԺԳ· 3։) «Վասն այնորիկ և մեք գոհանամք զԱստուծոյ անպակաս, զի առեալ ընդ՛ունել բանին Աստուծոյ ոչ ՚ի մեզ, ընկալարուք, ո՛չ իբրեւ զբան մարդկան, այլ որպէս ճշմարտի՝ զբան Աստուծոյ» ։ (Ա· Թես· Բ· 13։) «Զի ո՛չ դուք էք որք խօսիցիքդ, այլ Հոգին Հօր ձերոյ՝ որ խօսիցի ՚ի ձեզ» ։ (Մատթ· Ժ· 19—20։) «Քանզի ո՛չ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն, այլ ՚ի Հոգւոյն սրբոյ խօսեցան մարդիկն Աստուծոյ» ։ (Բ· Պետ· Ա· 21։) «Արք եղբարք, պարտ էր կատարել Գրոյն, զոր յառաջագոյն ասաց Հոգին սուրբ ՚ի բերանոյ Դաւթի» ։ (Գործ· Ա· 16։) «Այսպէս ասէ Հոգին սուրբ, այսօր եթէ ձայնի նորա լուիցէք ևս» ։ (Եբր· Գ· 7—8։)

Մարգարէք՝ առ որս գրէլինն իրենց մատեանները ցուցընելու և հաստիցընելու համար թէ ո՞վ էր իրենց պատգամներուն ճակատը կ՚ազդարարէլին, ըսելով, «Այսպէս ասէ Տէր» · — «Եղեւ բան Տեառն առ իս» · կամ «Ահա ևս» · ևս և, «Լո՛ւր երկին, և ունկնդիր երկիր, զի Տէր խօսեցաւ» ։ (Եսայ· Ա· 2։) «Եւ ասէ ցիս Տէր · ահա՛ եառու զբանս իմ ՚ի բերան քո» ։ (Երեմ· Ա· 9։) Քրիստոս ալ՝ յարդեւանց իրաց հաստատելու համար Ս· Գրոց ներշնչութիւնը՝ կ՚ըսէ · «Ամէն ա-

հրաշքներ, որք ամենեւին վկայութիւն ապացուցութիւն չունին ճշմարտութեան՝ թէ ո՞ւր, ե՞րբ եւ ո՞ր ներկայացուած են առնք· ուր ամեն հակառակորդ ապերէն եւ կրօնքներէ վկայուած են Աստուածաշունչ Մատենից պատմած հրաշքները· ինչպէս Ա· Մատին մէջ տեսանք, բայց մարդարէութիւնք՝ որ ընդ բնաւ դարս վկայութիւն ըլլալու համար ճշմարտութեան, և անոնցմէ ոմանց ալ կատարումը՝ բնաւին դարուց մէջ բնաւից մարդկանց իրենց իսկ աչօքը տեսնելու համար արուած են, այնպէս որչ՝ այնպէս մանրամասն պարագայներով մանր կանխաբանեալ մարգարէութիւնք կ'ըսեմ՝ մէկ հատ մըն ալ չերեւիր այն արտաքին մատեանները ներսն մէջ· թողուած անոնց մէջի բնական, պատմական ուսումնական եւ սխալները· Ուրեմն անոնցմէ և ո՛չ մէկը Աստուածային հեղինակութիւն ունեցած կրնան ըլլալ·

Հին և Նոր Կտակարանաց Աստուածային հեղինակութեամբ գրուած ըլլալուն ապացոյց ո՛չ միայն հրաշքներն ու մարգարէութիւններն են, որք ամեն ժամանակ ըմբերանած են վայրաթաւս հակառակորդաց բերաններէը և միշտ իրենց յաղթանակին մէջ կանգուն պիտի կենան, այլ նաեւ անոնց Ընդհանրութիւնը, և պատմական ստուգութիւնը, Անոնց բնախօսութիւնը, Նպատակի միութիւնը, Բարոյականը, վարդապետութեան վեհութիւնը և Տարածման միջոցը կամ եղանակը՝ անոնց Աստուածայնութեան անքակտելի կնիքներն են·

սեմ ձեզ՝ մինչեւ անցցեն երկինք և երկիր, յոտ մի՝ որ նշանախեց մի է, ո՛չ անցցէ յօրինացն և 'ի մարգարէից՝ մինչեւ ամենայն եղիցի» (Մ-ԴՐ· ե· 18·)

Հին և Նոր Կտակարանաց Աստուածային հեղինակութեամբ խմբագրուած ըլլալուն դէմ հինայ Քրիստոնեայ եկեղեցեաց և նոյն իսկ հերեսիովտայց և հերձելոց մէջ բնաւ ամենեւին տարակոյս կամ երկրայութիւն չկայ· սակայն առ արտաքինան՝ Ս· Գրոց ինքզինքին համար Աստուածաշունչ ըլլալը վկայելը, և եկեղեցւոյ ալ անոր հաւանութիւն տուած միաբանած ըլլալը բաւական չէ Անոր Աստուածայնութիւնը ապացուցանելու և հաստատելու· — Գանգի կան հակառակորդներ՝ որք կրնան ըսել թէ, ուրիշ կրօնքներ ալ կան՝ որք չեզինէց բեբե-լ և կամ Աստուածային հեղինակութեամբ յօրինեալ նուիրական տեսաններ ունենալ կը պնդեն, ինչպէս Զանդիկը՝ Ջենդավեստան, Հնդիկը՝ Վետայն եւ· և ո՞ւսկից պիտի ճանչցուի ճշմարիտ Մատեանը· — Արդար է այս պահանջը· և մեր Աստուածաշունչ Մատեանն ալ այս քննութիւնը կը հրամայէ, հաստահիմն հաւատք ունենալու համար յուսացելոց իրաց· (Բազդեոդէ' այս վկայութիւնները ց-վհ· ե 39· գործ· ԺԷ· 10 —11· Ա· Գես· գ· 15·) Այս քննութեան առաջին փորձերուն իսկ և իսկ կ'իյնան կը խայտառակուին սուտ կրօնից սուտ մատեանները, ըստ որում Աստուածային ճշմարտութեան Գիրքը ստութեան մատեաններէն կամ մարդոց հեղինակութիւններէն որոշելու վճռական առաջին նշաններն ըլլալով հրաշքն ու մարգարէութիւնք, (զորոց տե՛ս 'ի Ներոդոտոսէ մատենիս,) կը տեսնենք որ յոքնախուռն բազմութեամբ կը վիստան Աստուածաշունչ Կտակարանաց մէջ· այլ բնաւ մէկ հատ մըն ալ չերեւիր այդ կեղծ նուիրական գրեանց մէջ·

Արդարեւ անոնցմէ ոմանց մէջ կան ինչ ինչ սուտ

ԳՈՂՈՒԱԾ Ա·

Հնախօսութիւն Ս· Գրոց և պատմական տեղեկութիւն

Ս· Գիրքը ըստ որում կրօնից հեղինակութեան գիրք մը՝ որ չնորհուած է մեզ ուսուցանելու համար ի՛նչ որ կրօնքի կը վերաբերի, ընդարձակ պարզ և վճիտ ճշմարտութիւններ պահանջելի է անկէ՝ Աստուծոյ և Աստուածայնոց վրայ, Աստուծոյ կամաց և գործոց վրայ, անոր պաշտօնին և բարոյականին վրայ, մարդոյս ստեղծման և վախճանին վրայ· բայց պատմութեան՝ բնախօսութեան կամ ո՛և իցէ գիտութեան մը մասին՝ ամենեւին՛ն իրաւունք մը չունիմք անկէ մանր և լուսաւոր բացատրութիւններ պահանջելու, ո՛չ ալ այդ արտաքին գիտութեանց և ուսմանց մասին ստուգապոյն իրողութիւններ և ճշմարտութիւններ խնդրելու· Այսու ամենայնիւ՝ իբրեւ գիրք մը՝ յորում Աստուած կը խօսի, իրաւացի է պահանջել, որ անոր մէջ սուտ կամ սխալ տեղեկութիւններ չգտնուին՝ ի՛նչ բանի վրայ ալ ըլլայ, և ահա ըստ այսմ պատմական և բնագիտական ճշմարտութիւնք որ 'ի Ս· Գիրս՝ երկրորդ տպագրոյցք են այն Մատենից Աստուածայնութեան հզօրեղապէս·

Պատմութենէ սկսելով՝ Ս· Գրոց առջեւ տպագրութիւնը մէջ բերել դործոյս անձկութիւնը չներելուն՝ անոր միայն հնախօսութիւնն ընտրելինք, և հնախօսութենէ ալ միայն Մովսէսի Հրարածապատում Գիրքը հերիք կ'ըլլար մեր նպատակին· վասն զի անկրօն ըլլալ ուզողները միշտ այս Գրոց դէմ կը զարնուին, և որք կը բովանդակեն արարչագործութենէ մինչեւ Իսրայէլի յԵգիպտոս էջը, և անտի եւս մինչեւ Աւետեաց երկրին դուռը հասնելու պատմութիւնը՝ որ Մովսէսի միւս չորս գիրքերը կը վիպագրեն, որք նոյնպէս լի են սքանչելեաց անգամ մը թէ որ ասոնց ճշմարտութիւնը հաստատելու ըլլայ՝ միւսներն ինքնին հաստատուած կ'ըլլան· Բայց մենք պիտի ջանամք առ ի սեղեաց ապացուցանել·

Մովսիսեան Գրոց՝ արարչագործութեան պատմութեան ճշմարտութեանը վրայ Ա· Մասին մէջ խօսեցանք· Հոս նորէն ետ դառնալ և խօսքերնիս կրկնել պէտք կ'ըլլայ·

Հին պատմութեան վրայօք շատ քիչ պատմագիրներ ունիմք· աշխարհիս երեսը Հին Կտակարանէն առաջ հին մատենագրութիւն մը չկայ, որ Մովսէսէն կ'սկսի· (Մ· 1565 Ն· Ք·) Եւսեբիոս Հին Կտակարանէն ետքը է'ն հին պատմիչ Սանքոնիաթոն անուն փիւնիկեցի պատմագիրը կը յիշէ իւր գործոց մէջ, որ Քրիստոսէ 1200 տարի յառաջ և կամ Հռութի ժամանակն էր· Ասկէ ետքը Հոմերոսի և Հեսիոդոսի գործքերը, Քրիստոսէ 900 տարուոյ չափ յառաջ, յորոց 120 տարի մը ետքը Բերոսոս Քաղդէացի պատմագիրը իբր 880 տարի Քրիստոսէ յառաջ· Երոդոտոս Յոյն պատմիչը՝ Քրիստոսէ 450 տարի յառաջ· Պղատոն Յոյն փիլիսոփայն 350 տարի յառաջ· Մանեթովն Եգիպտացի պատմիչը՝ 250 տարի յառաջ· և ուրիշներ, որոց շատերը Հրէից բնական աշխարհէն հեռու երկիրներու մէջ բնակելով՝ անոնց վրայօք քիչ յիշատակութիւններ ըրած են· բայց և այնպէս այն իրենց քիչումն ալ Հին Կտակի պատմութեան ճշմարտութիւնը կը հաստատեն· Պղատոն և Երոդոտոս անանկ հին աւանդութիւնները մէջ կը բերեն, որք Մննդոց և Հին Կտակի հնագոյն Մատենից պատմութեանց հետ միաբան են·

Մովսէս՝ որուն համար հիմայ ըսինք թէ իրմէ

առաջ պատմութեան աղբիւր չունէր, անտարակոյս մարգարէութեամբ գրեց իւր Մատեաններէը, մանաւանդ Ննդոցը, որուն սատար ունէր աւանդութիւնը, որ մեծ ապացոյց և վկայութիւն էր իւր պատմադրութեան ստուգութեան՝ առ որս գրէր նա իւր Մատեանները, Հրէից ազգին։ Իւր ծնած առեն դեռ կենդանի էին անոնք որ զՅակովբ տեսած էին, կամ գէթ զՅովսէփ։ Յակովբ Աբրահամու մեռնելէն առաջ ծնած էր, որն որ ժամանակակից էր Սեթայ որդւոյ Նոյի, որ և նա կենակից էր Մաթուսաղայի, որ ընդ երկար ապրած էր Ադամայ հետ։ Ապա ուրեմն քանի մը ազգօք վճիտ իրեն հասած կրնար ըլլալ Ադամէն իջեալ Աբրահամու և անոր հետեւորդ պատմութեանց անսայթայլակ ճշմարիտ աւանդութիւնը։

Մովսէս՝ իւր պատմութեան ճշմարտութեանը վկայ ունէր՝ աւանդութենէ զատ՝ երեւելի և գլխաւոր անցքերը անկորուստ պահող յիշատակարաններ կային Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ և Յովսէփայ շրջիմները։ այն լեռը՝ ուր Աբրահամ չլաւ պատարագել իւր որդին, զոր և անուանեց Մորիա՝ կամ Աստուածերեց, և դեռ եւս՝ առ Մովսիսիս այնպէս կը կոչուէր։ Ծծմբոյ լիճը՝ ի՛ Սեռեալ ծովը, Սոդոմ Գոմորի կործանման և հրկիզութեան յաւերժական վկայութեանց մէկ երեւելին։ դեռ եւս կ՚երեւնան բաբիլոնի աշտարակի աւերման տեղին, որ պատճառ եղաւ Նոյի որդւոց և թոռանց լեզուաց խառնակութեանց և իրարմէ զատուելով ընդ ամենայն տիեզերս ցրուելնուն։ որուն համար և այն տեղի գլխաւոր քաղաքը կոչուեցաւ Բաբէլ՝ որ է խառնակութիւն։ Աւարատ լեռը՝ յորում դեռ եւս կ՚երեւնար Նոյի տապանը։ Աբրահամու Իսահակայ և Յակոբայ փորած ջրհորները։ Քլխատութեան և շաբաթու տօներուն եւ եւ եւ։

Մովսիսի պատմադրութեան է՛ն կարեւոր կէտն է աշխարհիս ի՛ յաւիտենից չըլլալը և ի ժամանակի յԱստուծոյ ստեղծագործիլը, զոր Ա։ Մատին մէջ ապացուցիւք հաստատեցինք։ Թէ որ Մովսէս ժողովուրդը խաբել ուզէր, դժուարութիւն մը չունէր, կրնար սրարշաւ գործութեան համար իւր դնելիք թուականը չատ ու չատ հինցընել, բիւրաւոր տարիներ հասիրել, Ասինէացւոց՝ Եգիպտացւոց և այլոց ազգաց բազմաց պէս, ապահով ըլլալով որ այն և յաջորդ դարերուն յատուկ անթափանցելի խաւարին մէջ ո՛չ ոք կարող էր և կրնար ապացուցանել՝ թէ աշխարհի ստեղծումը աւելի քիչ ժամանակի գործ է։ կրնար նաեւ՝ թէ որ խաբել ուզէր՝ աւելի կարճ չրջանի մը մէջ աւիրուիլ, մարդոց կեանքն ալ աւելի համառօտել՝ արդի կենաց չափ, որով արդի բնախօսից անտեղի հակառակութիւններէն ալ զերծ կը մնար։ բայց իւր հարիւր քսան տարուց մանչը՝ որ խորհրդաւոր կամ կենդիւռ մը չէր գծէր իւր դէմքին վրայ, ասոր դէմ և արդեան բնախօսներուն հակառակ միշտ բողոք կը բառնայ եղեր, աստիկայ թողուք։ և աւելի խորը մտնելու նպատիք։

Նախկին դարուց հնագոյն ազգաց աւանդութիւններն եւս քննելով՝ որք անկարելի էր Մովսիսի պատմութիւնը կարդացած ըլլային, ըստ որում Հրէայք Բաբիլոնի գերութենէն առաջ դեռ ցրուած չէին աշխարհի ոլորտները, և Ս։ Գիրք (յ՛ Հնգամատեանն ու եռքէն անոր վրայ յաւելեալ միւս Աստուածաշունչ գրոց գրութիւնները) ատենակին մէջ կը պահուէին, և անոր օրինակները միայն ժողովարանաց մէջ կային։ գրչութեան արուեստը յառաջ գացած չէր, և դիւրութիւն ալ չկար որ ամեն առանձնաւորաց քով գտնուելով այն Ս։ Մատեանները բոլոր ցրուած տեղերնին հետերնին տանէին։ վասն որոյ և միայն ի՛ Հրէայս կը մնար այն յայտ-

նեալ աւանդութեան Գիրքը։ Մէկ ուրիշ պատճառ մ'ալ որ Հրէից օրինաց մատեաններըը այլոց ազգաց գրեթէ անծանօթ և անքննելի մնացին, այս էր որ այլք յաղգաց որ շրջապատեր էին անոնց երկիրը, կ'ատէին զիրենք չարաչար և իմաստասէր ազգերն ալ կ'արհամարհէին զանոնք իբրեւ անդրագէտ, անծանօթ իմաստից, և հերկագործ ժողովուրդ, որով և իրենց անձնասիրութեան կը դպչէր անանկ մտօք աղքատ հասարակաց ժողովրդեան մը դպրութիւնը քննել, շահելու օգտակար բան մը քաղելու համար։ և այս պատճառաւ անծանօթ մնաց անոնց այս Աստուածպետական ժողովրդեան յայտնութեան Գիրքը։ — Բայց թէ'և այսպէս բոլորովին անտեղեակ էին հին ազգերը Եբրայեցւոց աւանդութեան, քննելով կը գտնեմք որ անոնց աւանդութիւններն ալ աւելնելին միաբան են Մովսիսի պատմագրութեան, թէ որ անոնց վրայի առասպելին քօղը պատուենք։

Մարդուն նախկին անմեղութեան վիճակն ու անկումը, նահապետաց անպատճոյճ և տակաւապէտ կեանքը և երկարակեցութիւնն ու յաղթանդամութիւնը նախկին դարուց ամենայն ազգաց հնոց ծանուցեալ և վկայեալ ճշմարտութիւններ էին գրեթէ, զորս կը պատմեն հանգոյն Մովսէսի՝ Սանքոնիաթոն, Բերոսոս, Մանեթոն, Մաքսիմոս Տիւրացի, Դիոդորոս Սիկկիացի և այլք։ Քաղկիդիոս (՚ի Տիմէէ) կը գրէ. «Ա՛ն Մովսիսի՝ պատուիրեց Աստուած առաջին մարդոյն չօտել այն ծառին պտուղն՝ յորմէ բարւոյ և չարի գիտութիւնը կը գողնար»։ Սորաբոն (ԱՀԲՈՐՀՈՓՈՐՈՒՆԵԱՆ ԽՈՐՈՆ. Գ. ԺԵ.) Կալանոս անուն Հնդիկի մը խօսել կու տայ այսպէս. «Ի նախնուն ամեն տեղ գարի, ցորեն և ուրիշ կերակուրներ կը գտնէինք, ինչպէս կը գտնեմք հիմայ մոխիրը. աղբիւրներէն մէկ քանին ականակիտ

ջուր կը բղխէին, մէկ քանին՝ կաթ, միւսները՝ մեղր, և այլք գինի և ձէթ։ Իսկ մարդիկ միւռի առատութեանց մէջ անառակեցան. ընդ որ Աբրահամէ խոժոռելով արարածոց բնութիւնը փոխեց, և անոնց կեանքը աշխատալի ըրաւ»։ Դիոդորոս Սիկիլիացին Եգիպտացւոց աւանդութեանց վրայ գրելով կ'ըսէ. «Առջի մարդիկ կենաց պիտոյքները դեռ չը գտած՝ դժուարութեր կեանք մը կը վարէին. օրն՝ ի բուն մերկ կը պտըտէին, բացը կը պառկէին, անտուն, անկրակ, և իսպառ անդէտ ըլլալով քաղաքակրթեալ ազգաց կերակրոց»։ Պլինիոս, (Գ. է. 16.) կը գրէ. Երբ՝ի կրետէ գետնաշարժէն լեռը պատռեցաւ, մարդու մը կանգնած մարմինը ելաւ, զոր ոմանք Ողիոնինը համարեցին՝ այլք Իսիոնինը։ Ովբեստեայ մարմինը զոր պատգամախօսը հրամայեց դուրս հանել բրելով, 7 կանգուն բարձրութիւն ունէր կ'ըսուի։ Հոմերոս բանաստեղծ իբր 1000 տարի յառաջ մարդոց հասակաց համար կը գանգատէր որ նախնեաց հասակէն կարճ են։ Եւ Սողենոս՝ (Գ. Ա.) կ'ըսէ. Հիմակուան ծնած մարդիկ իրենց նախնիքներէն նկենահասակ չե՞ն ալ։ Ովբեստեայ յաղարկաւորութեան անցքը նշան է նախնեաց հասակի յաղթանդամութեան, քանզի երբ անոր դին գտնուեցաւ՝ի Թեգիա պատգամախօսին լսելովը 38 Ողիմպիադին, լսուեցաւ թէ 7 կանգուն բարձրութիւն ունէր։ Կը պատմուի եւս թէ կրետացւոց պատերազմին երբ գետին ջրերը չեզան՝ թուխքերն աւրեցին՝ 33 ոտնաչափ երկայն մարդու մը դիակ գտնուեցաւ։ Լ. Փղակիոս բդեշխը և Մեստալոս փափաքելով աչքովին տեսնել զայս՝ տեսան ու զարմացան, զորմէ առաջ կը լսէին ու չէին հաւատար։

Հեթանոսաց դիցաբանութեան Ովկեղէն պատառասպելը եթէ նշանակութիւն և հիմ մը ունի, նախածնողաց երջանկութիւնն ու անմեղ վիճակն

է, ինչպէս կը նկարագրեն Եսիոդոս, Վիրգիլիոս, Մլեկեանն.) Ովիդիոս Նասոնը, (Ա. Գէր. Ամերիկ.) Լուկրետիոս և այլք։ Զրադաշտ իւր կրօնքի վարդապետութեան իբր հիմ կը դնէ ասիկայ. Բարեյուսոյ Հոթենթացիք ալ նոյն ճանապարհն ունին. մասամբ իւիք նոյն բանը կ'ըսեն և Հիւսիսային Ամերիկոյ վայրենի բնակիչք, որ այս աւանդութիւնը չէին կրնար առած ըլլալ օտարներէն՝ որոց հետ որ կցորդութիւն չունէին անցեալ ժամանակաց մէջ։ Դիկէարքոս ճեմական՝ ղոր կ'ակնարկէ Պորփիւր, (Ի Դ. Գէր. Ի ոտիլ. Պենդանի.) և Վարրոն, (Ա. Հաղ. Գրծոց.) կը գրեն. «Նախնիք Աստուածամերձ գոլով գերազանց բարք ունէին. և անանկ կեանք մը կը վարէին որ ոգեղէն Հաղորդութեան կ'արժանանային»։

Շաբաթուն օրերը եօթն թուելը կը գտնեմք էն հին ազգաց սկզբնաւորութենէն. Մինէացւոց, Ասորեստանեայց, Փիւնիկեցւոց, Պարսից, Հնդկաց, Կեղտացւոց, Գերմանացւոց, Գաղղիացւոց, Բրիտանացւոց և Սլաւեաց մէջ, թո՛ղ ցոյներն ու Լատինները. ինչպէս նաեւ եղքն Ամերիկայ գտնուեցան՝ փերուի և ուրիշ Հիւսիսային ժողովրդոց մէջ տեսնուեցաւ։ (Փէլէն. Տէքսպէր. Կլէմէնտ Ալէքսանդրացի՝ Ելէոպոէն առնելով Գր. Ե. Հոմէր. Կալմէտ. Եւրէնոս՝ Ալէքսաբոլեայ առնելով Գր. ԺԳ. 12. Թէոֆիլոս Անտիոքացի. Գր. 2. Սոեփոն. Լաէրտ. Փիլոպոս Գր. Գ. 13. Դիոն. Կասիոս Գ. 37.) Միով բանիւ Յովսեպոսի ըսածին պէս (Գր. Բ. ընդդէմ Ապիոնի.) «Չկայ ո՛չ ցուներց և ո՛չ բարբարոսաց քաղաք մը՝ յորս ըստ օրինակի Հրէից՝ եօթներորդ օրը հանգստանալու սովորութիւնը չպահուի»։

Հակայից՝ դից դէմ պատերազմն ալ՝ Բաբելոնի աշտարակաշինութեան ամպարշտութենն է, զոր Աբիդենոս կը պատմէ գրեթէ Մովսէսին պէս. (ո-

րոյ վկայութիւնը վարը պիտի դնեմք.) Եւսեբիոս ալ նոյնպէս կը խօսի, ինչպէս որ Եւսեբիոս յառաջ կը բերէ։ (Ի Նախապարտ. Աւետարանի.) — Ամենէն պարմանալի հիանալին այն է որ մարդ որչափ վեր հնութեանց երթայ, այնչափ անպղտոր յստակ ծանօթութիւններ կը գտնայ առ արուածինն. յորմէ մի միայն ճշմարիտ հետեւութիւն և ուղիղ եզրակացութիւն այս՝ թէ Աչխարհ ամենայն ի նոյն նախածնողէ սերիլ, ի նոյն նախածնողէ ընդհանուր առաքինութենէն երեսը երկրագունդին ամենայն ազգաց ի խոր խաւարի ննջէր. ինքնեզ աներեւոյթն Աստուած՝ փարատեց խաւարը, ուղիղով չատ տեսակ բաներ ստեղծել, նախ Լուրն ստեղծեց և անոր չարժման գործութիւն տուաւ. Լուրք ե՞ր կը կոչուին, որովհետեւ Ներքայ կամ Խաւարայ ծընունդն են, որն որ ե՞րբ անուանեցաւ. քան-

դի անոր առաջին «չիւնան» (չարժուումը) ջրերուն վրայ էր։ (Ձիշելու է. «Եւ Հոգի Աստուծոյ շրջէր՝ ի վերայ ջուրց»։) Բրաման աստուած շատ տարիներ ջրոց չարժմանէն գոյացեալ ոսկեղէն ձուի մը մէջ կը բնակէր. որ՝ ի գոյանալն հազար արեգակներու չափ կը ցոլանայր բոցով. Բրաման զայն երկուքի բաժնեց, մէկէն երկինքը ձեւացուց, միւսէն ալ երկիրը։ (Այս ալ՝ ջրոց մէկ մասին երկինք քաշուելով հաստատութիւնը կազմելնուն. և վարը մնացած ջրոց մէկտեղ ժողվուելով ցամաքին երեւնալուն, որով և ցամաքը երկիր կոչուելուն ակնարկութիւնն է։) Ի Բրաման ելան Դեւայք (բարի ոգիք), Ասուրայք (չար և անկեալ ոգիք), և յետոյ մարդիկ։ Բրաման յորմէ հանեց առաջին մարդը արուէգ, որ մինակ ապրիլ չկրնալով՝ յերկուս բաժնուեցաւ. ՚ի Մանու (այր) և ՚ի Սատարուպա (կին), (աս ալ՝ տարաբաղդաբար չկայ՝ որ Ադամայ կողէն Եւայի ծննդեան թարգմանութիւնն է։) Ասուրայք (չար ոգւոց) Մահասուրայ իշխանը օձի կերպարանքը անոնց մօտենալով մոլորեցոյց զանոնք. այնուհետեւ երջանիկ դարը վերջացաւ, և Մանու (մարդն) մահկանացու եղաւ անկումնամբը։ Մանուայ և Սատարուպա առաջին որդիք տեսանող և իմաստուն էին. առ որովք Աստուածութիւնը խոնարհեցաւ զոհի մը, (անտարակոյս Աբէլի զոհն է ըսածը.) Մանու անոնց օրէնք տուաւ. այլ մարդիկ երթալով կը խանգարուէին, և Աստուծոյ խօսքը տակաւ կ՚անհետանար։ Այս առաջին մարդը Մանու՝ կարդամ (Ադամ) ալ կ՚ըսուէր, որ ֆ— կը նշանակէ»։

Անէացւոց նուիրական մատեանը կը պատմէ թէ մարդը յաւիտենական հոգեւոր և առաքինի էր. և անոր մարմինը դեղին փափուկ հողէ մը կազմուած էր. իշխան էր նա ամենայնի, և ամենայն ինչ հնազանդ էր անոր։ Անիկայ կը բնակէր գետնէն

բարձր՝ կախուած բուրաստանի մը մէջ, որ կենաց պտուղ կը բուսուցանէր, և չորս գետերէ կ՚ոռոգուէր։ Բայց նա որկորաստութեանն ետեւէն իյնալով մտաց լուսաւորութիւնը կորնչուց. բուրաստանը դոցուեցաւ, ճանբան արգիլուեցաւ և ամէն արարածք թշնամի դարձան անոր։ Բայց անոր այս անկումէն ետքը մարդիկ վերստին բարեպաշտ կեանց դարձան և հաղարաւոր տարիներ կ՚ապրէին. բայց ետքէն աւրաստաւանութեամբ բռնացան։ —(Թէ որ Մննգոց առաջին դլուխները օրինակելուզէին, ասկից տարբե՞ր պիտի գրէին արդեօք։)

Բերոսոս՝ Քաղդէացւոց հին մատեաններէն հաւնելով կը գրէ արարչութեան աւանդութեան հետեւար, թէ Ովան անունով նհանգ մը ծովէն ելլելով, (ն՞ոյ։) շատ մը արուեստներու հետ արարչութեան պատմութիւնն ալ սովրեցուցեր է այսպէս. «Էր ասէ երբեմն, մինչ ընդ բնաւ խաւար և ջուր էր. . . . և զԲէլայն ասեն՝ որ Յունարէն Դիոս թարգմանի, և Հայերէն Աստուած, թէ ընդ մէջ կտրեաց գխաւարն և զաւտանել ՚ի միմեանց զերկինս և զերկիր. յարդարել յօրինել զաշխարհ. . . . Տեսանել Բէլայ աշխարհ ինչ անապատ և պղտոր. հրաման տալ միւսի ՚ի դիցն՝ յարենէն որ ՚ի հատեալ գլխոյն իւրմէ իջանիցէ, զանգանել ընդ հող, և ստեղծանել մարդիկ, և այլ անասունս և գազանս, որ կարիցեն այսմ օդոյ ժոյժ ունել. հաստատել Բէլայ զաստեղս և զարեգակն և զլուսին, և զհինգ աստեղսն պատրանաց։ Զայս ըստ բազմավիպին, Բերոսոս յառաջնում մատենին պատմէ»։ (Ա— Եւսեբ. Քրոնիկ. Հատ. Ա։)

Նոյնպէս օձին ստելի յիշատակը իբրեւ գործի չարութեան՝ շատ ազգաց մէջ կը պահուի, Հնդկաց, Պարսից, Փիւնիկեցւոց, Կեղտաց ևն։ Ըստ առասպելին՝ Պանդորայ առաջին կնոջ և անոր ամուսնոյն

եպիմեթեայ և Պանդորեան ուիոյն պատուիրեան մէջ բացայայտ կ'երեւնայ առաջին մարդոյն կնոջ ձեռքով մոլորելուն, որով և չարեաց աշխարհ մըտնելուն ճշմարտութիւնը։ —Ըստ Ջանդիկ աղանդոյ՝ Արհմն (որ և Խարաման) չար աստուածը՝ մարդկութեան նախկին ծնողքները՝ որք Ադրամազդայ (կամ որ նոյն է՝ Յորմզդէ) արարչագործեալ էին՝ մոլորեցոյց. և նախ կինը դիւաց զոհ մատոյց։ Այնուհետեւ նախածնողք հարկադրուեցան անասնոց մորթեր հագնելու և իբրեւ որսորդք անդին ապրելու։

Քաղդէացիք Ադրվրայ (ի՛. Ադամայ) մինչեւ ցՔրիստոսէրն (ցնոյ) և մինչեւ ցԶրհեղեղ թէ՛եւ բիւրաւոր տարիներ կը դնեն, բայց մինչեւ նոյն ժամանակ տասն ազգ նահապետաց կը դնեն՝ ըստ Մովսէսի. ինչպէս որ կը վկայէ Բերոսոս. (Ա֊ե֊ռնէի. Քրոնիկ. Հատ. Ա.) որոց ամեն մէկուն կենաց հազարաւոր տարի երկարութիւն տալովին՝ Մովսիսի ծննդաբանութեան մէջ պատմած նախնեաց երկարակեցութեան համար ալ՝ միանգամայն վիճած կ'ըլլան իրենց ընտանի աւանդութեամբը։ — Հնգիւք՝ նախնեաց՝ երկայնակեցութեան համեմատ յաղթանդամ մարմիններ ալ կ'ընծայէին, ինչպէս և Ս. Գիրք Ակոյտ կ'անուանէ զանոնք, յորմէ ծոյն Ծիցաբանութիւնը իւր Ակայից և Տիտանանց առասպելն ունեցաւ։

Զրհեղեղի և մարդկային ազգի վերանորոգութեան պատմութիւնն ալ իւր ամեն մանրամասն պարագայներովը պահուած կը գտնենք բոլոր հին ազգաց մէջ. ինչպէս որ Ծովսեպոս և Եւսեբիոս (Ա֊ Քրոնիկ. Հատ. Ա։ և Ի պրեպ. Աւետ. Թ. 12.) յառաջ կը բերեն, Բերոսոս Քաղդէացի, Աբիւդենոս Ասորեստանցի, Երոնիմոս Եգիպտացի, Մատթէոս և Ալիոլայոս Դամասկացիք անանկ կը պատմեն այս ամեն բաներուն վրայ, որ գրեթէ բնաւ տարաձայնութիւն չունին Մովսէսէն. Պերոսոսը և Դուկիանոս ալ կը ձայնակցին յիշելով տապանը և անոր մէջ ապաստանելոց լեռան մը գլուխը ազատուելնին. և թէ այն լեռը՝ յոր իջան՝ Հայաստան էր. կը յիշեն եւս զանազան գազանաց և թռչնոց և չորքոտանեաց զոյգ զոյգ նաւ մտնելը և սահուիլը. սոսկալի հեղեղը, աղաւնիները, ազատելոց զոհ մատուցանելը, Ծիածանն իսկ և Բաբիլոնի ճամբորդութիւնն ալ չեն մոռցած։ — Բազմավէպն Աղէքսանդր Քաղդէացւոց մատենէն քաղելով զայս այսպէս կը վիպագրէ. (Ի֊ղէ֊ ու Աբիդենոս ալ յոր Լնման կը պատմէրէ ան֊ եւ֊ռնէի Քրոնիկ.) «Կրոնէն ասէ նման (ՔսիսուԹրայ) ի քուն յայտնել, զոր հայրն անուանեն Ադրամազդայ, և այլք ժամանակ, ի հնգետասաներորդում Դեսիոս ամսեան, որ է Մարերի, մարդկան ի Լրհեղեղէն սատակել. հրաման տալ... նաւ գործել և ի ներքս մտանել հանդերձ ազգականօք կարեւոր բարեկամօք. համբարել ի ներքս ուճիկս և լմպելիս. մուծանել և գազանս և թռչունս և չորքոտանիս...։ Հանդերձեալ կազմեալ ըստ ամենայնի՝ ո՛րպէս և ա՛ռ հրաման, զկին և զորդիս և զկարեւոր բարեկամս ի ներքս մուծանել։ Ի հասանել Լրհեղեղին և վաղվաղակի ցածնուլ, թռչունս ինչ արձակել ՔսիսուԹրայ, և չգտանել ուստել ինչ՝ և ո՛չ տեղի և դադար իջանելոյ. դարձեալ միւսանգամ առնուլ ընդ նոսա ի նաւն. և յետ սակաւ ինչ աւուրց դարձեալ արձակել այլ հաւս, և նոցա եւս միւսանգամ անդրէն ի նաւն գալ՝ կաւով թաթախ զմագիլսն բերելով։ Ապա երրորդ անգամ արձակել, և անդրէն միւսանգամ չգալ ի նաւն։ Ցայնժամ իմանալ ՔսիսուԹրայ՝ եթէ յայտնեալ բացեալ է երկիր, քակել զկողմ մի ձեղուան նաւին, և տեսանել երթ-

եալ յեցեալ զնաւն 'ի լեառն ինչ : Ելանել կնաւ և դատերը միով հանդերձ , և ճարտարապետաւ նաւին , և երկիրպագանել յերկրի · բագին կանդնել , և զոհ դից մատուցանել · · · : Եւ դուլ և պատուէր տալ նոցա (որոց ընդ նմա 'ի նաւին էին,) երթալ միւսանգամ 'ի Բաբիլոն · · · և եթէ տեղին՝ յորում վայրի ելեալ կային , Հայոց աշխարհն է · · · » : —Ղուկիանոս ('Ի ՓԻԼՈ ԻՐՈՅ ԱՊՈՍՏՈՂՈՍԻՆ ԱՍՈՐԻՈՅ·) Հերապօլիս քաղաքի նախնի մեհենին վրայ խօսելով կ'ըսէ · «Այն մեհեանը՝ կ'ըսեն թէ՝ Սկիւթացի Պեւկալիոնը շիներ է · որուն ատենը եղաւ հաւատացած ջրհեղեղը · Յունաստանի մէջ այս Պեւկալիոնի իրաց վրայ այսպէս լսեր էի որ կը պատմէին · Հին մեհուան մարդիկ սկիզբէն եղածները չէն , դի անոնք կորսուեցան , և արդեան տեսածներնիս ուրիշ արնաւէ՝ նոյն Պեւկալիոնէ սերած են : Նախնեաց համար ալ սանկ կը պատմեն · Մարդիկ՝ կ'ըսեն , խստագարանոց , չարագործ , երդմնազանց , անագորոյն , հիւրատեաց և պղծաչուրթն էին · վասն որոյ և չատ վիշտեր եկան տիրեցին անոնց : Վասն դի յանկարծ երկրի անդնդոց դռնները բացուեցան, և վերէն երկինքէն սահանք տեղացին , գետեր յորդեցան , ծովը դուրս վազեց սահմանէն , մինչեւ ամենուն տիրեց ջուրը և սատակեցաւ ամեն կենդանի չուներ : Պեւկալիոն իւր արդութեան և խնամութեան համար պահուեցաւ , որ երկրորդ հայր ըլլայ աշխարհի · քանդի տապանը մտաւ ինքը , իւր կինը և որդիքը , և անոնց ետեւէն արջերը , ձիերը , առիւծները , օձերը , և ամեն կենդանիներէն զոյգ զոյգ մտան տապանը , և անոր ձեռս մը չբրին դից զօրութեամբը : Եւ այսպէս կը նաւարկէին օ'րշամ ատեն որ ջուրը երկրիս երեսը պատած էր : Յոյնք այսպէս կ'աւանդեն Պեւկալիոնի վրայօք · բայց Հերապօլիս քաղաքի բնակիչք օտարոտի բան մը կը կըց-

կըցեն : Ասան պի կ'ըսեն թէ այն վէմին քով որ բոլոր Ջրերը կուլ տուաւ , Պեւկալիոն անդան կանգնեց , և այն մեհեանը շինելով Յունաց պիտի զոհ մատոյց : Այս վիհը ես անձամբ տեսայ մեհենին ներսը՝ որ փոքրաչափ դուռ մըն է · բայց՝ թէ հին ժամանակները աւելի մեծ ալ էր՝ սոյն չեմ կրնար ըսել : Սոյն յիշատակը աւերակ պահելու համար՝ տեղւոյն բնակիչք ոչ միայն քուրմք՝ այլ և բոլոր ազգ ժողովուրդք Ասորեստանի , Ասորիոյ և Եփրատացւոց , տարին երկու անգամ մինչեւ ծովի երեքան Ջուր կը բերեն , և մեհենին մէջ կը թափեն · իսկ այն գուբը՝ թէ և փոքր յոյժ՝ կուլ կու տայ որչափ չատ Ջուր թափուի : Կ'ըսեն թէ Պեւկալիոն օրինադրեր է այս ըրածնին՝ 'ի յիշատակ հաւաստի ջրհեղեղին և իւր տան փրկութեան» :

Հնդիկք եւս սոյն այս Ջրհեղեղի լուրը կ'ակնարկեն այն զարմանալի նաւուն պատմութեամբը , որուն կ'առաջնորդէր Վիշնու աստուածը ձկան կերպարանքով · և թէ այն նաւով ազատուած է Սատդիավարդի անուն ումն սրբեալ դից՝ հանդերձ ընտանեօք իւրովք լեառն մը գլուխը : — Ինէացւոց առասպելած Ջրհեղեղն ալ հոչակաւոր է , որ պատահեցաւ կ'ըսեն Վայոնի օրերը · և թէ Ջրերը լեռանց գագաթներէն վեր բարձրացան · և կը կարծուէր թէ մինչեւ երկինք ելած ըլլան : Ամ և Նիու=ւա (Նոյ) վայտով (անտարակոյս՝ նաւով) արդիլեց վար թափած Ջրերը , և երկնից կամարը հինգ-հինգ նզարմանալի քարով մը (ծիածանով) վառեց :

Փերդինանդոս Գուրդէս հաւաքական Ջրհեղեղի աւանդութիւնը գտաւ 'ի Մեքսիկոն խակ , ա յաւելուածով թէ »Նոր մարդիկ խօսիլ սորվեցան աղաւնիէ մը» : — Ընթոնադ գետին և Ընթար լճին մէջ տեղը բնակող Ալկոնքինացւոց մէջ աւան-

դուքիւն կայ, թէ մարդկային ազգը ջրերու տակ կորսուեցաւ, և թէ աշխարհս եռքէն լեցուեցաւ մարդիկներով 'ի Մեսոպոտամիոյ արտաքոյ կարգի եղանակաւ։ —Ամերիկացւոց իրաց վրայ գրող շատ մատենագիրներ կը պատմեն եւս թէ՝ անգամ մը հարցուած ըլլալով Կուբայ կղզւոյն բնակչաց՝ իրենց Սպանիացիներէն սերեալ ըլլալնուն վրայօք, ըսեր են, թէ «իրենց նախնիքներէն լսած են թէ Աստուած հատուց երկինքը, երկիրս և միւս բոլոր ստեղծուածները։ Դարձեալ՝ կ'ըսեն մէկ ծեր մարդ մը՝ կանխաւ աղէտութիւն ըլլալով իրեն ջրհեղեղի՝ որով Աստուած զմարդիկ իրենց մեղաց համար պիտի պատժէր, մեծ նաւ մը շիներ և ինքը իւր տնովը մէջը մտեր է։ Երբ ջրերուն հոսանքը կը դադրէր, ագռաւ մը կ'արձակէ, որն որ մեռելոց շատ մը դիակներ գտնելուն համար մէկ յա՛ռ ետ չդառնար։ Ցետոյ աղաւնի մը արձակելով՝ ետ կը դառնայ նա բերանը Հոդայ (Ամերիկոյ մէջ պտղաբեր ծառի մը) չիւղը ունենալով. և երբ ծերը հասկրեց թէ երկիրը ջրէն ցամքեր է, ելաւ նաւէն, և վայրի խաղողէ գինի չինեց։ . . . » (Այս պատմութեան ճնաշորդը քիչ մը վարը պիտի կարդաք)

Ի Հայոց մանաւանդ աւանդութենէն պէտք է վկայութիւն ուզել առ այս. ըստ որում Հայաստան եղաւ գլխաւոր հանդիսարան հրաշալի իրացս, առաջին իջեւան ըլլալով նաւով ապրեցեալոց, ըստ որոյ և անուանեցաւ՝ մարդկութեան երկրորդ օրրանը և խանձարուրքն եղող տեղին՝ Նախճուան, որ է Նախիջեւան կամ Նախիջուան. այլք եւս կ'ստուգաբանեն Նախ-ջա՛ն, ցո՛ տեղի՝ ընդ որ դառաջինն չուեցին մարդիկ յետ ջրհեղեղին՝ գնալ բնակել ընդ այլ և այլ կողմանս երկրի։ Թողունք շատ մը քաղաքաց, տեղեաց անուանց ստուգաբանութիւնները որ նոյն մեծ դէպքերը կը հաստատեն, ինչ-

պէս Նախջուան կամ Նախչուան, Արկուռի կամ Ակռի, Առնոյոտն, Մարանդ եւն։ Թողումք Աբիւդենոսի, Բազմավիպին Աղէքսանդրի և ցոյն պատմագրին՝ փաստոսի Բիւզանդացւոյ յիշելնին թէ Նոյի նաւը Հայոց երկիրը դադրեցաւ և կեցաւ, և մինչեւ իրենց ատենը աչքովնին կը տեսնէին որ Հայք կ'երթային անոր բեկորները կ'առնէին կը բերէին «դեղ օդնականութեան բնակչաց աշխարհին». և «'ի ծեփածոյ նաւին նաւթոյ' 'ի բժշկութիւն և 'ի ջնջոյ ցաւոց ինչ բժժանաց» ։ (Բ-ոյ· Դպր· Գ· Գլ· ժ· ե-ոեբ· Քրն· Հատ· Ա· Խոր-ն· պոփ· Հ-ի-ս·) Թողումք Հայոց յատուկ Ամանորայն Արտաւազդայ տօնն ազգը կը կատարէին Նաւասարդ ամսոյն, որ Նոյի տապանին եղած ամիսն է, անոր և Հայոց թուականին տարեգլխոյ ամիսն եղած է. յորում մեծ հանդիսիւ տօն կատարելով Ամանորայն Արտաւազդայ մեհեանը՝ հունձք նորահունձ կը նուիրէին Աստուծոյն, պիտար թրջելով և աղաւնիներ թռուցանելով. և այս տօնը՝ չէ թէ յերիկէ և յեւանդէ՝ այլ կարի իսկ 'ի վաղ ժամանակաց, անյայտ տարիներէ 'ի վեր՝ անտարակոյս 'ի յիշատակ Ջրհեղեղի կը կատարուէին, որ նախնի Աստուածպաշտութեան ժամանակէն հաստատուած և 'ի պաշտօն ճշմարտին Աստուծոյ տահմանուած ըլլալուն՝ առ քրիստոնէութեամբ Ս· Գրիգ որ չվերցուց ասիկայ հեթանոսական միւս սովորութեանց հետ, այլ վարդավառ անուամբ 'ի տօն այլակերպութեան Քրիստոսի փոխեց, որ նոյնպէս նորահունձ ցորեան նուիրեն այն տօնին ճըշմարտին Աստուծոյ տաճարը, Քրիստոսի մարմնոյ և արեան խորհրդոյն հացի նուէրի ալիւրին համար։ —Թողումք կ'ըսեմք այս ամենը, և արդեան սովորութիւններնուս մէկ քանին՝ որ նոյն անյայտ տարիներէն մնացեր տեւեր են, հերիք վկայութիւն է այն իրաց ճշմարտութեան։ Ի՞նչ դէպք սկիզբն ա-

ռած է 'ի մեզ վարչական ոգին իրարու վրայ ջուր թափելու սովորութիւնը, և ինչ կրնայ նշանակել՝ թէ որ հանուրց մարդկութեան 'ի հեղեղաց ջուրց ողողուիը չնշանակէր. ինչ կը նշանակէ նաեւ մինչեւ ցայսօր ժամանակի նոյն ոճին սղաւնի թըռուցանելու սովորութիւնը ուրեք ուրեք՝ ինչպէս և 'ի Կ. Պոլիս յիւսիւտար, (և այս դարձեալ 'ի Հայս) եթէ նոյի արձակած սղաւնոյն յիշատակը չգարթուցանէր 'ի մեզ: ինչ կը նշանակեն նաեւ կաղանդի աւուր (այս ալ դարձեալ Հայոց յատուկ սովորութիւն ըլլալով) նորահունձ ցորեան սիմիթներ (եփած պուղպայ էփպիղը) և սիմիթէ սղաւնիներ (քուշըբ էօմրէօլըբ) իրարու ընծայելնիս. եթէ ոչ նոյն Նաւասարդի Ամանորայ ոճոյն սովորութիւնները՝ 'ի յիշատակ Ջրհեղեղի իրաց. որ նոքին երբ Հռովմայեցւոց Թուականը գործածել սկսելով տարեգլուխը կաղանդին կատարել բնական պէտք մը եղեր է, նոյն Նաւասարդի տարեգլխոյ սովորութեանց մէկ քանին կաղանդին կատարուիլ սկսեր է, և որովհետեւ նոր հունձք կարելի չէ այն ձմեռուան եղանակին գտնել նուիրելու համար, նորահունձ անուանեալ ցորեններու սիմիթներ սկսեր են ընծայել միւեանց, ինչպէս նաեւ սղաւնիներ չկրնալով թըռուցանել, սիմիթի սղաւնիները փոխ առեր անոնց տեղ: . . . :

Ջրհեղեղի իրաց ստուգութիւնը երկրիս պատմութեան ալ հաստատութիւն առած է: Տը Լիւք, Գիւվիէ, Հումբոլդ և ուրիշ նշանաւոր ներհուն երկրաբաններ ապացոյցներով հաստատեցին՝ թէ երկրիս երեսը մեծ և յանկարծական փոփոխութիւն մը կրած է ճիշդ այն ժամանակ, երբ՝ Ս. Գիրք կ'ըսեն թէ Ջրհեղեղը եղած է:

Ջրհեղեղէն ազին անցնելով՝ կը տեսնենք որ մի և նոյն Ս. Գրոց պատմութիւնները կը յեղյեղեն

դրեթէ շատ հին ազգեր. մարդկային ազգի մի միայն նահապետէ և անոր երեք որդիքներէն սերիլը, ան նոյն նահապետին և իւր երից որդւոց գործքերը, աշտարակաշինութեան մեղապարտութիւնը, և անկէ յառաջ եկած լեզուաց խառնակութիւնը, և յետ այնորիկ մարդկան ազգի ընդ ամենայն տիեզերս ցրուիլը ևն:

Բուն Հնդկական մատեան մը այսպէս կը խօսի այս նիւթոյս վրայ. «Մահաւարմանայ՝ որ և Մենու (որ յայտնապէս Նոյ անուան աղաւաղն է) թագաւորը երեք որդիք ունեցաւ. որոց երիցագոյնը Շերմա, (Ամ) երկրորդը Քարմա, (Քամ,) և երրորդը Յապետի, (Յաբեթ) . . . : երբ անգամ մը թագաւորն Մենու ըստ սահմանեալ հրամանին՝ գինովցեր անպատ կը քնանար մերկ, տեսաւ զանիկայ Քարմայ, և իւր երկու եղբայրները հոն կանչելով ըսաւ այս ի'նչ է, ինչ կերպարանք մտած կը տեսնեմք հայրերնիս: Ծածկեցին զայն կտաւոք և թողուցին հոն մինչեւ ուշաբերեցաւ: երբ նա զգաստանալով եղածներն իմացաւ, անիծեց Քարման՝ ըսելով. բոլոր ստրկաց ստրուկն (ծառայից ծառայն) ըլլաս»: —(Ասիկայ ո՞չ ապաքէն գրեթէ բառի՛ւ չափ նոյնութիւն է Մովսէսի գրոց հետ:)

Նոյնպէս և Ամերիկացիք Ջրհեղեղի պատմութիւնը չարունակելով՝ (զոր վերը յառաջ բերինք,) կ'ըսեն. «Այն ծերը հաշարելով թէ երկիր ցամքած է 'ի ջուրց, կ'ելլայ նաւէն և վայրի խաղողէ գինի հինելով կը գինովնայ գինիէն և կը քնանայ: երբ որ տեսաւ որդին՝ կ'ըսեն, խնդաց անոր մերկութեանը վրայ. և միւս որդին գալով ծածկեց անոր մերկութիւնը՝ պատուելու համար զնա: Ծերը արթննալուն անիծեց զայն և զայս օրհնեց: Եւ թէ իրենք առաջին որդիէն կը սերին, և իրենց մերկ չրջելնուն պատճառ այս կու տան, այլ անոր հա-

կառակ՝ կ'ըսեն, Սպանիացիք (յ՝ Եւրոպացիք) ո-րովհետեւ զգեստ կը հագնին, կ'երեւնայ թէ այն երկրորդ որդիէն սերեալ են»։ — «Ջրհեղեղէն ետքը՝ կ'ըսէ Աբիւլա, առջի մարդոց վրայ թագա-ւորեց Կռոնոս, և Տիտան և Յապետոս»· կամ ըստ Քարգմանութեան որ առ Խորենացւոյն՝ (Գր· Ա· Գլ· Զ·) «ՔսիսուԹրայ 'ի Հայս նաւարկելէն ետքը՝ երկրի իշխան կ'ըլլային Ջրուան (քանզի այսպէս կը կոչեն Արեւելեայք զԱեմ), և Տիտան և Յապե-տոսԹէ»։

Բաբելական և Քաղդէական աւանդութիւնք յստակ են յոյժ նաեւ աշտարակաշինութեան և լեզուաց բաժանման մասին։ Ադէքսանդր Քաղմա-վէպ (Ա- եւ-եբ· Քրոնիկ· Հատ· Ա·) ունի այսպէս· «Աբիւլա ասէ· միաբանեալ ամենայն մարդիկ՝ զբարձրաբերձ աշտարակն շինէին, զի յերկինս ելա-նիցեն· և ամենազօրն Աստուծոյ հողմ հնչեալ՝ զաշ-տարակն կործանէր· և իւրաքանչիւր ունէք զիւր լեզու բաշխէր· վասն որոյ և անուն քաղաքին Բա-բիլոն կոչէր»։ Աբիւդենոս եւս ունի այսպէս· «Ցո-րում ասեն դիպեալ առաջնոցն՝ զօրութեամբ և յաղթանդամութեամբ յուլացեալք, մինչեւ զդիան եւս անգոսնել, և յանպիտանութիւն հատանել։ Սկսանէին զբարձրաբերձ գբուրգն կանգնել, որ այժմ Բաբիլոն կոչի· և իբրեւ մօտ յերկինս հա-սուցանէին դիցն, այնուհետեւ հողմոց օգնական լեալ՝ սղէին և յերկիր կործանէին զմենքենաւոր գործն անարեացն· և յաւտակն կործանեալ՝ Բա-բիլոն անուանէր։ Որ ցայն վայր միաչուրթն համա-լեզուք էին, և 'ի դիցն բազմատրոփ խառնախօս խղուըրտիւն 'ի միաբանեալն եկեալ մտանէր»։ — Մերս ընտանի Մար Աբաս Կատինա ալ այս թան-կագին աւանդը մեզ կը պահէ (Ա- Խոր-էն· Գր· Ա· Գլ· Թ·) «Աղդ սկայից անհեթեթք, մարմնով յաղթ-

անդամ և վիթխարի, որք աւրաբոտաւանութեամբ յղփացեալ աշտարակաշինութեան աւիւրիչս խոր-հուրդն յղացան, և նոյն գործքին ձեռք զարկին· որուն ահագին և Աստուածելին հով մը փչելով դից ցասումէն՝ աւիրաբոտակը կը ցրուէ· և մարդոց իրարու անլուր լեզուներ խօսել տալով շփոթու-թեան մեծ աղմուկ մը կը ձգէ մէջերնին»։

Յունաց և ըստ նոցանէ Հռովմայեցւոց սկսյից ընդդէմ դից պատերազմելու համար Յունաստանի Ոսա լերը Ոլիմպոս լեռան վրայ, Հնարիմն ալ անոնց վրայ դնել սանդուղս գործելու և յարձակ-մամբ երկինքն առնելու առասպելը՝ աշտարակաշի-նութեան պատմութենէն կցկցուած ըլլալուն՝ ո՛չ ոք տարակոյս ունեցած է ցարդ։

Այսուհետեւ կու գամք Իսրայէլացւոց ազգի նախահօր Աբրահամու։ Եկատէոս գիրք մը շինեց Աբրահամու վրայ, որ մինչեւ Յովսեպոսի ատենը կը կենար։ Օգոստոսի և Ներոնի մոերիմն երեւելին Նիկողայոս Դամասկացի կը գրէ ասոր վրայօք, ո-րուն գրուածները կը քաղէ մեզ Յովսեպոս· «Աբ-րահամ՝ կ'ըսէ, կը թագաւորէ 'ի Դամասկոս, որ զօրօք գալով Բաբիլոնի անդիի կողմէն Քաղդէացւոց երկրէն հոն կը հասնէր։ Եւ յետ ո՛չ սակաւ ինչ աւուրց՝ իւր մարդիկներովը մէկտեղ ելլելով անկից կու գայ այն տեղերը որ այն ատեն Քանան կը կոչ-ուէր, այլ հիմայ՝ Հրէաստան, ուր կը բնակին սե-րունդք Նոյա բազմութիւնք ազգաց, որոց վրայ ուրիշ տեղ պիտի խօսիմք։ Դամասկոսի մէջ մինչեւ ցայսօր կը փառաւորուի Աբրահամու անունը· գեղ մըն ալ կը ցուցուի հոն որ Նորին անուամբ Քնա-քան Աբրահամու կ'ըսուի»։

Թլփատութեան ուխտը Աստուծմէ Աբրահամու տրուած ըլլալը՝ որ իւր սերունդը ուրիշ ազգերէ որոշուի, կը յիշեն Յոզնադ և Տաճիտոս· «(Հրէայք)

օրինադրեցին թլփատել զնարմին անթլփատութեան իւրեանց յորոշել յայլոց»։ (Աթոթ. Գր. ԺԲ. ԺԷ։ Փիլն. Ի Սոդոմ։ Ե-եբ. Գր. Ա. 10։)

Հեթանոսաց մարդ ազգերը իսահակայ պատարագն օրհնաբերութիւն առած է անշուշտ, և կարելի չէ՛ որ ուրիշ դէպքէ մը սկիզբն առած ըլլայ։

Սոդոմ Գոմորայ կործանման համար կը գրէ Դիոդորոս Սիկիլիացին Ի տասրագրութեան Մեռեալ ծովուն. «Մերձակայ երկիրը կրակով կ՛այրի՝ կ՛ըսէ, որուն դառն ծծրքէքը կը նիհարացընեն բնակչաց մարմինները և անոնց կեանքը կը կարճեն»։ Նոյնպէս և Ստրաբոն. (Գր. ԺԶ.) «Այն երկրին կրակով այրուած ըլլալուն շատ նշաններ կան. վասն զի Մասադայ դիմացը այրած ժայռեր և խոշոր քարեր կը տեսնուին, խառնաւոտեալ անձաւներ և ածխենալից գետիններ։ Քարերէն վէմ վէմ ճեղք կը վազէ, ջրոյ առուները շատ դէշ հոտեր կը բուրեն մինչեւ բաւական հեռու միջոցներ. և նոյն տեղերու բնակութիւնները ապականուած կը տեսնուին։ Ցորոց կը ճշմարտի անոնց վրայ եղած հարուածը թէ Ի նախնեաւն երեսունէն աւելի քաղաքներ կային, և անոնց մայրաքաղաքը Սոդոմ կ՛անուանէր, որ վաթսուն վտաւան շրջանակ ունէր։ Ապա գետնաշարժէ և դուրս պօռթկած կրակէ և ճիւթով ու ծծմբով խառնուած ջերմերմ ջրերէ լճացաւ այն տեղը, ինչպէս որ հիմակ կը տեսնենք։ Քաղաքներէն ոմանք թաղուեցան, և ուրիշները թողուեցան բնակիչներէն, որք ձգեցին փախան հոնկէ»։ Տակիտոս, (Պ-պմ. Գր. Ե.) Պլինիոս, (Գր. Է. 16։ և Գր. Լե. 15.) և Սոլինոս, (Գլ. 36.) կը գրեն։ «Երուսաղէմէն հեռուն ժահահոտ լիճ մը կ՛երևնայ, որ չանթահարեալ ըլլալ կը հաւատան այն տեղերու մրճոտեալ ածիւնները։ Երիւս քաղաքներ կային հոն Սոդոմ և Գոմոր։ Հոն բուսած խնձորները չեն կրնար

ուտուիլ, թէպէտ և հասուն կ՛երևնան. վասն զի անոնց արտաքին մաշկերը տեսակ մը սեւաթոյր մոխիր կը պահեն մէջերնին, որք երբ որ մատով սեղմուին՝ ծուխի պէս դուրս կը փչուին և մանրամասն փոշոյ պէս կը ցնդին»։

Գալով Մովսիսի. Հեթանոս մատենագիրներէն չատերը հաստատ միաբերնին դրեր էին, թէ անիւկայ մեծահասակ մոգ մին է. (Ըստ Պլ-ն. Լ. 1.) ապա ուրեմն կը վկայեն թէ նշաններ և հրաշքներ գործած է, զորս մոգութեան ընծայել կը ճգնէին։ Ալրատան (Ա- Ե-եբ. պտրտպ. Ա-եպ.) Եգիպտացւոց ապստն ոմանց երբայեցւոց կարմիր ծովէն անցնելնուն աւանդութիւնը մէջ կը բերէ։ Դիոդորոս Սիկիլիացին ալ (Պ-պմ. Գ. 3.) կարմիր ծովու Արեւմտեան կողմն բնակող ուրիշ ազգի մը նոյն և նման աւանդութիւնը կը պատմէ։ Երոդոտոս (Բ. 3.) կ՛ըսէ, թէ հրաշալի բաներ պատահեցան Փերոնի (Փարաւոնի) թագաւորութեան ատեն։ Նումենիոս (Ա- Ե-եբ. պտրտպ. Ա-եպ. Թ. 8.) յանուանէ կը յիշատակէ այն մոգերը զորս ընտրեցին Եգիպտացիք իրը զօրաւոր այն պատուհասին մէջ և կարող Մովսէսի դիմակալելու և Եգիպտոսը խոշտանգող հարուածները դադրեցընելու։ Տրովգոս Պոմպէոս՝ զոր քաղեց Ցուստինոս, կը խօսի երբայեցւոց Եգիպտոսէն փախչելուն կամ ելլելուն, անոնց՝ ուսուցնող եղող Մովսէսին և Աբրահամին հին հայրենիքի կողմը ճանապարհորդ ելլելնին և Սինայ լերան հանդիսին և նուիրագործութեան վրայ։ Տակիտոս՝ առասպելներով մկլաղ կը յիշէ Եգիպտոսի անհնարին հարուածները, երբայեցւոց աղատութիւնը, Մովսիսի աւազնորդութիւնը, անոնց՝ անապատին մէջ թափառիլը և Փիւնիկեցւոց՝ Աորւոց և Եգիպտացւոց աշխարհաց մէջ տեղուանք՝ լեզուի մը մէջ բնակութիւն հաստատելը։ Ցուստինոս Ի

Տրովգոս Պոմպէոսէ առնելով կ'ըսէ. «Աւաջնորդ ազատրելոցն (Մովսէս)՝ եգիպտացւոց պաշտամանց անօթները կը գողնայ, զորս նոքա սրով եւս դարձընել ուզելով՝ բուռն փոթորիկներէ մղուելով եւս քշուեցան մնացին: Իսկ Մովսէս մոնալով յաշխարհ իւր՝ 'ի Դամասկոս՝ Ասինա լեռը հասաւ»: Յովսեպոս՝ Մանեթովս եգիպտացւոյ գրքէն քաղելով (Ա· եւ· եէ· Բրոնիկ· Հատ· Ա·) կը գրէ. «Միսփրագումթովսեայ որդին Թմոլսիս... պատգամագնաց լինէր՝ դաչինս կռէր, Թողուլ զերկիրն եգիպտացւոց յուսպէս յուկամ առանց վնասու գնալ: Եւ նոքա վստահ 'ի դաչինն՝ խաչամբք և տամբ կահիւ և կազմածով խաղային՝ ոչինչ սակաւագոյնք քան զգ քան և չորս բիւրս սպառազինաց, յերկրէն եգիպտացւոց ընդ անապատն դէմ եղեալ տարադէմ յԱսորեստան գնային: Զահի հարեալ 'ի բազմամբոխ զօրացն Ասորեստանեայց՝ վասն յայնժամ նոցա զաշխարհն Ասիացւոց ունելոյ, յոր այժմ Հրէաստան կոչի, քաղաք չինեցին՝ որ զայնչափ բիւրս մարդկանն բաւական լինէր տանել· և անուն քաղաքին Երուսաղէմ կոչէին: Իսկ յայլում եգիպտական մատեանն զսոյն ազգէ ասէ Մանեթովս, որ հովիւք կոչին, Թէ գերիս 'ի մեհենական մատեանն գրեալ: ... Յետ ելանելոյ յեգիպտոսէ ազգի հովուացն յերուսաղէմ, որ եհան զնոսա յեգիպտոսէ թագաւորն Սեթմոսիս՝ թագաւորեաց յետ այնորիկ ամս քսան և հինգ և ամիսս չորս....

Յովսեպոսի, Եւսեբեայ և Որոգինի գրուածոց մէջ ուրիշ մատենագիրներ ալ կան՝ այս և սոսկ նման չատ մը ճշմարտութիւններու վկայող· չերկարելու համար միայն կ'ըսեմք, Թէ մինչև հիմայ այն տեղերը ընդ որս անցաւ Մովսէս ըստ Գրոց իւր ժողովրդովը, «Ուղի և ճանապարհ Իսրայէլացւոց» կը կոչուին ըստ Արաբացւոց· ինչպէս որ կը հաս-

տատեն նոր աշխարհագրիկներ:

Ցովնաց առաջելին Բաքոսն ալ այս Մովսէսն է, զոր չատերը Նոյի պատմութեան առաջելը հաստատելնուն համար քիչ մը երկար կը ցուցընենք նմանութիւններն, և զոր կարծես մանր կը նկարագրէ Մովսէսի բոլոր անցքերը: Մովսէս ալ Բաքոս ալ եգիպտոսի մէջ ծնած կ'ըսուին: Մովսէս անունը ջուր ելած՝ պղտոռած կը նշանակէ, Մինոս անունն ալ՝ որ Որփէոս կոչուած Բաքոսի՝ թէ նոյն անուան փոխուածն է, և թէ նոյն բանը կը նշանակէ: Մովսէս 'ի ծնանելն մահուան վտանգի կը մատնըւի, (ջուրը կը նետուի,) Բաքոսի ալ նոյն բանը կը պատահի, (կամ ըստ այլոց՝ 'ի ծնանելն՝ Սեմելեայ պալատը այրելով մազապուր կը փախցընեն զԲաքոս մահուանէ·) Մովսէս իւր մօրմէն ծնանելէն ետքը փարաւոնի աղջկան որդեգիր կ'ըլլայ, Բաքոս ալ եղկոյր կ'անուանի· Մովսէս իւր հօրուքին՝ փարաւոնի բարկութենէն Մադիամու երկիրը կը փախչի, Բաքոս ալ իւր հօրը Արամազդայ չանթերէն տունը կրակ առնելով մահուանէ կ'ազատուի և նոյն Արաբիոյ լեռներէն մէկը Նիսա կը փախուցուի, ուր տեղուանք և Մովսէս քառասուն տարի բնակեցաւ: Արամազդ Բաքոսը կրակին մէջէն Նիսա կը խրկէ, Աստուած ալ՝ զՄովսէս՝ մորեղբօրն կրակին մէջէն եգիպտոս կը խրկէ: Բաքոս իրեն դէմ եղած մէկ անողորմ հալածանքէ մը ստիպեալ կարմիր ծովուն եզերքը քաշուելու պարտաւորեցաւ, Մովսէս ալ եբրայեցւոց ժողովուրդը փարաւոնաց հարստահարութենէն ազատելու համար կարմիր ծովէն անցաւ: Բաքոս երիկ մարդոց և կնկտոց բազմութեամբ գունդ կազմած Արաբիայէն անցաւ 'ի Հնդիկս արշաւելու համար, որ Ասիոյ մէկ ցամաք երկիրն է, Մովսէսի ժողովուրդն ալ նոյնպէս անապատները թափառեցան Պաղեստին երթալու համար, որ նոյն-

պէս Ադոյ մէկ ցտոնք երկիրն է։—Աստուածը երկու եղջիւրներով կը նկարագրեն պճաբոս, Մովսէս ալ լուսոյ եղջիւրներով կը նկարագրուի, ի նշան լուսաւորութեան երեսաց Նորա։ Բաքոս անաւ և դաստիարակեցաւ Նիսա լեռը, Մովսէս ալ Սինա լեռը հրահանգ ուեցաւ Աստուածային օրինաց և պատգամաց մէջ([1])։—Դիոս Քիրիս կը խրատէ առ Բաքոս որ երբեմն ի Հնդիկս բնակիլն ընէ այս ինչ աւերածիչ ժողովուրդը, Աստուած ալ Մովսէսի կը հրամայէ երթալ ի Պաղեստին և հոն եղող անհաւատ ժողովուրդները ջնջել։ Դան առաջնորդ շուն մը կու տայ Բաքոսին՝ իր արշաւանաց ընկերելու համար, Մովսէսին հաւատարիմ ընկերն ալ Քաղէբ էր, որ Եբրայեցերէն շուն ըսել է։ Վերջապէս Բաքոս իր կարճաքուն նիզակը գետինը պարնելով գինի կը բղխեցընէ գետնէն, Մովսէս ալ իր Աստուածային ցուպը ժայռին զարնելով անուշակ ջուր կը բղխեցընէ։ Այսչափ նոյնութենէն ա՛լ տարակոյս չմնար ամենեւին որ Բաքոսի պատմութիւնը Մովսէսի պատմութիւնն է, և զարմանք ալ չէ, քանզի Յունաց առաջելը հարեւանցի մը քննելով կը տեսնեմք որ բովանդակ այլոց ազգաց պատմութեանց զարդարուն ծաղրանկարն է իրենց դիւցազնութիւնը...։

Անէացւոց նուիրական մատենից մէջ կը յիշուի Յեսուայ արեւը կայնեցընելու հրաշքը՝ այսպէս ըսելով. «(Յեսուի թագաւորութեան առեն) արեգակը

(1) Յոյնք ազգային յաւուրկ մեծագործութեամբ՝ չուզելով այլոց պարտուորիլ ինչ որ ուրիշներէն կ'առնէին, թէ՛ պատմութիւն և թէ՛ անուն երբ փոխ կ'առնէին՝ խանգարելով իւրացընել կը ջանային։ Այսպէս Նէ՛ անունն ալ Սէ՛ անունէն յեղաշրջած են ՀՆՈ և ՀՍՈ տառերը տեղափոխելով, ինչպէս ՄՔ Ա՛-հէ՛ աստուածուհւոյն անունը յետոյս յաւալ կարդալով իրենց Տի՛-ոս աստուածուհին անուանած են։

աւան օր հորիզոնէն վեր անշարժ կեցաւ»։ Չարկ չկայ ըսել որ այս պատմ օրուան թուոց առաւելութիւնը Անէացւոց սովորութիւնն եղած թուոց չափազանցութիւն ընելը սիրելնուն է։ Ովիդիոս Նասոն հեթանոս բանաստեղծը իր Ֆաստոն կոչուած երեւակայական պատմութեան մէջ կ'ըսէ թէ Ռոմ մը ամբողջ օր մը կորուեցաւ։ Նոյն պատմութեան մէջ Յաթօն քանանացի իշխանին անունն ալ մշած ըլլալն յայտնի կ'ընայ թէ Փիւնիկեցիներէն առած է այս պատմութիւնը, որոց դէմ Յեսուայ պատերազմած առեն պատահած է այս հրաշալի իրողութիւնը։

Յոյն դիցաբանութեան մէջ Սամիսոնի քաջութիւնները կը հատուածուին Հերակղեայ անձին վրայ պատմուելով։ Յեփթայեայ ուխտը՝ կրեակի իգումինէս թագաւորին վրայ. Նարուբոդոնոսորայ մարդկային ընկերութենէ արտաքսուիլն և անբաններու հետ մինել դատապարտուիլը՝ Արկադացւոց Լիկայոն թագաւորին վրայ։ Լիկաւիրոն ալ նոյն Հերակղի անուամբ Յուշեանու իրքը կը հատուածէ։

«Ջերեքգիշերեան՝ ատիւծոյս է բան,
«Ջոր կու կասաղին շուն Տըրիթոնեան.
«Յոր յաղիս՝ յօշեաց ըզթոք նորուն բաց,
«Ջեռաւ անկըրակ՝ ի հալոց քըրտաե»։ Ջոր մեկնելով Յեցիս կ'ըսէ. «Վասն զի նա երեք օր Պտոլեմէոսի փորը մնաց»։ Ենէաս Գաղացին եւս (Ա՛ Թէոդոսիոս) կ'ըսէ. «Պատմութեան նայելով Հերքիւլէս կ'աղատի Պտոլեմէոսի փորէն, որ գինքը կու տուաւ, երբ խորտակեցաւ այն նաւը՝ որով կը նաւարկէր»։ (Ի Գըրովա. ճշմրտ. Բէյռութ. ի Ծան. 68։) Փորձութիւն կու գայ մարդոյ հաւատալ՝ թէ մի՛ գուցէ Բենիամինեանց՝ Սելովի աղջիկները տարեկան տօնի պարուց առեն հափշտակելնին (Դատ. ԻԱ. 19—24.) կամ անոր հետեւողութիւնն ըլլայ՝ Հռոմուլեանց զԱբրինուհիս

առեւանգելը։

Մովսէսի և Եղիայի գոհերուն հուբբ յերկինից ընդունելութիւնը կը հաստատեւք Քրիստոսական կրօնից ոխերիմ թշնամւոյ ուրացողին Յուլիանոս խոստովանութեամբը (ը 'է ժե· Գէ- կէ-էէ)· «Արհամարհէք ասէ հանել 'ի սեղան զպատարագս, զի հուբ յերկինից ո՛չ լիջանէ ծախել զնոսա, որպէս առ Մովսէսիւն։ Զի այս երկից և եթ պատահեաց· մի՝ Մովսիսի, և յետ նորա Եղիայի թեղբացւոյ»։ Այսպէս կը վկայեն և Մենանդր, ('է փէ-ՆՀ պոփոֆբոՆՆեան է-բոս·) Յովսեպոս և այլք։

Այսչափ Հին կտակարանաց հրաշալեաց վրայ։ —Նոր կտակարաց վաւերութեան և անոնց պատմութեանց ճշմարտութեանը վրայ ալ արժան կը համարինք քաղուած մը ընել Տօ՛քթըր Ա՛նկլըս Անգլիացի մատենագրէն (ը 'է Նէբ-թ Ս· Գբ-ց Մասն Ա· Գվ· ե։)

«Թէ՛ այն Քրիստոնեայ հեղինակները՝ որոնք Առաքելոց ընկերներն էին, և թէ՛ անոնք որ թէպէտ Առաքելոց ընկեր չէին, Առաքելական ժամանակին մօտ ծաղկեցան՝ միշտ Նոր կտակարանին գիրքերուն վրայ այնպէս կը խօսին, որպէս թէ անոնք բուն Քրիստոսի աշակերտներուն գրութիւններն են, և թէ անոնց մէջ պատմուածներն ալ ճշմարիտ են։

«Առջի չորս դարերէն յիսունէն աւելի հեղինակներ ունինք՝ որոնց գրութիւնները ամբողջ կամ հատակոտոր մինչեւ հիմայ կան. ասոնք վկայութիւն կու տան թէ Աւետարաններուն մէջ պատմուած բոլոր դէպքերը ճշմարիտ են։ Հերոնիմոս 392 վկայութիւններ մէջ կը բերէ ուրիշ գրեթէ 80 հեղինակներէ՝ որոնց գրութիւնները հիմայ կորսուած են։ Այս հեղինակներն, Եփրաեմէն մինչեւ Պիրենեան լեռները, Հիւսիսային Գերմանիայէն մինչեւ Ափրիկէի Սահարա անապատը, աշխարհիս այլ և այլ ե-

կիրներուն մէջ կը բնակէին. և Ասորերէն, Յունարէն և Լատիներէն կը խօսէին։ Ասոնք բազմաթիւ Քրիստոնեայ եկեղեցիներու ընդունած ճշմարտութիւնները, Քրիստոնեայ հեղող շատ մարդոց ալ նոյն ճշմարտութեանց համար տուած վկայութիւնը յիշելով՝ միաբան են թէ Նոր կտակարանին գրութիւնները հարազատ և ճշմարիտ են. նաև անոնց մէջ վկայութիւն կը բերեն։ Նոր կտակարանն իրբեւ որոշ և ընդհանուր ընդունուած գիրք մը կը յիշեն. անոր վրայ մեկնութիւններ ու բացատրութիւններ ըրած են. վերջապէս անիկայ իրբեւ Աստուածային յայտնութիւն կ՛ընդունին։ Հերետիկոսներն ալ՝ որոնք հաւատացելոց ընդհանուր եկեղեցիէն զատուած էին, նոյն գրոց պատմութիւնները իրբեւ ճշմարիտ կ՛ընդունէին. մինակ անոնցմէ հետեւած կամ յառաջ եկած վարդապետութեանց նկատմամբ ուղղափառաց հետ անմիաբան էին։ Քրիստոնէութեան չհաւատացողներն ալ, ինչպէս որ արդէն յիշած ենք, չէ թէ Նոր կտակարանի պատմութիւնները սուտ համարելով անոնց չէին հաւատար, այլ անոնց ճշմարիտ դէպքեր ըլլալը կ՛ընդունէին, սակայն այն դէպքերուն ուրիշ մեկնութիւններ տալով յիշեալ դէպքերէն Քրիստոնէից իրբեւ հետեւութիւն հանած վարդապետութիւններուն չէին ուզեր հաւատալ։ Աւետարաններուն մէջ պատմուած դէպքերուն իրօք կատարուած ըլլալն այնպէս ընդհանուր կերպով ճանչցուած էր, որ առջի դարուն սկիզբը ծաղկող Յուստինոս վկայն կ՛ըսէ թէ Քրիստոսի անուամբ Հօր Աստուծոյ աղօթք և գոհութիւն մատուցանողներ ամէն ազգի մէջ կան։ Յուստինոսէն 80 տարի ետքը Տերտուղիանոս կը պատմէ թէ գրեթէ ամեն քաղքի մէջ բնակչաց մեծ մասը Քրիստոնեայ էր։

«Հերթանոս և Հրէայ մատենագիրներ ալ առանց

ուղղակի Նոր Կտակարանին կամ անոր վաւերակա-
նութեանը վրայ խօսելու , ընդհանուր կերպով մը
Քրիստոսի և անոր աշակերտներուն կեանքը պատ-
մութիւնները կը հաստատեն . Յովսեպոս իր պատ-
մութեանը (յամի Տեառն 37—93) , Տակիտոս իր տա-
րեգրներուն (Ա· Տ· 100) , Սուետոնիոս իր պատ-
մութեանը (Ա· Տ· 117) , Ցոբնաղ իր երդիծանու-
թեանցը (Ա· Տ· 95) և Պլինիոս իր նամակներուն
մէջ (Ա· Տ· 103) Նոր Կտակարանին պատմական մա-
սերը կը հաստատեն :

«Նախնի Յոյն և Հռովմայեցի մատենագրաց և հին արձանագրութեանց մէջ յիշուած են չատ դէպ-
քեր՝ որոնք Նոր Կտակարանին պատմութիւններուն հետ համաձայն ըլլալով , անոնց հաստատութիւն կու
տան : Այս դէպքերուն չատը Նոր Կտակարանին գլխաւոր պատմութիւններուն չվերաբերիր , բայց և այնպէս անոր ու արտաքին աղբիւրներու մէջ տեսնուած այս համաձայնութիւնը յիշեալ Ս· Գրոց ճշմարտութեանը մեծապէս նպաստաւոր է : Եթէ մեր Արեւելեան հեղինակներուն պատմութիւնը շինծու ըլլար , անշուշտ անոնք այսպիսի մանր և երկրորդական դէպքեր չէին կրնար յիշած ըլլալ· կամ եթէ յիշած ըլլային , յիշեալ համաձայնութիւնը չէր տեսնուէր : Այս երկրորդական դէպքերուն կարգէն են Հռովմայեցւոց քաղաքական պաշտօնատէրներուն տիտղոսները կամ պատուանունները՝ որոնք Նոր Կտակարանին մէջ յիշուած են : Հռովմայեցւոց տէրութեանը մէջ քաղաքական պաշտօնատէրներն այլ և այլ քաղաքաց մէջ այլ և այլ անուններ ունէին : Ցիշեալ տէրութեան հպատակ քաղաքներէն ոմանք զինուորական դաշնակցութիւններ ըլլալով , անոնց պաշտօնատէրները Հռովմի կառավարութեան կողմէն կը դրուէին , և զինուորական իշխանութիւն ու իրենց համար սեպհական տիտղոս ունէին : Ու-

րիշ քաղաքներ Ազատ քաղաք կը կոչուէին . քանզի
անոնց բնակիչները , գէթ ըստ մասին , իրենց գոր-
ծերը ինքնիշխանելու իրաւունք ունէին . իրենց պաշ-
տօնատէրները կամ կառավարիչներն ալ իրենք
կ'ընտրէին : Այս պաշտօնատէրներն ալ իրենց հա-
մար յատուկ տիտղոսներ ունէին , որոնք գաղթա-
կան քաղաքներուն պաշտօնատեարցը ունեցած
տիտղոսներէն տարբեր էին : Արդ , հին մատենա-
գիրներ և հին արձանագրութիւնները կը ցուցընեն
թէ Նոր Կտակարանին մէջ Հռովմայեցւոց հպատակ
քաղաքներու պաշտօնատեարցը որուած անուննե-
րը՝ յիշեալ քաղաքներուն ունեցած իրաւանցը հա-
մեմատ են : Ցոր օրինակ , արտաքին պատմութենէ
գիտենք որ Փիլիպպէ քաղաքը գինուորական գաղ-
թականութիւն մըն էր . Նոր Կտակարանին մէջ ալ
այս քաղքին կառավարիչներուն Ցունարէն Στρατηγοί,
ψ Ջօրջ-Ֆըն-Ֆինէ տիտղոսը տրուած է , որ այն քաղ-
քին քաղաքական հանապատնացը համաձայն է : (Գործ.
ԺԶ· 20·) Իսկ անոր մօտ եղող Թեսաղոնիկէ , ինչ-
պէս որ արտաքին պատմութենէն յայտնի է , ազատ
քաղաք էր . ուստի Նոր Կտակարանին մէջ անոր հա-
մար ըսուած է թէ հասարակաց ժողով ունէր· (Գործ.
ԺԷ· 5·) Դարձեալ կը տեսնենք որ (Գործ. ԺԷ· 6·) այս
քաղքին կառավարիչներուն համար Ցունարէն Πολι-
τάρχαι ψ Ռոպ-ֆոպէթ ըսուած է : Այս վերջին տիտղոսը
հեթանոս մատենագրաց մէջ բնաւ չյիշուիր . բայց
այս բառին պատմական ճշմարտութիւնը յայտնի է
հին կամարի մը վրայ եղած արձանագրութենէն որ
այժմու Սէլանիկ քաղքին մէջ դեռ կը կենայ : Այս
արձանագրութեան մէջ նոյն Πολιτάρχαι (քաղաքա-
պետ) տիտղոսը յիշեալ քաղքի կառավարիչներուն կը
տրուի . և կ'ըսուի թէ անոնք եօթը հոգի էին :
Այսպիսի մանր բաներու մէջ անդամ պատմական
ճշդութիւն՝ մինակ սոսկ պատմութեանց մէջ կըր-

նայ տեսնուիլ. չինծու պատմութեան մէջ՝ բուն պատմութեան հետ այս աստիճան հաւասարակշռութիւն գտնուիլն անհնար է»:

Այս տեսակ պատմական հնագիտական ճշմարտութիւնները՝ հին և նոր կտակարանաց մէջ մրջնոց բազմութեան չափ կը զետեղուին, որք ամենեւին լիուլի ծանօթութիւններով գիտցընելու համար պատուաստած չեն, այլ իբր մանր և աննշան պատգայներ մէջ ինկած են. և ահա մէկ քանին օրինակի համար յիշեմք, որ միանգամայն մեծապէս օգտակար է Ուսանելեաց՝ Ս. Գրոց իմաստները լաւ ըմբռնելու համար:

Ջիհուսի քարոզութեան ժամանակ և անկից շատ առաջները Հռովմայեցւոց տէրութիւնը բոլոր տիեզերաց վրայ իր իշխանութիւնը տարածած ըլլալով, բոլոր իր իշխանութեան տակ գտնուած երկիրներուն թագաւորները երբ որ մեռնէին, անոնց յաջորդները Հռովմ երթալով կայսրէն պիտի ընդունէին իրենց թագաւորութիւնը: Ջիհուա՝ քանքարթագոյց ծառային առակին մէջ ասիկայ պրուցեց «Այր ոմն ազնուական դնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն, և դառնալ» ըսելով: (Ղ-ի. ԺԹ 12:) Ջիհուսի առակին առաջին կարեւոր պարագան չէր ասիկայ. անոր պատմական ձեւին վերաբերեալ երկրորդական պարագայ մ՚էր այս, որ ճշմարտանման միայն ըլլար՝ հերիք էր, բայց և այնպէս՝ անոր մէջ ալ ճշմարտութիւնը կը պահէ:

Ասուած կը հրամայէ Մովսէսի՝ ինչպէս նաեւ հրեշտակը՝ Ջհուսայ, որ հողաթումները կօշիկները հանէ, քանզի կոխած երկիրդ կ՚ըսէ Նուիրական է, Տէրոջ կը վերաբերի: (Ելէց. Գ. 5: Յհսու. Ե. 15:) Անուանի առակին մէջ ալ հայրը՝ զղջացող որդւոյն կօշիկները հագցընել կը հրամայէ: (Ղ-ի. ԺԵ. 22:)

Անտարակոյս պատմութեան հնուա եղողը կը յիշէ թէ՝ ի հնումն ծառայք սորուկք՝ բոկոտն կը շրջէին, և ըստ նոցանէ՝ ստորինք վեհապուներից առջեւ ներկայացած առեներին կօշիկները կը հանէին. (Հայաստանեայց Եկեղեցականաց մէջ դեռ եւս կը պահուի այս սովորութիւնս, հողաթումները հանելով կը մերկանան իրենց մեծաւորաց քով. ժամարար Քահանայն ալ՝ ի պատարագին՝ երբ ծառայական կերպարանք կ՚առնու՝ պահակաւոր սաղաւարտին հետ հողաթումները ալ կը մերկանայ.) ուստի Ասուծոյ՝ Մովսէսի և Ջհուսայ հրամայելը որ կօշիկները լուծեն, հասկցնելու համար էր թէ իրեն իսօսակիցը՝ իւր ծառայակիցը կամ հրեշտակ չէր, այլ իւր Տէրը՝ Ասուած էր. ինչպէս նաեւ սորկացող և զղջացող անառակին կօշիկ հագցընելը կը նշանակէր վերստին յաշատութիւն՝ յորդիութիւն ընդունիլ:

Յովք իւր բարեկամաց կ՚ըսէ. գնամ թէ, ոչ տեսանիցեմք զարեգական լուսաւորիչ նուաղեալ, և պուսին մաշեալ. և ո՛չ ի նոցանէ, եթէ խաբեցաւ գաղտ սիրտ իմ. եթէ ձեռն եդեալ ի վերայ բերանոյ իմոյ համբուրեցի. ապա այն ի մեծ անօրէնութիւն համարեացի ինձ: (Լ.Ա. 26—28:) ի հնումն արեւապաշտք՝ ի ծագել արեւու՝ ողջունելով զայն՝ ձեռքերնին բերաննուն վրայ կը դնէին կը համբուրէին, և դէպ ի գլուխնին ճակատնուն տանելով՝ արեւու կը յուցընէին, իբր իրենց խզձերը և բերնի խոստովանութիւններն ու ուխտերը կը նուիրէին անոր. (յորմէ սկիզբն առած է բոլոր Ասիաբնակ ազանց և անոնց հպատակողաց մէջ պիրար ողջունելու առեներն ընդհանրի սովորութիւնը:) Ցովբ՝ միայն «թէ որ արեւու երկրպագութիւն ըրի և ուխտեր ուխտեցի, անօրէնութիւն գործած եղայ» ըսելու ըլլար՝ հերիք էր, բայց ըստ որում ողջանաւոր կը գրէր, բանաստեղծական ոճովն

անանկ հանճարաբանութիւն մը կ'ընէ, որ անով հնագիտական մեծ ճշմարտութիւն մ'ալ կը յայտնէ։

Այսպէս՝ Ս. Գիրքը՝ փոխանակ ըսելու թէ Աստուած Աբրահամու հետ դաշինք դրաւ անլուծանելի, հրամայեց կ'ըսէ Աստուած Աբրահամու զոհեր պատրաստել, երեւեան երինջ մը, քօշ մը, խոյ մը, աղաւնի մը և տատրակ մը, ե. զանոնք երկ'երկու կտոր ընելով դէմ դէմի շարել. նա ալ այնպէս ըրաւ. «Եւ իբրեւ արեւն 'ի մուտս լինէր, բոցք հատանէին, և ահա հնոց ծխեալ. և ճառագայթք հրոյ անցանէին ընդ մէջ անդամոցն յօչխլոց։ Յաւուր յայնմիկ եդ Տէր ուխտ ընդ Աբրահամու եւ» (Ծննդ. ԺԵ։) — Յայտնի է հնագիտաց որ 'ի հինեն ամենաւանդ առ Քաղդէացիս յորոց էր և Աբրահամ, սովորութիւն կար, որ երբ երկու իշխաններ կամ թագաւորներ դաշինք դնէին մէջերնին՝ զոհերով կը կնքէին դաշինքնին, և Աբրահամու հրամայուածին պէս՝ զոհերնին երկ'երկու կտոր ընելով դէմ դէմի կը շարէին անդամութիւները, և դաշնադիրք անոնց մէջ տեղէն անցնելով բաղնին առջեւ կ'երթային ուխտերնին խոստովանելու, և ուխտադրուժին վրայ Աստուածութիւնը վրէժխնդիր հրաւիրելու համար։ Մովսէս՝ թէ'եւ Քաղդէացւոց այս սովորութեան վրայ բան մը չխօսիր՝ Աստուծոյ Աբրահամու հետ դրած ուխտը հաստատելու համար ժամանակին 'ի գործ դրուած սովորութեամբ վարուած ըլլալը պատմած առեն, բայց յայտնի է որ իւր գրքոյն հրատարակուած առեն իրրեւ ծանօթագոյն բան մը նկատած է զայն. հետեւաբար և իւր գործոց ճշմարտութեան մեծ ապացոյց մը թողած է մեզ իւր այս հնախօսութիւնը։

Մովսէս ստիպուած ըլլալով գրի հարկանել Եբրայեցւոց նահապետաց երբեմն երբեմն Եգիպտոս իջնելու ստիպուելնին, անանկ տարբեր պարագայ-

ներով կը պատմէ անոնց եղած ընդունելութիւնները՝ առանց պատճառները զրուցելու, որ 'ի վերին երեսս իրաց ընթացքին անպատեհութիւն մը կ'երեւնայ. բայց և այնպէս պատմագէտ մը կը տեսնայ որ պատմական ճշմարտութիւնք բոլորովին կը հաստատեն զայն։ — Աբրահամ հովիւ և թագաւոր ըլլալով՝ (քանզի թագաւոր կ'ըսուէին առ արտաքինս նոյն իսկ նահապետք, և անոնց ալէս քանի մը հարիւր հոգւոյ իշխողք մը հրամայողք եւն.) երբ Եգիպտոս իջաւ սովի պատճառաւ, փարաւոնք մեծ ընդունելութիւն տուին անոր՝ կ'ըսէ Մովսէս. (Ծննդ. ԺԲ. 14—16.) բայց երբ անոր որդին Իսահակ հովիւը նոյնպէս սովի պատճառաւ Եգիպտոս իջնալու կը պատրաստուէր, «Երեւեցաւ՝ կ'ըսէ՝ նմա Տէր և ասէ. մի' իջաներ յԵգիպտոս», (ԻԶ. 3։) իսկ անոր որդւոյն Յակովբայ հովուին՝ «Մի' երկնչիր իջանել յԵգիպտոս» ըսաւ Աստուած՝ կ'ըսէ. (ԽԶ. 3։) Նաեւ՝ կը յաւելու Մովսէս՝ թէ «գարշելի է եգիպտացւոց՝ ամենայն հովիւ խաշանց». (ԽԶ. 34.) «Եւ ո՛չ կարէին եգիպտացիքն ուտել հաց ընդ եբրայեցիսն, քանզի գարշելի էին եգիպտացւոցն»։ (ԽԳ. 32։) Այս ամենը վեր 'ի վերոյ կարդացողը չկրնար միաբանել իրարու հետ. բայց Մանեթովէ եգիպտացւոյ պատմագրութիւնը կը միաբանէ ասոնք։ Ասիկայ կը պատմէ թէ Քրիստոսէ իբր 2150 տարի մը յառաջ թափառական հովիւներ գալով տիրեցին եգիպտացւոց երկրին, և թագաւորեցին հոն, որք և ըսուեցան Հէ-կոոտ, ցր Հ-ՔՒ-ՔԵՖ-ՈՐՓ. ասոնց թագաւորութեան առեն էր Աբրահամու յեգիպտոս իջնելը. ուստի և բնական էր հովիւ թագաւորաց պատուաւոր ընդունելութիւն ընել Աբրահամու պէս հովիւ թագաւորի մը որ հիւրընկալութիւն կը խնդրէր։ Բայց Հիւկսոք չէին թագաւոր յեգիպտոս Աբրահամու իսահակ

որդւոյն աստենը · զի այս Հիւկսոսք այնչափ բռնացան բռատացան անդթացան Եգիպտացւոց վրայ, որ վերին Եգիպտոսի թագաւորք միաբանելով՝ յամենայն զօրութենէ պատերազմեցան անոնց դէմ, և վանեցին զանոնք երկրէն, որք յայնժամ փանացուց երկիրը քաշուեցան · ուստի և Եգիպտացւոց յոյժ գարշելի եղաւ հովուաց յիշատակը, և ազգովին կրօնական ատելութեամբ մ'ալ համակուելով հաց անգամ չէին ուտեր ո՛և իցէ հովուի հետ, որպէս զի վերստին բարեկամութեան պատրուակով անոնց բռնութեան չենթարկին · և զգուելի եղան իրենց ամենայն հովիւք, մանաւանդ փանանացւոց կողմերը բնակողները, ուր և Եբրայեցւոց նահապետք կը բնակէին : Ասոր համար Աստուած խոհակին հրաման չտար Եգիպտոս իջնելու, քանզի նոր վռնտուէր էին Հիւկսոսք հոնկէ, և խոհակ թէ որ հոն իջնէր, Եգիպտացիք իրենց առաջին կատաղութեան մէջ բզիկ բզիկ կը պատառէին զինքը · բայց Յակովբայ հրաման կու տայ և «մի՛ վախնար» կ'ըսէ, զի իրրեւ հովիւ իշխան՝ իրաւացի էր որ անոնցմէ վախնար · բայց որդւոյն Յովսէփայ Եգիպտոս իշխան ըլլալը կրնար երաշխաւորութիւն ըլլալ իրեն կենացը : Գեսեմի երկիրն ալ նոյն պատճառաւ որուեցաւ իրենց որ մեկուսի բնակին Եբրայեցի հովիւք · (Ծն· 34·) — Յակովբէն ու Յովսէփէն ետքը երբ փարաւոններն ալ մեռնելով՝ Հրէից երախտեաց անծանօթ փարաւոններն սկսան Հրէից վրայ գաղանանալ նէ՝ նոյն Հիւկսոսաց բռնութիւններու երկիւղին պատճառն էր : «Եկաց այլ թագաւոր՝ որ ո՛չ գիտէր զՅովսէփ · և ասէ ցազգն իւր · ահա ազգ որդւոցն Իսրայէլի մեծ է զբազմութենէ, և զբազմայ ւմն ընդ մեզ · արդ եկայք հնարեսցուք ինչ նոցա, գուցէ բազմանայցեն, և յորժամ դիպեսցի մեզ պատերազմ՝ յաւելուցուն և նոքա ՚ի թշնամիսն · և մարտուցեալ ընդ

մեզ, ելանիցեն յերկրէ աստի» · (ԵԼԽ· Ա· 8—11·) և վասն որոյ ծնուցիչ մանկաբարձները որսալ չը կրցան նէ՝ բաց յայտնի հրաման տուին Եբրայեցւոց նորածին արու մանուկները գետաւոյն կորնցնելու։ Ահա մեծ պատմական ճշդութիւն մը՝ որ դիպաց ընթացքով կը բացատրուի, և արտաքին պատմութեան հետ հաւասար կը քայլէ, և որ մեզի իբրեւ պատմական տեղեկութիւն չէ նկարագրուած · որմէ մերկապարանոց կ'երեւնայ՝ թէ Մովսէս պարզօրէն իրաց ընթացքը նկատեր է պատմել, ճիշտ ինչ դէպքեր որ պատահեր են, ուստի և անոր մէջ ճշմարտութիւնը անպատճառ պիտի գտնուի · ասանկ չեն կրնար՝ խաբել ուզող մտաւորականներ մտածել և գրել · անոնք իրենց խաբէութիւնները պարզելու՝ հակասութիւնին ծածկելու պատրուակներն ալ մէկտեղ կը կարկատեն :

Ս· Գիրք պատմութեան չարունակութեան կարգէն ստիպեալ ուրեք ուրեք կը յիշեն թէ այս ոք և այն ոք տանուտեարք քաղքին դռներն ելան հիւր վինտռելու (Ծննդ· ԺԹ· 1։ ԵԼԽ· Բ· 20·) այս ոք և այն ոք ճանապարհորդ այս ինչ և այն ինչ քաղքին դուռը կամ հրապարակը կամ աղբիւրին (ջրհորին) քով նստեցան պիրենք ժողվուղ՝ հիւրընկալող մը գտնելու համար · (Ծննդ· ԻԴ· 11·30։ ԽԹ· 2։ ԵԼԽ· Բ· 16։ Դ-ոց· ԺԹ· 15·) սակարկութիւն, առուտուր, վճռ, դատաստան, խորհուրդ ևն ունեցողներուն համար ալ կ'ըսեն թէ քաղաքին դռները ելան (Ծ·ննդ· ԼԴ· 20։ Բ· Օրէնս· ԻԲ· 15—24։ ԻԵ· 7—10։ Ա-ի· ԼԱ· 23։ Հ-ռ· Դ· 1—13·) պատերազմական զօրաց համար ալ կ'ըսեն թէ քաղքին դրան հրապարակը ժողվուեցան չարուեցան ևն։ (Բ· Մ-ց· ԼԲ· 6։) Յիսուս Քրիստոս ալ յԱւետարանի անդ եկեղեցւոյ համար կ'ըսէ · «և դրունք դժոխոց չնա ի՛ յաղթահարեսցեն» : (Մ-ռ· ԺԶ· 18·) Չարիչ չկայ ըսել՝ թէ քանի՛

անհրաժեշտ են այս խօսքերը պատմութեան անտեղեակ եղողներուն. զի Սուրբ Գիրք այս խօսքերը խիստ բնական և սովորականի պէս պատմելով՝ ամենեւին լուսաբանելու չնայիր, զի և նորա նպատակն է միայն կրօնական գաղափարները մանր բացատրել. բայց պատմութիւնը կը հաստատէ՝ թէ՝ ի հինգ հարիւրհորդ աց յառուկ իշխաններ՝ պանդոկներ շինելով քաղաքները, օտարականք՝ ժողովուրդ գտնելու և տանուտեարք՝ հիւր գտնելու համար քաղքին դռները կ'ելլէին։ Հոն կ'ըլլային նաև քաղքին մեծ հրապարակները, ուր կը ժողվուէին ամեն անոնք՝ որ առուտուր, դաշնադրութիւն, դատ, վէճ կամ ժողովք ունէին. հոն կ'ըլլային դատաստանարանները, պատերազմական առեանները և պատերազմիկ զօրքերը. ուրեմն Քրիստոսի՝ եկեղեցւոյ համար ըսածը՝ կը նշանակէր ժողովքի զօրաւոր զօրութիւնները՝ այս է հմտարուեստ հակառակորդաց հերետիկոսաց հերձվածոց հեթանոսաց անաստուածից բռնակալաց բոլոր զօրութիւնները՝ պիտի փշրին եկեղեցւոյ յաղթաւոր զօրութեան առջեւ. յայս միտս՝ և Քրիստոս ըսելը՝ թէ «Օտար էի և ժողովեցէք» կամ «ո՛չ ժողովեցէք զիս» (Իե. 35. 43.) բարոյական առաքինութեան կամ յանցաւորութեան նշանակութիւն կ'առնու։ — Այսպէս ահա պարզօրէն պատմաբանուած պարագայներէն պատմական մեծ ճշմարտութիւններ կ'երեւնան, որ պատմաբանին անկեղծ ճշմարտասիրութեան հզօր ապացոյցներէն են եւ։

Ս. Գիրք այլ և այլ աշխարհաց տիրող թագաւորները անուանելու առեն կը տեսնենք որ անոնցմէ ամանց որդւոց որդի և կամ յաջորդաբար նոյն անուններն կու տայ, մինչդեռ ուրիշներուն անանուն չըներ։ Եգիպտացւոց թագաւորները՝ Աբրահամու առեն էն սկսեալ մինչեւ Սողոմոնի առեները՝ լոկ փարաւոն անուամբ կ'անուանէ՝ իբրեւ պատուոյ պաշտօնի անուամբ, զի ֆարաւոն կը նշանակէ։ (Մնդ. ժբ. 15։ Իշ. 1։ եբ. Ա. 11։ գ. 10. եւ։) Սողոմոնէն մինչեւ Աղեքսանդր Մեծն եւս թէեւ շատերը նոյնպէս փարաւոն կ'անուանէ, բայց բուն յատուկ անուններն ալ յիշատակ կը պրուցէ. փարաւոն Նեխաովի, փարաւոն Վափռա եւ ըսելով. (Դ. Թագ. ԻԳ. 29։ Երեմ. Խդ. 30.) բայց Աղեքսանդրէն առաջն՝ որ տիրեց Եգիպտոսի, և այնուհետեւ ըստ արտաքին պատմութեան տիրեցին Պտղոմեանք, Պտղոմէոս կ'անուանէ ո՛չ իրր պատուոյ անուամբ, այլ իրր սեպհական անունով անոնց ամեն մէկը՝ իրենց յատուկ մականունովը մէկտեղ. ինչպէս, Պտղոմէոս Եւերգետես, (Բուբերը,) Պտղոմէոս Փիլոպատոր, (Հայրութը,) Փիլոմետոր, (Եպիտրութը,) Եպիփան, (Եւթելէ,) Փիլադելփոս, (Մայրութը,) եւ։ (Ա. Մակ. Ա. 19։ ժ. 51։ ժե. 16։ Բ. Մակ. ժ. 15։ Գ. Մակ. Ա. 1։ է. 1. եւ։) — Այսպէս նաեւ ընդհանրապէս իրրեւ պատուոյ պաշտօնի անունով Աբիմելէք (ի Հայր. Նախաօր) կը կոչէ փղշտացւոց թագաւորները. (Մնդ. ի. 2։ իջ. 1.) Ափոք՝ Ասղէկացւոց թագաւորները. (Ա. Թագ. ժե. 8։ Գ. Թագ. ժԱ. 14.) և Բենհադադ (Որդի Աբեհան) Դամասկոսի թագաւորները։ — Հռովմայեցւոց թագաւորներն ալ կայսր կ'անուանէ Յուլիոս կեսարէն սկսելով. (Ղուկ. Բ. 1։ Գ. 1։ Գործ. ԻԵ. 8—21։ իջ. 32։ ԻԷ. 24։ Փիլիպ. Դ. 23.) բայց միւս ազգաց իշխանները որ թագաւոր անունէ զատ ուրիշ պատուոյ իշխանութեան անուններ չունէին, անոնց Նախաօր անունը կու տայ միշտ։ Ս. Գիրք իր այս բանեցուցած լեզուին վրայ ամենեւին բացատրութիւն մը չտար մէկ տեղ մը. պատճառը միայն արտաքին պատմութեան մէջ կը գտնեմք. զի Ս. Գիրք ժամանակին սովորութեանց կը հետեւի միայն։ Չնարաւո՞ր բան է որ սուտ կամ չինծու պատմութեան մը մէջ ա՛յսչափ նոյնութիւն ճշդու-

թիւն գտնուի՝ իրաց ճշմարտութեան և բոլոր աշխարհի ապգաց պատմութեան հետ։

Ղուկաս Աւետարանիչ կը պատմէ թէ Յիսուս փարիսեցիին տունը ճաշ կերած առեն մեղաւոր կին մը անոր ետեւը կեցաւ, և ետեւէն անոր ոտքները իւր արցունքներովը կը թրջէր, հերովը կը ջնջէր, կը համբուրէր և կ'օծէր։ (Է. 36—38։) Յովհաննէս ալ կը պատմէ թէ վերջին ընթրեաց պատեհաւեղանին վրայ Յիսուսի քով բազմող աշակերտը (Յովհաննէս) դանխուլ յայտոց Յիսուսի ականջէն քան հարցընելու համար անոր կուրծքին վրայ ինկաւ՝ փառեցաւ։ (Ց.Գ. 24—25։) Աւետարանիչք իրրեւ՝ ամենուն դիւրիմանալի՝ յոյժ բնական բանի մը պէս կը պատմեն ասոնք։ բայց մեզ դժուարիմանալի մնացեալ թէ անիմանալի են։ ինչպէս կարելի է երբ որ մէկը՝ ըստ Աբեւելեայց՝ ոտքերը տակը ծալած, գետնատարած տեղանի մը առջեւ, և կամ ըստ Եւրոպացւոց՝ սիոռի վրայ՝ բարձր դրուած տեղանի մը առջեւ նստած ըլլայ, անոր ետեւի կողմէն մէկը ոտքերուն հասնիլ կարենայ, և կամ քովը նստող մը՝ ականջէն բան հարցընելու համար անոր լանջաց փարելու պարտաւորեալ ըլլայ։ Հոս ալ դարձեալ յայտնի կ'ըլլայ Ս. Գրոց ոճաբանագրաց անկեղծ ճշմարտասիրութիւնը, որով պարզապէս իրաց եղելութիւնը կը նկարագրեն, և չեն ջանար բացատրութիւններով ճշմարտանման յօրինելու մտածութիւններին։ այլ հնախօսութիւնը կը պարզէ մեզ այս ալ, որ Հրէայք Պարսից իշխանութեան տակ իյնալնուն ետքը անոնցմէ առած ինչ ինչ սովորութեանց հետ այս սովորութիւնս ալ առեր էին։ որ ընդունելութեանց՝ մեծահաց ճաշերու և կոչունքներու առեն գետնի վրայ փռուած տեղանի մը առջեւ քովնտի ընկողմանած՝ և մէկ թեւերնին բարձերու վրայ կրթնած հաց կ'ուտէին։ գլուխնին՝

ձախ կողմերնին բազմողին կուրծքին մօտ, և ոտքերնին ալ կողմերնին բազմողին կռնակի կողմը երկընցուցած, որով փարիսեցւոյն տանը մէջ պատահող կինը կրցաւ անոր ոտից մերձենալ, և Յովհաննէս ընթրեաց սեղանին վրայ անոր ալ կողմը բազմած լինելով՝ ականջն 'ի վար հարցուփն ընելու համար հարկադրեցաւ կուրծքին վրայ իյնալու։

Մարկոս Աւետարանիչ մեր Տէրոջ Յիսուսի համար կը պատմէ թէ գինքը իրրեւ Հրէից թագաւոր ծաղրած առեննին՝ ինչպէս որ ժամանակին թագաւորաց սովորութեան պէս անոր գլուխը թագի տեղ փշէ պսակ մը դրին, անանկ ալ ձէրմէն հագուցին անոր իրրեւ թագաւորական զգեստ։ (ժե. 17.) Ղուկաս ալ կը պատմէ թէ Հերովդէս եւս ծաղրելու համար անոր թագաւորութիւնը՝ ճերմակ վերարկու մը հագցուց անոր։ (ԻԳ. 11։) Հոս ալ Աւետարանիչք պարզապէս տեսածնին գրելու պէս կը պատմագրեն առանց բացատրութեան, թէ այս երկու գոյներուն տարբերութիւնը ինչ պիտի ըլլար։ բայց արտաքին պատմութիւնը կը միաբանէ ասոնք։ Ազգաց թագաւորութեանց մէջ՝ ձէրմէնն թագաւորական գոյն էր, ճերմակն ալ քահանայական և մարգարէական։ կամ ըստ հեթանոսաց՝ քրմական։ Քրմական պետութիւնք՝ ինչպէս նաեւ բազումք 'ի թագաւորաց օրք ժողովրդեան 'ի սպառ տիրելու համար քրմապետութիւնն ալ իրենց վերատեսչին, այս երկու գոյներն ալ կը գործածէին, զոհադրութեանց առեն ճերմակ՝ խորհրդոց առեաններու մէջ և արքունի հանդէսներու առեն ծիրանի, երբեմն եւս անխտիր այս կամ այն գոյնը հագնելով։ ինչպէս մեր օրերը Հռովմայ Պապերը՝ քահանայապետ միանգամայն թագաւոր ըլլալով երբեմն Հռովմայ, մերթ քահանայապետական գգեստիւք և մերթ թագաւորական թագիւ և ծիրանեօք հանդէսներու

գլուխը կ'անցնէին. երբեմն ալ՝ երկոքեան եւս կերպարանքէ՝ 'ի մի և 'ի նոյն հանդիսի։ Ուրեմն Հերովդէս եւս իրրեւ Քահանայ—Մարգարէ—Թագաւոր արհամարհեց և նախատեց զՅիսուս՝ անոր ճերմակ լաթ հագցընելով. . . ։

Յիսուս փրկիչ խաչին վրայ կախուած օրհասական տագնապներու մէջ երբ ցասադին ճչիւք «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողե՛ր զիս» գոչեց, քովը կեցողներէն մէկը (անտարակո՛յս՝ կենալու պահպանելու պարտաւորեալ Հռովմայեցի զինուորներէն մէկը՝ մեղքընալով և օրհասականի մը տագնապը դիւրելու՝ սրտին տապը բարեխառնելու մարելու համար՝) սպունգ մը քացախով լցած երկընցուց անոր որ խմէ՝ կ'ըսէ Մատթէոս։ (ԻԷ. 48։ Մ-ին. ԺԵ. 36։) — բնական չէր որ Հրէայք բերած ըլլային այն քացախը՝ Յիսուս խաչին վրայ ալ տանջելու համար, թէ՛եւ ամեն անպիտութիւն՝ անողորմ վկանք կը յուսացուէր անոնցմէ. զի Աւետարանչին նկարագրութեան նայելով՝ քացախը խմցընողը գերիտութենէ չարժեալ տուած կ'երեւնայ. ինչպէս ուրեմն ա՞ֆ ֆնուխեան՝ ջրոյ տեղ քացախ կու տայ. եթէ ծարաւելու տանջելու համար ալ քացախ տուին, բայց լեղիով խառնած տուին այն ատեն. (Ց-ՂՀ. ԺԹ. 28—30։ Ղ-ին. ԻԳ. 36։) — Աւետարանիչք՝ գայս եւս լոկ հանդիսատեսի մը պէս կը պատմեն, թէ՛եւ ճշմարտասէր մտաց հակառակ կամ սխալ երեւցած ըլլայ. բայց հնախօսութիւնը հոս ալ ճշմարտութիւնը կը պարզէ. Հռովմէական զինուորք՝ ջրոյ տեղ՝ քացախի դառնալ սկսած աւրուած գինի կամ ջրախառն թթու գինի խմելու սովորութիւն ունէին, իրենց ծանր վաստակոց մէջ տապերնին անցընելու համար. և ահա այս էր զոր գինուորը կը մատուցանէր փրկչին՝ առ գթութեան, և զոր Հրէայք եռքէն լեղիով խառնելով ուզեցին

խմցընել իրեն առաւել եւս տանջելու համար գինքը։ — Իսկ լեղւոյն՝ հոն գտնուելը բնական էր. ըստ որում Հռովմայեցիք մահապարտները սպաննելու առեն՝ գինուածով կամ լեղիով խառնուած գօրաւոր գինի կը խմցընէին՝ զանոնք թմրեցընելու համար. ինչպէս որ Յիսուսի համար ալ բերեր էին, զոր գինիով խառնելով տուին և չիմաց, յայտնելու համար որ կամաւ յանձն առած էր խաչին մահը։ (Մ-ին. ԻԷ. 34։ Մ-ին. ԺԵ. 23։)

Վերջապէս երկար կ'ըլլար (թէ որ չափէն ալ աւելի չեզաւ) եթէ այս տեսակ երկրորդական պարագայներու դեռ եւս կեցած չատ մը օրինակները մէջ բերէինք, որք Ս. Գրոց պատմութեանց առաջին նիւթերը չըլլալով՝ չգտնուէին ալ նէ միտս մը չուներ, և որք այսչափ հոծութեամբ կարելի չէր որ տուտ կամ չինծու մատենից մէջ գտնուէին. բայց Ս. Գրոց պատմութեանց ամեն մասանց մէջ առանկ հնախօսական երկրորդական պարագայներ՝ պարզ նկարագրութեան ձեւով առանց բացատրութեանց իրրեւ ծանուցեալ ճշմարտութիւններ յառակ բերուած ըլլալը՝ անոնց ճշմարտութեան փաստին մեծ և հզօր ապացոյց է։

Ս. Գրոց պատմութեան ոճին պարզութիւնն ալ որ մէկ ուրիշ հարկաւոր պարագայ մ'ալ այս է, և այն պարզութեանը մէջ վեհական ազդուութիւնը զոր ունի, ատոնք ամենը հարկաւորապէս կը բռնադատեն զմարդ կանայ ակամայ խոստովանիլ և վճռել Ռուսոյի հետ (ՇԵՆԼԷՈՆ.) թէ «Սուրբ Գրոց խօսքերը՝ զորս ոչ ոք երկբայութեան կը տանի, այնչափ վիայութեան հաւաստիք չունին, ո՛րչափ Յիսուսի Քրիստոսի գործքերը ունին. (լսե՛ք՝ ողջոյն իսկ Ս. Գիրքերը։) Աւելի անհաւատալի է թէ չատ մը մարդիկ միաբանած ըլլան այս Ս. Գիրքը չարաշրելու, քան զայն որ առանձին մէկը պատրաստած ըլլայ

զայն։ Բնա՛ւ եբրայեցի մատենագիր մը կարող չէր երբեմն հնարել ո՛չ այն խօսքերու ազդուութիւնը, և ո՛չ անանկ բարոյական. ուր Աւետարանն ունի ճշմարտութիւններ վաւերականներ այնչափ մեծա-մեծ, այնպէս կենդանի և նմանեցընող ըլլալու այնքան դժուարին տիրապէս, որ մինչեւ անգամ հնարողը բուն Այն Դիւցազնէն աւելի հիացուցիչ կ՚ըլլար։

Մենք ալ՝ ա՛լ հոս կանգ կ՚առնումք. Ս. Գրոց հրաշալեաց մին միայն հատատուելը՝ բովանդակ Ս. Գրոց ճշմարտութեան հաւաստիքը երեւան բերել է. երբ ո՛չ ոք բնաւ քանաչ պատճառաւ մը կրցած է անոր մէկ պարագան իսկ հերքել. միւս անոր դէմ բերուած դժուարութիւնները՝ ենթադրութիւնները են, (որ միտքին լուծուած են ամեն առեն.) և ինչպէս գիտեմք՝ ենթադրութիւնները պատասխանի փաստի՝ պատճառի զօրութիւն չունին. ենթադրութիւնները ճշմարտութիւն չեն. իբր ճշմարտութիւն վկայուած հաստատուած իրողութիւն մը՝ վկայուած ճշմարտութեամբ մը միայն կրնայ տապալուիլ կասկածի տակ ձգուիլ։ — Մենք կ՚ըսեմք. Ո՞րկից է Ս. Գրոց այս հրաշալեաց մասին ունեցած ան նոյն պատմութիւնը ան նոյն աւանդութիւնը՝ իրարմէ այնչափ տարաբնակ, մինչեւ իսկ աշխարհի միւս կիսագունտին վրայ բնակող ժողովրդեան բերանը գտնուիլը գրեթէ միեւնոյն հանգամանքներով։ Անհնարին էր որ այն ամեն աշխարհքները՝ մանաւանդ թէ Հնդկաստան և Ամերիկայ Մուխոս կամ այլոյ ուրումն մարդարէի գրուածները տեսած ըլլային, որոնք և ոչ Հրէից մէջ առանձնաւորաց քով կրնային գտնուիլ, մինչեւ գրեթէ Զօրաբաբելեան տաճարէն շատ հետքերը, և մինչեւ Գաղութեանց ժամանակները։ Հարկաւորապէս ուրեմն կը հետեւի ասկից թէ անանք ամենքը նախատուր աւանդ-

դութենէ մը ուսեալ գիտէին այն ամեն բան, որ Ի նախածնողաց մարդկութեան իւր բոլոր սերնդոց աւանդուեցաւ, անոնցմէ ալ հետեւեալ ազգաց ածանցուեցաւ, որք երկարակեաց ըլլալով՝ և այն աւանդութեանց իրողութեանցը հաստատուն չիշատակարանները ունենալով՝ մինչեւ գրչութեան ժամանակները պահեցին գանոնք՝ գոնէ ըստ տարերցին։

Ապա ուրեմն Ս. Գիրք Աստուածոյ են ներշնչեալ. զի առաջին մարդը նախ քան զինքն եղած բաները ինքիրմէ չէր կրնար գիտնալ և իւր սերնդոց աւանդել. բնա՛ւ ամենեւին պատճառ մըն ալ չունէր ինքիրմէ անանկ բաներ ստեղծագրանելու, որ թէ ոչ ուղեր ալ՝ չէր կրնար, անվարժ անփորձ ըլլալով խարէութիւն յօրինելու։ Ո՛չ ալ Ս. Գրոց մատենագիրք յետ այնչափ ժամանակաց՝ այնչափ ճիշդ և ճշմարիտ պատմութիւն գրել, որ բովանդակ տիեզերաց հանրական աւանդութեան հաստաձայն ըլլալին հանդերձ՝ բնական միտքոց գիտութեանց ալ համաձայնէր ամենայնիւ։

Հետեւեալ յօդուածով Ս. Գրոց՝ բնական միտքոց գիտութեանց առջեւ ալ ճշմարիտ գտնուելուն վրայ պիտի խօսիմք։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Ս. Գրոց Բնաքննութիւնը

Ս. գիրք թէ՛ւ կրօնական ուսմանց դաստգիրք ըլլալու համար, տրուած են և ո՛չ թէ արտաքին գիտութիւնք և ուսմունք սորվեցընելու համար, բայց և այնպէս՝ իբրեւ Աստուածաշունչ գիրք, իբրեւ Ցայտնութեան մատեան, իբրեւ ճշմարտու-

թեան դանձարան, անոնց ամեն մէկ խօսքերուն մէջ անտարակուսելի ճշմարտութեան յատուկ լոյս պէտք է փայլի. զի կրօնական գրքին արբազնութեան կամ Աստուածայնութեան են մեծ նշանը այս է։ — Ըստ սկզբանց ըստ այսմիկ՝ քննելով՝ ի ըսկզբանէ և այսր երեւցած բոլոր կրօնից նուիրական անուանեալ գրքերը, կը տեսնեմք որ այն ամեն կրօնից քիչակարկատները, փիլիսոփայներն ու օրէնդիրները խիստ չատ բաներ սորվեցուցած են բնութեան իսկ հակառակ, ամեն օր բուն իսկ աչքովնիս տեսած բաներուն իրողութեանց հակառակ. և ահա ասով կը տարբերին հիմնապէս մեր Ս. Գիրքերը՝ հեթանոս կամ անքրիստոնեայ ազգաց սըրբազան համբաւեալ մատեաններէն։

Բոլոր հին կրօնական դրութեանց և ամենէն անուանի նախնի փիլիսոփայից ո՛չ միայն Աստուածաբանութեան՝ այլ նաեւ բնական իրողութեանց վրայօք տուած ծանօթութիւններնուն են մեծ մասը անհեթեթ այլանդակութեամբ և անտեղութեամբ լի են։

Ըստ եգիպտացւոյն իմաստնոց՝ աշխարհս օդին շարժմամբը և բոցին դէպ ՚ի վեր ցոլանալովը կազմուած էր։ Թաղէս ջրէն ծնած է կ՚ըսէր աշխարհս։ Պլատոն կը սովրեցընէր թէ աշխարհս իմացական էակ մըն է, ճիշտ արդի նիւթաւորներուն ըսել ուզածին պէս։ Ըստ Ցուենց և Հռովմայեցւոց փիլիսոփայութեան՝ երկինք երկրիս վրայ հաստատուն կամար մը, կամ Արիստոտէլի ըսածին նայելով՝ աստեղազարդ գունտ մըն է։ « Որն յորձանս և մրրիկ հողմոյ համարեալ չուրջ զերկրաւ, հաստատուն կալ զնա կարծէ ընդ երկինիւք. և այլ ոմն իբրեւ զտաշտ ինչ տափարակ ՚ի վերայ օդոյ հաստատէ զայն։ (Պլուտոն ՚ի Փեդոն։) Եմպեդոկղէս՝ Արեգակը կրակէ բաղադրեալ և կրակի մեծ կոյտ մըն է կ՚ըսէր. և երկու

Արեգակ կը դնէր, մին սկզբնական և միւսն ղպալի. Փլորոս ուսոյց թէ « Արեգակը ապակեղէն հայելի մըն է, որ ընդունած լոյսը մեզ կ՚անդրադարձայտէ։ » Անաքսագորաս և Դիմոկրատէս « հրեղէն զանգուած մըն է » ըսին արեւը, այլ եւս « անիւ հրաւորբոք » եւս։ Զենոփիլոսոս կը վարդապետէր թէ աստղերն իրենց շարժմամբը բորբոքելով կը վառին, և իրենց կրակովը Արեգակը կը սընուցանեն։ Պիւթագորաս հոգեփոխութիւն կ՚ուսուցանէր, և Եգիպտացիք նոյն դաւանութիւնը միշտ ունեցան հոգւոց համար, և վանորոյ ծաղիկն հնարեցին՝ ոգւոց երկար դարեր չատ մը մարմիններու մէջ մանել ելնելն արդիլելու համար։

Բոլոր արեւելից նախնի աղդերը կը հաւատային թէ երկնաւոր մարմինները մարդոց ծննդեան, անոնց կենաց ընթացքոյ և ամեն մարդկային իրաց վրայ յաջող կամ ձախող զօրաւոր ազդեցութիւններ ունին. աստեղագիտութիւնը ամեն կրօնից մէջ յարգի էր. հմայք հռութուլունք ամեն կրօնից մասունքն էին, և ամեն ազգ և ազինք հանդամանայն կը հաւատային թէ բոլոր բնութիւնը բաղկացած է չորս տարերքներէ, ցհող, ջրէ, կրակէ և օդէ, մինչդեռ աստնք սկզբնական տարերք չեն, անբաժանելի պարզ նիւթեր չեն. և տարերք ըսուած սկզբնական գոյակները՝ թուով չորս չեն, չատ են, և անոնց ճիշտ հարաբերքը դեռ գտնուած չէ։

Հնդիկ փիլիսոփայութիւնը կ՚ուսուցանէր թէ երկիրս տափարակ է, եռանկիւնի և եօթնայարկ, ինչպէս նաեւ երկինք. երկիրս լրումին փղոց գլուխներու վրայ հաստատուած է, և երկրաշարժն ալ՝ անոնց գլուխնին ցնցելէն յառաջ կու գայ։ Զինացիք որ երկնային մարմնոց զննութեանց մէջ բոլոր աղգերէն հազարաւոր տարիներ առաջ աշխատած և չատ առաջ անցած աղգ մըն էին, կը վարդապե-

տեղին (և մինչեւ հիմայ) թէ երկինքը արեւու և լուսնի համեմատ մեծ վիշապ մը կայ, որ զանոնք կուլ տալ կ'ուզէ, և խաւարումները անոր յարձակմունքներէն կամ ետեւէ կու գան. վասն որոյ խաւարումանց ատեն մեծ աղմուկներ կը հանեն՝ պղինձի կաթսաներ և մեծ թմբուկներ ծեծելով, որ այն ահարկու հրէշը թողու զլուսաւորը բևեռնէ։ Մինչեւ 'ի փեքին կը տիրէ այս ծիծաղական աւելորդապաշտութիւնը։

Մեծապէս ուշադրութեան արժանի է այս արուեստը. հին հեթանոս ազգաց բոլորին ալ կրօնական դրութիւնները անոնց մոգերն ու իմաստունները սասանկ յայտնի անտեղութիւններ քարոզած առեն նին, իրենց մերձաւոր քիչ մը և ոչէտ ժողովրդեան մը քաղաքական չափ մատենագիրներ՝ որ Ս. Գիրքը գրեցին, և որք մեծաւ մասամբ՝ առանց դպրութեան, բնութեան գործոց անտեղեակ մարդիկ էին, այն սխալ և անճոռնի դրութեանց և կարծեաց չհետեւելէ և հեռանալու միտումի մէն ալ չյուշընկալէ զատ՝ անոնց կարծեաց նպաստաւոր երեւելու տող մը բան անգամ գրած չեն։ Ամենը այս ալ չէ։ 'Իմէջ զարմանալի և 'ի հիացումն աշխարհի. մինչդեռ աշխարհ դամայն՝ իմաստութիւնք և իմաստասէրք մոլորութեանց մրրկայոյզ հեղեղներուն մէջ պատանեցած ալ 'ի լիւղ կու գային, առանց բոլոր յայտնել ուզած և կամ անուղղակի պատճառած բնական իրողութեանց վարդապետութիւնը ճշդիւ հասկնալու կու գայ իրենցմէ հաղարաւոր տարիներ առքը հիմակուան միջոցով գտնուած գիւտերուն հետ։ — Ասիկա խօսուն ապացոյց մինն է՝ որ անոնք բոլոր իրենց գրածները ո՛չ թէ մարդկային ազբիւրէ կ'առնէին, ո՛չ թէ մարդկային ճարտարութեամբ և իմաստութեամբ կը գրէին, այլ բուն ճշմարտութեան աղբիւրէն՝ Աստուծմէ առնելով Աստուծմէ ներշընչուելով կը գրէին, և Աստուած էր՝ որ անոնց գըր-

չաց կ'առաջնորդէր ճշմարտութեան ճամբուն մէջ։

Եւ ահա՛ Ս. Գրոց կանոնէն յայտնած այն ճշմարտութիւնները որ արդի դիւտերուն համաձայն են, և որք անծանօթ էին նախնի փիլիսոփայից։

Նախ երկիրս իբրեւ գունդ մը ենթադրելով՝ կ'ըսէ՝ թէ «կախեաց զերկիր 'ի վերայ ոչնչի». (Յ-ԷՓ. ԻՋ. 7.) և երկնից կամ մթնոլորտի հաստատութեան համար ալ կ'ըսէ. «կանդնեաց զերկինս իբրեւ զկամար և ձգեաց իբրեւ զխորան»։ (Ե-ՕՅ. Խ. 22։) Երկրիս՝ այլոց յաղթահարելի աշխարհաց հետ բաղդատմամբ ունեցած չքոտի զանգուածը ցուցընելու համար եւս կը յաւելու. «և զերկիր իբրեւ զոչինչ արար»։ (Ա-Ր. Խ. 23։) Ա-յս եւս կ'ըսէ. «Երկիր' 'ի նմանէ ելցէ հաց, և 'ի ներքոյ նորա իբրեւ զհուր շրջեցաւ». (Յ-ԷՓ. ԻՐ. 6.) Ճիշդ արդեան երկրաչափից և բնախօսից քննութեանց և վարդապետութեան համաձայն, թէ երկրիս ընդերքն ու մորմոքը հրացեալ լոյծ վիճակի մէջ է։

Աստղաբաշխութեան պատմութեան մէջ ալ որոշ տարբերութիւն կը դնէ արարածոց առեղծման. աշխարհիս՝ բոլոր արարածներէն աւելի հնութիւնը ցուցընելու համար կ'ըսէ. «ի սկզբան արար Աստուած զերկինն և զերկիր։ և երկիր էր աներեւոյթ և անպատրաստ». (Ծննդ. Ա. 1—2.) Աներեւոյթ և անպատրաստ լսելովն ալ տարակոյս չկայ, որ երկրիս կազմութեան նախաւոր կապային վիճակը կը ծանուցանէ, զոր արդի բնագէտք կը հաստատեն։ Երկնից և երկրի ստեղծումէն ալ կ'որոշէ գործարանաւոր էակաց ստեղծումը. և ո՛չ միայն աւելի անկատարները՝ բոյսերը ծառերը առաջ կը դնէ, այլ նաեւ կենդանեաց մէջ ալ նախ ջրայիններն ու օդայիններն կը դնէ, ապա յետոյ ցամաքայիններն, և յետոյ ուրեմն հուսկ վերջը՝ զմարդ։ (Ծննդ. Ա. 11—12։ 20—21։ 24—30։) Ա-յս մասին Աստուածա-

չունչի պատմութեան ճշդութիւնը երկրիս մակերեւոյթին և անոր խորոց քննութիւններէն և հին յիշատակներէն կը հաստատուին :

Աստուածաշունչը երկնից համար կ'ըսէ՝ թէ «հուր ջրոյ ՛ի» (ցՎբ· ԼՀ· 18·) ինչպէս որ արդի ստեղարաշխք կը հաստատեն, և ո՛չ թէ հաստատուն գունտ, ինտոր որ հին փիլիսոփայք ումանք ըսին · լոյսն ալ՝ արեգակէն առաջ ստեղծուած՝ և անկէ անկախ տարր · (Ծննդ· Ա· 3—5: ցՎբ· ԼԱ· 26: ԼՀ· 19·) որով հայտնիներով տարիներ առաջ պրուցած կ'ըլլայ ի՛նչ որ հիմակուան բնագէտք նոր կը հաստատեն : Գալիլէոս՝ օդին ծանրութիւն ունենալը այս վերջին դարուս մէջ հաստատեց, մինչդեռ Աստուածաշունչ դիրքը 3000 տարիներէ առաջ ըսած է թէ Աստուած հողմոյ կամ օդոյ կշիռ դրած էր · (ցՎբ· ԻԸ· 25·) և ջրոց կամ ծովու և ցամաքի համար ալ կ'ըսէ թէ չափ դրաւ · (Առ· ԼՀ· 4· 5· 8· 10· 11: ԻԸ· 25·) և կարի իսկ քաջ · հիմակուան բնագիտաց նայելով՝ խիստ կարեւոր է ծովու և ցամաքի այժմեան համեմատութիւնը՝ շնչաւորաց և տնկոց առողջութեան և ապահովութեան համար : — Ջրոց համար ալ Ս· Գիրք կ'ըսեն թէ մեծ քանակութեամբ մը ցնդելով դէպ ՛ի վեր կ'ելլան· չդիտցուածի · (ցՎբ· ԻՉ· 8·) ինչպէս նաեւ երկնից հաստատութիւնը կազմակերպելու համար է'ն առաջ հրաման ըրաւ Աստուած՝ որ երկիրս պատող ջրոց մեծ մասը վեր ելլելով մթնոլորտը կազմեցին · (Ծննդ· Ա· 6—8 եւ :) Նոր քննութիւններով ցուցուած է թէ միայն Անդղիոյ մակերեւութին խոնաւութենէն օր ըստ օրէ քանի մը միլիոն տակառաչափ (18 կեդ. ինար է մէկ տակառաչափը) ջուր կը գոլորշիանայ : Թէ ո՛րչափ կարեւոր է այս վերին և ստորին ջրոց անբաւութիւնը արարածոց համար, անձրեւի, ձեան, եւս և երկրիս բարեխառնութիւնը պահելու

համար ՛ի տօթոյ և ՛ի ցրտոյ՝ ատիկայ բնագէտք քաջ կրնան մեկնել :

Ս· Գիրք մարդոյս Աստուծմէ ստեղծուած և աշխարհիս մէջ դրուած ըլլալը, և դարձեալ բոլոր մարդոց Աստուծմէ դաստուելու և այս երկրաւոր կենաց վերջ մը ըլլալու վարդապետութիւնը չատ կանուխ յայտնած ըլլալովը, կանուխէն գրուցած կ'ըլլայ ի՛նչ որ դարուս բնագէտները նոր կը հաստատեն, թէ երկիրս սկիզբէն կազային վիճակի մէջ լինելով անբնակ էր, և երկրիս մակերեւութէն սկսեալ պաղելով պնդանալովը բնակելի դարձած է, և դարձեալ՝ այդ երկրի փորոտեաց պաղելը մինչեւ կեդրոնը հասնելուն՝ նորէն անբնակ պիտի դառնայ երկիրս, մինչդեռ այլք ՛ի կրօնից մինչեւ իսկ վերջին դարերուս մէջ անկրօնութեան աչակերտուիլ ուզողք կ'ըսէին թէ մարդիկ անհուն տարիներէ ՛ի վեր ծընընդադործութեան յառաջատութեան մէջ էին, և անհունապէս ալ ՛ի նմին պիտի տեւեն· չատք ևս ըզմարդիկ կամ մարդկան այս ինչ և այն ինչ սերունդները աստուածներէ սերեալ կը դնէին, որով դարձեալ երկիրս ՛ի յաւիտենից բնակելի լեալ ըսած կ'ըլլային· և Պղատոնի արքունիքը ըսուած Դժոխքը՝ ջ եղիւսեան դաշտերն ու տարտարոսը այս աշխարհիս ՝ի՛ջը՝ ստորերկեայ վայրեր դրած ըլլալով՝ երկիրս յաւիտեան բնակելի խոստովանած և դաւանած են՝ ընդդէմ փորձառական ստուգութեան վճռոց հաւօրէն բընագիտաց դարուս :

Ս· Գիրքը մարդկային ազգի մէկ սկիզբէ մը սերիլը, և անոնց ՛ի սկզբան մի միայն լեզու ունենալը յիշելէն ետքը, կը յաւելու ալ թէ ետքէն բաժնուեցան անոնց լեզուները, բայց աշխարհիս վրայ արդի երեւցածին չափ չատ լեզուներու բաժնուածքն պէս ալ չերեւցընէր, իբր երկու երեք արմատ լեզուներու բաժանումի պէս կը նկարագրէ · (Ծննդ·

ժ· 32։ ԺԱ· 1—9·) իրողութիւն մը որ ապշերու պատմութենէ և փիլիսոփայութենէ հաստատուած է։

Հիները որ ամենեւին գաղափար մը չունէին մարդկային մարմնոց ըստ ամենայն մասանց բովանդակապէս փոխոխուելուն և իւրաքանչիւր մարդոց իւր կենաց շրջանին մէջ ամբողջապէս չատ մը մարմիններ առնելուն, արդէն Ս· գիրքն ակնարկութիւնն ըրած է՝ լոկ յարուցեալ մարմնոց բոլորովին փոխուած ըլլալուն վրայ խօսելով· (Ա· Կրնթ· ԺԵ· 35։) Ընտարակոյս՝ ո՛չ թէ մեռեալը բոլորովին նոր և օտար մարմնով յարութիւն պիտի առնուն ըսել ուզելով, զի հաւատոց հաստահիմն վարդապետութիւն է թէ հոգիք՝ նոքին մարմովք որովք վաստակեցան՝ փոխարինութիւն պիտի առնուն· ուրեմն ակնարկել կ'ուզեն Ս· Գիրք այն ամբողջական փոփոխմունքը որ ամեն մարմին կը կրէ իւր կենաց շրջանին մէջ· և ասանկով ասկից իրր տանուխինը դար առաջ գրուցած կ'ըլլայ՝ ինչ որ դարուս փիլիսոփայութիւնը փորձով կը հաստատէ։

Երկնային մարմնոց արեւու՝ երկրի և այլոց թափառաշրջիկ աստեղց չարժմանց վրայ՝ հին կրօնից դրեթէ բոլորին մէջ և իմաստասիրաց մէջ ալ այլ և այլ մոլորական կարծիքներ և տարաձայնութիւններ կը տիրէր· Ս· գիրք միայն՝ արդի փիլիսոփայութեան աստղագոյն կարծիքը յայտնեց գրեթէ ասկից երեք հազար տարիներէ առաջ, փիլիսոփայութիւնը անկէց քանուհինգ քանուվեց դար եաքը հասնիլ կրցաւ իւր դրութիւնը ճշմարտութեան մօտեցնել։ — Ցեսուայ՝ արեւու «կեցիր» ըսելէն՝ թէպէտ և՝ ի վերին երեսս կ'երեւայ թէ Ս· Գիրք ըստ հին դրութեան՝ ուստի և սխալ խօսած ըլլայ, բայց ընդ հակառակն նոր դրութեան և ճիշտ բնութեան օրինաց հաստատուն խօսած ըլլալուն ապացոյց Ցեսուայ արեւու «կեցիր» ըսելն եղաւ՝ լուսինն ալ «կեցիր» ըսելն է· «Եւ ասէ Ցեսու· կացիր՝ արեգական հանդէպ Գաբաւոնի և լուսին հանդէպ ձորոյն Եղմնայ։» (Ցեսու ժ· 12։) — Քանզի ըստ արդի փիլիսոփայութեան՝ արեւու և լուսնի օրական առերեւոյթ չարժումը երկրիս իւր առանցքին վրայ դառնալէն յառաջ կու գայ· անանկ որ արեւու առերեւոյթ չարժման կենալը տեսնուած առեն՝ հարկաւ լուսնի կենալն ալ տեսնելը պիտի ապառնէր· ուստի և Ցեսու արեւու հետ լուսնի ալ «կեցիր» ըսաւ· որ հին դրութեամբ թէ որ արեւն ալ լուսինն ալ երկրիս բոլորտիքը իրարմէ անկախ ապատ շրջան կ'ընեն ըսել ուզած ըլլար՝ արեւու առերեւութական կենալէն լուսնի առերեւոյթ կենալն ալ հարկ չէր ըլլար, Ցեսու ևս՝ լուսնի կենալն ալ չէր հրամայէր· Եւայլ՝ չատ յայտնի կերպով ալ կը գրուցէ երկրի չրջուն ըլլալը· «Ո՞չ դիտացէք թէ ո՛ հաստատեաց զհիմունս երկրի· (Նա) որ ունի չրջէ երկրի·» չնայելցուք թէ՝ կ'ըսէ՝ երկրիս հիմունքը ո՛չ դրաւ, այնիկայ՝ որ անոր չրջանը կը բռնէ, (Յոբ· 21—22։) — Սակայն արեւու և աստեղց չարժմանց վրայ թէ որ Ս· Գիրքը այն լեզուով կը խօսի՝ ինչ լեզուով որ հասարակ ժողովուրդը կ'իմանայ, պատճառը այն է որ, եթէ անոնց չարժմանց վրայ արդի աստեղագիտական պէս խօսէր, թէ՝ ուսումնականաց և թէ՝ խառնիճաղանճին անհասկանալի լեզուով միայնդ ուսեալն արտօրէն եղանակաւ խօսած լինելով՝ երկու դասէն ալ պիտի արհամարհուէր· ուսումնականներէն, վասն զի աստեղաց դրութեան վրայ դ ոհացուցիչ բացատրութեամբ խօսած չէր, զի իր դիտումը այն չէր խօսիլ· Հետեւաբար և արեւու և լուսնի վրայ հաւրեւանցի խօսելովը անոնց դրութեանը վրայ բան չէր բացատրեր, զոր իրրեւ վկայութիւն ընդունելով անոր ճշմարտութեան՝ Աստուածայնութեանն

ալ հաւատք ընծայէին. ուստի և իրրեւ անտեղի եղիափրութիւն՝ այն նոր վարդապետութիւնն ալ դիւրքն ալ մէկտեղ պիտի արհամարհէին. անուս ոգէտ ժողովուրդն ալ պիտի արհամարհուէր, քանզի անոնք աւելի աչքոփին առերեսոյթ սեռամիներնուն հանդուրժած ըլլալով, իրենց առերեսոյթ վարձառութեան հակառակ գրուցելը տեսնելով՝ դիւրքն ալ պատգամներն ալ մէկտեղ պիտի ծաղրէին։ — Եւ ինչո՞ւ հեռուն երթանք. մենք որ քաջ դիտենք երկնային մարմնոց շարժման ճշմարիտ դրութիւնը, սակայն և այնպէս կ'ըսենք՝ «Արեւը ծագեցաւ, մարը մտաւ, խաւարեցաւ» ևն։

Հին աստեղագէտներէն ամենէն հռչակաւորը Հիպարքոս՝ կը հաշուէր թէ 1200=էն աւելի աստղ հիւսէ երկնից անհունութեան մէջ. և Պտղոմէոս՝ 1026=էն աւելի հիւսէ կ'ըսէր. ընդ հակառակն Ս. Գիրքը արդի աստեղագիտաց գիւտերուր ընդհանուր հանճարն ՆԽ-է կ'ըսէր անոնց հաշուանքը. «Հայեաց ընդ երկինս՝ կ'ըսէ Աստուած, և թուեա՛ զաստեղս, եթէ կարիցես թուել զնոսա»։ (Ծննդ. ԺԵ. ե. իբ. 17։ եբր. ԼԳ. 22։) Սըր ձոն Հերշէլ կ'ըսէ. «Աստուած՝ (հանճարեղութիւններն ու խիտ մանր աստեղաց խուրձերն աչքէ անցընելէն ետքը) զանոնք երկնից անհուն միջոցին մէջ փռշուոյ կամ մղեղի պէս ցանեց»։ Միայն ցարդ ողը կամ ծիր կաթին՝ որ երկնից ընդարձակութեան է'ն դոյզն մասը կը գրաւէ, խելքէ մտքէ վեր հոծութիւն մ'է աստեղաց։

Ապա ուրեմն Ս. Գրոց մէջ այսչափ ճշմարտութիւններ բնութեան դրից և օրինաց վրայ՝ անոնց բուն գիւտերէն այսչափ հազարաւոր տարիներ առաջ յայտնուած տեսնելով, (որոց ուսուցիչ չեն Ս. Գիրքն և պատմական եղանակաւ իւր երկրորդական և երրորդական պարագայներ մէջ եկած են,) և որոց

հակառակը պրուցեր են ամեն ժամանակի իմաստասէրք օրէնադիրք և բոլոր կրօնից մատեանք, ասկից բացարձակապէս և յոյժ բնական կերպիւ կը հետեւի թէ՝ միայն և մի միայն Աստուածաշունչ Ս. Գիրքը ուսուցիչ են ճշմարտութեան, և նորին իսկ մարդկային հանճարով և հեղինակութեամբ գրուած չէ'ն, այլ միայն Աստուածային իմաստութեամբ և ներշնչութեամբ։

ՑՕԴՈՒԱԾ Գ.

ՄԻՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ

Միւթիւն Ս. Գրոց ըսելով կ'իմանամք անոր մէկ գլխաւոր նպատակը, որ բոլանդակ մատենից իւրաքանչիւր էջերուն մէջ կը տեսնուի։

Ս. Գիրք սկիզբէն մինչեւ վերջը մարդ արէական չղթայ մըն է պատմական կատարեալ անթերի դըրութեան մը հետ լծորդուած, որուն մէջ թէեւ քառասունէն աւելի մատենադիրներ այլ և այլ նիւթերու վրայ գրած են՝ իրարմէ հեռու դարերու և ժամանակներու մէջ, բայց ամենքն ալ մէկ հեղինակի մը պատրաստ յառաջադծին վրայ երթալու պէս՝ նպատակի նոյնութիւն մը պահած են, և ամեն բան՝ պատմութիւն, կրօնք և բարոյք այն նպատակին ուղղած են, որով կ'երեւցընեն թէ այն Գիրքը իւր ամեն մասամբ մարդկային ազգի՝ Աստուծոյ Արարչին հետ ունեցած և ունենալիք յարաբերութեանց պատմութիւնն է։ Աւելցնենք աւոր վրայ որ այն մատենադիրներուն ամեն մէկը՝ ի նոյն կէտ նպատակի առաջնորդ ելլու կերպն մ'ալ ունէին հանրական մարդ արէութիւնը՝ դալիք Մեսիային համար, Որոյ ընծելիք այլ և այլ առօրինութեանց

ներն ալ կը պատմեն, թէ՛ ինքզինքնուն, և թէ՛ իրենց ընկերաց, և թէ՛ իրենց աղգականացը. (Քը-ոյ. ի. 12։ եւէյ. լբ։ ծննդ. խթ. 5—7։ Մ-ոմ. իզ. 31—36։ ժզ. 7—11։ Ա. կ-ընթ. Ա. 11—12։ ե. 1։ Բ. կ-ընթ. Բ. 4։ ժԱ. 5։ Գ-ոթ. իզ. 11։) Գօղոս կը գոչէ եւս. «Ես իսկ եմ որուսն առաքելոց, որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց առաքեալ, զի հալածեցի զեկեղեցին Աստուծոյ»։ (Ա. կ-ընթ. ժե. 9։) Ս. Գրքին բոլոր մատենագիրներն ալ դրեթէ՝ չահ մը և փառք մը չվաստրկելէ զատ ամեն նախատինք ամեն աղքատութիւն նեղութիւն չարչարանք կրանք տանելէն ետքը՝ անձերնին ալ վրայ տուին խաչատակամահ մահուամբ։ Ատոնց ամենուն միօրինակ այս ընթացքը անբնական է որ մարդկային խորհրդով և կամ խաբեբայներու հնարագիտութիւն ըլլայ. զի իրենց մի միայն նպատակն էր՝ ամեն անհատութեանց տակ՝ ո՛չ իրենց շահն ու փառքը, այլ Աստուծոյ փառքը, կամ որ նոյնն է մարդոց փրկութիւնը, և ատ այն կը հրահանգէին զմարդիկ ի հաւատս և ի սրբութիւն վարուց. բոլոր Ս. Գրքերը քննելով և ո՛չ մէկուն մէջ ասկէց տարբեր նպատակ մը կը դտնուի։

Միայն արարողական ծիսական տարբերութիւն մը թէ որ կը տեսնուի Մովսիսական և Քրիստոսեան անտեսութեանց մէջ, անոնց ոգին ու նպատակն ալ դարձեալ նոյն միութեան մէջ է։ — Հրէից բոլոր խարութիւնները և ծիսական արարողութիւնները որ ամենեւին տարբեր և օտար էին ժամանակին ազգաց և կրօնից, անոր համար դրուած էր որ անոնցմով միշտ որոշ զատ մնան այն ամբարիշտ ազգերէն, և անխառն մնալով անոնցմէ՝ անոնց ամպարշտութիւններէն հեռու՝ ճշմարիտ Աստուածգիտութեան պաշտօնին մէջ յարատեւեն. իսկ Քրիստոնէից անխտրութիւնն ու արարողութեանց

պարզութիւնն անոր համար է, որ բովանդակ երկրի ազգերը ժողովէ՝ ի նոյն Աստուածպաշտութիւն. հին անտեսութիւնը՝ ազգաց անհատիճ մոլութեանց յորձանուտ հեղեղաց դէմ Աստուածգիտութեան փրկութեան ճշմարիտ պաշտօնը՝ միշտ պահելու պատրաստ խստապարանոց ժողովուրդի մը մէջ յատուկ պահելոյ համար էր. նոր անտեսութիւնը՝ նոյն Աստուածպաշտութիւնը հանուրց ազգաց փրկութեան պայման կատուցանելու համար է, ատ որ Աստուածն էր Յիսուս Քրիստոս, և ատ այն կը պատրաստէին բոլոր ժողովուրդը մատենագիրք Ս. Գրոց. ուրեմն տարբերութիւնը մատնաւորութեան և ընդհանրութեան մէջ է. նպատակը նոյն է, բայց և այնպէս ասիկայ ալ կանխաւ ազգ առ ազգ էին մարգարէք։ (Եբ-ոյ. Խբ։)

Ասկա ուրեմն մարդկային խորհրդով մարդկային նպատակաւ կարելի չէր որ գրուած ըլլար Ս. Գիրքը. Աստուածային ազդեցութիւնն էր՝ որ զայն գրողները գրել կը չարժէր, և իր միակ նպատակին կ՚առաջնորդէր անոնց գրիչները։

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Բարոյական Ս. Գրոց

Մարդոց հնարած այլ և այլ կրօնից բարոյական վարդապետութիւնները միայն բաղդատելով Աստուածային Գրոց բարոյականին հետ՝ անոնց ինչ տարբեր ազդիւրներէ յառաջ եկած ըլլալնին իսկոյն կ՚երեւնայ։

Երբ Սպարտա օրէնք կը դնէր նորածին վաստակաղջ մանկունքն սպաննելու՝ հասարակութիւնը անպիտան բեռէ ազատելու համար, արդէն չատ՚նց

Մովսէս յօրէնս դրած էր թէ՝ նկարեալ սաղմին իակ ձլատելը կատարեալ մարդասպանութիւն սեփհական ըսելով, որ ամէն ոք կ՚անիծէր զինքը՝ նմանօրինակ վտակ անբարոյականութեան մէջ հասնելու համար։ Եւ որդիք Յակովբայ նահապետը՝ իրենց Դինա քրոջ հետ Սիւքեմայ խառակելութիւն ունեցանելը վրէժը ողջոյն իակ Սիւքեմացիներէն լուծեցին։ (Ծննդ. ԼԴ։)

Դատապարտեն Ս. Գիրք ոչ միայն ամեն օտար ապօրինի անկողիններ, այլ նաեւ սեռհականն ու օրինաւորը՝ տարաժամու. (Ղեւտ. ի. 18։ Եզէկ. ԺԸ. 6։ Ա. Կորնթ. է. 5.) դատապարտեն Գիրք ոչ միայն կրից գործը, այլ նաեւ մեղապարտ խորհուրդը եւ հայեացքը։ (Խոսփ. Ա. 12։ Առակ. Զ. 25։ Մատթ. ե. 28։)

Մինչդեռ Սպարտացի տանկանց կը հրամայուէր գողութիւնը ըստ ամենայնի ճարտարութեամբ գործել չյայտանուելու համար, ամբողջ բանակ մը կը զարնուի Աստուծմէ խրատչութիւներէն՝ Աքար Զարմանի գաղտ գողութեան պատճառաւ։ Մինչդեռ յայլ ազգաց գողութիւնն ու յափշտակութիւնը հէնութիւնն ու աւազակութիւնը քաղաքաց օրինաւոր արուեստից կարգը դասուած էր, Ս. Գիրք ընկերին ձեռընեռու չըլլալը, վարձկանին վարձքը առօրին չվճարելը, պառն ու այրին հասկաքաղ, ճռաքաղ և պտղաքաղ ընելը՝ աղքատին և անանկին ընչից յափշտակութեան և աւարառութեան հաւասար մեծ մեղք կը սահմանեն։ (Բ. Օրէն. ԺԴ. 9։ Իգ. 14—15։ 19—22։)

Երբ գերին ու ազգս ազգաց՝ անասնոց անբանից և անշունչ կարասեաց պէս հոգւով և մարմնով առացուին լիուլի իշխանութեան տակն էր, Մովսէս առաջին եղաւ բնութեան ձայնը բարձրացընող՝ այս անբնական եզերանին դէմ. յիշէ՛ ըսաւ Իսրայէլի՝ որ դու ալ եգիպտոս գերի եղար, և ըստ այնմ իբրեւ վարձկան մարդ վարէ զանոնք։ Մարդապաղը մահապարտ է՝ անշո՛ւշտ սպաննես ըսաւ, (Եւէց. Իա.

նութիւն չէր տար Ռուբէնի, և համարէ թէ կէս մ՚ալ կ՚անիծէր զինքը՝ նմանօրինակ վտակ անբարոյականութեան մէջ հասնելու համար։ Եւ որդիք Յակովբայ նահապետը՝ իրենց Դինա քրոջ հետ Սիւքեմայ խառակելութեան ունեցանելը վրէժը ողջոյն իակ Սիւքեմացիներէն լուծեցին։ (Ծննդ. ԼԴ։)

Դատապարտեն Ս. Գիրք ոչ միայն ամեն օտար ապօրինի անկողիններ, այլ նաեւ սեռհականն ու օրինաւորը՝ տարաժամու. (Ղեւտ. ի. 18։ Եզէկ. ԺԸ. 6։ Ա. Կորնթ. է. 5.) դատապարտեն Գիրք ոչ միայն կրից գործը, այլ նաեւ մեղապարտ խորհուրդը եւ հայեացքը։ (Խոսփ. Ա. 12։ Առակ. Զ. 25։ Մատթ. ե. 28։)

Մինչդեռ Սպարտացի տանկանց կը հրամայուէր գողութիւնը ըստ ամենայնի ճարտարութեամբ գործել չյայտանուելու համար, ամբողջ բանակ մը կը զարնուի Աստուծմէ խրատչութիւներէն՝ Աքար Զարմանի գաղտ գողութեան պատճառաւ։ Մինչդեռ յայլ ազգաց գողութիւնն ու յափշտակութիւնը հէնութիւնն ու աւազակութիւնը քաղաքաց օրինաւոր արուեստից կարգը դասուած էր, Ս. Գիրք ընկերին ձեռընեռու չըլլալը, վարձկանին վարձքը առօրին չվճարելը, պառն ու այրին հասկաքաղ, ճռաքաղ և պտղաքաղ ընելը՝ աղքատին և անանկին ընչից յափշտակութեան և աւարառութեան հաւասար մեծ մեղք կը սահմանեն։ (Բ. Օրէն. ԺԴ. 9։ Իգ. 14—15։ 19—22։)

Երբ գերին ու ազգս ազգաց՝ անասնոց անբանից և անշունչ կարասեաց պէս հոգւով և մարմնով առացուին լիուլի իշխանութեան տակն էր, Մովսէս առաջին եղաւ բնութեան ձայնը բարձրացընող՝ այս անբնական եզերանին դէմ. յիշէ՛ ըսաւ Իսրայէլի՝ որ դու ալ եգիպտոս գերի եղար, և ըստ այնմ իբրեւ վարձկան մարդ վարէ զանոնք։ Մարդապաղը մահապարտ է՝ անշո՛ւշտ սպաննես ըսաւ, (Եւէց. Իա.

16։ Բ. Օրէն. ԻԴ. 7։) և գերւոյն դէմ եղած է՛ն թեթեւ խեզութիւնը՝ և հաճոյակատար անպատուութիւնը՝ անոնց ազատապէն սահմանեց ։ նմանապէս իբրեւ մարդասպանք՝ պատուհասով վրէժխնդրութիւն ըրէք ըսաւ իւր գերին սպաննողէն ։ (ԵԼէց. ԻԱ։) իսկ ծառայն իւր սիրոյ ւսատնել՝ մեծագլուխն ականիներուն կարգը դասեց ։ (Բ. Օրէն. ԻԳ. 15։ Ա-ԽԱ. Ե. 10։)

Աստուած կը համարիմք ըսել, թէ երբ ամենայն ազինք և լեզուք թշնամւոյն թշնամութիւն պոռնա քինել և անկէ վրէժ լուծելը բնութեան քաղցր պարտք և անհրաժեշտ պէտք կը համարէին, Ս. Գիրք ծանր մեղք ըսել կը վճռէին թշնամւոյն պէտք ունեցած է՛ն թեթեւ ծառայութենէն աճգամ հրաժարելը, (ԵԼէց. ԻԳ. 4.) և անկէ վրէժ լուծանելու ամենէն առելի սիրտ պատշխելնելու եղանակ՝ անոր բարելաւել կը հրամայէին ։ (Ա-ԽԱ. ԻԵ. 21—22։) Այլ Քրիստոս՝ մինչեւ Աստուածանմանութեան հասայ այս առաքինութիւնը. «Այլ ես ասեմ ձեզ՝ ըսաւ. սիրեցէք զթշնամիս ձեր. օրհնեցէք զանիծիչս ձեր. բարի արարէք առելեաց ձերոց. և աղօթս՝ ի վերայ այնոցիկ՝ որ ակնեն զձեզ և հալածեն. զի եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յերկինս է. զի զարեգակն իւր ծագէ ի վերայ չարեաց և բարեաց, և անձրեւ ի վերայ արդարոց և մեղաւորաց» ։ (Մ-ՊՂ. Ե. 44—48։)

Մովսիսի օրինաց տախտակներու ատեն գատաստանները անաշառ բարոյականի մէկ հատիկ նախադասութիւն է, և որուն նման՝ Մովսիսի ժամանակակից և հետ գալոր դարուց օրէնսդիրներէն ոչ՝ բնաւ օրէնք մը ատած չէ՛։ — Այս օրէնքները սիրոյ՝ և մի միայն սիրոյ ու հանդարտութեան վրայ են հիմնեալ. առաջին չորս պատգամները Աստուածպաշտութեան, և հետեւորդ վեցը ընկերասիրութեան կը վերաբերին ։ — Առաջին պատուէրով կը հրամայէ զԱստուած ճանչնալ իբր միակն և բարեար Հայր ։ Երկրորդով՝ կուռք չունենալն ու պաշտելը իբր Աստուածպիտանի ոչ մի անհատատարուածքիւն՝ կ՛արդելու ։ Երրորդով Աստուծոյ անունը չանպատուել կը յորդորէ ։ Չորրորդով Աստուծոյ բարեբարութեան՝ ըստ արարչագործութեան յիշատակը պատուելու համար Անոր հանգստեան օրը՝ շաբաթը սուրբ պահել կ՛օրինապրէ ։ Մնացեալ վեց պատուէրները ընկերասիրութեան վրայ են ։ Հինգերորդը՝ ծնողքն ազգն ու հայրենիքը սիրել, վեցերորդը՝ անոնց կենացը չվնասել, եօթներորդը՝ անոնց բարոյականին պարկեշտութեանն ու համեստութեանը չվնասել, Ութերորդը՝ անոնց ընչիքը չվնասել, իններորդը՝ բանիս անգամ անոնց չվնասել, և Տասներորդը՝ փսխաքով և խորհրդով իսկ անոնց վերաբերեալ ո՛և իցէ բնչիք մը չվնասել կը հրամայէ ։

Մինչդ եռ յօրինն ազգաց հնոց և նորոց քաղաքակրթելոց և պերպանուոց՝ մահու պերութեան անարդութեան և խայտառակութեան կը դատապարտէին յանցաւոր որդւոյ հետ՝ հայրը մայրը և պարագայքն, ինչպէս նաեւ յանցաւոր հօր հետ որդիքն ու ընտանիքը, միեչեւ իսկ պարտք ունեցող հօր մը որդիքն ու ընտանիքը իբր ինչք վաճառուելու և պարտատէր հօր պարտքերը վճարուելու անհրաժեշտ դերութեան կը մատնուէին ։ (Մ-ՊՂ. ԺԸ. 25։) Մովսէս միայն այդ անբնական անիրաւութեան դէմ դարձաւ ։ (Բ. Օրէն. ԻԴ. 16.) և Եզեկիէլ գոչեց. «Եւ եղեւ բան Տեառն առ իս՝ և ասէ. Որդի մարդոյ՝ զի՞նչ է ձեզ առակդ այդ՝ վասն որդւոցդ Իսրայէլի զոր դուն-թէ հայրք ազմա կերան, և որդւոց ատամունք առան. կենդանի եմ ես՝ ասէ Տէր Աստուած՝ նայի Ձեր, եթէ մինչեւ առակդ այդ որ ասէ՛ թէ մեղ

խարտեսի . զի ամենայն անձինք իմ են . ո՛րպէս անձն հօր՝ նոյնպէս և անձն որդւոյ . անձն որ մեռցի՝ նոյն և մեռցի ևս » : (Եզեկ. ԺԸ:)

Հին օրէնքը ընկերէն իրաւանց գոտեպնդական սրբութեան օրէնքը , « Ակն ընդ ական և ատամն ընդ ատաման » ի վրայ հիմնեց . (Ղեւտ. ԻԴ. 20.) բայց ընկերասիրութեան օրենքն ալ ջրհեղեղէն , և զայն անձնասիրութեան բնական օրէնքին վրայ հաստատեց . ընկերդ անձիդ պէս սիրես ըսաւ . (Ղեւտ. ԺԹ. 18.) և յաւելցուց թէ՝ « Զոր դու առնես՝ ուրիք մի՛ առնիցես . » (Տովբիթ. Դ. 16.) նոր օրէնքը՝ ի կատարելագոյն եւս հանելով զայս՝ ըսաւ . « Ո՛րպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ , այնպէս արասջիք և դուք նոցա » (Ղուկ. Զ. 31 :) Հին օրէնքը՝ մարդկային անեռնօրինելի իրաւունքը օրինագրած էր , նորը՝ բուն իսկ մարդկութեան կատարելութիւնը ծրագրեց և հրամայեց . հինը այլոց չվնասել միայն ըսած էր , նորը՝ անոր վրայ այլոց օգտել բարեթելն ալ ահռելանց , վասն զի Աշխարհիս սիրոյ ճշմարիտ սիրոյ ճշմարիտ պատուէրն այս էր . և չսիրն ալ տալով ըսաւ Քրիստոս , ես զձեզ ինչպես սիրեցի ձեզ , ըսաւ , դուք ալ միմեանց այնպես պարտիք սիրել . և ասով պէտք է հանշնան պատգիրք՝ որ զուք իմ աշակերտս կը : (Յով. ԺԳ. 34—35 :) — Հին օրէնքը թէ որ ուխիրը եզեռնը հատցընելու համար՝ զայն մահու պատժով դատապարտեց , գթութիւնն ալ միոց անհրաժեշտ ըլլալ օրինադրեց ընդ պատժոյն պատուհասիւք . դատապարտեալը՝ ի մահ տարած տեսնելին սիրելոյ չփութաս , և միայն ընկերով զգնիկայ մահուընէ խլպանելու չ'աշխատիս նէ յոյնցաւար կամ ըսաւ , և ըրածիդ պէս հատուցում պիտի ըլլայ քեզ Աստուծմէ : (Ասի. ԻԴ. 11—12 :)

Աշխարհիս վրայ մարդոց հնարած բոլոր կրօնքները ալ ծէսերու և արարողութիւններու մեծ կա-

րեւորութիւն կու տան իրր միջոց սրբութեան , և քանի մը բարեգործութիւն հասարակաց գործողութիւններ կը հրամայեն իրր փրկանք ոգւոց : — Ս. Գիրք սրտի և վարուց կատարեալ և անթերի մաքրութիւն սրբութիւն կը պահանջեն մարդէն , և տապարով կը վճռեն թէ առանց սրբութեան սրտի անհնար է հաճոյ ըլլալ Աստուծոյ : « Զխաղաղութեան զհետս երթայք ընդ միմեանս՝ և զսրբութեան . կ'ըսէ գիրքը . առանց որոյ ո՛չ ոք տեսանիցէ զՏէր » : (Եբր. ԺԲ. 14: Սաղմ. ԻԳ. 3—4: Մատթ. Ե. 8: Բ. Կորնթ. Է. 1: Ա. Պետ. Ա. 15—16:) Հետեւաբար ո՛չ միայն դոյզն ինչ մեղաց կամ յանցանաց ազատիլը , այլ նաեւ մեղանչական խորհրդով մը միայն մտքին պղտորիլն ալ դատապարտեց . (Մատթ. Ե. 28: Ղեւտ. ԺԹ. 17 եւն.) իրրեւ անհուր մեղադործ և պատժապարտ դատապարտեց ընկերին սիրոյ պարտքը գործով չկատարողն ալ : (Ա. Յովհ. Գ. 10—24 :) Ճշմարիտ հաւատքն իսկ ինքնին՝ ի՛ր բնական ինքնին՝ մարդոյս վրայ անխոնարհելի պարտք կը դնէ սուրբ վարք ունենալը , (Տիտ. Գ. 8.) զի սրբութեան Աստուծոյ պաշտօնէին սուրբ վարք ունենալը միակ պայմանն է . և սուրբ վարքը սուրբ հաւատոյ պտուղն է , ինչպէս և մոլեկանը ի՛ր ուսուցման հաւատոց . զի « ի պտղոյ անտի ծառն ճանաչի : » (Մատթ. ԺԲ. 33—35 :) Գանգի « ո՛չ կարէ ծառ բարի պտուղ չար առնել , և ո՛չ ծառ չար պտուղ բարի առնել : » (է. 16—19 :) Ս. կրօնից հիմնադիրը միով բանիւ կը վճռէ թէ սրտի առնել մաքրութիւնն ալ իրեն առջեւ դատապարտելի է . սրտի սրբութեան պտուղն ու արդիւնքն ալ մեկուսի ըլլալու է . « Ո՛չ ամենայն՝ կ'ըսէ , որ ասէ ցիս Տէր Տէր՝ մտցէ յարքայութիւն երկնից . այլ որ առնէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է : » (է. 21 :)

Դարձեալ Ս. Գրոց հրամայած բարոյական պար-

տաւորութիւնները անանկ պարտիք կ՚ըլլան, որ մարդիկ իրենց մտաքը չ՚ին կրնար գանել. ո՛չ ալ ընդունելի կրնային համարել՝ եթէ մարդկային հեղինակութիւն մը գանոնք քարոզել հնարէր։ — Հռովմայեցւոց առաքինութիւնն էր իրենց պինդ օրաքան փառքը, Յունացն ալ իրենց խնամոտութիւնը. եւ քերը Հրէայք ալ՝ երբ Մովսիսի ամենայն պատուիրանները ծեքեցին ծանծաղեցին, իրենց առաքինութիւն գեպեցին այս ամեն ապրելն առել և ինքզինքնին միայն Աստուծոյ ուղիական ժողովուրդ դնել, որպէսզի ըլլալով ըստ մարմնոյ Աբրահամու։ Թարէոմեմեամբ կրօնք մը հնարել ուզողը առանց մէկուն դրութեան հետամուտ ըլլալու էր։ Բայց Քրիստոս անանկ չըրաւ. ամեն առաքինութիւն և խարէութիւն խայտառակեց, ամեն կեղծաւորութիւն՝ արտաքին մաքրութիւն առ աչս արդարութիւն դատապարտեց. ճշմարիտ առաքինութիւնը անհատապէս ծանոյց. և Աբրահամու որդիք չեն ըսաւ անոնք որոնք մկրտութիւնով անոր որդիքն են, Աբրահամու հաւատքին, Աբրահամու առաքինութեան Աբրահամու գործոց արտանց չհետեւողը, ճշմարտութիւնը չսիրող, առաքինութեան չպարտիչ չպատրող և արտանց մոլութեանց ծառայողը Աբրահամու որդի չէ ըսաւ, սատանայի որդի է։ (Յովհ. Ը. 31—59.) Աստուծոյ առջեւ հաւատար են ըսաւ և հաւատար պէտք է համարել աւեն ցեղի և վիճակի մարդիկ, պէտք է ըլլալ խոնարհ, հաւատարիմ, ներող, անոխակալ, և թշնամիները սիրել։

Աւետարանի քարոզողները Գալիլեացի ուղէտ ձկնորսներ ըլլալով, անանկ բարձր առաքինութիւններ սովրեցուցին, որ մարդոց սովրութեամբ ընդունած բարի վարքէն վերագոյն լաւագոյն և շատ անգամ անոնց ընդունածին ալ հակառակ էր։ Հա-

րըստահարութեանց գրկանաց ակառնաց տանելը, ձեռաուց ներելը, թշնամւոյն և հալածողին ու ձեռաուղին ողորմելը՝ գթալը և օգնելը, հեզ և հնազանդ ոգի ունենալը են, ոչ միայն մարդոց գործադրած սկզբունքներ չէին, հապա նաեւ սիրելի ընդունելի կամ տանելի ալ չէին անոնց։ Աւետարանը առանք առվրեցընելովը հանդերձ կը պահանջէ միանգամայն որ մարդիկ՝ գիրենք նուաստ գործողութիւններէ եւս պահող վեհ հոգի մը ունենան։ Ա. Պետ. Բ. 8—25։ Գործ. Ժէ. 29։)—Աւիկայ անծանօթ էր մարդոյն. և ըստ կարծեաց աշխարհի անհնար էր որ մարդ այնչափ խոնարհ հեզ համբերող ոգի մը ունենալով, այն ընկճեալ նուաճեալ ոգին միանգամայն վեհանական բարձրութիւն արժանապատուութիւն ունենար. խոնարհութիւնն ու արժանապատուութիւնը, նուաստութիւնն ու բարձրութիւնը, ծառայութիւնն ու ազատութիւնը միևնոյն ոգւոյ էական և անպակաս յատկութիւններն ըլլային։ Աւիկայ մարդկային միտաց իմաստասիրութեան հակառակ էր. և սակայն բուն ճշմարիտ առաքինութիւնն ալ այս էր. այս անգիտ մարդարիտը՝ այս ճշմարիտ առաքինութիւնն ի վեր հանող քարոզող աւետարանող Գիրքը՝ մարդկային մտօք խորամանդուած, մոլեգնելոյ մը չիմարութեան կամ նենգամտի մը խարէութեան հեղինակութիւն չէր կրնար ըլլալ. Աստուծոյ մատին գործը միայն կրնար ըլլալ, ինչպէս որ է։

Քիչ մը եւս յառաջ տանիք քննութիւններս՝ պայծառ եւս տեսնելու համար այս ճշմարտութիւնը։ Միջամուխ ըլլանք այն հեթանոս ազգաց իմաստնոց և իմաստասիրաց բարոյականին, որոց յայտնութեան պայծառ լոյսը չծագեց. և տեսնենք ի՞նչ կրցաւ անոնց մէջ մարդկային միտքը բարոյից համար օրինադրել։

Ձին աստեղները՝ Մոլէկէն առաջ ալ էտքն ալ՝ մարդ Հրէաստանի անձուկ սահմաններէն դուրս ելլելով անհնարին արհաւրաց կը բռնուէր։ Ամեն-ուրեք մարդ ազոհք երկիրը կը պղծէին։ Յուստինոս վկայ իւր առաջին ջատագովութեանը մէջ Հռովմայեցւոց ուղղելով խօսքը՝ կ'ըսէ. «Կուց՝ զոր դուք պաշտէք ո՛չ միայն արիւն անբան անասնոց զոհի, այլ նաեւ մարդկան բանաւորաց. զոր առեալ երէցեալքն ի ձեզ և արանց իշխանաւորաց սրսկեն շուրջ զսեղանովն»։ Տատիանոս ալ կը գրէ. «Գտի առ Հռովմայեցիս, զի Արաւազդ Լատինիոյ հեչտաձայր յարիւն մարդկան, և ի նոսունս մարմնոց սպանելոց»։ Պորփիւր մինչեւ Ադրիանոս կայսեր ատեն տեւած է կ'ըսէ այս պղծագործութիւնը։ Զինիոս եւս կը վկայէ Գաղղիացւոց համար թէ խիստ հասարակ էր առ նոսա այս եղեռնական պաշտօնը ընդ երկար, և Տիբերիոս վերջացոյց։ (Պլին. Գր. Լ. 1։) Այս անբնական պղծութեամբ մոլեգնեալ քանէն աւելի ազգ կը հաւրէ Լեսբրիոս. (Ի նոխտորտ. Ա-եր.) Պետրոս Պետիտոս՝ (յղ. Տրտ-ֆեր. Բ. 8. 10.) կը յուշքնէ թէ հեթանոսաց մէջ առհասարակ սովորականի պէս բան մ'էր մարդազոհը, որմէ չէին խորշէր ազնուացեալ ազգերն ալ։ Փիւնիկեցիք տարուէ տարի մէյ մէկ մարդ կը զոհէին Կռոնոսի, ինչպէս նաեւ Կարթեդոնացիք, և ասոնք օրէնք ունէին ազատանի ազնուականաց չաւակներէն զենուլ. այլ եռքերը ազնուականաց տեղ սորկածին տղայքը ողջակիզուլ սկսելով, երբ Հռովմայեցւոց դէմ պատերազմած ատեններին յաղթուեցան անոնց Ագաթոկղ զօրավարէն, պարտութիւններին այս կարծեցեալ սեզանակատարութեան յանցանքին տալով, երկու հարիւր ազնուազգի ազատախուռմ տղայքներ միանգամայն ողջակէզ մատուցին Կռոնոսի, և երեք հարիւր մեղապարտք եւս սեղանակատարութեանն անձամբ ղանձինս ընկեցին ի խարոյկ անդր՝ անագորոյն աստուծոյ բարկութիւնն իջուցանելու և մեղքերնին քաւելու համար։ Տենուսի (Թունուզի) բնակիչք ամեն տարի կոյս աղջիկ մը զոհ կ'ընէին այն չար ոգւոյն՝ որ ուղեկից էր Ոդիսեայ և զոր իրենք քարկոծեցին։ Ի Սպարտա Արտեմեայ բագնին վրայ, և Լիւկոզիա Դիանիսի սեղանին վրայ տղայք և աղջկունք կամովին չարաչարան կը ծեծուէին ոզորածեծ, այնչափ սաստիկ և շատ մինչեւ բազումք ոգինին կը փչէին ծկծին տակ, բայց ճիչ մը հանելու չէին որ պատարագնին ընդունելի համարուէր. մարք առընթեր կալով սիրատկու տային իրենց աղաւծրի մանկանց, և զորս բոցէն կ'անցընէին կամ ի հուր աւանային՝ ամենայն խնամոք անոնց ուշն և ուրուշը գրաւելու զրօսցընելու կը ջանային որ լացերնին խափանել կարող ըլլան։ Եբրայեցւոց սահմանակիցք անդամ պաշտօնեայք Մողոքայ՝ կրակէ կ'անցընէին տղայքնին, յորոց չատերը խանձուտեալ կը մեռնէին. Քահաղու պաշտօնեայք եւս նոյն խուժդուժ սովորութիւնն ունէին, և իրենց զուրմերը ի պատիւ դից անդամներնին կը ցեռէին և կը կտրատէին. նոյնպէս Փիւթեղեայ քուրքը իգա լեռան վրայ, և Իսիդեայք Եգիպտոս. և այս սովորութիւնս եռքէն Գաղղիացւոց Դրուիդներուն ալ անցաւ։ — Ասոնք՝ իրենց բարոյականին ապրած բարեպաշտութեան գործքերնին էին, «ըստ պղծութեան»։ բուն իսկ բարոյքնին տեսնենք։

Մազքութք ծերերն ու պառաւները կ'սպանէին զանոնք ծերութեան ցաւերէ և նեղութիւններէ ազատելու համար. վրիանք եւս նոյն բանը կ'ընէին և աւելի անագորոյն անդթութեամբ չանց և թռչնոց կերակուր կը նետէին անոնց կիսամեռ դիակները։ Տաւրիացիք սրէ կ'անցընէին իրենց երկիրը նաւարկող բոլոր օտարականները։ Սկիւթացիք մար-

դու մին կ'ուտէին որով և Հրէաները ըսուեցան . և երբ որ մէջերնին երեւելի մարդիկ մեռնէին , անոնց սիրելիներն ալ ողջ ողջ հետերնին կը թաղէին : Այս օրերս իսկ՝ Բերուլի Թրանսանտիէն գտատին մէջ նոր դտնուած Անդ , Քանքօս և Քառասիսպաս ըսուած վայրենեաց երեք սերունդներն ալ՝ անհնարին մարդաչեր են : (Ինչպէս կը ծանուցանէ Լայս հնբիթոմնէրեայ հանդէսը . զոր կը հրատարակէ Ա.րժ. Հնոյեակ վ. Դիմնաքեան թիւ Ա. 1 յունիս 1874 :) Ափրիկէի աղդերէն ոմանք երբ որ կարգուած մարդ կամ կին մը մեռնէր , կենդանի ամուսինն ալ ողջ ողջ հետը կը թաղէին . և եթէ ամենամեծ մէկին ըլլար մեռնողը՝ ծառայներուն շատերն ալ կենդանւոյն անոր հետ կը թաղէին , որպէս զի Դժոխոց արքունիքն իրենց տէրոյց ծառայեն :

Ասոնք թերեւս անմարդի գազանամիտ ժողովուրդներ էին . բայց արդեօք Ցոյնք և Հռովմայեցիք որ մարդ ամբոխութեամբ կը պարծենային , պահեցի՞ն բնութեան օրէնքները : Ցոյնք ալ Հռովմայեցիք ալ առ հասարակ կ'ապաննէին անգթութեամբ նորածին սկար և տղեղ տղայքը , և կամ անխնամ դուրս կը ձգէին՝ ապաննելու սիրտ չընողները , որ վաստակող զաւակ չունենան . և խիստ շատ անգամ տղմէն վիժել կու տային որ զաւակաց բազմութեամբք չծանրանան : Հինակ իսկ Աւետարանի լոյսէն հետու ապրող ազգերը այս անմարդապոյն ոճիրը աւելի յաճախութեամբ կը գործեն , թէ՛եւ ամեն քաղաքական օրէնքներ (Ցայտնութեան արդար օրինաց վրայ հիմնեալ) խստիւ կ'արգելուն և ամեն պատիժ պատուհաս նախատեսած են : — Ցանուտեարց իրենց որդւոց և ընտանեաց վրայ ունեցած տարապայման ազատ իշխանութիւնը օրէնքով պաշտպանուած էր . անպատիժ և անպատուհաս ազատ էր մէկը իր զաւկներն սպաննելու . է՛ն իմաստուն

օրէնքը Եգիպտացւոցն էր , այն ալ անպատիժ կը թողուր զանոնք իրենց տէր կամ հեղինակ որդւոց կենաց , և միայն՝ որդ եւսպան հօր կամ մօր իրը պատուհաս կը սահմանէր , որ պատանեաց զուսակը երեք օր գրկէ նստի : Որդիք այսպէս ըլլալն եռքը հասպա դերի՛ք . . . : Անոնց վիճակը սոսկալի դառնութեամբ լեցուցած էր . օրէնքին բոլոր խստութեան ենթարկուած էին . իրենց տէրոյց ձեռքը՝ անբան անասուններէ աւելի ցած տեսակի մը պէս՝ հրամ լաւ էս՝ անշուշտ անխոս կարասիներ էին . տէրը բացարձակ իշխան էին անոնց կենաց և մահու . և օրէնքը այս եղկելիները չէր պաշտպաներ . աւելն տէր նոյկամի անգթութեամբ կը վարուէին անոնց հետ , դոյզն ինչ պակասութեան համար կրնային անպատուհաս պատանել զանոնք , կամ դիտութեամբ՝ ողբրածելի գանակոծել . խարազանը անոնց դիրգ և փափուկ ճաշակելին էր : Պարրասիոս անուանի պատկերահանը խիղճ չըրաւ քնաւ՝ երբ Պրոմեթեայ տանջանքը նկարելու առեն անոր կրից կենդանի պատկերը աչքին առջեւը ունենալու համար աղնուական գերեալ մը ծախու առնելով աղկ մը պրկել տալուն՝ խեղճը այն սոսկալի տառապանաց մէջ ջլատեալ մեռաւ : Անոնց վրայ՝ կարողութիւններնուն վեր խիստ ծանր ծանր աշխատութիւններ կը բեռցընէին . ոտքերնին շղթայակապ՝ առանց ոդի առնել տալու կ'աշխատցընէին . և խիստ քիչ՝ հազիւ ուրեմն ապեպահիկ ըլլալու չափ՝ լոկ հաց և ջուր միայն կու տային անոնց : Գիշերները ալ տոորերկրեայ տեղեր կը փակէին զանոնք , ուր եղկելիները չէին կրնար օդ ծծել , հազիւ մեծ դժուարութեամբ շունչ առնուլ տալ կրնային : — Քանի՛ միլիոններ արդեօք զոհ դացած են այն թշուառներէն իրենց պատկերակից արարածներու ապանի անագորոյն բարբարոսութեանց . . . :

Ի Սպարտա՝ պատկառելի և օգտակար ծերերը կը յարգէին յոյժ, բայց հիւանդ անկար և անպիտան ծերերը բուռն մահուամբ կ'ապաննէին. նոյնպէս կ'ընէին նաեւ Աթենացիք. բայց 'ի Հռոմ՝ Տիբեր կղզին կը նետէին զանոնք, որ սովանահ մեռնին։

Ցոյնք, Փիւնիկեցիք, Սպանիացիք, Տիւրացիք, Գերմանացիք և այլք յազգաց՝ երկայնակեցութիւնն ապաւառակութիւնն ու յաւիշտակութիւնը պատուական և արդար վաստակոց կարգը կը հաւատային։ Թուկիդիտէս կը գրէ. (Գիր. Ա.) «Ի նախնեաւն Ցոյնք ոչինչ նուազ քան զբարբարոս խժդժականն, եթէ բնակիչք ծովեզերեայ ցամաքաց, և եթէ բնակիչք կղզեաց; իբրեւ սկսան հաղորդութիւն ունել ընդ միմեանս նաւարկութեամբ, զառանցան յասպատակութիւնս զօրավարելոք յիշխանացն իւրեանց. և այն՝ կամ վասն շահու անձանց, և կամ վասն պակասս կարեւորացն ընդդէմ անիրաւ յափշտակութեամբք իւրեանց։ Եւ պատահեալ անպատրաստ՝ որ քաղաքաց յաւարի առնուին զայն, ո՛չ յամօթ՝ այլ յաւէտ 'ի փառս անձանց գրելով զնոյն։ Հաստատեալ է անկարշտութիւնս 'ի միջ ծովեզերեայ բնակչաց նաեւ մերոցս իսկ դարուս, որք առ յարգի ունին զգարտուեալս յելուզակաց անօթ իւրեանց, և առ նախնիս բանաստեղծս յանմխակիր գտանին յիշատակութիւնք սորին։ Զի իբր 'ի բազում պատահեալ նոցա նաւաստեացն հարցանեն եթէ հէ՞ն իցեն արդեօք. ուր աներկիւղ ընդ հարցանիւրն՝ չժխտէր. և որ հարցանէրն՝ առ նախատինս չդնէր։ Այո՛ և գիրեարս առաքակեն 'ի հաստատակաց սահմանս իւրեանց, և բազումք 'ի Ցունաց տումին նախնի յափշտակութեամբ կեան, որպէս Օզոլեան Լոկրիանացիք, Էտոլիանք, Ակարնանեանք, և բնակիչք մերձակայ ցամաքացն»։ Գրեթէ նմանօրինակ կը խօսին Ցուստինոս՝ (Գր. Խգ. Յ.) փիւնիկեցւոց հա-

մար, Պլուտարք՝ Սպանիացւոց համար, Դիոդորոս Սիկիլիացի՝ Տիւրացւոց համար, և Կեսար ու Տակիտոս՝ Գերմանացւոց համար եւս։ (Մեծաւք թուլութ-'ի ձան. Գլուխ։)

Ի Ցոյն և 'ի Հռովմայեցիս ժողովրդեան զբօսանքին համար սահմանուած էին տեսակ տեսակ մրցութիւններ՝ ըմբշամարտի, սուսերամերկ պօտեւմարտի, գազանամարտի եւս։ Այս գազանութիւններուն և բարբարոսութիւններուն ամենեւին վար չէին ձիոյ իրենց մեղկութիւնն ու անամօթ խեղճութիւնները ալ։ Հռովմայ թատրոններուն մէջ առիւծը կը գոչէր որ կանայք հոգառարմին երեւնան. Վաղերիոս Մաքսիմոս կ'ըսէ թէ մի անգամ միայն առջեւն այս բանը ընելու՝ կատոնի ներկայութենէն պատկառելով։ — Աւելի պղծութիւնք և գարշանօք մի էին կատարած ոօներնին ալ. ինչպէս էին Փեթեղեայ, Դեմետրեայ, Ափրոդիտեայ, Պրիապոսի, Դանդի և այլոց անհամար դիք ոօները. ոչինչ ընդհատ խայտառակ էին և կատարած խաղերնին, որք կը կոչուէին Ղուպկեայք, Գայլոտք, Բաքոսեանք կամ Սպանդարամետականք. և խորհուրդներնին որք էին Բոնայ, Ադոնիսայ և Թերմոսփորայ և այլոց, բաց յԵլեւսեանցն,—կղեմէս Ալեքսանդրացի (Ի յոդոսին հեթանոսաց) կը գրէ թէ՝ չեմ առաչեր պատմել այն բաները զօրս այնչափ տգէտ առանց ամչնալու ըրին։ Եւ ադամի մէջ Դիոնիսի ոօներուն յատկանշանի հանդիսի օրէս ձեռքերնուն վրայ բարձրացուցած կը տանէին փաղոսը (պօփկ ոմիոյ) Աստուց աստուածուհւոյն մեհեանը ամեն գարշութեամբք մի էր՝ ըստ վկայելոյ Ղուկիանոսի։ Ս. Օգոստինոս կ'ըսէ (յԱ. քաղաք. Աստուծոյ. Գր. Է. Գլ. ԻԱ.) թէ Լիբերեան ոօները այնչափ անպատկառ լրբութեամբ կը կատարուէր Իտալիոյ ճամբու գլուխները, որ 'ի արքունիս հաստատուած

էր հրապարակաւ արուեստից առաւելութիւնները ծածկել, կարելի չէր վրայ նոյն գործիր անդամը գեռեզած՝ ամեն տեղ պղծացընելով, Լաւենեան աւանին մէջ ալ նոյն անդամը հրապարակները պղծացընելէն ետեւ՝ կը տանէին իւր տահմանուած տեղը կը դնէին, ուր տանտիկին ումն վճռելապարդ պատկ մը պէտք էր տանիլ դնել այնչափ բազմութեան մէջ նոյն անպարկեշտ գործիր աւ դամին վրայ։ —Սպանող արուեստական տօնը Հռոմէ անցնելուն պէս ամեն ընդունելութիւն գտաւ յարանց և՛ի կանանց որ կը կատարուէր գիշերով, ամենայն լկնութեամբ և գարշութեամբ, ապատ և հատարճակ էր ամեն մարդ՝ի նմին գործել ամեն անօրէնութիւն և պղծութիւն. եւս և ամեն տեսակ ոճիր, սատյօդ կըտակներ, սուտ վկայութիւններ, անմեղներու տանբռատանութիւններ, դեղատուութիւններ և անանկ ծածուկ սպանութիւններ, որոց և ոչ դիակները կը գտնուէին, որով եւրքէն սկսան մոռնալ թուհուրէտ անուանիլ այս տօնը, մինչեւ ծերակոյտը հազիւ կրցաւ վերջացընել։ — Անպարկեշտ Աստղկան մեհենին մէջ ամեն պղծագործութիւն ամենայն խայտառակութեամբ կատարուելէն զատ իգական սեռէն ալ իրրեւ պաշտամանց առարկայ իւր դրօշելոց քուլ կը դրուէր։ (Ջուստ. ՀԼ. 4ոզ. Ա-պոճ. Գր. Զ. Գլ. Թ.) Կրօնից պաշտամունն մէկ մասն էր անօրէն խառնակութիւնը՝ի Բաբելոն, ՝ի Փիւնիկէ, ՝ի Բիբղոս (քազաք Կիպրոսի.) և՛ի Աիկկա Ամերիկեցւոց։ Եգիպտոսի մէջ Ապիս եզին պատկառութեան հանդիսին կանայք անզգեստք անպիծք մնալու պարտաւոր էին, և Ամոնի Ամմազդայ մեհենին մէջ աղջիկ ոմն՝ի հարճս հասարեալ էր այն դից։

Այն կատարք իրենց դիքերնին այն առեն ըստ արժանւոյն պատուած պաշտած ըլլալ կը համարէին,

երբ ըստ ամենայնի անոնց անկարդ խառնակութեանց և չար ոգւոյն քաջ նպաստով կ'ըլլային. ինչ կերպ վարուց և բարուց սովորութիւններ կրնային գտնուիլ այն հեթանոսաց մէջ, երբ իրենց պաշտած աստուածներուն խելքէ մտքէ չանցած անլուր եղեռանց և ախտից մէջ շաղախուած էին։ Ինչպէս կրնային արիւն թափելէ զգուշանալ անոնք որ երկրպագութիւն կ'ընէին պատերազմասէր Ճէսի և Բելլոնայ, կամ ետ կենալ խայտառակագոյն անառակութիւններէ, անոնք որ լրբենի աստուածուհիները կը պաշտէին, և մտքերնուն մէջ մեծին Դիոսի անարժանութեան գործքերը կ'երեւցնային։ — Ո՛ր և է խոտորնակութիւն կամ ապիրատութիւն կամ չարագործութիւն դից մէջ հեղինակութիւն ունէր. և անոնց չար օրինակն ալ պատրուակ և չքմեղութիւն կ'ըլլար անզգամաց, ինչպէս կը նշանակեն Ցերենտիոս և Լակտանտիոս։ Տերենտիոսի անառակ պատանւոյն օրինակը՝ զոր մէջ կը բերէ Օղոստինոս ալ, (յղ. թաղ. Ապոճոյ. Գր. Բ. Գլ. Է.) քաջ կը հաստատէ զայս. ըստ որում տեսնելով սա յորմն նկարեալ Դիայ յոսկի անձրեւ Դանայեայ պատարակը մտնելը, ինքն եւս՝ի վարձ ոսկւոյ անառակելով բաւ դատաւորաց առեներն մէջ, թէ ասանկ ընելով ապրուստ կ'ընէ։ «Անանկ աստուծոյ մը՝ որ երկինից խորաններէն ահեղաձայն որոտմամբ կը սասանեցընէ. և ես դիւրագայթ մարդ ըլլալով՝ ինչպէս նոյն բանը չէի ըներ. ահա այն բանը ըրի, և կամակար մտօք»։ — Եւրիպիդէս ալ այսպէս կը յանդիմանէ այն աստուածոց խառնակութիւնները.

«Ես ցոփութեան Ապողոնի ո՛չ ներեցից։

«Որ ըզկուսանս բըռնի պղծէ, խեղդէ զորդիս.

«Ա՛յս ձեր արդեօք դիւցազնութիւնձեր գործ բարի,

«Որով պանծայք մինիլ մարդկան աստուածանի.

«Թէ մահացուք՝ մեղանչեցեն, զուք անմահ դիք,
«Զարեաց նոցին վըրէժխընդիր և սաստ լինիք.
«Է՞ ձեզ ապա՝ դէպ աչխարհիս օրէնըսդրաց
«Վարել ըզկեանս՝ զուրկ՝ ի խըղճէ և յօրինաց.
«Թէ՛եւ յոյս չիք. բայց դեռ ասեմ, զի Թէ փեբոս
«Նա պոսիդոն և Թագաւոր դիցըն վերնոց,
«Աիրեն պատժել զամեն չըհաս ամուսնութիւն.
«Ո՛չ ոք ուրնաց չիրանց իւրեանց տանել պաչտօնս

(Գեղեցիկ եւս կը բացատրէ զայս՝ կպիդոն՝ ի յոյզս բոլոր ծառայ։ Անթեմոս. Տոփան. Աղոքիոս. Գրօ Դ՝ ն-ը-ն-ը-ղ-ի ընդդէմ ցուկան։ Թեոդորէտ. Ճռ. Ձ՝ եշխի Գր. Բ՝)

Դից գայթակղական գործքերը երգ չինած կը նուագէին քերթողք (1), և տեսարաններ կը ձեւացընէին. ինչպէս նաեւ մեհենաց մէջ կենդանի դրօշուածներով և նկարներով կը ներկայացընէին. և քանի Թոյն չէին Թափէր այդ ամենը երիտասարդաց վարքը բարքը ապականելու և անոնց ախտալից կիրքերը վառել բորբոքելու համար։ — Ովիդիոս քաջ նկատելով օրինակին ազդած վտանգները, խրատ կու տայ համեստասուն օրիորդի մը որ ձգնայ, ինչ կը փափաչի ուշադիր ընթերցողը պահել կ՝ուզէ։ Երբ անօթին ու անօթասոցութիւնը դից իսկ բնակարաններէն դուրս վռնտուած էր, քանի ապաստարկ պէտք էր դիցապաշտներէն։ Անբնական անկարգութիւնները անգամ անոնց վատանութիւն չէր տար։ — Պարսիկք, եգիպտա-

(1) Արամազդայ շամբշութիւնները այսպէս կը նուագէ Հոմերոս (Հոմ. Ի. Հոմնէտ. ԺԴ.)

«Աչդ 'դու, Հերա, գնացեր ապա, ձայն Ամպրոսեանն արձակեաց,
«Իսկ ՄԸ այժմէն օն առեալ սաստ պաչտօն հարցանք զամուսնաց,

ցիք և Աթենացիք անպատկառ մղձնեայ ամուսնութիւններ կ՝ընէին։ Պարտից մէջ ընդ քորս և ընտանեաս անկանիլը մոգպետութեան պատուոյն հասնելու միակ պայմանն էր։

Արդ թէ որ խուժանին բարքը ապականուած էր, միթէ փիլիսոփայից բարոյականը լա՞ւ մըն էր։ — Արիստոտէլ և Պիկերոն չարի չար հատուցանելը ծայրագոյն արդարութիւն և պարտիք բնութեան քարոզեցին. «Ատեայ զնա անձն իմ՝ կ՝ըսէ, և ատեացէ. ո՛վ թէ կարէի վրէժխընդիր լինել նմա» ևն։ Պղատոն հասարակապետութեան ճառին մէջ՝ ջանք ընելով որ քաղաքացիները իրարու հետ կապէ սիրով, պիղծ սէրը (հասարակաց խառնակութիւնը) կ՝օրինաւորէ։ Օրինաւոր ըլլալ կը սահմանէ առքեցութիւնն ու անբարեխառնութիւնը Դիանիսի տօներուն. և պարզաբար թօզութիւն կու տայ ամեն կերպ անողորմութիւն ընել բարբարոսաց, ու ցոյն չեղող ամեն ազգերու։ Արիստոտէլ տեսակ մը տկարութիւն կը համարի կարեկցութիւնը. «Այսպիսիք՝ կ՝ըսէ համբերատարաց համար, ո՛չ իւիք երեւին

ո Զի ապագէն ո՛չ կին երբեք և ո՛չ գարձեալ դիցուհի,
ո Զայս օրինակ յինքն յանկուցեալ գրաւեաց կալաւ զիմ ոգի.
ո Ո՛չ և յորժամ մըտի ես ինքն առ Էրեսեանն տմաւթին,
ո Որ մայր եկաց Պերիֆոսի հանճարիմաստ դիւցապին.
ո Եւ ո՛չ յորժամ առ Ակրիսեանն առ Դանայէն գնացաւն.
ո Աչն որ ծընաւ ըզՊերսէոս բնաւից մարդկան վեհագոյն.
ո Եւ ո՛չ յորժամ մըտի առ գուսար համբաւատուն Փինկոսին.
ո Որ Մինոսին ծընող եկաց և Հռադամայ մեզգեղին.
ո Եւ ո՛չ յորժամ առ Սեմէլէ և առ Ալկմէն՝ ի Թեբէ.
ո Որ զՀերակլէս զորդին իմ քաջ՝ ի լոյս կենաց վերբերէ.
ո . . . . . .
ո Եւ ո՛չ յորժամ առ Դեմոտէ առ վարագեղն այն դըչխոյն.
ո Եւ ո՛չ յորժամ առ Ղիտոնէ առ նազելին և արգոյն.
ո Եւ ո՛չ յորժամ առ քեզ ինքնին որպէս արդ միս գրաւեցեք.
ո . . . . . »

զգալ կամ փոյթ կալնուլ՝ վրէժխնդրութեան մինչեւ ո՛չ կարեվէր զրգռեցինն 'ի նոյն. բայց ցոյց է արդարեւ ցածութեան հոգւոյ հասիրել արհամարհանաց» : (ի Բոլոյակ. առ Նիկոմաք. Գ. 11:) Սու զըն այլ և այլ գործոց և արուեստից հետ կը թուէ սեղանակատարութիւնը. և որ մեծն է՝ Աթէնքի մէջ՝ պոռնիկ Ափրոդիտեայ կամ պիղծ սիրոյ մեհեան չինել տուաւ : Լիզուրկոս՝ Սպարտիոյ մէջ տուղորութիւն մացուց որ 'ի դիպուածս ինչ հասարակաց խառնակութիւն ըլլայ անխտիր : Օրէնք ալ դրաւ որ երիտասարդք ընդ երիտասարդուհիս մերկամրցանակ հրահանգաց մտնեն. ուր յայտնի է թէ՝ ա՛լ պարկեշտութեան տեղի չէր մնար : Խրիւսիպպոս մեղադրելի չսեպէր հօր ընդ դստեր, և մօր ընդ ուստեր անօրինիլը : Եպիկուրոս ծայրագոյն երջանկութիւն կը համարի հեշտութիւնը : Արիստիպպոս ալ ձայն կը բառնէ իրեն : Զինոկրիտոս իւր աշակերտները կը հրաժարեցընէ ամուսնութենէ, որ զաւակ անուցանելու հոգ չունենան. բայց կը ներէ ախտերին յագեցընելու : Եւ միթէ Զինոփինեսէն աւելի անամօթը կա՞ր. չնականաց աղանդը շանց պէս յայտ յանդիման խառնակիլ հրամայելու չէր ամաչէր : Ստոյիկեանք իրրեւ աւելի խստակրօն և անձնատանջ կը համարուէին. բայց ի՞նչ էր անոնց առաքինութիւնը. բան մը չունենալ, չկրել և անպգայ ըլլալ, որն որ ամեն մարդկային յօժարութիւնները կը հեղձուցանէ : Անոնց մէջ առած էր թէ աստուածոց յանձնել պէտք է առողջութիւնն աղքատութիւնն ու մեծութիւնը, իսկ իմաստութիւնն ու առաքինութիւնը իւրաքանչիւր ոք անձամբ պարտի հոգալ : Ամեն մեղք հաւասար կը սեպէին. վրէժխնդրութիւնը կը դովէին իբր մեծութիւն ոգւոյ. ատելու խիղճ չէին ընդեր. և պագշտութիւնը չարիքի տեղ դրած չէին :

Ասոնք են ահա իմաստասիրաց և գիտնոց հաւորէն ազանց աշխարհի՝ բնական լուսով ահմանած և քարոզած բարոյականը : Մարդիկ կարող չէին բնական լուսով գտնել կամ հնարել այն անխառն զուտ բարոյականը, զոր Ս. Գիրք կը վարդապետեն, Հին և Նոր Կտակարանք. մանաւանդ Նոր Կտակարանինը՝ որ Հնոյն թերութիւնները կը լրացընէ : Մարդոյս բանականութիւնը մեղաց խաւարով սկիզբէն խաւարեալ, չատ անգամ կրից աւելորդ կրքոնակի խաւարելով՝ և եւս երթալով երթայր և վատթարանայր : «Բնութիւնը՝ (կ'ըսէ Կիկերոն Տուսկուլ. Գ. 1.) կրակի դոյզն կայծեր տուաւ մեզ, զորս այնպէս արագ կը մարեմք՝ չարաչար վարուք և կարծեօք վատթարացեալք, որ բնաւ ամենեւին բնական լոյս չերեւիր 'ի մեզ» : Ապա ուրեմն այն Գիրքը որ այնչափ յստակ բարոյական մը կը քարոզէ, այնչափ յստակ, մաքուր և գերակատար, որ ոչ ոք 'ի մարդկանէ անոր հրատարակուելէն՝ այնչափ հազարաւոր տարիներ ալ վրայէն գլորելէն յետոյ, կամ այն երկար տարիներու միջոցին՝ դեռ ոչ ոք կ'ըսեմ՝ բնաւ և մի ոք՝ կրցաւ անոր մէջ դոյզն ինչ թերութիւն պակասութիւն գտնել, կամ չնչին յաւելուածի կամ սրբագրութեան մը կարօտ դնել, ատանկ Գիրք մը անհնարին է որ մարդկային հեղինակութեամբ մարդկային խորամանկութեամբ խարդախուած հնարուած ըլլայ :

Այսչափ պարզ և քաջայայտ է այս ճշմարտութիւնը որ ինքն իսկ Ռուսսոյ՝ կրօնքը ծաղրողներուն պարագլուխը կ'ստիպուի խոստովանելու (Յէ՛ղ Հատ. Գ.) « Ես ինձէն կը խոստովանիմ՝ կ'ըսէ, որ Աստուածաշունչ Գիրոց մեծվայելչութիւնը միս յապուշ կը կրթէ, և Աւետարանի սրբութիւնը արտիս կը խօսի : Նայեցէ՛ք փիլիսոփայից ուսուցանելոնը, թէ իրենց մեծաշուք հանդիսիւը ո՛րչափ փոքր են ատոր

դարուն մէջ Աւետարանի 'ի Քրիստոնեայս յառաջ բերած արդիւնքը տե՛ս ՅԱ. Կոր. Ջ. 11. եւ ԻԲ. Բ. եւ Ա. Պետ. Դ. եւ ։ Ապահանելով դարու մը մէջ և ամենէն գէշ կառավարութեանց տակ՝ Քրիստոնէայք որք առաջ ուրիշ մարդոցմէ լաւագոյն չէին, այն աստիճան բարձր աւաքինութեան հասան որմէ վեր երբէք մարդ չհասաւ ։

Ասանկ վկայութիւններ Քրիստոնէութեան հին Ջատագովութիւններու գրութեանց մէջ ալ կը գտնուին ։ Կղեմէս Հռովմայեցի (յամի Տեառն 100) կորընթացաց գրած Թղթին մէջ անոնց առաքինութիւնները նկարագրելով՝ կ'ըսէ ։ (ա՛վ ձեր մէջը կեցաւ ու ձեր զգաստ և ժուժկալ բարեպաշտութեանը վրայ չգարմացաւ, և ձեր հիւրասիրութեան մեծութիւնը չճանցաւ ։ Դուք խոնարհ էք, ո՛չ հպարտ, Աստուծոյ պարգեւած օրհնան հացով գոհ, Աստուծոյ խօսքը փութով մտիկ ընող և սիրոյ մէջ առատ, ցուտիանոս վկայն (յամի տեառն 163) որ Ղատոնական փիլիսոփայ մըն էր՝ իւր Ջատագովութեանը մէջ կ'ըսէ ։ «Մենք որ առաջ չնութեան մէջ կը գտնուէինք՝ հիմայ ամենէն խիստ ողջախոհութիւնը կը պահենք, մեք որ մոգական դիւթութիւններ կը գործածէինք՝ հիմայ մեր անձերը ճշմարիտ Աստուծոյ նուիրած ենք, մեք որ արծաթը ու շահը ամեն բանէ աւելի կը յարգէինք՝ հիմայ մեր բոլոր ունեցածն հասարակաց ըրած ենք և ամեն մարդու պիտոյքն ըստ կարգի կը բաշխենք ։ Մինուկիոս Փելիքս՝ հեթանոս հակառակորդէ մը կ'ըսէ ։ «Գործ չարութիւնը կատարուելէն առաջ պատժ կը պատժէք, մեք մեղանչական խորհուրդ մը մտքէն անցընելնէն ալ մեղք կը համարիմք ։ Բանտերը մեր ժողովուրդներէն լցուած են ։ Քրիստոնեայ մը չկայ հոն ։ և եթէ գտնուի՝ խոստովանող մըն է և կամ ուրացող ։ Տերտուղիանոս առաջին Լատին եկեղե-

ցեաց ։ և ինչպէս կրնայ ըլլալ որ այսչափ վեմ՝ միանդամայն և պարզ Մատեան մը մարդու գործք ըլլայ ։ և ինչպէս կրնայ ըլլալ, որ Աչն՝ որուն հաւատար կը խօսի այն Մատեանը, սուտ մարդ ըլլայ ։ միթէ աւրիկայ երազապոյտ ապուշ անձի կամ վատասիրտ ապականաւորի օրուընդոստ հնչիւնը կրնաչ ըլլալ ։ Ո՛րպիսի քաղցրութիւն և ո՛րպիսի մեղքութիւն կը տեսնուի անոր վարուց և բարուց մէջ ։ ո՛րպիսի խորամուխ չնորհ իւր հրահանգաց մէջ, ո՛րպիսի գերագանձ վեհմտութիւն անոր առածներուն մէջ, ո՛րպիսի խորին խնամատարութիւն անոր պատգներուն մէջ » ։ և ուրիշ տեղ՝ լեռնէն գրած ճառակաց մէջ՝ Աւետարանական վարդ ապրուստեան գեղեցկութիւնը, արդութիւնը, ճշմարտութիւնը և խորութիւնը հաստատելով՝ կ'ըսէ՝ թէ ուր անձնագանձ խնամատունք յընթացս դեղեցիկ սկզբանց իւրեանց սովորական մեղքութեանց մէջ կը խորտակեն, «Աւետարանն է միայն, որ բարոյական վարդապետութեան մէջ միշտ ճշմարիտ, միշտ միակ և միշտ միատեսակ է ինքզինքին » ։ և թէ «Մտիկայ Աստուածեղէն յայտնութեան աւելի հաւատամ և անվրէպ կնիքն է ։ և իւր մէջ այնպիսի տարազոյց ունի, որով ի վեր կը գտնուի առ հասարակ ուրիշներէն » ։ (1)

Ս. Գրոց Աստուածային հեղինակութեան անժխտելի ապացոյցներուն միւս ալ՝ անոր սովրեցուցած բարոյականին մարդոց վրայ ազդեցութեան յառաջ բերած արդիւնքն է ։ Առաքելոց առաջին

(1) Ազեքսանդր Թռասցի ձեռամբ նիւթ մատակարարած են մեզ ներկայ յօդուածոյ՝ Դիոդորոս Սիկիլիոցի, Պատանեաս, Սոթաբան, Դիոնեսիոս Աղեկսանդրացի, Կեսար, Փիլոն, Տակիտոս, Սենեկա, Պլուտարքոս, և և. հոլք ասոնք և պատմախոհասուք հեթանոսաց, այսինքն՝ Մենուտիոս, Փելիքս, Տերտուղիանոս, Տատիանոս, Կլեմէս Աղեքսանդրացի, Ս. Օգոստինոս, Ս. Կիպրիանոս, Լակտանտիոս և այլն և այլն։

ցական մատենագիրը, որուն գիրքերը միշտ մեզի հասած են, (յամի Տէառն 220) Որոգինէս՝ կեզսարի դէմ, (յամի Տէառն 245) և Լակտանտիոս (յամի 325) նոյն վկայութիւնները կը կրկնեն։ Յուլիանոս ուրացող ալ Քրիստոնեայները օրինակ ցուցընելով հեթանոսները կը յորդորէ որ վարուց սրբութեան և օտարականաց ու թշնամեաց վրայ սէր ունենալու մէջ անոնց նմանող ըլլան։ «Քրիստոնեները՝ կ'ըսէ, իրենց կեանքը այնպէս վարեն, իբր թէ միշտ աստուածոց առջեւն են. ջանք ընեն մըտքերնին մաքուր և անարատ պահելու, և զո՛նէ առտուներն ու իրիկուններըը հրապարակաւ և առանձին աղօթքները կատարեն. անոնցմէ բնաւ մէկը քաղաքական ծանահատէսներու երթալու չյանդգնի որ չըլլայ թէ հանճարեղութեան և չարեաց պատճառ ըլայ։ Բայց ամենէն աւելի բոլոր քաղաքացւմէջ անկեալանոցները շինուին մարդասիրութիւն ցուցընելու համար օտարաց և տնանկաց. արդարեւ մեծ ամօթ է մեզի որ Հրէայ մը չկայ մուրացկան և ամբարիշտ Գալիլեացիք իրենց աղքատներնին դարմանելէ զատ՝ մեր աղքատաց ալ կարեւոր նպաստները կու տան»։ Նեղեալներն սփոփել, աղքատաց հոգ տանիլ, ցաւագարները՝ հիւանդները՝ ուրուկները խնամել՝ դրեթէ Քրիստոնեայ ազգերու, և միա՛յն Քրիստոնեայ ազգերու յատուկ է. Քրիստոնէութենէ առաջ ո՛չ ուրեք երբէք տեսնուած էր ո՛չ 'ի Հայս, ո՛չ 'ի Հռոմ, ո՛չ 'ի Կ. Պոլիս, ո՛չ 'ի Հրէաստան իսկ և ո՛չ այլուր տնանկաց օգնութեան չէնք մը կամ աղքատանոց մը. Քրիստոնէութիւնը յայտնուելուն սէջ՝ ուր որ մտաւ, իսկոյն կանգնեցան այն տեղւոյն անոնք որբերու, հիւանդներու, պանդուխտներու, ծերերու, աղքատներու, բորոտներու, ուրուկներու և այլոց յատուկ բարեպաշտական շինութիւններ խիտ ընդ խիտ։ Ապացուցեալ եզական ճշմարտութիւն մը կրնայ ըսուիլ, թէ Աւետարանը ջնջեց բազմակնութիւնը, թեթեւցուց պատերազմի սոսկումը, գերիները փրկեց, տրուկները արձակեց, աստուային հարստահարութեան ոգին սանձեց ու բարբարոս ազգաց օրէնքներն ազնուացուց։ Ա՛պացոյց անհատաւոր պատմիչը վկայելով թէ վերոյիշեալ մոլութեանց դէմ չմաքառեցաւ հեթանոսութիւնը, կը յաւելու. «Ճշմարտութիւնն ու անկեղծութիւնը կ'ստիպեն զմեզ խոստովանիլ, թէ հեթանոս կամ կռապաշտ ազգաց Քրիստոնէութեան դարձը՝ անոնց շատ աշխարհային օգուտներ բերաւ. ուսման և դպրութեան խոպան մանկին արգիլեց. ժամանակին վայրենութիւնները մեղմացուց, աղքատն ու անտէրունչը պատսպարեց, և քաղաքային ընկերութեան խաղաղութիւնն ու կարգը պահպանեց կամ նորէն կենդանացուց»։

Ապա ուրեմն այն Գիրքը՝ որուն բարոյական ուսուցմունքը այս ամեն չարիքը կ'արգելու և անոնց առաջքնառնելէ զատ՝ դէմ ընդ դէմ հակառակը բարիք կը պողպաքերէ ու կ'արդիւնաւորէ, և բոլոր դարուց մարդկային մտաց հատղութենէն դուրս մնացած՝ մարդկային մտաց հանճարել հնարել կըրցած մարդավարութեան մեծ պարտք մը որ քաղաքական և ընկերական կեանքը կ'անուշէ և մարդկային ազգը իբր մէկ ընտանիք սիրով իրար կը զօդէ, անանկ պարտք մը կ'ըսեմ որուն ծանօթութիւնը ոչ միայն իմաստութեամբ իմաստասիրութեամբ գտնել հնար եղած չէր, այլ նաեւ գտնելու ակնկալութիւն ալ չկար, անանկ անծանօթ և յոյժ կարեւոր պարտք մը 'ի վեր հանող արդիւնաւորող Գիրքը կարելի չէ որ մարդկային մտօք՝ մարդկային խորհրդով հեղինակուած ըլլայ. այն գիրքը Աստուածային է, և Աստուծոյ ներշնչութեամբը հեղինակուած է։

ԳՕԴՈՒԱԾ Ե·

Վ-ԵՒՈՒՆԻՆ Վ-ՈՐԴՈՈՒԹԻՒՆ Ս· ԳՐՈՑ

Ս· Գրոց Աստուածայնութիւնը քալ եւս՝ի միտ առնելու համար անոր վարդապետութիւննալ ձեռք առնելու և քննելու եմք թէ արդեօք հնա՞ր է որ անիկայ մարդահնար խաբէութիւն մ՚ըլլայ։

— Ս· Գրոց մէջ չկայ բան մը, վարդապետութիւն՝ հրահանգ՝ բարոյական՝ ծէս՝ գործ, ո՛չ ալ առնցմէ մէկուն վերաբերեալ ստորակէտ մը՝ որ Աստուածային չըլլայ։

— Թէպէտ և մենք չեմք կրնար ահսնանել թէ Աստուած այսպէս և ո՛չ այնպէս պէտք է գործել վարդապետել եւ, սակայն կրնանք որոշել թէ այսպէս և ո՛չ այնպէս գործել վարդապետելը մարդո՞ւ գործ է՝ թէ Աստուծոյ։

Քննեմք ուրեմն նախաքրիստոսեան Հրէից կրօնքն ու զանոնք չրջապատող կրօնքները։ Բոլոր հեթանոսաց կրօնքները անանկ կը վարդապետէին Աստուծոյ և Աստուածայնոց վրայ, որ և ո՛չ մանուկ տղայ մը կրնայ վճռել թէ Աստուածային յատկութիւն կրնան ըլլալ անոնք։ Հեթանոսք իրենց աստուածներուն անանկ յատկութիւններ կու տան՝ ի՞նչ յատկութիւններ որ իրենք ունին։ — Հարցուր փառասէրն կենսասէրը գիտնական Աթենացւոյն թէ իւր Աստուածն ի՞նչ բնութիւն ունի· քեզի կա՛մ Ափրոդիտեայ և կա՛մ Արտեմեայ և կա՛մ Բաքոսի պիտի խօսի։ Հարցուր պատերազմիկ Սպարտացւոյն և Հռովմայեցւոյն· նա Արէսի և սա Կուբրինոսի վրայ պիտի ճառէ։ Հարցուր իրենց կանանց, որք պատերազմականէ էին ազգանց, որոնք ալ գերլեռնայէ կամ Պալատէ ուրիշի վրայ չպիտի կրնան ճառել։ Սորկածին Մարին և պարսկին հարցընես նէ՝ աստուած այսպէս և այնպէս կը հրամայէ կ՚ըսէ, բայց թագաւորը իշխան է ո՛չ այսպէս և ո՛չ այնպէս գործելու, այլ իւր ուզածին պէս։ Եգիպտացւոյն աստուածը չհարցընելնիս լաւագոյն կ՚ըլլայ, քանզի չուանը չէ նէ՝ կատուն, օձը չէ նէ՝ սխտորը, և այս ամենուն վրայ եզ մ՚ալ պիտի ցուցընէ, և պիտի ըսէ թէ իմ Աստուածոյս հոգին այս եզին մէջ կը բնակի։ Հնդիկն հարցուր, անանկ անուն մը պիտի տայ իւր աստուածոյն որ իւր ազգային բնութիւնը բացատրելու հարկ չունայր· անուն մը՝ որ կը նշանակէ ղեղխութիւն՝ պղծագործութիւն և անգթութիւն։ Իրենց ամենէն մեծ խորհուրդները հարցուր Ենոքաբոսիի, պիտի հրապարակէ թէ ամենէն խայտառակ խաբէութիւններն Աստուածային գաղտնեաց տեղ կը բռնեն։ — Իսկ իրենց աստուածային սպասուհաց ո՞նց կը հարցըներ· է՞ն մեծ ո՞նց ու է՛ն վեհագոյն դից և դիցուհեաց արբանեակն ո՞նց այժմեան ամենէն պղծագործ ժողովրդեան մէջ ալ այժմ գոյ են։ . . . Կլոդիոս Ալէքսի (՝ի Ընծայ. Բէհպ. Մասն Բ· Յօդ· Ա·) ՝ի կարճոյ կը բացատրէ Հաւասարեցւոյը, որ այլոց ո՞նց բոլն քով է՛ն սրբագոյնները կրնային հաւասարիլ· «Յոյնութիւն ո՛չ միայն զօրացեալ ընդ ամենայն աշխարհն Հռոմոց, կ՚ըսէ, այլ և յայտնի աիներեւ անառաջնայր, ընկալեալ և սրբագանեալ՝ի կրօնից՝ ոչ ինչ զանխտալ են՝ի դիտոց՝ որպիսի ինչ Սպանդաբամբուտական պաշտաւնեքն էին, և ո՞նք Ափրոդիտէ Ամենայն ուրեք ընդ առաջ ելանէին Ափրոդիտէ, Ադոնիս, Գանիմեդէս և ամենաներոտարան Աստուածդ։ Յամենայն ծագկոցս բուրաստանաց նախիչխան բազմէին դրօշեալք ծաղրալից աստուածոցն։ Ծոլերական երգք կանանց տուիանք դիցն էին, որպէս է տեսանել առ Վիրգիլիոսի և առ Ովիդեայ·

և բազմագոյնք 'ի տեսարանաց նոցա կա՛մ պիղծք էին և կամ խիստք և անագորոյնք» : (Տե՛ս Եւս 'ի Վէրթէլ Մշակ· Դ· Ոճէր· Ամալեկեր· Դ·) Խնամատեսութեան Գիրքն ալ պատճառներովն ու հետեւանքներովը մանրապատում կը նկարագրէ գայս · «Սկիզբն պատերազմական հնարագիտութիւն կոչի է · և գիւտք նոցա ապականութիւն կենաց : Զի ո՛չ էր 'ի սկզբանէ , և ո՛չ կացցէ յաւիտեան : Ընդակրօնութեամբ մարդկան եմուտ յաշխարհս , և վասն այնորիկ 'ի կարճոյ հնարեցաւ վախճան նոցա : — Զի տարաժամ ագով թաղծեալ հայր , վաղամեռիկ լինելոյ որդւոյ իւրոյ արար պատկեր : Արդ զայն ժամու զմեռեալ մարդն՝ այժմ իրրեւ զաստուած պատուեաց . և աւանդեաց իւրոց հնազանդելոցն խորհուրդս և նուէրս : Ապա ժամանակաւ ձգեալ աւրաւրիչս սովորութիւնն իրրեւ զօրէնս պահեցաւ . և բռնաւորաց հրամանաւ կարդէին 'ի պաշտօն դրօշեալքն : Զորս յանդիման պատուել ո՛չ կարէին մարդիկ վասն հեռի բնակելոյ , զգացական տեսլին , զնոյնօրինակ քանդակեցին և գրօշեցին , և յայտնի պատկեր պատուելոյ թագաւորին արարին , զի իրրեւ զմօտաւոր զհեռաւորն ողջեսցեն փութով : Ի յառաջութիւն պաշտամանն զանդէտան , յետ այնորիկ ճարտարին հանճարեակաց ազատութիւն արուեստից : Զի նա թերեւս վասն զիշխանին կամեցեալ զիւրան հաճելոյ , բռնադատեաց արուեստաւն , ածել զնմանութիւնն 'ի գեղեցկութիւն : Իսկ բազմութիւնն պատրեալ վասն պաշտաճողութեան գործոյն , զայն որ յառաջ քան զաւակաւիկ մի պատուեալ էր մարդն , այժմ պաշտօն հանուրցաւ · և այն եղեւ կենաց 'ի զարանակալութիւն և 'ի գայթակղութիւն : Զի օրեւմ յայնժամ առ վշտի բռնութեան ծառայէին մարդիկ · արդ՝ ազնհաղորդական անուանն՝ քարանց և փայտից եդին : Եւ այն ո՛չ եղեւ

բաւական նոցա առ 'ի մոլորելոյ Աստուծոյ դիտութենէն · այլ մինչ 'ի մեծի պատերազմի անդիտութեանն կէին՝ զայնպիսի չարիս խաղալութիւն անուանէին · կամ զորդեկոտոր նուէրսն , կամ զդաղնի խորհուրդսն , կամ զմոլեգին յայլոյ կրօնից առնառակութիւնս բերեալ : Ո՛չ գիւտանս և ո՛չ պատուհասնութիւն տակաւին սուրբ պահեն : Այլ գընկերք կամ վարանեալ սպանանէ , կամ դաղտնապէս ցանկացուցանէ : Եւ ամենայն ինչ խառն 'ի խուռն · արիւն և սպանութիւն · գողութիւն և նենգութիւն , ապականութիւն , անհաւատութիւն , խռովութիւն , երդմնազանութիւն , աղմկութիւն , բարեաց երախտեաց անյիշատակութիւն , ոգւոց պղծութիւն , ծննդեան փոփոխումն , ամուսնութեանց անստակութիւն , շնութիւն , գիջութիւն · դի անուն կոչեն և պաշտօն՝ ամենայն չարի սկիզբն , և պատճառք և կատարած է : Կամ թէ՝ ուրախ եղեալ՝ մոլին · կամ թէ մարգարէանան՝ ստութիւն · կամ թէ կեան անիրաւութեամբ · կամ թէ 'ի սուտ երդումն վաղվաղեն : Զի յանչուշ կոտան յուսացեալք՝ երդնուն սուտ , և պատժի ո՛չ ունին ակն» : (Խոսք· Ս·ՂՎ· Ժդ· 12—30·)

Արդ այս ամեն գեղծութիւնները կը վարդապետին կը պաշտպին կը ստնդին աշխարհի յ'ն փիլիսփայ մարդիկ : Կը գտնուի՞ արդեօք Քրիստոնեայ հրահանգաց մէջ ծնած մանուկ մը՝ որ չգայնի՝ առնոնցմէ աւելի ծանրութիւն ունեցող վարդապետութիւններէ եւս , եւ ծէսերէ · և զորս խայտառակ ստաղներէ՝ և ստնդերնին ալ հասարակաց ուրախութեան համար սահմանուած լոկ մարմնոյ հեշտախտութեան ստնդավաճառներէ լաւագոյն քանի մը տեղ դնէ , եթէ անառակութեանց ճշմարիտ դըպրոցներ չհամարէ :

Թերեւս ըսուի թէ ատոնք ամենը ոամկին խու-

ժանրին կրօքն ու պաշտաւունքն էին, իմաստասէրը փիլիսոփոք աւելի լուսաւոր և Աստուածամայելուչ հաւատոք վարդապետութիւն և պաշտօն ունէին : Բայց ասոնք ալ ոչինչ ընդհատ անվիտ կը գտնեւնք անոնցմէ : — Աշխարհի հին և նոր իմաստունները և անոնցմէ ալ աւելիէն անուանիներէն ոմանք արդարեւ ճանչցան Աստուծոյ միութիւնը, բայց այն ալ չկրեցնար թէ լոկ բնական լուսով գտան . նախածնողաց աւանդութիւնն էր պիրենք առ այն առաջնորդողը . քանզի կը տեսանեմք որ անոնցմէ ո՛չ ոք այն գերագոյն էութեանը բնութեանը և առորոգելեաց վրայ առաւգագոյն բան մը հաստատապէս կրցաւ ստորագել կամ բացատրել, այլ՝ ինչ որ ալ ըսին՝ երկուանօք և տարակուսութեամբ էր : — Սոկրատ առ այս՝ լաւագոյն բան մը չկրցաւ սովրեցընել քան զայն՝ թէ բան մը չգիտեմ, և խրատեց դիւր Ալսիբիատը թէ՝ Աստուածայնոց վրայօք «Չէ արժան որ միտս ունին պնդել վիճելով » : (Պլատն 'ի փէդոն) Մարդոյ վերջին վախճանին վրայօք ալ երկար և մանրամասն նկարագրութիւն և հաստատութիւն մը ընելէն ետքը՝ նոյն երկուանքն ու երկբայութիւնը կնիք դրաւ ըսածներուն . « Արդ գիտացեալ, զի յոյս իմ է վտանգել առանց առ երջանիկս 'ի մարդկանէ , բայց առաջիւ պնդել չունիմ . . . : Ձե՛ս սիրելի բարեկամ, որպէս չահառագոյնս խորհիմ . զի եթէ հանդիպեսցի ճըշմարիտ լինել զոր ասեմս , բարի է հաւատալ . իսկ եթէ ոչինչ հասարակացի յետ վախճանիս , զայս զոս նեաշահիցիմ, զի յառաջիկայ ժամուս նուազագոյն մերձաւորաց տագնապուկ լինիցիմ ազալոմս : Եւ շնորհարեսցէ անխնամատուբիւնս այս՝ որ չարն է , այլ ընդ հուպ անհետ լիցի » : (Պլատն 'ի փէդոն :) Անասակայն յետին յիմարութեամբ մը որ իւր ուսուցմանց ու խնամատարէր վարդապետութեանց հակառակ կու գար , կուսակ ըրաւ իւր Կրիտոնին՝ որ ապաքաղաղ մը պարտու Ասկղեպիոս աստուածին : Պիւթագորաս աստղերն ու մոլորակները աստուածոց կարգը կը դասէր : Աստուածային հարբաւեալ Պղատոն՝ տեղ տեղ վայելուչ և ազնիւ ոճով խօսեցաւ Աստուածութեան վրայ , բայց ուրիշ տեղեր ալ՝ երկնաւոր և երկրաւոր աստուածներ կան կ'ըսէ և կ'ուզէ որ ամենուն ալ պատիւ մատուցուին . ինքն իսկ ոտներն սահմանեց այս աստուածներու խոժանին , անանկ գարշելի և պիղծ ոտներն՝ որ սահմանադրող իմաստասիրին մտացը վրայ յապուշ կը կրթէ զմարդ , մտածելու՝ թէ իմաստասէր միտքն իսկ գերբնական լուսոյ օգնութենէն զուրկ գտնուած ատեն՝ անոր լոկ բնական լոյսը ինչ աստիճան անարժանութեանց կ'իջնայ կը նուաստանայ եղեր : Անանկ կը գրէ Փլուն հեռուէն պղատոնի՝ այս պղատոնեան ոտնէն վրայ . «Պղատոնեան խրտմճանութիւնք յանկին գմտովին 'ի սէր հեչտախտութեանց , ո՛չ միայն արանց ճակատանելոց գհետ կանանց , կամ կանանց վատարելոց առ արս , քանզի այսոքիկ և չօրինաց անտի ընանին պարտիք , այլ արուաց ընդ արուս հատակաւ տիոց և եթ ատրբերեալս խոստատակելոց : Եւ եթէ իցեն չիշատակութիւնք ինչ յաղագս սիրոյ կամ երկնային Աստղեան , լոկ քօղոց աղագաւ առնանին » : Կիկերոնի յաղագս բընութեան աստուածոց գրուածները ըստ բաւականին կը ցուցընեն մեզ հին փիլիսոփայից ունայնաբանութիւններն ու մոլութիւնները . անանկ որ ա՛լ բնաւ տարակուսի տեղի չմնար ըսելու համար թէ ամենայնիւ մոլար և գեռնաքարշ էր անոնց աստուածաբանութիւնը կամ դիցաբանութիւնը : Քանի՛ քանիներ՝ կա՛մ կ'ուրանային նախախնամութիւնը՝ ինչպէս Եպիկուրեանք , և կա՛մ երկբայութեամբ կ'ընդունէին՝ ինչպէս Ակադեմեայք . բայց

ամենքը կը խոստովանէին ճակատագիրն ու բաղդը Ա՛րշաւի ստրատեգական աշխարհին ծագման, արարչագործութեան, հոգւոյ և մարմնոյ վերջին վախճանին և այլոց բազմաց իրաց վրայ։ . . . Ուրեմն ասկից յայտնապէս կ՛երեւի թէ՝ այն փիլիսոփայք՝ ինչ ինչ ճշմարտութիւններ (մասամբ իւիք) քարոզեցին ուսուցին ալ նէ՝ իրենց խնամատարէր մտօքը բնական լուսով գտած չէին, այլ ինչպէս որ հաստատակաց հաւատքն կը հաստատէ՝ Եբրայեցւոց Աստուածաշունչ օրէնքներէն քաղեր փոխ առեր էին։ — Հերմիպպոս Պլուտարքոսի համար կը գրէ (Ի վարս Պիւթագորայ ընդդէմ Ապիոն. Գր. Բ.) թէ «Զայսոսիկ ասաց և արար նա ըստ կարծեաց Հրէից և Թրակացւոց, փոխադրելովն զնոսա յինքն։ Չի արդարեւ բազում ինչ քաղեաց սա՝ ի փիլիսոփայութիւն իւր՝ յօրինաց անտի Հրէից»։ Պլուտարքոսի պատգամներուն մին է «Հնպիլ՝ լմեռնելոտի»։ Մազբոս և Պորփիւր Պլուտարքոսէն կ՛առնուն «քու աստուծոդ անունը մատնիդ վրայ չը դրոչմես» խօսքը Յուվենալոս (ընդդէմ Ապիոն. Գր. Բ.) «մի՛ առնուցուս, զոր եդեր ոչ» օրէնքը Հրէից կ՛ընծայէ, Յաւսպիկոս ալ Պիւթագորայ. քանզի Պիւթագոր այս ալ Հրէից օրէնքէն առած էր, ինչպէս նաեւ «մի՛ ապականեսցի կամ ձկնասեցի ծառ պտղաբեր» օրէնքը (Բ. Օրէն. Ի. 19.) և «մի՛ անցանէր ուր՝ ի ծունկս խոնարհի էշ» պատգամը (Թէ-ս. Իր. 27։) Պորփիւրոս հակիրճ բանիւք և յայտնի կը խոստովանի թէ Պղատոն շատ բան առաւ՝ ի Հրէից (Տե՛ս ա՛ն Եւսեբ. Ե Թէոդորէթ։)

Միայն Եբրայեցւոց տեսար անգէտ բիւրտ ժողովուրդը թողուլ որ քիչուր էր և որուն մէջ ճըշմարիտ Աստուածպաշտութիւնը պահուեցաւ անցած մինչեւ՝ ի Քրիստոս, բոլոր գայն շրջապատող և յայնժամու ծանուցեալ տիեզերաց բովանդակ

ազգերն ու ժողովուրդները (բաց՝ ի Սինէացւոյն՝ զորմէ քիչ մը ետքը ունինք խօսիլ.) հեթանոսութեան գարշ սիրտին մէջ կը թաւալէին։ Ունէք ծայրաստիճան անհաւատութեամբ վարակեալ անհատներ զիրքեր ու դիցանոյշներ կը պաշտէին. ոմանք արեւն ու լուսինը, կրակը՝ ջուրը՝ հողն ու հողմերը. այլք երկիրը, ծովը, գետերը, աղբիւրները, միով բանիւ բովանդակ բնութիւնը։ Եկաք Աստուածաստութիւնն իջուցին մինչեւ անասնոց անբանից և անշունչ բանջարեղինաց հաւատարեցուցին. շատք ևս համօրէն տիեզերքը աստուածութեան խնորով զանգուած՝ կամ աստուածային ոգւով ոգեւորեալ դրնելով հանդերձատուածութիւն քարոզեցին. «աւելն քան աստուած է» ըսին. աստուած չէ ըսելու բան չմնաց։ Խնամատարեամբ ըսաւ այն՝ որ հեթանոսաց համար ըսաւ թէ՝ անոնց համար «աւելային ինչ աստուած էր՝ քան յԱստուծոյ»։

Գիշ մը եւս մանրամասնութեանց իջնենք խնամատարեամբ պանծացող քաղաքակիրթ ազգաց կրօնից վարդ ապերասութեան քննութեան մէջ։ — Քաղդէացիք ազգովին խնամատարեամբ կը պարծէին. և ահա Բաբիլոնի մէջ վիշապ մը կը պաշտէին. և կը հաւատային՝ թէ Բէլ աստուածնին այցելութիւն կ՛ընէ կանանց, և իբր մեհենին մէջ իրեն սեղանին վրայ դրուած կերակուրները կ՛ուտէ. (ինչպէս կը պատմէ Դանիէլի պէս՝ Երողոտոս ալ։)

Ա՛րշաւի ճարտար և խնամատուն էին փիւնիկեցիք. բայց կրօնքնին յետին թարձրամտութեան մէջ էր. իրենց կրօնական գաղափարաց նուաստախոհութիւնը ցուցընելու համար հերիք է ըսելը, թէ երբ որ Մեծն Ալէքսանդր Տիւրոսը պաշարեց՝ Հերակլեայ արձանը առուր մը կապեցին կաշկանդեցին, վախնալով որ իրենց այս աստուածը դիրենք չթողու փախչի պատերազմին արհաւրաց միջոցին։ — Աս-

րիք ալ այս նուաստախոհութենէն բաժիններին ուշ-
նէին · ազգովին՝ ձուկ և Մանանայ կը պաշտէին ։

Եգիպտա՛ս՝ որ և սա՛ի սկզբանէ գիտութեան
որքանը և հետզհետէ արուեստից ճարտարութեանց
կայանն եղաւ · իւր է՛ն ծագկեալ առենը աստուա-
ծական պաշտօն կը տանէր կովերու , շուներու , կա-
տուներու , կոկորդիլոսներու , սոխերու սխտորնե-
րու անդամ , զորս Յունաղ կ՛երդիծանէ ըսելով ,
(Juvénal· ժե·) « Ո՜հ սրբազան ազանց , որոց պարա-
ւէզները տեսակ տեսակ աստուածներ կը բուսցը-
նեն » ։ — Ասորիք՝ կ՛ըսէ Փիկերոն , ճուկը կը պատ-
ուէն կը մեծարեն , իսկ Եգիպտացիք համարէ թէ
ամեն տեսակ անբաններն աստուածացուցին » ։ Ե-
գիպտացիք՝ սահմանաւոր ժամանակի համար իրենց
Ապիս եզը պաշտելով , երբ սա իրեն կենաց սահ-
մանեալ ժամանակին աւելի ապրէր , պինքը իւր տա-
ճարին կը հանէին , աստուածական փառօք և մեծ
հանդիսիւ ՆՀղոս գետին եզերքը կը բերէին՝ ճամ-
բան միշտ իւր առեն մկ բառաչին երկրպագելով
և հոն իւր աստուածական փառքերէն ծանրագին
օթոցներէն և ոսկեհուռ զարդերէն մերկացընելով ,
Նեղոսին մէջ կը նետէին պինքը չարաչար հալածե-
լով քարերով և փայտերով՝ մինչեւ որ գետին մէջ
իջղէին պինքը · և այնուհետեւ բոլոր եգիպտա-
ցիներն սուգի մէջ կը մնային՝ իրենց Ապիսին
կորուսեան վրայ , քուրմերը դլուխնին կը գերծէին ,
դաստառաններ , ոծներ , հանդէսներ , հարսանիք-
ներ , ամեն բան կը պատրէր , մինչեւ հաճէր իրենց
Ապիս աստուածը մկ ուրիշ անգան եղի մը մէջ
յայտնուելու ։ . . .

Վերջերը Հելլենացիք Յոյնք խնամոնացան և քա-
ղաքակրթեցան յոյժ յոյժ · ասոնց համբաւը մինչեւ
երկինք բարձրացաւ · և իրաւամբք կրնան կոչուիլ
դաչեակ և անուղիչ խնամտութեան · բայց դիցաբա-

նութիւններին՝ ամենէն աւելի անհեթեթ և խայտա-
ռակ ։ Ասոնց աստուածները դաս դաս բաժնուած
էին , որոց գրեթէ ամենքն ալ ունէին հայր , մայր ,
որդիք , եղբարք , քոյրք , թոռունք եւ · և ասոնց ազ-
գաբանութիւնը չինէց Հեսիոդոս ։ Ասոնք իրենց
այս աստուածներնուն կ՛ընծայէին մարդկային ազգի
ամենէն ցած լեզուով բացատրուած զազրագոյն և
դարշելի ախտաւորութիւնները · ինչպէս են Պիտի
կամ Պրամապդայ հայրասպանութիւն , չնութիւնք
և մծղնէութիւնք , Հերայ նախանձը , Արէսի մոլեգ-
նութիւնը , Հերմեայ գողութիւնքն ու աւազակու-
թիւնքը , Աստղկան կամ Ափրոդիտեայ յայտնի լըկ-
տութիւնը , (յորմէ « Աֆրոդիսեան ախտ » անունն ա-
ռած է անօրէն խառնակութիւններէ ծնունդ ա-
ռած մաշարատական ախտը ·) Ողջախոհ համբաւ-
եալ Անահտայ կամ Արտեմեայ անկարգութիւն-
ներն ու կռիւները , և ուրիշ շատ մը անկարգու-
թիւններ ալ որք մարդկային տկարութենէն ալ շատ
վար են , զորս ունեցած են ամենայն դիք ։ Ամե-
նեւին իսկ անուանի է բովանդակ երկնային դից
ընդդէմ Պրամադդայ վտարանջելը , և անոնց՝ այն
անմիտ ամենազօր ըսուած աստուածներուն՝ երկ-
րածին հողածին եգէոն անուն հսկայէն յաղթուել-
նին · դիքեր դիցուհիներ կան որոց խեղութիւն-
ներն ու անառահութիւնները աստուածներէն պատ-
ժուած են · Հերա ընդ երկինս և ընդ երկիր կախ-
ուեցաւ գլխ՛ի վայր՝ Պրամադդէն , Արէս և Աստղիկ
վարմի մէջ թակարդուած Արէսէն՝ աստուածներուն
և աստուածուհեաց պարսն մէջ առակ նշաւակի
եղան · Ապողոն երկինքէն վռնտուեցաւ բայց յետոյ
վերստին շնորհ գտաւ ընդունուելու հոն · Ատէ խա-
պառ արտաքսեցաւ Ամիսկեայ · Աստուրն շատոնց
վռնտուած էր յերկինից և Լատիում բնակեցաւ ,
մինչեւ իսկ սպանաւ յորդւոյն՝ի Դիայ , եւ ։ Ասոնք

ամենքը պաշտելի և երկրպագելի աստուածներ են եղեր, իսկաստաչրներէն ճանչցուած. և որպէս թէ այսչափ ժողովին աստուածները հերիք չեն, աստուածացուցին այդ իսկաստաչրները նաեւ մեռելոց և չարութեանց մէջ գերապանցող մարդիկն ալ։

Շուտիմ, որ է՛ն պայծառ քաղաքակրթութեան առաջին իսկ ամեն սեռի պաշտամունք լուսոյին եղած է՛ր։ Եսիդացուն Ասիղեպիոսը և իւրաքանչիւր դիցաբոյսը Շուտիմ բերել տուին հատարակաց ծախիք, ինչպէս կը պատմէ Տիտոս Լիւիոս։ Տաճարներ բազմաներ կանգնեցին անդոյ իրաց անուանց, ինչպէս է Քաղքեդոնեան, Ցուսոյ, Բաղդի, Աստղչութեան եւ. և աւելի մեծ անուանութեանէ՛ի պաշտաօն առին Երկիւղը, Դալուկը, Տենդը, և որիշ ցաւերն ու գառասպարները, որոց սիրհեանները՛ բաժիններ ալ հինեցին։ Գողերն ու աւազակներն ալ իրենց պաշտպան աստուած ունեցան՝ Վաւերնա աստուածուհին. և գիրքը յօդնութիւն կը գրչէին իրենց անտես յաչող և անպատիժ գողութիւնն ընել յաջողելու համար. և իրր թէ Ովիտեան քերթուածին ընթերցուն պէս կ՛աղաթէին անոր. «Ինձ Արբատան Վաւերնա. տուր ինձ որ աչքերդ խաբեմ, տուր ինձ որ տուրդ ու բարեպաշտ երեւնամ. մեղքը մութով պատէ՛, և մեծատարած թանձր ամպ ձգէ ամեն կողմ»։ — Սակայն արհաւիրք կ՛ազդեն մեզ երբ կը մտածենք որ աստուածոց դասը դասակարգեալ են բռնութիւն և բնդդունութիւն, և աստուածացան Մեղդունոս կամ Դուդունոս, և Պերտոս (իշանդաւն) և Սոնքիկուտիոս (աղքատիկոյս), առանց ատիր ինչ իրաւք ու իրաւատուկ աստուած հնարել կարենալ է՛նին անարդութիւն և նախատինք էր անոնց դիմել և դիցուհեաց՝ որ աստուածուհեաց չարքը մտան Լուբա, Փաւնա և Փլորիա անուն եշանաւոր բոլորը։

Ասիկա հին իսկաստաչրաց դիցաբանութիւնէ։

Այժմու աշխարհի վար դիցաբանութիւնն ալ նմանապէս այն սղպաց՝ որոց դեռ ծագած չէ՛ յայտնութեան լոյսը։ — Գարմից երկիրը՝ ուր այլապէսոց երկիրը կ՛աւարտի, և որ մահմետականութեան Աթի աղանդին կը հետեւի, որոնք որ Մահմէտի դէմքին չեն նպատակիր, Զրադաշտի հին կրօնքը կը դաւանին տեղ տեղ, և կ՛ըսուին Կեպէր կամ Կեվրէր։ Աստղ երկրիր չեն մնացեր, և փոխանակ գերագոյն Աստուծոյ՝ Որմիզդը կը պաշտեն, որ ըստ նոցա երկրորդական եղական աստուած մ՛է, որուն յանձնած է գերագոյն Աստուած աշխարհի տնտեսութիւնը։ Աստղ կ՛ուսուցանեն թէ երկինքը՝ երկիրը՝ ջրերն՝ ամենայն մնաստնք բնութեան և հանդիպին տարերք մի են հրեշտակներով կամ դիւական ոգիներով, զորոնք եւս ոչինչ ընդհատ յարգել և մեծարել արժան է։ Կրակին վրայ թքելը, անարժէքը և պայն ջուրը նետելը՝ դժոխոց արժանի մեծ մեղք է։ Անբաւ լուացմունքներ ունին արգելեալ հատուած, որոց մէջ ամենէն մեծն է արիւնոց կամ կովուց միզով լուացումը։ Ըստ սոցա հաւատարչաւի մեղք են մարդ սպաննելն ու անասուն սպաննելը, չնութիւնը ու մեռելատեաց դէմքը։ Դիահներին հողի տակ չեն թաղեր. այլ կը թողուն որ գազ օդին մէջ փտին ագաւնիներն և կամ գազանաց կերակուր ըլլան. բոլոր այլակրօնից դէմ ալ անհաշտ ատելութիւն ունին և՛ի գազաւ կը խորշին անոնցմէ։

Աստուածութեան գաղափարը գազաւորուած խանգարուած է Հնդկաց մէջ, և չատ ազգեր կը հաւատան թէ աստուածները կ՛ուտեն կը խմեն։ Անոնց իմաստուններն ու իմաստասէրները աստուածութիւն կամ ընդհանրական հոգւոյ գէս բան մը կ՛ընդունին։ Գանի մը վեդականերու (մեհեան-

ներու) մէջ պաշտօն կը ստանուցանեն Կինկասյ գարշելի խառնակութեան պատկերին։ Երբ որ այր մարդ մեռնի՝ անոր կիներն ու գերիները իրենց բռնաւորին խարույկը կը ձգուին ու կ՚այրուին. ինչպէս նաեւ թագաւորը մեռնելուն անոր ընտանիի ծառայներն ալ մահու կը մատնուին՝ միւս կենաց մէջ անոր ծառայութիւնները ընելու համար։ Անդուք են առ մարդիկ. մեծ գութ ունին անբան կենդանեաց, և արգիլուած է սպաննել ամեն տեսակ կենդանի, թէ՛ու ձիատակար և ամեհի ըլլայ։ Հիւանդանոցներ ալ ունին։ յորս կը դարմանեն անբաններըը, է՛ն գարշելիներն ալ, մինչեւ իսկ ճանճերը։ Զորս ցեղերու բաժնուած են, որոց բնաւ մին միւսին հետ առուտուր և հաղորդակցութիւն չունին. կրօնքը որ՝ի մարդիկ պէտք է ըլլայ զօդ կապակցութիւն միութեան, տիրապէս բաժանիչ է՝ի հնդիկս։ Ասոնց քուրմերն ու պրահմանք մեծ խըղնամքով և զգուշութեամբ ծածուկ կը պահեն իրենց արքայական կարծեցեալ մատեաններին. անկարելի է որ ոեւիմկ ոք հանդարձակի զայն կարդալու կամ ընթերցման ունկնդրութիւն ընելու, ապա թէ ոչ անոր ականջները հալած մոմով կը խցեն, բերանն ալ եռացեալ ձէթ կը լեցընեն։ Ամեն չարագործութիւն և յանցանք դիւրաւ քաւելի է անոնց համար. գանգէս գետին ջուրը ամեն մեղք և գարշութիւն և ոճիր կը մաքրէ կը սրբէ. և թէ որ մէկը իւր մեղքերը չքաւած մեռնի, անոր դիակն մոխիրը այն սրբատար գետին մէջ թափելը հերիք է, անոր ապիրատութեանց ամենքն ալ՝ի սպառ կը քաւուին։

Ցայսկոյս Գանգիսի ցամաքակղզին Ցեքսանի ժողովուրդք սովորութիւն ունին ամեն օր առտուանց կանուխ գետերնին երթալ անասունին երկրպագութիւն ընելու, միայն թէ ազատ չըլլայ այն։ Մա-

լապարի մէջ ուրիշ են արանց առտուածները ուրիշ և կանանցը, և Հռովմի հիւպատոսաց պէս կը փոխփրխուին առնք։ Գալիդուդի քրմաց՝ իբր առ ջերմեռանդութեան՝ աղջիկներ կը մատուցանէին. . . . Առագաստյ թագաւորութեան մէջ խղճի դէմ կը սեպուի այր մարդու կին առնուլ զկոյս աղջիկ, և ընդ դրացոց խնդրեն տալ զնա կնացուցանել։ Ցաքրներու գլխաւոր գործոց մին է գհարսնացու կուսանս կնացուցանել։ Պենկալայի ծոցին մէջ ձակրէնադ կամ ձընկըրնադ դից մեհենին մէջ խնկացնորներն չատերը կը խեղդեն խունն բաղմութեան մէջ, ուրիշներն ալ կոխոտել կու տան այն կառքին տակ յոր բարձած են ահագին արձան մը զոր իրենց աստուածը կ՚անուանեն, ուրիշները ջրոց մէջ կը խեղդեն՝ի սրբութիւն, և ուրիշներն ալ կարաններու մէջ անօթի կ՚սպաննեն։ Բնկուի մէջ կոկորդիլոսներն ու կապիկները կը պաշտեն, և երջանկութիւն կը համարեն անոնց կերակուր ըլլալը։ Պահասցիք որոց իմաստութիւնն այնչափ կը դովուի, մեկ Աստուած կը ճանչնան, այլ ո՛չ անեղ. իբր զօրութեամբքը ու արդեամբքը աստուածացեալ՝ անհամար մարմիններէ անցնելէն ետքը։ Եւ այս կերպարանափոխութիւնը՝ կամ լաւ եւս ոգեփոխութիւնը՝՝ի մարմնոց՝՝ի մարմին հանրական հաւատք է այն արեւելեան սահմանաց մէջ։

Զինաց հայր Վենէացւոց աշխարհը և ազգը որ նմանապէս գովուած են մեր փիլիսոփայներէն և որք մեծանուն կոնփուկիոսով կը պարծին, սակայն անուսումնասիրաբար շնչահասաւ անթիւ ժողովուրդներով լի է. որք կը հաւատան մոգութեան, երազոց, գուշակութեանց, վիճակաց, չար ոգւոց, և ամեն հինաւուրց սուտքիւնք և տղայական առասպելք արմատ բռնած՝զօրացած են մէջերնին։ Հրաշագործական անխնամ գուրս կը թողուն նորածին տղայքը՝ ինչ-

պէս ուրիշ տեղեր չանց լակոտներն ու կատուներու ձագերը. և այսպէս տարուէ տարի 30,000 էն ասկի տղաք կ'սպաննեն խժդժութեամբ։ Չորք կարող են պատկերին ծախել. արք անպտղութեան և անողորմ իշխանութիւնը կը վարեն կանանց վրայ. գերիներ իրենց այրերու գերեզմանաց վրայ զոհելու սովորութիւնը դեռ դադրած չէ՛ի սպառ. և բազմակնութիւնը շատ յաճախուած սովորութիւն է մէջերնին. պոռնկութեան քնակութիւնները լեցուն են միանձնուհի և կիրսեռանդ հասարեալ կիներով, որք անձանց պատիւ կը հասարին իբրեւ հարճ անոնց ծառայելը։ Աստք են Ավանգացւոց արժանի յոյժ յարգի սովորութիւնները։ — Ձարտնի մէջ ալնոյն բարոյականքն ու դաստանութիւնը կայ, անձնասպանութիւնը՝ ինչպէս Ցոյն և Հռովմայեցի փիլիսոփայից մէջ էր՝ սոնց մէջ ալ առաքինական քաջութիւն համարուած է, որոց աղանդներուն միոյն մէջ ալ պոռնկութիւնը իբր մասն կրօնի կը պատուերուի։ Մինսոր աղանդին մէջ ևս կը համարեն թէ աղուհաց որքէք գեռ կ'ըլլան մեռնելնուն յետոյ։ Անհաւատ են անոնց կատքերը, յորոց ունայք սոսկալի և այլանդակ հրէշներ են։

Փիլիպպեան կղզիները՝ ինչպէս նաեւ Ֆօրմօզա կղզին՝ միայն քրմուհիներ կան քահանայ չկայ. և անհանդուրժելի անամօթութեամբ, հոլանտարին կը լինին իրենց գործելի պէս համեմի ըլլալու համար։ Այս կղզեցիք հանդերձեալ կենաց մէջ տանջանաց վայր մը կայ կ'ըսեն, չէ թէ չարութ գործերու՝ այլ անոնց հաւատ միայն որ տարուին այս ինչ եղանակին մէջ մերկ չեն պաղտիր. և կը յանդգնին ասոնք օրհնուած են։ Սկիզբն կղզին ալ կատիկք և սիղոք կը պաշտեին։

Գետ՝ Թիհիսբռնակողմն յատաջ երթալով՝ առնենչ կրթութեանքը թագաւորներն են, անոնք ալ երկու

աստուածներ կը դնեն. մին՝ տէր երկնից, միւսը՝ երկրի։ Լատոյի կրօնքը բոլորովին կաթոլիկական է. տեղ տեղ մարդապետ ալ կ'ընեն. երբեմն ևս քուրմերնուն երեսները կը քանան հաճոյական գրի ընելու համար իրենց դից։ — Թիպեթի մէջ բազմակնութիւն կայ, ինչպէս այլուր՝ բազմամնութիւն։ — Թափաուիկ թագաւորաց և Ազաբացւոց մէջ գողութիւնը պանծալի արուեստից կարգն է։ Կանայ թագաւորներ ալ որ սոսկալի մեղք կը համարեն զանահակը կրակը նետելը, ոսկրով մը ուրիշ ոսկրը մը կոտրելը ևն։ Եւ սորա նեբհակ ևս ոչինչ կը դնեն հաւատարմութիւնն ուրիշի ստացուած քը վերցնելը և մարդ իսկ սպաննելը։ Շամանացիք կամ Շաման անուանեալ թագաւորք մարդ կային ազգի սոսկին մէկ տեսակը կը սեպեն գիանայս՝ հաստատուած՝ ի պէտս գործական հեշտութեանց միայն։ Ուտի և յոյժ խստութեամբ և անարդանօք կը վարուին անոնց հետ։ — Չերքէզի, Մընկրելի և Գրուզիայ մէջ՝ ուր բնութիւնը ընդհանուր կանանց սեռը վայելուչ դեղով օժտած է, է'ն սրտալր և օրինաւոր տեսուտուրը սեպուած է կնկատց և աղջկանց վատահականութիւնը. ուր կնկտիք և աղջկունք իրենց հարց կամ եղբարց կամ ծառայից որդ ապրուստի ձեռքը հարստութեան մեծ ապրիւր թանկագին իրանքներ վաճառքներ են, որոց անարգ սրծաքիւրեան գոհ կ'երթան տարուէ տարի հազարաւոր անմեղ սրտագծներ՝ գերեզկութեան յանցանքով՝ է'ն լկտի կ'ն տնտարիչա մարդուն ծախուելով հոգւով և մարմնով, անոր անուանական հեշտասիրութեանց պատս հարկանելու համար. . . .

Գիրիկ ալ Ախայեն վար չմնար. ուր որ Մահմէտ դեռը չէ տիրեր, հոն թանձր կռապաշտութիւնը կ'իշխէ. Ընդոյ ուխանց հետաւոր ազգերը աստուածականն պատիւ կ'ընծայեն այս մեծ գետոյն

Ցնդ տեղ օձերը, բիձերն ու վհատրերը կը պաշտեն. տեղ ալ կայ որ թռչուններն ու ձուկերը կը պաշտանեն։ Սկսերը աստուածային պատիւ կուտան ծառ, ծաղկանց, քարանց, մկրանց և այլոց նմանց։ Դրախտի մէջ ծուխն ցաստուածը իջուցանելու հաւատք կը յայտնեն, և Ջնդկաց պէս՝ երբ լրիկ մեռնի՝ կինն ալ կենդանի հետը մէկտեղ կ'այրեն։ Զանկոյն բնակիչք երկրպագութիւն կ'ընեն արեգական՝ լուսնի և աստղաց։ Ոմանք ամբողջ գառ գառ բարի և շատ աստուածներ կը պաշտեն։ Բռնմանդ ակ Ափրիկէի մէջ անասնաթագոյն ազգ տեսիլ է, որոց թագաւորութիւնը անասնոյ մեծութեամբ մեծ է քան զամենայն կոխան անցած է բոլոր հին և նոր ազգաց գերազանցելով. հայր և դուստր, մայր և որդի, եղբայր և քոյր . . . կայ յԱֆրիկէ և ուրիշ սակրութիւնն և ասոնց նմանք բարբարոսութիւն։

Ափրիկացւով տեսութիւնները կը վերջանայ։ Այժ ընդարձակ երկրին մէջ տեսուածներէն ուրիշ տեղեր են, տասնեւչորսէն Գրագիրի մէջ և Սպանիական կղզին, Գանատայի մէջ՝ ուր հաւատոց լոյսը չէ հասած, եղջերու և ինծ որսալու պէս ուրիշ որսալու կ'երթան. չատ տեղեր՝ երկրագիրք՝ վիրաւորելոց և տգանելոց արիւնը կը ծծեն՝ գազանութեան վարժուելու համար։ Հարաւային Ափրիկոյ տեսնուած տեսակ կառավար վայրենիներն են՝ Ազդ, Գունդաս և Գասպիրատ ցեղածները, որք մերկ մերկ կը շրջին և ուրիշ սակրութեան տեղերէն տեղերէ չատ բան կառավար պատերազմիներ կը մղեն, և մեռք անցուցածներն՝ վիրաւորածներն և գերանեածներն կ'ուտեն մեծ ախորժանօք. միայն կանանց միս չեն ուտեր բնաւ, (այս բանը միայն այս երկիր ցեղին յատուկ ըլլալով,) ո'չ տղեուսութեան համար կամ ախորժակութեամբ, այլ հաւատալով որ կինը տգակնեալ է ան՝ ո'չ՝ ուրիշ ոչ տանջանաց համար ստեղծուած, և

տեղոյ միսը յոյժ քաղցր է։ Որքան ուրիշ ծիծ տուող ունայր ալ կ'ըսուի՝ դիմացիկ տղոյ մտնելուն ալ տղմ տղմ հետը կը քաղցնեն տեսը բնակելն քնելուն համար։ Կան խմբագրեալ պատմութիւններ որք տղոց վրայ կը յարձակին ուտելու համար զանոնք։ Մէքսիկոյի՝ Բերուի և Վրդիրնոյ մէջ տեսնուածն է ուրիշ տգոնք և արեւելեան և տասնեղայ երկրպագութիւնը։ տեղ տեղ ալ անասնոյ և այլոնց տակ հրէշից պաշտօնը։ Որ տեղ որ նոր յայտնուած կղզին տեսնելուն տեսնի և պատկառանք չեն պահեր։ տգպրտանութիւնը ծայրայեր է հոն։ — Թէ վերը նկարագրեալ տեսնելուն և կամ Հիւսիսային մասն կողմերը, և թէ՝ վար Հրոյ երկիրը իմանալն և կամ Հարաւոյ մասն կողմերը, տ'ուր ալ տեսնենք՝ ուրիշ բան շատ գտնել չը, թէ ոչ՝ արհաւիրք, խժդժութիւններ, տեսկատգութիւններ, տեսօրէն և գազրելի արարողութիւններ և չատերն տասնիւնան գրասենեակ չափութիւններ . . .։

Եատ տգուր գրուցեր է Ալիկեռն՝ ինչպէս վերը յատաջ բերինք, թէ «չիյտակ ինչպէս կրնայ գրատետել տեսնել տեսնելոյ տակ բան մը՝ որ միխիթարին մէկը գրուցած չըլլայ»։ Իրաւի է այս յոյժ։ գի տես՝ ինչպէս տեսատեր այս տգլտնոյ տակ տեսնելութեամբ բառնական չափաւորութիւնները են՝ գրաս հին և նոր տգպեր տգպտիւն իրենց միխիթարութիւններովը խնամատեսութիւնովը և գիտութիւնովը՝ տասնոց գ'երբեմն կան լուսոյն օգնութեան՝ իրենց բնական լուսոյ տասնոյնորոշ տեսնելութեան հետարքր գ'տեր են իրր տասնատեսնելութիւն, իրր կրօնք և քարոյք, արքատպաշտօն և տասարհութիւն . . . և իրենց միխիթարութիւնները տգ իսնատասիրական գ'երազանց հանճարով միտքեներ են գիտելու թէ տասնք՝ այս չկոտ տեսնատակ իսնդնէչութիւնները տեսնելատ տեսնելոյ գէչ տգ պահել։ — Մէկրատոյ տեսնելական տասնա-

ծըն էր (ինչպէս Քսենոփոն կը պատմէ,) թէ՝ ան-
համբոյր ընդ երիտքն ելծուը պետ է բառնէ, ըն՛ե- այլանդակ
անձը-և ըլլայ անիկա: Պիւթագորաս, Զալեւկոս
Պղատոն, Պիւերան, Սենեկա, Եպիկտետոս և այլք
պնոյն կրկնելով կը հաստատեն: Տե՛ս թէ քնական
ըլլալը 'ի նիւթ կրօնի՝ մինչեւ ո՛ր աստիճան անմե-
ռութեան անբանութեան կ'առաջնորդէ մարդս
յայտնութիւնն իրեն առաջնորդ չունենալով նէ:

Մարդոց յանձնապատուհան խնամատարութիւնը
'ի նիւթ կրօնի առանց գերբնական լուսոյ թէ որ
քան մը ըրաւ, այն ալ քնական օրէնքն ու կրօնքն
իսկ վեր 'ի վայր շրջել ապշոցել աղմկել և աւե-
նէն աւելի հանրածանօթ հարկաւոր ճշմարտու-
թիւններն իսկ չմոռնալու խառնակութեանց
մեծ քաոսին մէջ խորտուբելն էր՝ ըրաւ: Անի-
ատեան կամ Զինաստան մեծ ապացոյց է քսածնուա-
ցորչափ անծանօթ մնացին և կամ գլուխ չկրցան
ամբառնալ 'ի Քին խնամատարութիւնք խնամատարուց՝
իրը երկու հազար տարուան խիստ մեծ շրջան մը՝
գրեթէ ութ տուն կայսերաց կայսերութեան ժա-
մանակ՝ Աստուածպաշտութիւնը անվիճար կերպա-
կերեց հոն անընդհատ ծայրագոյն պարզութեան
մէջ՝ նախատուր աւանդութեան վրայ ամրացած:
Կայսրութիւնը մտադիր էր բարձրեալ Աստուծոյ
գոհելու համար ելքն ու տեսակ շնչաւոր անասուն-
ներ սնուցանելու և քուծանելու: Կայսերք՝ գոհից
ցորեան և գինի հասցընելու համար արտ և այգի
կը մշակէին ինքնին. կայսրուհիք հերսամ կը սանձէին՝
որոց մեռոպքը ձեռքերնին կը մանէին և պատառ
կը հինէին Աստուածային սեզանոյն ծած կոխմ և գա-
հանայից զգեստ հինելու համար: Հռովմի առաջին
կայսրը առաջին անգամ ըլլալով տաճար մը հինեց և
երկնից գերագոյն Աստուծոյ նուիրագործեց: Յուլիոս
Կիս հինգերորդ կայսրը սկսաւ խորհիլ որ միմիայն

տաճար բաւական չէր բարձրեալ ոգւոյն բոլոր ա-
րարածոց և պաշտամանն: Հրապարակական
ծախքը և ազօթքներ ունէին. և քահանայք մինչեւ որ
ծանապահութեամբ չպատրաստուէին՝ չէին հանդար-
ձակէր գոհագործութեան մատչելու: Մինչեւ Քրիս-
տոսէ իրը վեց հօթը դար յառաջ (ինչպէս վերջին
մանրամասն քննութիւններէն կը հաստատուի,) մուտ
գալու չէր հոն կուռք քուռած պղծութիւնը և Աս-
ուածային էութեան վրայ այլոց ապերասպ խնամատարած
անարժան վարդապետութիւնը. մեծաւ խնամով և
պղուչութեամբ՝ իրենց եաօ անուն աւաջին կայսեր
աւանդած հաւատոյ մատունքն ու վարդապետութիւ-
նը կը պահէին: Կուռքը և կռապաշտութեան պուն-
կութիւնը՝ խնամատարութիւնն էր որ մտցուց 'ի Ին-
կաոքուն, Դոնիոսկոս, Շէզիա կամ Ֆօ վիլիաուխայք
չկայտնուած՝ երկնից բարձրեալ Ոգիին պաշտօնէն
ուրիչ պաշտօն ծանօթ չէր անոնց, և անհնարին
անպարշտութիւն կը հանդիսէին աստուածական ա-
նուն տալ օրմ և իցէ արարածի. ուստի երբ ամ-
պարշտութեան առաջին առաջնորդին Լաօքունի ա-
չակերտներէն մին իբր դատակցաց մէջ ունեցած
գերագանցութեան պատճառաւ Հօկի=Տօսում ա-
նուն կայսրէն Աստուածական անուանք կամ=ոի
կոչուեցաւ, Քինէացւոց մեծահամբաւ իմաստուն
մատենագիրք Կիով=կիօսումին այսպէս գրեց այս
դէպքին վրայ. «Հօկի=Տօսում կայսրը ընդ դէմ
ամենայն իրաւանց Աստուծոյ անունը
մարդու մը տուաւ, ուստի երկնից բոլոր ոգինե-
րէն վերագոյն Ամենակալ և երկրպագելի Աս-
ուածը՝ անոր ըրած այս անպարշտութեան վրայ
բարկանալով, մեծ խնամութեամբ պատժեց այս
կայսեր անամօթութիւնը, և քնակիներ ըրաւ
գինքը տեսնելն ու տեղալը. Փիլիսոփայութիւնը՝ հա-
ւատ որ անգամ մը ուտաւ, այս կոյս երիվրն ալ՝ քը-

սան դարերու այս անսպառ աւերին երկիրն ալ պղծեց · վի ո՛ւր որ իմաստասիրութիւնը գերբնական լուսոյ օգնութենէն հեռու՝ բնական լուսով յանձնապաստան գործեց , այսպէս գործեց · սխալ մը երբէք չչտկեց , այլ ջղտ ուղիները թեքեց , ճշմարտութիւնն աղաւաղեց , և կրօնք ըսուած երկնային պաշտօնը պղծութեանց խայտառակութեանց Տիկկատակ (Pantomime) մը դարձուց · այս է ահա իմաստասիրաց յանձնապաստան իմաստասիրութեան ըրածը ։

Ժամ է արդ դառնալ մեզ անգամ մ՚ալ Ցայտնութեան լուսով պարզուած Աստուածպաշտութեան վարդապետութիւնը քննելու ։

Ս· Գիրքը կը նկարագրէ զԱստուած որպէս էակ յաւիտենական · միակ և միայնակ · ինքն յինքեան· անսկիզբն և անվախճան , ամենուրեք , ամենատես , ամենագէտ , ամենակատարեալ ոգի , ամենակար , արարիչ և տէր երկնի և երկրի և ամենայնի որ ՚ի նոսա , որ ամենեւին արարածական նմանութեամբ կամ ձեւով չկերպաւորիր · հետի՛ ըստ ամենայնի արարածական բնութենէ · հոգի ամենապարզ ամենատրը , որ սրբութեան մէջ կը բնակի , և կ՚ատէ ամեն անսրբութիւն և անմաքրութիւն ։ Հոգի անսահման և անվայրապահ ըստ էութեանն , թագաւորէ յերկինս յերանաւէտ կայանս ոգեղինաց , և հանդուցեալ բնակէ հետ և խոնարհ երկրպագուաց սրտերուն մէջ՝ չնորհօք ։ Ինքը Աստուած է ճշմարտութեան , ինքնին իսկ ճշմարտութիւնն է · կ՚ատէ կը դատապարտէ ամեն սուտ և անհաւատարմութիւն , կարի թեթեւագոյն երեւցած խաբէութեան՝ պատրանաց երեւոյթն իսկ ։ Եւ ոչ այսչափ միայն , այլ և երկրպագուք եւս՝ եթէ ամեն անմաքրութենէ և սուտ հետու չկենան , միայն արտաքին ձեւակերպութեամբ՝ ՚ի վերին երեսս ա-

ղաչող կերպարանեալ՝ տեսակ տեսակ արարողական ձեւերով դէպ երկրպագութիւն ընեն , ամենայն անկեղծութեամբ սրտի՝ յամենայն անձնէ և ՚ի մտաց չսիրեն զինքը , չպաշտեն սրբութեամբ , հոգւով և ճշմարտութեամբ ծունր չկրկնեն անոր , չեն կրնար իրեն արժանի ըլլալ՝ ըսաց և այսու հանդերձ՝ կ՚ատէ կը դատապարտէ կրօնաւորութիւնն ալ · (Ժ· Է· 17·) չընդունիր այն նուէրներն ուխտերն ու պատարագները որ սուրբ չեն , և սուրբ՝ աննենգ ձեռքերէ նուիրուած չեն ։ (Ա՚ա՚ղ· Գ· 9՝ ԺԵ· 18՝ ԻԱ· 27՝ Ե· Օրէն· ԻԳ· 18՝ Յ՚Ա՚Ա· Ը· 20՝) Ինքը սէր է , սիրոյ էութիւնն է · կը սիրէ անհունապէս իրեն ձեռքի հրաշակերտները , զմարդիկ , զորս Ուղե՛կ՚անուանէ , և կը պահանջէ որ մարդիկ ալ մէկզմէկ սիրեն · զԱստուած սիրելու համար զիրար սիրեն · Հղբայրսիրութիւնը՝ մարդասիրութիւնը իրեն կրօնքին էութիւնն է · սէրը Աստուածպաշտութեան՝ Քրիստոնէութեան անխաթ նշանն ու անլուծանելի կնիքն է · ուստի ո՛վ ոք և ըլլայ , ըլլա՛յ որ ամենէն գերազանց առաքինութեանց բոլորն ալ ունենայ և սէր միայն չունենայ , և կամ հղբայրսիրութեան դէմ փոքու իմն մեղանչէ , ուրացող է նա կրօնից և Աստուծոյ , աչակերտ չէ նա Քրիստոսի և Աստուծոյ , ուստի և անհնար է որ հաճելի ըլլայ Աստուծոյ ։ Ինքը ամենաբարի և բարերար է , անոխակալ և երկայնամիտ , և ո՛վ որ իւր ծայրագոյն կատարելութեանց արժանի ըլլալու չջանար , չկրնար արժանի ըլլալ Իրեն · ըստ որոյ՝ բարին գիտնալ ու չկատարելը միայն՝ որմէ այլոց գլխաս ալ չծագի նէ , բարւոյն միայն պակսութիւնը մեղապարտութիւն է ։ (Յ՚ա՚ղ· Դ· 17 ։) Ինքը ամենողորմ և ամենագութ , խնամող Հայր է ամենեցուն , մինչեւ իսկ իւր ահաւոր սուրբ անունն հայհոյող անկրօնից և ապաշնորհաց , որոց եւս երկայնամտութեամբ կը նայի՝ մնալով

նոցա պատճին, ո՛չ ուրուք կորուսան ուղելով. այլ անդէմ անդ արձ մեղաւորը՝ ընդ որս և այն գրիչս առնեսցէ որք իւր այս գերագոյն կատարելութեանց դէմ կը մեղանչեն, յաւիտեան իւր երեսը տեսնելիք չունին, և ծանր յոյժ պիտի պատժուին. ինչպէս նաեւ իւր սուրբ սիրոյն մէջ յարատեւողը պիտի վարձատրուին մարդոյս խնդրէն մտքէն չանցած անմահ վարձուք:

Ս. Կրօնից վարդապետութեան և քարոյականի վեհական պարտքերնիս լաւ եւս անոր աղօթիցը մէջ կ'երեւնայ, զոր Քիստոս Գրիստոս մեր Տէրը և վարդապետը սովրեցուցած ըլլալուն համար Տէրունական աղօթք կ'անուանենք: — Քիստոս Գրիստոս ուզած մեզ «Հայր մեր» անուանել զԱստուած. Հայր չէ թէ բնական, այլ իրր արարիչ և նախախնամող, որպէս զի Անոր արժանաւոր Որդիքը լինելու համար սրբութեան մտքերնիս մէջ յարատեւենք. (Մատթ. ե. 48.) և Հայր՝ չէ թէ երկրաւոր կամ յերկրի առ՝ այլ «Ո՛ր յերկինս». ամեն հայրերէ վեր՝ յերկինս, հայր ամենայն աշխարհի և տիեզերաց. որոյ որդիք լինելով մեք ջանանք անոր կատարելութեանց հետզհետէ քալել. զի «Որդի հարազատ զնմանութիւն հօրն բերէ». և եթէ առանց իրեն կատարելութեանց նմանող ըլլալ ջանալու՝ հայր անուանենք զինքը, անպատուած կ'ըլլանք զնա՝ իրր հեթանոս ճնող մեր ապականեալ բարոյից. կ'ուսուցանէ եւս ըսել, «Սուրբ եղիցի անուն քո». իրր այն թէ մեք սուրբ ըլլանք, որ քու անուանդ արատ չբերենք, գէշ գրուցել չտանք. (Հռովմ. բ. 24.) Ինչպէս որ հասարակ խոստկութեան մէջ որդի մը հօրը կ'ըսէ՝ «անարատ՝ սաքուր պիտի պահեմ քու պատկառելի անունդ», ըսել ուզելով որ «քու առաքինութեանդդ չափսի խոտորիմ, որ քու անունդ չաղտոտի և միշտ պատկառելի մնայ օտարաց առջեւ», այսպէս և մեք

ըսած կ'ըլլանք, թէ անանկ սաքուր քարոյականի վեհասրտական սրբութեան վարուց մէջ գտնուինք, որ օտարածինք մեր գործքերը տեսնելով զԱստուած Հայր՝ մեր կրօնից հաստատող հոյրը հեղինակը փառաւորեն: (Մատթ. ե. 16.) «Եկեսցէ արքայութիւն քո». ո՛չ ըսուս ամենայնի՝ ինքը թագաւորէ՝ ի վեր և ո՛չ մեր կամքը. և դարձեալ՝ ամենայն աշխարհ անոր հրեշտական օրինաց հպատակին, Աստուածային գիտնք իշխող ըլլան ամենեցուն, ամենեքեան ընդ հին թագաւորութեան որդիք ըլլան: «Եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի». ո՛չ ինչպէս որ յերկինս հրեշտակաց կեանքն ու երջանկութիւնն է անոր կամաց էն փոքր ամենարկը կատարել փութալ, այնպէս և յերկրի՝ մարդիկ իրենց կամաց յաղթելով՝ Աստուածային կամաց ծառայելն իրենց ճշմարիտ կեանքն ու երջանկութիւնը ընծեն: «Զհաց մեր հանապազորդ՝ տո՛ւր մեզ այսօր». Իմա՛ այն հացը՝ զոր մեք քրտամբք երեսաց ճարելու դատապարտուած ենք և ձեռք կը բերենք, Աստուծոյ պարգեւն է. Աստուած իրրեւ Հայր նախախնամող՝ կը հոգայ մեր աւուր պարէնը. ինչպէս նաեւ երկաքար մէկ դանկի վանաւելի ճնճղկինը: «Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց». Ըսել է անանկ թողութիւն տուր մեզի, ինտոր որ մենք մեզի դէմ յանցաւորներուն կը թողումք. ուստի և այս ըսելու համար կը պարտաւորիմք քնաւ ամենեւին մեր ընկերին հետ արդողած չըլլալ, անոր դէմ աննեղրող ոգի չունենալ, քէնը չպահել, անյիշաչար ըլլալ. չէ նէ անէծք կը դառնայ այս աղօթքը, զի յայնժամ ըսած կ'ըլլանք թէ՝ «Ա՛ի թողուր մեզ զպարտիս մեր, որպէս և մեք չթողումք մերոց պարտապանաց»: «Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ 'ի չարէն». այս է թագաւորական խոստովանութիւն Աստուծոյ Նախախնամ-

ուԹեան մեր վրայ յաւելնայնի. խոստովանելով մեզի Թէ անհնար է որ կարենանք չարչն և անոր փորձուԹիւններէն ազատիլ։ Եւ վերջապէս «Զի քո է արքայուԹիւն, և զօրուԹիւն, և փառք յաւիտեանս յաւիտենից ամէն» ըսելով մեր դաւանուԹեան կնիքը կու տանք, Թէ այս ամեն չնորհք ամեն ժամանակ և ամենուն ընելու համար՝ յաւիտենական անանցանելի թագաւորուԹիւն զօրուԹիւն և փառք պէտք է, ան ալ Դուն ունիս միայն յանձին յաւիտեանս յաւիտենից։

Ո՛րչափ օտար են այս ոգիէն հեԹանոսաց իրենց աստուածներուն ուղղած երկար երկար աղօԹքները, որոնցմով ԱստուածուԹիւնը հասարակ մարդու տեղ դրած, և մարդու պէս անգէտ ճանչնալով արարածոց պիտոյից, իրենց բոլոր պէտքերը մէկիկ մէկիկ կը յիշէին կը կրկնէին իրենց կուռքերուն առջեւ, և երկար չատխօսուԹեամբ իւր Թէ իրենց խնդրուածոց արդարուԹեանը կը խելամտեցընէին աստուածներուն. որոց դէմ Գալիլեայի ՆազարէԹէն երեւցող հիւանին որպիսի ըսաւ. «Ցորժամ յաղօԹս կայցէք, մի՛ չատախօս լինիք իբրեւ զհեԹանոսն. զի համարին Թէ ՚ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին. արդ՝ մի՛ նմանիցէք նոցա. զի գիտէ Հայրն ձեր զի՛նչ պիտոյ է ձեզ, մինչչեւ ձեր խնդրեալ ինչ իցէ ՚ի նմանէ»։ (Մ-ոն. Զ. 7—8։)

Իբրեւ լրացուցիչ պարագայ աղօԹից՝ մէջ կը բերուի նաեւ Աստուածապաշտից և հեԹանոսաց աղօԹից եղանակներն ու ձեւերը։ — Աստուածապաշտք, Հրէայք և յետոյ Քրիստոնեայք՝ խնդրուածոց մէջ համառօտախօս, փառաբանուԹեան մասին երկար ժամերով Աներ մարդասիրուԹիւնը՝ մեծավայելչուԹիւնը գովելու օրհնելու ժիր և արԹուն. ո՛չ սաբատաւան ոգւով՝ անձանց անպարտ ըլլալուն վրայ պարծենալով, որ երկնաւոր վարդապետէն

դատապարտուած է արդէն. (Ղ-ի. ԺԸ. 9—14.) այլ խոնարհ մտօք, յոգւոց հանելով, կուրծքը ծեծելով, արտասուօք և պաղատագին, ծունր կրկնելով և երկրպագանելով. և Թէեւ իւր խնդրուածոց չհասնի, չյուսահատելով և ՚ի նոյն կրկին վերըստին ժտելով մինչեւ հասնի անոր. և կամ մինչեւ ըմբռնէ արտուղ որ այն բանը զոր անճկանօք կը խնդրէ՝ պէտք չէ ընդունի Աստուծոյ կողմէն, պատճառն Աստուծոյ դիտելի ըլլալով։ — Բայց հնԹատնոսը՝ կուռքին առջեւը կ՚աղօԹէ, կ՚աղաչէ իբրեւ մարդու, իւր պէտքերը մանր կը բացատրէ, հասկընելու կ՚աշխատի զնա որ իւր խնդրածը անհրաժեշտ հարկաւոր է. հաճէ՛ կ՚ըսէ իմ խնդիրքս կատարելու. փոխարինուԹիւններ կը խոստանայ անոր ընելիք չնորհացը՝ սակարկուԹեան մտնելով իւր աստուծոյն հետ. կը դարձնէ ու դարձեալ հասկընելու կը ճգնի. սպառնալիք մ՚ալ կը խառնէ իւր աղաչանքին, մի՛ ստիպեր զիս կըսէ, քեզի դէմ առբալտիլ։ Բայց երբ քանի մը անգամ խնդրելէն աղաչելէն ետքը խնդրուածոց չհասնի, կ՚սկսի նախատել հայհոյել և նզովել իսկ զիւր կուռքը։ Անով ալ չըլլայ Նէ մեծ նախատանօք կ՚առնու կ՚իջեցընէ զնա իւր փառաց պատուանդանէն, կը զարնէ գետինը, կը ծեծէ, և տռամբ կը քաշկռտէ կը խայտառակէ բոլոր փողոցներուն մէջ, միանգամայն ԹողուԹիւն խնդրելով անոր՝ որ այն ամբարձչուԹիւնը անոր դէմ կը գործէ։ Ցանկարծ՝ եԹէ պատահի որ իւր խնդիրը դիպուածով մ՚ալ կատարուի, մեծ հանդիսիւ կուռքը վերտին տաճարը կը տանի, կը լուայ, կը մաքրէ, կը խնկէ, և կրկին իւր պատուանդանին վրայ կանգնեցընելով չողոքուԹիւն չմնար որ չԹափէ անոր առջին. «Ի՞նչ կ՚ըլլար՝ կ՚ըսէ, Թէ որ այս չնորհն առաջ ընէիր, ու ես քեզի այս նախատինքները չհասցընէի. գի-

տես՝ որ մենք մարդ եւք անհատքերը. և սակայն խիստ ուշացուցիք չնորհգ. լաւագոյնն չէ՞ր ըլլար որ քու բարեհաճութեամբդ կատարէիք մեր խնդրուածքը, և զմեզ քեզի դէմ խոստութեամբ վարուելու չթուռնադատէիր. բայց ինչ և է, եզածին ճար չկայ, թողուեք զայն. թէ որ կ'ուզես անցեալը մոռնալ, գլուխ վերստին ոսկիով պատել կը խոստանամք, եւ: . . . Նկատե՛լ թէ աստուածութիւնը տղու մը կամ անբան անասնոյ պէս կը պատժուի և բանի չնորհ կը կորսնցնի անոր ձեռքէն խա՛ղ և խօ՛լ մտածութիւն. և սակայն Պինէացւոց փիլիստիայից իսպառ ասրած ազօթից ձեւն ու իրենց աստուածներուն հետ ընելիք հայրդակցութիւնները բուն կերպն է այս . . . :

Վերջապէս ըսեմք. Քրիստոնէութիւնը Աստուածմը կը ճանչցընէ կը քարոզէ անանկ աստրոգելիքներով, որ անհնարին էր բովանդակ աշխարհի իմաստնոց ան նոյն Աստուածամբայելուչ աստրոգելիքներով Աստուծոյ մը գաղափարը երկնել՝ ազանց գերբնական լուսոյ օգնութեան. անանկ կատարեալ Աստուծոյ մը կ'ըսեմ, որ Աստուածութեան մեծվայելչութեան յատուկ ամեն ծայրագոյն կատարելութիւն գերազանցապէս և լրումին ունի յինքնէ. և այսուհետեւ ալ և միշտ յաւիտեան՝ բացարձակապէս անհնարին է ենթադրել կամ հանճարել աստուածութիւն մը որ Քրիստոնէից Ս. Գրքին քարոզած ուսուցած Աստուծմէն աւելի աստուածայնութիւն ունենալու հնարաւորութիւն ունենայ: — Արդեօք ասանկ վեհ վարդապետութեան վեհմտոյն գաղափարը իրեն պատշաճաւոր և հարկաւոր է'ն մանր պարագաներով ու հանգամանքներովը մէկտեղ բոլոր տիեզերաց իմաստուն և գիտուն ժողովուրդներէն բոլորովին պատուհասել մեկուսացեալ անգէտ անքաղաքակիրթ անմիտ Հրէա՛յ

ժողովուրդը, և անոնց միջէն ալ ամենէն նուաստ սինկտոր ախտար և կոչտ հովիւ՛ք տիանք և մէկ քանի ձկնորանե՛ր հնարեցին իրենք իրենցմէ՛. և Աստուած ինքն չյայտնե՛ց անոնց միջոցաւ . . . Ամիկայ խելքի և մտքի դէմ՝ բանին հակառակ է . . . և ով որ այս ենթադրութիւնը պաշտպանել յանդուգն, անոր չէ թէ յանդգնութեան՝ այլ խելքին խախտած ըլլալուն վրայ ցաւելու եւք:

Կը մնայ ուրեմն մեզ պարզելն ըստ ուղիղ բանին խոստովանիլ, թէ Ս. Գիրք Աստուածային հեղինակութեամբ՝ ներշնչութեամբ՝ պզտեցութեամբ խմբագրուած են, և անոնց մէջ պարունակեալ ամենայն ինչ Աստուածային է:

ՅՕԴՈՒԱԾ Զ.

Ս. Գրոց վարդապետութեան տարածման եղանակը կամ ձեւը

Ս. Գրոց վարդապետութեան տարածման եղանակն ալ անոր Աստուածայնութեան մեծ ապացոյցներէն մին է. ամենէն հին հակառակն ըլլալով բոլոր հեթանոսական մարդահնար կրօնից և մոլորութեանց տարածուելու եղանակին: Անոնք ամեն օգնութիւններ և բնական դիւրութիւններ ունենալով, Ս. Գիրք ալ իրեն հակառակ ամեն բան թշնամի, ամեն պետութիւն՝ ազգ և լեզու և բովանդակ աշխարհ՝ հակառակորդ, մանաւանդ թէ մարդկային վայրահաչ բնութեան հակառակ իւր քարոզած ամենասիքուր առաքինութեան և ամենակատարեալ Աստուծոյխութեան վարդապետութիւնն իսկ՝ իւր տարածման յաջողելուն դէմ թուէր՝ արգելք ունենալով:

Ամեն սուտ կրօնքներ և վարդապետութիւններ

ւնարդ կայնի հեշտասեռութիւնից՝ բնական յօժարութիւնից պղծւնից լզծից և փոխաբանուց յարմարացուած լեզուով, ո՛չ միայն գժուարութիւն չունէին այս ւնարին ամեն տեղ ընդունելութիւն գտնելու համար, այլ նաեւ բռնաւորներու սուրերն ու աչխարհակալներու կենաց և ւնահու հրամաններն՝ հզօր զօրաւիզն ունէին իրենց, որք և քաւն ճանապարհ կը հարթէին անոնց առջեւ։

Աչխարհակալներուն մէկ ուրիչ հնարագիտութիւնն ալ եղաւ ամեն տեսակ կրօնք տեսակ տեսակ վարդապետութիւն պաշտպանել, և պաշտելու հրամանատ միանգամայն յաղթողաց և յաղթելոց յաղթականները չխորտակելու և գանոնք յաղթողներու հետ միացընելու մէկ ազգ և ժողովուրդ ձուլելու զանգելու համար այս աչխարհակալները իրենց յաղթած աչխարհներուն աստուածները իրենց աստուածներուն կարգին մէջ կը խառնէին, (օրինակ Բաւնաց և Հռովմայեցւոց պիտի իմիւք այնչափ չատցան, մինչեւ Բաբելոն ձայնը բարձրացոյց ըսել՝ թէ Աստուա սկսաւ բնակիլ Ռեմպոսի քեռան ծոռութիւնն տակ՝ յորմէ հետէ սկսան այնչափ քաղաքներ դիցն և դիցանուշից բնակութիւն համառուել հոն։) և փոխադարձաբար իրենց աստուածներն ալ անոնց կու տային։ Վկայ քեզ՝ի բաբելոնացոց Մարկեղոնացին՝ի Բաւնաց, Աբրահամ Ա· և Տիբրան Բ· ի մերոց։ Հռովմայեցիներէն մարդ չուզէր։ կատարած Հռովմին պանթեոնը՝ Քրիստոնեայ Հռովմին ալ ոչինչ պակաս քան վկայներ են թէ անոնց աստեղի աստեղ կերպ կատարածութեանց ալ քաղաքականութիւնն այս եղած է։ (Բողոքական պրոթեանդ ալ՝ մէկ երկու կէտերու մէջ միաբանութիւն պահելով ճեմացածներուն մէջ ազիկաւի ազատօրէն ըստ մարմնաջելոց խրատանշիւր լսելեաց վարդապետելու թոյլտութիւնը՝ այս հնարագիտութեան մէկ

տեսակը կրնանք հասնորել։ . . . Պապականութիւնը արդէն չատնոց այդ հնարքը՝ի կիր կ՝առնոյր· և չատ լաւ յաճախեր էր վերջին օրերս աստր մէջ· պապական միութեան մէջ գտնուած ըլլալու համար հերիք կը համարուէր միայն պապին գլխաւորութեանը հաւատալ· մնացեալ տարբերութիւնները կը ներուէր։ Հատուն Անտոն Գաստրիայէն Գուլըստոց առաքելական պայմանը հերիք տպագոյց է ըսած ենուս, թէ որ չուզեին Գաղղիական տպի կրօնական զատ ազատութիւնը չատ տեսնել։ . . . Բայց Պիոս Թ՝ի Վատիկանու ժողովքը աչքը բացաւ և ճանչցաւ որ այդ հնարագիտութիւնն հինցեր էր, և նախանձեցաւ որ Բրոտեստանն ալ ատկէ օգուտ կը քաղէր, վերջ տուաւ այդ քաղաքականութեան, և անոնք խաղութեան վարպետութիւնը դրաւ հինայ անոր տեղ։ . . .)

Իսկ Ը· Գլուխ և անոր վարդապետութեան տասնուեղբ տասեն այս դիտութիւններուն մէկին ալ հաւանիլ զատ՝ ամենայն ինչ անոր խոշ և խոթ արդելք էր։ Ը· Գլխովը ըստ օրում Աստուծմէ յայտնուած եղական ճշմարտութիւն՝ ամեն տեսակ կրօնք և վարդապետութիւն գատաստարելովը՝ ամեն կրօնք իրեն թշնամի ունէր։ անոնց հետ միանալ՝ի մի ձուլել հիմնալովը՝ առաջներէն՝ թէ՝ Նահապետաց և թէ՝ Մովսիսեան անուանութեանց առեններէն՝ միշտ իսկ կզգիսցեալ մնաց տասնեմն անոք և անօդնական։ եղբէն առ Քրիստոնեան անուանութեամբ եւս անոր դէմ դարձան և մնկեց ին կատարութեամբ վրան յարձակեցան ամեն տեղ և ժեղս, ամեն կրօնք և դէն, Հրէութիւնն իսկ, ամեն իշխանութիւն և պետութիւն· հիմայ բռնութիւն լկանք և ւնահունք որ հիրկր· Ա՛յս ալ հերիք հէր· Քրիստոնեայք իրենք ալ իրենց դէմ դժուարութիւններ հնարեցին· ո՛չ ամենայն որ որ Քրիստոնեայ ըլլալու

գար չատով կ'ընդունուէին եկեղեցւոյ ուխտին մէջ, վախնալով որ չհաստիրութիւնը և կամ ուսանողութիւնը մը ակնկալութիւն մը առաջնորդած ըլլայ անոր ան այն. երկար ամիսներ տարիներ կը տրամէին կ'ուսուցանէին նորահաւատացեալները, և յետոյ ապրելի եղած անունը անվնաս կրօնասիրութեան և եկեղեցասիրութեան հետ կ'իյնային, երբ որ ուսանողութեան առաջ աշխարհային կեանքի վրայ գիմնական մեծ փոփոխութիւն մը առնէին, յայնժամ ապա կ'ուտիպէին որ հրապարակաւ բոլոր գործած մեղքերնին խոստովանէին. և յետոյ սկսելով ներկայ հանդիսականներ հաղորդելով բոլոր քաղաքը պատրաստէին մեծ գերեզմանին մօտերը գտնուած, որ բոլոր քաղաքացիք գրիստոնեական և պլակրօնք խնամեան անոնց ի գրեստանալ ութիւն գարձը. որպէս զի թէ որ անկեղծութեան չէր գարձեր՝ առանց ճանչցուելով հասկանային եղիքիւղին խրատին և յետոյ կասէին. ... և տակաւ այս առանց ընդունելն եղբ սկսեցաւ տարածուիլ ըստ բնոյ առանց աշխարհ առանց հրապարակական հանդիսի և ձեռնադրութեան ոչ ոք կրնար եպիսկոպոս կամ քահանայ ըլլալ, եթէ նախ ուսանող չէր եղած, և ուսանողութեան մէջ չէր ստացած վկայութիւն մը իր վարուց համար. ուսանողներ ալ ոչ ոք կրնար ընդունիլ առանց ուսանողութեան վկայականի. ուսանողութեան ատեն ալ ամէն մէկ ուսանող ունէր իր հոգեւոր հայրը, որ կը հսկէր անոր վրայ, և կը խրատէր զայն. ուսանողներ ալ իրենց հոգեւոր հայրերուն կ'ենթարկուէին ամէն բանի մէջ, և ոչ մէկ բան կրնային ընել առանց անոնց հրամանին. ուսանողութեան ատեն ալ ամէն մէկ ուսանող ունէր իր հոգեւոր հայրը, որ կը հսկէր անոր վրայ, և կը խրատէր զայն. ուսանողներ ալ իրենց հոգեւոր հայրերուն կ'ենթարկուէին ամէն բանի մէջ, և ոչ մէկ բան կրնային ընել առանց անոնց հրամանին.

պատուիրան մը գտնար տարտաչնար է կրնայ լսել քանի՛ որ զայն քարոզող հարդարչէից և առաքելոց գրքէ առնէր (քանի մը յոյժ անհնազան բացատրութիւններէ զատ) զայն Աստուծմէ ընդունած ըլլալնին վկայելով՝ վկայութիւններն ալ իրենց ունկնդիրը կ'ընդունին. անոնց հանհատակութիւնն ալ վարդապետութիւնը իր քարոզ ճառերուն մէջ կանոն չառնու, պաշտպաններէն պրիսկոպոս գնայ և անհետացաւ և այսօր սիներորդ է'ն լուսաւորեալ աշխարհները այն վարդապետութիւնը կը գաւանին իրենց Ճշմարտութեան քարոզութիւնը, իրենց եկեղեցին Յայտնութիւն. ... Ուրիշն անհնարին էր հարկային ըլլալ այն վարդապետութիւնը՝ որ այսպէս հաստատի եղանակաւ առնն խոշընդոտ ընդունելով Աստուծոյ առաջնորդութեան՝ յաղթականն կանգնելու առնն բռնութեանց դէմ.

Աստ դէմ փաստ մը չէ որ ունինք մէջ բերելով կ'ըսեն, թէ ինչ բան որ բռնութեան կ'արդիլուի՝ տեսնի կը տարածուի. Ս. Գիրքը կամ որ նոյնն է, Գրիստոնէութիւնն ալ ի սկզբան այնչափ չատ հակառակութիւն կրեցաւ հարկաւ այնչափ չատ և չատ տարածուեցաւ. — Արդարև ինչ բանի հարկաւ որ հարկուն ազատութիւնը (խորհելու խօսելու գրելու ազատութիւնը) ձեռքէն առնուիլ ուզուի, անոր հակառակ ըլլալով այս հարցուն, անոր ազատութեան սէրը բոլոր ուժովն այս բաներն դէմ կ'ելլէ և կը հակառակի բռնութեամբ. փորձով ալ շատ չատներ տեսնուած են որ ի սկզբան վրաներն ալորդելք դրուելով տեսի տարածուած են, քայց երբ այդ ելքն անոնց միայն վերջն վերցեր է՝ յայնժամ ուշի ուշով քննելով ազատութեան հարցին՝ անոնց վնասակար գան տարտակած ըլլալով հանդերձ, և տակաւ հարկ անհետացեր են իրենց տիրոջն մէջ. Շատ տեսա ազգեր տեսա վարդապետու-

թիւններ աղանդներ ալ հակառակութիւն կրնային և տարաձուեցան. բայց երբ անոնց ազատութիւն տրուեցաւ ազատօրէն պաշտուելու համար՝ միճայան կրնան 'ի չիր դարձան. պատմութիւններին միայն իրենց գոյութեան վկայ մնաց: Օրինակ Արիոսականութիւնը, որ եկեղեցւոյ հայրերէն կայսրերէն և իշխանաւորներէն հակառակութիւն կրելուն՝ իրեն դէմ արգելքներ դրուելուն համար այնչափ տարածուեցաւ, որ մինչեւ այն հայրերէն մին՝ Հերոնիմոս հիացեալ գոչեց թէ, «Աքանչացաւ համրէն երկիր՝ տեսեալ զինքն Արիանոս». բայց խղճի ազատութիւնը երբ որ եկաւ տիրեց՝ անհետացաւ 'ի սպառ: Պաւղիկեանց, Թոնդրակեցւոց, Աբեւորդեաց դիւահնար աղանդներն ալ հալածանք կրեցին 'ի Հայս, և ընդհարկար տեւեցին դիմացան, բայց խղճի ազատութիւն ըլլալուն՝ ինքեանք անձամբ ուրացան մոլորութիւններնին: Կռապաշտութիւնն խիստ հալածանք կրեց 'ի Հայս առ Տրդատա, և ա՛չ հարկաւանցի. բայց ամենեւին չվերացաւ կանոնեցաւ, մանաւանդ թէ ուրկէ ուրկէ գըտնուածներն ալ՝ մոլորութիւններնուն մերկացան՝ խղճի ազատութիւնը հոն տիրելէն ետեւ: Գարմից մոլեգնութեան խորամանկ մեքենայութիւնները չը կրցան երբէք մոգութեան արմատ բռնել տալ 'ի Հայս և Քրիստոնէութիւնը արմատախիլ առնել անկից. խղճի կատարեալ ազատութիւնը տուաւ. ա՛չ Զրադաշտի աստուածները ծխեցաւ հոն, ա՛չ ալ Քրիստոսի սեղաններէն անարիւն մատուցմունքները պատարագները ջնջուեցան, այլ մանաւանդ՝ անոնք ալ որ առ երեսս առ երկիւղ մնացած էին՝ վերստին հայրենի կրօնից դիրկը դիմելով՝ Քրիստոսի սեղանին գլուխերն ու գոհերը կ'ընծայեն. և ճշմարտութեան կրօնքը պայծառ և կը փայլէր յաչս հալածչաց

իւրոց: — Ապա ուրեմն ո՛չ Քրիստոնէութիւնը ո՛չ ալ անոր Գիրքը հակառակութիւն կրելուն համար տարաձուեցաւ արտաքս բռնեց, ապա թէ ո՛չ, խղճի ազատութիւնը տիրելուն՝ Քրիստոնէութիւնն ալ պէտք էր ջնջուէր: Ուրեմն Աստուածային էր այն կրօնքը և անոր վարդապետութեան գիրքը. և Աստուածային զօրութեան էր որ տարաձուեցաւ այնչափ բռնութեանց և հակառակութեանց ունչս արձակելով:

Հապա ի՛նչ ըսենք այն զօրութեան՝ որով Քրիստոնէութիւնը եւս առին իւր ներքին թշնամիներուն յաղթեց և կը յաղթէ միշտ, աստանդուն քրիստոնեայներուն կ'բռնաբռ, աստանդուն հոլիւներուն, վատաբարոյ մոլորեալ և մոլորեցուցիչ ուսուցիչներուն, որք իրենց անսանձ մոլութեանցը և մոլեգնութեանցը Քրիստոնէական եկեղեցւոյ հիմունքը փորեցին. մոլորեցան և մոլորեցուցին, պղծեցան և պղծեցուցին. իրենց մոլար ուսմունքներովը այնչափ հերձուածոց հերետիկոսական աղանդաւորաց ետեւան պատճառ եղան, Քրիստոսի եկեղեցին ծուխ ծուխ պատատեցնուն, և իրենց մոլեգին կենցաղովը այնչափ ոգւոց անհաւատութեան անկրօնութեան դիմելուն պատճառ և յորդորիչ եղան, բայց Քրիստոնեայ եկեղեցին կայ ու կը մնայ և կ'ընդարձակի միշտ, ան նոյն զօրութեամբ՝ որով քարոզուեցաւ առաջին անդամ, — Գաղիլիոյ պատուած Աբրահամ անուն վանական Հրէայն (որ Անթոնիոս Տէմոյէ Հոլհոտոս Ո՛ծէնեռան վերջը 'ի մէջ կը բերուի) Քրիստոնեայ կը դառնայ 'ի Փարիզ՝ սա խօսքերն ըսելով իւր ձան տը Ավիլեի անուն ընկերոջը, որ երկար ատենէ 'ի վեր գինքը Քրիստոնէութեան դարձընելու կը ջանար. «Արտանց հաւնղուեր եմ որ ձեր Պապը և հետեւարար անոր հետ եղողներն իրենց բոլոր հանճարը հնարքն ու ջանքը Քրիստոնէական կրօնքը երկ-

բիս վրայէն ջնջելու կը գործածեն, փոխանակ անոր հինն ու նեցուկը ըլլալու, ինչպէս որ պարտքերնին է, և որովհետեւ այս նպատակին հասնելու համար իրենց ըրած ջանից հակառակ՝ կը տեսնեմ որ ձեր կրօնքը հանապազօր կաճի ու կը պայծառանայ. ուստի այնպէս համոզուած եմ որ Հոգին Սուրբ զայն կը պաշտպանէ իրրեւ միակ ճշմարիտ և սուրբ հաւատք »:

'Ի վերջոյ՝ հաւաքելով խօսքերնիս, Ս. Գրոց Աստուածայնութեան վաւերական կնիք ունիմք անոր հնախօսութիւնն ու պատմական ճշմարտութիւնները՝ իր բնախօսութիւնը, նպատակին մէութիւնը, բարոյականին ու վարդապետութեան-վեհութիւնը, տարածման եղանակը. և ասոնց ամենուն վրայ հըրաշքներ և մարգարէութիւններ ալ ունիմք իբր անխաթարելի հաւաստիք. (զորոց 'ի վեր անդր ասացաք) Միով բանիւ ըսեմք, ի'նչ որ Ս. Գիրք իւր Աստուածայնութեան ապացոյց վկայութիւն ունին, անոնցմէ և ո'չ մին ունին արտաքնոց նուիրական ըսուած մատեաններէն. ո'չ ալ դրութիւն մը իւր վաւերութեան վկայութեան համար այնչափ հաստատութիւններ կամ հաստատութիւններու լոկ երեւոյթն ունի՝ որչափ Աստուածաշունչի դրութիւնը: Ապա ուրեմն կանուխ կոյր ըլլալու է մեկը՝ որ այնչափ ճշմարտութեան և Աստուածայնութեան նշաններ հաւաստիք և ապացոյցք ունենալէ յետոյ՝ դեռ եւս կարենայ կամ ոեզի մարդահնար ըլլալ երեւիլ Աստուածաշունչ կտակարանաց Մատեանները, որ դրապէս և բացարձակապէս ալ անհնար է:

ԳԼՈՒԽ Բ.

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ Ս. ԳՐՈՑ ԵՒ ԱՐՈՇՄՈՒՆՔ ՄԱՏԵՆԻՑ ՆՈՐԱ

Աստուածաշունչ Ս. Գիրքը երկու մասերէ կը բաղկանայ, Հին կտակարան և Նոր կտակարան: — կտակարան բառը Յունարէն Տիաթիքէ բառին թարգմանութիւնն է, որ կը նշանակէ կարգադրութիւն մը. և Յունարէն Նոր Կտակարանին մէջ գործածուած է մէյ մը այն կարգադրութիւնը կամ պայմանը նըշանակելու համար՝ որ հաստատ Աստուած մարդոց հետ ընելէ, և ըստ այսմ սխալ թարգմանուած է Հայերէնի մէջ. (Գործ. Գ. 25. Է. 8. Եբր. Թ. 15.) մէյ մ'ալ այն կարգադրութիւնը նշանակելու համար՝ զոր մարդիկ իրենց մահուանէն ետքը 'ի գործ դրուելու պայմանաւ կ'ընեն իրենց ստացուածոց մասին, և ըստ այսմ կտակ թարգմանուած է այս Հայերէնն: (Գաղ. Գ. 16.) և վերջապէս մէյ մ'ալ այն գրութիւնները ցուցընելու համար գործածուած է որք կը պարունակեն այն կարգադրութիւնները կամ պայմանները. այսինքն՝ Աստուծոյ և իւր ծառայից մէջ տեղ եղած ուխտը, կամ մահուան մօտեցող մարդու մը իւր ստացուածոց նկատմամբ ըրած տըրամադրութիւնները: Այս նշանակութեամբ ալ նոյն բառը Հայերէն կտակարան թարգմանուած է: (Ք. Կոչնէ. Գ. 14.) — Ուստի Հին կտակարան ըսելով կ'իմանանք այն Ս. գրուածքները որք կը պարունակեն Քրիստոսի մարմնանալէն առաջ Աստուծոյ իւր ժողովրդեան ճեռ ըրած ուխտերը, պայմանները, պատուէրներն ու Սահմանադրութիւնները, խոստումները ու ըստ պատեհապէս ըրածները: Եւ Նոր կտակարան ըսելով կ'իմա-

նամք այն Ս· գրուածքները՝ որոց մէջ կը բովանդակուին Քրիստոսի և անոր Առաքելոց վարդապետութիւնները եւ եւ եւ ։

Հրէից մէջ առաջները երեք մասերու կը բաժնուէր Հին Կտակարանը · Օրէնք · Մարգարէք · և Գիրք · (այս եռաբինս կ՚անուանէր երբեմն նաև Աբբա Գիրք կամ Մովսէս, և կամ Աբբա Քէրէք, Սաղմոս, Օրհնաբանիան կամ Եբէք ։) Այս երրեակ բաժանումովը կը խօսի և Յիսուս Քրիստոս յաւելլն · «Պարտ է՝ լնուլ ամենայն գրելոցն յՕրէնս Մովսիսի, և՛ի Մարգարէս, և՛ի Սաղմոսն վասն իմ» ։ (Ղ֊ած· ԻԴ· 44։) Այլ վերջերը բովանդակեցան յերկուս, Օրէնք և Մարգարէք · և Քրիստոսի ժամանակ արդէն կար այս բաժանումնքը, և ըստ որոյ կ՚ըսէ, «Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զՕրէնս կամ զՄարգարէս» ։ (Մտթ· ե· 17։ է· 12։ իե· 40։ Ղ֊ած· ԺԶ· 16։) Հանդանակին մէջ ալ սոյն բաժանման հետեւած են Նիկիական Հարք՝ ըսելով, «Հաւատամք և՛ի Ս· Հոգին · յանեղն և՛ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս և՛ի Մարգարէս և յԱւետարանս» · (Որով ըսել կ՚ուզեն թէ՝ Հին և Նոր Կտակարանները հաւասարապէս՛ի Հոգւոյն Աստուծոյ Ազդեցութենէն գրուած են, Աստուծոյ խօսքն են ։)

Այս երրեակ բաժանմանց տակ ժողվուած գրքերն ասոնք են ։

Ա· Օրինք կը պարունակէին Մովսիսի Հնգամատեանը, (1· Ծնունդք, 2· Ելք, 3· Ղեւտացիք, 4· Թիւք, 5· Երկրորդ Օրինք կամ Երկրորդութիւն Օրինաց ։)

Բ· Մարգարէք կը պարունակէին տասներեք գրքեր՝ պատմական և Մարգարէական · որք են 1· Յեսու, 2· Դատաւորք և Հռութ (երկուքն իրր մէկ գիրք), 3· Ա և Բ Թագաւորք (իրր մէկ), 4· Գ և Դ Թագաւորք, 5· Ա և Բ Մնացորդք, 6· Դանիէլ, 7· Եզրաս և Նէեմիա (կամ Բ և Գ Եզր), 8· Եսթեր, 9· Յովբ, 10· Եսայի, 11· Երեմիա և Ողբ, 12· Եզեկիէլ, 13· Երիւտասան փոքր մարգարէք (ամենքը իրր մէկ գիրք) ։

Գ· Սաղմոսք ալ կը բովանդակէին չորս տեսակ գրքեր, 1· Սաղմոսք, 2· Առակք, 3· Երգ երգոց, 4· Ժողովող ։ (Ոմանք՝ ինչպէս նաեւ Յովսեպոս՝ Յովբն ալ այս Սաղմոսաց բաժանման մէջ կը դնեն, այն ալ տասնեւր ըլլալուն համար ։)

Ընդ ամենն 22 գիրք, (5 Օրէնք, 13 Մարգարէք և 4 Սաղմոս ·) որք թէեւ մինչեւ երեսուն և չեն կը հասնին, բայց Հրէայք մէկ քանի գրքեր դիտմամբ իրարու հետ կը միացընէին որ անոնց հատրանքը քսանուերկուքի լեցուին իրենց այբուբենի գրոց զուգաթիւ ըլլան, և ոչ աւելի ։

Նոր կտակարաններն ալ խիստ կանուխ բաժնուեցան երեք մասերու · Աւետարանք, Գործք և Թուղթք Առաքելոց, և Յայտնութիւն ։ Այս երրեակ բաժանումներն ալ քսան և եօթն գիրք կը պարունակեն ։

Ա· Աւետարանք չորս գիրք ունին, 1· Մատթէոս, 2· Մարկոս, 3· Ղուկաս, 4· Յովհաննէս ։

Բ· Գործք և Թուղթք Առաքելոց 22 գիրք ունին · 1· Գործք Առաքելոց, 2· Կաթուղիկեայ Թուղթ Յակովբայ, 3· և 4· Ա· և Բ· Թուղթք Պետրոսի, 5· 6· և 7· Ա· Բ· և Գ· Թուղթք Յովհաննու, 8· Թուղթ Յուդայի, 9—22· Չորեքտասան Թուղթ Պօղոսի · (1· Հռովմայեցւոց, 2· և 3· Ա· և Բ· Կորնթացւոց, 4· Գաղատացւոց, 5· Եփեսացւոց, 6· Փիլիպպեցւոց, 7· Կողոսացւոց, 8· և 9· Ա· և Բ· Թեսաղոնիկեցւոց, 10· և 11· Ա· և Բ· Տիմոթեայ, 12· Տիտոսի, 13· Փիլիմոնի և 14· Եբրայեցւոց ։)

Գ· Յայտնութիւնն ալ մէկ գիրք ըլլնէ Յովհաննէս Աւետարանիչէն գրուած ։

Հին կտակարանի վերոյիշեալ 22 գիրքերը ամբողջ կ'ընդունէին 'ի հնումն Իսրայէլացիք, որոնց կը վկայէ Յովսէփ Փլաւիանոս Պատրին, (ընդդէմ Ապիոնէ· գր· Ա· ցօդ· 8) և մինչեւ ցայսօր կ'ընդունին: (Տե՛ս 'ի Մէլիտոնէ· պատմ· Սուրբն Հէրոնիմոս, գր· Դ· եր· 409·) Քրիստոնէական եկեղեցիք սկիզբէն 'ի վեր միշտ ընդունած են զանոնք ամենքն ինչպէս նաեւ Նոր կտակարանի 27 գրքերը ամբողջ, իրրեւ «էօտ Ադոնայ, որմէ կը սահմանուին մտոնէ հաստոդ, և կանոն բոլոյէց»· և ըստ այսմ Հին և Նոր կտակարանաց վերոյիշեալ գիրքերը կ'անուանին Եկեղեցւոյ՝ «կանոնական գիրք Հին և Նոր կտակարանաց»· իրր ահեղանաւորոգք և կանոնագիրք վարդապետութեան Եկեղեցւոյ:

Վերջինն 'ի մարդարէս եզրաս՝ որ ներհուն էր Աստուածային օրինաց և գրոց, Հրէից բազմաւեայ գերութենէն ետքը «Աստուածային սպեղութենէ հարժեալ՝ 'ի սէր հաւաքելով ժողվելով Հին Կտակարանի վերոյիշեալ բոլոր գիրքերը խմբագրեց և տուաւ Հրէից իրր միակ Աստուածաշունչ գիրք: Ինչ գիրքեր որ անկից ետքը մինչեւ 'ի Քրիստոս' իրր 400 տարուան միջոցին 'իվեր եղեւցան, Հրէայք զանոնք թէեւ իրրեւ Ս· Գիրք յոժ պատանի և օգտակար ընդունեցին և յարդեցին, բայց իրրեւ Աստուածաշունչ՝ հաւասար կանոնական գրոց չընկալան: Վասն որոյ և վերոյիշեալ Աստուածաշունչ գրոց կանոնական գիրքերը որ 'ի ձեռն եզրի խմբագրեցան՝ անուանեցան Եւխոհոնէ, և եզրէն ետքը յայտնուածներն ըսուեցան Եքէրբոհոնէ կամ Ո'չ կանոնէ, վերծանելի, որք են Բարուք, Իմաստութիւն Սողոմոնի, Սիրաք, Տովբիթ, Յուդիթ, Եսթեր գիրք, Եզրաս Ա· և Դ·, Մակաբայեցիք, Եսթեր մէկ քանի գլուխներով (ը Գէ· ժ· համար Ա էն մինչև Գէ· ժդ· համար 24·) Աղարիայի աղօթքը, Երից

մանկանց օրհնութիւնը, Շուշանայ, Բէլայ և Վիշապին պատմութիւնները:

Այսպէս ուանդած են մեզ Հարք և վարդապետք եկեղեցւոյ Ս· Գրոց կանոնական Մատենից և Ո'չ կանոնականաց կամ Երկրորդականաց՝ վերծանելեաց ցուցակը:

Բ· Դարուն վերջերը՝ Մելիտոն Եպիսկոպոս Սարդիայ· (ես-եբ· 'է պոպ· եկեղ· գր· գ· գլ· 26·) Գ· դարուն սկիզբը Որոգինէս, (Անդ· գր· Զ· գլ· 25·) Գ· դարուն Կիւրեղ Երուսաղէմայ հայրապետը, ('է կատ ընձայուկներ) Եւսեբիոս կեսարեայ, ('է պոպ· եկեղ· գր· դ· գլ· 26·) և Ս· Աթանաս Աղեքսանդրիոյ հայրապետը, ('է թուղէրն յղ· պծնէց և հոմոսոպոլիտ Ս· Գրոց·) Ս· Գրիգոր Աստուածաբան, Ամբիղիոս, Յովհաննէս Լաւոդիկեայ, Ս· Եպիփան Եպիսկոպոս Կիպրոսի, (ընդդէմ հերես· գր· Ա· գլ· 8·) Հերոնիմոս, Հիլարիոս, Ռուփինոս և այլք՝ ճիշդ վերը յառաջ բերածնուս պէս շարակարգած են Ս· Գրոց կանոնականաց և Պարականոնից ցանկերը: Սուրբ Աթանաս Աստուածաշունչի կանոնական գրոց ցանկը դնելէն ետքը կը յաւելու· «Ասո՛նք են աղբիւր փրկութեան· միայն ասոնցմէ կրնաք սովրիլ Աստուածպաշտութեան վարդապետութիւնը· և չեւք կրնար ասոնց վրայ բան աւելցընել կամ ասոնցմէ բան պակսեցընել»· (յղ· պծնէց· թուղ· Լթ·) ետքէն Պարականոն գրոց անուններն ալ կը թուէ: Ռուփինոս ալ Ս· Աթանասի կանոնական գրոց ցանկին պէս ցանկ մը մէջ բերելով՝ կ'ըսէ· «Հարք ընդ կանոնս դասակարգած են այս գիրքերը, և մեր հաւատոյ վարդապետութիւնները ասոնցմով հաստատեցան· բայց պէտք է գիտնալ՝ որ ուրիշ գիրքեր ալ կան, որք կանոնական չեն, և մեր հայրերը զանոնք Եկեղեցական կոչած են· ասոնք են Աղովմոնի Իմաստութիւնը, Սիրաքայ գիրքը·

Ցովբիթ, Ցուղիթ և Մակաբայեցւոց գիրքերը։ Որոգինէս Մակաբայեցւոց գիրքերուն համար կ'ըսէ՝ Թէ «արտաքոյ թուոյ նոցա (այ կանոնականաց) դասին գիրք Մակաբայեցւոց» (Եւսեբ. Դր. Զ Գլ. 25։) Օրիգինես ևս կ'ըսէ. «Երբայեցիք ո՛չ երբէք Մակաբայեցւոց գիրքերը՝ Օրինաց Մատոյրէից և Սաղմոսաց հաւատար ընդունեցին. այլ եկեղեցին ո՛չ անսխալական համարեց զանոնք, եթէ ողջմտութեամբ կարդացուի և մտիկ ըլլուի» (Ընդդեմ Գործոնդ. Գլ. 21։) Ս. Եպիփան Կիպրոսի եպիսկոպոսը՝ իւր գրոց մէջ երեք տեղուանք Հին Կտակարանի կանոնական գրոց վրայօք խօսելով միշտ 22 կը թուէ զանոնք, և միւսներուն համար կը յաւելու. «կանոնին մէջ չեն գտնուիր, թէպէտ և օգտակար են անոնք և մի յորդորակներով, բայց Ս. Գրոց թիւէն դուրս են» (Ընդդեմ հերես. Դր. Ա. Գլ. 8։)

Բայց և այնպէս՝ Թէ Հրէայք և Թէ Քրիստոնեայք այս գիրքերը վերծանելէք և եթ հրատարակելոյնին հանդերձ՝ ոչինչ ընդհատ յարդ և պատիւ կ'ընծայեն անոնց. Եկեղեցւոյ մէջ անդամ կարդալ կը սահմանէին յօդուտ և՝ ի շինութիւն Եկեղեցւոյ յորմէ և այն գիրքերը Եկեղեցական Դէպեր ալ կոչուեցան Այս խտիրը և տարբերութիւնը միայն կը դնէին կանոնականաց և վերծանելեաց մէջտեղը՝ որ հաւատոյ մաս մը սահմանելու ապացուցանելու համար հարկաւորապէս ալնպէս կը համարէին նախնականքն գրոց վկայութիւնքը. իսկ Պարականոն կամ երկրորդականոն գրովք խրատներ և յորդորակներ կուտային, քարոզներ կը յօրինէին, բայց հաւատոյ մաս չէին սահմաններ անոնցմով։ Հայոց եկեղեցին ալ ինչպէս կը գրեն Խորենացին (Գր. Գ. Գլ. ճՁ.) և Կորիւն, որովհետեւ Կ. Պօլսոյ Պատրիարքաց Գատրիարքարանը Գասագիրքերէն ընդունեց Աստուածաշունչ գրոց տոմգ և հատորան ըզնոսին՝ հինգ երորդ դարուն սկիզբը՝ մեր

Ս. Սահակ և Մեսրովբ Թարգմանիչներու ձեռքովը, երբ Աղեքսանդրիան և Անտիոքեան եկեղեցւոց ցաւալի բաժանումներն դեռ եղած չէին եկեղեցւոյ մէջ, յայտնի է Թէ՝ մինչեւ ան ատեն Ցունաց եկեղեցւոյ մէջ Ս. Աթանաս, Ս. Բասիլիոս, Ս. Գրիգոր և այլք՝ կանոնական և ոչ կանոնական գիրքերը իրենց պէս կը բաժնէին նէ նոյնպէս ընդունեց բաժանել (այն գիրքերը Հայոց եկեղեցին ալ։) Մեր ազգին մէջ Հին և Նոր Կտակարանաց կանոնական և արտաքոյ կանոնի գրոց համար (Թէ՛ և ինչ ինչ տարբերութեամբ) յատկապէս որոշում տրուած կը գտնուի ուխտերդ դարուն Սիոն կաթուղիկոսի պարտաւորիչ հրամանաւ գումարուած ժողովքին մէջ. որուն ԻԳ. Ը կանոնին մէջ Հին Կտակարանի կանոնական գրոց հետ չարտակարգ եալ են Ցովբիթ Ցուդիթ, Մակաբայեցւոց պատմութիւնք, իմաստութիւնք Սողոմոնի և Սիրաքայ, Հիշատակելով Եզրասը, (որոնք՝ ինչպէս վերը տեսանուեցաւ՝ ո՛չ Երբայեցւոց և ո՛չ Ցունաց նախնի եկեղեցւոյ կանոնաց մէջ կը գտնուին.) իսկ Ս. Մարդիս Շնորհալւոյ հինգ դարերէ կաթուղիկէ Թղթոց վերնութեան մէջ Ցովբիթի գիրքը և Սողոմոնի իմաստութեան գիրքը չեն յիշատակուիր ո՛չ կանոնականաց կարգին և ո՛չ արտաքոյ կանոնի եղածներուն կարգին։ Ասկից զատ Հերինոսկը ընդ երկբայութեամբ կը թողու Սիրաքայ իմաստութիւնը և Եզրասայ գիրքը. այլ այս ամենը մէկ կողմ դնենք որ կ'ուզէ Թող ընդունի, քանի որուն ես ինձմէ այս ինչ գիրքն ընդունելու և այն ինչը հերքելու ձեռնարկ ցոյց չեմ ուզեր, որ միայն Եկեղեցւոյ Ծայրագոյն կառավարութեանը վերաբերեալ է»։ (Կ. Վ. Շահնազարեան՝ ի կրճատից. Մատն. Ր. Գլ. Գ. Ցօդ. Ե. Հատ. Գ։)

Այս եկեղեցական վերծանելի դրութեանց կարգին կը վերաբերի նաեւ Հանգիստ Յովհաննու Աւետա-

բանչի, Աղօթք Մանասէի, թուղթ կորնթացւոց առ Օղոս և Ներին պատուախանի, Աղերս Եւթաղեայ, Մահ վեշտասան մարգարէից և կտակ երկոտասան նահապետաց գրքերը։ Այլ օտար են ամենեւին և դատապարտեալ յեկեղեցւոյ՝ Ընդ որ ըսուած ստայօղ գիրքերը. որք են Աւետարան մանկութեան Քհսուսի, Ծննդեան Մարիամու, Յակոբայ, Թովմայի, Նիկոդիմեայ, Պետրոսի, Եբրայեցւոց, շատ մը Գործք Առաքելոցներ, շատ մ'ալ թուղթեր և Յայտնութիւններ։ Ասոնք մերժուած են եկեղեցիէն իբրեւ վնասակար ժողովրդեան, և կարդալու անդամ հրաման տրուած չէ. որոց համար այսպէս կը գրէ Սարգիս Շնորհալի. «Ամենեւին խոտելիք են. զի ի հոգւոյն մոլորութենէ արուսաղրեցան պրակաւաղայքն՝ զոր ետն Մարիամու անուանեն, և աւետարանն՝ զոր Թովմայի ասեն, և գիրք տղայութեան Քհսուսի, և այլ սոյնպիսիք, որք ի տիպ ճշմարտութեան կամեցան ի ներքս մտանել, որ ոչ ընկալաւ եկեղեցի Աստուծոյ զորումն չարութեան և զգաղձն վնասակար. վասն զի ո՛չ ետես ի նոսա տիպ ինչ աստուածութեան, այլ ամենեւին ի մտութեամբ»։ (յառաջաբ. Բ. պիտ։)

ԳԼՈՒԽ Գ.

Ս. ԳԻՐՔ ԿԱՆՈՆՔ ՀԱՒԱՏՈՑ ԵՒ ԲԱՐՈՅԻՑ

Ս. Գիրք՝ ինչպէս որ նախորդ գլուխներուն մէջ տեսանք, Աստուծմէ տրուած են մարդուն՝ փրկութեան ճամբուն մէջ անոր առաջնորդելու համար։ Ասկէ կը հետեւի,

Ա. Ամենայն մատնունք հաւատոց և կանոնք բա-

րոյից՝ բովանդակեալ են ի Ս. Գիրս, և Ս. Գիրք բաւականք են ի փրկութիւն. և թէ չկայ անհնգմէ դուրս բան մը որ հարկաւոր ըլլայ փրկութեան. ըստ որոյ և նախնիք «Հաւատի մտօք հաստատուն կալան՝ եթէ Ս. Գիրք աղդմամբ Հոգւոյն սրբոյ իցեն գրեալք և աւանդեալք. և թէ ի նոսին բովանդակին ամենայն մատունք հաւատոյ մերոյ»։ (Իգն. վ. փափաքեան ի պար. եկեղ. Դոր. գ. գլ. ԺԸ։) — Ապա Ս. Գիրք են կանոնք հաւատոյ կամ տեղիք Աստուածաբանութեան, առաջին և միակ աղբիւր մատանց հաւատոյ և բարոյից վարդապետութեան։

Բ. Ս. Գիրք ընդհանուր բոլոր մարդկային Ազգին տրուած են՝ անոր իւրաքանչիւր անդամին պիտոյից համար, և ո՛չ թէ մարդոցմէ որոշուած զատուած դասու մը. ուստի և ամենայն ոք պարտաւոր է ջանասիրաբար ընթերնուլ զայն, և իրեն Աստուծոյն փրկութեան ձայնը՝ իւր տրտին խօսքը լսել։ — Ապա ուրեմն քնաւ մէկը իրաւունք չունի մարդկան՝ և կամ մարդոցմէ ունանց արդելուլ անոր ընթերցումը. մոլորեալք և մոլորեցուցիչք միայն կ'արդելուն զայն. իրենց մոլութեանց վրայ ծաղրվելուեան աչքը պատրելու և զանոնք իրենց չահուն գործիք ընելլ յաջողելու համար։

Այս ամենուն վրայ ետքէն պիտի խօսիմք եկեղեցւոյ վրայ խօսած ատեննիս ի Մասն Գ. հոս միայն Քրիստոնէական եկեղեցւոյ այս հիմնական վարդապետութեան հաստատութիւնները մէջ պիտի բերեմք՝ առանց մեր քովէն բան մը աւելցընելու։

Եւ նախ Ս. Գիրք կ'ըսեն. «Որ ինչ գրեցաւն, ի մեր վարդապետութիւն գրեցաւ, զի համբերութեամբ և մխիթարութեամբ գրոց ցոյսն ընկալցուք»։ (Հռով. ԺԵ. 4։) «Այլ դու հաստատուն կաց յոր ուսարդ. և հաւատարիմ եղեր. գիտես ո՛ւստի ուսար, զի ի մանկութենէ զգիրս Սուրբս

գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն՝ 'ի ձեռն հաւատոցն որ 'ի Քրիստոս Յիսուս: Ամենայն Գիրք Աստուածաշունչ և օգտակարք, 'ի վարդապետութիւն են՝ և 'ի յանդիմանութիւն, և յուղղութիւն, և 'ի խրատ արդարութեան. զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ, յամենայն գործս բարութեան հատուցեալ»: (Բ. Տիմ. Գ. 14—17:) «Քննեցէ՛ք զգիրս, զի դուք համարիք նոքօք ունել զկեանան յաւիտենականս»: (Յ-Վհ. Ե. 39:) «Յուզարկեցին զՊօղոս և զՇիղա 'ի Բերիա, որք իբրև հասին անդր, 'ի ժողովուրդս Հրէից գնացին. զի առքա էին աղնուագոյնք՝ քան որ 'ի Թեսաղոնիկին էին, որք ընկալան զբանն ամենայն յօժարութեամբ. հանապազ քննէին զգիրս՝ եթէ իցէ՞ այս այսպէս»: (Գործ. ԺԷ. 10—11:)

Եկեղեցւոյ Հարք եւս այսպէս կը խօսին:

Ս. Գրիգոր Հուսաւորիչ. «(Պարտ է) կրօնել և խորհիլ և առնել զայն՝ որ 'ի հաճոյս Աստուծոյ ասացեալ ճշմարիտ վկայութեամբ Ս. Գրոց, և մի՛ անկանիլ 'ի բազմախոյզ խնդիրս, որք վրիպեցուցանեն 'ի Ս. հաւատոց»: (Յ-ծ-Խ. եր. 37:)

Ս. Եփրեմ Հայրապետ Երուսաղէմի. «Պարտ և պատշաճ է՝ մի՛ որ փոքր ինչ բան իցէ, առանց վկայութեան Գրոց օրէնս ցուցանել. . . : Արդ մի՛ ինձ՝ որ զայս ասեմ, հաւատար վայրապար, եթէ ոչ գիտէք պատմութեանդ 'ի Գրոց սրբոց ցուցից. զի վկայութիւն այս հաւատոցս մերոց ո՛չ 'ի բանդիտութենէ է, այլ 'ի յանդիմանութենէ Գրոց սրբոց»: (Ի կոչեցեալ ընծայ. Գլ. Դ:)

Ս. Յովհան Ոսկերերան Հայրապետ. «Եւ մեք արդ յօրժամ ընդ հերձուածողն մարտնչիմք՝ աստի ('ի Ս. Գրոց) սպառազինեացուք: Ամենայն գիրք՝ ասէ՝ Աստուածաշունչ և օգտակարք առ 'ի վարդապետութիւն են, 'ի յանդիմանութիւն եւ . . . :

Պարտ է այսուհետեւ ստուգութեամբ քննել զամենայն, քանզի բանք Աստուածաշունչ Գրոց զէնք են հոգեւորականք. . . . : Ո՛չ գիտէք եթէ ո՛չ վասն առաջին մարդկանն միայն գրեցան Գիրք, այլ և վասն մեր: Ո՛չ լսէք Պօղոսի զի՞նչ ասէ. այս ամենայն 'ի խրատ մեզ գրեցաւ, յորս վախճան յաւիտենից եհաս. զի համբերութեամբ և մխիթարութեամբ Գրոց զյոյսն ընկալցուք: . . . փութացուք այսուհետեւ զԳիրս քննել ստուգութեամբ. զի ո՛չ կարեւք վայրապար փրկութեան մերում հասանել՝ եթէ ոչ յարաժամ 'ի Գիրս զբաղեսցուք ուղիղ աւանդութեամբ և առօդ կենցաղաւ»: (Ի Դէն. Յ-Վհ. Ճռ. Լթ. Խթ. Ծբ. 'ի յոյնբ-կն.) «Աւրէ տե՛ս զինչ պատճառս 'ի մէջ բերեն՝ յորժամ մեզադիր ոք լինիցի (վասն չընթեռնլոյ նոցա գԳիրս.) չեմ ասէ, վանական. այլ կին ունիմ և որդիս, և տան հոգամ. և այն իսկ է որ զբնաւ եղծանէ, յորժամ նոցա միայն պատշաճ համարիցիք զԱստուածեղէն գրոց ընթերցուածս: Զեզ աւելի պիտոյ է՝ քան նոցա»: (Ի Դէն. Մ-ղն. Ճռ. Բ. յոյնբ:)

Ղազար Փարպեցի. «Պարտ և արժան էր ամենայն հաւատացելոց այնքան գիտող և ծանօթ լինել Աստուածային Գրոց, . . . մինչ զի չլինել կարօտ յայլոց ուսանիլ, այլ միայն յԱստուծոյ և յԱստուածային Գրոց. . . : Գործիք քրիստոնէութեան ասացուածն Աստուածաշունչ Գիրքն է, զոր պարտ և պատշաճ էր ամենեցուն այնքան գիտել, մինչ զի չլինել կարօտ յայլմէ ուսանիլ»: (Ի պոռ. Հայ:)

Մեծն Խոսրով Անձեւացեաց Եպիսկոպոս. «Բազումք ասեն այսպիսի բանս. թէ զմեզս և զարդարութիւն ամենայն ոք գիտէ. և եթէ խաւարիլ կամի զչարէն և զբարին առնել, անդեակ է ամենայն մարդ. իսկ գրովք պատուիրն չէ ինչ չահ, այլ խափանումն 'ի կարեւորացն: Եւ այս է որ զԱմովսեայեան

սպառնացումն յարդիւնս ածէ, զսուին ո՛չ հացի, և զծարաւն ո՛չ ջրոյ, այլ սով լսելոյ զբանն Տեառն. զի ո՛րպէս 'ի սովոյ՝ խաղային և ապականին ոդիքն որք ո՛չ լսեն զպատգամս Աստուծոյ, յայտ առնէ մարգարէն: Քանզի ո՛րպէս առանց մարմնական կերակրոց չապրի մարմին, նոյնպէս և ո՛չ առանց խրատուս Գրոց կեալ կարէ ոդին. զայն և Մովսէս ասէ: Զսոյն և Տէրն 'ի վկայութիւն առնու ընդդէմ փորձողին. Ո՛չ ասէ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ 'ի բերանոյ Աստուծոյ: . . . եւ եթէ պատուիրանքն Աստուծոյ կեանք են յաւիտենականք, յայտ է զի զրկեալքն 'ի պատուիրանացն Աստուծոյ՝ մեռեալ են յաւիտենական կենացն. որպէս զրկեալքն 'ի հարկաւոր կերակրոցն՝ մեռեալ են յայսոց կենաց: . . . (եւ Պօղոս) յարէ 'ի նոյն թէ Ամենայն գիրք Աստուածաշունչք են. և նոքա ասեն, չեն պէտք Գրոց, և Պօղոս ասէ՝ օգտակար են. խրատեն ուղղեն և կատարեալ մարդ Աստուծոյ առնեն և յամենայն գործս բարութեան հաստատեն: Արդ դու քեզէն տուր զիրաւն՝ թէ ո՞ւմ հաւանիլ արժան է, Պօղոսի՞ թէ մոլեգնոտացն որ արհամարհեն զԳիրս Սուրբս, որոց մարգարէն եղայիան վա՛յ տայ. վա՛յ արհամարհողաց, որ արհամարհեն արհամարհանօք զօրէնս. . . . : Բայց հարցից ցնոսա. վայրապա՛ր հրամայեաց Աստուած Մովսիսի և մարգարէիցն գրել գԳիրս. և կամ ոչնա՞յն գրեցին Առաքեալքն զԱւետարանն և զԹուղթս իւրեանց և որ գործս Առաքելոցն գրեաց, և կամ վարդապետքն զոր ինչ գրեցին: Գրահէն մի 'ի պատուիրանացն Աստուծոյ՝ ձեռնադրեալն է քան զերկինս և զերկիր: Վասն որոյ պատուիրէ Մովսիսիս Աստուած թէ եղիցին քեզ պատուական այնոքիկ զոր ես պատուիրեմ քեզ այսօր 'ի սրտի քումմէ և յանձին քումմ. և խնացուսցես զսա որդւոց քոց, և խօսեսցին

առաջի 'ի նստել 'ի տան 'ի գնալ 'ի ճանապարհի, 'ի ննջել և 'ի յառնել: Եւ արկցես զսա նշան 'ի ձեռին քումմ, և եղիցին անշարժ առաջի աչաց քոց: Եւ գրեսցես զսոսա 'ի վերայ սեմոց տանց քոց և 'ի դրունս քո: . . . ի սատանայէ խօսին որք խաբեան մինին Գրոց լսելութեան. . . : » (ի Դեն. ԺՈՒ. 6—19: «Զէն ֆոհանոմէ» աղօթից վերջը. եր. 15—19:)

Դարձեալ. «Դիւեացուք սիրով զկաթն բանի հոգեւոր ստեանցն. և զմայլեացուք յօժարութեամբ՝ Հոգւոյն սրբոյ պարգեւօք. զի մի՛ ծնացուք իբրեւ զանդաստան անգործ և անարդիւն, որ միշտ սերմանի և սերմանակորոյս լինի. զուր աշխատանք և ընդունայն վաստակք: Այսպիսիք են միշտ ցնորեալք և բարք զբաղեալք, որոց սպառեալ է սէր լսողութեան Աստուածային կտակարանացն. որք իբրեւ զկոյր և զաչացու չրջին յաշխարհի. զի կամ բնաւ ո՛չ ընթեռնուն, և կամ զոր ընթեռնուն՝ ո՛չ սիրով և փափագանօք, այլ իբրեւ զխարկ ինչ և վճար պարտուց: Զի չիք ինչ ողորմելի քան որոց սպառեալ իցէ սէր Գրոց Սրբոց և բաղձանք վերծանութեան Աստուածային պատուիրանաց: Աստուածսիրութիւն 'ի Գրոց ծնանի 'ի մարդ. սէր աղօթից և արտասուաց՝ պահոց և ողորմածութեան, խոնարհութեան և սիրոյ, 'ի Գրոց բուսանի 'ի միտս մարդկան: Արիութիւն և հաւատերութիւն, յուսոյ և երկիւղի և ամենայն բարեգործութեան պատճառք մեզ Գիրք մինին 'ի վերածելն մեզ ուղիղ մտաց. նաեւ օրինաց և սահմանաց և ամենայն բարեկարգութեանց պատճառք և հաստատութիւն Գիրք են յաշխարհի: . . . Զի՛ք ինչ հոգեւոր գործառնութիւն կամ բարեկարգութիւն թէ առանց Գրոց լինիցի: Վասն որոյ և որպէս Յովհան ասէ, թէ Որովհետեւ 'ի Հոգւոյն զրկեցաք, զգրովք պարտիմք միշտ գալ: Եւ Տէրն՝ քննեցէ՛ք ասէ զԳիրս զի նոքօք համարիք ունել զկեանս

յաւիտենականս յանձինս։ Եւ արդ պատուեսցուք զԳիրս սուրբ վերծանութեամբ, որ են պատճառք մեզ ամենայն բարելաւութեան. փափաքեսցուք սիրով ի վերծանութիւն Գրոց սրբոց, և յընթեռնուլն կրկին հոգ յանձին բերցուք։ Մի՝ զի իմաստութիւք զընթերցեալսն. և միւս եւս՝ զի անմոռաց ի մտի կալցուք ։ ։ ։ ։»։ (Անդ· եր· 63—64։)

Ս· Գրիգոր Նարեկացի որդի Անձեւացոյս։ «Արդ՝ որպէս որք ի մօրէ կաթանցն, և ի սննդենէ նորա օտարանան, և զմահ կրեն, նոյնպէս և որք ի յեկեղեցւոյ, և ի նորա ստեանցն և ի հոգեւոր կերակրոցն ի Գրոց, որ է ստինք եկեղեցւոյ, օտարանան, և ոչ փափաքմամբ և բաղձանօք մտանեն ի նա՝ և կերակրին ի նմա Գրովք, ո՛չ կարեն կեալ, այլ մեռանին զանմահ մահն»։ (Ի Մին· եւէ Եբէօղէ, Ի բան· Զ· 8։)

Ս· Ներսէս Շնորհալի Հայրապետ· «Վասն այսորիկ և մեք նախ և առաջին՝ գլխոյն ամենայն բարութեանց զհաւատոյն բուռն հարկանելով դիցուք առաջի լսողացդ· ո՛չ նորոգ ինչ գրելով, այլ ի վերայ հինանն Առաքելոց և Մարգարէից և Հարց սրբոց չինելով հաւատոյս բանիւ· զի մի՛ յանուսումն տգիտաց լսելով բան՝ որ ո՛չ ըստ ուղղափառ եկեղեցւոյ դաւանութեան, այլ արտաքոյ Աստուածաշունչ Գրոց բարբառին՝ ի կործանումն լսողաց, մոլորիցի ոք ի ճշմարտութենէն»։ (Թղթ· առ Հմօղէն Հայոց ապին· Ընդհնդ· եր· 3։) «Ի Գաւրիարքէ և ի ժողովոյ եպիսկոպոսացն (Ասորոց) առաքեցան առ մեզ երիւս եպիսկոպոսք վասն միաբանելոյ ընդ ազգիս մերում· զոր և ընկալաք սիրով և սահմանեցաք ի պաշտամ ժամու ժողով լինել առաջի մեր և խօսել առ միմեանս յԱստուածաշունչ Գրոց· զի թէ գտանիցի աւանդութիւն ինչ ի միջի մերում արտաքոյ Աստուածադիր կանոնաց՝ բարձցուք յեր-

կոցունց կողմանց»։ (Թղթ· պտտսխ· Ա· Ընդ· Կնոջ Մանուէլի· Ընդհնդ· եր· 74։)

Սարգիս Շնորհալի աշակերտակից Ս· Ներսիսի· «Եւ մեք արբցուք զկաթն բանին Աստուծոյ ի ստեանց Գրոց սրբոց ։ ։ ։ Եւ մեք կիրթ կալցուք զքիւմս մտաց մերոց ի տեղեկութիւն Աստուածային Գրոց· զի չանձինս և զընկերս մեր ապրեցուսցուք ի հրապուրիցն հերձուածողաց ։ ։ ։ Տեղեկութեամբ Գրոց սրբոց քննեսցուք զբազում ուսմունս այլազանդ իցն, և սեացուք՝ եթէ ուսուիցն՝ զոր նոքա ունին, կաթուղիկէ Առաքելական եկեղեցւոյ է ։ ։ ։ Իսկ մեք՝ մի՛ միայն ի Գրոց վարդապետութենէ զայսոսիկ ամբաղձս պահեսցուք, այլ և աղօթիւք առ Աստուած կարդասցուք»։ (Ի գիմ· կ-ի· Ընդ· ՃԸ· Զ· ի բան· Բ· Պետ· Գ· 18· յորդոր։)

Գրիգոր Տղայ Հայրապետ· «Զգաղկեզոն ո՛չ գիտեմ, և ո՛չ զկեւսն ճանաչեմ· իսկ եթէ բարիք են՝ անձանց և ժողովրդեան· և եթէ չարք՝ անձանց և ժողովրդեանն։ Զօրէնն նորա ո՛չ գիտեմ, և զաստղ մեղաց նորա ո՛չ լինիմ ։ ։ ։ եթէ զոցին յայոց սրբոց զաւանութիւն և հաւատ յԱստուածաշունչ Գրոց վկայութենէ, ընդունիմք ։ ։ ։ (Ի գոտսխ· Տոսթեղ։)

Ս· Ներսէս Լամբրոնացի· «Զհայրենեաց օրէնս պահեացուք աւրդող· մի՛ ջանասցուք լուծանել զօրէնն Աստուծոյ, և զմերս հաստատել զաւանդութիւն ։ ։ ։ Բարձրացուցէ՛ք, մի՛ անխայէք զարարատս ձեր, Աւետարանիչդ երուսաղէմի, մի՛ երկնչիք յաւանդութեանցն երկիւղէ»։ (Ա-ին·)

Յառաջ բերուած այսչափ հայրապետաց և վարդապետաց վկայութիւններէն յայտնապէս կ՛երեւայ որ Հայոց եկեղեցին ի սկզբանէ և այսր ո՛չ միայն չէ արգիլած աշխարհական ժողովրդեան Ս· Գրոց ուսումը՝ ըստ սոլորելոց ունանց դերապրիստոսից

այլ յորդորական խրատներ և պատուիրանաց հրամաններ 'ի վերայ դնելով իւրաքանչիւր Քրիստոնէի սուրբ պարտականութիւնն է ըսած է Ս· Գրովք պարապիլն: Եւ իրօք ալ Հայոց եկեղեցւոյ մէջ Ս· Գրոց ուսումը հաստարակ էր ամենեցուն ամեն ժամանակի մէջ· իրենց միակ զբաղմունքը գրօսանքը և մխիթարութիւնը՝ Ս· Գիրքն էր, մինչեւ իսկ պատերազմի արհաւրաց առեն: Եղիշէ վարդապետը վարդանանց համար կը գրէ թէ պատերազմի գացած առեններին «Բարձին եւս ընդ իւրեանս զսուրբ կոտակարանս· զի բազումք 'ի նոցանէ զԳիրս սուրբս ուսեալք 'ի մանկութենէ՝ զանձինս մխիթարէին, և զընկերսն քաջալերէին» · (եր· 19·) «Եւ (Ս· սպարապետն Հայոց Մամիկոնեանն Վարդան) ըստ պատերազմականն կարգին զքաջ արանց գլխաւորս կարանս հանապազ երկրորդէր առաջի նոցա, զի և ինքն իսկ տեղեակ էր 'ի մանկութենէ իւրմէ Ս· կոտակարանաց» (եր· 182) Ս· Ղեւոնդ եւս՝ Հայոց գօրքին առենապանութիւն ըրած առեն՝ կ'ըսէ անոնց· «Եւ այլ զի՞նչ եւս երկրորդեցից առաջի ձերոյ քաջ նահատակութեանդ, զի քան զիս տեղեկագոյնք և հմուտք էք Ս· կոտակարանացն» (եր· 190) Եղիշէ այն սուրբ նահատակաց կանանց համար ալ այս վկայութիւնը կու տայ, թէ «Սաղմոսք էին նոցա միմունչք երգոց և ընթերցուածք Ս· Գրոց՝ կատարեալ ուրախութիւնք» (եր· 230)

Քրիստոնէութեան առաջին դարերուն մէջ Ս· Գրոց ուսումն ու ընթերցանութիւնը ամեն եկեղեցւոյ մէջ ալ հաստարակ եղած ըլլալը ցուցընելու համար՝ արժան կը համարիմք առ այս հետեւեալ պատմական քաղուածն ալ 'ի մէջ բերել, զոր կը վատակարարէ մեզ Ֆլէօրի Հռովմէական պատմիչը: «Եկեղեցին՝ միայն աղօթքի տուն չէր, այլ և տուն փրկութեան· քանզի եպիսկոպոսը գերագոյն քահանութեամբն՝ իբրեւ երկայնամիտ վարժապետ՝ կը մեկնէր Աւետարանները և միւս Աստուածաշունչ գիրքերը· անոր համար հին առենը միայն եպիսկոպոսք վարդապետ կը կոչուէին: Չէին երկնչէր առենեւին ուսուցանել հրապարակաւ Եկեղեցւոջ և առանին՝ ինչպէս կ'ըսէ Պօղոս Ինքպինքին համար, և խօսքերնին յարմարցընել բոլոր լսողներուն, ինչպէս կը տեսնուի անոր առ Տիտոս և առ Տիմոթէոս գրած թղթոց մէջ: (Գործ· ի· 20· Իքնատ· առ Պոլիկարպ· Տերտուղ· յղ էրաս· Ը· Երան· առ Փըղին· առ Եփես· Պոդմ· Ե· ի·) Պարտք կը համարէին իրենց մտքէն բան մը չընել, պարապ խնդիրներ չյուզել, և Աւետարանի գրուցած բաներէն առելի բան չհնտըռել, այլ հաւաստեաւ պատմել ի'նչ որ սովրած էին իրենց հայրերէն, ս առջի երէցներէն և եպիսկոպոսներէն և աւանդութենէն, որ առաքեալներէն սկսեալ անոնց կ'իջնար անընդհատ: . . .

Հաւատացեալք ալ ոչինչ նուազ կը պարապէին Աստուածային օրէնքները սովրելու և գիշեր ցորեկ անոնցմով կը խոկային: Եկեղեցին լսած գիրքերնին տունը վերստին կը կարդային, և իրենց հովուաց մեկնութիւնները մէկզմէկու պատմելով կը սերտէին: Եւս առաւել հարք կը հրահանգէին զայն տուներնին իրենց որդւոց· վասն զի իւրաքանչիւր հայր համարէ թէ իւր ընտանեաց հովիւն էր· և ինքը գլուխ կ'ըլլար առանին աղօթից և ընթերցուածոց· կ'ուսուցանէր իւր կինը իւր զաւկները և ծառայները· կը յորդորէր զանոնք ընտանի համաձայնութեամբը, և եկեղեցւոյ հետ սերտիւ միաբանութեան մէջ կը պահէր, ինքն ալ իւր հոգւին հպատակ գտնուելէ թերի չթնալով: (կ՚ըսէ Աստ· Դ· ժ·) Ինչ որ ըսի հայրերուն համար՝ նոյնը պէտք է խնամել մայրերուն հասար ալ: Մեծն Բասիլ և անոր եղբայրը Գրիգոր Նիւսացին կը պարծին որ պահած են այն

հաւատքը զոր ստացած էին իրենց հանիւէն՝ սրբուհի Մակրինիայէն, որուն որ Ս. Գրիգոր աքանչելագործին աշակերտուած էր. Աստուածային պօղոսի՝ Տիմոթէոսի մորը և հանիւին հաւատքին համար լրած գովաբթիւնը անտարակոյս ատոր կը նայի։ (Բօօ. Թղ. կդ. Հգ։ Գէէ. Լբ։ Մ՝կէ՛։ Բ. Տի՛մ. Ա. ճ։) Հարց և մարց իրենց որդւոց հոգեւոր դաստիարակութեանց համար տարած աշխատութիւններնին անկից ալ յայտնի է մեծապէս որ ամենաբին առջի դարուց աղայոց համար չինուած քրիստոնէական վարդապետութեան գրքի մը հետք չերեւնար, ո՛չ ալ աղայութեան առեն մկրտեալները դաստիարակելու հրահանգներ, ինչու որ այն առեններուը իւրաքանչիւր տուն եկեղեցի էր կ՛ըսէ Ոսկեբերան։ (Ձռ. Լջ. ՛է Ընդ. առ Կորնթ։)

«Շատ քրիստոնեաներ՝ աշխարհականներէն ալ այնպէս անզուլ անդադար Աստուածաշունչ դիրքերը կարդալու կը պարապէին, որ բերնուց գոց սովրեր էին զանոնք (1). սովորութիւն ըրեր էին

(1) Կ՛ըսեն թէ Հռովմէական եկեղեցին արգելք դրած է հասարակ ժողովրդեան Աստուածաշունչ Ս. Գիրքը կարդալու, և մեկ չընողներուն սրձակուռմ չտալ. մինչև որ Աստուածաշունչ կարդալէ չհրաժարին. Տրիտենդեան ժողովոյ հետեւեալ վճռով. «Որովհետև փորձով յայտնի է որ, եթէ աշխարհաբառ թարգմանուած Աստուածաշունչը անխոհեմ ամենուն տրուի՝ մարդոց յանդգնութիւնովը յառնէ շար յոռակ կու գայ անկից և ա՛չ թէ բարի. ասոր համար այս բանս եպիսկոպոսներուն կամ արքունիչներուն յանձնուած է, որ անոնք քահանայներուն կամ խոստովանահայրերուն հարցափորձ ընելով հռովմէական հեղինակներու ձեռք աշխարհաբառ թարգմանուած Աստուածաշունչը կարդալու հրամայեն ան անոնց որոնց էրայ պոհովի՝ իր ընդհանուր հաւատքին համաձայն և իբրեւ ողջմտութեամբ ընդունած հրամաններին գրաւոր ըլլալու է։ Բայց թէ որ ասկէ յանդգնի զանիկայ կարդալու կամ առնելու՝ առանց գրաւոր

հաւատքին կը կրկին զայն. և շատ սուրբերու մարմիններ դանուեցան՝ որ կուրծքերնուն վրայ ալ յիսկ Աւետարանով թաղուած էին։ (Ոսկեբ. ՛է Մ՝կէ. հռ. Հբ։) Ոսկեբերան կը վկայէ որ իւր առենը կնիկներէն շատերը զանիկայ ճիտերնուն կախած կը պտըտէին։ Գիրքը բանալէն առաջ ձեռքերնին կը լուանային, կը շիտկուէին. արք գլուխնին կը բանային և կանայք կը ծածկէին առ պատկառանաց. քանի կանայք ալ արանց շատ ընթերցման կը պարապէին (1)։

(1) Կանայք մանաւանդ թէ էրիկմարդիկներէն աւելի գրեթէ քարոզիչներու չափ Ս. Գրոց ընթերցման և ուսման կը պարապէին, և շատ էրիկմարդիկներէ աւելի ճոխաբան և հմուտ լինելով թերեւս ուսուցանելու մասին՝ եկեղեցւոյ մէջ անգամ քարոզ տալու կ՛ելնէին եռանդուն նախանձաւորութեամբ. զոր անպատեհ գտնելով Առաքեալը՝ կը տանձէ անոնց եռանդը, և իրենց ուսուցանելու այս արքունի կոչումն ու պաշտօնը կը հրամայէ որ ընտանեաց մէջ կատարեն, տան շրջանակէն դուրս օգտիւ չկրնալ գործածելնին ապդարարելով. սորվելու փափաքողներուն ալ հրաման տալով որ միայն իրենց ամուսիններէն և տան մէջ սովրին։ (Ա. Կոր. ժԴ. 34—35։ Ա. Տի՛մ. Բ. 11—12։)

Սուրբ վկայներէն չատերը Դիոկղետիանոսի հալածանաց օրերը՝ երբոր՝ամեն բան թողուլ և լեռնեբուն ծակերը ճեղքերը դիմելու կը բռնադատուէին, միայն սակայն քաւ կ'ըլլար իրենց որ ալ չէին կրնար զանոնք դիշեր ցորեկ կարդալ և մխիթարուիլ։

« . . . կը պատուիրէին հաւատացելոց չկարդալ հեթանոսաց գիրքերը՝ որք կարող էին հաւատքէ կործանել սկարնները. մանաւանդ որ կարօտութիւն չունէին անոնց. «Ի՞նչ կը պակսի քեզ Աստուածա« չունչ գիրքերուն մէջ՝ կ'ըսէր հիներէն մէկը. Թէ « որ պատմութեան կը փափաքիս, ահա՛ քեզի թա« գաւորաց գիրքերը. Թէ որ իմաստասիրութեան « և քերթողութեան կը ցանկաս, ահա Մարգարէ« ները, ահա Ցուլը, ահա Առակները, որոց մէջ « յոյժ բազմապատիկ հանճար կը գտնես քան բոլոր « քերթողաց և իմաստասիրաց մէջ. Թէ որ երգ « կ'ուզես, ահա՛ Սաղմոսներն ունիս. Թէ որ հնոց « պատմութիւնները կը փնտռես, ահա քեզ Ծննդոց « գիրքը։ Եւ պարզաբար ըսելով բոլոր բովանդակ « հրկաւէտ խրատները կը սովրեցընեն քեզ Ցերոյ « Օրէնքները»։ Հայրապետք և երիցունք անդադար կը կարդային սին արտաքնոց մատեաններն ալ և յարմար ժամանակին կը գործածէին հեթանոսաց դէմ անոնց քերթողներուն և իմաստասէրներուն խօսքերը։ Ամեն ճշմարտութիւն՝ ո՛վ որ և գրուցած ըլլար, ընդունելի կը համարէին, և իրենց ալ պատշաճաւոր իբրեւ աշակերտաց Քրիստոսի, որ է Բանն՝ Գերագոյն իմաստութիւն։ Որոգինէս՝ ամեն մարդկային գիտութիւններէ օգտի գործածեց գիտութիւնները հաւատքի որսալու համար» (Ֆէօղէ, Ի Կեանս Քէօ. Մասն Բ. Յօդ. Դ։)

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍԱՆԴՈՒԹԻՒՆ

Աստուածային յայտնութեան ամբողջացուցիչ մէկ մասն է Աւանդութիւնը։

Առաքելոց ըսելով կ'իմանանք անխտիր բոլոր Առաքեալ, որ կենդանի ձայնիւ աւանդուած է եկեղեցւոյ Աստուծմէ (Ի հնումն, և Ի նորումն) Ի Յիսուսէ Քրիստոսէ և Առաքելոց նորա. և հանապազորդութեամբ ալ պահուած է Ի սկզբանէ և այր։

Աւանդութիւնը կարեւոր է իբրեւ առաջնորդ և հրահանգ առ ընդունելութիւն և առ ուղիղ իմացումն Ս. Գրոց, առ կանոնաւոր կատարումն Ս. Խորհրդոց և առ պահպանութիւն ծխից Ի սկզբնական մաքրութեան իւրում։ — Աստուածաշունչ Մատեանը որ Աստուած պարգեւած է մեզ իբրեւ մի միայն աղբիւր յայտնեալ կրօնի վարդապետութեան և Աստուածաբանութեան, ինքնին կը պարտաւորէ զմեզ՝ երկրորդ Աստուածային ստուգութիւն մ'ունենալ այս պանծալի իրողութեան մէջ։ Ըստ որում նախ առաջին հաւորում մը պէտք է թէ՝ այն Գիրքը՝ որ իբր կանոն հաւատոյ պիտի ճանչցուի, իսկական աղբիւր հաւատոյ ըլլայ. և սակայն մասնաւորաց կարծիքն ու քննութիւնք բաւական չեն հաստատելու. զի շատ անգամ մասնաւորաց կարծիքն ու քննութիւնք ճշմարտութեան հակառակ ալ կու գան, կիրքն ու զգածմունքն ու շահն ալ մէջ մտնելով, ինչպէս որ ամեն բանի քննութեանց մէջ ալ հակառակ կարծիքներ մուտ գտնելն աւոր լուին ապացոյց կրնայ ըլլալ։ Սակայն մեզ ճանչցնողը նախ աւանդութիւնը պիտի ըլլայ։

Ս· Գրոց մեկնութեան համար ալ նոյն բանը պիտի ըսեմք : Ս· Գիրք ինքնին չեն կրնար լուծել իրենց մէջ դտնուած ի՛նչ ի՛նչ դժուարիմանալի՝ մութ և դաղտնի երեւցած կտորները (Բ· Պետ· Գ· 15—16·) յայտնեալ մասերով· վասն զի անոնք ի՛նչ պարագայներու մէջ և ի՛նչ դարձուածոց համար ի՛նչ միտս պրուցուած են՝ աւանդութիւնը միայն կրնայ գիտնալ· և դարձեալ՝ Ս· Գրոց այն բացատրիչ յայտնեալ մասերն ալ մէկտեղ բերելու և ոնոնցմով այն դժուարիմանալի կտորներուն մթութիւնը մարատելու համար աւանդութեան օգտակարութիւն կայ : Աստի յայտնի է ալ կ'ելլակացընենք թէ Աւանդութիւնը մեծ օգտար և երկրորդ աղբիւր է՝ զկնի Ս· Գրոց՝ յուսումն Քրիստոնէական կրօնի : — Վասն զի դարձեալ ակներեւ յայտնի կը տեսնուի որ առաջին դարուց մէջ Քրիստոնէութիւնը՝ Քրիստոնեայ վարդապետութիւնը՝ ընդ երկար կենդանի ձայնիւ միայն քարոզեցաւ, և ապա գրովք : Ուստի ի՛նչ որ Առաքեալք ելքէն հասնելօտ անցան գրոց մէջ իբրեւ կանխաւ քարոզեալ կենդանի ձայնիւ և քալածանօք, այն բաներուն բացատրութիւնները լուսաբանութիւնները աւանդութենէ խնդրել պէտք ու հարկ էր, ինչպէս որ անանկ ալ եղաւ : Այսպէս վարուեցաւ եկեղեցին ի Տիեզերական ժողովն Նիկիոյ, (Թէոդորիթ· պատմ· եկ· գր· Ա· գլ· 8·) Կ· Պոլսոյ, (Անդ· գր· ե· գլ· 8—9·) և Եփեսոսի (Գոլդաստ Ժողովոց Շարժանէ· Հատ· Բ·)

Բայց թէ ո՞ր պէտք է դտնեմք այս աւանդութիւնը, որուն վրայ միանգամայն կարեւոր եմք ապահով ըլլալ թէ վաւերական են, եղծուած այլայլած չեն : Կը պատասխանեմք· ի վաղնջական Հանգանական, ի կանոնս Առաքելոց, ի Սահմանս և ի կանոնս Տիեզերական Ս· Ժողովոց, եւս և ի Խոր-

հրդատեսրան, ի գիրս պաշտամանց վաղեմի եկեղեցւոյ, ի ժամակարգութիւնս Աստուածային պաշտամանց, ի կարգս հսկմանց, պահոց, ծոմից, և կիւրակէից, խորհրդոց և մատակարարութեանց նոցին եւն։

Եւ ի՞նչ նշանաւ կրնան ճանչցուիլ Առաքելական անուտ անխարդախ աւանդութիւնք : — Ըստ որում աւանդութիւնն ալ Աստուծոյ խօսքն է՝ անգիր, Աստուծոյ անգիր խօսքը գրաւոր խօսքին հակառակ չկրնար ըլլալ, միշտ միաբան՝ հաւաձայն պէտք է ըլլան իրարու· քանզի և կարելի չէ ենթադրել, որ Աստուածն ամենայն ճշմարտութեանց՝ հակասական խօսքեր դրուցէ՝ գրաւոր և անգիր խօսքերուն մէջ· գի և յայնժամ ո՛չ գրաւորը ո՛չ ալ անգիրը յայտնութիւն կ'ըլլային, այլ խառնակութիւն, շփոթութիւն և մթութիւն : Ուրեմն ինչպէս որ Ներսէս Շնորհալին կ'ըսէ· «քանզի աւանդութիւն Եկեղեցւոյ մերոյ՝ զոր ունիմք, ի վկայութենէ Աստուածաշունչ գրոց հաստատեալ են »· (Ընդհանր·կան·) Առաքելագիր Ս· Գրոց և Առաքելական անգիր աւանդութեանց մէջ տեղ՝ յայտնի կամ լռելեայն՝ ուղղակի կամ անուղղակի հակասութիւն ըլլալու չէ՛, և միանգամայն սերտ կապակցութիւն և միութիւն պէտք է ըլլայ մէկերնին· առնանկ որ փոփոխակի մէկզմէկ բացատրեն : Աւանդութիւնը օգնական և սատարիչ պէտք է ըլլայ Ս· Գրոց խմաստից և ծխից բացատրութեանց, և ո՛չ եղծիչ· և աւանդութիւնը՝ առաջին աղբիւր չէ՛ Աստուածարանութեան, այլ երկրորդ կամ հետեւորդ : Ուրեմն յայտմ եւս կը մեղանչեն և կը մոլորին յոյժ Հռովմէականք՝ որ կ'ըսեն թէ «Ս· Գիրքն աւելի հարկաւոր են աւանդութիւնք »· (Պետրոս Տէն· Ապոստ·էք· յԱ· հատ· թիւ 67·) և Բողոքականք ևս որք անոնց հակառակ՝ իսպառ կ'ուրանան սոսկ անհրաժեշտ կարեւորութիւնն ու պէտքը :

Նմանապէս ասոյդ Առաքելական Աւանդութիւն կրնաւք հատարել այն բաները որ վինչեւ Առաքելոց ժամանակները կրնաւք հասցընել, և զորս Առաքեալք և կամ իրենցմէ հիմնեալ եկեղեցիք կը պաշտպանին. ինչպէս են մանկանց մկրտութեան և հաղորդութեան սովորութիւնները եւն։ Տերտուղիանոս ալ Առաքելական Աւանդութիւնը որոշելու համար այս սահմանը կու տայ. «այն աւանդութիւնը՝ կ'ըսէ, մերոյն Առաքելական հաւատալ հարկ է, զոր կը բռնեն հիմայ ալ Առաքեալներէն հիմնեալ եկեղեցիք»։ (Ընդդէմ Մարկիոնի Գր. Ա. Գլ. 21։) Եւ որովհետեւ Առաքելական դարերէն շատ հեռացած ենք հիմայ, և Սուրբ գրոց չատերուն մատեանները կորսուած են, այնպէս է Առաքելական Աւանդութեանց ամբողջ ուղիղ եւս՝ի վերայ յաւելուած պարինքն՝ այնպէս է յիշած ըլլան իրրեւ Առաքելական Աւանդութիւն Գ. Դ. և Ե. դարուց եկեղեցական մատենադրաց մեծագոյն մասը։

Եւ վերջապէս անհերքելի նշան Առաքելական աւանդութեան է և այն՝ զոր պաշտպին ի սկզբան և արդ պաշտեն միահամուռ ընդհանուր եկեղեցիք, ինչպէս է չարաչար հանգամանքն առել կվերաբերի սահմանադրութիւնը, մանկանց մկրտութիւնը, մասանց արդոց յարդութիւնը եւն։ Ս. Օգոստինոս «ամենայն իրաւամբք Առաքելոց Աւանդութիւն կը հաստատիմք՝ կ'ըսէ, այն բանը՝ զոր ընդհանուր եկեղեցին կը պահէ և ի'նչ որ առանց ո'ր և իցէ ժողովական սահմանադրութեան մը անոր մէջ միտաւ պես պահուեցաւ»։ (Ընդ Մակր. Գր. Ե. Գլ. 24։) — Ունինք եւս Օգոստինոսի այս խօսքին հետեւցընելով կ'ըսեն, թէ Առաքելական հաստատիլ պէտք է այն ամեն բան որ ընդհանուր եկեղեցին կը պաշտպանի, և որուն ծագումը անյայտ ժամանակներէ է։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԲՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՒ

ԱՆՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ՈՒ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԾԷՍԵՐԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցի բառը Յունարէն էքլէսիա (ἐκκλησία) բառին տառադարձութիւնն է, որ կը նշանակէ ժողով, կամ ժողովուրդ, և կը գործածուի նշանակել Ճշմարիտ Աստուծոյ պաշտաման համար միաբանեալ ժողովուրդը և կամ անոնց ժողովումը։ Ըստ այսմ եկեղեցի ըսելով կ'իմանանք՝ Ճշմարիտ հաւատացեալց հոգեւոր միաբանութիւնը, որք մէկ հաւատքով մէկ հոգւով և մէկ մկրտութեամբ կը հաւատան և կը պաշտեն զմի միայն Աստուած և զՏէր՝ զՅիսուս Քրիստոս զերրորդութիւնն, մէկ հաստատուն յուսով երկնից կոչման ակն ունին, և մէկ անկեղծ սիրով միացեալ են ընդ Աստուծոյ և ընդ միմեանս։ (Եփես. Գ. 3—6։) — Ուրեմն եկեղեցի՝ եղականապէս՝ բովանդակ հաւատացելոց բաղմութեան հաւաքական միութիւնը կը նշանակէ. իսկ յօրինականապէս՝ այն հաւաքական ամբողջութիւնը կազմող մասունքները, մանաւանդ եկեղեցիները, ինչպէս են Հայոց, Յունաց, Հռոմայեցւոց, եւն։

եկեղեցին՝ կրօնից զօրիւ Աստուծոյ և իրարու հետ կապուած մարդկան հաւաքական մարմին մը ըլլալովը, կրօնից երեւնալէն հարկաւորապէս յառաջ կու գար եկեղեցւոյ ալ՝ի վեր երեւումը, և նախամարդոյն՝ի գոյութիւն գալովը կրօնից ծնունդ առնելէն՝ եկեղեցւոյ մարմինը կազմակերպեցաւ: Ըստ որում կրօնքը զնարդիկ առանձին առանձին Աստուծոյ հետ կապելով՝ միանգամայն զնարդիկ իրարու հետ կապած կ'ըլլար ան նոյն զօրիւ. և ահա մարդոց ան նոյն զօրիւ՝ի մի միաբանիլն է եկեղեցւոյ գոյութիւնը: Ըստ այսմ՝ կրօնքը հոգին է այս միութեան, և այս միութիւնը՝ կրօնքին մարմինը, որ կ'ըսուի եկեղեցի, և է Աստուծոյ հոգեւոր թագաւորութիւնը՝ արքայութիւնը:

Եկեղեցին՝ իր միակ կրօնքովը (հաւատքովն ու վարդապետութեամբը) թէ՛եւ միշտ մի և անփոխելի է, մի միայն է իր նպատակի կէտը, սակայն այն մի նպատակակէտին առաջնորդուելու համար տարահոսակէս՝ զանազան ժամանակներու մէջ զանազան անուեռութեանց տակ ընկաւ, և ըստ զանազան անուեռութեանցն՝ զանազան անուններ առաւ: Ինչպէս՝ Ն-ինէ կամ Ն-ինուէ եկեղեցի ըսուեցաւ Ադամէն մինչեւ Նոյ, նախաջրհեղեղէն տասն նահապետաց ժամանակներու անուեռութիւնը. Նոյէն մինչեւ Աբրահամ և՝ի Մովսէս՝ Ն-հ-պ-պ-ական, բայց Յակովբայ իրայէլ եւս կոչուելուն համար՝ Յակովբէն եառքը Ի-ր-այէլեան եկեղեցի ալ ըսուեցաւ. ցայս վայր աւանդութեամբ կը վարուէր եկեղեցին՝ հանդերձեալ Մեսիայի փրկութեան ակնկալութեան մէջ հաստատուելով. Մովսիսի Օրէնք և Ծէսք և Դաստատանք գրաւորապէս աւանդուելով եկեղեցւոյ՝ որք աստուերական նշանակք էին Մեսիայի փրկութեան, անուանեցաւ Մ-վ-ի-ական կամ Ընդօրինակեան եկեղեցի. մինչեւ ակնկալեալն Մեսիհ գալով և փրկա-

գործութիւնը վճարելով՝ կոչուեցաւ Ք-ր-ի-ս-ի-ա-ն-ա-կ-ան եկեղեցի, որ լրումն էր Նախաքրիստոսեան անուեռութեանց ակնկալութեանց:

Եկեղեցին կը բաժնուի երկու. Ա-ղ-բ-ա-կ-ա-ն կամ ճշմարիտ եկեղեցի, որ է Ս. Հրեշտակաց և հանգուցեալ արդոց ժողովը՝ի կայանս երկնից. (Եբր. ԺԲ. 23.) և Զ-ի-ն-ո-ր-ե-ա-լ եկեղեցի, որ է հաւատացելոց կենդանեաց ժողովը. և զ-ի-ն-ո-ր-ե-ա-լ կ'ըսուի՝ ըստ որում սպառապինեալ է պինդ Ս. Հոգւոյն պատերազմիլ ընդդէմ փորձութեանց չարին և աշխարհի: (Եփես. Զ. 10—18:) — Զ-ի-ն-ո-ր-ե-ա-լ եկեղեցին եւս կը բաժնուի երկու. Ո-ս-ո-ց-ա-ծ-ո-ղ եկեղեցի՝ որ է եկեղեցւոյ պաշտօնէութիւնը, և Ո-ս-ո-ղ եկեղեցի, որ է հաւատացեալ ժողովուրդը:

Ո-ս-ո-ւ-ց-ա-ն-ո-ղ եկեղեցին՝ ըստ այլ և այլ պաշտամանցն այլ և այլ անուններով կը յորջորջուի՝ի Ս. Գիրս: — Առաքեալք, Աւետարանիչք, Պաշտօնեայք Աւետարանի՝ Արութեան՝ արդարութեան, Տեսուչք կամ Եպիսկոպոսք, Երիցունք, Վարդապետք, Հովիւք, Գործակիցք՝ Փառաւք Աստուծոյ և Տեառն, Պատգամաւորք Քրիստոսի, Հրեշտակք եկեղեցւոյ, Տնտեսք չնորհացն և խորհրդոց Աստուծոյ, Մարդիկ Աստուծոյ, Ճրագունք, Աստեղք եւ եւ եւ: (ե-ս-ա-յ. լ. 20: եզեկ. ԺԵ. 4: Ղ-ե-ւ. Զ. 13: ճ-ղ-մ. ե. 35: Գ-ր-ծ. ի. 20: Ա. կ-ր-նթ. Գ. 1: Բ. կ-ր-նթ. ԺԱ. 15: Զ. 1: ե-փ-ես. Գ. 7: Դ. 11: փ-ի-լ-ի-պ. Ա. 1: Ա. Տ-ի-մ. Գ. 1: ե. 17: Զ. 11: Բ. Տ-ի-մ. Բ. 24: Տ-ի-տ. Ա. 1. 7: Ա. պ-ե-տ. Դ. 10: ճ-յ-տ. Ա. 20: Բ. 1: եւ եւ եւ:) — Ո-ս-ո-ւ-ց-ա-ն-ո-ղ եկեղեցին ալ կ'անուանի՝ Հօտ, Եղբարք, Ամխաղք, Գաւիթք, ժողովուրդ Տեառն, Որդիք արքայութեան, Որդիք Աստուծոյ եւ եւ եւ: (Մ-տ-թ. Ը. 12: ճ-ղ-մ. Ա. 12: ԻԱ. 15—16 Գ-ր-ծ. ի. 28: Ա. Տ-ի-մ. Գ. 5: Ա. պ-ե-տ. ե. 2:)

Եկեղեցւոյ վրայօք գիտնալիք բաներն են ասոնք՝

որոց վրայօք պատ դլուխներով պիտի խօսիմք.

Ա. Նշանք ճշմարիտ եկեղեցւոյ.

Բ. Յատկութիւնք եկեղեցւոյ.

Գ. Քարոզութիւն՝ Հին և Նոր Եկեղեցւոյ.

Դ. Կառավարութիւն եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ Ա.

ՆՇԱՆՔ ՃՇՄԱՐԻՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ

«Հաւատամ և ի մի սուրբ ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցի»

Նիկիական հաւատաք այս չորս նշաններըը կը պահանջեն որ ունենայ ճշմարիտ Եկեղեցին. ցՄիութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն և Առաքելականութիւն, զոր և մեր ժամադիրք երկրորդեն. «Հաւատամք զամենակալն Աստուած վասն Մեծին՝ Սուրբ՝ Կաթուղիկէ և Առաքելական Եկեղեցւոյ»։

Ա. Որովհետեւ մի միայն է ճշմարտութիւնը, և չկրնար այլ եւ այլ ըլլալ, եկեղեցին ալ՝ որ այս ճշմարտութեան գանձարանն է՝ հարկաւորապէս մի կրնայ ըլլալ և ո՛չ աւելի կամ տարբեր։ Ըստ այսմ միութիւն եկեղեցւոյ ըսելով կ՚իմանանք անոր պատուհութեան և վարդապետութեան միութիւնը՝ որ՝ ի Քրիստոս Յիսուս, և յերկրորդութիւնն Սուրբ, և յամենայն ուսմունս Ս. Գրոց, զոր պարտի ուսանիլ և պահել իւրաքանչիւր Քրիստոնեայ մի և նոյն ճշմարիտ հաւատովք, և բնա՛ւ աւելնելին չտարաձայնիլ եկեղեցւոյ միաբեան աւանդեալ յայտնեալ վարդապետութենէն (Ս. Գրոց) ոեւէիցն։ Բոլոր ճշմարիտ Քրիստոնեայք՝ որ Ս. Գրովք յայտնեալ հաւատոց և

պատուիրանաց հպատակութեամբ իրենց օրինաւոր հովուաց հետ միացեալ՝ յօդեալ են ի Գլուխն Քրիստոս, այս միութեան մէջ են, այս միութեան ամբողջացուցիչ մասունքը կը կազմեն, որոց բոլորին պատկութիւն է Քրիստոսի ճշմարիտ մի միայն եկեղեցին ըստ որոյ կ՚ըսէ Առաքեալը. «Աղաչեմ զձեզ... փութալ պահել զմիաբանութիւն Հոգւոյն յօդիւ խաղաղութեան. մի մարմին և մի հոգի. որպէս և կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ. մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն. մի Աստուած, և Հայր ամենեցուն, որ ի վերայ ամենայնի, և ընդ ամենեսին, և յամենեսին ի մեզ... Եւ նա եւս զոմանս առաքեալս... հովիւս... ի հասուցումն սրբոց, ի գործ պաշտաման, ի շինուած մարմնոյն Քրիստոսի, մինչեւ հասցուք ամենեքեան ի մի միաբանութիւն հաւատոց և գիտութեան Որդւոյն Աստուծոյ, յայր կատարեալ ի չափ հասակի կատարման Քրիստոսի. զի մի՛ յայսմ հետէ իցեմք ոչայք խոտորեալք և տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան, խարէութեամբ մարդկան, խորամանկութեամբ ի խարէութիւն մոլորութեան. այլ ճշմարտեալք սիրով՝ աճեցուսցուք ի նա զամենայն, որ է գլուխ Քրիստոս, ուստի ամենայն մարմինն յօդեալ և պատշաճեալ ամենայն խոտակերպ տարողութեամբ՝ ըստ ազդեցութեան՝ չափով ըստ իւրաքանչիւր մասին՝ զաճումն մարմնոյ ործէ՝ ի շինած անձին իւրոյ սիրով»։ (Եփես. Դ. 1—16։)

Այս միութեան խաւխանարար այլ եւս չկան՝ ո՛չ ազգաց և լեզուաց տարբերութիւնք, ոչ անցեալոց հեռաւոր անկատարութիւնք, և ո՛չ ծխից և տոհմութեանց։ Հաւան կամ կերպաւ այլեւայլութիւնք ընդ ամենայն սրեգերս և ընդ բնաւ ծագս երկրի աւրութիւնք և ճշմարիտ Քրիստոնեայներ տարածուած են, ամենքն ալ նոյն և մի գլխոյն Քրիստոսի

ան նոյն մարմնոյ այլ և այլ մասունքը կը կազմեն միևնոյն հաւատոց միութեամբ։ Մեծն Թոմաս կ'ըսէ. «Առաքելական եկեղեցիք թէպէտ և ընդ բազում տեղիս են, սակայն մի ասի վասն միասնական հաւատոցն. վասն որոյ որպէս գիտոյ ասի, «եկեղեցի «քո՝ զոր ստեղծեր սկզբանէ արեամբ Միածնի «քոյ։ . . . ո՛չ բազմանունաբար եկեղեցիս, այլ եկեղեցի»։ (Է Մեկն. ժ-մ-կէ։) Եւ Լատերանացին. «Քանզի մի է Տէր, մի է հաւատք, մի մկրտութիւն մի եկեղեցի՝ ի զանազան ազգաց որոշեալ, և մկրտութեամբն ծնեալ, և Քրիստոսի անուանեալ. . . . Չէ բաժանեալ Քրիստոս՝ ի Պօղոս և յԱպօղոս, և ո՛չ եկեղեցի նորա՝ ի Հայս կամ՝ ի Հռոմ կամ՝ ի Ֆրանգ. թէպէտ և տկարացն կարծիք այսմ ծառայէ. պի բաժանեալ է աք, թէ առ այլ Աստուած յոյս ունիմք իբրաքանչիւր։ . . . Իսկ որ հաւարի զինքն Քրիստոնեայ, և՝ ի հաւանուն Քրիստոնէէ վասն տարակեղուութեանն խորհի, յայտ է թէ կամաւ զինքն՝ ի զմոյն Քրիստոսէ որոշէ և՝ ի նորա անդամոց»։ (Է Մեկն. պ-ռ-ք-էէ։)

Քրիստոսի եկեղեցւոյ դաւանութեան հարկաւոր միութենէն չհետեւիր թէ վարչական միութիւն ալ պէտք է ունենան բովանդակ ազգերը, ինչպէս կը պահանջեն Հռոմեայ Պապերը, Քրիստոսի տեղը բռնել ուզելով յերկրի. կամ բուն բառուին ըսեմք՝ զերաքրիստոս՝ զերաստուած ըլլալ ջանալով. (Ք՛ո փէ ճը Ե՛ռ՛ը Գէ Դ.) որք հեթանոս Հռոմին տիեզերակալութեան չախչախ վտիտքը տասնելով՝ հաճորչն երկրի բնաւից ազգաց յաւիտեան իշխելու տիրելու իշխն ունին. որուն ապահովապէս հասնելու համար՝ կրօնքը պատրուակ կ'առնեն, և փրկչին երկրպագելի պատգամը ծանծռելու կը յանդգնին. այն՝ որ կ'ըսէ «Ես եղիցին մի հօտ և մի հովիւ» այն հովիւը՝ Հռոմայ պապն է կ'ըսեն, Քրիստոսի

և Պետրոսի փոխանորդը, յաջորդը, ներկայացուցիչը, եւ եւ. և այսպէս է իրեն հնազանդին կ. Պօլսոյ, Անտիոքի, Աղեքսանդրեայ, Երուսաղէմի, Էջմիածնի և աւելն տեղի Հայրապետք. որպէս պի՝ Քրիստոսի եկեղեցին վարչական միութիւն ալ ունենայ. բայց ինչո՞ւ համար այսպէս է այս վարչական միութեան գլուխ՝ Քրիստոսի տեղ ստահկանացու մարդ մը. և ինչո՞ւ համար պապը պիտի ըլլայ ամիկայ, և ո՛չ Անտիոքի՝ Աղեքսանդրեայ և կամ ուրիշ Հայրապետ մը. . . : Այս յո՛յժ մոլորական և մոլորեցուցիչ խարէութիւն մ՛է որ կ'ընեն պատերը, Քրիստոսի խօսքը կրճատելով և անոր բերանը դնելով անանկ իմաստ մը՝ որ բոլորովին հակառակ է իր դիտմանն։ Քրիստոս այդ խօսքով ըսել չուզեր թէ աշխարհի ազգերը ողջոյն իր փոխանորդը կամ տեղապահը ըսուղ մարդու մը իշխանութեանը կառավարութեանը տակ մտնան և հնազանդին իրեւ բռնապետի. Քրիստոսի խօսքը երբ որ ամբողջապէս կարդանք՝ այդ խորհուրդեան թանձր քօղը կը պատռի ինքնին։ — Քրիստոսի ժամանակ՝ որովհետև Հրէայ ժողովուրդը միայն կար որ իրեւ ճշմարիտ Աստուածապաշտ ճանչցուած էր, և բոլոր ազգերը այլ և այլ աստուածներու հոլիւներու կը ծառայէին երկնաւոր միակ հովիւին ոչխարները չէին, անոր փարախը ժողվուած չէին, Քրիստոս կ'ըսէ թէ՝ այն իմ փարախէս ճամրան չդիտցող՝ վարձկան հովիւներու երկաթի դաւազանաց տակ հեծող օտար ոչխարներն ալ պէտք որ իմ փարախս մտցունեմ իմ հօտս խառնեմ՝ անոր հետ միացընեմ, ինծի պատ ուրիշ հովիւ չունենան, այս է ուրիշ աստուած չպաշտեն, միայն դիս պաշտեն իրեւ ճշմարիտ Աստուած։ Անուսաին իր խօսքը. «Ես և՝ այլ եւս ոչխարք են իմ, որ ո՛չ են յայսմ գաւթէ. և զայնս եւս պարտ է ինձ ածել այսր, և ձայնի ի-

մուտ լուծցեն, և եղիցին մի հօտ և մի հովիւ »։ (Յովհ. ժ. 16։)

Եւ ի՞նչ հարկ կայ Քրիստոսի Եկեղեցւոյ միութեան համար՝ ի հաստատուն՝ վարչական միութիւն ալ ըլլալու։ Միթէ ճշմարտութեան մը վրայ ամէն աւելի վերահսկող պահապաններ ըլլան նէ՝ ճշմարտութիւնը կ՚այլայլի՞ կ՚եղծանի՞. միևնոյն դատի մը վրայ ամ՞ի դատաւոր մը նոյնած տեսնն աւելի ապահովութիւն կ՚ընծայ դատին քան թէ ամէն աւելի ըլլան. Եկեղեցւոյ հաւատքը սո՞յն տեսնն ապահովապէս ի միութիւն կ՚ըլլայ, երբ Քրիստոսի և անոր թովանդակ Առաքելոց տեղ՝ իշխանական պատ մը իշխէ հաւատոց։ — Պատկան եկեղեցին փորձը իւր ամէջը թող ընտրէ. մեղի համար՝ տասնէ աւելի դարերու դժնդակ փորձը՝ ասոր հակառակը կ՚ապացուցանեն։ Առաջին երեք շրջան դարուց ամէջ չկայր այնչափ հեռաձուած՝ ո՛րչափ որ պատկերուն գահատէր պահանջմունքները երեւան գալէն ետեւ՝ պատճառ բռնակալած ընդ հանրական ըսուած եկեղեցիին հեռագնեւոյ հերձման պատասխանցան այնչափ հերձուածք և հերետիկոսք. և ցայդ եկեղեցական միութեան ընդունող եկեղեցիներէն շատ քիչ և կարմ իսկ քիչ եղած է հերձուած, ո՛րչափ որ իւրաքանչիւր հերձուած են և կը հերձին տարուէ տարի՝ միապետ եկեղեցիին։ — Գարձեալ միապետ եկեղեցւոյն միացեալ մասանց ի հաստատ ցոյց առած միութիւնը՝ բաւական ձիշդ նշանակութիւն չէ խնդրոյ անհնար է, մինչդեռ զանհնարին է ամբողջ միապետութիւն չընդունող եկեղեցւոյ հաստատուածց մասին ունեցած և պահած միութիւնն։ Ասկէ յօդ տեղերեալ են պատճերը, և իրենց այս տեղը խոսիլ սխալ եղաւ՝ անհատիւք զանձին ձիշտ ծառայ հերձուածք են Քրիստոսի եկեղեցւոյ ճշմարիտ միութենէն։ Բազաքականք եւս քանդի ընդ հա-

նուր եկեղեցւոյ վարդապետութեան միութենէն քաղաքապատիկս կը տարտաճայնին՝ հակառակ Ս Գրոց, խորհրդոց հինգը կ՚ուրանան կը մերժեն, երկուքն ալ յայտ մերժրական վարդապետութեամբ կ՚ազատին, ինչպէս նաեւ Ս. Գրովք յայտնեալ վարդապետութենց չատերն ալ կը ծնծծեն, անոնք ալ ձեռնակ հերձեալ են Քրիստոսի մի միայն եկեղեցիէն։

Ր. Սբ-Բիւն Եկեղեցւոյ Սուրբ և Եկեղեցին. նախ քան սկզբանն և քան զերազոյն դէմոյն Քրիստոսի՝ որ սրբոց սուրբը և առնէ սրբութեանց աղբիւրն է. եւս և քան Առաքելոց և քան յաջորդաց նոցին Հարց և Հայրապետաց, որք պատուական ականց պէս սրբեալ մաքրեալ յարդ արեալ՝ հիմ դրեալ եղեն անոր, օրինակ ըլլալու համար հաւատացելոց։ Երկրորդ, Սուրբ և Եկեղեցին կոչնականը. վասն զի անոր բոլոր անդամները՝ ի սրբութիւն կոչուած են. և Քրիստոս հիմնեց զայն ո՛չ յայլ ինչ՝ բայց՝ ի սրբել և յարդ արացուցանել զհաւատացեալս. «Քան Սրբոյն՝ որ կոչեացն զձեզ, և դուք սուրբ յամենայն գնացս ձեր մինչիք»։ (Ա. Պետ. Ա. 15։) «Ընտրեաց զձեզ նախ յառաջ քան զվինելն աշխարհի, լինել ձեզ սուրբ և անարատ առաջի նորա սիրով»։ (Եփես. Ա. 4։) Երրորդ, Սուրբ և Եկեղեցին վարդապետութեամբը, վասն զի սուրբ հաւատք կը դաւանի և կ՚ուսուցանէ հաւատացելոց. սրբութիւն՝ սուրբ վարք կը քարոզէ, սրբութիւն մաքուր յամենայն արատոց. ամէն անմաքրութիւն՝ արատ և բիծ իսկ կը դատապարտէ. և եթէ ըստ մարդկան անդամներուն՝ ընտանեաց սրբութեան ամէջ չեն, անոնց կենցաղը չը պաշտպանէր. կը դատապարտէ լիովին անոնց մեղսութիւնն ու մոլորութիւնքը. և քան այսմ ինքը սուրբ է, սուրբ քան ամենայն մասանցն։ Սուրբ է և քան խորհրդոցն, քան պատուիրանացն, քան պաշտամանցն և քան արարողութեանցն, որ հաստատ

սուրբ են և՝ ի սրբութիւն կ՚առաջնորդեն։ Մինչ բանիւ՝ Սուրբ է Եկեղեցին, ըստ որում սրբեալ է արեամբ պատիւն անարատի, և միշտութիւնեամբ՝ ի սկզբնական ձեզաց։ «Քրիստոս սիրեաց զԵկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա։ զի զնա սրբեսցէ սրբութիւնեամբ առաջանին բանիւ։ զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զԵկեղեցի. զի մի՛ ունիցի արատ ինչ, կամ պղտեղութիւն, կամ այլ ինչ յայտնիեաց։ այլ զի իցէ սուրբ և անարատ»։ (Եփես. Ե. 25—27։) — Պատկաներ այս սուրբ Եկեղեցւոյ սրատաւորեալ անդ սիներն են. վասն զի ոչնչած են իրենց Եկեղեցւոյ նամբոյ սրբութիւնը՝ մոլորական վարդապետութեամբը. զորս դերադրիստոս դնելով, Սուրբ Գրոց ընծեցուածս ապդ իլելով, Ս. զգաստաս Ս. Եկեղեցիներուս ուղղափառ սուրբ վարդապետութիւնները ապրատանելով, զանոնք ընդդէմ Աստուածայնին իրատանց դատապարտել յանդգնելով՝ որով և իրենց Եկեղեցին Քրիստոսի Ս. Եկեղեցւոյ միութենէն խզած լինելով, քատարանի՝ նեղոզութեան՝ սրինդատութեան կերդատու ինդրութիւններէ՝ եւս և խորհրդոց ունանց մէջ մոլորական վարդապետութիւններ և սոփորութիւններ հատատելով ևս։ Տարակոյս չկայ որ Ընդդիմանն ալ այս Սուրբ Եկեղեցւոյ գատապետ անդամ է, վասն զի Տիեզերական Սուրբ Եկեղեցւոյ սրբատրար վարդապետութեանց և խորհրդոց գրեթէ ամենայն մասը կ՚ուրանայ կը ժխտէ։

Գ. Ընդհանրական Եկեղեցւոյ։ Կաթուղիկէ կամ Ընդհանրական կ՚ըսուի Եկեղեցին, վասն զի միշտ կայ և մինչև ի կատարած աշխարհի սրբոց ունի. գտնել վասն զի Քրիստոսէ առանց եղած բազմադէմ մոլորական վարդապետութիւնը կը գտնուի յամենայն մասն երկրի իբր. և գտնել վասն զի ընդ ամենայն սրեզերս սրբոց քարոզուի Քրիստոսեան

վարդապետութիւնը, և յամենայն տեղս և ազինս և լեզուս սրբոց ծանուցուի Քրիստոս, և Եկեղեցիներ հաստատուելոց ժողովեր սրբոց կազմութեան անդր անուանիլը ընդ ամենայն տեղիս։ (Մատթ. ԻԸ. 19. Մարկ. ԺԳ. 14. Գործ. Ա. 8. եւն.) Կամ թէ ընական, Քրիստոնէական մասնաւոր Եկեղեցիք՝ որ ընդ ամենայն սրեզերս գրուեալ են, ան նոյն հաստատուելոց միութեամբ՝ Տիեզերական բազմադէմ Եկեղեցւոյ միութիւնը կը կազմեն. ուր մի ան նոյն Կաթուղիկէին ամենայն սրութիւնք հաստատուած են։ Այսպէս կ՚ուսուցանեն և Հարք։ «Կաթուղիկ անուանեալ է (Եկեղեցի՝ կ՚ըսէ Ս. Կիպրիան.) զի ընդ ամենայն սրեզերս՝ ի ծագս արեգական՝ և ի ծագս երկրի է, և զի ուսուցանէ առաքեալ

տոմ յերկիրն վերահարձման առնն իւր աշակերտաց առած պատուիրն կ՚ինայուի . որով կը հասկցուի իմ Քրիստոսի անուամն՝ բովանդակ աշխարհ պիտի աշակերտուի , և աշակերտելոց մէջ՝ անոր երկնային վարդապետութիւններէն ամիրողջապէս պիտի պահուին՝ միշտ պիտի չանուրին գկատարած աշխատին . ատոնք իրաւ բնդ գործեաց որուն ալ պիտի բուանի , և պատուիրանքն ու շարժառիթներն պիտի՝ Դիտողութիւններ , Գեւտուածներ , Աղերսանոց բառներ , ուսմունքներ , արձանագրհղներ , գծագրուածներ ալ՝ (Ր· Տէ՛ր Գ· 1՝ Տէ՛ր Ա· 10—16՝ Գ· 3—է՛ 6—10 Յ՚ա՛ր· 17—23·) Պօղոսի և Պետրոսի հետ՝ Թուղթի և Բարեգուշակութեան հետ սեռական բարձակից պիտի լլլան , և սուտ վարդապետ անունց վրայ պիտի խրոխտանան ալ , այլ սուտ անուանին միայն ընդհանուր Եկեղեցւոյ գաւակ պիտի բուսին , մինչդեռ պարծանք պիտի անուցանուի Մարդ Եկեղեցին ուրացած՝ և անոր հոգեւոր անուանցն պիտի առած հատուած են ·

Դ· Ա՛—ՓԼ—կանաքիան Եկեղեցւոյ· Աստուածային Եկեղեցին , վասն զի իւր հիմնադրութեան երկինքէն գեղարդոյն Աստուածն է , որ առաքեցաւ՝ ի Հօրէ միշտ կենդանի մնալ գաղղ ուսուցիչն յիշխանութեանէ խառարին՝ երկնաւոր վարդապետութեամբ , և ժողովել՝ ի մի պաշտօն Հիմնարկութեան Առաքելոց , որով եղեւ «Աստուածային խառնուածութեան մերոյ ·» (ԵՔր· Գ· 1·) և նոյն Աստուածային գործն ու պաշտօնը իւր Առաքելոցն անցանելով՝ երկրիս գանոնք քարոզել և ուսուցանել զուարդիկ , Եկեղեցուցանելով զնոսին , որոց յաջորդութեանցին եւս ցարդ և մինչեւ ցվերջն կը պահուի Առաքելականութիւնը Եկեղեցւոյ մէջ՝ Որուն Եկեղեցին կրկնակի միտք Առաքելական կ՚ըսուի , նախ՝ վասն զի երկնաւոր Առաքեալէն Քրիստոսէ՝ և անոր Առաքեալներէն և անոնց յաջորդներէն կազմուած հաստատուած է նա , և

երկրորդ՝ վասն զի նոյն երկնաւոր Առաքելոյն և անոր աշակերտաց Առաքելոց վարդապետութեանցը վրայ հիմնուած է · Եկեղեցին իւր բաներուս որ կու հասատայ՝ Առաքելականութեան տէրտեցուցածն է · քահանայութեան ձեռնադրութիւնն ալ՝ Հայրապետական (Առաքելական) Աթոռոց յաջորդութիւնեն ալ Առաքելականութենէն առած է · Այլ տակաւին Առաքելական յաջորդութիւն չունեցող միւսներուն եկեղեցիք եւս Առաքելական են այնու՝ որ ան նոյն Առաքելական հաւատոյ և վարդապետութեանց աշակերտած են , և ան նոյն Առաքելոց ձեռնադրութիւնն ունին իրենց մէջ · և քանի հակառակութիւն ունին Առաքելոց վարդապետութեանց , և ան նոյն Առաքելոց ձեռնադրութիւնն ունին իրենց մէջ · և քանի հակառակ Առաքելական եկեղեցւոյ միաբանութիւն չունին , անոր վրայ ալ ամէն մեղքերն են · — Պատրական եկեղեցին բողոքականներն ալ Առաքելական ալ չէ՛ · վասն զի ինչպէս որ խոստովանին Առաքելոց ուսուցմանց հակառակ ուսումն ունի խոստովանութեան և ապաշխարութեան ամանց մէջ , նոյն և պատարագը ընդդէմ Առաքելոց վարդապետութեանց՝ ինքնահնար կերպարանք մոլորութիւններ կը քարոզեն , ինչպէս են՝ պատկ ի վեռաւոր Յիսուսկրեան Հայրապետ ի ըստ խոստովանութեան՝ վասն = Քրիստոս ի երդ = Քրիստոս ըստ , անսխալականութիւնը , խրատարանութեան աղբիւր հեղինակ՝ հաւատոյ մասն վարդապետ ըստ , և պատճէն այս պարագանեն ունեցած ըստ՝ փրկուելու համար անհրաժեշտ հաւատալու պարտաւորութիւնը կամ պատուիրանը , մինչ բանիւ՝ պատրաստ Առաքեալ մէջ մեր դնելու կարողութիւնը ... են · Ապա ուրեմն յո՛չ մոլորեալ է պատրականու-

թիւնը, և Առաքելական եկեղեցիէն՝ ինքնին աղիկաւի՝ հեռացեալ օձտեալ հերձեալ է։

Հայոց եկեղեցին Մի, Սուրբ, կաթուղիկէ և Առաքելական եկեղեցւոյ ամրողջացուցիչ մէկ մասն է. վասն զի ան նոյն կաթուղիկէ հաւատոց և վարդապետութեանց և պատուիրանաց և խորհրդոց ֆո–ՐՆ–ԱՆ ունի, զոր Ս. Գիրք աւանդած են եկեղեցւոյ։ Հայոց եկեղեցին չդաւանիր՝ ի՛նչ որ Ս. Գիրք չեն սովրեցընէր. ո՛չ ալ կը քարոզէ՝ ի՛նչ որ անոնց օտար կամ հակառակ է։ . . . Հայոց եկեղեցին սուրբ է. վասն զի մկրտութեամբ սրբեալ՝ ի սկզբնական մեղաց՝ սրբասրբար վարդապետութեամբ Ս. Գրոց յօդեալ է յԱմենասուրբ Գլուխն իւր՝ ի Քրիստոս, և՝ ի նոյն սրբասրբար օրէնս Հոգւոյն օծեալ՝ կը դաւանի ամեն անմաքրութիւն և արատ։ Հայոց եկեղեցին կաթուղիկէ՝ ընդհանրական է. վասն զի Քրիստոսի Տիեզերական Ս. եկեղեցւոյ սրբասրբար հաւատոց և վարդապետութեանց հաւանձայն միաբան և միաշունչ է։ Հայոց եկեղեցին Առաքելական է. վասն զի եկեղեցւոյ գանձուն աւանդեալ Առաքելական Գրոց և վարդապետութեանց ըստ ամենայն մասանց հպատակ և հնազանդ է՝ մինչեւ ցդրախէան և նշանախեցն. Առաքելական ձեռնադրութիւն՝ քահանայութիւն ունի. Առաքելական յաջորդութիւնն ալ ունի և կը պահէ ցարդ անընդհատ՝ Ս. թադէոսէն և Բարդուղիմէոսէն առնելով. (ՂԵ Բ՛– ՝Է ԿՕՆՓԷՐ. Ս–ԱՆՔ. ՄԷ–ՅԵԼ ՎԱՐՔՈՊՔԷ. ՊԳ. ՝Է Մ–ՀՔ ԵՐ. 99։)

Մինչեւ հիմայ զրուցուածներէն յայտնի կ՛երեւնայ որ ճշմարիտ եկեղեցին միայն պատմական հաւատքով կամ տեսական ուսմամբ և կամ ուսումնական ուղղափառութեամբ չճանչցուիր, ա՛չ ալ կը փրկուի. վի պատմական հաւատքը՝ դեւերն ալ կ՛ընուի, (ՅԱԿ. Բ.) և փրկարար չէ. վի դեւերն ալ

ունին, բայց չեն փրկուիր. այլ գործքով և արդեամբք՝ ուղղափառ վարդապետութեամբք և սուրբ բարոյիւք։ Ապա ուրեմն յայտնապէս և իրօք արտաքոյ եկեղեցւոյ են՝ փոխեալ անդամ ըլլալով՝ նախ անոնք որ յայտնի կամ լռելեայն անհաւատ են, կամ հայհոյիչ, կամ պղծագործ, կամ ուրացող և կամ մոլորեալ։ (Ա. ՅՈՎՀ. Բ. 3—19։ ԵՒ. Ժ. 24—39 եւն։) երկրորդ, ընդհանուր Առաքելական եկեղեցիէն պատապարտեալ ունին ներքինիւքով կամ պատապարտելի մոլորութիւններ հնարողք, որք յամառ կամակորութեամբ կ՛ուրանան կամ կը ժխտեն՝ ի Քրիստոսէ և յԱռաքելոյ նորին և՝ ի մարգարէից որոշակի քարոզեալ հաւատոց կաթոլիկ հնչեմարտութիւնները. որք Աստուածաշունչ Գրոց վարդապետութիւնները կը ծայրատեն, և անոնց վրայ ինքնահնար այլափոխութիւններ կը յաւելուն յոտն մարմնեղոյ լսելեաց իւրեանց՝ ի կորուստ անձանց և որոց լսեն և ընդունին։ (Գ–Ք Ա. 6—9։ Բ. ՕՐԻՆ. Դ. 2։ ԺԲ. 32։ ՅՈՎ. ԻԲ. 19։) Եւ երրորդ, ամեն հերձուածողք և աղանդաւորք որք պիրանք ծնող ուղղափառ եկեղեցւոյ կամ Տիեզերական Մայր եկեղեցւոյ հաւատքէն ու վարդապետութիւններէն ինքզինքնին բաժնելով որով և անոր հաղորդակցութենէն կտրուելով հերձուելով նոր եկեղեցի նոր ժողովակ մը կը կազմակերպեն՝ ի կորուստ անձանց և հետեւողացն։ Թէ՛ առնոց և թէ՛ իրենց նմանողաց քանի՛ ամենեւին փրկութիւն չկայ՝ ա՛չ ասա և ա՛չ ի՛ հանդերձեալն։ (Բ. ՊԵՏ. Բ. 1—22։ Բ. ՏԻՄ. Բ. 18. եւն։)

ԳԼՈՒԽ Բ.

ՑԱՏԿՈՒԹԻՒՆՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՆՍԽԱԼՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ ԵՒ ԱՆՊԱԿԱՍԵԼԻՈՒԹԻՒՆ

Մարդ արկն դանիկլ՝ ներուքդ ոնատրոյ տեսա-
լեան արժանին և զայն միշտ կորժանող (առանց
ձեռն ներուած) քարին անկնուքիւնը տալու առնն՝
յայտնապէս ի նախատապատուելով Քրիստոսի Եկեղեցւոյ
հասնար՝ ըսաւ. «Ես յաւուրս իմոյ աւուրցն այնոցիկ
յարուցից Աստուած երկինց Թագաւորութիւն՝ որ յա-
ւիտեան ո՛չ եղծանիցէ, և իմ այդ աւուրքիւն նորա ոչիք
այլուստ ո՛չ ունիցի. տնանկացիլ և դառնալ, զամենայն
իմ ապատարութիւնս, և ինձն հաճոյ յաւիտեան» (Բ. 44)

Յաւիտեան ո՛չ եղծանիցէ. որ կը նշանակէ ըսա Տա-
տաց և դաւանութեան, ըսա բարոյից և արդա-
քիւն, ըսա վարդութիւնն և կատարութիւնս
ո՛չ երբէք բոլանդակ Եկեղեցին տատիանդ մոլո-
րութեանց կործանման մէջ ոչիսի լինայ. բնաւ չը
պիտի եղծանի, չպիտի աւրուի, չպիտի մոռի,
անխաթ անմոլորելի մնայ: Ինձն հաճոյ յաւիտեան.
յաւիտեան անդադարելի՝ միշտ կայ պիտի բլայ յա-
րատեւութեամբ, և չպիտի բլայ երբէք որ Քրիս-
տոսի Եկեղեցին ընկճուի՝ ըսել չէ ուզեր ըսաւ.
Այսպէս և Քրիստոս ըսաւ. «Շինեցից զեկեղեցի
իմ, և դրունք դժոխոց ոչնա ի յաղթահարել ի
(Մատթ. ԺԶ. 18) Եթէ երբէք հնարաւոր կարելի
բլար ընդհանուր Եկեղեցւոյ հաստատ ունայն սխալիլ
ի բան հաւատոյ կամ բարոյից, դէթ առ գոմ մի
և եթէ Եկեղեցին մոլորեցուցչաց պատրանքնե-
րէն կամ բռնաւորաց բռնութիւններէն ընկճուիլ
գործի մէջ սկսէր բռնուիլ, դժոխոց դռնեքն

յաղթահարուած կ'ըլլար. այլ որուն հաստատ Քրիս-
տոս ըսաւ «Դրունք դժոխոց զնա ոչ յաղթահա-
րեսցեն» — Ապա ուրեմն անսխալութիւնն ու ան-
պարտութիւնը անոր բնութիւնը ու յատկու-
թիւնը պէտք է ըլլայ:

Բայց թուղթասիրք կրնան կասկածիլ Քրիստոսի
այս խօսքը. կ'ըսեն՝ թէ «Ես քեզ ոչ յաղթահարեցից» չէ
թէ վճիռ՝ այլ կանխատեսութիւն մ'է, որ միայն
Եկեղեցւոյ անպարտելիութիւնը կը վերաբերի: Մենք
չենք կրնար ընդունել թէ՝ Եկեղեցին առանց անխա-
ըլլալու՝ ինչպէս կրնայ անպարտելի ըլլալ, քանի որ
Եկեղեցւոյ գոյութիւնը ուղղափառ վարդապե-
տութեան գոյութենէն կախեալ ունի, երբ ուղղափառ
վարդապետութիւնը եղծանի սխալմամբ՝ ինչպէս
(անպակասելի) ըլլայ Եկեղեցին. ուրեմն անպակասելի ըսելը միանգամայն անսխալ
ըսել է, և անդ բուռ ապրանաբար: Ալ կրկնենք՝ թէ եթէ
սխալի Եկեղեցին յաղթահարել կ'ըլլայ՝ հակառակ
«Ի՛ յաղթահարեցից» ին, որ կ'ուզէ ասիկա ըլլայ՝ կ'ուզէ պատճառ՝ անյաղթահարելիութիւնը
միշտ անյաղթելի ճշմարտութեամբ զօրացեալ ապա-
ահովելով՝ անսխալելի ընել է: Հանգամանքին՝ այս
պատասխանը հերիք է: Բայց Քրիստոսի Ջիճենեաց
լեռան վրայն երկինք հաստատած առնելու Աստ-
քելոց պատուէրն ու խոստումն ալ մէջ բերելնիս
օգտակար կրնայ ըլլալ: Քրիստոս կ'ըսէ. «Գնացէք
յաւուհեռս, աշակերտացէք զամենայն հեթանոս
... ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատ-
ուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զա-
մենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի»
(Մատթ. ԻԸ. 19—20) — Բոլոր հեթանոսները աշա-
կերտեցէք, Եկեղեցին կազմեցէք, կ'ըսէ, ի՛նչ որ
ձեզի պատուիրեցի՝ անոնք ամէնը սորվեցուցէք ա-
նոնց որ պահեն. ես մինչեւ աշխարհի կատարածը

իմ Եկեղեցիս հետեւ եմ անբաժան. ձեզի եւ ձեր յաջորդներուն՝ ձեր ձեռնադրութիւնն ու աւանդութիւնը անկեղծութեամբ ուսուցանելու հետեւ եմ, բնա՛ւ անոնցմէ չպիտի բաժնուիմ. այ՝ մինչեւ աշխարհիս վերջը ամեն օր՝ բոլոր օրերուն մէջ՝ անոնք բնաւ չպիտի սխալին որ ես անոնցմէ պատուիրեմ. կամ՝ միշտ հետերնին պիտի ըլլամ որ միշտ անախալ մնան. եւ գարձեալ՝ ես անոնց հետ պիտի ըլլամ՝ որ ձեր ուսուցածներէն անսովոր անխարդախ պաչտել տամ անոնց յաւիտեան՝ հաստատուած ձեռուցանելով 'ի նոսա ձեր սերմանածները։ (Ա· կորնթ· Գ։) « Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ 'ի կատարած աշխարհիս Ասոնցմէ ուրիշ մարդարէութիւն մը չէ՛, ընթացք խոստում մ'ալ չէ, ինչպէս կ'ընէր Աստուած Հրէից՝ Մովսիսի բերնով, (Բ· Օրէն· ԺԱ· 26—27։ Իմ· եւն·) այլ հաստատուն վիայութիւն վճիռ խոստում մ'է, որով ապարդիւն չպիտի մնան ձեր քրանքները ընել կ'ուզէ։ Թէ որ Աստուածք անախալ չըլլային՝ ինչպէս պիտի կրնային անսխալ՝ անպակաս եւ անյաւելուած աւանդել իրենց կալուած եկեղեցեաց՝ ինչ որ բանէ բերանէ առեալ էին իրենց վարդապետէն, ինչ որ բանէ բերանէ պատուիրած էր էրնոյ Ցիսուս Քրիստոս. թէ որ իրենք անսխալ կին՝ ապա իրենց յաջորդներն ալ (ուսուցանող Եկեղեցւոյ ամրողջութիւնը) անսխալ կին, ըստ որում Ցիսուս Քրիստոս յաւիտեանս անոնց հետ ըլլալ խոստացաւ. միայն Աստուածոյ չէր կրնար ըլլալ այս յաւիտենական գործակցութեան խոստումը. զըմբնաչն աստուածընկալ 'ի կոթողած աշխարհիս հետ չէր կրնար ըլլալ. այս խոստումը յայտնապէս անոնց յաջորդաց է, որոնք եկեղեցական իշխանչնաւոր յաւերժակեաց Եկեղեցւոյ համար է այս իշխանչնապէս անդադարելի ներկայութեան հաստատուն խոստումը Քրիստոսի. որ կատարեալ երաշխաւորութիւն մ'է անոր անսխալութեան եւ անպակասելիութեան. կամ թէ ըսեմ՝ վկայութիւն հաստատութիւն թէ իր Եկեղեցւոյ բնութիւնն ու յատկութիւնը պիտի ըլլայ անսխալ եւ անպակասելի-ըլլալ։

Եւ բնական ալ է. վասն զի՝ եթէ եկեղեցին Քրիստոսի մարմինն է· (Եփես· Ա· 22—23։ Կոլ· Ա· 24·) Քրիստոս անոր գլուխը բարեյաջող եւ հոգեւորապէս ողջամիտ վարդապետութեամբ հաւատովք զանիկայ անուցանելու բաւական եւ ամենակարող է։ Եթէ եկեղեցին Քրիստոսի արքայութիւնը՝ թագաւորութիւնն է, (Մատթ· ԺԳ· 41 եւն·) Քրիստոս անոր թագաւորը կարող է՝ ինչպէս թշնամւոյն յաղթելով թշնամւոյն ձեռքէն աւար առաւ զայն, նոյնպէս ընդ միշտ իրեն աւար պահել ընդդէմ թշնամւոյն։ Եթէ եկեղեցին կենդանի Աստուծոյ քաղաքն է, (Եբր· ԺԲ· 22·) Քրիստոս անոր քաղաքապետը կարող է զայն ընդդէմ հինից ստրատուկաց պաշտպանելու, ըստ որում «ընդ բեւրաւ քաղաք (է նա·) եւ ո՛չ լքեալ»։ (Ես· ԿԲ· 12։) Վերջապէս Ս· Գրոց մէջ ի՛նչ նմանութիւնք եւ այլաբանութիւնք որ նկարագրուած են Քրիստոս եւ Եկեղեցի, անոնց ամենուն վրայ ալ խնամատարելով սա հետեւութեան կու գանք կ'ստացողութիւնը, որ եթէ կարենայ օտարանալ 'ի Ցիսուսէ Քրիստոսէ այն՝ որ Ցիսուսի Քրիստոսի է, ըստ ընդհանրութեանն ամբողջական է, պարտութիւն է այս առաջի ղօրութեանց դժոխոց, յաղթահարուած կ'ըլլար եկեղեցին 'ի թշնամւոյն, եւ Ցիսուս Քրիստոս թշնամւոյն զօրութեան դէմ կորակոր տկարացած կ'ըլլար, վոհմանակ զի խոստացած էր միշտ օգնել պաշտպանել իւր եկեղեցւոյն իւր Աստուածային ամենակարող զօրութեամբ։ Եւ ահա իրաց բնական պահանջմունքէն է որ եկեղեցին ըլլայ անսխալ եւ անպակասելի։

Յայս միտս կ՚անուանէ Առաքեալը զեկեղեցին՝ Սիւն և հաստատութիւն Ճշմարտութեան. «Զի գիտասցես կ՚ըսէ իւր Տիմոթէոսին, թէ ո՛րպէս պարտ իցէ քեզ ՚ի տան Աստուծոյ շրջել. որ է Եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն և հաստատութիւն Ճշմարտու-թեանն» (Ա. Տիմ. Գ. 15.) Եկեղեցին ինքնին՝ կեն-դանւոյ Աստուծոյ եղած ըլլալովը՝ հաստատուն է կ՚ըսէ Ճշմարտութեան. անսխալելի անսպառելի աղբիւր է վարդապետութեան։ Նա՛ դարձեալ այլ-ուր, «Նա (Աստուած) ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս, ՚ի հաստատութիւն սրբոց, ՚ի գործ պաշտաման, ՚ի շինուած մարմնոյն Քրիս-տոսի . . . զի մի՛ յայսմ հետէ իցեմք տղայք խռով-եալք և տատանեալք յամենայն հողմոց վարդա-պետութեան, խաբէութեամբ մարդկան, խորա-մանկութեամբ ՚ի խաբէութիւն մոլորութեան. . .» (Եփես. Դ. 11—14:) Այս խօսքին մէջ՝ ինչպէս յայտ յանդիման կը տեսնուի, անոր համար Աստուած հաստատեց ուսուցիչներ դրաւ՝ կ՚ըսէ Եկեղեցւոյ մէջ, «զի մի՛ յայսմ հետէ իցեմք տղայք խռովեալք և տա-տանեալք յամենայն հողմոց վարդապետութեան. . . ՚ի խաբէութիւն մոլորութեան», որպէս զի տղոց պէս դիւրախաբ ըլլալով՝ խաբէական մոլորութեանց մէջ չամփինք. եկեղեցին՝ մարդոց խաբէութեամբը ամեն հովերէ չտարուբերուի վարդապետութեան մէջ. չխառնի՝ իւր ուղղափառութեան ապահովու-թեանը մէջ, և ապիկարութեամբն ու տկարու-թեամբը խաբէութեան զոհ չերթայ։ Ասկից աւելի յայտնի բառերով զԵկեղեցին անսխալ է՞ կրնա՞ր ըսել. ինչպէս կրնար ուսուցանող Եկեղեցին իւր այս գերագոյն կոչման համեմ, [illegible] . Եւ [illegible] [illegible] [illegible] [illegible], եթէ Աստուծոյ անսխալ ա-

առաջնորդութիւնը միշտ ընդ իւր ունենալուն մո-լորութեանց որոգայթներէն անըմբռնելի ըլլալու յատկութիւնը չունենար՝ գոնէ ըստ ընդհանրու-թեանն։

Յիսուս Քրիստոս երբ իւր ուսուցիչ Եկեղեցին կազմեց, և լիուլի իշխանութիւն տուաւ անոր բա-ժանդակ եկեղեցին կառավարելու, հե՛րք չսեպեց զանոնք ապահովելը թէ մշտնջենապէս այն ուսուցա-նող եկեղեցին անանջատ՝ յաւիտեան անոր մէջ պիտի բնակի յանձնելով առաջնորդութիւն նորին, նայնը Ս. Հոգւոյն համար ըսաւ պրուցեց թէ՝ այն առ-ախոյ գայ ՚ի Հօրէ, որ անոնց հետ բնակի յաւիտ-եան, և իւր բոլոր քարոզածները անոնց առջևը-ցընէ և յիշեցընէ. «Ես աղաչեցից զՀայր, և այլ մխի-թարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ ՚ի յաւիտեան . . . զի առ ձեզ բնակեսցէ և ընդ ձեզ եղիցի . . . Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ես ՚ի Հօր իմում, և դուք յիս, և ես ՚ի ձեզ . . . . Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզս եմ. Իսկ մխիթարիչն Հոգին Սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն որ ինչ ասացի ձեզ, և յիշեցուսցէ ձեզ»։ (Յովհ. ԺԴ. 16 —26:) [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] չղատուի ձեզմէ, որ դուք բնաւ չմնանաք իմ վար-դապետութիւններս և յիշողիք անոնց մէջ դայթե-լով. [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]. [illegible] ամենայնի վրայ վարդապետելու [illegible] [illegible] ուսուցանէ այն պիտի տայ ձեզի, և յայտնի պիտի [illegible] ՚ի նորին. [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] ՚ի Հօրէ, Հօրէ [illegible]. [illegible] [illegible] և [illegible] ՚ի [illegible] [illegible]. Ասկից աւելի ի՞նչ պէտք էր ըսել Յիսուսի՝ Եկեղեցւոյ անսխալութիւնը հաստատելու համար։ Չկրնար ըսուիլ թէ Քրիստոսի այդ խոստումը միայն Առաքելոց էր, քանզի [illegible] ՚ի [illegible] [illegible].

ջրհեղեղ առաքս, յաւիտեան բառերը՝ անտարակոյս միայն Առաքելոց համար չէր գրուեր Գրիստոս, որք հազիւ յետ հաստատնալոյն Գրիստոսի կէս դար կատարելոյ եկեղեցին. այլ նաեւ բոլոր անոնց յաջորդաց՝ բոլոր ուսուցանող եկեղեցւոյ ընդհանրութեան համար կ'ըսէր, որք ընդ ամենայն դարս կատարելոյ կին անծերանալի եկեղեցին՝ միշտ անոպակասելի և միշտ յաղթական ընդդէմ զորութեանց անդնդոց. «Ո՛չ ծերանայ եկեղեցի, ո՛չ նուաճի, և ո՛չ ի դիւանագործից յաղթահարի... քանզի Գրիստոս վասն նորա չարչարեցաւ, դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեացեն» (Ո-ԼԷ. ի ճառն Հոփեթ.) «Գիւրին է արեգական չիջանել, քան եկեղեցւոյ խաւարել» (ի ճառ. Գ. Նիւոյէ.) «Հիմունք նորա եղեալ են ի վերայ հաստատուն վիմի. ո՛չ ներքինք չարժել կարեն, և ո՛չ վերինք դրդուեցուցանել. և զոր երկինք և երկիր ո՛չ դողացուցանէ, մի՛ որ ի մարդկանէ խրտխռտացի յաղթել նմա» (ԵՒՆԷ. ՀԵՐԱՒ Բ.)

Հաւաքելով ցայս վայր գրուցուածները՝ եկեղեցին անսխալ և անպակասելի է, նախ անոր անսխալութեան մի միայն պատճառին համար՝ որ է Ս. երրորդութիւնը, աղբիւր յաւիտենական ճշմարտութեան. Հայր Աստուած կը սորվէ գՔրիստոնեայս իւրական ճշմարտութիւնը. (Ց-ԼԴ. ԺԷ.) Որդին Աստուած՝ գաւնէայն աւուրս բնակէ ընդ նոսա՝ մինչեւ ի կատարած աշխարհի. (Մտթ. ԻԸ. 20.) և Հոգին Աստուածեղէն՝ առաքնորդէ նոցա ամենայն ճշմարտութեամբ և յիշեցուցանէ և ուսուցանէ նոցա զվարդ ապեստութիւնս Քրիստոսի. (Ց-ԼԴ. ԺԶ. 13.) «Որով ո՛վ եկեղեցի (կ'ըսէ Լաքրոնացին,) առաքնորդէ սիւն Հոգւոյն, քեզ առաքնորդէ միշտ Հոգին, քեզ առաքնորդէ միշտ Աստուածեղէն՝ Գրիստոս» (ի ԳԼ. պատմ. ԵՐ. 42.) Ասոր եկեղեցւոյ անսխալութիւնը կը դաւանինք ո՛չ թէ այնպէս որ զայն կը պահպանեն ի մոլորութենէ անոր անդամներէն եղող սխալական մարդիկ՝ յոդնոգէս. այլ Ս. երրորդութիւնն ինքնին իւր Աստուածային ուսուցչութիւնը կատարեալ ճաքրութեամբ և անսպակաս արդիւնքով կը պահպանէ անոր մէջ. և անոր հովիւներն ալ հետ կը պահէ մոլորութեան հովերէ:

Բ. Անսխալ է եկեղեցին ըստ առարկային, որ է ճշմարտութիւն առ հաստատակ Քրիստոնէական կրօնի՝ բովանդակեալ յԱստուածային Յայտնութեան, որ ի Ս. Գիրս, և Ս. Գրովք երաշխաւորեալ վաւերական աւանդութեանց Առաքելոց և Հարց Սրբոց գրոց մէջ: Եկեղեցւոյ անսխալութիւնը Ս. Գրովք յայտնեալ ճշմարտութեանց մէջ է, անկից անդին սխալական է, գի Առաքեալը նզովիւք կ'արգիլէ Ս. Գրոց յայտնի քարոզածէն աւելի բան չհետաքննել և չքարոզել. (Գաղ. Ա. 8—9.) Հոգին սուրբ ալ եկեղեցւոյ առաջնորդութեանը համար եկեղեցւոյ մէջ կը բնակի նէ՝ կ'ըսէ Յիսուս Քրիստոս, անոր համար է որ «Ուսուցէք ձեզ զամենայն՝ որ ինչ-ոեքէ ձեզ, և յիշեցուսցէ ձեզ»: (Ց-ԼԴ. ԺԴ. 26.) Նոր յայտնութեանց, նոր վարդապետութեանց չափոր առաջնորդէ, միայն Յիսուսի քարոզածները նորէն պիտի սորվեցնէ և յիշեցնէ. ուստի թէ որ եկեղեցւոյ մէկ կը Ս. Գրոց սորվեցուցածէն դուրս՝ առանց Ս. Գրոց վկայութեան բան մը ուզէ հաստատել՝ կը սխալի: Հնանդամէս արուեստին դիտութեանց մասին, զոր ինչպէս են բնաստանութեան՝ արհեստական՝ բնական՝ աշխարհագրական՝ չափաբերական եւ ճշմարտութեանց մասին՝ սխալական են, և սխալեցան շատ եկեղեցիներ. Հռոմի պապերն ալ՝ գալիլէոսի պատմին մէջ. լաւ որուամ այս դիտութեանց հիմունքն ու ապացոյցները՝ մարդկային հանճարն ու վկայութիւնք են. և ո՛չ Աստուածային բանն ու վկայութիւնը

Գ· Անախալ է եկեղեցին նահե ըստ պաշտօնէիցն, որք իրրեւ գործիք են Ս· Հոգւոյն ձեռքի՝ յուստացանելն զճշմարտութիւնն և՝ ի պաշտպանելն զեկեղեցի՝ ի մոլորութենէ։ Ա· վասն որ յատկապէս ուսուցիչ կարգեալ են նոքա՝ ի Տէառնէ դատիտալով զեկեղեցի՝ ի հաւատս, ըստ որ ինքն հառաջեալքն գաղտ խօսէլով և տառնէլով չարչնաչ հողմոց վարդապետութեամբ հրդիկան։ (եփես· Գ· 14։)

Բ· վասն որ փրկչին խոստացած գերբնական օդնութիւնները՝ ըստ մեծի մասին Առաքելոց և անոնցմէ կացուցեալ իրենց յաջորդաց և եկեղեցւոյ պաշտօնէից կը պատշաճին։ Եւ Գ· վասն որ չէ թէ Առաքեալներէն կամ անոնց յաջորդ պաշտօնէութենէն անհատ մէկը կամ մէկ քանին առանձինն անսխալ են, այլ բոլոր ուսուցանող եկեղեցին՝ հաւաքական առեալ· ըստ որում Քրիստոս իւր յաւիտենական բնակութիւնը՝ յեկեղեցւոջ, և Ս· Հոգւոյն եկաւորութիւնն՝ ի գործակցութիւն՝ չէ թէ աշակերտներէն մասնաւորի մէն Պետրոսին կամ Յովհաննէսին, և կամ անոնց յաջորդներէն առանձին մէկու մէկ կամ զոյն մը յաջորդութեան՝ Հռովմի պապերուն կամ Եպիսկոպոսական կամարակերութեան խոստացաւ, այլ իւր բոլոր աշակերտաց գումարին, որով նաեւ անոնց յաջորդաց՝ հաւատարմակ՝ հաւաքական կերպով, քանզի այն օգնութիւնը կը խոստանար Ս· հաւատքը տարածելու և պահպանելու պաշտօնին համար· և որովհետեւ այն պաշտօնը չէ թէ անոնցմէ մէկն՝ և անոր ալ անձին յատկապէս՝ այլ բոլորին բոլորապէս կ'պատկանէր, ապա ուրեմն այն օգնութիւնն ալ չէ թէ անոնցմէ մէկն՝ այլ բոլորին բոլորապէս կը խոստանար։ Ըստ որում անոնցմէ մէկուսի կրնար Պետրոս առանձինն իւր Տէրը ուրանալ, Թովմաս՝ թէ չհաւատալ, Պօղոս և Բառնաբաս՝ կռուիլ։ (Յովհ· ԺԴ· 26։ ի· 25։ Գործ· ԺԵ· 39։) և Աստուածնայ Ս·

Փորիգրոս, Ռոմանոս, Թէոդորոս Ր· Յովհաննէս Թ· պապերն ալ կրնային իրար նկատել, իրարու մասին գերեվարձանելու դրօս դանել Տիրեր գեղը նետել, և վիրաւոր Տիրերէն դանել ապատուով՝ ի տապանի հանդուցանել· Բարգէն և Եղբ կաթուղիկոսութիւնք ալ Քաղկեդոնը մերժել կամ ընդունիլ· այլ ուսկոյն Եկեղեցին բնաւ շէր խախտիր· անսասան անվրդով հաստատ կեցաւ ու մնաց միշտ՝ իւր անմոլար առաջնորդութեանը մէջ· և միշտ դատապարտեց իւր առանձնաւորաց մոլորութիւնքը՝ թէ՛ պապերուն է եղեր և թէ այլոց· Որքան մասին վարդապետութեանց իրողութեանց մէջ ընդ հանուր եկեղեցւոյ ներկայացուցիչն՝ բովանդակ ուսուցանող եկեղեցին է, և ո՛չ թէ անոնցմէ մէկը, ինչպէս կը պատահանէ հակառակ Ս Գրոց Հռովմայ պապը՝ որ ինքն ինքն ըլլոյ, զատարար առնելով· բոլորը բովանդակ կապէս՝ ի միութեան ժողովեալ՝ ապատ են մոլորութեանց վտանգի մէջ իյնալէ, բայց միշտ առաջնորդութեամբ Ս· Գրոց, Առաքելական վարդապետական աւանդութեանց, և Հարց վարդապետութեանց հաստատելոց Ս· Գրովք։

Պատկ ճանչցաւ միշտ եկեղեցին· և կարեւոր պարագայներու մէջ՝ երբ հաւատոյ ծանրակշիռ խնդիրներ երեւան եկան, չէ թէ առ այս որ կամ այն որ հայրապետ մասնաւոր եկեղեցւոյ դիմեցին այլոց մասնաւոր եկեղեցւոյ հայրապետք, այլ իւրաքանչիւր հետ խորհրդակցելով՝ իրրեւ՝ ի վերին և՝ ի գերագոյն աստեան՝ Տիեզերական ժողովոյ դիմեցին, որ միակ անսղոքելի աստեանն է գաստղական ամեն նոյն խնդրոց հաւատոյ, և ծայրագոյն անօրէն անձնական իշխանական իրաց հաւատացելոց, որոց դատաստանին տակ կ'իյնան թէ հայրապետք, թէ պապք, թէ՛ եպիսկոպոսք և թէ՛ երէցք· և որոց վճռոյն անհատողք պարզապէս հերետիկոս կ'ըլլան,

զոր նպովելով կը նետէ դուրս, և ո՛չ ոք է որ կա-
րողանայ անոր կորած նետածը՝ վերստին յեկե-
ղեցին մուծանելու. «Բեմ ահաւորին առնէի՛ ի սմա
հաստատակամ սեանսն. սովաւ խորհրդարարոյիցն
հերձուածոցդ մոլեգնամտութ բերանք կարկին»:
(Ընդեմ՝ Ի ք՚ան Հե՛)

Ահագին կը դանուի դէպ ի Ցնծօրի (Ի ևն-
դոգն Բէթսդ· Մասն Բ· ցօդ· ժԲ·) «ի մեծամեծ և յան-
սովոր վէմս հաւատոյ սկսան և Ցիւդերական ժո-
ղովք բնդհանուր եկեղեցեաց . . . : Ընդ էր սովո-
ւեն ոտիան գոտորոգանի ոմինոյն էրաց դեռոմեռաց նիմ-
զեցոյ, զոր դոյ ոտէ+ եպիսկոպոսի անմարդն էր ահհանել:
Հաստատուն վարդ ապետութիւն էր՝ գի էզիանոսիան
վճռաց և հրամանաց ԵՒԷԶԵՑՈՑ ՄԻԱԲԱՆ ՀԱԻԱՆՈՒ-
ԹԵԱՄԲ ՀՈԳՈՒԱՑՆ ՊԱՀԷՐ, որք ոչ միով՝ ի յայտ
գան՝ բայց՝ ի Ա ժողովս: Անդ դատին և զեղիս-
կոպոսուեան, անդ և զժողովս սահմանին . . . :»

Առաքեալք ինքեանք՝ որք անընդմիջապար՝ ա-
ռանց միջնորդի՝ բանիւ բերանոյ երկնաւոր վար-
դապետին ուսեալք հրահանգեալք և Հոգւոյն
սրբոյ աքանչելագործ զօրութեամբքն եւս պրաշ-
նորուած կին, այլ ոչ ոք անոնցմէ ո՛չ ուրեք ինքնին
առանձին տնօրինութիւն ըրաւ կամ վճիռ մը տուաւ
Եկեղեցւոյ գլխաւոր իրողութեանց մէջ. առ որ
միայն հրաշք մը գործէին յայտնութիւն ճըշ-
մարտութեան՝ հետիք կր, բայց անանկ չըրին ա-
նոնք, ոչ ալ կիրենք՝ ի պաշտօնէութեան անդ զօ-
րացուցանող Հոգին՝ անանկ գործել տուաւ իրենց.
այլ միշտ՝ ի մեծամեծ և յանսովոր իրս Եկեղեցւոյ
՝ի ժողով գումարուելով հաւաքապէս վճռեցին
առհասարակ տնօրինեցին: Ինչպէս երբ Ցուդայի
տեղ Մատաթիան ընտրելնուն, (Գործ· Ա· 16—26·)
եօթն սարկաւագներն ընտրելնուն և ձեռնադրել-
նուն, (Ձ· 1—7·) օրինաց խորհուրդներէն առօ-

րինելնուն, (Ժե· 1—29·) Պողոսի դէմ եղած օրի-
նապանցութեան առթիւ հարցաւոր ցրելու մասին,
(ԻԱ· 18—25·) Պետրոսի դէմ եղած հաւատացելոց
դատակնռութիւնը բուժելու համար Պետրոսը ՝ի
դատաստան կոչելու առնելին, (ԺԱ· 2—18) Պետ-
րոսն ու Յովհաննէս սր Սամարիա պաշտօնի մը խրկելու
ժամանակնին· (Ը· 14·) եւ եւ եւ:

Ուսանող եկեղեցին (Ժողովուրդն) անգամ՝
տեսնելով հանդերձ թէ Առաքեալք նշանագործ
զօրութեամբ Հոգւոյն կը հաստատեին իրենց վար-
դապետութիւնը, որովք և իրենք հաւատոյ ա-
շակերտութեան, երբ կը տեսնէին որ՝ այս ոք ա-
ռաքեալ առանձինն անսովոր անօրինութիւն մը
կ՚ընէր, նոր երեւցած բան մը կը քարոզէր, կամ
եկեղեցւոյ սովորութեան հակառակ երեւցած ըն-
թացք մը կը բռնէր, ուշադրութեան կ՚առնէին
զայն, և առնելիքնէն Առաքելոց ժողովին՝ ընդ հա-
նուր ժողովին կը դիմէին, առնել հրահանգ կ՚ու-
զելին, և անոր վճիռը միայն կ՚ընդունէին իբր «Ձայն
եկեղեցւոյ»: Գանգի ոնքեանք իսկ Առաքեալք պատ-
ուիրած էին ժողովրդեան, ըսելով, թէ ինչ անքա՛
եթէ առանձինն ՝ենդէ ջոտ, և ոչ սինոտն հատանութիւնքը
ՅԷշէ գինէ հնմոյ տորղոտած բանեցէն տորթեր կամ սուխ
քան տորղնոտ, էբբեւ սոտանձին մարդոս վրդոպեսութիւնն
գ՚ ընդոտանէ ոչ էոյտը, հրեշտակ մըն ալ էոյ տորդէ ա-
ռանձին նէ՛ գ՚ ընդոտանէ· Ուղիղ և այն ոչ տորղնէն
պորթեր քնէնոհնոր քան տորղընը: (Գաղատ· Ա· Ի՝ Ա·
Ցովհ· Բ· 26—29՝ Գ· 1՝ Բ· Թես· Բ· 1—4՝ Ցոպ· 3—
4՝ եւ) «Որ խոտորկցուցանէ զձեզ, կրեսցէ դատաս-
տան՝ ո՛ր և իցէ»: (Գաղ· Ե· 10՝) «Մի՛ որ զձեզ խաբ-
եսցէ, որ կամելի խոնարհութեամբ և կրօնութիւք
հրեշտակաց, զոր չիցէ տեսեալ զրահեալ վարել՝
տարապարտ հպարտացեալ ՝ի մտաց մարմնոյ իւրոյ, և
ո՛չ ունելի զգլուխն Քրիստոս, ուստի ամենայն

մարմինն յօդիւք և խաղալեօք տարաբերեալ և խառնեալ՝ աճէ զաճումն Աստուծոյ ։ (Կող. Բ. 18։) «Զգոյշ լերուք, մի՛ ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ ճարտարմտութեամբ՝ և սնոտի խաբէութեամբ, որք ըստ մարդկան աւանդութեան՝ և ըստ տարերց աշխարհիս, և ոչ ըստ Քրիստոսի» ։ (Կող. Բ. 8։) Ըստ այսմ անոնք ալ կը քննէին Առաքելոց քարոզութիւնը. և եթէ անտեղի օտար երևցած բան մը լսէին անոնց քարոզութեանը մէջ, շուտ մը ընդհանուր ժողովը կը դիմէին ։ Բերիացի Հրէայք Պօղոսի և Շիղայի քարոզութեամբը Քրիստոնեայ դարձեր էին այ նէ, անոնց քարոզութիւնները միշտ Ս. Գիրքերուն մէջ կը քննէին թէ ճիշդ բանձնուն այէ՞ս է մի, (Գործ. ժէ. 10—11.) մի՛ գուցէ հակառակ ճշմարտութեան բան մը սորվեցընեն ։ Անտիոքացի Քրիստոնեայք անտեղի գտնելով Պօղոսի և Բառնաբայ Մովսիսական խըտրութեանց դէմ քարոզելնին, թէ՛ և Պօղոսէ աշակերտուած Քրիստոնեայ եղած էին, ո՛չ Պօղոսը ո՛չ ալ Բառնաբասը Եկեղեցւոյ բացարձակ վարդապետ չհամարեցին, բոլոր Առաքելոց վրայ իշխան՝ ճըշմարտութեան սիւն և հաստատութիւն եղող ընդհանուր ժողովքին դիմեցին ։ (Գործ. ժե. 1—5։) Ասանկ ըրին Պետրոսին համար ալ՝ 'ի Հրէից դարձող Երուսաղէմացիք, երբ ընդդէմ սովորութեան՝ անոր հեթանոսի տուն մտնել և հաց ուտելը լսեցին, Անիրաւ վարդապետ է անոնք չըսին՝ ամբաստանութիւն ըրին անոր համար Առաքելոց ժողովքին ։ (ԺԱ. 2—4։)

Առաքեալներուն դարձն ետքը եպիսկոպոսունք իրենց վիճակներուն մէջ նոյնպէս ինքնիշխանաբար չէին վարուեր. միշտ քահանայական խորհրդով կը գործէին. միաբանութիւնս այս եպիսկոպոսաց հեռի էր ամենևին 'ի տիրապետութենէ և 'ի բռնաւորութենէ. սիրոյ բնա պետութիւն էր նոցայն. ա-

մենոյն վիճակաւորք եկեղեցւոյն հաղորդ էին իշխանութեան եպիսկոպոսին, զի ո՛չ մեծ ինչ առնէր առանց խորհրդոյ նոցա, մանաւանդ երիցանցն՝ որք իբրև ծերակոյտ բնն էին եկեղեցւոյ ։ . . . Իսկ յորժամ եպիսկոպոսն իշխէր առնել ինչ կամ ուսուցանել ընդդէմ Առաքելական աւանդից, զըղէին զնա աւագագոյնք երիցանց և սարկաւագաց, և ազդ առնէին նմա սիրողաբար, և յանդգնել նորա՝ բողոքէին առ այլ հայրապետս, և այսպէս ամբաստան լինէին զնմանէ 'ի ժողով եկեղեցականս ։ (Թէոփիլէ 'ի հնացուց Քրիստ. Մաս. Բ. Ցող. ԻԹ։) Ինչ որ քահանայական ժողովքով վճարել չէին կրնար, վիճակային գաւառային ժողովներով վճարել կը փութային, անոնց մէջ ալ լուծել չաջողելու համար՝ առանձին մանաւոր եկեղեցեաց հայրապետներու հետ թղթակցելով անոնց ալ կարծիքները կ'առնէին. անով ալ չյաջողէր նէ կամ թէ որ ախտը մոլորութիւնը հանրական էր նէ՝ Տիեզերական ժողովոյն կը դիմէին, որ վերին և գերագոյն դատաւորն էր յամենայն իրս հաւատոյ և վարդապետութեան. այս ժողովոյս մէջ կը քննուէին ամեն մոլորութիւնք և հերձուածութիւնք. այս ժողովոյս մէջ կը դատուէին ու կը դատապարտուէին հերձուածողք իրենց հերձուածութեամբք, և հերձուածք իրենց ըմբռնող իշխանափրութեամբք. այս ժողովս և միայն այս ժողովս զանոնք կը կտրէր տապարահոգ. յ'ի կաթողիկէ եկեղեցւոյ հաղորդակցութենէն՝ և այնուհետև անոնք իբրև զհեթանոսն և զմաքսաւորն կ'ըլլային համօրէն եկեղեցւոյ առջև ։ Այս ժողովս՝ և միայն այս ժողովս կը քննէր կը դատէր հայրապետաց դէմ եղած ամբաստանութիւններն ու բողոքները. այս ժողովս՝ և մի միայն այս ժողովս կը քննէր և կ'որոշէր նաև Առաքելական և Առաջնորդական՝ Պատրիարքական և Մետրապոլիտական

Ա՛ռաջ սահմաններըը, Կեղեսիոս Հռովմայ հայրապետը այսպէս կը նկարագրէ այս ժողովոյս զօրութիւնը և իշխանութիւնը՝ Եփեսոսի Տիեզերական Ս. ժողովոյ Հարց գրած թղթին մէջ. «Եպիսկոպոսաց ժողովը Հոգւոյն սրբոյ ներկայութիւնն ունի իւր մէջ. ժողով մը սուրբ է և պէտք է յարգել զայն, որովհետեւ Առաքելոց հաստագոյնը միութեան երեւեցուցիչն է, Տէրը միշտ Առաքելոց հետ եղաւ անբաժանելի կերպիւ. ինք սովրեցուց անոնց ի՛նչ որ ուրիշներուն սովրեցնելն հարկաւոր էր. այնպէս որ՝ ի՛նչ որ Առաքեալները կը խօսին, ինք ալ անոնցմով խօսած կըլլայ։ Ուստի այս պաշտօնը բոլոր եպիսկոպոսներուն ածանցեալ է. ամենքս ալ կը վայելենք այս չնորհքը ժառանգական իրաւունքով. ամենքս ալ կ՛ըսեմ՝ որ փոխան Առաքելոց կը քարոզենք գանուն Տեառն զանազան աշխարհաց մէջ, ինչպէս որ կ՛ըսէ. երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք։ Գիտեմք՝ որ, ե՛ղբարք, այս ընդհանուր հրամանը առած ենք. և Ցիսուս Քրիստոս կը պահանջէ որ ամենքս ալ միարան այս պարտքը կատարելու աշխատինք։ Ամենքս մեզի յանձնուարար եկած աշխատութեան մասնակցելու պարտաւոր ենք»։

Այս վերին անբողոքելի առեանը՝ կ՛ըսուի Տիեզերական ժողով. վասն զի բոլոր Տիեզերական կաթողիկէ եկեղեցւոյ գլխաւոր մայր Աթոռոց Հայրապետները (կամ Առաքելոց յաջորդ Հայրապետները)՝ իրենց սաորակարգեալ եպիսկոպոսաց վարդապետաց կամ քահանայից և սարկաւագաց հետ ժկտեղ հոն՝ Ի մի կը գումարուէին, անձամբ ներկայանալ չկրցողներն ալ երեսփոխաններ՝ և կամ գրով՝ ինձնիվ խորհրդոց վրայօք իրենց կարծիքները կը խրկէին, որով այն ժողովքը ամբողջ Տիեզերական եկեղեցին՝ հետեւորդար և ըստ ասոյց կե-

ղեցիներուն՝ Առաքելոց հաստագումար միութիւնը կը ներկայացընէր։ Վասն որոյ հարկ էր անհրաժեշտ՝ բոլոր Առաքելական մայր եկեղեցեաց Հայրապետք՝ անձամբ կամ ներկայացուցչօք և կամ գրովք հաղորդ գտնուէին այն ժողովոյ գործոց, ապա թէ ոչ՝ լիովին Տիեզերական չէր կրնար կոչուիլ այն ժողովը. և բացակայ գտնուողը՝ եթէ իրեն լուր տրուած չէր և կամ ոչ հաղորդուած էր հրաւէրը, բողոքելու և անոր որոշումները իրրեւ Տիեզերական չընդունելու իրաւունք ունէր միշտ։ — Նախկին երեք Տիեզերական Ս. ժողովքները որ՝ Ի Նիկիա, Եփեսոս և Ի Կ. Պոլիս գումարեցան, զորս և մերս Հայաստանեայց եկեղեցի կ՛ընդունի և կը ոծնէ, այս պայմանները ամենն ալ պահած են. բայց անոնցմէ հեռքինները՝ Քաղկեդոնին և միւս Արեւելեան և Արեւմտեան ժողովքները Տիեզերական չեն և Տիեզերական չեն կրնար ալ ըսուիլ՝ գոնէ Հայոց համար. վասն զի Տիեզերական եկեղեցւոյ ամբողջացուցիչ մէկ մասն ալ Թադէոսի և Բարդուղիմէոս Աթոռն ըլլալով, և անոնց Աթոռակալը Հայոց մեծաց Մեծ Հայրապետը Կաթողիկոսն ըլլալով, այն մեծ Աթոռէն՝ որ մայր եկեղեցի էր ալոց Ասիական աղգաց Ասորւոց վրաց ևն, ո՛չ ոք ներկայացուցիչ կար այն ժողովոց մէջ, հրաւէր ալ չկար անոնց, որ իրենք ալ չկրնային երթալ ենէ՝ գէթ երեսփոխանօք և կամ գրաւոր հաղորդակցութեամբ գործակից գտնուէին։ Այո՛, անուրանալի է թէ անոնք մեծ ժողովքներ էին. այս ալ անուրանալի է թէ բաւին կատարեալ նշանակութեամբը Տիեզերական ալ չէին, այլ Հռովմէական Արեւելից և Արեւմտից եկեղեցեաց յատուկ ընդհանուր ժողովներ էին. ուստի և Հայաստանեայց եկեղեցին ո՛չ սկիզբէն՝ ո՛չ ալ վերջէն զայն ընդունած է. ո՛չ կը ոծնէ, և ո՛չ իսկ ոծնելու կամ ընդունելու պարտաւոր է։ «Ջ-

կեղոն ո՛չ գիտեմ, և ո՛չ գլեւոն ճանաչեմ, կը գոչէ Գրիգոր Տղայ՝ Ս. Թադէոսի և Բարդուղիմեայ Աթոռակալը, իսկ եթէ բարիք են՝ անձանց և ժողովրդեանն, և եթէ չարք՝ անձանց և ժողովրդեանն։ . . . » (ի Պատմ. Տարեդրց։) — Արդարեւ երբեմն երբեմն Յունական բռնութիւնը դուն գործեց Քաղկեդոնը Հայոց որդեգրել, և եղան կաթողիկոսներ որ ազգին քաղաքական նեղ կացութիւնները ընդարձակելու՝ կամ գէթ ազգին ոդի կլանել տալու համար յերեսաց մոլեգնակրօն բռնութեանց նոցին՝ ձեռք զարկին ժողովքներով սահմանեցին ընդունել, բայց ստորակարգեալ Եպիսկոպոսունք իրենց Աստուածային իրաւունքը ի գործ դրին բողոքելով առ այն, որ և միշտ անպործադրելի մնաց ի նոյն . . . ։

ԳԼՈՒԽ Գ.

ՀԱՐՏԱՐԱՊԵՏ, ՀԻՄՆ ԵՒ ԳԼՈՒԽ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Ճարտարապետ, հիմն և գլուխ թէպէտեւ ուրիշ ուրիշ իմաստներով մէյմէկ որոշ բան կը յայտնեն, բայց այլաբանութեան դիտած միեւնոյն նկատմունքով կը նշանակեն Եկեղեցին ի Տյուրին բնդրող, հաստատող և պահպանող պարծանքը։

Այս պատճառը մի միայն կրնայ ըլլալ և ոչ աւելի, ինչպէս և մի միայն է, այն ալ Արարչապետն Աստուած է. որ երբ զմարդ արարչագործեց, զանիկայ կրօնից ուխտերով իրեն հետ կապելովը՝ Եկեղեցւոյ դոյութիւնը ծնաւ ձեւեց և կերտեց։ — Եկեղեցին իրրև շէնք մը նկատելով անոր հիմը այնպիսի տոկուն հաստատութիւն մը պէտք է ունենայ, որ այն ահագին ամբողջ շէնքը վերամբառնալու կրնայ և անոր անխորհրդական մասունքը ի միութեան (անկործան) պահելու զօրէ բաւէ. անանկ որ՝ մի միայն հիմը տեղէն բառնալով շէնքը չկարենայ յոտին կալ, ըստ ամենայն մասանցն քայքայուի. և ըստ այսմ մի միայն արարիչ Աստուած (կամ որ նոյն է՝ Յիսուս Քրիստոս) կրնայ ըլլալ և է հիմ Եկեղեցւոյ։ Զի բոլոր Եկեղեցին հաւատովք միաբանեալ շաղկապեալ՝ հաւատոյ պահանջներով միայն հիմին վրայ կապուած հաստատուած ըլլալով, ըսել է հաւատոյ առարկայն է այն հիմ ըսուածը, և ահա հաւատոյ առարկայն ալ՝ միայն Աստուած (կամ որ նոյն է՝ Յիսուս Քրիստոս) է։ (Ա. Պետ. Բ. 4—8։ Եփես. Բ. 19—21։) Նկատելով եւս Եկեղեցին իրր մարմին Աստուածային, անոր գլուխը անհնար է որ մահկանացու անբաւական տկար ոք ըլլայ. միայն Աստուած (կամ որ նոյն է՝ Յիսուս Քրիստոս) է գլուխ Եկեղեցւոյ, որ միայն բաւական է այն մեծատարած հանրածաւալ մարմինը անուցանելու։ (Կող. Բ. 18—19։) Զի Եկեղեցւոյ մարմնոյն անունդը երկնաւոր վարդապետութիւն ըլլալով, Յիսուս Քրիստոս ինքն ըսած է թէ ինձմէ զատ ուսուցիչ չկայ, և դուք ամենքդ ուսումնակից եղբայրներ էք։ (Մատթ. ԻԳ. 8—11։)

Այս երեք տեսութեանց նկատմամբ եւս ճիշդ այսպէս կը վարդապետեն Ս. Գիրք։ Ըստ առաջին տեսութեան՝ թէ Եկեղեցւոյ ճարտարապետը շինողը Յիսուս Քրիստոս է, ինքն իսկ Օծեալն կ'ըսէ. «Ի վերայ այդր վիմի շինեցից զԵկեղեցի իմ». (Մատթ. ԺԶ. 18.) և Պօղոս. «Աստուծոյ արդիւն էք, Աստուածոյ շինած էք. ըստ շնորհացն Աստուծոյ որ տուեալ են ինձ, իրրև իմաստուն ճարտարապետ հիմն եդի, բայց ա՛յլ ոք շինէ». (Ա. Կորնթ. Գ. 9—10։) Նոյն Պօղոս՝ երկրորդ տեսութեան համար ալ կ'ըսէ. «Հիմն այլ ոք ո՛չ կարէ դնել քան զեդեալն որ է Յիսուս Քրիստոս»,

(հմմտ. 11։) եւ երրորդ տեսութեամբ կ'ըսէ. «եւ դնա (ց ՊՁիսուս Քրիստոս) եղ գլուխ 'ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա, լրութիւն՝ որ զամենայն յամենայնի լնու»։ (Եփես. Ա. 22։) «եւ նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ, որ է սկիզբն՝ անդրանիկ 'ի մեռելոց»։ (Կող. Ա. 18։) Հետեւեալ խօսքին մէջ ալ հատանգամայն այս երեք տեսութիւնները ալ կը բովանդակէ. «Այսուհետեւ ո՛չ էք օտարք և պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց, և ընտանիք Աստուծոյ. շինեալք 'ի վերայ հիման Առաքելոց և մարգարէից, որոյ է գլուխ անկեանն Ցիսուս Քրիստոս. յորում ամենայն շինուածն յօդեալ և պատշաճեալ աճէ 'ի տաճար սուրբ Տէրամբ. յորում և դուք ընդ նմին շինիք 'ի բնակութիւն Աստուծոյ Հոգւովս։ (Եփես. Բ. 19—22։)

Բայց երկրորդական տեսութեամբ մարգարէք ևս և Առաքեալք, և Հայրապետք եկեղեցւոյ և վարդապետք՝ կրնան ճարտարապետք, հիմունք և գլուխք ըսուիլ, իբրեւ գործիքք որովք եկեղեցւոյ շինքը գործեցաւ։

Ինդրոյս յարակից խնդրոց և պարագայից վերայօք հետեւեալ գլխոյն մէջ պիտի խօսիմք։

ԳԼՈՒԽ Դ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Եկեղեցւոյ կառավարութիւնը՝ ինչպէս որ նախորդ գլխոց մէջ տեսանք, ըստ սահմանադրելոյ Փրկչին ուսուցանող եկեղեցւոյ սահմողութեանը յանձնուած էր և ո՛չ թէ անոնցմէ մէկուն կամ մէկ քանիին, և կամ ինչպէս պապերը կը սորվրին ըսե-

լու, թէ Ցիսուս Պետրոսին յանձնեց եկեղեցւոյ կառավարութիւնը, պապերն ալ Պետրոսի յաջորդներն ըլլալնուն համար՝ եկեղեցին՝ պապին թագաւորութիւնն է. պապը միայն զանիկայ կառավարելու, ուսուցանելու, դատելու և պատժելու գերագոյն իշխանն է Աստուածային իրաւանց՝ զոր Ս. Պետրոսէն ժառանգութեամբ ունի. կամ թէ ինչպէս անդրալեռնեայք կը հայհոյեն, ի՛նչ որ է Աստուած յերկինս, նոյն է և պապը յեկեղեցւոջ։ Բայց եկեղեցին՝ Աստուածային անգին արեամբ օժտեալ Քրիստոսի անարատ հարսը՝ Բաբիլոնի մեծ պոռնիկը չէ. կը ճանչնայ իւր անմահ փեսային Քրիստոս, հաւատարիմ է անոր ցնահ, թէ՛եւ Բահաղու ամբարիշտ պաշտօնեայք կանչեն կռնչեն նեղելքներ թափելով այս Աստուածային Հարսին գլուխը՝ թէ Ընդմարիտ քրիստոս Հռոմի պապն է (1)։ . . . Սոս-

(1) Այսպէս կը հայհոյէ Իւ[illegible]ն ֆեղէռ զսուած հայհոյութեան գպլոցը՝ երբ ցնզովեալ բերանով. «Քէյ[illegible]ն է հա, իր սրբազան վեհանձնութիւն (այսինքն՝ պապին) [illegible] վրայ։ . . . Բռնավանդակ Քրիստոսի եկեղեցին մէկ թագաւորութիւն մըն է սրբազան Քահանայապետին «ԱՍՏՈՒԾՈՑ ՏԵՂԱՊԱՀԻՆ» իշխանութեան տակ. և թէ հաստ[illegible] Աստուծոյն էս[illegible]ց և ընդհէնէ՝ որ Հռոմի Եպիսկոպոսը, իբրեւ Գերագոյն Եպիսկոպոս՝ Եպիսկոպոսաց և Քահանայից ուղղիչ և կառավար ընդ, և զԵպիսկոպոսները ձանչնայ և հաստատէ. որովհետեւ Աստուած՝ կարգաւորութեան Աստուած է, և յԱստուածային իրաւանց է՝ որ միայ միայնոյ Կաթոլիկէ և Առաքելական եկեղեցւոյ մարմինը մի միայն կառավարութեամբ և ընդհանրական նուիրապետութեամբ մը ամբողջ պիտի բռնուի, հարկաւ կը հետեւի որ նոյն մարմնոյն մէջ հոգեւոր էս[illegible] (այսինքն՝ Աստուածային էս[illegible]ն ըլլայ, և իր պաշտօնը կատարելու հարկաւոր բաներն 'ի գործ դնելու զօրութիւն ունենայ։ . . Վասն զի հրեշտակաց և մարգկան Տէրը մեզի 'ի ծագս երկրի կը խօսի, որն որ «չէ թէ հրեշտակաց Տէրը զանդեցուց իր նոր աշխարհքը» (Եբր. Բ. 5.) իր Եկեղեցին, հապա «զզաւակն Աբրահամու բռնաւ եհատ» (Ես. 16.)

կալի՛ կառավարութիւն, մարդասպարի՛չտ պոռնկութիւն։

Ցխտուս Քրիստոս՝ իւր եկեղեցւոյ կառավարութեան ձեւին և գործելու եղանակին մէջ՝ իւր Առաքելոց և անոնց յաջորդաց թէ՛ ուրոյն ուրոյն՝ և թէ՛ հաւաքական՝ ունեցավ իրաւասութեան և պաշտաման շատին ու սահմանը՝ պարտքերնին ու

Ն յերեւելի ջերմեռանդ դէմքն էր գրած է՝ մեզի անընդհատ աղօթելնելու ։ (Գործք Ա. 1։ 14։ 30 եւն։) — Ուրիշներ ալ՝ ոչինչ ընդհատ ամպարշտութեամբ՝ իրենց առաջ բարբանջած էին. «Ի՞նչ բան է՝ որ սեռանելի եկեղեցւոյն անթիւ անհատներ հոտերը երկրիս վրայ մէկ փարախի մէջ կը ժողովէ. ուրիշը չէ՝ բայց եթէ մէկ հովիւ մը միայն (յ պապը) որ ՀԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՆԵՐԿԱՑԱՑԸՆԷ։ . . . (Ցխտուսէ Քրիստոսի) իւր Առաւուածային անձին՝ որ Աստուած և մարդ էր, ծագեալ սեռանելի ընկերութիւնն ու հաւատքը՝ որ այն ընկերութեան կենդանութիւնն կու սայ։ Բայց հոգւոյ և մարմնոյ միոյ կրկին միութիւններէն հաստատուն ու ամբողջ պահելու համար ՝ընդդէմ մարդ չէ որ ըսելս դժբախտաբար մէկ հրամանին՝ ԻՐ ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ԱՆՁԸ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՑԱՑԸՆԷՐ, և որն որ ԻՐԵՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ էր՝ չէ թէ պարզապես եկեղեցին կառավարելու հարկաւոր իշխանութիւններուն հրամէ ըսել՝ պիտի ըլլար, այլ մանաւանդ անոր հոգւոյն յայտնել ընդունի ըսելս է։ Այսպիսի պաշտօնի ընտրուած մարդը՝ Պետրոսն էր, և ինչ որ Պետրոս Առաքելական ծեռնադրութեան մէջն եղած էր, իր ամէն յաջորդներէն նոյնը եղան . . . ։ (Քրիստոս կ'ըսէ Պետրոսի.) Թէպէտ ես եմ հիմը, որմէ դուրս ոչ ոք ուրիշ հիմ կրնայ գնել, այսու ամենայնիւ դուն ալ վէմ ես, վասն զի իմ զօրութենէս ամրութիւն կ'առնես. և ՝ի՛ր ՝ի՛ր ըսած որ ընդդէմ ՍԵՊՀԱԿԱՆ Է ԻՄ ԲՆԱԾԻՆ ԿԱՐՈՂՈՒԹԵՆԷՍ, ի՛նչպէս որ ինչ ալ ընդդէմ ՀԱՒԱՍԱՐ ընէ մահուընէսութիւնը։ . . . (Պետրոսի պատուէր տրուեցաւ) արածելու և կառավարելու զամենքը, թէ՛ ոչխարները և թէ՛ գառինքը, թէ՛ որդիքը, թէ՛ մայրերը և թէ՛ նոյն իսկ հովիւները, որոնք հովիւ են նկատմամբ ժողովրդեան, և հօտ՝ նկատմամբ առ Պետրոս. ասոնք ՝ի Պետրոս ՝ի դարձան ՀԱՒԱՏՔ ՔՐԻՍՏՈՍ . . . ։ Երանելին Պետրոս՝ որ իր Ամենաբն վրայ կ'ապրի ու կը կառավարէ, ՝ի ընդհ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՝ի

իրաւունքներն՝ սա հետեւեալ պարզ հրամանին մէջ ծրագրեց. «Եթէ մեղսիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա՛ զնա՝ յորժամ դու և նա միայն իցէք. եթէ լսիցէ քեզ, շահեցար զեղբայրն քո։ Ապա թէ ո՛չ լսիցէ քեզ, ա՛ռ ընդ քեզ մի և՝ կամ երկուս. զի ՝ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան։ Իսկ և թէ նոցա ոչ լսիցէ՝

ՀԱՒԱՏՔ ՝ռ՝ն՝ որոնց կ'ըսէր ։ (Թուխա Գ. Աբդ. յԱՌՔԵԼՈՑ Սբ. Գիրքն Պետրոսի ևս. Թարգմ. ՝ի Հ. Ալիքս. Պալճեանէ. եր. 60—62. 87. 46. 51. 61։) աֆատա՛, քննենք մեծ փութով ու ժրութեամբ, թէ դուն ո՞վ ես (կ'ըսէ Բեռնարդոս՝ Հռովմայ պապին,) այսինքն՝ դուն հիմայ ո՞րպիսի անձ կը ներկայացընես Աստուծոյ Եկեղեցւոյն մէջ։ Դուն ո՞վ ես. մեծ Քահանայ, ծայրագոյն Քահանայապետ։ Դուն՝ Իշխան Եպիսկոպոսներու, Ժառանգ Առաքեալներուն. դուն Աբէլ քու նախորդներովդ. դուն՝ Նոյ քու կառավարութեամբդ. Աբրահամ՝ նահապետութեամբդ. Մելքիսեդեկ՝ կարգովդ. Ահարոն՝ արժանապատուութեամբդ. Մովսէս՝ ձոխութեամբդ. Սամուէլ՝ դատաւորութեամբդ. Պետրոս իշխանութեամբդ։ ՔՐԻՍՏՈՍ՝ ՕԾՈՒԹԵԱՄԲԴ։ (Ս. Խրիսոստ. Գր. Բ. Գլ 8։ Տ՛ս՛ և — Գործք, յԱՌՔ. Սբ. Գիր. եր. 185։) Ոսկեբերան Հ. Գէորգ ՝ի Մխիթարեանէն վէննայի. «Ուր որ Սրբազան պապը իբրև Եկեղեցւոյ Գլուխ կը խօսի՝ ԷՐԲ ԱՍՏՈՒԱԾ Է ԽՕՍԻ, ասոր և ընթ։ (Ի վէր. Կարծ. Մխիթ. եր. 127։) Ի նոյն Մխիթարեանէ Եսգութեան Հ. Վրթանէս. «Քրիստոս Տէրն մեր զՊետրոս Առաքեալ երկրի վրայ ՆՇԱՆԱԿԵԼ ԷՐԿՐԻ ՀՈՎԻՒ ԵՒ ՈՐՈՎՀԵՒԵՒ Քրիստոս Տէրն մեր Եկեղեցւոյ հիմն է, անոր համար զՊետրոս Իր տեղը գնելով՝ զինքն ալ անշարժ և հաստատուն հիմ Եկեղեցւոյ դրաւ. նմանապէս որովհետեւ Քրիստոսի յատուկ է իր երկնաւոր իշխանութեամբը կապել ու արձակել, . . . կը տեսնենք որ նոյն ԷՆԷՈՒՐԻՒՆԸ Պետրոսի կը յանձնէ . . . (Ուստի յայտնի կ'երեւայ՝ որ Ս. Պետրոս Քրիստոսէն բոլոր Եկեղեցւոյ վրայ նախնական ու վերին իրաւաբանութիւն և իշխանութիւն առաւ հոգիորպես Քրիստոսի ՏԵՂԸ ՅՈՒՎԱՐԱԿ ՈՐ (Ի հրահանգ Վարդ. Կրն. Մասն Ա. Գլ. Զ. Յօդ. Գ. եր. 166։) — Կ'ըսեմ թէ Հռովմի գահերէցն մեկուն վրայ ալ սա արձանագրութիւնը փորագրուած կայ, և մինչև յայսօր անվնաս ծեացած է.

աստաղքիր յեկեղեցւոջ (հմմ. ըստ յն. Աստաղքիր Եկեղեցւոյ) Ապա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն և զմաքսաւոր։ Ամէն ասեմ ձեզ. զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս։ Դարձեալ ասեմ ձեզ. եթէ երկու ՚ի ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց, զինչ

Paulus III. Pontifex Opt. Maxim. in terris Deus. այսինքն՝ Պօղոս Գ. Ամենաբարին Ամենաբարձրեալ Քահանայապետ Աստուած յաշխարհիս։ Գրիգոր պապին Կանոնագրքին մէջ ըլ (Գէտ. Զ. Գլ. Է.) ասանկ գրուած է. «Չէ թէ մարդ՝ այլ Աստուած է՝ որ կը գործէ զանոնք, զորս Հռոմայ քահանայապետը կը կարէ Եկեղեցիին՝ Աստուածային իշխանութեամբ մը. որ ինքը չէ թէ ըլ մարդ՝ այլ ՃՇՄԱՐԻՏ ԱՍՏՈՒԾՈՑ ինչ է ասոնք։ (Qui non gerit vicem puri hominis sed veri Dei.) Արդեօք անօրէնութեան մարդը՝ որ Աստուած պիտի անուանի և Աստուծոյ տաճարը պիտի նստի, ասկից աւելի՞ հայհոյութիւն պիտի ընէ, ասկից աւելի՞ սրբապղծութիւններ պիտի գործէ . . . Աստուա՞ծ իմ, գո՞ւն պահես քու փոքրիկ հօտդ այս պատահող գայլանէն . . . Հոս կը գտնեմք Պօղոս Առաքեալն Անտիոքեան հռչակաւոր նկարագրութիւնն ալ, տեսնելու համար թէ ալ ատրակոյս կը մնա՞յ բնաւ որ անիկա Հռոմի պապը չըլլայ։ «Նախ եկեսցէ ապստամբութիւնն և յայտնեսցի մարդն անօրէնութեան՝ որդին կորստեան, հակառակորդն հպարտացեալ ՚ի վերայ ամենայնի՝ որ անուանեալ լիցի աստուած կամ պաշտօն. մինչև նստիլ նմա ՚ի տաճարին Աստուծոյ, և յուսացնել զանձն թէ իցէ աստուած . . . Չէ խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ զօրանայ. բայց յայժմ, մինչ ՚ի միջոյ բարձցի որ այժմ պահէ. և ապա յայտնեսցի անօրէնն . . . որոյ գալուստն ըստ ազդեցութեան սատանայի է . . . և վասն այնորիկ առաքիցէ նմա Աստուած ազդեցութիւն մոլորութեան՝ հաւատալ նմա սուտին. զի դատապարտեսցին ամենեքեան որ ո՛չ հաւատացին ճշմարտութեանն, այլ հաճեցան ընդ անօրէնութիւնն» (Ա. Թես. Բ. 3—11։) Աւժանապէս ըսելեն՝ սրբոյն Վիլպրիտի Լիբերիոս մըղրեալ պապին դէմ արձակած նզովքը այս անօրէնութեան խորհուրդը ՚ի Հայս արծարծողներուն գլխուն կը դարձընէ ըսելով. «Նզովա՛ծ եմ դքեզ, Լիբերիոս, (յանձն գոհ թըրձեանի) և քու չար ընկերներդ. երկիւղս կը նզովեմ, երկայն կը նզովեմ դքեզ, մեզաւորդ Լիբերիոս՝ գամբրձեանդ։

և խնդրեսցեն՝ եղիցի նոցա ՚ի Հօրէ իմմէ որ յերկինս է։ Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ՚ի մէջ նոցա։ (Մատթ. ԺԸ. 15—20։)

Հոս ահա յայտնի կ՚երեւնայ որ Ջիսուս Քրիստոս եկեղեցին կառավարելու վերին իշխանութիւնը առանձինն բնաւ և ո՛չ մէկու կու տայ. Ուսուցանող ընդհանուր եկեղեցւոյ կու տայ վերին դատաւորութիւնը, պայն կը սահմանէ անթողնելի առեան, և անոր վճիռին պէտք է անսայ կ՚ըսէ բովանդակ Տիեզերական եկեղեցին։ Եկեղեցւոյ ամենէն Թեթեւ յանցաւորութիւնն ալ՝ ինչպէս է ընկերին դէմ գործուած յանցանքը, հրաման շատ առանձին մէկ Առաքելոյ մը որ դատէ և պատժէ. մը հրամայէ որ նախ գիւր ընկերը խրատէ մինակ եղած առեննին. չըլլայ նէ՝ մէկ երկու վկայներու հետ՝ կ՚ըսէ, որ անոր յանցաւորութիւնն ու անզղջութիւնը վկայութք հաստատուի. եւքէն ալ ՚ի մէջ ուսուցանող եկեղեցւոյ խօսէ, կ՚ըսէ, եկեղեցին Թող զայն խրատէ. անոր ալ անսաստէ նէ՝ յայնժամ քեզ իբրեւ հեթանոս և մաքսաւոր լինի նա. անոր յանցաւորութիւնը դուն առանձին՝ եղբայր՝ դատէ պատժէ ջըսեր. մէկտեղ ժողովուած առեննիդ ես մէջերնիդ եմ՝ կ՚ըսէ, «Որ ձեզ լսէ, ինձ լսէ, և որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ»։ (Ղուկ. Ժ. 16.) երբ որ ձեր ժողովքին՝ եկեղեցւոյ անսաստէ, զձեզ անարգէ, յայնժամ զիս անարգած կ՚ըլլայ, և դուք ժողովով գործեր՝ ոչինչ կապեցէք՝ արձակեցէ՛ք, կ՚ըսէ, և ըսածնիդ սիրտ ըլլայ։

Եւ որպէս զի լաւ եւս հասկցուի թէ իրենց ժողովքին մէջն ալ առանձին ոք վերին դատաւոր, վճռաւոր, հրամանատար, անսխալ ուսուցիչ, գլուխ ևս չէ, կը յաւելու այլուր. «Դուք՝ մի՛ գոք կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ, և ա-

մեներին դուք՝ եղբարք էք: Եւ հայր՝ մի՛ կոչէք ձեզ յերկրի, զի ձեր՝ մի է հայր՝ որ յերկինսն է. և մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր՝ Քրիստոս է» (Մատ. ԻԳ. 8—10:) — Հոս վարդապետ, աստուածաշունչ, հոգիական՝ (պատճառող) նշանակութիւն ունին: Քրիստոս կ'արդելու բոլոր պաշտօնէութեան եկեղեցւոյ, և անոնց է'ն վերին է'ն Ծայրագոյն Իշխանաց Առաքելոց, և որովք Հայրապետաց՝ Եպիսկոպոսաց և Երիցանց, որ բնաւ հեղինակարար (իրրեւ վերին առաջին աղբիւր) վարդապետ՝ աստուածաշունչ հայր անուն չառան մէկուն, ո՛չ ալ բնաւ իրենք կոչուին ան նոյն անուններով. որ է ըսել՝ ո՛չ զոք եկեղեցւոյ իրաւարանութեան աղբիւր, ուսուցիչ, հաւատոյ և բարոյից բացարձակ վարդապետ՝ հեղինակ, անսխալ հայր Աստուածարանութեան ևն կոչեն. վասն զի՝ կ'ըսէ, ասոր պատճառը բնական է, ձեր ուսուցիչը մի միայն Քրիստոս է, ձեր Հայրը մի միայն է՝ որ երկինքն է, և դուք ամենքնիդ հաւասարապատիւ եղբարք էք. ինչպէս որ եղբայրը իւր եղբօրը հայրը չկրնար ըլլալ, այնպէս դուք ալ իրարու եղբայր ըլլալնուդ համար ձեզմէ մէկը ձեզի հայր իշխան չկրնար ըլլալ: — Յովհաննէս Ծործորեցի եւս այսպէս կը բացատրէ Քրիստոսի այս խօսքերը. «(Քրիստոս) ասէ թէ՝ մի զոք կոչէք ռաբբի, զի մի է ձեր ուսուցիչ՝ Քրիստոս. և ամենեքին դուք եղբարք էք, ցի՝ հաւասար ընկերք, և ո՛չ քան զոք աւելի ի՛նչ ունի՝ թէպէտ և գերագոյն իցէ քան զբազումս. է՞ր վասն. զի ո՛չ յանձնէ ինչ դիտէ՝ զոր դիտէ. ըստ Առաքելոյն թէ՝ ո՞վ է Պօղոս, կամ ո՞վ Ապողոս, կամ ո՞վ է Կեփաս, պաշտօնեայք Աստուծոյ, և ո՛չ ասաց թէ վարդապետք: Մանաւանդ զի՝ ո՛չ ի՛ պէտս անձանց, այլ վասն բազմաց ստացան. ուստի յայտ է թէ՝ հաստատուի են՝ ընդ[illegible] ի՛ շնորհաց նորին փարիմ ամացեալք»: (ի Գին-

Մատ. ՆԷՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼՈՑ. (Ի ԲԱՆՆ. ԻԳ. 8, ԵՐ. 485) Ուրեմն զէմ ընդդէմ Քրիստոսի այս վարդապետութեան և հրամանաց հակառակ ամբարիշտ հայհոյութիւն քան մոլորութիւն մ'է որ Պիոս Թ. պապը և իւր վատիկան վերջին ժողովականը հրատարակեցին, թէ պապը Տիեզերական հայրապետ, վերին գերագոյն դատաւոր, անսխալ ուսուցիչ և իրաւարանութեան միակ անպղտոր ակն է. ասկից անդին բաց յայտնի վտարանջութիւն ի Քրիստոսէ գըլխոյն եկեղեցւոյ՝ անկարելի է լինել, և փորր անօրէնութիւն չըլլար՝ թէ որ ասանկ անօրէն վտարանջութիւն մը՝ (իւր գլխովը ժողովականովը և իրենց անօրէն արբապղծութեան հաճ և հաւան գտնուողներովը. Բ. ԹԷՍ. Բ. 10—11.) Քրիստոսի երկնաւոր փեսային մաքուր առագաստը՝ սուրբ հարսնարանը հաւնարել յանդգնի ոք: . . .

Եղաւ արդարեւ ատեն մը՝ երբ Առաքելոց մէջ վէճ ծագեցաւ՝ թէ մէջերնին ո՞վ մեծ պիտի ըլլայ. (Մ-էն. Թ. 32—36, Ղ-Ն. Թ. 46—48.) Քիստոս տղայ մը կեցուց անոնց մէջ տեղը, և անոնց մեծամտութեան փառաքները պատժելով ըսաւ թէ՝ այս տղուն պէս հեղ անկեղծ միամիտ չըլլաք՝ եկեղեցւոյ խոնարհ ծառայները (1) պաշտօնեայները չդառնաք նէ՝ երկինքը բան չունիք ըսաւ. չըսաւ անոնց թէ այս ոք կամ այն ոք ձեր մեծն է, ինչպէս որ հար-

(1) Պատճառանք չկրնալով տանիլ որ Կ. Պոլսոյ Յունաց Պատրիարքն ալ ըստ Հռովմայ պապին Տիեզերա-Հայրապետ կոչուի, կ'ըսեն թէ՝ երբ Յունաց Յովհաննէս Պահաստիղ Պատրիարքը Տիեզերա-Հայրապետ կոչուիլ սկսաւ, Գրիգորիոս պապն ալ սկսաւ այնուհետեւ «Ծ---ց Ծ---ոյ Ա-ր-ն» ստորագրել, ի՛նչ գեղջիկ ծաղրանկար՝ Քրիստոսի պատուիրած խոնարհութեան . . . Կոնգաիներուն գլուխը դնէ՛, ոչ՝ է՛ ըսել, դէր-Քրիստոս դէր Ա-ր---ն կամ դէր-ի-ւ Ա-ր---ն է՛ ըսել, տակն ալ՝ Ծ---ոյ Ծ---ոյէն Ա-ր-ն ստորագրել, Վա՛չ Աւետարանական խոնարհութեանս . . . :

կաւոր ալ էր ըսելը, թէ որ իրաւ ինքը մեծ կացուցած էր զրք։ — ինչպէս նաեւ որդիք Զեբեթեայ՝ մայրերնին միջնորդ բռնելով Քրիստոսէ երբ խնդրեցին անոր աջ ու ձախ կողմերը բազմելու նախապատուութիւնը, Քրիստոս ըսաւ որ ատիկայ ոգւոյ կատարելութեանց փոխարէն Հօր Աստուծմէ վարձք սահմանուած է՝ որոց կատարեալն են։ Եւ տասն աշակերտները կանչելով ողք բարկացած էին որդւոց Զեբեթեայ մեծամիտ խնդրուածոց վրայ, ըսաւ աւետարանը միանդամայն, թէ ազգաց իշխաններուն պէս իշխող տիրող չպիտի ըլլաք դուք իմ թագաւորութեանս՝ Եկեղեցւոյս մէջ, այլ խոնարհ հեզ պաշտօնեայ պիտի ըլլաք աւետարանին։ (Մտթ. ի. 20—28։ Մ-էն. ժ. 35—45։)

Իվերջոյ՝ երբ Յիսուս երկինք կը վերանայր, երկրի վրայ իւր տեղը Եկեղեցին կառավարելու համար վարչութիւն մը փոխանորդ մը ձգելու անհրաժեշտ պէտքն ունենալով, որ ներկայացնող առանձին իշխան ո՛չ զրք կացոյց Եկեղեցւոյ վրայ. ամբողջ Աւաքելոց գումարը վերակացու դրաւ իւր հօտը հովուելու, «Որպէս առաքեաց զիս Հայր և ես առաքեմ զձեզ. գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոս, մկրտեցէք զնոսա . . . ուսուցէք նոցա պահել զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի»։ (Մտթ. ԻԸ. 18—20։) — Քրիստոս կ'ըսէ. Հայրս ինչպէս որ զիս լիակատար իշխանութեամբ և զօրութեամբ աշխարհ խրկեց, անանկ ալ ես զձեզ լիակատար իշխանութեամբ և զօրութեամբ կը խրկեմ ամենքին մէկէն աշխարհ. դացէք բոլոր աշխարհ՝ պատրաստեցէք, Տիեզերական Եկեղեցին կազմեցէք կերտեցէք կառավարեցէք և պահպանեցէք. ես ալ ընդ միշտ՝ ձեր և ձեր յաջորդաց հետն եմ 'ի բարւոք տնտեսութիւն պաշտամանն ձերոյ. և այն փառքը՝ որ Հայրս ինձ տուած էր՝ դիս խրկած առեն, ձեզի տուի, որ միանաք միաբան միաչունչ ըլլաք, և կատարելապէս միութեամբ պաշտէք ձեր պաշտօնը, (Յհ. ժէ. 22—23.) ինչպէս որ ես ալ իմ Հօրս հետ միացեալ եմ, և միաբան կը գործեմք։ (Ա-ր. ԺԳ. 10։) — Որեմն Եկեղեցւոյ կառավարութիւնը անհատ մարդու չէ՝ այլ ամբողջ Աւաքելոց դումարին՝ Որուցանոր Եկեղեցւոյ խորհրդոյն յանձնած է մեր փրկիչը։

Աւաքեալք ալ այսպէս պատուէր առնելով մեր փրկչէն՝ այսպէս վարուեցան միշտ. մեր (Բ. Գլխոյն մէջ) ակնարկեալ Աւաքելական ժողովները ասոր անտարակուսելի ապացոյցներն ու վկայութիւններն են, որք ո՛չ յայլ ինչ՝ այլ Եկեղեցւոյ այս ինչ և այն ինչ պիտոյից համար կը դումարուէին, երբ Աւաքեալք իւր առանձին խորհրդովը՝ ընկերակցովը անբաւական կը համարէր զանձն տնօրինութիւն ընել առայն կամ վճռահատել. մանաւանդ երբ որ մէկուն վրայ հերձուածի կամ հերեսիովսութեան ամբաստանութիւն ըլլար, կամ թէ՝ անուղղայ մոլի մը դատապարտութիւն տալու համար ըլլար։ Ա՛ր այս Եկեղեցւոյ մի միայն ձեռնադրական գէնքն էր (ինչպէս մինչեւ հիմայ է) ըստ սահմանելոյ փրկչին (Մտթ. ԺԸ. 15—18.) անուղղայները կարել Եկեղեցւոյ հաղորդութենէն՝ բանադրանօք, կամ ինչպէս Ս. Գրովք կ'ըսուի՝ սատանային մատնելով, (Ա. Կորնթ. Ե. 5.) և մոլորութիւն ուսուցանող յամառ հերետիկոսներն ինչպէս նաեւ ըմբոստ հերձուածներն նզովելով, (Գ-ղ-ա. Ա. 8—9.) որպէս զի դարմի դան զղջան. որ և յայնժամ դարձեալ ժողովքով կ'ընդունուէին 'ի հաղորդութիւն Եկեղեցւոյ։ (Բ. Կորնթ. Բ. 5—11)։

Ըստ այսմ Պետրոս՝ Յուդայի տեղ ուրիշ Աւաք-

եալ մը ընտրելու հարկը տեսնելով՝ առանց ժողովքի անձին առանձին ընտրութիւն չըրաւ, Առաքելոց ժողովքին առաջարկեց, որ և նա վիճակաւ Մատաթիան ընտրեց։ (Գործ. Ա. 15—26։) Յակովբոս Հայրապետ ըլլալով Երուսաղէմի, իւր վիճակներուն մէջ պօղոսի դէմ եղած գրպարտութիւնները ցրելու դարմանի համար՝ զինքը առանձինն կանչելով այսպէս և այնպէս ըրէ չըսաւ, ժողովք ըրաւ, և ժողովքով անոր դարմանը մտածեցին։ (ԻԱ. 17—25։) Պետրոս իսկ յանձն առաւ ժողովքի մը մէջ ինքզինքն արդարացընել՝ իրեն դէմ եղած գայթակղութեանց համար Երուսաղէմի մէջ, ուր ո՛չ Յակովբոս իրրեւ Առաջնորդ քաղաքին ինքնին՝ և ո՛չ Պետրոս իրրեւ նշանագործ Առաքեալ՝ առանց ժողովոյ չգործեցին։ (ԺԱ. 2—18։) Առանձին հաճութեամբ չէր որ իւրաքանչիւր Առաքեալ ուզած տեղը կ՚երթար աւետարանել. ժողովքով էր որ կ՚որոշուէին առ այն գործ։ Ժողովքով որոշուեցան Սօղոս (որ և Պօղոս) և Բառնաբաս՝ ի քարոզութիւն հեթանոսաց. (ԺԳ. 1—4.) ժողովքով խրկեցին Պետրոսն ու Յովհաննէսը՝ ի Սամարիա. (Ը. 14.) ժողովքով որոշեցին որ Յակովբոս, Կեփաս և Յովհաննէս՝ ի Հրէայս, և Պօղոս ու Բառնաբաս՝ ի հեթանոս քարոզեն. (Գաղ. Բ. 1—10.) ժողովքով Պօղոս Առաքեալ կը հրաւիրէ իւր վիճակներուն մէջ երեւցած անուանի պռոնիկը սատանայէն մատնել. (Ա. Կորնթ. Ե. 1—13.) և Տիմոթէոս կ՚իմացընէ՝ որ Հիմենոս և Աղեքսանդրոս եկեղեցւոյ հաղորդակցութենէն կտրուած են. զորս մատնեցի, կ՚ըսէ, սատանայի՝ որ խրատուեցին չհայհոյել։ (Ա. Տիմ. Ա. 20։)

Բայց եռքերը՝ այլ և այլ ժամանակներ՝ եկեղեցւոյ կառավարութեան մասին մոլորութիւններ՝ ի վեր բերեցան, հերձուածներ ալ եղան, զորս կաթուղիկէ եկեղեցին կը դատապարտէ՝ ի բանից Ս. Գրոց։

Նախկին Տիեզերական Ս. ժողովքներէն ոմանք քանի մը Առաքելական մայր եկեղեցեաց հայրապետներու՝ առաջնութեան՝ գահերէցութեան պատիւ տուած ըլլալով, ինչպէս Անտիոքի, Աղեքսանդրեայ, Հռովմայ, Երուսաղէմի և կ. Պոլսոյ, ասոնց մէջէն Հռովմի պապերը միայն եռքերն ալեան յԱռաւաձայինն իրաւանց ունենալ պահանջել ինչ որ ընդհէ- ժողովոց ընդունած էին. և մինչեւ հոն ալ կանգ չառնելով՝ երբ անօրէն սպանող կայսրներն ալ իրենց թիկունք դառնելով՝ իրր 'ի սկիզբն եօթներորդ դարու՝ անոնց արեւնաչաղաչ ձեռքերէն Տիեզերական հայրապետ (1) պատուանունն ալ չորթեցին, և յաջորդ դարուն մէջ Փիլիպոսէն ալ աշխարհական թագաւորութիւն մը չոպեցին, ալ այնուհետեւ թագաւորներէն ալ վեր բարձրացան, և ըսին թէ՝ «Յայրապետն քահանայապետն (ի՛ պապը) ունելով իշխանութիւն ընկեցիկ առնելոյ զթագաւորս յիշխանութենէ անտի նոցա». և այս իշխանութիւններն արդեամբք ցուցընելու համար՝ արդարեւ թագաւորներ դողացուցին՝ անոնց հպատակներուն իրենց հաւատարմութեան երդմունքէն քակելով, և հրա-

---

(1) Վ.ռնիփակիոս Գ. Հռովմայ պապը Փոկաս կայսրէն ընդունեցաւ զառաջինն այս պատիւը, զորմէ գրեն՝ Պոսիւէ. «Փոկաս՝ որ անօրէն սպանութեամբն ընկեցիկ ընդունեաց զթիառն, պատիւ արարեալ մեծարեր զՍ. Քահանայապետան, և զնորա պատուոյն առաւելութիւն հաստատեր. և այսպէս մարթանք զժողովուրդն դիւրեւ ածել Քանայր». (Ի վեղ. ազգ. Բոսէ. ի վ.ռնիս. Դպր. Ա. Ժամանակ ԺԱ.) Փափազեան իշխանտիոս Վ. «Փոկաս՝ ի սկիզբն եօթներորդի դարուս առեալ եր քահանայապետին Հռովմայ զպատիւ Տիեզերական գլխոյ». (Ի դէպ. Եկեղ. Դար. Է. ՅԳԼ Թ.) Բժշկեան Մխիթար Վ. «(Վ.ռնիփակիոս) այնչափ գերապանծ հանդիսացաւ գովելի արդեամբք յաչս կայսեր Փոկասու, մինչեւ հաւան հրովարտակ՝ թէ քահանայապետն Հռովմայ իցէ գլուխ ընդհանուր եկեղեցւոյ, և ունի Յայրապետն իշխանութիւն՝ ի վերայ ամենայն Քրիստոնէից». (Ի դէպ. պէտ. Հատ. Բ. Գլ. ԿԸ.)

մայելով որ իրենց Թագաւորաց դէմ ապստամբին՝ ՀԱՌՈՒԱԾԱՅԻՆ հրամանաց : (Իքնատ. փափաքեան 'ի պարմ. Եկեղ. Դար ԺԱ. Գլ. Դ.) . . .

Առնք իրենց՝ այս 'ի տուչութենէ ժողովոց և կայսերց ձեռք բերած առաւելութիւններին ՀԱՌՈՒԱԾԱՅԻՆ իրաւանց ցուցընելու համար՝ սկսան ըսել. Քրիստոս զՊետրոս վէմ անուանեց, և եկեղեցին անոր վրայ շինեց, «Դու ես վէմ, և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ» ըսելով. և որովհետեւ պապն ալ Պետրոսի յաջորդն է, ապա պապը եկեղեցւոյ հիմ՝ գլուխ՝ հաստատուն ևս է : — Այլ ո՛չ այնպէս. Քրիստոս «Դու ես վէմ» ևս ըսելով Պետրոսը զօրաւոր վէմ մը կ'անուանէ՝ առաջին 'ի հիմունս Սիոնի, և ո՛չ վէմ անկեան, և չըսէր թէ եկեղեցին անոր անվին՝ անոր ԳՈՅՈՒԹԵԱՆ վրայ կը շինէ. եկեղեցւոյ հիմ՝ անոր փոաթ ըստանոթիւնը կը դնէ իր վէմ, և անոր վրայ կը շինէ զեկեղեցին. երկու վէմ կը ցուցընէ, «Պետրոսը» և անոր տուած «դաւանութիւնը», որոց երկուքն ալ եկեղեցւոյ շինութեան մէջ պիտի գործածուէին. բայց Յունաստանեան «վէմը» «առաջին» միայն պիտի ըլլար 'ի հիմունս եկեղեցւոյ, որուն միակ հիմը՝ «դաւանութիւնը» պիտի ըլլար : Աւետարանի ցուցարկն բնագրին այս երկու վէմերուն վրայ ցուցցած սեռի տարբերութիւնը՝ յայտնապէս կը հասկըցընէ որ Քրիստոս «Դու ես վէմ» ըսած վէմին վրայ չշիներ եկեղեցին. «Դու ես վէմ» ըսած առեն՝ Բեդրոս (Πέτρος) բառը կը դնէ, որ արական է, «և 'ի վերայ այդր վէմ շինեցից զեկեղեցի իմ» ըսելուն՝ Բեդրա (Πέτρᾳ) բառը կը դնէ, որ իգական է. այսպէս « Κἀγὼ δέ σοι λέγω, ὅτι σύ εἶ ΠΕΤΡΟΣ, καὶ ἐπὶ ταύτῃ τῇ ΠΕΤΡᾼ οἰκοδομήσω μου τὴν ἐκκλησίαν». «Եւ ես քեզ ասեմ, թէ դու ես ԲԵԴՐՈՍ, և 'ի վերայ այդր ԲԵԴՐԱՅԻ շինեցից զեկեղեցի իմ». Բեդրոս ըսուած քարին՝ Պետրոսին վրայ պիտի շինեմ չըսեր, Բեդրա

ըսուած քարին վրայ կ'ըսէ, որ ա՛յլ է Պետրոսէն, որ Սիոն կ'ըսուէր : Թողումք ասել՝ որ այդ ցուցական դերանունը որ այն քարին որն ըլլալը ցուցընող ածական մ'է, տիրապէս երկրորդ դէմքը (խօսակիցը) ցուցընող դերանուն չէ՝ այլ՝ երկրորդ դէմքին (խօսակցին) մօտ եղող բան մը ցուցընելու կը դործածուի. ուստի՝ եթէ Քրիստոս «Դու ես Բեդրոս» ըսած Բեդրոսին վրայ «պիտի շինեմ իմ եկեղեցիս» ըսել ուզէր, պարտաւոր էր «'ի վերայ քո» կամ «'ի վերայ Բեդրոսիդ շինեցից» ըսէր :

Բայց թողումք ասիկայ, քանզի Հայրապետը խնամած են զմեզ այս դժուարութենէն. ինքեանք իսկ մեկնած և բացատրած են զայս, և ահա իրենց վերոյիշեալ նիւթերը մէջ կը բերեմք : — Լոնուա Հռոմէական վարդապետը այս Դու ես վէմին մեկնութեան վրայ կաթոլիկէ աւանդութեան բովանդակութիւն մ'ըրած է, յորում եօթնեւտասան հայրեր կը դնէ՝ որ վէմ բառով Պետրոսն են իմացեր, իսկ քառասունէն աւելի հայրեր մեր ըսածին պէս մեկներ են : — Ս. Հիլարիոս կ'ըսէ. « Մի միայն անշարժ վէմ մը կայ, որ է Ի Քրիստոս ինքն, ըր Պետրոս իւր բերնով խոստովանեցաւ ըսելով. Դու ես Որդի Աստուծոյ կենդանւոյ : Այս խոստովանութիւնը իւր մէջ կը պարունակէ ամեն ճշմարիտ ձեռնարկութիւնները, որոց դէմ ըսելիք չեն կրնար ունենալ յաւիտեան և չարախօս հակառակորդք» : (Յաղ. Եպիսկ. Գր. Բ. Գլ. ԻԳ :) Ս. Եպիփան կ'ըսէ. « (Պետրոս) Քրիստոս խոստովանեցաւ Որդի Աստուծոյ կենդանւոյ, և Տէրն պատասխան ընդունեց, 'ի վերայ այդր վիմի անդրդուելի հաւատոյ՝ իմ եկեղեցիս պիտի շինեմ» : (Հերես. 59:) Եւթէս Շնորհալին կ'ըսէ. « Դաւանութիւն ճշմարիտ հաւատոյ՝ հիմն է Աստուածայնոյ տաճարիս որ 'ի մէջ. իսկ գործք բարեաց՝ շինուածն է 'ի վերայ այսր հիմանն, որպէս և Տէրն ղաւա-

նաեւ Քեհանան Պետրոսի եղ որպէս զվէմ՝ հիմն իսկական եկեղեցւոյ իւրում, և զինքն որպէս զշինող, և զընտրելոց իւրոց բարեգործութիւնն՝ որ յամենայն ազգաց իրրեւ զնիւթ շինուածոց, փոխանակ քարւոյ և փայտի, և այլոց պիտոյից» (Ընդհանր. Ընդ. — Հմմտ. Հայոցեաց ալինս:) Դարձեալ. «Շինող էիցըս հաճայնիմ արարածոց 'ի յանգոյից. նոյն չինեցելոց պեկեղեցի վէմդ 'ի քէզ էր քան» (Հմմտ. Եբէ ե. տառ:) Օգոստինոս ալ իւր ցեխս կոլմանց գրքին մէջ ատանկ կը խօսի. «Այս գրքիս մէջ տեղ մը Պետրոս Առաքելոյն հատար ըսած եմ՝ թէ եկեղեցին անոր վրայ շինուած էր իրրեւ 'ի վերայ վիմի. այս խնդրոյ երջանկայիշատակ Ամբրոսիոսի տալից մէջ երկարօրէն երդուած է, ուր ուրացութիւնն յիշեցընող հատուն վրայ խօսելու առեն, կ'ըսէ. հաւը երբ որ խօսեցաւ, եկեղեցւոյ վէմը լացաւ իւր մեղքը: Բայց գիտեմ որ Տէրը ըսաւ. Դուն Պետրոս ես, և այդ վէմին վրայ պիտի շինեմ եկեղեցիս, այդ վէմ ըսելով կը հասկնար այն վէմը՝ զոր Պետրոս խոստովանեցաւ յսսելն. Դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ. անանկ որ այդ վէմն վերահոչեալ վէմը կամ Պետրոսը՝ կը նկարկայացընէր եկեղեցւոյ դէմքը կամ անձը՝ որ շինուած է այն վիմին վրայ, և որ երկնից արքայութեան յաւիտեանք ընդունեց: Եւ յիրաւի չըսաւ, Դու ես վէմը, այլ թէ Դու ես վէմ (կամ Պետրոս.) վէմն ինքը Քրիստոս էր: Պետրոս (վէմ թարգմանեալը) խոստովանելով ինչ որ բոլոր եկեղեցին կը խոստովանի, վէմ (կամ Պետրոս) անուանեցաւ: Այս երկու խնամատարներն ալ որ հաւանական է՝ ընթերցողաց ընտրութեան կը յանձնեմ: Դարձեալ կ'ըսէ. «Չէ թէ ես՝ զոր վէմ» ես, այլ «այդ վէմին վրայ» իմ եկեղեցիս պիտի շինեմ, այն է դաւանութեանդ, կամ դու ես

Քրիստոս Աստուծոյ Որդին ըսելուդ վրայ: Ես ղքեզ իմ վրաս պիտի հաստատեմ, չէ թէ զիս քու վրադ: Մարդոց վրայ շինուիլ ուզողներ կ'ըսէին, Ես Պօղոսեան եմ. Ես Ապողոսեան. Ես Կեփայեան կամ Պետրոսեան (Վիճաբան). բայց որոնք որ ո՛չ թէ Պետրոսի կամ վէմի, այլ վէմին վրայ հաստատուիլ կամ շինուիլ կ'ուզէին, կ'ըսէին. Ես Քրիստոսեան եմ»: — Ապա ուրեմն Պետրոսի անձին վրայ շինուած չէ եկեղեցին, ուստի և չէ նա սկզբնական (արտաքսական, պատմաւորական պատճառ) եկեղեցւոյ. քանզի ան միայն հիմն եկեղեցւոյ Քրիստոս է՝ ըստ Առաքելոյն, (Ա. Կորնթ. Գ. 11.) թէ «Հիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զեղեալն որ է Քրիստոս»: — «Ձէ՛ք եկեղեցի շինուած մարգոյ... եկեղեցիք ոչ են պարտական թագաւորաց, և ոչ արուեստ ճարտարութեանց, և ո՛չ դիւտք խնամատանց... այլ չնորհք են մեծին Աստուծոյ...: Հիմունք նորա եղեալ են 'ի վերայ հաստատութեամբ եղեալ են 'ի վերայ վիմին անշարժութեան, ո՛չ 'ի վերայ երկրի, այլ 'ի վեր յերկինս, ուր ոչ անձրեւք լինանեն և ո՛չ հողմք չնչեն և ո՛չ հեղեղք յարուցանեն. և մեք թէպէտ և մարմնով յերկրի եմք, այլ հաւատով յերկինս եմք շինեալ. ուր ոչ ոք կարէ հասանել յանձեռագործ շինուածն Քրիստոսի»: (Եղիէ 'ի պատերազմն Վարդանանց. տեղեակ Բ... ե:)

Իսկ երկրորդական առումաւք՝ եկեղեցին շինուած հիմնուած է ո՛չ թէ լոկ Պետրոսի վրայ, այլ եւս հաստատեալ Առաքելոց խմբին վրայ. (Յայտ. ԻԱ. 14.) իրրեւ առաջին գործակաց քարոզից հիմնարկութեան Փրկչական եկեղեցւոյ:

Բայց պատերը կը յաւելուն թէ Քրիստոս յետ յարութեան իւրում՝ երիցս սիրոյն հարցմամբ՝ Պետ-

բոսի յանձնեց իւր աչխարհն ու ֆառները, այսինքն հովիւնին ու հօտը (1) միանդ ամենայն, իւր տեղը ւիուլի միջոցաւորդ հրամանատար և դլուխ կարդելով պնա Եկեղեցւոյ։ Սակայն և այս սխալ և հակառակ է Ս. Գրոց բուն իմաստին։ Եթէ՝ ուան որ Հարք Եկեղեցւոյ ընդհանրապէս առնելով այս երիցս սիրոյն հարցմանէ Պետրոսի երիցս ուրացութեանն քաւութիւնը կ'իմանան. ինչպէս Շնորհալին կ'ըսէ՝ ի ձիսուս Որդին. (Ի բան հաւատոյ խոստովանիմ Տող 1269—1280։ Ե- ՀԱԳԲԵՐՏ. Պր. Գ. Տող. 357—340)

« Դարձեալ յայտնի ապացուցանի Ա. Ժողովին Տիբերիական

---

(1) Պապական մեկնչաց և վարդապետաց՝ Հրիստոսի պատուած այս աչխոյ և ֆառն բառերուն մէկական բուռ խորհուրդներն ծպտական է չե՞ս։ Հանգի աչ Ս. Գրոց, ա՛չ ալ առնելին ատոնցմէ մատնեցպատութեանց մէջ՝ աչխոյ բառը հովիւ, ——ընդդէմ, էնոն նշանակութեամբ գործածուած կայ բնաւ։ Տես ինչ կ'ըսէ Մալաքիայի ԺԷգատիքը որուն վրայ վստահութիւն ունին Հռոմէական աստուածաբանք. « Նոյնպէս վիճաբանութեանց հարկ չկայ խնամելու համար թէ ինչո՞ւ Հրիստոս ֆառ և աչխոյ բառերը գործածեց. ծալու արժանի է ատոնց վրայ նոյնպէս կամ բարակ դիտութիւններ ընելը. որովհետև երկուքն ալ միևնոյն իմաստն ունին, և սարակոյս չվերցներ։ (Ի դէմ. Յ-Ի. ԻԱ. 30։) Բայց վարիանելով ալ թէ Հրիստոսի այս խոսքին մէջ աչխոյ բառով հովիւներն իմացուին, մեծ անտեղութիւն մը երեւան կու գայ. որով Հրիստոս ըսել ուզած կ'ըլլայ թէ՝ աչխոյքդ կամ հովիւներդ՝ որ պատրաստ արածելու պաշտօնով իրկած եմ, գառներին երկու անգամ առնել արածելու (այսինքն՝ ուսանելու) կարօտ են. քանզի Հրիստոս միանգամ միայն « արածեա՛ աչխոյս իմ» կ'ըսէ, բայց երկու անգամ « արածեա՛ ըռնխոյս իմ» կ'ըսէ։ Ուրեմն Հրիստոս իւր գառներն արածելու պաշտօնը անտեղի աչխոյներս (հովիւներս) կը յանձնէր, որք գառներին առնել կրնային պատրաստակ կարօտ էին հովուելու . . . . Իրա՞ւ Առաքեալք հասարակ ժողովրդեն կրկին անգամ առնել ազգ՞ա և առնելու կարօ՞տ էին . . . . Վա՛յ պատուոյ զուտ անցանոյն . . . ։

« . . . . . »

« Զվերտրս երիցս հարցանելով, Զուրացութիւնն քաւելով »։

« Որ երրակի Աստուած Բանին Հարցանելով զո յետ ճարին,

« Զուրացութիւնըն վերուին Բժժշկեցեր իսկ Պետրոսին »։

Ս. Սահակ Հայրապետն ալ մանրանց Եկեղեցւոյ բերանը կու տայ հետեւեալ Շարականը. « Այսօր պիտի հաւատայ չարժեալ փորձողին խոստովանութեան մարդս, առ՝ ի քէն թողացուցեալ զմարդկային տկարութիւնս յանդիմանելով. և առ յոյս դարձի ձեղաւորայդ, որ դառնապէս արտասուելովն ընկալաւ՝ ի քէն երիւք հարցմամբ սիրոյն վերից ուրացութեանցն պրժշկութիւն »։ (Կ-ն. Մեծի Ո-ՒԲ-Ի-ն՝ Ի հնչածոյն։) Յոյժ բնական ալ էր Հրիստոսի այս սիրոյ հարցումը. վասն զի Պետրոս իւր Տիրն ուրանալովը իւր Առաքելական պաշտօնն ալ ուրացած և անկից ինկած էր, վասն որոյ երբ որ՝ ի կանանց լսեցին Առաքեալք՝ որ Հրիստոսի մարմինը գերեզմանին մէջ չէր գանուէր, Պետրոս յոյժ դանդաղութեամբ կ'երթար գերեզմանը, (Յ-Վ. Ի. 4.) անտարակոյս Հրիստոսի աչակերտութենէ և Առաքելութենէ ուրացուած համարելով զինքն, և անոր համար ալ Հրիստոս յատկապէս պատուիրեց Մարիամայ՝ որ իւր յարութեան աւետիսը Առաքելոց տալէն զատ՝ յատուկ Պետրոսին ալ աւետէ, և ըսէն անոր՝ որ միւս Առաքելոց հետ Գալիլեա երթայ և գինքը տեսնէ։ (Մ-ՐԿ. ԺԶ. 7։) Ուստի և Հրիստոս իւր աչակերտին երիցս ուրացութիւնը ուսաի և Առաքելութենէ անկումը բժշկելու համար՝ երիցս հարցուց գինքը սիրել, և երիցս պատուիրեց՝ որ յապաղցոյց սիրոյն առաքելութեան պաշտօնն առանձնէ և գործով կատարէ։

Ե· Բայց թէ որ քիչ մը աւելի ևս խորը մտնել ուզենք այս խօսքին իմաստին, յարակից պարագայներն՝ նախընթաց և հետեւորդ խօսքերն ալ հաշուի առնելով՝ ըստ ուղիղ կանոնաց մեկնութեան՝ մէկ ուրիշ իմաստ մըն ալ երեւան կը գայ նոյնչափ ճշմարիտ, որչափ ճշմարիտ է երից ուրացութեան քաւութեան իմաստը՝ զոր կը տեսնեն վարդապետք եկեղեցւոյ· և ահա այս է ըստ ենթ· Պետրոս առաջին անգամ Քրիստոսի աշակերտուելէն ետքը՝ որ առնն Յիսուս անոր անունը փոխեց, (Յ֊ի֊ Ա· 35—42·) նորէն ձգեց զՅիսուս և դնաց ձկնորսութեան· Յիսուս վերստին դիմքը կոչնց յառաքելութիւն՝ երբ ձկնորսութիւն կ'ընէր իր ընկերներուն հետ, գալիլեացւոց ծովուն եզերքը, և քանի որ այսուհետեւ ձուկ բռնելու տեղ մարդիկ որսաս՛ի կեանս· (Մ֊ա֊Ր· Գ· 13—20· Մ֊ու֊ Ա· 16—17· Ղ֊ու֊ Ե· 2—11· Տե՛ս նաև Յ֊կ֊Բ· Դ֊Ր· Մ֊ո֊Ր· Ձե· ԺԹ· Յ֊ա֊մ֊ա֊ռ֊ա֊ծ· Յ֊ա֊ն֊ն֊ա· Յ· նաև) Բայց Քրիստոսի յարութենէն ետքը Պետրոս վերստին ձուկ որսալու դացած ըլլալով իր ընկերացը հետ՝ Յիսուս վերստին անոնց ծովուն եղերքը երեւաւ, իրենց հրաշքով շատ մը ձուկ բռնել տուաւ, և այն նոր բռնած ձուկը ուտելու նստած տեղնին՝ հարցուց իրեն երից թէ կը սիրե՞ս դիս, և վերստին՝ արածէ՛ իմ ոչխարներս ըսաւ· որով յայտնի կ'երեւայ թէ՝ Քրիստոս ըսել կ'ուզէր թէ՝ եթէ դիս կը սիրես՝ ձուկ մ'արածեր, գնարդիկ արածէ· Եթէ այս իմաստը չտանք Քրիստոսի երից սիրոյ հարցման և պատասխանուն, բոլորովին անիմաստ կը մնայ այն խօսքին ետքէն գրուցած սա խօսքը· «Ամէն ամէն ասեմ քեզ· դի մինչ մանուկն էիր՝ անձամբ անձին գօտի ածէիր, և երթայիր ու՛ր և կամէիր» · (Յ֊ովհ· ԻԱ· 1—19·) որ ըսել է՝ թէ դու ասկից յառաջ տղայ ըլլալով դեռ քու կամքդ մէջ՝ քու սիրոյ պարտաւորու-

թեանդ մէջ կատարեալ չէիր, ինքնիշխան ըլլալ կ'ուզէիր, ինքիր գլխուդ ուզածդ կ'ընէիր (անձամբ անձին գօտի ածէիր,) և շատ անդամ դիս կը ձգէիր ուզած տեղդ կ'երթայիր ձուկ որսածելու· երէցոյէ չ' և կամէիր· բայց թէ որ դու դիս իրաւցընէ կը սիրես, այսուհետեւ ձուկ մ'արածեր, ոչխարներս արածէ: Ուրեմն երից սիրոյն հարցմամբ Քրիստոս Պետրոսի երից ուրացութեան միանգամայն երից իւր Առաքելական պաշտօնը արհամարհելով գինեա ձկնորսութեան զբաղուելուն, ձկնորսութիւնը իր Առաքելական պաշտօնէն աւելի սիրելուն յանդիմանութիւնն էր կ'ընէր, և ո՛չ այլ ինչ: Աչք ունեցողը զա՛յս կը տեսնէ Աւետարանաց մէջ:

«Եւ տայ քեզ պետականս աղքայութեան երկնից իսօքն ալ մէջ կը բերեն պապերը և կ'ըսեն թէ՝ Քրիստոս երկնից աղքայութեան բանալիները Պետրոսի տալով՝ Պետրոս եկեղեցւոյ վերին իշխան գլուխ և հրամանատար կարգեց: — Եւ այս ուղղակի հակառակ է վերը յառաջ բերուած եկեղեցւոյ կառավարութեան Աստուածադիր ծրագրին· ուրեմն բոլորովին Քրիստոսի դիտմանն ներհակաբար մը կ'իմանան պապերը, և ուրիշ բան է որ կ'ըսէ Քրիստոս: Եւ արդարեւ՝ Քրիստոս չ'ըսեր «տուր քեզ պետականս», այլ «ՏԱՅ» կ'ըսէ· (Մ֊ա֊Ր· ԺԶ· 19·) ուրեմն ատ ժամային բան մը չտուաւ, խոստացաւ միայն· և կը տեսնենք որ ետքէն Պետրոսի և միանգամայն՝ թէ՛ Պետրոսի և թէ՛ իւր ընկերաց՝ առաքելոց վիճակաւորն տուաւ· կապէք նէ կապուած՝ և արձակիք նէ արձակուած ըլլայ ըսելով: (Ա֊ր֊Ք· ԺԸ· 18·) — Ինչ էր ուրեմն Քրիստոսի ատ տուրքն Պետրոս Քահանայապետութեան տալու խոստումը· — Ա֊ռ֊ա֊ջ֊ի֊ն֊ո֊ւ֊թ֊ի֊ւ֊ն՝ է հաստատուն չափ կոչմն՝ յորում Քրիստոս տասներկուքն ներըը հաստատեց· (առաջնութիւն կոչմն՝ կ'ըսեմ,

-ման Յերուսաղէմի, և ո՛չ մեծապատուութեան կամ նախիմխանութեան. իրրեւ աւուրբք յառաջ կոչեցեալ ՚ի ձեռնադրութիւն, յոր կոչեցան յետոյ երկոտասանքն միահամուռ:) Առաջնութիւն եւս ՚ի քարոզութեան. այս ալ՝ ըստ Ս. Օգոստինոսի՝ (տոմ. 316.) Որոգինեայ՝ (՚ի Ս. Ցովհ.) և Կիպրիանոսի՝ (՚ի Թղթ. 31. առ կոռնիլ.) Պետրոս այնչափ առաջնութեան ունեցաւ Առաքելոց մէջ, զի ընդ նմա ելանել ՚ի Հրէաստան Կոռնելիոսի՝ (Գործ. ժ. 28—48.) որ է ըսել նա առաջին անգամ՝ յառաջ քան զԱնդրեասիկիոս իւր՝ բացաւ երկնից արքայութեան դուռը Հրէից և հեթանոսաց: Այս է՛ր ահա Քրիստոսի առ սուրբն Պետրոս կանխաւ խոստացած բանալիները, որոց հայրապետութ ալ կը վերկայեն՝ թէ բոլոր Առաքեալներն ալ իրեն պէս առած են ՚ի Քրիստոսէ: Ոսկեբերան կ՚ըսէ. «Զինո՞ր տայր (Քրիստոս) միականն աշակերտացն, եթէ շէին պէտք դասելոց, ապա ամենեքեան խոստանք ինչ իցեն, և զաւր առնն գիշխանութիւնն կապել և արձակել...» (՚ի Մեկն. Մատթ. ձռ. ի՛) Ս. Լուսաւորիչ. «Եղեն հիմունք Առաքեալքն, և առին զշնորհս քահանայութեան և մարգարէութեան և Առաքելութեան...: (Քրիստոս Տէրն մեր) զիւրաքանչիւրն եւ ՚ի նո-

նոյն, զի ինքն իսկ Աստուածորդին Աբրահամ մեծատուղեցն . . . » (Ագաթ. պատ. վէնետ. եր. 340:) Ծորձորեցին, «(Քրիստոս) զայս (զքանն ընդ Կոդնեյ+ ևս) Պետրոսի ասաց նմա, և ասա երկրորդէ, զի ՚ի նմա ձայն, այլ ՚ի ԱՄԵՆԵՑՈՒՆ ղեկտուելոցն ընտրեալ է, և որք յաջորդք նոցա կարգեալք են յեկեղեցի»: (՚ի Մեկն. Մատթ. Շնորհ. ՚ի բանն ժԸ. 18. եր. 387:) Նարեկացին. «Զրնաւորութեան վեհին բարձրութեան ընտրեալ էիցէ+ . . . պետք և գլխաւորք . . . : Դիտապետ երկնաբնակք . . . այսպիսիք և այսոքիկ առաքելոյն վստահ ձերում սիրամիր գերխաւորութիւնք»: (՚ի Նեբրոնէ հոմերէն Ա-ոտ:) Սարգիս Շնորհալի». Որպէս նա (Հայր) ունէր Առաքեալս զնարդարեսն՝ պրես և ընտր Հոգւովն սրբով, նմանապէս և Որդին զառաջեալսն), յորս միշեալ և ասէ. Ա՛ե՛ք Հոգի սուրբ. զնոսա և զաշակերտսդ այն պատիւ քան զնարդարեսիցն տալով ոչ՝ դնէ՞ն որ-տորութեան երկնից»: (՚ի Մեկն. կոռն. Թղթ. Ա. Պետ. ձռ. Ա. ՚ի բանն Ա. 1:) ևս ևս ևս:

Պատերը երկնից մոլորութեան իրրեւ վտառ մէջ կը քշեն նաեւ Քրիստոսի առ սուրբն Պետրոս ըսուցած առ խօսքը. «Ամե՛ն Ամեն, ասէ Աստուանայ ընդ քեզ խաբրաձել իրրեւ ղորեան. այլ ես աղաչեցի վասն քո, զի մի՛ պակասեսցին հաւատք քո. և դու երբեմն դարձեալ և հաստատեացես զեղբարս քո»: (Ղուկ. ԻԲ. 31—32.) և կ՚ըսեն, թէ Քրիստոս Պետրոսի համար կ՚աղաչէ որ անիկայ անսխալ ըլլայ (նաեւ ՚ի յաջորդս իւր), անոր հաւատքը չպակսի, և իւր Առաքելակից եղբայրները (եւս և ՚ի յաջորդս իւր և ՚ի յաջորդս նոցին) հաւատքի և վարդապետութեան մէջ հաստատէ իրրեւ զլուխ նկեղեցւոյ, և դանոնք մոլորութենէ պահէ իրրեւ անմոլար վարդապետ իրաւարանութեան, ևս: Այլ ասիկայ՝ Քրիստոսի դրուցած խօսքին պարզ իմաստին

ալ ճակատ առ ճակատ հանդիպակ է, և պատկերը անճառելի իրենց մեղսութիւնն իրենց իսկ ձեռքով խայտառակելու համար թէ որ Ս. Գիրքն փառս միայն մեղայինն, ասկից աղէկը՝ ասկից աւելին չպիտի գտնէին: Գրիաոս կ'ըսէ, «Եւ դու երբեմն դարձիլա. ինծո՛ր ալ հասկընանք այս խօսքս, ա՛ռ առաքեալս չվերցընէր որ Պետրոսի միայ գուշակութիւն մը կ'ընէ, թէ անիկայ երբեմն պիտի սխալէր, երբեմն պիտի մոլորէր: Երբեմն պիտի մոլորէր՝ որ երբեմն ալ գառնար. չէ նէ՝ երբեմն ուղիղ ճամբան քալելէն ետքը՝ երբեմն ալ ուղիղ ճամբայէն պիտի դառնար յանուղիղ ճամբան, ի մոլորութիւն: Որ դի ալ դարձընենք՝ հարկաւորապէս այս իմաստը դէմերնիս կ'ելլայ, ուրիշ իմաստ չկայ ամենևին. պիտի մոլորէր Պետրոս: Պապականք՝ կ'ուզեն Պետրոսի միայ վկայեն Գրիաոսի այս խօսքս՝ կ'ուզեն անոր Ա՛ռաւելն, անոր յաջորդներն ու աթոռակալներն ալ միևնոյն առնելով, սա պայծառ կ'երեւնայ որ Գրիաոս կ'ըսէ թէ ո՛չ Պետրոս ո՛չ ալ անոր յաջորդները՝ թէ որ Հռոմիոյ պապերն են նէ՝ քանի՜ միևն ալ անսխալ չպիտի մնան. անսխալ չեն, պիտի սխալին. ԵՐԲԵՄՆ Ի ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԴԱՌՆԱՆ կամ ԵՐԲԵՄՆ ՑՈՒԳՂՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԴԱՌՆԱՆ. «երբեմն պիտի սխալին» — «երբեմն անսխալ չեն» — «երբեմն անսխալ չպիտի ըլլան»: Ապա ուրեմն՝ Գրիաոսի «Եւ հաստատեացես զեղբարս քո» ըսելն ալ՝ ըսել չէր թէ քու Առաքեալներդ ի յաջորդս իւրեանց պիտի մոլորին, և դու ի յաջորդս քո՝ զանոնք ուղղափառութեան պիտի դարձընես և ի նոսին պիտի հաստատես, այլ խօսքին նախընթաց կտորին հետ առնելով ըսել էր թէ դու պիտի մոլորիս՝ ուրացութեամբ, առաքեալկից եղբարդ ի քեզ պիտի գայթակղին, այլ դու իմ աղօթիս շնորհիւը ծուղակն այն խոտոր չպիտի կոխանցընես

հաստատջդ, հաստատդ չպիտի պակսի, անդղրուիեան մէջ չպիտի կորսուիս, պիտի դառնաս նորէն ի խոստովանութիւն, եղբարցդ քու վրադ ուրուած գործարները պիտի չիմակս, կատաղներին պիտի տարտամես, որպէս նորէն քու Գրիտոնէութիւնդ վրայ անոնց հաստատելու պիտի հաստատուիս: (Ոսկիբերան ալ Գրիտոսի այս խօսքը այսպէս կ'իմանայ. տե՛ս ի Մատ. Ճա. 32:)

Արդ ասոր իրաց ալ կը տեսնենք որ այնուհետեւ Պետրոս սխալեցաւ երիցս երդումնովք ուրանալով և նզովելով վերջ Տէրը և վարդապետը. (Մատ. ԻԶ. 69—75.) անկէ չետոյ ետքերն ալ իւր առաջնորդաները կատարելութեան մէջ դիտեց, երբեմն՝ ի փնաչ ի ճշմարտութիւն Աւետարանին, սրբեալ ինձ էր: Ես չեմ ասս ըսողը, ահա՝ Պողոս որ ինքն կը պատմէ. «Յորժամ եկն Կեփաս Անտիոք, ընդդէմ դարձայ նորա, քանզի Գ.Ո.Գ (Յունարէն բնագրին մէջ այս Գ.Ո.Գ-ն ալ չկայ.) ՍՏՈՏԵԱԼ ԻՄՆ ԷՐ. քանզի մինչչեւ եկեալ էին ոմանք առ ի Յակովբոս, ընդ հեթանոսս ուտէր անխտիր. իսկ իբրեւ եկին, զառանձն և զսրտիկր զանճն, երկիւղեալ յայնցանէ որ ի թլփատութենէ անտի էին. և հեղձասուքեցան ընդ նմա և այլ Հրէայքն. մինչեւ Բառնաբաս անդամ խռնաբերեցաւ ի նոցա կեղծաւորութիւնն: Այլ իբրեւ տեսի, թէ ո՛չ ուղիղ գնան ի ճշմարտութիւն Աւետարանին, ասեմ ցկեփաս առաջի ամենեցուն. եթէ դու որ Հրէայդ ես՝ հեթանոսաբար և ո՛չ Հրէաբար կեաս, պիտ՞րդ տեսլեաս հեթանոսաց լինել Հրէայն . . . .» (Գաղատ. Բ. 11—16.) Ս. Օգոստինոս Պողոսի այս պատմած Ս. Պետրոսի սխալման համար այսպէս կը գրէ. «ՁՍԽԱԼՈՒՄՆ որ յայտնապէս ընտրեալ՝ ո՛չ օգուտ էր յանդիմանել ի ծածուկ. (Աւետիսեան Հ. Գաբրիէլեան ու Գ. Հ. Ե Բերդ դպ. ի Տիմ. Ընդ. Պող. ի նոյն բան. Գաղատ. Բ. 12. Հատ. Բ.) և Հերոնիմոս կ'ըսէ, թէ

«Պետրոս ու Հռոմէական անխոնջութիւն»։ (Ընդդեմ Պեղպիոնց. տես՝ Լմմջ բերէ և Հ. Գաբրիել՝ ի նմին տեղւոջ. Հատ. Բ. եր. 546։)

Դարուց երկար ընթացքին մէջ Պետրոսէ անխոնջ յաջորդները եմ ըսել պահերնէն՝ ենթադրելի իսկ առաջ՝ Աթոռն խոցած տկնդին անքա՛ր՝ ի հառաջս մոլորած ոխալած երեսուն քառասունէն աւելի պապերու ոեւ ցանկերը աչքէ հեռու չեն, բարուց մէջ ոխալողները ամենեւին չնկատելով։ Անտեղի է թէ ոչ ոմանք՝ ի չարամիտ պապականաց՝ այն մարդկօրէն վրիպանաց մէջ լինող եղող պապերուն մոլութիւնները ցուցընելնուս համար զմեզ պրպտտել չարչարժարին, թէ երկնից պապերն անսրպելու նախատելու ելած ըլլաք. քա՛ւ թէ երբէք բերանիս առնելիք այս որ և այն ոչ պապին այս ինչ մոլութեան և այն ինչ մոլորութեան մէջ լինալը թէ որ անունք «մենք Աստուծոյ պէս անսխալ ենք» ըսած չըլլային, վրանին աստուածանալու չափ ժպրհութիւն առած՝ մարդկային բնութենէն դուրս վազած չըլլային. քանզի քաջ իսկ գիտեմք որ անոնք ալ հասարակ մարդկութեան վանգուածէն են, և Աննային ու կայիափասի պէս՝ որ Մովսէսի Ահարոնի յաջորդներն էին՝ կրնային մոլորիլ, կրնային պիղծ ուրանալ, կրնային զայն դատապարտել, կրնային իսկ կռապարիշտ դառնալ. Մարկիոնիանոս պապին արկածը ցաւագին պատկերն է վիճակամոյն և ապացոյց աւաղելի տկարութեան մարդկայնոյ՝ պապից։ Մենք այն մոլորեալ պապերուն մէկ քանին միայն կը նշանակենք՝ յապացոյց մեր առաջարկութեան ճշմարտութեանը, պապական մատենագիրներէ քաղելով։ — Եւեբիանոս կամ Վիկտոր նախ Մոնտանեան հերետիկոսութիւնն ընդունեց, ետքն դատապարտեց։ Լիբերիոս՝ Արիոսական հերետիկոսութիւնն ընդունեց և Աթանասի սարսափութիւնն սորսպ-

րեց, ետքէն դերքեց զրաժնելը։ Փելիքս նոյն Արիոսականութիւն կամ Կիսարիոսականութիւն ունէր, ետքէն մերժեց։ Զոսիմոս՝ Պեղագիոս և Կելեստիոս հերետիկոսներուն մոլորութիւնները եկեղեցեաց ընդունել տալու ամեն ջանք ըրաւ, պիրեր ալ դրեց Աֆրիկեացւոց եպիսկոպոսաց, բայց ետքէն դատապարտեց զանոնք։ Վիգիլիոս՝ Եւտիքեսականութիւնն ընդունեց, Քալկեդոնի ժողովն և ի Քրիստոս երկու բնութիւն լսողներն նզովեց, բայց ետքը այս զրաժներուն հակառակն ըրաւ։ Ոմիզդ՝ Ակեմետականց մոլորութեան մէջ ինկաւ՝ «մին Երրորդութենէն չարչարանալ՝ ի մարմին» ըսելը մոլորութիւն քարոզելով. Յովհաննէս Բ. ալ սորա հակառակ՝ «մին Երրորդութենէն չարչարուիլ՝ ի մարմին» ըսելը ուղղափառական քարոզեց։ Ոնորիոս Ա. Միակամաղաւան էր յայտնապէս, զոր Աղաթոն՝ Ա. Պօլսոյ Գ. Ժողովին մէջ նզովեց ու բանադրեց. Յովհաննէս Գ. եւս՝ Աղաթոնի հակառակ ուղղափառական վճռած էր Ոնորիոսի ու Սերգիոս հերետիկոսութեան գրած գլուխը։ — Մաքսիմիանոս Զ. փորձողաս պապը գերեզմանէն հանեց Տիբերիս գետը նետել տուաւ իբրեւ նզովեալ. Ռոմանոս և Թէոդորոս Բ. դատապարտեցին զՄաքսիմիանոս, և զՓորմոզոս վերստին Տիբերիսէն հանեցին փուռաւոր չիրսի մը մէջ հանդուցին. Յովհաննէս Ա. ալ Մաքսիմիանոսի վճիռները նանրացոյց և իբրեւ մոլորական այրել տուաւ. Յովհաննէս Իզ. պիղծիատոս Հօր Աստուծմէ վեր կը դասէր, հոգւոց երանական Աստուածութիւնը կ'ուրանայր. Յովհաննէս Իգ. դատապարտեցաւ Քոսթանցայի ժողովին մէջ՝ իբրեւ խռովիչ Աւաքելական Աթոռոյն, զօշաքարշ, վատնիչ եկեղեցական ստացուածոց եւն։ Անաստասիոս Ա. ժողովով մը Պեղագիոս և Կելեստիոս հերետիկոսները ուղղափառ դատեց, ուրիչ ժողովով մը զա-

նոնք դատապարտեց: Անիմակիոս Ը. պատապարտեցաւ կղեմէս Ե. և Բենեդիկտոս ԺԱ. պապկրէն. Անիմակիոս է. ալ Բենեդիկտոս Զ. և Յովհաննէս ԺԴ. պապերը ապտնենալով պապ ըլլալուն համար նկոմունեացաւ Բենեդիկտոս է. պապէն. Քո՛ղ «անարժան անձամբ՝ ժանկարարոյ գնացիք» կոչելով և պատերազմելով պապութիւն ընող Բենեդիկտոս Թ.ը, այլ և այլ պապերէ և ժողովքներէ բանադրեալ կղեմէս Գ. և Գրիգոր Ը. պապերը, Գրիգոր ԺԲ. և Բենեդիկտոս ԺԴ. ներքնատան՝ և ներկայիս խաւսվող պապերը, պատրիարքաց պատերազմական Յուլիոս Բ.ը, պատկերաց տէր եղող և անձամբկեալ մոլորութիւններ ունեցող Աղեքսանդր Զ.ը, և ուրիշ ասոնց նման չատերը: (Պատմ. պիւղ. Գոլըճեան. Հատ. Բ. եր. 211. 307—312. 406—407: Պէսարդ. Ապոստ. Հատ. Ա. եր. 120—121. Հատ. Բ. եր. 58. 85—87 Պոխե 'է վեր. ազգ. տէր վիէն. Դպր. Ա. ժամիկ. ԺԱ. եր. 104. 124. 127: Հ. Մինաս Բժշկեան 'է պատմ. Սբոշ Հատ. Ա. եր. 602—622: Հատ. Բ. եր. 40—84. 102—104. 172—380: Փոխոլեան Հ. Իգնատ. 'է պատմ. եկեղ. Դար. Զ. Գլ. Գ: Դար է. Գլ. Դ. ե: Դար թ. Գլ. ԺԲ: Դար ժ. Գլ. Ա: Դար ԺԴ. Գլ. Ա. Ը: Դար ԺԵ. Գլ. Բ. Գ: Դար ԺԶ. Գլ. Բ. Դ. Ե. Զ. եւն:)

Պիտ թ. պապը սկսաւ պապեր մոլորած տեսնելէն յետոյ՝ զարձեալ իւր վատիկանեան ժողովքովը իրրեւ մեան հաւատոց վճռեց թէ պապերն անսխալ են. աղո՛ր անսխալութիւն. բայց իւր նախորդները՝ Հռոմի պապերը՝ յորոց ժառանգաբար կ'իջնար իրեն իւր իշխանութիւնը, բացէ 'ի բաց կը խոստովանին՝ թէ էքնի անսխալ չեն, ԿԱՐԵԼԻ է ՈՐ ՍԻՄԱԼԻՄՔ կ'ըսեն, յորոց են Լեւոն Դ. ('է կանէնէ պաշտօն պատմ. դաս. 2. խ. Դ:) Ինոսվիկենտիոս Դ. ('է քան 2. 'է վերոյ նոսիքոդեմ. տնոյպեսո.) կղեմէս Դ. ('է հրովարտակն գոսեալ 'է 1351 Դեկ. 7.) և Գրիգոր

ԺԱ. (Ի կրակ.). Պիւլուարտալ կը վկայէ՝ որ այս պապերը իրենց սխալական ըլլալնին խոստովանած են: (Ապոստ. Հատ. Բ. եր. 87:) Ապա ուրեմն Պիոս Թ. ի իշխանութիւնը կամ իւր նախորդներէն (ուստի և Ս. Պետրոսէն) չէ, ինքը Ս. Պետրոսի յաջորդը չէ, և կամ չէ նէ Պիոս ա՛ւսա կը խոսի կոր, ևմ՛ծ և անաստուած սուտ մը կը վճռէ կոր, և վատիկանեան ջողջորթի ժողովքն ալ անոր ամբարիշտ վճռոյն թիկունք կու տայ կոր . . .:

Երկու խօսք եւս Պատթելոյ կառավարութեան եղանակին վրայ խոսելով կնքեմք այս գլուխը: — Ս. Պետրոս երբէք անսխալութեան ևմ՛ծութեան պնսաւորութեան հեղինակութեան պահանջմունք մը կամ գործք մը ցուցցած չէ տեղ մը, ո՛չ ալ Գործոց Պատթելոյ պատմութեան մէջ՝ և ո՛չ այլ ոչ Պատթեալ անոր ասանկ մէկ ցոյցը պատմած չեն: Ժողովոց մէջ՝ բնա՛ւ մէկ անգամ նախագահ նատած չէ՛. բնա՛ւ մէկ անգամ խնդրոց վերջին դատաւոր եղած չէ՛. ն՛ս կը վճռէ, ես իշխանէ կը՛պէմ ըսած չէ՛, ինչպէս որ ըսաւ Յակոբոս իւր թեմին մէջ եղած ժողովոյն մէջ. որ և այնպէս բոլոր ժողովոյն միաբան հաւանութիւնը վիսյն վճռեց այն խնդիրն ալ: (Գործ. ԺԵ. 1—29:) Պետրոս ալ Պողոսի պէս՝ լոկ ժողովականի մը պէս խոսեցաւ այս ժողովոյս մէջ՝ ինչպէս վիւս ամեն ժողովոց մէջ: Ուրիշ ժողովքի մը մէջ ալ որոշուեցաւ որ Պետրոս՝ իբրեւ սորոկոբցիեալ ժողովոյն՝ ինչպէս որ եր՝ Յովհաննէս սին հետ Սամարիա երթայ հաւատացեալոց դրոշմ տալու համար. և նա հնազանդեցաւ՝ ինչպէս որ պարտաւոր էր, պնաց. (Պնդ. Ը. 14.) Հրաւ թէ ես ելնեմ՝ հեղինակ եմ. ես անսխալ պատասխոր՝ հրամանատար եմ, սորոկոբցիեալ՝ հրամանակատար չեմ. ես իմ անյոդ գրքերսը կը նեքիսյոցընեմ, ես Պատթեալ ոչեղակալ եմ չհրաւ. քա՛ւ. այս հայհոյութիւնը հերքա՛ւ նա. իրմէ վերջերսն հրաս

ւանին՝ Եկեղեցական ժողովին ձայնին հնազանդեցաւ, գնաց։

Ութնին պետրոս իւր Առաքելակից եղբարց մէջ առնելու առաւելութիւն մը չունէր. այլ ան Տեառնէ նախնի Ս. Հոգւոյ լեցուելով՝ կը ներբողէ զանոնք. «Բազմանուաճեալ չնորհիւ առ բարեալք և յաւէտ լցեալք և բնաւին մարթելք, պրնակութեան վեհին բարձրութեան գնահատելք։ Փառաբանեցէ՛ք ճոխացեալք և մարմնացեալք։ Շնորհօք բանին Աստուածացեալք (1)։ Ծնունդ Քնաւոր Հոգւոյն ընտրեալք, Իշխան պատուոյ, պետ և ղեկուցիչ, նահապետք վեհափառք, նախարարք նախամուխք, գլխոցներ երկնաբնակ։ վերատեսուչք ԱՆՄՈԼԱՐՔ։ ։ ։ վասն զի այսպիսիք և այսոքիկ աստիճանի մատուցան ՏԻՐԱՉԻՐ ԳԼԽԱԻՈՐՈՒԹԻՒՆՔ։ ։ ։ Ուստի ԱՆԽՏՐՈՑ ԵՒ ԱՆԱՆՁՐՊԵՏ գիւնոցաղ և ըմբիշդրդ ընդ գրիւսատսի գոյք մատաւորեալք։ ։ ։ Իբր Եկեղեցական խորհրդատուքեամբ ՎԵՐԱԴԻՏՈՂՔ ՏԻԵԶԵՐԱՑ։ ։ Բերող ելոտորդն (այինքն գրիւսոս) զնոսա՝ կարթիւ հանճարով։ ԻՆՔՆԱԿԱԼ ՊԵՏՈՒԹԻՒՆՔ ԻՇԽԱՆԱԿՈՒՆՔ։ ։ ։ Սոքա Եկեղեցւոյ արբոյ հիմնադիրք։ ։ ։ սոքա ձեռնադրողք քահանայութեանն։ Ի գրիւսոսէ ընկալեալք և մեզ մատնաւորեալք։ հաւատարիմ ուխտի պաշնաւորք։ վկայք վեհագոյնք Աստուածատուն կարգի։ ։ ։» (Ի Ներբող Առաք.)

Ներսէս Շնորհալի. «Թոփաւորն երկնից ՓՈԽԱՆ ԻՒՐ ԿԱՐԳԵԱՑ ԺԱՄԱՆԳ ԱՓՈՓՈՑ ՀՓահանայապետՍՆ» (Ի ընդարձակեալն պատ. վիճնոր. եր. 402—403, 404, 433 եւն.)

(1) Ըստ այնմ. թէ «Ահա եսու զքեզ Աստուած Փարաւոնի» (Ել. է. 1.) «Ես ասացի թէ Աստուածք էջիք» (Ս. Զն. 6.) «Զնոսա Աստուածս կոչէ առ որս բանն Աստուծոյ եղեւ։ (Ց. Ժ. 35։)

Շարադրանք. «Հայգարապետը Աստուածային խորհրդոցն և քաղցր դրանն արքայութեան երկնից։ ։ ։ Առաքեալք Աստուծոյ ինձ ՀԱՒԱՏՈՑ կաթողիկէ Եկեղեցւոյ». (կան. Հռովբ. Առաք.) «Ընտարհակիր բանին բազկաց եղեալ հինոնէ սրբոյն Միոնէի. լերինէ ԱՆԵՐԱԺՔ, հովիտք ծաղկածինք, հարազատ վէմք ՀԱՒԱՏՈՑ պետրոս և Անդրէաս։ ։ ։ քաջասուր երիտ էշխան աշխարհի։ ։ ։ ցակովբ Ալփեան Յուդայ ցակովբեան։ (կան. երկոտասան Առաք.)

Ոսկերբերան իւր այլ և այլ գործոցը մէջ բոլոր Առաքեալները հինոնէ, ինոնէ, քարոզ, վարդապետ, ջնջվոյժ ու հովիւ անուանելէն, պետրոսն ու ցովհաննէսը էշխան Առաքելոց, (Ի դէմ. Մարկ. ճառ. 32.) և ցակովբոսն ալ մէկտեղ «Առաջինք հին Առաքելոց մէջ պատուով, հիմունք եկեղեցւոյ, առաջին հրաշէրեալք և իշխանք աշակերտաց» (Ի գլ. Ա. գործ.) ըսելէն ետքը՝ վարդապետօրէն ուսուցանելով ալ կ'ըսէ. (Ի ճառ. յօթոտի. ընդդէմ Ս. գրոց) «Հոգեւոր իշխանութեանց մէջ ամենէն գեղը Առաքելոցինն է։ Ինչո՞վ կրնամք հաստատել ասիկայ. անով որ Առաքեալն ասիկայ ամեն իշխանութիւններէն յառաջ կը դասէ։ ինչպէս որ Հիւպատոսն (Հասարակապետութեան համար) առաջին է քաղաքական իշխանութեան համար, այսպէս Առաքեալը հոգեւորականին համար։ Մտի՛ք ընեւք Պօղոսի, որ իշխանութեանց թուարկութիւնը կ'ընէ, և անոնց գլուխը Առաքելոցինը կը դնէ. ինչ կ'ըսէ. «Աստուած զդրաւ իւր եկեղեցւոյն մէջ, նախ Առաքեալները, երկրորդ մարգարէները, երրորդ վարդապետները և հովիւները»։ կը տեսնե՞ս, թէ ո՛րն է առաջին իշխանութիւնը. կը տեսնե՞ս. Առաքելը նոյնպիսի բնաւ ձայն է. անկէ յառաջ և անկէ վեր բնաւ ։ ։ ։ Որովհետեւ կ'ըսէ, նախ զԱռաքեալս։ Առաքելոցինը ա՛յն ատեն է տեղացին իշխանութիւնը,

այլ և ԱՐՄԱՏ ԵՒ ՀԻՄՆ Է ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ »։

Նպատակացի. (Ձռ. 26) «Ըստ սեանեա ամենասիրէ քէ ինչո՞ւ Քրիստոսի ընդդիմնեմք, սրբանիւտ և Ա֊ծածընեամբ ՀԱՒԻՒԱՍԱՐ ԵՂՈՂ աշակերտաներուն մէջ ասիկայ (Պետրոս) միմ անուանեցաւ, անոր համար որ իւր հաւատքն վրայ ընդունի եկեղեցւոյ հիմը »։

Ս. Գրիգոր Նիւսացի. (Է Գամբռն. Է Ս. Սեբաստ.) «Այսօր գլխաւորապէս կը յիշատակեմք զանոնք՝ որ փայլեցան մեծ և փառաւոր բարեպաշտութեամբ, ըսել կ'ուզեմ Պետրոսը, Յակովբոսը և Յովհաննէսը որ Առաքելական խմբին գլխաւորներն են . . . . : Տիրոջ Առաքեալները աստղեր են, նոցա իշխանները և գլխաւորներն են Պետրոս, Յակովբոս և Յովհաննէս . . . կը վայլէ յիրաւի յիշատակել այս երեք մարդիկս, ո՛չ միայն անոր համար որ միաձայն են իրենց քարոզութեան մէջ, այլ և՝ իպատճառս ՀԱՒԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՅԱ ԱՐԺԱՆԵԱՑ . . . : (Առաքեալք) հիմնադիր են եկեղեցւոյ, պետ և հոգեպահպանիչ ճշմարտութեան : Աղբիւրք են մարգարէութեան, ՈՐՈՅՄԻ կը հանէ Աստուածային վարդապետութեան յորդառատ հեղեղը : Ս. Գրիգոր՝ Պետրոսին Յակոբոս և Յովհաննու հաւասար պատուանուններ տալէն յետոյ կը յաւելու. «Սակայն այս խօսքերէս չմոռնայ ընթերցողն ինչ դէտ Աստուածը ներբո՞ն են ընել առնէդ, այլ ցուցընել կ'ուզեմք այս երեքին առաքինութիւնը. կամ աւելի ճիշդը, Հաւատոյ կարգաւ բոլոր Առաքեալները ներբողելու համար կը խօսիմ. . . : Բոլոր և ճշմարիտ վարդապետութեան գալով՝ բոլորն ալ անդամներ են, որ մէկ մարմին մը միայն կը կազմեն. և երբ մարմնին մը անդամին փառաւորին ամենուն ալ պատիւն ընդ նմա, կ'ըսէ Առաքեալը : Ինչպէս որ հաստատ վարդապետութեան վրան հաւատոց, նոյնպէս ալ քարոզութեանէ հաւատոյ անոնց եղած պատիւը հաստատուած ունենան էր յերկնքին »։

Ս. Կիպրիանոս (Է ձռ. ՅԸ գրքէն ԿԷԷ.) «Տէրը միութիւնը յայտնելու համար ուզեց՝ որ այս միութիւնը իւր սկիզբը միայն մէկէ մը առնու : Առաքեալները նոյն էին ինչ որ Պետրոս եղաւ. ՆՈՑՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵԻ ՆՈՅՆ ՊԱՏԻՒՆ ՈՒՆԷԻՆ՝ ԻՆՉ ՈՐ ՊԵՏՐՈՍ ՈՒՆԷՐ : Ամեն հովիւներն ալ հովիւ են, և հօտը ապաճեալ Ի ՀԱՄՕՐԷՆ ՀՈՎՈՒԱՑ մէկ է. որպէս զի Քրիստոսի եկեղեցին իւր միութեան մէջ երեւի »։

Կրնայինք առ այս խել մը ուրիշ Ս. Հարց վկայութիւններն ալ մէջ բերել, հաստատելու համար մեր առաջարկութիւնը թէ Առաքեալք երկոտասանք հաւասար հաւատարտպատիւք էին միմեանց, և մին քան զմիսն առաւել իշխանութիւն ճոխութիւն չունէր, գլուխ և ստորակարգեալ չկար անոնց մէջ անհաւասը, առանց հաւաքական միութիւնն էր Գլուխ եկեղեցւոյ, և ամեն մէկերնին այս հաւաքական միութեան ստորակարգեալն էին. բայց այսչափն ալ չէր առնէր տեղերնիս : (1)

Այլ խնդիր է թէ ինչո՞ւ համար Հայրապետք ուզեցին Պետրոսի կամ Հռոմայ պապերուն գլուխ, ծնեալ խառը ևս ամենայնները չուայլեր են առէպ : Բայց այսկայ խնդիր ալ չէ. չեմք ըսեր հիմայ առ այս թէ Հայրապետք եթէ իրօք ուսուցչական կերպիւ առաքեցուցած ըլլային թէ Ս. Պետրոս կամ պապերը իրօք գլուխ էին եկեղեցւոյ ևս, առանց հիմ առնելու Ս. Գրոց վկայութիւնէն (ինչպէս որ չունին,) մղորած կ'ըլլային, և ալ անանց մտիկ ընել արժան չէր յայնժամ. (տե՛ս Է վերն, Մասն Բ. Գր. Ա. Գլ. Գ. և Գր. Բ. եւ Մասն Գ. Գր. Ա. Գլ. Դ.) այլ կ'ըսեմք,

(1) Այս խնդրոյս վրայ մանրամասն և հիմնական կերպով կը խօսի Աբբա Կեթէ իւր ուշադրաւածով Պատասխանն ամերիկեան գործոյն մէջ, որ Ս. Հատորը թարգմանած են Հայ լեզու՝ Արժ. Տաղք Միաբանութեան Արմաշու ատենն։

թէ անոնք ուսուցչական եղանակաւ առանկ բան մը սովրեցուցած չեն բնաւ, այլ ներրողեաններու մէջ և ներբողական ասացուածոց մէջ եկեղեցւոյ վաստակաւոր հովիւները գովելու և իրենց վաստակոց արժանիքը երեւցընելու մտօք՝ ճարտասանական չափազանցութեամբ և ո՛չ բնաւ լոկիդական ճշդութեամբ, ինչպէս նաեւ թղթակցութեանց մէջ՝ առ քաղաքավարութեան և առ չնորհուկս՝ առանկ ածականներ տուեր են ի՛նչպէս Հռովմի պապերուն՝ նոյնպէս և այլոց Հայրապետաց գլխաւոր քաղաքաց, նո՛յնպէս և Կ. Պոլսոյ Պատրիարքաց. քանզի ասոնք այս ածականները իրենց սեպհականել ուզելով, այլ եւս զնոյնս իրենց առէպ կրկնած յեղյեղած ըլլալով, թէ որ պաշտօնական դրութեանց մէջ անոնց այս ածականները չտրուէր, նախատական մաքի կ՚առնուէր այս զանցառութիւնը. ինչպէս հասարակ քաղաքավարութեան մէջ հասարակութենէն ոեւէ պոռնիկ, Աղ մակդիրներով անուանող ոք՝ թէ՛եւ անարժան ըլլայ ինքն անձամբ այս պատուոյ անուններուն, նախատինք կը համարի իրեն պոռնիկ մակդիրը։ — Այս քաղաքավարական պատիւն էր անաղարտ պահել կը ջանային Հայրապետք՝ որ մարդկութեան պարտիքն է։ Ասոր ապացոյց՝ ահա՛ Շնորհալին որ Կ. Պոլսոյ Պատրիարքին կը գրէ, «Ո՛ղջ լեր ԳԼՈՒԽՈ՛Դ յետ գլխոյն եկեղեցւոյ (Քրիստոսի)». և թէ «եւ ՚ի մէնջ ընկալարուք զպատասխանիս հաճոյութեամբ Ս. Հոգւոյն և որ գՆԱԽԱԹՈՌՈՒԹԻՒՆԴ ՏԻԵԶԵՐԱՑ յաջորդեաց Առաքելոյն ընդրո՛ւնեա՛ք». Նաեւ «Սէրդ և ջերմեռանդութիւնդ եկեղեցւոյդ որ ի ԳԼՈՒԽՈ՛Դ ՏԻԵԶԵՐԱՑ ՚ի թափառական մայրաքաղաքդ Կ. Պոլիս՝ Տէրանց և ՊԱՇՏՕՆԱԿԻՑ ԵԳԲԱՐՑ, նախանձոտ պատրիարքաց». (ՀՆդհնր. յԱ. Ե ՚ի Բ. ընդուն. ՚ի Կ. Պոլիս։) Ուր ահա յայտնապէս գլուխ, նախանձոտութիւն՝ պիղծ, նախանձոտ պատրիարքն կ՚անուանէ զպատրիարքն

ցուներց Կ. Պոլսոյ, բայց միանգամայն պղծութիւն եղբօր կ՚ըսէ անոր. է՚ն ետքը՝ ինքզինքն ալ նոյնպէս կ՚անուանէ Շնորհալին. «Արդեպ հարց սրբոց պետ վերակոչիմ. . . պիա՛րդ ելոե եկեղեցւոյ յետ գլխոյն. որոց և գալչատպար չհինելոյ ըստ ուղիղ դատման ունիմ արժանաւորութիւն»։ (յոթենաբան. ՚ի գծնէ Աբրահամեան. ՀՆդհնր. եր. 184։) Ցայս միտս զՀռովմայ եկեղեցին արմատ և ծայր կոչուղիկ եկեղեցւոյ կ՚անուանէ Կիպրիանոս (՚ի Ընդուն. 43. առ Կոռնել.) ինչպէս և Տերտուղիանոս բոլոր Աւանդելական եկեղեցիները Մայր և նախատիպ եկեղեցի կ՚անուանէ. (՚ի Նախատիպ. ցօդ. իԱ.) որ է ըսել՝ մայր և հեղինակ ծագման այլոց եկեղեցեաց. Երուսաղէմն ալ Մայր կոչել կ՚անուանէ (Ընդդեմ Մարկիոնի. Գր. Զ. Գլ. Լե։) Կ. Պոլսոյ առաջին Ս. ժողովը Մայր ոչնչեղեցւոց կ՚ըսէ Երուսաղէմի եկեղեցւոյն. (ԼԱգէ. հաւտ. ժող.) Ափրիկէի ժէ Մայր եկեղեցի կ՚անուանէին Մեսրապովսեան եկեղեցիները. (ԼԱգէ հաւտ. ժող. ՚ի ժող. Աէէիկէ։) Վիէննայի Աւետաս անուն կեղտացի եպիսկոպոս մը հինգերորդ դարուն Երուսաղէմայ Պատրիարքին կը դրէր. «Ձեր Առաքելութիւնը առաջնութիւն մը ունի Աստուծմէ իրեն տրուած», և կը ջանայ ցուցընել թէ եկեղեցւոյ մէջ առաջին տեղին ունի ոչ միայն առանձինն իշխանութեամբ՝ այլ և արժանաւոր։ (Գործ. Ս. Աւետոյ հրատարակեալ ՚ի Տերմնդէ Հայ. ընտրեալ գործ. Սերմնդէ։) Հայաստանեայց եկեղեցին ալ նոյնպէս Մայր եկեղեցի կ՚անուանէ պատաքին եկեղեցին Երուսաղէմի. «Գետոցս այս գնացիւք ցնծայ քաղաքն Աստուծոյ Սիոն Մայր եկեղեցի»։ (Շարակ. կան. Հիերէլար. Դ. առար ՚ի Տէր երկնից։)

Ցայս վայր Հնդարտասիրաց հանար խօսելով՝ յամառութեան դէմ ալ պատուար կը հանենք Հայրապետաց հետեւեալ վկայութիւնները, յորս յայտնի կը տեսնենք որ նոյն Հայրապետք ան ծոյն գլուխ,

դվսաւոր ևս ածականները առած են այլոց առաքելոց և Հայրապետաց ևս։ Ի Շարականն կ՚երգենք · «Նայեցարուք ընդ արդարն Յակովբ . . . Սա եղեւ Գլուխ (1) Աթոռելոց որբոց և կոչեցաւ եղբայր Տեառն (կամ· Գոլոխ մարգ·) «Թոփաստուր երկրի, իշխանք աշխարհի . . . Յակոբ Ալփեան Յուդայ Յակովբեան . . . եղիցի առնքառասան Ս· Առաքեալ Գողտ Հայր ՀԱՄԱՏԱԲԱՆ » ։ (կամ· երէքտաս· Առաք·) «Առաքեալն Գողտս ասէր , թէ չեմ բաւական կոչիլ Առաքեալ · վասն այնորիկ առաջին տառն ղանձնեաւն եղեւ » ։ (Ոսկէբ· ՚ի ճին· Մատթ· ԹՐ· Ա· ՃԸ ·Գ· ՚ԷյորԹու) «Իսկ Մարկոս ըստ իւրաքանչիւր պատուոյ կարգի ընտ կարգի դնէ զանուանն (Առաքելոց) · զի յետ երկուց գլխաւորացն՝ սպա զԱնդրէաս ածէ ՚ի թիւ . . . : Թուի ինձ թէ Յովհաննէս ալ տաճ ըլլայր Գողտ թէ Յակոբոս ալ տաճ ըլլայր Գողտ · ապա զԱնդրէաս ածէ ՚ի թիւ · զի ասէ Մատթէոս · «Սա եղեւ Անդրէաս Առաքելոց որբոց» բանալով , ինչպես և Առաքելոց գործոց նախասահմանեալ առնէր (Գիտաւս գԳեստրաս) հանդերձ Յակոբոս և Յովհաննես» ։ (Անդ· Գր· Բ· ՃԸ· ԼԱ·) «Եւ զիս զայս երանելոյ առաքելոյ

քնաւ մէկն ալ միւսը հնազանդեցընել չկրնար բըռնաւորական սպառնալեաց միջոցաւ. ինչպէս որ չը դատուիր մէկէ մը, նոյնպէս ալ չկրնար դատել մէկը: Ամենքս ալ մեր Տէր Յիսուս Քրիստոսի դատաստանին կ'ապասենք, որ ՄԻԱՑՆ իշխանութիւն ունի առաջնորդ կարգելու զմեզ իւր եկեղեցւոյն վրայ և դատելու մեր վարքը»:

Ապա ուրեմն՝ տեսնելով որ Հռովմայ պապերը՝ մանաւանդ վերջին վատիկանի հակաքրիստոնեայ ժողովին մէջ բացարձակ ազատ իշխանութեամբ կը նզովեն և հաղորդակցութենէ կտրել կ'ըսեն բռնապետաբար այն Ս. եկեղեցիները՝ որք չեն ընդունիր անոնց 'ի նուիրապետութեան եկեղեցւոյ գլխաւորութիւնը, գերապատուութիւնը տիեզերական հայրապետութիւնը, իրաւարանութեան անսխալ աղբիւր ըլլալը եւ, իրաւամբ և մեծ իրաւամբ կը գրուցեմք իրենց՝ Բիրմիլիանոսի հետ, (Ընդդ. գր. Ս. Կիպրէան.) «Դու ինքզինքդ կ'ապաննես, ով՛ խաբուիր. վի ճշմարիտ հերձուածն այն է՝ որ եկեղեցւոյ միութիւնը կը մերժէ: Կարծած առեն՝ թէ առքնեցը տեղէ ղտուած են, դու անոնց ղտուած ես»: Երբ կը կարծես թէ ուրիշները կը կտրես քեզմէ՝ քու հաղորդակցութենէդ, դու ինքզինքդ ուրիշներէն և Քրիստոսի միակ ճշմարիտ եկեղեցիէն կը կտրես կը հերձուիս ճշմարիտ հերձուածով: Մեծ զարուք կը մնայ անկեղծ Քրիստոնէին վրայ՝ աղօթել որ այս մեծ եկեղեցին 'ի սպառ չկորսուի, զի և «սա դուստր Աբրահամու էր», զոր կապեաց ոգին ամբարտաւանութեան, որ բանալով իւր աչքը ճանչնայ իւր մոլորութեան ճամբան, և դառնալով վերըստին մուտ դտնայ 'ի փարախ անդր Յիսուսի Քրիստոսի՝ 'ի գաւիթ միոյ միայնոյ կաթոլիկէ Ս. եկեղեցւոյ, արուսաքոյ որոյ չիք փրկութիւն: . . .

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԽՈՐՀՈՒՐԴՔ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Խորհուրդք եկեղեցւոյ ըսելով կ'իմանամք եկեղեցւոյ յայտնեալ վարդապետութեանց և ծիսից այս մասերը որոնք միջոցք են չնորհաց եկեղեցւոյ, և մեզի համար դաղտնիք են անոնց ներդործութիւնները: — Եկեղեցւոյ վարդապետութեանց մէջ ինչպէս որ կան վարդապետութիւններ՝ որպիսի են երրորդութեան, մարդեղութեան վերստին ծնընդեան, Հոգւոյ անմահութեան, հոգւոյ ընդ մարմնոյ միաւորութեան եւ, վարդապետութիւնները, որք լրովին անհասանելի ըլլալով մեզ՝ մասամբ իւրք հասու եւք անոնց, և որք դաղտնածածուկ խորհուրդներ են մեզ միշտ. այսու ամենայնիւ յոյժ բանաւոր և անհրաժեշտ է որ անոնց հաւատոք ընծայեմք, այսպէս ալ եկեղեցւոյ ծիսից և արարողութեանց մէջ կան բ'նչ բ'նչ, որոց արարողական մասին լրովին հասու եւք, որք սպասմունքութեամբ ձեւով և նիւթով՝ արտաքին նշանակոք կը կատարուին, բայց թէ բ'նչպէս այն արտաքին նիւթական նշանակները Ս. Հոգւոյն աննիւթական չնորհաց ներքին մէկ դործառնութեան միջոց կ'ըլլան, կամ թէ բ'նչպէս Հոգւոյն աննիւթ չնորհքները նիւթեղէն միջոցներով 'ի մեզ կը ներդործեն 'ի հոգիս մեր, ամենեւբ'ն չեմք կրնար հասու ըլլալ ասոր, ուստի և միշտ խորհուրդք են մեզ համար ասոնք ալ:

Խորհուրդք եկեղեցւոյ եօթն են. Մկրտութիւն. Դրոշմ, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Ձասկ առնութեան, Աւետելութիւն կամ Օծումն հիւանդաց և վարդ Քահանայութեան:

Պատրաստանք կ'ընդունին եկեղեցւոյ եօթն խոր-

հուրդները՝ իւիք իւիք դիմելով. Բողոքականաց մէկ մասը ինչպէս են Անկլիքանք, նոյնպէս կ'ընդունին եօթն խորհուրդք, այլ անոնց վարդապետութեանց մէջ կը չեղին ուղղափառ Եկեղեցին. իսկ այլք՝ որ բողոքարկուաց բազումք՝ եօթն խորհուրդները հաստատապէս չեն ընդունիր. և թէպէտ Մկրտութեան և Հաղորդութեան խորհուրդները կ'ընդունին իսկ, բայց անանկ մոլորական գաղափարներով կը չափուին անոնց վարդապետութիւնները՝ որ չընդունելը հաստատ է:

Իսկական մասունք խորհրդոյն են՝ Ն-ի և Յ-նեմի կ'ըսուի խորհրդոց մէջ՝ ի կիր առնուած արտաքին և զգալի իրը կամ արարողութիւնը. և Ջեւ՝ հրամանակարգ բանն է զոր կ'արտասանէ խորհրդոյն մատակարարը՝ ի կատարումն արարողութեանն: Խորհրդոց մատակարարք՝ Եկեղեցւոյ պաշտօնեայք են:

ԳԼՈՒԽ Ա.

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Մկրտութիւնն է Աբրահամ խոշհուրդ եկեղեցւոյ՝ սահմանադրեալ ի Քրիստոսէ Ջիսուսէ՝ ի նոր խուծնողաց սերեալ մեղքէ սրբուելու, և ի Ս. Հոգւոյն՝ հոգեւոր սուրբ և նորոգ կեանքով մէն վերըսաին ծնանելու համար:

Մկրտութեան նիւթն է ջուխն Ջուր, և ձեւը կամ կերպն է յանուն Երից անձանց Երրորդութեան երից ընկզմումը: — Բայց այս բնական լոկ Ջուրը չէ՝ որ մարթոյ աղտը ի բաց ընկենելոյն պէս սկզբնական մեղքը կը լուայ և հոգեւոր կեանք կը

պարգեւէ մարդոյն, այլ Ա.-որ-ն-ի-յին ն-ը ու ի-ն-ս-ն (Եփես. ե. 26.) և Աւետարանը Երրորդութեան հաւատքը՝ որ հարկաւոր թէ ութիւն է ի կողմանէ մկրտելոյն, (Մ-րկ. ԺԶ. 16.) որով մկրտեալն ի Ջուր ամբողջանին՝ մկրտի ի մահն Քրիստոսի Ջիսուսի. թաղուելով Անոր հետ ի գերեզմանի աւազանին՝ մեռած համար մեռնելով, յարութիւն կ'առնու անկից հոգեւոր կենաք նորոգեալ և գՔրիստոս ղգեցեալ. «Չգնացէ՞ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՞ք զամենայն հեթանոս. մկրտեցէ՞ք զնոսա յանուն Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»: (Մ-տ. ԻԸ. 19:) «Որ հաւատայ և մկրտիցի՝ կեցցէ, և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի»: (Մ-ր. ԺԶ. 15:) «Որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Ջիսուս, ի մահ անոր մկրտեցաք. թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն ի մահ, զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառաւք Հօր, նոյնպէս և մեք ի նորոգութեան կենաց շրջեսցուք. զի եթէ անկարկից եղեալ նմանութեան մահու նորա, այլ և յարութեան նորա լինիցիմք»: (Հռ. Զ. 3—5:) Թաղեալք ընդ նմին ի մկրտութեանն որով և ընդ նմին յարեալք հաւատովք՝ Աստուծոյ ազդեցութեանն, որ յարոյց զնա ի մեռելոց»: (Կող. Բ. 12:) «Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս ղգեցեալ էք»: (Գ-ղ. Գ. 27.) «Ապրեցայց գնոսա ի ձեռն աւազանին միանգամ ծնընդեան, և նորոգութեամբ Հոգւոյն սրբոյ»: (Տիտ. Գ. 5:) «Մատիցուք ճշմարիտ սրտիւք, լրութեամբ հաւատոց, լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց, և մկրտեալ զմարմինն ի ջուրն սրբութեան»: (Եբր. Ժ. 22:) «Որ և զձեզ ըստ նմին օրինակի կեցուցանէ մկրտութիւնն. ո՛չ պղծութիւն աղտն ի բաց ընկենելով, այլ զբարւոք մտաց հանդէս առ Աստուած, ի ձեռն յարութեանն Ջիսուսի Քրիստոսի»: (Ա. Պետ. Գ. 21:)

Մկրտուիլ յանուն երրորդութեան՝ կը նշանակէ ուրիշ Աստուած չճանչնալ բայց յերրորդութենէ, և զնա դաւանիլ և ընդունիլ ստեղծող և նախախնամող ամենայնի, ըստ այնմ թէ «Հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին, և ամենեքին ընդ ծովն անցին, և ամենեքեան 'ի Մովսէս մկրտեցան յամպն և 'ի ծովն. (այլ բազումք 'ի նոցանէ կորեան վասն խոտորելոյ նոցա 'ի հաւատոցն.)» (Ա· Կոր· ժ· 1—12:) Ցայս միտս կ'ըսէ և Քրիստոս. «Ով հաւատայ և մկրտիցի՝ կեցցէ. և որ ո՛չն հաւատայ՝ դատապարտեսցի» (Մ՚ին· ԺԶ· 16·) որ ըսել կ'ըլլայ թէ ով որ առանց հնարիւտ հաւատք ունենալու կը մկրտուի ան եբեսո յուսընելա համաք կ'ընդունի թէ կը հաւատայ Աստուծոյ արարչի և նախախնամողի, պիտի դատապարտուի:

Եւ որովհետեւ Քրիստոս այս խորհուրդը հաստատեց իւր չարչարանաց խաչի և մահու արդիւնքը հաւատացելոց արդիւնաւորելու և անոնց յաւիտենական արդարութիւն պարգեւելու համար, վասն որոյ անունք միայն պիտի մկրտուին՝ որք յանուն Տեառն Քրիստոսի կը մկրտուին 'ի թողութիւն մեղաց և 'ի նորոգութիւն կենացն յաւիտենից· «Եւ արդ զի՞ հեգդաս, կ'ըսէ Անանիա Սողոսի· արի՛ մկրտեաց, և լուա զմեղս քո 'ի կարդալ զանուն Նորա». զոր և Պետրոս խրատած էր երից հազարաց յաւուր Պենտեկոստէին. «Ապաշաւեցէ՛ք, և մկրտեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ յանուն Տեառն Քրիստոսի 'ի թողութիւն մեղաց, և ընկալջիք զաւետիս Հոգւոյն սրբոյ» (Գ՚ործ· Ի՚Ա· 16: Բ· 38:) — վասն զի ընդհանուր մարդկային սեռը անիծից և բանհութեան տակ ըլլալով առաջին յանցուածոյ պատճառաւ, ամենայն ոք անօրինութեամբ յղացեալ 'ի մեղս ծնանիլը, (Ա՚զ· Ը· 7·) և թէպէտ մի առուբ կրնանք ունենար նոյն դատապարտութեան 'ի ներքոյ

էր· և զի Քրիստոս միայն այն անիծից և բարկութեան զոհ տուաւ զանձն և յաւիտենական փրկանք ըլլալով մեղաց՝ յաւիտենական արդարութիւն բերաւ 'ի մարդիկ, անոր անուանը մկրտութեամբ և հաւատովք միայն՝ Քրիստոսի այս արարար արդիւնքը կրնանք սեպհականել մեզ· «Զի եթէ մինչ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ Նորա, ո՛րչափ եւս առաւել 'ի հաշտելս մեզ՝ ապրեսցուք կենօքն Նորա: Եւ ո՛չ այսչափ միայն, այլ և պարծիմք եւս յԱստուած 'ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով և զհաշտութիւնն իսկ ընկալաք: Զի ո՛րպէս 'ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին, և 'ի մեղաց անտի մահ, և այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ, որով ամենեքին մեղան. . . . Թագաւորեաց մահ յԱդամայ մինչեւ 'ի Մովսէս, և 'ի վերայ չյանցուցելոցն, ըստ նմանութեան յանցուածոցն Ադամայ, որ է օրինակ հանդերձելոցն: Այլ ո՛չ որպէս յանցանքն, նոյնպէս և շնորհքն· զի եթէ միոյն յանցանօք բազումք մեռան, ո՛րչափ եւս առաւել շնորհքն Աստուծոյ և պարգեւք շնորհօք միոյն մարդոյ Յիսուսի Քրիստոսի 'ի բազումս առաւելաւ: . . . Զի եթէ միոյն յանցանաց մահ թագաւորեաց միոմէն, ո՛րչափ եւս առաւել՝ որք զառաւելութիւն շնորհաց և պարգեւաց արդարութեանն առնուցուն, կենօք թագաւորեսցեն 'ի ձեռն միոյն Յիսուսի Քրիստոսի: . . .» (Հ՚ռ· Ե· 10—19:)

Յիսուս Քրիստոս «Աշխէրտեցէ զամենայն հեթանոս, մկրտեցէք զնոսա», — «Որ հաւատայ և մկրտիցի» ըսելով կ'իմացընէ թէ՝ անոնք որ պիտի մկրտուին՝ սկզբ է նախ աշակերտուած ըլլան հաւատոց և ապա գան 'ի մկրտութիւն· և ըստ այսմ չափահաս նորահաւատք նախ հաւատոց և բարոյից մէջ լաւ մը կը հրահանգուին յերախայութեան· ու

եւքէն կը մկրտուին երբ այժանի կը պատուին ե-
կեղեցւոյ պաշտօնեայներէն։ Իսկ նորածին մանկուն-
ըդ որդիք հաւատացելոց կը մկրտուին հաւատովք ծնո-
ղաց իւրեանց և երաշխաւորութեամբք կնքահարցն
որ ՚ի հաւատս ծնուցանեն զնոսին, որով ըմիայն
ներելի է մկրտութիւն մանկանց. ըստ որում կը
տեսնենք որ և ՚ի նախնումն Աւետեալք հանդերձ
տամբք և ընտանեօք՝ կանամբք և որդւովք կը մկ-
կրտէին նորադարձ հաւատացեալները։ (Գործ. ԺԶ.
15. ՅՅ. ԺՔ. 8. ԺԱ. 24. 47. Ա. Կոր. Ա. 16 եւն.)
Ապա ուրեմն ներելի չէ մկրտել զմանկունս հեթա-
նոսաց այլակրօնից, (երբ նոցին ծնողք հաւատոյ
աչակերտուած չեն,) եւ ոչ նոցին ծնողաց հա-
ճութեանց և կնքահարց երաշխաւորութեանց։ Այ-
սպարագայիս մէջ ծանր պատասխանատուութեան
տակ են կնքողք և կնքահարք։

Եւ քանի հաւատոյ վրայ հաստատուած է
մկրտութեան խորհուրդը, և մկրտութեան եկող
մը հարկաւորապէս հաւատք կը պահանջուի ունե-
նալ, ըստ այսմ կը տարբերի հինգերորդ հին ուխտի
և ծուխանոս մկրտութիւններէն, որք լոկ ջրոյ
լուացմունք՝ օրինական սրբութեան և ազատչա-
րութեան նշանակք էին և ո՛չ աւելի. (Մատ. Ա. 4.
Է. 4—8. Եբր. Թ. 9—10.) ծուխանոս մկրտութիւնն՝
ի՛ըմէ Ղեորհալի, առաւել քան զՄովսէսին ազատ-
խարութիւն միայն էր. իսկ Քրիստոսի ո՛չ ազատ-
խարութիւն, այլ ձրի թողութիւն և ղեորհի որդե-
գրութիւն։ (՚ի Թղթ Մատթ. եր. 52.) կը տարբերի
նաեւ թլփատութենէ. չէ՛ թէ Մկրտութիւնը թլփա-
տութեան տեղ դրուած է՝ իբրեւ հաւասարազօրի
ձէսեր կամ արտաքին նշանակներ ըստ մերոց բա-
ղաքաց. զի թլփատութիւնը լոկ արտաքին նշան
էր ՚ի մարմնոյ Հրէից՝ հեթանոսներէն անհատա-
ներէն որոշուելու համար, նշանակ ուխտին Աստու-

ծոյ առ Աբրահամ. (Ծննդ. ԺԷ. 11. Հռ. Դ. 11.) Իւ-
հուդէ չէր ընդհանրութիւնը, բայց Մկրտութիւնը դէ՛ և
առաքէն իւրհուդէ է ըստ բողոքականին եւս։ Մկր-
տութիւնը պարծանաւոր դաւանութիւն է իւր ձե-
ւովը՝ հաւատոյ աներեւոյթ ներքոյզութեան. Մը-
կրտութիւնը ազատութիւն սրբութիւն է ՚ի մկրդը-
նական մեղաց և ՚ի պատասխատութենէ. Մկրտու-
թիւնը վերստին ծնունդ է՝ հոգեւոր կենաց։ Մկրտու-
թիւնը՝ Քրիստոս թլփատութեան տեղ չառնելոնց,
որ թէ որ անանկ ըլլար՝ միայն մկրտութիւնը պիտի
պաշտուէր յեկեղեցւոջ ՚ի մկրդան անդ. այլ ընդ-
հակառակն մկրտութեան հետ թլփատութիւնն ալ
պաշտուելոյ ընդ երկար եկեղեցւոյ սկիզբն է. Հրէից
հաւատացելոց մանկունք նախ կը թլփատուէին ապա
կը մկրտուէին. Հեթանոսաց նորահաւատներն ալ
նախ կը թլփատուէին ապա կը մկրտուէին, մինչեւ
որ Պաւղոս յատուկ ժողովքով մը քննելով որո-
շեցին որ ալ այնուհետեւ մարմնոյ թլփատութիւնը
պէտք էր։ (Գործ. ԺՋ. 3. ԺԵ. 1—30. Գաղ. Բ. 3.)
— Յիսուս Քրիստոս ինքնին թլփատուելէն ետքը
(Ղուկ. Բ. 21.) երեսնամեայ մկրտուելով ՚ի Յորդա-
նան՝ (Մատթ. Գ. 13—15.) սրբել զջուր աւազանի մե-
րոյ, ուսոյց աշակերտաց իւրոց մկրտութեան խոր-
հուրդն ու անոր կատարման ձեւը՝ ինքնին մկրտե-
լով գհաւատացեալան. (Յովհ. Գ. 22. Դ. 1—2.) սահ-
մանեց և հրամայեց Աւետելոց իւրոց՝ մկրտել զա-
շակերտեալան յանուն աներեւոյթ երրորդութեան
(Մատթ. ԻԸ. 18—20.) զի սրբեալք հաւատացեալքն
՚ի սկզբնական մեղաց և ղերծեալ յիշխանութենէ սա-
տանայի՝ ծառայեցնեն Աստուծոյ իբրեւ որդիք յա-
ռնորհաց. (Գործ. ԻԲ. 16. Հռ. Զ. 3—11.) իբրեւ ժա-
ռանգակիցք Քրիստոսի և ժառանգք հանդերձեա-
լոց փառաց արքայութեանն Աստուծոյ, և կնքեց ը-
նելով. Ամէն ամէն պատճառ քեզ եթէ ոք ոչ ծնցի ՚ի

ջրոյ և 'ի Հոգւոյ, ո՛չ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ։ (Յովհ. Գ. 5։)

Մկրտութիւնը կրկնելի չէ՛. «Մի տէր, մի հաւատք, մի մկրտութիւն»։ (Եփես. Դ. 5։) «Քանզի անհնար է միանգամ մկրտելոցն, որ ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն, և հաղորդք եղեն Հոգւոյն սրբոյ, և զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակեցին, և զզօրութիւնս հանդերձելոյ աշխարհին, և կործանեսցին, միւսանգամ նորոգել յապաշխարութիւն, և վերստին 'ի խնչ հանել անձանց զՈրդին Աստուծոյ, և դարձեալ խայտառակել»։ (Եբր. Զ. 4. 6։ Հմ. Ջ. 3։ Գործ Գ. 27։) Ինչու որ Մկրտութիւնը՝ ըստ որում ըսինք, իւր կերպովը գործնական դաւանութիւն և խոստումն ըլլալով հաւատոց Ամենասուրբ Երրորդութեան, կրկնելը ուրացութիւն է առաջին դաւանութեան, և նորոգ ուրիշ երրորդութեան մը դաւանութիւն տալ կ'ըլլայ, որ երկու կերպով ալ մեղանչել է։ Ուստի ո՛վ որ և իցէ երբ մկրտեալ է Քրիստոնէական ո՛ր եկեղեցիէն ալ ըլլայ, նոյն իսկ հերձուածներէն և հերետիկոսներէն ալ ըլլայ, քէ որ յանուն ամենասուրբ Երրորդութեան՝ ըստ ուղղափառ դաւանութեան՝ մկրտուած է, Ղբտուիեամբ լուացման Ջրոց և Ընդին Ձննդեան, անհնար է վերստին մկրտել. և վասն որոյ մեծապէս կը մեղանչէ Յունաց եկեղեցին, որ յորմէ և իցէ Քրիստոնեայ ժողովրդենէ եկեալ ոք՝ վերստին կը մկրտէ, առանց անոր մկրտութեան դաւանանքը քննելոյ։ Քանզի կրկին մկրտութեան յայնժամ հարկ 'ի վերայ կայ՝ երբ մկրտեալն Արիոսի, Նեստորի և այլոց նմանեացն է և կամ Հոգեմարտից աղանդէն մկրտեալ է. յորոց ոմանք Որդւոյ՝ և այլք Հոգւոյն Աստուածութեան դէմ կը մոլորին, և վասն որոյ իրենց մկրտութիւնը անվաւեր է, ըստ որում յանուն համագոյակից երից անձանց

Աստուածութեան մկրտուած չեն, որ խորհրդոյն վաւերութեան էական պայման է։ Նոյնպէս կրկին մկրտել պէտք է այն աղանդներէն մկրտեալներն ալ՝ որք մկրտութիւնը լոկ արարողութիւն մը՝ Հրէից լուացումներուն կամ Յովհաննու մկրտութեան պէս բան մը կը դատանին, ու չէ թէ աւազան խորհրդական՝ որ լուացմամբ մարմնոյն՝ սկզբնական մեղքը կը մաքրէ հոգւէն, և մեռուցմամբ հին մարդոյն՝ նոր կենաց կը յարուցանէ մկրտեալը։

Մկրտութեան մատակարարք են ամենայն կարգաւորք, Եպիսկոպոսէ և Քահանայէ. բայց 'ի վերջին հարկաւորութեան՝ մահու վտանգի ատեն աշխարհիկ մարդոյ ձեռօք ուղղափառ դաւանութեամբ յանուն Երրորդութեան եղած մկրտութիւնն ալ վաւերական է. միայն՝ մահու վտանգն անցնելէն յետոյ Քահանայն պարտաւոր է՝ առանց աւազան ուղղելոյ՝ մկրտութեան աղօթից կարգը անոր վրայ կատարելու։

Ի սահմանադրութենէ անտի Քրիստոսի և Առաքելոց՝ ամենայն Եկեղեցիք այնուէս կը մատակարարէին Մկրտութեան խորհուրդը ան նոյն պայմանօք և նպատակաւ, որովք և ո՛րպէս որ այժմս կը պահէ Հայաստանեայց Եկեղեցի։ — Զանհնաս ոք քրիստոնէութեան աշակերտութիւն ուղած ատեն՝ բարակ քննութեամբ կ'ընդունուէր, որ մի՛ գուցէ մարմնաւոր խորհրդովք՝ շահադիտութեան, փառասիրութեան և կամ անկարդ սիրոյ պատճառաւ ըլլայ։ Մեղանչական արուեստներ բանող կամ յայտնի մեղուցեալ ոք մինչեւ որ առջի բարքը իսպառ թողած ըլլալը փորձով չցուցընեն՝ չէր ընդունուէր։ (Օքսոքն. Նոմ. յԱ. տոլոզ Տեսան 'ի Լերինն։) Որոնք որ կ'ընդունուէին, հրամայութեան կարգը կը դրուէին, ոչք իրր երկու տարի (աւելի կամ պակաս՝ ըստ հրահանգացն և ըստ վարուցն կրթութեանց,) հաւատոյ վարդապետութիւնը տրվելու կ'պարտէին

մանաւոր վերակացուաց՝ երիցանց և եպիսկոպոսաց քարոզութեամբք, որք և եկեղեցի ալ կու գային քարոզի ունկնդրութեան. այլ 'ի ժամ մատչելոյ Ս. պատարագին՝ դուրս կ'ելլային ապդարարութեամբ Սարկաւագին, ինչպէս ցայժմ կը ձայնէ Սարկաւագը 'ի մեզ. «Մի' ոք յերախայից, մի' ոք 'ի թերահաւատից, և մի' ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձենայի 'ՅԱստուածային խորհուրդս»: Երախայութեան ժամանակը լրանալուն՝ «Իբրեւ հասանէր օր մկրտութեան՝ ածէին զերախայն յաւազանն սուրբ. և հրաժարեցուցեալ զնա անդէն 'ի սատանայէ և 'ի խաբէութեանց նորա՝ հարցանէին նմա զխորհուրդ Ս. Հաւատոց. և նա պատասխանի տայր ասելով զԱռաքելական հանդանակին: Բազում այն էր (այս բոլոր՝ այն էրը պէտք է կարդալ միշտ՝ մինչեւ չորեքտասաներորդ դար) զի ընկղմամբ պաշտէին զմկրտութիւնն, երիցս յաւազանն ընկղմելով զերախայն. և առ մի մի նուագ անուանելով կարգաւ զմի յանձանց սրբոյ Երրորդութեան՝ զՀայր և զՈրդի և զՍ. Հոգին: . . . Զորդիս հաւատացելոց ածեալս 'ի մկրտութիւն՝ ինքնապէս մկրտէին, չսպասեալ և լրանալոյ աւուրց ութից. և պատասխանի տային ընդ նոցա կնքահարք և կնքաւարք: . . . (Մկըրտեալքն եւս և) նորահաւատք զեօթն աւուրս կրէին զպիտակ հանդերձն՝ զգեցեալս յելանել անդ իբրեանց 'ի Ս. աւազանէն, առ 'ի յանդիմանութիւն անմեղութեանն զոր պարտ էր պահել նոցա մինչեւ ցօր մահուն . . .»: (Ցլէօրէ, 'ի կենցաղ. Քրիստ. Մասն Բ. ցօղ. Բ:) «Մկրտութեամբ երախան եկեղեցի կ'ընդունուէր, որ երեք անգամ ընկղմելով կ'ըլլար: Այս սովորութիւնը տեւեց մինչեւ չորեքտասաներորդ դար . . .: Այն ամեն էական արարողութիւնները՝ որոնք հիմայ մկրտութեան ժամանակ կը պահուին, երկրորդ դարուն մէջ արդէն կային:

Նոյն ժամանակն արդէն սովորութիւն կար տղաքը մկրտելու. և որովհետեւ ասոնք հաւատոյ դաւանութիւն չէին կրնար տալ, անոր համար իրենց տեղակալները (կնքահայր կամ կնքամայր) կ'ուներ նային, որոնք մկրտելոյն քրիստոնէութեան մէջ կրթուելուն երաշխաւոր կ'ըլլային»: Վարդան Վ. Բոլոքեան. 'ի պատմ. եկ. Շրջան. Ա. Հատած Գ. եր. 93. տպ. Վենետ:)

ԳԼՈՒԽ Բ.

ԴՐՈՇՄ

Դրոշմն է Ս. խորհուրդ եկեղեցւոյ՝ կնիք Ս. Հոգւոյն, որ զմկրտեալն միանգամ՝ զօրացուցանելով 'ի հոգեւոր կեանս, սպառազինէ պատրաստ 'ի յաղթութիւն մեղաց, և խոստովանել զհաւատս մահու չափ: «Զայս գրեցի ձեզ, զի մի' ոք զձեզ մոլորեցուցանիցէ. և դուք օծութիւնն՝ զոր ընկալարուք 'ի նմանէ, բնակեսցէ 'ի ձեզ. և չէ ինչ պիտոյ եթէ ոք զձեզ ուսուսցէ, այլ որպէս զի նորա օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վասն ամենայնի»: (Ա. Յովհ. Բ. 26—27:) «Որով և դուք իբրեւ լուարուք զբանն ճշմարտութեան, զԱւետարանն փրկութեան ձերոյ, որով հաւատացեալ կնքեցայք Հոգւովն սրբով աւետեաց, որ է առհաւատչեայ ժառանգութեան մերոյ 'ի փրկութիւն նուաճութեան, 'ի գովեստ փառաց նորա»: (Եփես. Ա: 13—14:)

Դրոշմ՝ Հայերէն կը նշանակէ նիւթ, և Հայաստանեայց եկեղեցւոյ սահմանադրութեամբ կը կատարուի Ս. մկրոնով, կնքելով օծութեամբ զնորհաց Ս. Հոգւոյն. «Այլ որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ

'ի Քրիստոս, և օծ վճեղ. Առտւած է. որ և կնքեաց զմեզ, և ետ զաւհաւաստիեայ Հոգւոյն 'ի սիրտս մեր» : (Բ. Կորնթ. Ա. 21—22։)

Այս կնիքը կը դրուի նախ 'ի ճակատն որ է կանանց՝ ընդդէմ «իւղ անոյշ յանուն Քրիստոսի ✠ հեղեալ 'ի վերայ քո, կնիք երկնաւոր զարդեւացն» . և յետոյ՝ իրրեւ աւրհղնացուցիչ մասունք՝ ուխտ (կամ ձիչդը՝ տասուերկու) տեղւանք ալ կը դրոշմի՝ տահմանուած մաղթանքներով, հինգ զգայարանքներն ալ մէկտեղ ըլլալով . աչուընները, առնջները, քիթը, բերանը, ձեռուընները, սիրտը, քամակը և ոտուընները : Եւ որովհետեւ Հայաստանեայց Եկեղեցին Մկրտութեան խորհրդոյն կիւ և Դրոշմի խորհուրդը կը մասատակարարէ , ուրեմն կը հասատատ այսու՝ թէ սա (թէ՛եւ որիշ խորհուրդ ըլլալով 'ի մկրտութենէ՝) նորա չարունակութիւնն է . իրր զի Քրիստոս մկրտուելէն անմիջապէս ետքը օծուեցաւ Ս. Հոգւով. (Ղուկ. Գ. 22.) վասն որոյ և տահմանադրեցաւ Եկեղեցւոյ մէջ 'ի սկզբան Քրիստոնէութեան՝ կիւ մկրտութեան և կինիք Հոգւոյն դրոշմել մկրտելոյ : Ըստ որոյ և Առաքեալք նախ զառաջինն ինքեանք կնքուելով 'ի Հոգւոյն , (Գործ. Բ. 4.) իրենք ետս մկրտելոյ անմիջապէս կու տային դրոշմ կամ կնիք՝ ձեռնադրութեամբ , (Ը. 15—18։ Ժթ. 6.) 'ի գիտութիւն և յաճումն Աւետարանին , (Հմ. Ժե. 19։ Եբր. Բ. 14.) 'ի չինուած Եկեղեցւոյն Քրիստոսի , (Ա. Կորնթ. Ժ.Բ. 7.) 'ի նորոգութիւն մկրկրտելոյց ըստ Հոգւոյն , (Հմ. Լ. 6.) յորդեգրութիւն հաւատացելոյն Հօր , (Բ. 15.) յաւհաւաչեայ ժառանգութիւն փրկութեան , (Եփես. Ա. 13—14.) և ընդդէմ մարմնոյ ցանկութեանց պատերազմելու : Գ-ղ Ե. 16։) — Հայաստանեայց Եկեղեցւոյ Մխիթարեանը այս խորհրդոյս մատակարարութեան մասին ձեռնադրութեան հրահանգ մը չտար , բայց յայտնէ

է թէ արդէն վերոյիշեալ օծելը ձեռնադրութեան մէկ կերպն է :

Սկիզբները՝ Առաքեալք մկրտութեան հետ Դրոշմի կնիքն ալ կու տային մկրտելոյ՝ ձեռնադրութեամբ . (Ա. Կորն. Ա. 14—16։ Գործ. Ժթ. 3—6 եւ .) բայց ետքէն՝ իրր երեքտասաներորդ պարուն՝ Հռովմայեցիք բաժնեցին այս երկուքը . մկրտեալ երախայիկ դրոշմը զլացան , և տահմանեցին յարբունս հասնելնուն դրոշմել՝ երբ քրիստոնէականին սովրին : Այլ Հայոց Եկեղեցին անվոխիս կալաւ զոր ինչ ունէր 'ի սկզբան . քանզի բոլոր նախնի Եկեղեցիք և հաւորէն Հարք առաջնոց դարուց կը վարդապետէին թէ՝ ինչպէս որ ոտայ մանկունք իրենց ծնողաց և կնքահարց հաւատովք և 'ի հաւատս զարգանալու երաշխաւորութեամբ կը մկրտուին և պէտք է որ մկրտուին , այնպէս ալ Քրիստոնէից մանկունք մկրտուելեն անմիջապէս ետքը Ս. Հոգւոյն չնորհքն ալ պէտք է որ կնքուին , ըստ որում փրկչական և Առաքելական աւանդութիւն է : — Առաքեալք ետս երբ որ հաւատացեալները կը մկրտէին և կը կնքէին դրոշմիւ Ս. Հոգւոյն , բոլոր ընտանեօք՝ տարիք և որդւովք մանկտւովք կը մկրտէին ու կը դրոշմէին . (Ա. Կոր. Ա. 16. Գործ. Ժ.Գ. 15. 33.) զոր և կը հրամայէ Պետրոս : (Գործ. Բ. 38։) «Զորդիս հաւատացելոց ածեալս 'ի մկրտութիւն՝ միաբանէս մկրտէին՝ կ'ըսէ Կղեմդիոս Յէօրի Հռովմէական մատենագիրը , չսպասեալ և լրանալոյ աւուրց ութից . . . : Զհետ մկրտութեան պաշտէին և զօծումն իւղով օրհնեցեալ 'ի վերայ սրբոյ սեղանոյ . և կատարեալ վաղենային՝ ածէին զմկրտեալն առ Եպիսկոպոսն , որ աղօթիւք և ձեռնադրութեամբ տայր նոցա զՀոգին սուրբ , այս է դրոշմն» : ('ի Հինգշաբ. Քրիստ. Մասն Բ. Գօդ. Բ։) «Հարք զդրոշմն հասարին աւրհղնական տան մկրտութեան . վասն որոյ և կոչեն զայն կա-

տարուն կամ լրումն սկրտութեան, և կխորհանոս յաւելու (Ընդ. Հբ.), «Յայնժամ լիով սրբի մարդ, «և որդի Աստուծոյ կարէ վինել, յորժամ իւրա- «քանչիւրովքն խորհրդովք ծնանի»: Ձարք իրր սնան սկրտութեան հանարին զդրոշմն, զի 'ի սկզբ- բանէ իւրաքանչիւր 'ի միասին պաշտէին խորհուրդք, որպէս և ցարդ պաշտեն յարեւելս. և զարձեալ զի զդրոշմն կատարէ զԲրիստոնէայն, տալով նմա հաստատութիւն 'ի հաւատս Քրիստոսի, և զինուոր Քրիստոսի զնա կացուցանելով: Քանզայսմ է խնդալ զբանն Ս. Կիպրիանոսի, որ 'ի նմին իսկ բանի զա- նապանէ խորհուրդս երկաքանչիւր»: (Ապոստ. Տէոդ. Հէ-րմ-ղ. Հատ. Բ. Ճռ. ԺԱ. Գլ. Գ. Առարկ. Բ.) «Ա՛ռ արեւելեայս վասն տուաւելագոյն վտանգին անդրշմ վախճանելոյ, և վասն առաւելագոյն կա- րեւորութեան խորհրդոյն՝ բնակելոցն 'ի մէջ անհա- ւատից, . . . զհետ սկրտութեան յարեն զայն իսկ և իսկ, որպէս և արեւմտեայք առնէին մինչեւ ցե- րեքտասաներորդ դար՝ այլ նոքա արդ 'ի զարդանալ մանկանն և 'ի չափ հասանել ընդունելոյ զԱ. Հա- ղորդութիւն, յայնժամ պաշտեն նմա զխորհուրդ զրոշմին, եթէ ոչ վտանգ մահու ստիպեացէ կան- խել: (Անդ:)

Խորհրդոյս պաշտօնեայք են Քահանայք և Ե- պիսկոպոսունք:

Միանգամ զրոշմեալը անհնար է վերստին զրոշմել ան նոյն պատճառաւ՝ զոր ըսինք սկրտու- թեան համար. և զի Զրոշմի խորհուրդը իրր շա- րունակութիւն և կատարումն է Սկրտութեան: Բայց երբ այն պաղանդաւորներէն կու գան՝ որք կամ խապատ չեն ընդունիր զրոշմի խորհուրդը, ինչպէս բազում՝ պաղանդք բողոքարկուաց, և չեն պաշտէր. և կամ անոնցմէ՝ որոց սկրտութիւնն ալ անվաւեր է՝ երբորդութեան մէկ կամ սկս անձին Աստուա-

ծութեան դէմ մեծար հաւատք ունենալով, անոնցմէ զարձողները կը զրոշմուին վերստին:

ԳԼՈՒԽ Գ:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Ապաշխարութիւնն է խորհուրդ վերկարար կա- ցուցեալ 'ի Քրիստոսէ՝ ներգործական մեղաց թո- ղութեան և հոգենորոգ կենաց համար: — Քրիս- տոս ինքն պատուիրեց զայս. «Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն երկնից». (Մտթ. Դ. 17: Մրկ. Ա. 15.) զի «եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենե- քին նոյնպէս կորնչիցիք»: (Ղ-ս. ԺԳ. 3—5:) Ա- ռաքեալք եւս զնոյն քարոզեցին միշտ. «Ապաշխա- րեցէք և դարձարուք 'ի ջնջել զմեզս ձեր, որպէս զի եկեսցեն ժամանակք հանդստեան յերեսաց Տեառն: . . . Ջժամանակս անցխութեան անտես արարեալ Աստուծոյ, արդ զայս պատուիրէ մարդ- կան ամենայն ումեք ապաշխարել՝ . . . զապաշխա- րութիւն կենաց»: (Գործ. Դ. 19—20: ԺԷ. 30: ԺԸ. 18:) «Զի որ ըստ Աստուծոյն տրտմութիւն է, ա- պաշխարութիւն 'ի փրկութիւն առանց զղջանալոյ գործէ»: (Բ. Կր. Է. 10:)

Ապաշխարութիւն՝ կը նշանակէ «զղջալ, եր- էն ցաւիլ, լալ, կոծիլ. և ըստ այսմ՝ ապաշխարու- թիւնն իրրեւ խորհուրդ՝ մեղուցելոյն տրտանց զղջ- ալուն ու տառապիլս ապաշխալ ցաւիլն է գործ- ածմանէրուն վրայ, զանոնք այլ եւս չգործելու հաս- տատուն դիտումով և առաջադրութեամբ: Ասկից բնականապէս կը հետեւի թէ զղջումը՝ խոստովա- նութիւնը և ապաշխարանքը՝ իրր նիւթ են այս խոր-

հրդոյս. սակայն ապաշխարանքը դղջման հարկաւոր հետեւանքն է եւ խորհրդոյս ամբողջութեան մասը եւն մասը չէ: Նախ՝ վասն զի առանց անոր խորհուրդն ու մեղաց թողութիւնը կը կատարուի. և երկրորդ՝ վասն զի օրհասական հիւանդներէ և անհնարին պարագայներու մէջ գտնուող ապաշխարողներէ ապաշխարանք չպահանջուիր, մինչդեռ խոստովանութիւնն ու դղջումը ամեն պարագայի մէջ և ամենէն կը պահանջուի:

Խորհրդոյս ձեւն է՝ Եկեղեցիէն սահմանեալ արձակման աղօթքը (որ այս դլխոյս էն վերջը դրուած է.) ենթակայ՝ ամենայն հաւատացեալք. և պաշտօնեայ՝ ուսուիչական և հոգեւ առաքինի քահանայապետք (1) և քահանայապետք:

Դղջումն է գործիլ գործած մեղքերէն իր զգրպտոյն պղծագործութենէ, այլ եւս ի նոսին չը գթելու հաստատուն կամօք և առաջադրութեամբ: Այս պայմանը՝ հարկաւորապէս հարկաւոր է վերկութեան համար, առանց որոյ թերի է խորհրդոյն կատարումը, և անհնար՝ մեղուցելոյն վերկութիւնը, եւ ինչպէս որ մեղքը սրտէն յառաջ կու գայ, այնպէս դղջումն ալ սրտէն պէտք է բղխի մեղաց առելութեամբ. չէ նէ՝ այն արտաքին վերի ի վերոյ դեղջը կամ դղջման ձեւը վայրապար և անօգուտ է. «Զարձարուք առիս՝ կ'ըսէ Տէրը, յամենայն սրտէ ձերմէ. պահօք և լալով և կոծելով: Պատառեցէ՛ք զսիրտս ձեր՝ և մի՛ զհանդերձս. և դարձարուք առ Տէր Աստուած ձեր»: (Յոէլ Բ. 12—13:) — Այլ՝ թէպէտ և դղջումը պէտք է ի սրտէ և ներքին ըլլայ սակայն իրրեւ մասն ապաշխարութեան խորհրդոյ՝

(1) «Պետ մկրտութեան թէպէտ միշ մեղանչել դարձեալ, ծածկի խոստովանութեամբն առանձինն միոյ առն յոյժ առաքինւոյ. զի ո՛չ ամենայն քահանայի պարտ է խոստովանել»: (Բ-ուէլ Ճռ. ի 49. Մ-ոլ Ճա. խԲ:)

իրաւացի է պահանջել որ դղալի ալ ըլլայ, ցարտաքին նշաններով եւս յայտնուի. զի անհնար է որ սրտի վոխոխութիւնը արտաքին վարուց՝ բարոյից չներգործէ: — Դարձեալ հարկաւոր է որ զըղջումը հաւատքէ յառաջ բղխած ըլլայ, այսինքն՝ անուանարկութենէ՝ դատաւորի վախէ՝ հիւանդութենէ և կամ մահու երկիւղէ ծնած դղջումը՝ Աստուծոյ ապաշաւանաց պէս կը մերժէ Աստուած. (Մ-ի-ք. Բ. 13.) ապաշխարողը անոր համար պէտք է առէ մեղքը, վասն զի Աստուծոյ գարշելի դգուելի է. վասն զի Աստուծոյ դէմ ապստամբութիւն՝ թշնամանք է. և վասն զի Աստուծոյ հակառակորդ թշնամոյն խորտանկ հնարագլուխութիւնն է:

Այս ամենէն բովանդակելով կրնանք ահսիանել թէ ճշմարիտ ապաշխարութեան ներքին և մասամբ ինն արտաքին նշաններն ատոնք են. — Ա. Մեղուցեալը իսկապէս մեղաց գարշութիւնը ճանչնալով՝ կը գարչի իր գործերէն և ի՛ամօչէ ինքն իրմէն. և հաստատ միտքը կը դնէ բնաւ վայրկեան մ՛ալ չդառնալ ի նոսին. առաջադրելով հանդերձ որ ապագային ալ բնաւ այն գործքերը չգործէ: (Երէմ. Լ.Ա. 19: Ց-ԼԲ. Խբ. 6:) — Բ. Աստուծոյ անհուն սէրն ու բարութիւնը միտքը բերելով՝ սրտանց կը ապաչ և կը ցաւի մորմոքելով, անոր համար որ Աստուած վշտացուցած է ու անարդած է իր անարժան գործքերովը, և խոնարհութեամբ ու հաւատքով ներողութիւն աղերսելու կը մատչի անոր: (Շ-ա. Բ. 5—8: Բ. Մնաց. Է. 14:) — Գ. Զղջալով այնուհետեւ անձնուրացութեան նեղ և անձուկ ճանապարհաւ կը վարուի. (Մտթ. Է. 13—14.) և կը ջանայ խլել հանել իր սրտէն մեղաց այն ամեն փուչերը զորս ինքնին սերմանած էր առաջ: — Գ. Ցաժառութեամբ սրտի կը չարչարուի անձամբ անձին՝ մարմնաւոր կրից ախ'ս ախ'ս նահատակութիւններով

ժուժկալութեամբ և պահօք· արտասուք կը թափէ, քուրձ կ'զգենու, կուրծքը կը ծեծէ, և ինքն իւր չարչարանաց վրայ կը բերկրի· (Կողոս· Ա· 24·) իւր մարմինը՝ կարեօք և ցանկութեամբք խաչը կը հանէ, (Գաղտ· Ե· 24·) — Ե· Իւր անբարի անցեալը միշտ աչքին առաջքն ունենալով կ'զգայ ըստ նեղքին մարդոյն նորոգութեան կարօտ ըլլալը· Հին մարդը մեռցնելու և նորը զգենլոյ համար Աստուծոյ շնորհաց կարօտութիւնը· (Եփես· Դ· 20—24·) յանձնապատան չըլլար, ո՛չ ալ անհոգ՝ իւր փրկութեան գործոյն, յօժարութեամբը Աստուծոյ հաճոյքը փնտռելու կ'ելլայ, անոր օրինաց ունկնդիր կ'ըլլայ, պցայք և պղերգել անոնցմով կը խորհի, և կը վախճաքի որ անոնցմով լցուի· կտրած և խոնարհ սրտով կ'ապրի, ամեն առեն իւր հաւատքն ու գործքը կը քննէ, կը ճդնի հաւատարիմ ըլլալ իւր ուխտին, բոլորովին Աստուծոյ կը նուիրէ իւր անձը, բարեգործութեան նախանձաւոր կ'ըլլայ, և աղօթքէն համ կ'առնէ։

Ապաշխարանքը՝ բոլոր վերը, ղկլման արտի հետեւանքն է· քանզի ի՞նչ է ղկլումը, եթէ ո՛չ գործուած մեղաց վրայ ճշմարիտ ցաւ, համչնալով առնոր անիրաւութիւն՝ յանցանք՝ մեղք ըլլալը· ապա ուրեմն՝ այն որ սրտանց կը ճանչնայ թէ գործածը անիրաւութիւն է և կը ցաւի ընդ այն սրտով, չը կրնար չհաստուցանել իրաւունքը, թէ և ո՛չ որ դատախազ կամ դատաւոր պահանջէ լրմէն· երբ մէկը կը ճանչնայ սրտանց թէ ըրածը գողութիւն՝ յափշտակութիւն է, չարիք՝ անիրաւութիւն է, կ'զգայ միանգամայն՝ թէ իրաւունքը հաստուցանելու համար հարկ է դժողնը առ ուչն դարձընէ· երբ մէկը սրտանց կ'զգայ թէ ըրածը զրպարտութիւն անուանարկութիւն է, կ'զգայ եւս հարկաւորապէս որ այն արատած անունը սէտք է սրբէ, եւ։ Ապա

ուրեմն Ապաշխարանքը (որ ոչ այլ ինչ է՝ բայց եթէ եղած վնասուն փոխարէնը հատուցանել,) ամենաբնական վճարում մ'է առ մարդ։ — Այլ ուրիշ բան է ընդդէմ Աստուծոյ եղած մեղաց ապաշխարանքը։ Աստուծոյ դէմ եղած է'ն ջնջին մեղքին փոխարէնն անհնարին է որ վճարում մը ըլլայ։ Իբր դի մարդ իւր գործած էն թեթեւ յանցանքին փոխարինութիւն մը ընելու համար բնա'ւ բացատրիկ ժամանակ չունի· դի երբ ալ ըլլայ որ նախընթաց յանցանքի մը փոխարէն ըլլալու համար բարիք մը գործէ, այն բարիքը նախընթաց յանցանքին փոխարէն չկրնար ըլլալ, դի 'ի նմին իսկ ժամանակի նոյն բարիքը գործելու և չարիքէ զգուշանալու պարտաւոր էր· ապա ամեն ժամանակի գործուած բարիք՝ նոյն ժամանակի պարտիքը է· անցեալին քաւում չէ· և երբ բարիք գործելու պարտականութիւններուս հակառակ չարիք մը գործեմք, միշտ անփոխարինելի անվճար կը մնայ· ասոր փրկանք կայ մեր գործքերովը· և եթէ ըլլայ որ բացատրիկ ժամանակ ալ ունենանք գործել փոխարինութիւն, կարելի չէ որ հատուցում ընել բաւեմք· դի ամենէն թեթեւ պատուիրանազանցութիւններիս այնչափ մեծ մեղք է՝ որչափ մեծ և ահաւոր է նոյն պատուիրողը, և բնականապար անոր մեծութեան արժանաւոր փոխարինութիւն ընել անհնար է։ Ապա չնորհքը կը մնայ միայն սրբել այն մեղքը, որուն արժանաւորելու համար հարկ է սրտանց լալ, պատատիլ, աղաչել, խնդրել և ժտել իսկ յԱստուծոյ գթութենէն և ողորմութենէն· միանգամայն առ նմանիս հանապազօրեայ պարտիքը կատարելով տրտմով, ողորմութեամբք, գթութեամբ, եւ։ և ահա այս է առ Աստուած ապաշխարանք ըսածնիս, որ տիրապէս նայելով ապաշխարութեան անհրաժեշտ հետեւանքն է իբր հարկաւոր պտուղ նորա կամ գործք· ճըշ-

մարիա պարտ և ո՛չ հոգուցոյ. «Դուք յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասացէք թէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել՝ արարաք» : (Ղ-ի· ԺԷ· 10։)

Մարդ չն թէ թէեւ յանցանքով որ կը գործէ ընկերին դէմ և կը մեղանչէ առ մարդ, մի և նոյն ատ մեղանչական ներգործութեամբ կը մեղանչէ և առ Աստուած : Ա՛ւ մարդ-միջոցաւն հաւուցմանբ բնական որդորութիւնը տեղը կը բերուի. իսկ առ Աստուած հաւուցումը մրկանքը մրկանաց գինը Յիսուս Քրիստոս մեր յաւիտենական փրկիչն է. առ որ դիմել պարտի ապաշխարողը զղջմամբ սրտի իր մեղքերը խոստովանելով, և անոր յաւիտենական արդարութիւնը խնդրելով. «Աստ՛ղ ու նախ զանօրէնութիւնս քո, դի արդ արասցես» կ՛ըսէ Տէրը· (Ե-յ· ԽԳ· 26·) և ըստ այսմ խոստովանութիւնն մեզաց՝ որ ապաշխարութեան միւս մասն է, ինքզինք մեղապարտ ամբաստանել է առաջի Աստուծոյ և պարտաւոր օրինաց և պատժոց, ի մեղաց արձակուելու և թողութիւն խնդրելու համար :

Այսու ամենայնիւ, թէպէտ և մարդ ընդդէմ Աստուծոյ մեղանչելով՝ միայն Աստուծոյ պարտաւոր կը դառնայ, և ուստի պէտք է որ իւր մեղքը միայն անոր խոստովանի իբրեւ գերագոյն Օրէնսդրի և Դատաւորի, ի նմանէ և եթ ակն ունելով թողութեան մեղաց, բայց իմաստութիւնն Աստուծոյ ըստ որում համեցաւ սիրեցէն իւր օրէնքը մարդոց ձեռքով մարդոց տալու, և մեղուցելոց մեղքերը իւր ընտրեալ պաշտօնէից ձեռքով քաւելու, յայտնակս և հրամանեալք պարտաւոր են իրենց մեղքերը Աստուծոյ խոստովանելու, բայց ի ձեռն կամ առաջի արժանաւոր պաշտօնէից Եկեղեցւոյ, որոց ձեռքովը իւր օրէնքները տուաւ՝ յերկրորդումն ընդհանուր աշխարհի. և անոնց միջնորդական ա-

զօթիւքն ու ձեռնադրութեամբը արձակումն ընդունիլ ի մեղաց առ ի Աստուծոյ : Այլ ասով զերծ չըլլար իւր օրըստօրէական պակասութիւնները իւր առանձնական աղօթից մէջ առանձինն Աստուծոյ խոստովանելէ, մանաւանդ թէ պարտաւոր ալ կը դառնայ միշտ անձնաքննութեամբ իւր սիրտն ու խիղճը պարզել բանալ առաջի Աստուծոյ առանձնական խոհին մէջ :

Ի հնումն ևրը Աստուած գիտցուցիս Եղիսուսէն հանելով ի ձեռն Մովսէսի՝ անապատին մէջ հին ուխտն եկեղեցին կազմեց կարգադրեց օրինօք ծխուք և կարգօք, իւր ընտրեալ այս ժողովրդեան մէջ ապաշխարութեան և խոստովանութեան առեան մ՛ալ օրինադրեց՝ ի ձեռն քահանայից քաւութեան և թողութեան համար. առ որ չըլլալ պարտաւոր էր յանցաւորը կամ մեղապարտը ի դուռն տաճարին, իւր կարողութեան չափովը հեռը պատարագ մը տանելով, որուն գլխուն վրայ կը դնէր իւր ձեռքը և իւր մեղքը կը խոստովանէր. քահանայն ալ պատարագը Աստուծոյ մատուցանելով անոր արեամբը կը քաւէր անոր մեղքը, որ առաւելական նշանակին էր Գողգոթայի յաւիտենական պատարագին : Այսպէս կ՛օրինադրէ Աստուած. «Անձն որ . . . մեղանչիցէ միով իւրք ի նոցանէ, և խոստովան լինիցի զմեղն՝ զոր մեղաւ, մատուսցէ զնան յանցանացն իւրոց՝ զոր յանցաւ Տեառն, և զնան մեղացն զոր մեղաւ, էդ յօդեաց որոջ, կամ ալոջ մի յայծեաց զնան մեղացն, և քաւեսցէ զնան նորա քահանայն ի մեղաց անտի. և թողցին նմա մեղքն . . . : » (Ղ-ի· Ե· 4—10։) Դարձեալ օրէնդիտ քահանայք ըլլալով՝ մեղուցեալը պարտաւոր էր բացէ ի բաց բան առ բան խոստովանել յուսին քահանային, որ նա ալ կ՛իմացընէր անոր՝ ըստ Աստուծոյ օրինաց իւր մեղայ քաւութեան համար

բերելիք զննին. զի «մատուցանիցէ զպատարագս իւր ըստ օրինացն խոստովանութեանց իւրեանց»: (Ղեւտ. իզ. 18—21:)

Խոստովանութիւնն մեղաց՝ ըստ օրէնադրութեանն Մովսիսի՝ ընդհանուր պարտականութիւն ըլլալով Աստուծոյ արդարութեան համար, ցորչափ մահացու ծանր մեղք կը հաւատրի գանցառութիւնը, և Աստուծոյ անէծքը թող իմ վրաս գայ կ'ըսէ՝ «եթէ ընդոծի ղեղբ իմ ակամայ ոչ գուշեալ. գէ ո՛չ ամաչէ՛ի քաղաքացդ ամբոխէ, ա՛ս՛ի ղպարծելոյ ատաջէ նոցա»: (ՅովՀ. Լև. 33—34:) Ըստ այսմ՝ ի Հրէայս եւս մեղաց խոստովանութիւնը Ապաշխարութեան հարկաւոր պայմանը համարուած էր. վասն որոյ երբ որ Յորդանանու եղերքը Ապաշխարութեան քարոզին՝ մեծին Յովհաննու ձայնը լսուեցաւ, բոլոր Հրէաստանի իսրայէլացիք խուռն հոն վազեցին, և ապաշխարութիւն յանձն առնողք՝ «Մկրտէին՛ի նմանէ՛ի Յորդանան գետ, և խոստովան լինէին զնդեղ իւրեանց», կամ «խոստովանել զնդեղ իւրեանց»: (Մտթ. Գ. 6: Մրկ. Ա. 5:) Եւ կը հարցընէին անոր ամեն դասու յանցուցեալք, հասարակ ժողովուրդը, մաքսաւորք և զինուորք՝ իրրեւ ապաշխարողք՝ թէ ի՛նչ ապաշխարութեան գործ գործեմք: (Ղուկ. Գ. 10—14:)

Բայց որովհետեւ Հրէից մէջ թերի էր այս խորհուրդս, ըստ խոստովանութեան յանցուցելոց պատարագները միայն կը մատչէին, որք Քրիստոսի պատարագին ցոյցերն ըլլալով պիտի վերնային, մեղաց թողութեան արձակման իշխանութիւն որուած չէր քահանայից, զոր Քրիստոս պիտի տար յանուն իւր արձակել զմեղուցեալսն. անոր համար երբ որ դպիրք և փարիսեցիք՝ առ մեղուցեալս ոմանս՝ Յիսուսի «թողեալ լիցին քեզ մեղք քո» (Մտթ. թ. 2: Ղուկ. Է. 47.) ըսելը լսեցին՝ հայհոյութիւն համարեցին ու ըսին, «Զի՞նչ է այս՝ որ խօսի սա զհայ-

հոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ՝ միայն Աստուած»: (Մրկ. Բ. 7:) Ուստի Յիսուս՝ որպէս զի նախապատրաստէ ժողովուրդը և հաւատալի ընէ անոր որ մեղաց թողութիւն տալու իշխանութիւն կրնան ունենալ մարդիկ Աստուծով, ըստ որում հանդերձեալ էր խոստովանութեան մեղաց թերին լեցընել և խորհրդոց կարգը բարձրացընել դայն, զոհերը վերցընելով և անոնց տեղը մեղաց արձակման իշխանութիւնը տալով Քահանայից, հրաշիւք հաստատեց, թէ «Իշխանութիւն ունի Որդի մարդոյ՛ի վերայ երկրի՝ թողուլ զմեղս»: (Մրկ. Բ. 8—10.) յայնժամ «ժողովուրդքն զարմացան, և փառաւորեցին զԱստուած զտուիչն այնպիսի իշխանութեան ՄԱՐԴԿԱՆ»: (Մտթ. Թ. 7—8:) — Աւետարանիչը իւր բացատրելով կ'ըսէ այս ՄԱՐԴԿԱՆ բառը, չըսէր մարդոյ կամ Քրիստոս, այլ ՄԱՐԴԿԱՆ, անուանակոչ՛ի Յիսուսէ Քրիստոսէ եղբէն ամբողջ Եկեղեցական դասուն ընդունելիք իշխանութիւնը իրր կանխաւ ծանուցեալ քարոզելով: Ըստ որում Քահանայապետն խոստովանութեան մերոյ (Եբր. Գ. 1.) երբ որ հանդերձեալ էր հաստատել յերկինս՝ մտանել՛ի նեղքին կողմն վարագուրին յանդիման լինել երեսացն Աստուծոյ բարեխօս վասն մեր, Աքքայութեան բանալիները իւր աշակերտաց ժողովոյն յանձնելով «Ամէն ասեմ ձեզ, զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս» (Մտթ. ԺԸ. 18.) ըսելէն եետը՝ չնորհաց Ս. Հոգին պարգեւեց անոնց. «փչեաց՛ի նոսա և ասէ. Առէ՛ք Հոգի սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա, եթէ զոմանք ունիցիք, կապեալ լիցի»: (ՅովՀ. Ի. 22—23:)

Խրաց արդիւնքն ալ չուտ մը երեւցաւ. «Բազումք՛ի հաւատացելոցն գային և խոստովան լինէին, և պատմէին զգործս իւրեանց»: (Գործ. ԺԹ. 18:) Եւ

Առաքեալք Քրիստոսի հետ բերան առ բերան խոսած լսելով քանդի քալ հանդուրժած էին Քրիստոսի առ նոսա ելումը մեղաց թողութեան և անթողութեան իշխանութիւն էր, և ո՛չ պիտոյ ձեռական հաւ բարով մը, զի յաւելցուցած եւս էր թէ «Որպէս առաքեաց զիս Հայր՝ և ես առաքեմ զձեզ»։ (Մատթ. ԻԸ. 18.) ու թէ՝ ինչպէս որ առաքեց զիս Հայր միջնորդ ելլալ հաշտութեան՝ զոր կատարեցի, նոյն հաշտութեան դործոյն չարունակութեան ալ ես զձեզ ինձ փոխանորդ կը կարդեմ։ Առաքեալք ալ իրենց թղթոց մէջ չատ տեղեր կը գրկին իրենց աշակերտաց՝ Հովսաց և Երիցանց Եկեղեցւոյ, հաշտութեան գործը չարունակել, և ժողովրդեան ալ թէ անկոյթ չելլան՝ ի նոյն, և մեղքերնին խոստովանին Երիցանց։ — Պօղոս՝ այն չնորհաց հասնար որ ձեռնադրութեամբ Երիցութեան ընդունած էր իբր Տիմոթէոս աշակերտը՝ ի գործն հաշտութեան, անփոյթ չելլալ կը խրատէ զինքը. (Ա. Տիմ. Դ. 14.) և կորնթացւոց յորդոր կը գրէ ի նոյն. «Այլ ամենայն ինչ Աստուծոյ՝ որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր ի ձեռն Քրիստոսի, ևետ մեզ պաշտօնն հաշտութեան։ Ե՛ քանզի Աստուած էր Քրիստոս զաշխարհս հաշտեցուցանել ընդ իւր, և չհամարել նոցա զմեղս իւրեանց, և եդ ի մեզ զբանն հաշտութեան. արդ վասն Քրիստոսի պատրամաւորեմք որպէս և Աստուծոյ բարեխօսութեամբ մեօք. աղաչեմք վասն Քրիստոսի՝ հաշտեցարուք ընդ Աստուծոյ»։ (Բ. Կոր. Ե. 18—20։) Գաղատացւոց եկեղեցականաց ալ կը գրէ. «Եղբարք, եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք ի մէնջ ինչ և իցէ յանցանս, դուք որ հոգեւորք էք՝ հաստատեցէք զայնպիսիսն հոգւով հեզութեան»։ (Գաղ. Զ. 1։) Յակոբոս Առաքեալ ընդհանուր եկեղեցւոց կը գրէ. «Հիւանդանայցէ ոք ի ձէնջ՝ կոչեսցեն զերիցուսն եկեղեցւոյն, և արասցեն ի վերայ

նորա աղօթս, . . . և եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողին նմա։ Խոստովան եղերուք միմեանց զմեղս, և աղօթս արարէք ի վերայ միմեանց, որպէս զի բժշկիցիք, քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց յօգնականութիւն»։ (Յակ. Ե. 15—16։)

Ու նախնեաք՝ Քրիստոնէութեան առաջին երեք դարերուն՝ մեծամեծ մեղաց կամ հրապարակաւ մեղուցեալները բանադրուելով ըստ հրամանաց Փրկչին, (Մատթ. ԺԸ. 18.) և ըստ նմանէ՝ Առաքելոց (Ա. Կոր. Ե. 4—5.) և սահմանադրութեամբ Եկեղեցւոյ, բոլոր խոստովանողք հրապարակաւ սպասխարութեան տակ կը դրուէին. բայց հրապարակաւ մեղուցեալք հրապարակաւ խոստովանելու պարտական էին՝ ի բժշկութիւն դայթակղեալ մըտաց. որոյ մէկ հետքը ցայսօր կ'երեւի Հայաստանեայց Եկեղեցւոյ Ս. Գատարագի խորհրդոյ մատուցման սկիզբը, ուր ժամարար քահանայն յատենի Եկեղեցւոյ հրապարակաւ կը գոչէ. «Խոստովանիմ առաջի Աստուծոյ . . . և առաջի ձեր հարք և եղբարք, զամենայն մեղս զորս գործեալ եմ ես»։ Բայց որովհետեւ այս հրապարական խոստովանութենէն քաղաքական գէշ հետեւանքներ ի վեր ելլել սկսան, Եկեղեցին խափանեց զայն իշխանաբար, և միայն արտաքոյ կարգի պարագայներու համար պահեց. սակայն առանձնական ախանջալուր խոստովանութիւնը միշտ պահեցաւ։

Ապաշխարողք եւս երախայից հետ պարտաւոր էին դուրս ելլել Եկեղեցիէն և դրանը մէջ ապաշխարել ի ժամ մատուցման Ս. Խորհրդոյն, երբ սարկաւագը կ'աղաղակէր, «Մի՛ ոք յերեխայից, մի՛ ոք ի թերահաւատից, և ո՛ւ ոչ յապաշխարողաց և չանդէպ մերձենայր Աստուածային խորհուրդս» և թէ «Եւ որք ո՛չ էք կարողք հաղորդիլ Աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէ՛ք և աղօթեցէ՛ք»։

Քրիստոնէութեան առջի դարերուն՝ ապաշխարութիւն կը դրուէր մեղուցեալոց ըստ մեղացն ծանրութեան՝ Եկեղեցիէն որոշեալ կանոնական օրինօք՝ տարիներով. և մինչեւ որ անխափ փորձերով քալ վերահաստ չըլլային անոնց 'ի սրտէ պղծմանը՝ չէին արձակէր և հաղորդութեան չէին ընդունէր: Բայց երբեմն այս կանոնեալ երկար տարիները կը հատուցուէին՝ ապաշխարողաց չերաջերմ եռանդեան նայելով: Երբեմն եւս ապաշխարողք մարտիրոսանալու տարուող խոստովանողներու միջնորդութեանը դիմելով՝ անոնցմէ բարեխօսութեան յանձնարարական գիրեր կ'առնէին առ Հարս ապաշխարողաց, որովք իսկոյն արձակումն կ'ընդունէին 'ի Հարց կամ 'ի Հայրապետաց և հաղորդութեան կ'ընդունուէին: — Բայց կրկին՝ մանաւանդ երեքկին մեղուցեալք 'ի մեծամեծս՝ մինչեւ իսկ վերջին թուշակէ կը պրկուէին իբր կատարեալք մեղուցեալք և անպղծք. որ թէ՛ և առանց սոգտանաց չէր, սակայն նպատակին դուռելի էր, և ժամանակին համար քաջայարմար:

Ապաշխարողաց Եկեղեցւոյ հաղորդութեան ընդունուելու կանոնական օրն էր Աւագ չորեքշաբթի և հինգշաբթի օրերը, ինչպէս նաեւ 'ի մեզ՝ Աւագ հինգշաբթի օրը առաւօտեան ժամերգութենէն յետոյ կը կատարուի յառաջ քան զճաշու ժամն՝ արձակել զապաշխարողս, որպէս պի 'ի Ս. Ջատկին հաղորդուին Ս. խորհրդոյն: Բայց թէ որ եկեղեցական ոք անանկ մեղքի մէջ լինար՝ որ հրապարակաւ խոստովանելու սոիպուէը, եկեղեցական պատուէն լինալով 'ի սպառ՝ աւեն պաշտաւնեքէ ալ կը զրկուէր, և հազիւ վերջին թուշակին կրնար արժանանալ մեծ պղծմանէ. — Սակայն եւոքերը հրապարակական ապաշխարութիւնն ալ հրապարակաւ խոստովանութեան պէս վերցուելով միւեւնոյն

պատճառաւ, իւրաքանչիւր խոստովանող մեղուցեալ խղճին յանձնուիլ սահմանուեցաւ վճարել խոստովանահօր կողմանէ սահմանեալ ապաշխարանքը: Այս՝ կրօնաւորութեան Ոսկի դարուն: Եկաւ պղնձի դարն ալ, յորում եկեղեցիք ոմանք սկսան ղեղծանիլ սովաւ. և մանաւանդ Արեւելեան և Արեւմտեան Եկեղեցիք միանգամայն՝ խօսք մէկ ըրած չլլս, որ իրարու ընդմիք մը չունենան: Պատճառելով թէ Եկեղեցին իշխան է խոստովանողաց ապաշխարանքը սահմանելու, երկարելու կամ համառօտելու, մնօրինելու կամ ներելու, ցոյնք տուգանք դրամոց փոխանակեցին ընդ գործոց ապաշխարութեան, տուգանաց անկամութիւնը մոլութեանց սանձ վարկանելով, որ մինչեւ ցայժմ կը տեւէ: Հռովմի պապերն ալ նախանձելով՝ ներողութեան վարդապետութիւնը հնարեցին, դրամով ներել գործուած մեղաց ապաշխարանքը: — Բայց այս զեղծումն է միշտ, և փոխանակ պղծման օգնելու՝ կը վնասէ մահու չափ: Ապաշխարութիւնը ի՛նչ է, եթէ ոչ՝ հատուցումն առ մարդ գործուած վնասուց, և առ Աստուած՝ 'ի սրտէ ցաւ և պղծումն վասն մեղաց և հաստատուն առաջադրութիւն այլ եւս չգործելոյ. և որոյ պատուղք և գործք են և նշան 'ի սրտէ պղծման բարեպաշտութիւնք, աղօթք, ծոմք, պահք, ողորմութիւնք, հակումնք ևն: Երբ այս պատուղներուն դրամները կը փոխանակեն, տունկերը արմատով կը չորնան կը գօսանան. ապաշխարութիւնը՝ ց՝ պղծումը խոստովանութիւնը առաջադրութիւնը՝ առնք աւեներն անպիտան անչահ անպտուղ կը մնան, հետեւաբար և կէտ եղեալ փրկութեան նպատակէն կը վրիպին: Վասն զի մեղանչողը կրնայ իւր հարստութեան վատահիլ, կամ՝ հարստութեան չափովը մեղանչել... Մեղքին քաւութիւնը ստակով ծախու առնելու բան մը լինել հրատարակուելէն

եղբը, չատ հաւանական չէ՞ մեղքը դործելու առ-
ջեն այս ոք մտածէ՝ թէ քաւութիւնն առանալու
չափ պրամ ունի՝ ի ձեռքը . . . : Հարատին հաւատ
արդեօք աշքայութեան մէջ տեղ կը պահի՞ ասնն
մեղք դործելէն եղբը . թէ՛ եւ Քրիստոս լուած ըլլայ
թէ ինր հոդոտութենը ջոդհացող հարուստին տեղ չը
կայ երկինքը : (Մ-ւդ. ժ. 23—24:)

Դիտել արժան է որ մեղաց թողութիւնը Ս. Հոդ-
ւոյն շնորհքներէն մին է . (Յովհ. ի. 22—23.) և Ս. Պետ-
բոս՝ որուն յաջորդներն եմք կ'ըսեն պապերը, կը
պատժէ այն ընչեղ մարդը որ ընչից կ'ուզէր առա-
նալ Ս. Հոդւոյն պարդեւները . (Գործ. Ը. 18—24.)
որոյ անուամբ Սիմոնական ձեղ կամ Սիմոնականութիւն
կ'անուանեն Առաքելածախութիւնը՝ եկեղեցական խոր-
հըրդոց դրամովը մատուցումը . դրամովը պահանջե-
լէ՝ ի պաշտօնէն, և կամ դրամովէ ստացեալէ ինչ ջն-
շորհոց, և ա՛չ իրը նուիրումը չնորհակալեաց, որ-
պիսի են յիշեալք, պատարագը եւ : Ուստի երբ որ
պապը Պետրոսի չհետեւելը, որ կը նղովէ հւպեւար
շնորհքներ առանալու համար փարայ առնողը, և կը
հետեւի Պետրոսէն նղովեալ Սիմոնեական Սիմոնին՝
մեղաց թողութեան համար փարայ ուղելով, ինք-
գինքը կը յայտնէ թէ որո՛ւ յաջորդն է, և որո՞յ
իշխանութիւնը կը վարէ : Զի միևչդեռ Առաւած
չանխաբեն ու կասկնիք չընդունիր յողորմութիւն և
՝ի պատարագ . (Բ. Օրին. ԻԳ. 18.) և անհատաս չը-
րկայք խոկ կորանէն դուրս կը նետուին Ցուդայի
վարձանք, (Մատ. ԻԷ. 6.) պապը ամեն ոճիրներու
դինը կ'ընդունի իւր դանձանակը, և կ'ըսէ թէ
անկակ Ս. Պետրոսի դանձանակն է :

Թէ այս խորհուրդը ապաշխարելով խոստովա-
նութեամբ վճարումն և արձակումը Առաքելական
դարէն ՝ի վեր ամեն առեն անընդհատ պաշտեցաւ
եկեղեցւոյ մէջ, և միշտ իրը անհրաժեշտ խորհուրդ

կը պաշտուէր, կը վկայեն առաջին դարուն՝ Ս. Դիո-
նէսիոս Արիսպագացի (Ա- Գեղեէ.) . երկրորդ դա-
րուն՝ Տերտուղիանոս (յղ. Ագէ. Գվ. Թ. ժ.) . եր-
րորդ դարուն՝ Որոգինես . (՝ի Ղեւտացին ճռ. Բ: ՝ի
Սաղմ. Լէ. ճռ. Բ.) և Ս. Կիպրիանոս . (յղ. Գրիգորէ.)
Ս. Գրիգոր Լուսաւորիչ (՝ի կանոն, կան. իբ: և ՝ի ճա-
ռաք.) . Լակտանտիոս (՝ի բէր- կան. Գր. Դ. Գվ. ժէ.)
Ս. Աթանաս (՝ի բան Ղաւ. ընդ արիոսէ.) . Ս. Բասի-
ղեղ (Ա- Ամֆիլոք.) . Ս. Գրիգոր Նիւսացի (՝ի կան-
ոնին. կամ. Զ: Գարձեալ ընդդեմ խոսիս պատուոյ.) . Ս.
Յովհան Ոսկեբերան (յերդուէ բէր- փահանայութեան.
Գվ. Ե: Գարձեալ ՝ի ճռ. Սամարուհացի և ՝ի դին. Ծննդ.)
և այլք բազումք, որոց խօսքերը բան առ բան մէջ
բերելը տեւելոյդ հատորեցինք . ՝ի մերոց միայն մէկ
երկու վկայութիւն յառաջ կը բերեմք ՝ի հաստատ
ութիւն ցայս վայր ասացելոցս :

Ներսէս Շնորհալի . «Տեսանեմք ո՛չ միայն գո-
ղութիւն, այլ և տուիչն վասն գողութեանն :
ո՛չ լոկ բանիւ, այլ և վճռամիտ երդմամբ ուրա-
ցութիւն, որոյ մեղաց չիք թողութիւն : Զի և ո՛չ
պղծութիւն և խոստովանութիւն առ այն՝ յորմէ գո-
ղացաւն . զի թողութեան իշխանութիւն դողոյն
յաղագս գողացելոյ իրին՝ որ տէրն է գողացեալ
դոյին, ունի, և ո՛չ օտար ոք խոստովանահայր :
Վասն որոյ զի ո՛չ խոստովանի նմա, և ո՛չ հաւատ
ցանէ՝ զոր գողացաւն ՝ի նմանէ և զրկեաց, ո՛չ ա-
ւելի չորեքկին ըստ մարգարէին Զաքէի, այլ և ո՛չ՝
զոր էառն, ո՛չ ընդունի թողութիւն յանիտեան » :
(Ընդհնր. Ընկ. ա- կքծ-ատր. ոգ ՝ի վ-ծոգթ. եր. 22—
23:) «Եւ եթէ ոք ՝ի ձէնջ մեղաւ այսոքիւք Առաւածոյ
և կամ այլ ինչ յանցանօք, մի՛ կացցէ հանապազ
՝ի նոյն ապտեղի տմարութիւնն մինչեւ ՝ի վախճանին
օր, այլ ՝ի ձեռն խոստովանութեան և ապաշխա-
րութեան քաւեսցէ զյանցանս իւր, և զործեսցէ

յայտարհեալ մոխանակ չարին զրպրիս» (Ա– երէց– էրջ– և համբէն խոշվէրթական. եր· 31ւ) «և այս միջի հաստարակաց օրէնք նոցա՝ի վերոյ ասացելոցն՝ արանց և կանանց, զորս կարճառօտիւք և թեթեւագոյն գրեցաք· երկիցս կամ երիցս՝ի տարւոջն խոստովանիլ գյանցանս իւրեանց՝ քահանայից, կամ ե՛ւս յոլովագոյն· և յանձն առնուլ զպատշխառութիւնն զոր դնէ քահանայն վասն մեղացն՝ կատարել պահօք և աղօթիւք և ողորմութեամբ, որով և Թողութիւն յանցանացն զոր խոստովանեցաւ՝ արժանաւորի մեզուցանէն գտանել յԱստուծոյ» ։ (Թղթ· ՚ի Սահակ Արեւորդեացն· եր· 140ւ)

Լամբրոնացի· «Ընդ Աստուած կորէ Թողուլ գմեզս՝ի ձեռն իմ և ո՛չ ես» ։ (՚ի Ղկն· պատարագի· եր· 66ւ)

Խորսել· «Աստանց խոստովանութեան չիք հնար քաւութիւն գտանել· վասն այսորիկ պարտ է փութալ՝ի խոստովանութիւն՝ քահանային խոստովանել միանգամ, և Աստուծոյ հանապազ» ։ (՚ի Ղկն· Յոհաննէսի)

Վերջապէս մեր Եկեղեցւոյ ծխատանի հրամանակարգ սահմանադրութիւնը կայ, որով կը կենդանի այս դլուխը· «Ընդէ քահանայ յապենի և ընդոծոյնէ՝ի ձոնէ ելլոցանէ, և ապաշխարողն ասէ· Մեղայ ամենատուր երկրպագութեանն ես· Ապաձեր խոստովանողն՝ ՚ի հաշտահաճութենէն հարցնէ, կամ յորժամիցէ ապաձեր՝ ըստ ինչ ձեզ ետքեալ եղե, զի ըստ ձեզէ յայտնեալ. և զքահանային եդեալ ընդոշխարան՝ ՚ի կատարել յանձն առեալ ապաշէ ընա ասելով· Հայր տուր՝ զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ միամին Որդին Աստուծոյ· զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ՝ արձակեացես զիս՝ի կապից մեղաց իմոց աղաչեմ զքեզ ։ — և քահանայն ապաշխարողն ընդունելի ձեզոյ ընդոծոյնէ, և այլ ևս զեղ ձեռն՝ ընդոշխարան, զոր և

հրամայէ կանոնքն· և ապա պարզէ արձակատն՝ի ձեռն· ողորմեացի քեզ մարդասէրն Աստուած, և Թողութիւն չնորհեացէ ամենայն յանցանաց քոց· խոստովանացելոցդ և մոռացելոց· և ես կարդաւս քահանայական իշխանութեան և հրամանաւն Աստուածային թէ (զոր արձակիցէ՛ք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս·) նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մեռանակցութենէ մեղաց քոց, ՚ի խորհրդոց ՚ի բանից և ՚ի գործոց, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ· և զարձեալ տամ զքեզ ՚ի խորհուրդս Ս· Եկեղեցւոյ· զի զոր ինչ գործիցես բարիս, եղիցի քեզ ՚ի բարեգործութիւն և ՚ի փառս հանդերձեալ կենացն· ամէն» ։

ԳԼՈՒԽ Դ·

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Հաղորդութիւնն է Ս· Խորհուրդ Եկեղեցւոյ սահմանեալ՝ի Քրիստոսէ, որով ընդ տեսակաւք հացի և գինւոյ՝ կը հաղորդուինք իսկապէս մարմնոյ և արեանն Քրիստոսի ։ — Յիսուս Քրիստոս՝ի լրումն աստուածային օրինաց Մովսիսի, այն զիշեր՝ յորում պիտի մատնուէր՝ ՚ի չիշատակ փրկագործ չարչարանաց խաչի և մահու իւրոյ օրինադրեց այս խորհուրդս այսպէս· «Եւ մինչդեռ ուտէին նոքա, առ Յիսուս հաց, օրհնեաց և երեկ, ևետ աշակերտացն և ասէ· Առէ՛ք կերայք՝ այս է մարմին իմ· Եւ առեալ բաժակ գոհացաւ՝ետ նոցա և ասէ· Արբէ՛ք՝ի դմանէ ամենեքին· զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ՝ի վերայ բազմաց հեղու՝ի թողութիւն մեղաց» · (Մատթ· ԻՋ· 26—28։ Մարկ· ԺԴ·

22—25։) « Զայս արասջիք առ իմոյ յիշատակի »։ (Ղ-ած. ԻԲ. 19—20։ Ա. կոր. ԺԱ. 23—25։)

Ջիսուս Քրիստոս՝ ի յիշատակ յաւիտենական պատարագի անձին իւրոյ սահմանելով իւր մարմնոյ և արեան խորհուրդը, հացով իւր մարմինը տուաւ մեզ կերակուր, և գինեաւ իւր արիւնը՝ յորդումն։ Անիկա հացը օրհնելով սրբագործելով՝ «Այս է մարմին իմ» ըսաւ, և անապակ գինին՝ Ուխի բերէը օրհնելով սրբագործելով՝ «Այս է արիւն իմ» ըսաւ. ուստի՝ ի պատարագին՝ քահանային սրբագործած հացն ու գինին՝ իսկապէս մարմին և արիւն Քրիստոսի է՝ անոր յաւիտենական պատարագին՝ մահուան և թաղման յիշատակին ըլլալով. «Քանզի՝ ուր պատարագի Քրիստոս, ա՛նդ է խաչելութիւնն. և ուր մարմինն սուրբ առանց մարդկային նորա ոգւոյն ցուցանի, ա՛յն է գերեզման նորին. և ուր մեռելութիւնս մեր կենդանանայ, անդ հաւատացեալ կենդանութեան Որդւոյն Աստուծոյ։ Չի թէ՛եւ մահու նշանակ է հացն և բաժակն, այլ կենդանի և կենդանարար է. ի՞նչ ինքն ասաց. Այս է հացն կենդանի որ յերկնից իջեալ է»։ (Յոսեբ. ՚ի Գէն. Ժամանէբ. ՚ի վերայ Եկեղեցիս ամենընդհանուր տօրուցն, որ ընդ հոգին. եր. 79։)

Ջիսուսի Քրիստոսի մարմնոյ և արեան խորհրդոյն վրայ չէ թէ նորադարձից մտորութեանը պէս հաստատուն ոչն անոր մարմինն ու արիւնը ՚ի մեզ կ՚ընդունինք հաց լոկ և գինի լոկ ճաշակելով. ոչ ալ ըստ ուրանոց բողբարկուսաց՝ ՚ի հացն և ՚ի գինին Ջիսուսի հոգևորապէս ներկայութիւնը միայն կը տեսնենք. անանկ որ անարժանութեամբ ճաշակողք լոկ հաց և գինի ճաշակած ըլլան. որ թէ որ անանկ ըլլար՝ դատապարտութեան տակ չէին իյնար անոնք, բայց Պօսքեսը անոնց համար կ՚ըսէ թէ դատապարտութիւնին կ՚ուտեն ու կը խմեն. «զի

որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատապարտութեան անձին իւրում ուտէ և ըմպէ»։ (Ա. կորնթ. ԺԱ. 29։) այլ՝ նոյն հացն ու գինին սրբագործելէն ետքը իսկապէս Քրիստոսի մարմնոյ և արեան կը վերածուին. ինչպէս որ նոյն առաքեալը կ՚ըսէ. « Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք՝ ո՞չ մասնակից արեան Քրիստոսի է. հացն զոր բեկանեմք, ո՞չ մասնակից մարմնոյ Քրիստոսի է»։ (Ա. կորնթ. Ժ. 16։) Համագրութիւն է, կ՚ըսէ, այ կցորդութիւն՝ մասնակցութիւն, խառնութիւն է. չէ թէ բաժակը իմոզին կրամ հոգը ոտոզին հասար, այլ բուն իսկ ԳԻՆԻՆ և ՀԱՑԸ համագրութիւն է Քրիստոսի արեան և մարմնոյ կ՚ըսէ, ՈՒՏՈՂ ԽՄՈՂ ԸՆԴՈՒՆԻ ԿՈՒՄ ՈՉ։ Որ ըսել է դինին օրհնուելով Քրիստոսի արեան հաղորդութիւն կ՚ընայ, այ Քրիստոսի արիւնին հետ կը հաղորդուի մէկ կ՚ըլլայ, Քրիստոսի արեան կը կցորդուի՝ կը խառնուի՝ կը վերածուի. նոյնպէս և հացը օրհնուելով՝ Քրիստոսի մարմնոյն հաղորդութիւն կ՚ընայ, այ՝ Քրիստոսի մարմինին հետ կը հաղորդուի կը կցորդուի կը խառնուի մէկ կ՚ըլլայ։ Այսուհետեւ այն հացն ու գինին բողբարկանաց լսածին պէս Քրիստոսի մարմնոյ և արեան նշանները չեն, այլ ընդ սեռակաւ հացի և գինւոյ բուն իսկ Քրիստոսի մարմինն ու արիւնն են. կամ Պօղոսի բառումն ընեւք, Քրիստոսի մարմնոյն և արեանն հաղորդուած վերարկուած՝ (պեռիկա և ԷՒ) հաց և գինի են։ Ասանկ այս սիոք և դիտաւորութեամբ կը սրբագործէ Հայաստանեայց Եկեղեցին ալ նուիրատուաց հացն ու գինին՝ ըսելով. «Զսով զհացս զայս օրհնեալ [1] մարմին և արիւն Ջրիստոսի սրբացեա (1)

(1) Պատարագամատուցի այս -ր-ոյ- բառն ալ -ր-ուէ փոխուած է Մխիթարեանց տպագրութեանցը մէջ, անշուշտ նախնեաց գրուածոց հրատարակութեան էն-ը-ծ հատորնս. Խ-ր։

Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ֆրնտ-
նելվ Հոգւովդ քով սրբով։ (Պօպոբօֆոպոյց։)

Յայս միտս Աստքեալը կ'ըսէ դարձեալ. «Բա-
նի՛ցս անգամ թէ ուսիցէք կհացս զայս՝ և պատժակս
ընդիցէք, զնահն Տեառն պոպէ (ըստ. Ցն.), մինչեւ
եկեսցէ նա։ (Ա. կորնթ. ԺԱ. 26։) Ասիկայ հրաման
մը չէ՝ թէ այս խորհուրդս կատարուած ժամանակ-
նիդ՝ Տէրոջը մահը պոպեշէ, այլ բուն այս խոր-
հուրդս կատարելով հոգը ուղելով գինին խմելով Տէ-
րոջը մահը կը պոպե կ'ըսէ. որ ըսել է թէ՝ այն
հացն ու գինին լոկ հաց ու գինի չեն. նշանակներ ալ
չեն. այլ՝ Յիսուսի խաչին վրայ թեկեալ մեռեալ
կուսածին մարմինն, և խաչին վրայ թափուած ան-
պարտ կուսական սուրբ արիւնն է, որովք պատա-
րագուեաւ նա վասն բազմաց կամ միմիանակ բազ-
մաց. այն մեզի համար ի մահ պատրաստեալ
մարմինն ու արիւնն է, որ յիշատակ է Յիսուսի
մահուան, և զորս ճաշակելվ ՊԱՏՄԱԾ չէշտ կ'ըլլանք
անոր մեզի համար մահը։

Ո՛չ միայն մարմին և արիւն, այլ միանգամայն
պատրաստեալ. ըստ որում կ'ըսէ Աստքեալը եւս.
Տեսէ՛ք կխորհիլն ըստ մարմնոյ, ո՞չ տպաքէն որ
ուտեն ի զհիցն, հալորդք են սեղանոյն։ Իսկ
արդ պի՞նչ ասեմ. եթէ զոհեալն իցէ՞ ինչ. և կամ
կուռքն իսկ՝ իցե՞ն ինչ։ Այլ զոր զոհեն հեթանոսք
դիւաց՝ և ո՛չ Աստուծոյ զոհեն. ո՛չ կամիմ զձեզ
հալորդս դիւաց լինել. քանզի ո՛չ կարէք ընթանալ
Տեառն ըմպել՝ և ընթանալն դիւաց։ Եւ ոչ կարէք ի
սեղանոյ Տեառն վայելել՝ և ի սեղանոյ դիւաց։ (Ա.
կորնթ. ժ. 18—20։) Ուր ահա յայտնապէս կը բա-
ցատրէ միտքը. Բանի՝ Տեառն և Սեղան Տեառն կ'ան-
ուանէ. սեղանը՝ ընծայարան է. սեղանին վրայ դիտ զոհ
կը մատուցուի. և այն սեղանը՝ որ Աստուածային
Նուիրաց մատուցարանն է՝ սեղան Տեառն կը կոչէ.

որ ըսել է Հչմարտին Աստուծոյ մատուցեալ զոհից
ընդունարանը. Քրիստոնեայք ալ զնի սեղան անուն
ըսել է այս. և այն զոհն ալ բաժակն է կ'ըսէ, բա-
նի՝ Տեառն անուանելով զայն. ինչպէս և հեռա-
եալ գլխոյն մէջ կրկնելով՝ հոգ Տեառն և բանի՝
Տեառն կ'ըսէ։ — Դարձեալ սրսրագիական բան
մը յայնժամ Տեառն կ'անուանենք՝ կը յատկացը-
նենք, երբ Տէրոջ կը նուիրուի, կը ընծայուի կը պատ-
արագուի. ապա թէ ոչ՝ չկրնար բան մը յատկապէս
Տեառն ըսուիլ, զի ամենայն ինչ Տեառն է. ապա
Աստքեալը իրրեւ զոհ՝ պատարագ նկատելով կ'ըսէ
բանի՝ Տեառն և հոգ Տեառն. զոր խիստ յայտնի ցու-
ցընելու համար ալ՝ ի կիսու կը դնէ հեթանոսաց
սեղաններուն և բաժակներուն հետ, «բաժակ
Տեառն և բաժակ դիւաց», «սեղան Տեառն և
սեղան դիւաց» ըսելով. ուր ինչպէս որ սեղան դիւաց
ըսուելով պետերս զնահան կ'իմացուի, սեղան Տեառն
ըսելով ալ անպատճառ և հարկաւ Տեառն զոհարան
կ'իմացուի. ու ինչպէս որ բանի դիւաց ըսուելով
դեւերու զոհուած գինի կը հասկըցուի, բանի
Տեառն ըսելով ալ անպատճառ և հարկաւ Տէրոջ զոհ-
ուած պատարագուած գինի կը հասկըցուի։ Ասկից
դիտուեան ճառիս չհայ. Քրիստոնեայք ալ զնի
սեղան և զնի ունին և ունենալու են եղեր. զի այս
մանրամասնութիւններն ալ չըլլային նէ՝ արդէն
խօսքին ընթացքը ասիկայ կը յայտնէր. Աստքեալը
այս խօսքերով կուզ զոհելը՝ և կուզ զոհեալն ու-
տելը կ'արդելու. Հչմարտին Աստուծոյ զոհելը և
այն զոհեալն ուտելը չարդելուր. կը յիշէ Իսրայէլի
զոհապարծութիւնը ու չարդելուր, այլ՝ մարմնաւոր
կ'անուանէ զայն. և ետեւէն՝ Տէրոջը սեղանը ջն-
ջողը բաժակը վայելելու արուեստութիւնին յիշելով՝
Տէրոջ մարմնոյ և արեան խորհրդական պատարա-
գը հրամայած կ'ըլլայ։

Նոյն Առաքեալը դարձեալ կ'ըսէ · « Այսուհետեւ՝ որ ուտիցէ զհացս , կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ , պարտական եղիցի մարմնոյ և արեանն Տեառն · փորձեսցէ մարդ զանձն իւր և ապա՝ ի հացէ անտի կերիցէ , և՝ ի բաժակէն արբցէ · զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ , դատաստանս անձին իւրում ուտէ և ըմպէ · զի ո՛չ խտրէ զմարմինն Տեառն » : (Ա· Կորնթ· ԺԱ· 27—29:) Հոս ալ նոյն բաները կը հաստատէ · Ո՛վ որ անարժանութեամբ հոգը և գինին ճաշակէ՝ կ'ըսէ , Տէրոջը մարմինն և արիւնն պարտական պիտի ըլլայ — ինչո՞ւ · — « զի ո՛չ խորհի զմարմինն Տեառն » · լոկ հաց նկատելով ճաշակողը , իբրեւ հասարակ հաց կամ օրհնուած պարզ հաց ճաշակողը՝ պիտի դատապարտուի · անոր համար որ զայն Տէրոջ մարմինն չճանչնար · չխորհիր զայն միւս հացերուկն · անոնց պէս՝ հաց ուտելու պէս կ'ուտէ՝ կամ չատ չատ՝ Տէրոջը մարմինին նշանակին պէս կ'ուտէ , որ է ըսել՝ այն հացը ինչպէս որ իւր բերնէն ներս իւր մարմնոյն մէջ կը թափուի , այնպէս ալ Քրիստոսի մարմինը ՝ի դերեզմանի թափուեցաւ , և այն հացը ուտելը՝ այս բանը կը նշանակէ կը համարի · որով այն հացը միւս հացերէն խտրելու արժանի ոչինչ գերազանցութիւն մը կ'ունենայ · մինչդեռ Առաքեալը կ'ըսէ , «փորձեսցէ մարդ զանձն իւր , և ապա ՝ի հացէ անտի կերիցէ , և ՝ի բաժակէն արբցէ · զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ , դատաստանս անձին իւրում ուտէ և ըմպէ , զի ո՛չ խտրէ զմարմինն Տեառն » · խտրել պէտք է միւս հացերէն · Աստուծոյ տանը մէջ կերուած հացը՝ հասարակ հաց չկրնար ըլլալ · և այն հացը՝ զոր անարժանութեամբ ուտողը դատապարտութեան տակ կը տահմանուի , ընդհակառակն Տեառն՝ զոր ճշմարիտ Տեառն՝ (Ղեւտ· է·) մարմին Տեառն է այն , մարմին Աստուծոյ է այն ·

և վասն որոյ պէտք է մարդ նախ զանձն քննէ պատրաստէ և ըստ այնմ մերձենայ այն հացին և բաժակին՝ որ Տէրոջն է , և Տէրոջ մարմինն ու արիւնն է : Հոս ալ կ'ըսէ հաց Տեառն և բաժակ Տեառն · որով ըսել կ'ուզէ , թէ՛ եւ մարմինն և արիւն Քրիստոսի է , բայց մեզի համար պատարագեալ մարմինն ու արիւնն է , և ՝ի ձեռն Եկեղեցւոյ՝ Տէրոջը սեղանին վրայ կը պատարագուի : Ուստի մեծ պատրաստութեամբ՝ քննութեամբ անձին՝ զղջմամբ խոստովանութեամբ ապաշխարութեամբ բաղդատարարութեամբ և հեծութեամբ պէտք է մերձենանք Տէրոջ այն Սեղանին , ուր կը պատարագուի մեր Տէր Յիսուսի մարմինն ու արիւնը՝ ի յիշատակ անոր յաւիտենական պատարագին Ա՛ս այս մեծ ապացոյց է նաև Առաքելոյն միւս խօսքն ալ, որով կ'ըսէ թէ չատերն ալ կը պատժուէին հիւանդութիւններով, ախտաժէտութիւններով մահերով · վասն զի Տէրոջը սեղանէն մէջ Տէրոջ հոգը կ'ուտէին՝ իբրեւ լոկ հաց , իբրեւ օրհնեալ հաց , ինչպէս որ կ'ուտեն նորադաւանք , և իբրեւ մարմին և արիւն Յիսուսի՝ պատարագեալ ՝ի սեղան խաչին՝ չէին խորհիր : (Ա· Կորնթ· ԺԱ·30—33·)

Այս Ս· Խորհուրդս « Պատարագ » անուանելէնիք ընդդէմ նորադաւանդից , որք կ'ուրանան մեր բանաւորութեամբ · և Քրիստոսի այս գերագոյն Ս· Խորհուրդը լոկ հաց ուտելու և լոկ գինի խմելու պատմապարտ սովորութեան դարձուցած են , ընդեղով թէ Քրիստոս տաճարն ու պատարագները վերցուց , Քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ պատարագ չպիտի ըլլայ : Այլ ասկայն Մալաքիա կը խոյտատակէ այդ անզգահարան անձնուէրը քրիստոնէութիւնը · Աստուած՝ կ'ըսէ՝ Հրէից զոհերը պատարագները պիտի մերժէ · բայց անոնց տեղ հեթանոսք յԱստուածդիտութիւն (՝ի Քրիստոնէութիւն) գալով՝ անոնք պիտի մատուցանեն աստիճանք Աս-

աստծոյ անուան խունկեր և պատարագներ։ «Ձի ո՛չ են կատք իմ ՚ի ձեզ՝ ասէ Տէր Ամենակալ. և պատարագս ՚ի ձեռաց ձերոց ո՛չ ընկալայց. զի յարեւելից մինչեւ ՚ի մուտս արեւու փառաւորեալ է անուն իմ ՚ի մէջ ազգաց. և յամենայն տեղիս մատչէ խունկ անուան իմոյ, և պատարագ սուրբ. զի մեծ է անուն իմ ՚ի հեթանոսս ասէ Տէր Ամենակալ»։ (Մաղա. Ա. 10—11։ Սե՛ս նաև Եսայ. ԿՋ. 20—21։ ԿԱ. 5—6։)

—Հարկ էր ալ մարդարէին դուշակած պոհերուս այս փոփոխումը։ Մինչդեռ Հրէաստան Աստուածպաշտութիւնը միայն Հրէից ազգին մէջ սահմանափակուած էր, Երուսաղէմ և եթէ տեղի էր ուր արժան էր աղօթք և պատարագ մատուցանել Աստուծոյ. (Յովհ. Դ. 20.) այլ երբ ընդհանուր բովանդակ տիեզերաց իրաւունքն պիտի դառնար Աստուածպաշտութեան կրօնքը, կարելի չէր աշխարհի ծայրերէն յԵրուսաղէմ գալ խունկ և պատարագ մատուցանելու համար Հօրն հաւատացելոց. վասն որոյ և կը մարգարէանայ Մաղաքիա՝ թէ այնուհետեւ ամենուրեք պիտի կանգնէին զոհարանները Աստուծոյ։ Յարձակալ, քանզի գառնապետութիւնը որ «զոհ գառին Տեառն» էր, (Եբէա. ԺԲ. 27.) և յիշատակ փրկութեան Իսրայէլացւոց ՚ի ճեռաց Եգիպտացւոց, (Համբ 14—30։ Ժ.Գ. 6—16.) և անոր պետութիւն կ՚աստուերագծէր Քրիստոսի արեամբ փրկութիւնը ոչ պիտի լինէր. երբ որ Ճշմարիտ գառնն Աստուծոյ Յիսուս Քրիստոս պետաւ ՚ի խաչին, ալ այնուհետեւ նշանակութիւն չմնաց այն պատարագներուն և գառնապետութեան մէջ. լինելիքը եղաւ. հետեւաբար և բարձան անոնք։ Հին քահանայութիւնն ալ որ ըստ կարգի Ահարոնին էր՝ այն ալ վերցաւ. անոր տեղը բուն քահանայապետը եկաւ ըստ կարգին Մելքիսեդեկի. (Եբր. Ե. 6.)

նայութիւնը փոխուեցաւ նէ՝ հարկ էր որ սրբատարծութեան օրէնքն ալ փոխուէր. (Է. 12.) հաւանէն և այնպէս՝ Յիսուս Քրիստոս ալ՝ Մովսիսեան օրէնդրութեան՝ լինելիք դէպ ընդ որոշեալ պատարագներուն ալ տեղի չմնաց նէ՝ ԿԱՏԱՐՈՒԱԾ դէպ ընդ ակնարկեալ պատարագը սահմանադրեց, «զայս արարէք առ իմոյ յիշատակին» ըսելով. (Ա. Կոր. ԺԱ. 24—25.) Ահարոնեան կարգի քահանայից անբաւ անասնոց զենումներուն տեղ՝ ըստ կարգին Մելքիսեդեկի պատարագաց՝ (Ծննդ. ԺԴ. 18.) հաց և գինի սրբատարծելը օրինադրեց. (Ա. Կոր. ԺԱ. 23—25.) նոր՝ անարիւն զենման՝ նոր քահանայութիւն կազմելով. (Ղեւտ. ԻՌ. 20.) ինչպէս որ Եսայի մարգարէին ձեռքով նախասպատմած էր զայս. «Որպէս մատուցին ինձ Որդիքն Իսրայէլի գպատարագս իւրեանց սաղմոսիւք ՚ի տան Տեառն. և ՚ի նոցանէ առից ինձ ՚ի քահանայս և ՚ի Ղեւտացիս՝ ասէ Տէր. զորօրինակ երկինք նոր՝ և երկիր. զոր ես առնեմ կայ առաջի իմ, ասէ Տէր»։ (ԿՋ. 20—22։) Ապա ուրեմն ինչպէս որ գառնապետութիւնը յիշատակ ըլլալով Հրէից դերութենէ փրկուելուն և Յիսուսի խաչուիլը նշանակելով հանդերձ զոհ պատարագ էր, նոյնպէս և Քրիստոսի մահիճով և արեան խորհուրդը մարդկային ազգի մեղաց և սատանայի դերութենէ ազատուելուն յիշատակին՝ և խաչուած Յիսուսի մահը պատմող օրէնադրութիւն մը ըլլալովը հանդերձ՝ անարիւն զոհ և պատարագ է Աստուծոյ. որուն և յատուկ քահանայութիւն կազմեց իւր Առաքելոց դասը, և իշխանութիւն տուաւ անոնց քահանայագործելու։

Արդ՝ այս խորհուրդս այլ և այլ անուններով կը յորջորջուի։ Կ՚ըսուի Հաղորդութիւն, վասն զի նովաւ Քրիստոսի մարմինն ու արիւնը ճաշակելով Քրիստոսի կը կցորդուինք կը մասնակցինք կը հաղորդուինք, որով և համայն քրիստոնեայք ՚ի մի կը զան-

դուխք · «Զի մի հաց, մի մարմին եմք բազումք · զի ամենեքին ի միոյէ հացէ առնուն վայելումք»: (Ա· կոր· ժ· 17:) — Կ'ըսուի և Հաց բեկանել, և Օրհնութիւն կամ Գոհութիւն · (Գոր· Բ· 42—48: Ի· 7 եւն·) քանզի բեկումն հացի, օրհնութեամբ՝ նուիրագործութեամբ և գոհացողական մաղթանօք կը կատարուի · ըստ որում Ցիսուս Քրիստոս ի սահմանելն զայս՝ «Առ Ցիսուս հաց, օրհնեաց և եբեկ, . . . և առեալ բաժակ գոհացաւ . . . և օրհնեցին . . . և գոհացեալ եղեն ի լեառն Ձիթենեաց»: (Մատ· ԻՋ· 26—30: Մ·էկ· Ժ·Դ· 22—26: Ղ·ուկ· ԻԲ· 19: Ա· կոր· ԺԱ· 23—29:) — Կ'ըսուի նաեւ Պատարագ, վասն զի Քրիստոսի պատարագին խորհուրդն է, և վասն զի Քրիստոս խորհրդապէս կը պատարագուի իւր մարմնով ու արեամբը Ս· Սեղանոյն վրայ, ինչպէս որ պատարագուեցաւ խաչին վրայ: — Կ'ըսուի եւս Տէրունական Ընդունէ կամ Վերջին Ընդունեաց խորհուրդ · քանզի Ցիսուս այս խորհուրդս սահմանեց իւր մարմնաւոր կենաց է'ն վերջին իրիկուան կերակուրը կերած առեն, ուր պատկական գառը կ'ուտէին, որ իւր վերնատեղը ըլլալուն նախանձայար միշտակին էր · զոր փոխեց վերնատեղ ըլլալուն միշտակին: — Եւ վերջապէս կ'ըսուի պարզապէս խորհուրդ · առաքելոյն և գերազանց խորհուրդ ըլլալով · խորհուրդ մարմնոյ և արեան Տէառն · խորհուրդ չարչարանաց և մահուան Փրկչին · խորհուրդ բովանդակ վրկագործութեան՝ հաստուցմանէ արդարութեան և քաւութեան ըլլալով Աստուածառնորդ միակ Միջնորդին:

Խորհրդոյս նիւթ են ցորեն հաց և խաղողէ գինի:

Ցիսուս Քրիստոս Պասեքայ առնի ընթրեաց առեն սահմանադրած ըլլալով այս խորհուրդս, անխոնջ հաց՝ բաղարջ էր բեկածը · Պասեքայ տեղացին վրայ խմորուն հաց չէր կրնար գտնուիլ · զի այն առնին եօթն օրերը արդելուած Հրէից խմորեալ

ուտել՝ ընդ պատժով մահու · ո՛չ ալ ամենեւին տուներնին պիտի գտնուէր խմոր · (Ելէց ԺԲ· 15·) վասն որոյ և բոլոր Եկեղեցիք սկիզբէն անխմոր հաց կը գործածէին Ս· Խորհրդոյս մէջ · ինչպէս որ ցայսօր նոյնպէս անխմոր նուէր կը հանեն սեղանը բազում Եկեղեցիք, ընդ որս և Հայք: Բայց Արեւելեան Եկեղեցին ետքերը նկատելով որ Ս· Գիրք ո՛չ ուրեք և ո՛չ ի սահմանադրական բանս Ցիսուսի՝ բացէ բաւ բառը գործածեր են, իբր հարկաւոր որպիսութիւն հացին, և բարեմտաբար ուզելով նշանակել ի խորհուրդ հաղորդութեան Աստուածային և մարդկային բնութեանց միաւորութիւնը յանձին Քրիստոսի, խմորուն հացով սկսան պատարագել: Իսկ այլք Եկեղեցեաց ինչպէս և Հայք՝ չփոխեցին անխմոր պատարագելու նախնական սովորութիւնին · ասոնք ալ կը մտածէին՝ որ խմորը ի Ս· Գիրս տեղ տեղ մեղաց՝ մոլորութեանց օրինակ նշանակ առնուած է · և՝ զի Քրիստոս մեղք չունէր, անոր անարատ մարմնոյն իսկական խորհրդեան յոյժ խորհրդաւոր էր անխմոր նուէրի մատուցումը: — Նմանապէս Ցիսուսի սահմանադրութեան հրամայական բանից մէջ՝ լոկ գինի յիշատակուած, այն ալ որպէս թէ կոչուած ըլլալուն համար, ի նախնեաց անտի Եկեղեցիք անապակ գինեաւ կը կատարէին այս խորհուրդս · բայց ետքերը՝ արեւելեան և արեւմտեան Եկեղեցիք սկսան մէկմէկ քիչ ջուր ալ խառնել բաժակին մէջ, խորհրդաւորապէս մարդկային բնութեան ընդ Աստուծոյ հաղորդուիլ կըցորդուիլը նշանակելու համար: Այլ Հայոց Եկեղեցին նոյն հացի նուէրին խորհրդովը Ցիսուսի անարատ արեան խորհուրդն ալ անապակ գինեաւ մատուցանելը յոյժ խորհրդաւոր գտնելով, նոյն ի նախնեաց անտի և ի Ս· Լուսաւորչէն ընդունածը չփոխեց · չարունակեց երկիւղած զգուշութեամբ,

տեանց ամենեւին ջրախառն մատուցանող Եկեղեցիներն ալ քամահրելու . և ինչպէս Ներսէս Շնորհալին կը գրէ , սիրով և երկիւղածութեամբ նուէրը թէ՛ խմորուն և թէ՛ բաղարջ , թէ՛ ջրախառն և թէ՛ անապակ՝ միօրինակ ընդունելի են Աստուծոյ , ուր՝ հակառակութեամբը՝ թշնամութիւն ըլլալով Աստուծոյ՝ անընդունելի են . «Եթէ այնպէս է և եթէ այս՝ կ'ըսէ , միայն մաքուր հոգւով պարտ է սպասաւորել Աստուածային խորհրդոյն , և ամենայն 'ի հաճոյսն Աստուծոյ կատարեսցին : իսկ անմաքուրն և պիղծն՝ թէ անապակ բաժակաւ առնէ և եթէ ջուր արկանելով , բարկացուցանէ զընդունող Պատարագին զԱստուած՝ փոխանակ հաշտեցուցանելոյ» : (Ընդհնր. Թղթ. Հաւատոյ Խոստովանութեան ևն. Եր. 64։) — Այսու ամենայնիւ՝ ըստ հասարակ վճռոյ բովանդակ Աստուածաբանից՝ իւրաքանչիւր Եկեղեցի պարտի իւրական ծիսիւք և սահմանադրութեամբ վարուիլ այն բաներուն մէջ որ հաւատոյ մասանց չեն պատկանիր , և որոց տարբերութիւնք Կրօնքի վարդապետութեան դէմ չեն ելլեր . և կը մեղանչեն մեծամեծս ամեն անոնք՝ որք իւրեանց Եկեղեցեաց օրինաց և սահմանաց այէս չեն վարուիր : Ուստի Հայ պապականք կը մեղանչեն ընդդէմ Հայ Եկեղեցւոյ հրամանակարգ սահմանաց ջրախառն բաժակ մատուցանելովնին , և Հայ=Հոռոմք՝ ջրախառն և խմորուն նուէրներ տանելովնին 'ի սեղան :

Հացի և գինւոյ նուէրը ժողովուրդք կը բերէին , որ նշան էր Եկեղեցւոյ հետ հաղորդութեան . և ո՛վ որ ընդ բանադրանօք կամ ապաշխարութեամբ ըլլար՝ որ չէր կրնար հաղորդուիլ խորհրդոյն , նուէր ալ չէր կրնար բերել , բերէր ալ նէ՝ չէր ընդունուէր : Սարկաւագունք կ'իջնային ժողովրդեան պատարագիքը (հացի և գինւոյ նուէրները) ընդունելու , և անոնց մէջէն այն օրուան հաղորդուելու անձանց

բաւելուն չափ հաց և գինի որոշելով կը մատուցանէին պատարագամատոյց պաշտօնէին , որ կա՛մ Քահանայ էր , և կա՛մ Քահանայապետ : Պատարագի խորհրդոյն յառաջաբանը Պատարագ Երախայից կ'անուանէր , որոյ կրնային ներկայ գտնուիլ երախայք և ապաշխարողք . այլ երբ Սարկաւագը կը ձայնէր «Ա՛ռ դրունս եղէք և աղօթեցէք» , «մի՛ ոք յերախայից ևն» , երախայք և ապաշխարողք դրսի գաւիթն ելնելով տաճարին դռները կը գոցուէին . և ողջոյն տալով միմեանց սրբութեան համբուրիւ՝ խորհուրդը կը մատուցուէր աղօթիւք , սաղմոսիւք , երգովք , օրհնութեամբք և քարոզիւք :

Խորհրդոյս էական բանն կամ կերպական ձեւն համարուած էր ըսել , «Ա՛ռէ՛ք կերէ՛ք , այս է մարմին իմ , որ վասն ձեր և բազմաց բաշխի , 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց : Արբէ՛ք 'ի սմանէ ամենեքեան , այս է արիւն իմ նորոյ ուխտի , որ վասն ձեր և բազմաց հեղանի , 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց» : Ցետ որոյ՝ զՀայրն Աստուած , զՈրդին Աստուծոյ և զՀոգին սուրբ կոչելով 'ի կատարումն խորհրդոյս , ապա կը բաշխուէր ամենեցուն ներկայելոց երկաքումբք տեսակօք : — Հաղորդուողք ձեռքերնին խաչաձեւ իրարու վրայ դնելով կը մատչէին , և պատարագին մատուցող Քահանայն կամ Քահանայապետը անոնց աջ ձեռաց մէջ կը դնէր Ս. մարմինէն . (իսկ 'ի Հայս թուի թէ Քրիստոնէութեան առաջին օրէն 'ի բերան տալու սովորութիւնը սկսուած է .) և կանայք կամ կուսանք աղջկունք՝ որք այր մարդիկներէ ետքը կու գային հաղորդուելու, ձեռքերնուն վրայ սպիտակ պաստառ կամ չղարչ ունենալով կը մերձենային : Ս. արիւնէն ալ՝ կա՛մ սկիհը բերաննին դնելով իւրաքանչիւր հաղորդելոց կը խմցնէին , կամ ոսկեղէն եղեգամբ ծծել կու տային , և կամ դդալով , ինչպէս ցարդ կը վարուին

Առևելեան Եկեղեցիք. իսկ յաճախադոյնս՝ մարմինը արեան մէջ թաթաւելով կու տային, ինչպէս որ Հայք՝ ի սկզբանէ և այսր կը կատարեն։ Բայց ետ-կանոյ՝ Մատուցանող Քահրդոյն՝ ի վշրանաց հացին և ծայրիւ մատին յարեննէն կը հաղորդէր. տղայոց ալ ծայրիւ մատին լոկ յարեննէն կը հաղորդէր։ Հնուանդաց եւս որք չէին կրնար ներկայանալ Քահրդոյն մատուցման՝ մատնատուփով մարմինէն միայն՝ կամ՝ թաթաւեալ մարմինէն կը Քրկուէր, ինչպէս է ի մեզ։ (Հիւանդաց հաղորդութեան մանաւանդ վերջին թոշակին անտնօրինելի պայմանն է՝ կատարեալ ի գդայութեան մնել հիւանդին, որ եթէ կարող ալ չըլլայ յուտել՝ չրթնահաղորդ կը հաղորդուի)

Ապա ուրեմն Հռովմէական Եկեղեցիք որք ամենևին չեն մատակարարիր ժողովրդեան Ս. Արիւնէն, ծանրապէս կը մեղանչեն թէ՛ նախնի Եկեղեցւոյ սահմանադրութեան, և թէ՛ Քրիստոսի հրամանին դէմ (1), որ ժողովրդեան միայն մէկ տեսակէն կը

(1) Հռովմէական Եկեղեցին թէ՛ Քրիստոսի Ս. Արիւնէն ժողովրդեան չմատակարարելէն, և թէ՛ Քրիստոսի Սէ-ուբիթու Ս. Մարմինէն ժողովրդեան չհաղորդելէն, ո՛չ ալ մանկանց և ո՛չ աղայոց՝ ո՛չ հաղորդութեան մարմինէն և ո՛չ արիւնէն ձառշակել չառնելն եաքը, Սրբազան բաներըը ծայրելու առնելն առակալի առնելէն նողկալի առնելէն անառատուած կերպը չէ՞ որ կ'ընէ Հայոց Եկեղեցւոյ մոլեգին Թշնամին իւր Հռո-էբբ-ուի-ոյ և Կաղիս-ոյ մէջ՝ առակալի պատասխանատուութիւնները դիզելով Հայոց Եկեղեցւոյն վրայ՝ Վերջին օծման խորհրդոյն մէջ իւղի գործածութեան առկայութիւն չունենալը պատճառ գնելով, մինչդեռ իւղի գործածութիւնը Քրիստոսական սահմանադրութիւն չէ, մինչդեռ բոլոր Առաքելք իւղին գործածութիւնը չունէին, մինչդեռ Առաքեալք ոմանք առանց իւղոյ կը կատարէին հիւանդաց այցելութիւնը, ինչպէս կը կատարէ յայսօր Հայոց Եկեղեցին։ Եթէ իրաւ՝ Քրիստոսէ չհրամայուած ինչ-որ և իցէ նիւթոյ մը գործածութեան զանցառութիւնը այդչափ առակալի պատասխանատուութեան տակ կը ձգէ, Քրիստոսի և բոլոր Առաքելոց հրամայած հա-

հաղորդեն, արիւնէն չեն հաղորդեր. ըստ որում Յիսուս Քրիստոս ո՛չ միայն «Արբե՛ք ՚ի սմանէ ԱՄԵՆԵՔԵԱՆ» ըսաւ, (Մ-ղ. ԻՋ. 27.) և «Արբին ՚ի նմանէ ԱՄԵՆՆՔԵԱՆ». (Մ-ուկ. ԺԴ. 23.) այլ նաեւ յաւելուց, «եթէ ո՛չ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ՝ (այս հերիք չէ՛,) և ըԲՔԼԻ+ ՂՒԼ-Ն ՆՈՔ-, ո՛չ ունիք կեանս յանձինս։ Որ ուտէ զմարմին իմ՝ (այս հերիք չէ՛,) և ըմպէ ՂՒԼ-Ն Ի՛Մ, ունի զկեանս յաւիտենական. և ես՝ յարուցից զնա յաւուրն յետնում։ Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է. որ ուտէ զմարմին իմ, (այս հերիք չէ՛,) և ըմպէ ՂՒԼ-Ն Ի՛Մ, յիս բնակեացէ, և ես ՚ի նմա». (Յ-ՀՎ. Զ. 54—57։) Ուրեմն անոնք որ Յիսուսի Քրիստոսի արիւնէն ալ չեն հաղորդուիր, յաւիտենական կեանք չունին, և չեն կրնար ունենալ. «եթէ ոչ. . . արիջիք զարիւն նորա, ո՛չ ունիք կեանս յանձինս»։

Պապական Եկեղեցին՝ ոչ միայն հաղորդութեան Ս. Արիւնէն ժողովրդեան չմատակարարեր, որով և կը զրկէ ժողովուրդը ՚ի կենաց անոի Յիսուսի, այլ նաեւ Ս. մարմինէն ալ չտար. բնա՛ւ բան մը չտար այն Ս. խորհուրդէն. այլ միայն Հայոց Եկեղեցւոյն՝ Պատարագի խորհրդոյն ներկայ գտնուող այլ հաղորդուիլ չկրցող ժողովրդեան ՚ի հատարակի բաժնած ընծաֆորձեալ մասին ալէս բան մըն է, կամ թէ ըսելիք՝ Ս. սեղանոյն վշրանքն ալ չէ՛, այլ՝ ժողովրդեան՝

Էբ-ոյ մատակարարութեան զանցառութիւնը քանի՛ սարսափելի պատասխանատուութեան տակ պիտի ձգեն պապերն ու պապականները. թէ որ Հայք դժուիք պիտի երթան Վերջին օծման իւղին զանցառութեանը համար, պապերն ու պապականները ուր պիտի երթան հաղորդութեան մարմինէն ու արիւնէն ժողովրդեան մնկուածքը զրկելնուն համար. . . : Աղաղակ է ուրեմն Գաթոլիկեան՝ ազգածին չափ հայհոյելու, քանի որ առկոսեօք հանգերձ իւր գլուխը կը կոտէ զանոնք։

նուէրի համար բերած հացերուն առելցուկը՝ ափով հացն է ընդունելը՝ որով կը հաղորդէ զժողովուրդը. օրովհետեւ սրբագործեալ նուիրագործեալ հացը այնչափ նօսր է, որ ըստ Հայ արարողութեան առեան մէջ թաթաւուելուն պէս՝ կը հալի, զոր խորհրդոյն մատակարար քահանային ինքը միայն ընդունի զայն ընդ դինւոյն, և սկիհին տակը ուրիշ մասեր գրած ըլլալով ընդունողաց՝ անկէ կը հաղորդէ ժողովրդեան: — Ընդունողաց ըսինք, վասն զի քահանային սրբագործելի հացը ձեռքը առնելով և խաչակնքելով՝ ի վերայ նորա, կ՚աղօթէ առ Հայրն Աստուած առաքել զՍ. Հոգին ի կատարումն խորհրդոյն և կ՚ըսէ. «Երկիրպագանեմք և աղաչեմք և խընդրեմք ի քէն բարերար Աստուած, առաքեա՛ ի մեզ և յառաջի եղեալ ընծայս այս զիշխանջենաւորակից քո և զկատարիչ Ս. Հոգիդ. որով զհացս զԱՅՍ օրհնեալ ✠ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի...» (Պուընդոյց.) Ընդունողաց ըսինք հոգին հաւատացեալ հացին համար կ՚աղօթէ և կ՚ըսէ, որով զհացս զայս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես. նմանապէս «Առէ՛ք կերէ՛ք այս է մարմին իմ» կ՚ըսէ նէ՝ ձեռքը բռնած հացը կը ցուցընէ, ձեռքի հացին համար մարմին է կ՚ըսէ. սկիհին տակի տուփին մէջ պահուած հացերուն համար չըսէր. քահանային ձեռքի հացն է կը սրբագործուի, ձեռքի եղած հացէն ուրիշ հացեր ալ թէ որ սկիհին տակը կամ քովը գտնուին նէ՝ անոնք ալ մէկտեղ չեն սրբագործուիր. «Սա է կեանք, յոյս ևս» ըսած հացը ձեռքն բռնած և ի թէս ժողովրդեան ցոյց տուած հոգի է. դաղտուկ պահածը չէ՛. դաղտուկ պահածը Հայոց Եկեղեցւոյ մէջ բոլոր ժողովրդեան բաժնուած մասն է, որ նոյնպէս սեղանին վրայ կամ ներքեւը կը դրուի, բայց չսրբագործուիր: Ապա ուրեմն Պապական Եկեղեցին սրբագործեալ հացը՝ Քրիստոսի

մարմինը չէ՝ որ ժողովրդեան կը հաղորդէ, ըն՛չ՞ով կը խաւիէ ժողովուրդը. և որովհետեւ բաժակէն ալ բնա՛ւ չտար, ուրեմն Քիստոսի սահմանադրած հաղորդութեան խորհրդէն հի՛ւ բան մըն ալ չտար ժողովրդեան. պապական ժողովուրդը բոլոր կեանքը մէջ բնաւ ամենեւին Քրիստոսի Ս. մարմնոյ և արեան խորհրդոյն չհաղորդուիր, և այսպէս կը դրկուի այն կեանքէն՝ որ Քիստոս կ՚ըսէ թէ ևս մարդոյն սոփելով և ևս արիւնս խմելով պիտի առնուի: — Այս չափն ալ հերիք չէ՛, Պապերը և իրենց ժողովքները՝ իրենց խաբուած պապասէր խեղճ ժողովուրդները Քիստոսի մարմինէն և արիւնէն որով և՝ի ճշմարիտ կենաց դրկելնին հերիք չսեպելով, կը դատապարտեն (Պէւը Ապոստ. Հատ. Գ. եր. 187—188.) բոլոր այն եկեղեցիներն ալ՝ որք Քրիստոսի հրամայածին պէս ժողովրդեան կը մատակարարեն այս խորհուրդս երկու տեսակաւք եւս՝ի ճշմարիտ կենաց չզրկելու համար Աստուծոյ ժողովուրդը. անտարակոյս մտաց յափշտակութեամբ մը անձամբք զանձինս Քրիստոսի մեծ վայրն տակ ձգելու համար, որ կ՚ըսէ. «Ո՛վ այ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի շրջիք ծովն երկինից առաջի մարդկան. դուք ո՛չ մտանէք, և որոց մտանեն՝ չտայք թոյլ մտանել»: (Մատթ. ԻԳ. 13.)

Պապականք մանկանց տղայոց ալ չեն հաղորդեր այս խորհուրդս, որ բոլանդակ Եկեղեցին՝ գոնէ մինչեւ երեքտասաներորդ դար՝ անխտիր կը մատակարարէր անոնց ալ. պատճառելով թէ տղայք հասառք չունին, ուստի մինչեւ չափահաս չըլլան պէտք չէ անոնց հաղորդուիլ: Բայց նախնի Ս. Հարք անտարակոյս վարդապետելով թէ ինչպէս որ մկրտութեան եղողն ալ հաւատոք կը պահանջուի, և հասառք չունեցող մանկունք կը մկրտուին ծնողաց հասառովք, նոյնպէս և հաւատոք չունեցող մանկունք

ան նոյն ծննդոց հաւատովք որովք կը մկրտուին, կրնան հաղորդուիլ։ Պապականներն ալ ասոր կը վկայեն։ — Հաբերտ կ'ըսէ. «Ս. Օգոստինոս ('ի վերոյ մահու ըստ ինքեան գրոց. Գլ. Ի.) Իննովկենտիոս Ա. և ծայրագոյն քահանայապետն Գելասիոս. (Ընդ. առ Հոբ ի Մեվիէր. ՀՕէսոպէն. ՃՁԲ. կ. ՂԳ.) կը գրեն՝ թէ մանկունք եթէ ոչ ուտիցեն զմարմին որդւոյ մարդոյ, ոչ կարեն առանալ զկեանս յաւիտենական։ Գելասիոս Ե. Թղթին մէջ կ'ըսէ. ոչ զոք տեսանեմք 'ի բաց առեալ և ոչ ոք համարձակեցաւ ասել, թէ մանուկն առանց փրկական խորհրդոյս (հաղորդութեան) կարիցէ ժամանել 'ի յաւիտենական կեանս (1)։ . . .» (ՀԱՓՈՍՏՈՔ. ՃԲ. հղբ. Մասն Ա.

(1) Իննովկենտիոս Ա. և Գելասիոս պապերը զայս կ'ըսեն. բայց Տրիտենդեան ժողովն ալ այս պապերուն յարեալ «էյ-ի-ն էֆեսոսու հակառակ կը վճռէ. «Ո՛վ որ կը հաստատէ թէ հարկաւոր է տղայոց հաղորդութեան խորհրդոյն մատնակցիլ խեղքերնին չհասած՝ նզովեա՛ւ ըլլայ»։ (Ժ-որ. Տրիտենդ. Նիւթ ԻԱ. գլ. Դ։) — Վերջին տարիներուս մէջ Պիոս Թ. իւր Վատիկանու ժողովակուին ալ վճռեց թէ դոդէր անխնայ է. չէն փոքր է, չէն հասցէ։ Լա՛ւ. արդ՝ կա՛մ Իննովկենտիոս Ա. և Գելասիոս անխնայ դոդէրը ԱԹՈՌԻՆ ԽՕՍԱԾ ԱՏԵՆՆԻՆ մտքերնէ են՝ երբ վճռեր են թէ պղտի նհասցրդութեն չէն էրկար, անոր համար պէտք է որ հաղորդուին, և կա՛մ Տրիտենդեան ժողովը և անոր վէճերը հասկցող իրենց խոսք դոդէրը հինէն 'ի պատ. թ. սխալներ են. երկուքին ա՛րն ալ կ'ուզէ թող ըլլայ. Պիոս Թ. ի Վատիկանու ժողովակին մոլար և սուտ վճիռ արձակած ըլլալը կ'ապացուցանէ. այս ալ հերքէ է ճշմարտութիւն պիրոզնեբուն. Առկէ՝ ճշմարիտ հետեւութիւն մ'ալ. Տրիտենդեան ժողովը նախորդ պապերու վճիռներըը կրնայ կոր ընդել նէ, ուրեմն սուտ և ստոց սուտ է այն վարդապետութիւնն ալ թէ պապերը ժողովներէն վեր են. և թէ ս աշխարհիս պետնհոդոսներըը, եղած և ըլլալու եպիսկոպոսունք միանդամայն, պղծ և պիղծ, բոլոր երկրիս թագաւորութիւնք, ամենայն հսկայք յաւիտենից պիղծ են առ այս (զօրութիւն պապին) և պիղծ կը համարուին ս. կարող չեն պապերուն վճիռներըը քննել և պընչացընել, (Ինդիս նէ բոնդուէլ Գուիզոն Կէդիէը.) . . .

Գլ. Զ։) Դարձեալ. «Տղայք են ընդունակ այսր խորհրդոյ. և յերկոտասան դարս մատակարարեաց նոցա Եկեղեցին»։ (Անդ. Մասն Ա. Գլ. Դ։) Ա՛ռ որ կը վկայեն Կիպրիանոս, ('ի ճառն յանդուգնէլոց.) Եւագրիոս, (Գր. 4. Գլ. 36.) և Նիկեփորոս (Գր. 17. Գլ. 25.) զորս և Պիլուարտ մէջ կը բերէ, (ՀԱՓՈՍՏՈՔ. Հատ. Գ. եր. 207։) — Ա՛ղջի ատեններըը պապականք ամեն Ջատկի սովորութիւն ունէին մանկանց հաղորդ տալու, և 1255 թուին արգիլուեցաւ ասիկայ 'ի ժողովն Բորդիկալայ՝ ըստ Բժշկեան Հ. Մինասեան, որոյ «'ի հինգերորդ կանոնին արգելու հաղորդ տալ մանկանց 'ի Զատկի, այլ միայն չորհնէլ հաց»։ ('ի պատմ. «ըճոպ. Հատ. Բ. եր. 580։)

Հայոց Եկեղեցին իւր Առաքելական սովորութիւնը բնա՛ւ չփոխեց։

ԳԼՈՒԽ Ե.

ՊՍԱԿ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

Պսակն ամուսնութեան խորհուրդ ըլլը կ'անուանէ Առաքեալը. (Եփես. Ե. 32.) որ հաստատեցաւ յԱստուծոյ, յորժամ «Շինեաց Տէր Աստուած պկողն զոր առ յԱդամայ 'ի կին և ած ընդ առ Ադամ. և ասէ Ադամ. այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին 'ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ. վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր՝ և զմայր

ուրեմն պապ մը ժողովքով կրնայ դատուիլ, ուրեմն պապ մը ժողովքով կրնայ դատապարտուիլ սխալած ըլլալուն համար. ուրեմն պապերը սխալական չեն և չեն կրնար սխալիլ . . . Աստուա՛ծ իմ, այս ո՛րչափ հակասութիւն, այս ո՛րչափ ծիծաղելի վճիռներ . . .

խոր, և երթիցէ գնեալ խոտոյ, և եղիցին երկուքեան ի մարմին միոյ։ (Ծննդ. Բ. 22—24։) Սուրբ է այս խորհուրդը. վասն զի «Օրհնեաց զնոսա Աստուած և ասէ. աճեցէ՛ք և բազմացարուք»։ (Ա. 28։)

Ամուսնութիւնը կարելի է նկատել իբրեւ խորհուրդ և իբրև դաշն քաղաքական։ Ա. այլադիս անքրիստոնեայս՝ քաղաքական կամ ընկերական կապ միայն կը համարուի՝ դիւրախզելի. բայց քրիստոնէութիւնը սրբելով զայն՝ ի թիւս խորհրդոց Եկեղեցւոյ բարձրացոյց և զնդեց անխզելի. յորում փեսային և հարսն ազատ և վսեմադարձ հաճութեամբ և քահանայական օրհնութեամբ և աղօթիւք ի մի և յանբաժանելի մարմին յօդեալ՝ ի նշանակ և ի նմանութիւն Քրիստոսի ընդ Եկեղեցւոյ անբաժան միաւորութեան, կ՚ուխտեն ապրիլ ի միասին, ծնանիլ և սնուցանիլ մանկունս յերկիւղն Տեառն՝ յաճումն Աքքայութեան Աստուծոյ, բարեկիրթ և օգտակար անդամներով ընդարձակել մարդկային ընկերութիւնը, և աշխարհի ճախողութեանց մէջ թեկն և մխիթարիչ ըլլալ մէկմէկու։ Այլ իբրեւ քաղաքական դաշն՝ է միաւորութիւն առն ընդ կնոջ, որով պարտին կենակից ըլլալ միմեանց։ — Թէ՛ իբրեւ խորհուրդ և թէ՛ իբրեւ դաշն քաղաքական՝ ամուսնութիւնը պարտաւորութիւններ ունի, որ յառաջ կու գան երիցուն խոստմանէն, որ բուն ճակատն է խորհրդոյն ալ դաշինքին ալ, որ միահ անլուծանելի են երկոցունց։ Այս միութեան՝ խոստման և քահանայական օրհնութեան մէջ կը հաստատուի ամուսնական խորհրդոյն էութիւնը, և վաւերական և անլուծանելի է պսակն ու ամուսնութիւնը առանցմով՝ դեռ չըրացած իսկ։

Յօրինաւորութիւն և ի վաւերութիւն խորհրդոյ ամուսնութեան կը պահանջուի՝

Ա. Փոխադարձ ազատ հաճութիւն երկոցունց.

Բ. Արուն հասակ երկոցունց, որով ազատ ըլլան՝ ազատ հաճութեամբ՝ լծակցիլ.

Գ. Ֆիզիքական կատարելութիւն երկոցուն ամուսնութիւն. ներքինին՝ արուէգն և նմանիքն՝ անընդունակ են խորհրդոյս, և այսպիսիք անգիտութեամբ պսակեալք՝ լուծանելի են.

Դ. Յօրինաց եկեղեցւոյ արդիլեալ ազգականութիւն արեւնակցութիւն չունենալ.

Ե. Յօրինաւոր աւուր և ի ժամու՝ առաջի վկայից պսակիլ ձեռամբ օրինաւոր պաշտօնէի (քահանայի կամ քահանայապետի), առանց որոց միւտ անվաւեր է պսակն.

Զ. Ազատութիւն առն և կնոջ. ա՛ն երկոցուն եւս անամուսին լինել, կանամբի կամ առնակին չըլլալ մէկին մէկը, ամուրի ըլլան կամ այրի. քանզի օրէնք այրեաց կը ներեն ա՛չ միայն երկրորդ՝ այլեւ երրորդ ևս հարսանեաց. ըստ որում կ՚ըսէ Առաքեալը. «Բայց ամուրեացն և այրեաց ասեմ. լաւ է նոցա թէ կացցեն իբրեւ զիս. ապա թէ ո՛չ ունիցին ժոյժ, ամուսնասցին. զի լաւ է ամուսնանալ քան զվառնուլ»։ (Ա. Կորն. Է. 8։) «Ինն կապեալ է ցորչափ ժամանակս կենդանի է այր նորա. ապա թէ ննջիցէ այր նորա, ազատ է՝ ո՛ւմ կամիցէ ամուսնանալ, բայց միայն Տիրամբ»։ (Անդ. հմմտ. 39։) — Այլ թէ որ Հարք ամենք իրր հակառակ հաստեցան երկրորդ և երրորդ ամուսնութեան, Առաքելոյն «Լաւ է նոցա թէ կացցեն իբրեւ զիս» խօսքին միտքը չօշակելով խօսած են. իբր ըսել ուզելով թէ լաւ է անամուսին անհոգ մնալը ի խորհել զՏեառն։ — Ը գումելի սովորութիւն մ՚է՝ որ եղաքն մուտ գտած կ՚երեւնայ՝ այրեաց ընդ կուսանս ամուսնութիւնը, որ չատ անգամ զեղծմանց՝ բնական անպատշաճութեանց տեղիք կու տայ. եւս և ամուրեաց՝ իրարու անյարմար ոխքը. որ թէեւ ապօրինի կամ անվաւեր չդործեր պսակը,

բայց ամուսնութիւնը կը վրդովէ. անոր համար կարի յոյժ նկատողութեան առնուելու առաջին պարագայներ են ասոնք։ — Ամուսին ունեցող ոք եթէ ՚ի կենդանութեան ամուսնոյն պսակուի ընդ այլում՝ պսակն անվաւեր է և ապօրինի. ամուսնութիւն չէ այն՝ այլ պոռնկութիւն, և բնաւ ո՛ և իցէ պատճառաւ նոքա կարող չեն իրարու օրինաւոր ամուսին լինել։ (Հռ. է. 2—3։)

Պսակն ամենայն օրինաւորութեամբ կատարեալ՝ վաւերական է և անլուծանելի. և նոյն իսկ արտաքնոց՝ ՚ի հերձելոց հերետիկոսացց յանհաւատից յայլազգեաց և ՚ի հեթանոսաց իսկ եկելոց միակին ամուսնութիւնք՝ անլուծանելի են ըստ բնական օրինաց. զի ամուսնութեան միութեան օրինակ՝ Քրիստոսի ընդ եկեղեցւոյ միաւորութիւնը կը ցուցընէ Առաքեալը։ Ո՛ և իցէ պատճառ՝ ո՛չ ալ պոռնկութիւն՝ կարեն լուծանել պսակը, (ինչպէս որ ցոյնք կը հաւատան.) պոռնկութեան պատճառաւ արդարեւ եկեղեցին կը բաժանէ ամուսինները, բայց պսակը անլուծանելի է. մահը միայն կը լուծանէ։ — Քանզի երբ փարիսեցիք Յիսուսի հարցուցին թէ արժա՞ն է ումեք արձակել զիւր կինը ըստ ամենայն պատճառս, Յիսուս պատասխան տուաւ. «Զոր Աստուած զուգեաց մարդ մի՛ մեկնեսցէ։ Ասեն ցնա. իսկ Մովսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ և արձակել. ասէ ցնոսա. Մովսէս վասն խստասրտութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր. այլ ՚ի սկզբանէ ո՛չ եղեւ այնպէս։ Բայց ասեմ ձեզ. զի ամենայն որ արձակէ զկին իւր, և ո՛չ վասն պոռնկութեան, և առնիցէ ա՛յլ, շնայ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ»։ (Մ—ղ. ժթ. 3—9։) «Եթէ այր՝ արձակեսցէ զկին իւր, և արասցէ այլ, շնայ. և կին՝ եթէ ելցէ յառնէ իւրմէ՝ և եղիցի առն այլում՝ շնայ». (Մ—րկ. ժ. 11—12։) «Ամենայն որ արձակէ զկին իւր, և

առնէ այլ՝ շնայ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ»։ (Ղ—կ. ԺԶ. 18։) Ընդհանուր են այս Աստուածային պատգամները, և բնաւ ամենեւին դէպք մը բացառութիւն չեն ըներ. անանկ որ՝ պոռնկութեան համար ալ ըլլայ՝ թէ որ այրը կնոջմէն բաժնուի՝ երկուքն ալ ցօր մահուն կալեալ կը մնան նոյն պսակաւ, և չեն կրնար երկրքին եւս ուրիշներու հետ ամուսնանալ. զի Քրիստոսի մէջ բերած «Եւ ո՛չ վասն պոռնկութեան» պատճառը միայն պոռնիկն արձակելու օրինաւորութեան պատճառ է. ուրիշի հետ ամուսնանալն ալ օրինաւոր ընելու պատճառ չըլլար. ինչպէս որ կը հասկըցուի այն արձակեալ կնոջ համար ըրուցած խօսքովը, թէ կ՚ուզէ վասն բանի պոռնկութեան՝ կ՚ուզէ առանց բանի պոռնկութեան արձակեալ ըլլայ, «և որ զարձակեալն առնէ՝ շնայ» կ՚ըսէ. զոր քիչ մը բացատրելով կը պատուիրէ մեզ զնոյն և Առաքեալը. «Այլ կանայմարդեացն պատուիրեմ, ո՛չ ես՝ այլ Տէր, կնոջ յառնէ մի՛ մեկնել. ապա եթէ մեկնեսցի, անյար ասցէ, կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի. և առն՝ զկին իւր մի՛ թողուլ։ Բայց այլոց ես պատուիրեմ, ո՛չ եթէ Տէր. եթէ ոք եղբայր՝ կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ իցէ բնակել ընդ նմա, մի՛ թողցէ զնա. և կին՝ որ ունիցի այր անհաւատ, և նմա կամ իցէ բնակիլ ընդ նմա, մի՛ թողցէ զայրն։ . . . կապեալ ես ՚ի կին, մի՛ խնդրեր արձակիլ. արձակեալ ես ՚ի կնոջէ, մի՛ խնդրեր կին։ . . . Կին կապեալ է ցորչափ ժամանակս կենդանի է այր նորա. ապա թէ ննջիցէ այր նորա, ազատ է, ուր կամիցի ամուսնանալ. բայց միայն Տերամբ»։ (Ա. կոր. է. 10—39։) «Քանզի կին առնակին, ՚ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք. իսկ եթէ մեռանիցի այրն, արձակեալ է յօրինաց առնն. ապա ուրեմն մինչ կենդանի է այրն, չուն կոչի եթէ

մինիցի առն այլումա. և եթէ մեռանիցի այրն, ազատ է յօրինացն, չհամարեալ չուն՝ եթէ մինիցի առն այլումա» : (Հ. Կ. 2—3:)

Ոսկեբերան, Ամբրոսիոս, Օգոստինոս և այլք ոմանք 'ի Յոյն և 'ի Լատին Հարց Եկեղեցւոյ մէջ կը բերեն Առաքելոյն առ նոյն Կորնթացիս գրած սա խօսքը, «Եթէ ոք եղբայր՝ կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ իցէ բնակել ընդ նմա, մի՛ թողցէ զնա. և կին որ ունիցի այր անհաւատ, և նմա կամ իցէ բնակել ընդ նմա, մի՛ թողցէ զայրն. . . . Եթէ անհաւատն մեկնիցի, մեկնեսցի. ոչ ինչ հարկ 'ի վերայ կայ եղբօրն կամ քեռն յայնպիսի իրս. քանզի 'ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած» : (Ա. Կոր. Է. 12—15:) և կը համարին թէ անհաւատ ամուսնոյ մը նորադարձ լծակիցը՝ իւր անհաւատ ամուսնոյն հետ միասին բնակելու ամեն ջանք ընելէն ետքը եթէ անհաւատ ամուսինը դարձեալ անհաւատի բերէ և անդարձ բաժնուիլ մտաբերէ, կարող է յայնժամ նորադարձ Քրիստոնեայն ընդ այլումն պսակիլ. քանզի անհաւատից ամուսնութիւնք թէ՛եւ օրինաւոր այլ խորհուրդ չեն : — Այլ հերետիկոսական և հերձելոց հարսանիքն խորհուրդ ըլլալով՝ անլուծանելի են. ինչպէս նաեւ ուրացելոյն հարսանիքը : Ասոնք մահու չափ մեղք են ո՛և իցէ Քրիստոնէական դաւանութենէն եկամուտ մէկը ուրիշի մը հետ պսակել, ինչպէս կ'ընէին Ցոյնք, որ տեսակ մը բազմակնութիւն կը համարուի :

Իսկ բազմակնութիւնը բոլորովին հակառակ է Քրիստոնէական օրինաց ալ, բնութեան օրինաց ալ. զի «ի սկզբանէ արու և էգ արարն Աստուած. մինչ առն՝ մի կին : Ղամէք առաջին եղեւ որ երկու կին առաւ. և Ջրհեղեղէն ետքը առ այս ներեց Աստուած ի՛նչ ինչ պատճառներու համար. բայց Քիստոս վերստին յառաջին սկզբնական սրբութիւնն վերածեց ամուս-

նութեան խորհուրդը. և միոյ առն մի կին հրամայեց՝ անբաժանելի բնա՛ւ 'ի միմեանց :

Պահն ըստ որում չնորհաբեր խորհուրդ եկեղեցւոյ, կը զօրացընէ հոգեւոր օրհնութեամբ և կը միացընէ Աստուածային չնորհօք զերկոսին ամուսնոյն՝ իրենց Աստուածային պարտիքը լեցընելու ընդ լծով ամուսնութեան, ծնանելէ մանկունս Աբրայութեան Աստուծոյ, և զարգացուցանել զնոսա 'ի ծոց Ս. Եկեղեցւոյ՝ ջամբելով նոցա զկաթն Աստուածային օրինաց:

Պսակեցելոց ուխտն է՝ իբրեւ դաշն միաւորութեան նոցա՝ ցնահ հաւատարիմ մնալ միմեանց, ամեն դէպքի և ամեն բնական հարուածոց դէմ: Այրը կ'ուխտէ 'ի ներկայութեան անդ Եկեղեցւոյ (ս հրաւիրելոց,) և Եկեղեցական պաշտօնէին՝ ցանգ իշխել և տիրել հարսին իւրում. ո՛չ իբրեւ բռնաւոր, այլ իբրեւ գլուխ իւր մարմնոյն իշխելով, ամեն խնամք տանելով, զգուշացընելով զայն ինասանկարներէ, և իբրեւ զիւր անձն սիրել սուրբ սիրով: Եւ կինը կ'ուխտէ առ նուաւ 'ի նմին վայրկենի՝ հնազանդիլ նմա մահու չափ՝ իբրեւ իւր գլխոյն՝ իւր փեսային, իւր Տիրոջ Յիսուսի հնազանդելու պէս: Եւ երկոքին միմեանց լծակից օդնական ըլլալով ըստ ամենայնի՝ այնպէս պէտք է կցորդուին միանան 'ի խորհուրդս 'ի բանս և 'ի գործս 'ի մի և 'ի նոյն նպատակ կենաց, որ երկոքին լրապէս մէկ մարմին դառնան, կամ թէ ըսեմք՝ մէկ անձ մը երկու մարմնով երկու երեսոյթով երեւեալ: — Բնութիւնն իսկ մեզ ուսած ըլլալով կինոջ գլուխը ծածկելու, և բուսանդակ աշխարհի օրէնքները քօղարկիլ հրամայելով կանանց, յայտնի կ'ըլլայ թէ 'ի բնութենէ է կանանց հրամայող չըլլալ արանց, այլ 'ի հնազանդութեան լինել նոցա, զի այր է գլուխ կնոջ, և կինն մարմին նորա. և երկոքին՝ մի մարմին՝ ըստ Աստուծոյ :

Պահկի պաշտօնեայ՝ քահանայք և քահանայապետք. ընդունակ՝ ամեն չափահաս և յարմարաւոր հաւատացեալք, քանզի արգիլեալ է հաւատացելոց անհաւատից հետ լծակցիլ։ (Բ. Կոր. Զ. 14։) կրօնականն է անոնց ձեռնադրութենէն (որ սպասաւորութիւններին կը նշանակէ) և ուխտադրութենէն յետոյ՝ հրամանակարգ աղօթքը որ 'ի Մաշտոցին. և կը կատարուի 'ի մեզ բաց 'ի Տէրունական աւնից՝ առաջքն մինչեւ կէսօր. և եթէ ուրեք ուրեք (ինչպէս և 'ի Կ. Պօլիս) Ալեքակէ գիշեր կը կատարուի, կէս գիշերն անցնելէն եաքը կ'ըլլայ և ո՛չ յառաջ. զի Ալեքակէն Տէրունական հարսանիք լինելով Հայաստանեայց Հայրապետք արգիլած են մեզ նոյն օրը հարսանիք ընել, պսակ դնել։

ԳԼՈՒԽ Զ.

ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՕԾՈՒՄՆ ՀԻՒԱՆԴԱՑ

Ացելութիւն կամ Օծումն հիւանդաց, որ ըստ այլոց վերջին Օծումն և ըստ ծիսարանի մերում ինչպէս ամ ալ կը յորջորջուի, է օգտակար խորհուրդ եկեղեցւոյ սահմանեալ վասն հիւանդաց, որով եկեղեցւոյ պաշտօնեայն հրամանակարգ աղօթիւք և խնդրուածովք, և Ս. Գրոց պատշաճաւոր հատուածոց ընթերցուածովք զղջման խոստովանութեան և հաղորդութեան կը հրաւիրէ հիւանդը. և թողութիւն խնդրելով յԱստուծոյ անոր մեղացը՝ անոր վրդովեալ խիղճը կը հանգուցանէ, և ձեռնադրութեամբ և խաչին նշանաւ անոր հիւանդութեան բժշկութիւն և ցաւոց ամոքումն կը հայցէ 'ի Տեառնէ. և օրհասականները Քրիստոսի խաչին ամենաբաւական

արդեանցը և անոր ամբաւ ողորմութեանց վրայ ամրապէս յուսադրելով՝ իբրեւ անսպառելի թոշակաւ յաւիտենական հանգիստը կը յուղարկաւորէ։

Հիւանդաց այցելութեան սկիզբ Յիսուս Քրիստոս ինքն ըրաւ. երբեմն բանիւ լոկով, (Մտթ. Ը. 8. 13 եւն.) երբեմն անձամբ կամ քղանցիւք դպչելով, (Ժդ. 35—36. եւն.) երբեմն ալ հիւանդաց վրայ ձեռք դնելով, (Ղուկ. Դ. 41.) անոնց տեսակ տեսակ ախտերն ու հիւանդութիւնները բժշկեց, իբր գրաւական իւր բարերարութեանց հաւատք միայն պահանջելով անոնցմէ. (Մտթ. Թ. 28—29։ Մրկ. Ե. 34։ Ժ. 52 եւն.) և պատուիրելով որ մեզքէ դառնան ըստ որում երբեմն 'ի պատիժ մեղաց կու գան հիւանդութիւնք 'ի մարդն։ (Բ. Մնաց. ԻԶ. 12—15։ Ա. Կոր. ԺԱ. 30։)— երբ Յիսուս իշխանութիւն տուաւ իւր աշակերտաց՝ հիւանդաց վրայ ձեռք դնելու և մեղքերը թողլու, (Մտթ. Ժ. 1—8։ Մրկ. ԺԶ. 18—20.) անոնք ալ այնուհետեւ՝ ինչպէս որ գիրենք հրահանգեր էր Յիսուս, այցելութիւն կ'ընէին հիւանդաց. երբեմն անոնց վրայ միայն աղօթք ընելով (Գործ. ԻԸ. 8—9.) երբեմն ձեռք դնելով և աղօթք ընելով, (թ. 12—18.) և երբեմն իւղով ալ օծելով զանոնք։ (Մրկ. Զ. 13։) — Առաքեալք եւս պաշտօնէից Եկեղեցւոյ և յաջորդաց իւրեանց հրամայեցին անխափան կատարել այս խորհուրդս, ինչպէս նաեւ Յակովբոս Առաքեալը հարկ կը դնէ բոլոր ժողովրդեան վրայ գնոյն՝ ըսելով. «Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ՝ կոչեսցեն զերիցուսն Եկեղեցւոյն, և արասցեն 'ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն. և աղօթքն հաւատով փրկեսցէ զպաշտաւեալն, և յարուսցէ զնա Տէր. և եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցին նմա։ . . . Քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց յօգնականութիւն»։ (Յակ. Ե. 14—16։)

Այս բացատրութիւններէն յայտնի է որ Խոր-
հըրդոյս հարկաւոր պարագայք են հաստատ հանդերձ
պղծեալի որ ունենայ հիւանդը, և պղծոյ հաճոյական
սրբանուէր պաշտօնէից եկեղեցւոյ. իսկ օգտակար
պարագայն է ծանուիլն օրհնեալ իղձն, (որ ուրիշ է
միւռոնէն, և յատկապէս յօծութիւն հիւանդաց
կ'օրհնուի ի քահանայէն կամ յեպիսկոպոսէն.)
ինչպէս որ կը կատարեն այլք յեկեղեցեաց, օծա-
նելով հիւանդաց զգայարանքները: — Այլ Հայաս-
տանեայք՝ հիւանդաց այցելութեան խորհուրդը ա-
ւելցուն պաշտելով հանդերձ՝ անոր մէջ նիւթա-
կան իղձոյ օծութեան ծխական սովորութիւնը չու-
նին. զի ո՛չ Թադէոս և Բարդուղիմէոս և ո՛չ Ս.
Գրիգոր Լուսաւորիչ նիւթական իղձոյն օծութիւնը
հրամայեցին և չպաշտեցին. Թադէոս և Բարդուղի-
մէոս Հայաստանի մէջ շատ հիւանդաց այցելութիւն-
ներ կատարեցին և բնաւ տեղ մըն ալ չյիշուիր թէ
իղձ գործածեցին. Թադէոս՝ առաջին այցելութիւնը
կատարեց Աբգար Թագաւորին վրայ, և առանց
իղձոյ լոկ աղօթիւք բժշկեց զայն: Հայոց եկեղեցւոյ
Լուսաւորիչք՝ յառաջնումն Առաքեալք և՝ի կրկնումն
Ս. Գրիգոր Պարթեւ՝ բնաւ իրրեւ հոգեւոր պարա-
գայ իղձոյ ծխական օծուիը աւանդած չըլլալնուն
համար՝ ո՛չ երբէք մուտ և հաստատութիւն գտաւ
այս՝ի Հայս. և թէ՛եւ առին առին Հարք եկեղեցւոյ
խոհեմաբար մերթ ցունական և մերթ Հռոմէական
բռնութիւններէն՝ այլոց Քրիստոնէից նմանելու մի-
ձեւելու համար գուն գործած՝ մորճ մորճած են
սահմանադրել զայն, այլ ամեն անգամ ալ իրրեւ
ստարուան սովորութիւն՝ իրրեւ անհոգիաւոր պարագայ
մերժուեր է եկեղեցիէն: Զի և Քրիստոս՝ որ աւան-
դողն է խորհրդոյս՝ բնաւ իղձով չօծեց հիւանդ-
ները. Առաքեալք ալ ո՛չ միշտ իղձ՝ի կիր կ'առ-
նուին, և բազում անգամ առանց իղձոյն օծութեան

կը կատարէին հիւանդաց այցելութիւնը: Եւ զի
Շնորհալին Սարգիս կ'ըսէ. «Ոչ իւղն տայր զաւուղ-
ջութիւն հիւանդին, այլ անունն Տեառն»: (ի դէմ.
կ. ընդ. ց-կ. ե. 14. ճռ. ժԱ.) ինչպէս նաեւ Յոս-
րով. «Զայն տեսանել պարտ է, զի և ձէթն՝ զբու-
ղբաւոր առնէ և դեղ բժշկութեան կատարէ. վասն
որոյ թէ երկոքին լինիցին՝ բարւոյ է. և թէ վասն
ծուլութեան կամ այլ պատճառի իրիք օծութիւն
իւղոյն խափանի, աղօթիցն լինել պարտ է առանց
ամենայն պատճառի, ձէն ներբեւոր է»: (ի դէմ. ժ-ռ-
կոչ. ի տրուշ «վասն հիւանդաց». ի բան ց-կ. «Օձոյն
իւղվ». եր. 172—173:) Եւ զի վերջապէս Յակովբոս
Առաքեալ ըսաւ թէ իւղոյն օծութիւնը հիւանդը կը
փրկէ կը բժշկէ. այլ «Աղօթքն հաւատովք՝ փրկեսցէ
զչքաստեալն... Աղօթս արդարոյ՝ ի վերայ միմեանց,
որպէս զի բժշկեսջիք. քանզի յոյժ զօրաւոր են ա-
ղօթք արդարոց յօգնականութիւն...:» (Յակ. ե.
15—16:) Հայաստանեայց եկեղեցին ալ ինչպէս որ
ընդուներ էր իւր Առաքեալներէն՝ առանց իւղոյն
օծութեան կը կատարէ այս խորհուրդս. աղօթք
հակում և պաշտօն կատարելով, և խաչիւ և Աւե-
տարանաւ ճեռք դնելով հիւանդաց վրայ: Եւ քանզի
նախնի հաւատացեալք չատ անգամ Առաքելոց
քրտնաթոր թաշկինակները կը տանէին հիւանդաց
(Գործ. ժԹ. 12), և հանգուցելոց ոսկանց սրբոց ա-
կերոտիքն բժշկութիւններ կ'ընային Աստուածային
զօրութեամբ, (Դ. Թագ. ժԳ. 23.) Հայոց եկեղեցին
ի յարգ կ'առնու և հանգուցեալ սրբոց մասունք-
ները, յորս հանգուցեալ կը դասանի Ս. Հոգւոյն
շնորհքները, որոցմով կ'օրհնէ զախտացեալն խա-
չակնքելով, և զանոնք ի բարեխօսութիւն կը կոչէ
ի բժշկութիւն հիւանդին:

Խորհրդոյս պաշտօնեայ են քահանայք և քա-
հանայապետք. ննթարկայ՝ ամենայն հիւանդք ամեն

հասակի և սիոց · պապականք՝ որ թէ՛եւ յոյժ կը մեզադրեն զմեզ միայն իւղոյն օծութիւնը չունենալնուս համար , որ ինչպէս ըսինք , հարկաւոր պարագայ ալ չէ , ինքեանք մանկանց տղայոց չեն մատակարարէր այս խորհուրդս ալ՝ դրժելի և հաղորդութեան խորհուրդներուն պէս , որ յոյժ օգտակար և կարեւոր է նոցա ի բժշկութիւն : Կերպականն է խորհրդոյս մատակարարութեան համար Միւռոնի մէջ սահմանուած աղօթքները , բժշկութեան Աւետարանոյ ընթերցուածները և ձեռնադրութիւն ձեռաց : Նիւթն է ձեռնադրութիւնը , ինչպէս որ կ՚ըսէ խորհրդոյն նիւթն ալ ձեռնադրութիւնն է . և կրկնելի է ամեն անգամ որ պէտք ըլլայ և կամ խնդրուի :

ԳԼՈՒԽ Է·

ԿԱՐԳ ԵՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՓԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

Կարգ քահանայութեան է Սրբազան խորհուրդ եկեղեցւոյ , սահմանեալ ի հնուէն Աստուածակարգ սահմանադրութեամբ ի ձեռն Մովսիսի , և ի նորումն վերահաստատեալ ի Յիսուսէ Քրիստոսէ· որով ընծայեալն յԱստուծոյ (Բ· Կրն· ժ· 18·) ձեռնադրութեամբ և օծութեամբ եպիսկոպոսին՝ կը կնքուի շնորհօք Ս· Հոգւոյն քահանայ նորոյ Ուխտի՝ ի գործ նուիրագործութեան սպասաւորութեան Ս· եկեղեցւոյ , Հոգին Աստուծոյ զօրավիգն ունենալով իրեն՝ քարոզել զբանն կենաց , հովուել զհօտ Քրիստի և մակաղել զնոսին յԱւետարանական փարախս երկնաւոր Հօտապետին : (Գործ· Զ· 6· ժդ· 22· Եփես· Դ· 11· Ա· Տիմ· Դ· 14· Բ· Տիմ· Ա· 6—14·)

Ինչպէս որ Իսրայէլի եկեղեցւոյն մէջ տաճարի պաշտօնէից այլ և այլ աստիճաններ սահմանեց Աստուած ի ձեռն Մովսիսի , ինչպէս են քահանայապետք , քահանայք , Մարդարէք , Ղեւտացիք եւ նո՛յն և Քրիստոնեայ եկեղեցւոյ մէջ կարգեց Առաքեալներ , (Ղ՚ուկ· Զ· 13·) Մարգարէներ , վարդապետներ , Աւետարանիչներ , Հովիւներ , (Եփես· Դ· 11·) Եպիսկոպոսներ կամ Տէրունքեր , (Գործ· ի· 28·) երէցներ , (Ա· Պետ· Ե· 1·) Քահանայներ , (Ելայ· ԿԶ· 21· Յայտ· Ե· 10· 11·) Սարկաւագներ , եւ· որք երրորդ և չորրորդ դարուց մէջ ժողովոց որոշմանց համեմատ՝ կրօնական իրաց բարեկարգ վարչութեան և Աստուածային պաշտամանց վայելուչ կատարման համար նորանոր անուններ առին . ինչպէս են Կաթողիկոսք , Պապք , Հարք , Հայրապետք , Պատրիարքունք , Մետրապոլիտք , Էկզարքք կամ Էկզարքոսք , Արքեպիսկոպոսք , Քորեպիսկոպոսք , Վարդապետք , Քահանայք , Աւագերիցունք , Կրօնաւորք , Աբբայք , Աբեղայք , Վանահարք , Կրօնաւորուհիք , Հաւատաւոր կանայք , Աւագ Սարկաւագք , Սարկաւագուհիք եւ : Կանանց՝ եկեղեցեաց մէջ՝ եկեղեցական պաշտօնները վարելը առաջին դարէն սկսեալ սրգիլուեցաւ :

Երիցականք և անոր հետ հաղորդական քանի մը աղանդներ՝ կ՚ուրանան քահանայութիւնը , և կ՚ըսեն թէ Մովսիսական պատարագաց հետ քահանայութիւնն ալ վերցաւ · և Ս· Գիրքը ամենեւին քահանայ անուն չտար Քրիստոնեայ եկեղեցւոյ պաշտօնէից : Բայց հաստատեցինք արդէն ի վերն՝ ի գլուխն Հաղորդութեան , թէ Քրիստոս Մովսիսական պատարագաց անբան անասնոց տեղ՝ իւր մարմնոյ և արեան պատարագը հաստատեց , և Ահարոնեան քահանայութիւնը վերջընելով՝ ըստ կարգին Մելքիսեդեկի քահանայապետ եղաւ ինքը . և նոյն կար-

զի Քահանայներ ձեռնադրեց ընդ իւրեւ՝ իւր Ս· մարմնոյ և արեան պատարագ ի Քահանայապետութեան հաւատոյ · վասն որոյ Յովհաննու Յայտնութեան քան և չորք էրիցունք փառաբանութիւն կը մատուցանէին Ջննեալ գառին , Քրիստոսական եկեղեցւոյ ԲԱՀԱՆԱՅՆԵՐ ձեռնադրած ըլլալուն համար (Յա՛ր· Ե· 10—11·) · զոր և կանխաւ ի ձեռն Եսայեայ նախատես քարոզութեան ասդ արարած էր թէ Քրիստոնէական եկեղեցւոյ մէջ ալ ըստ Մովսիսական Քահանայից՝ պատարագ ամատոյց Քահանայներ և Ղեւտացիներ պիտի ձեռնադրէր : (Ե՛· ԿԶ· 20—24·) Ուրեմն սուտ է բողբոջականաց ոմանց ըսելը թէ Ս· Գիրք Քահանայ չեն անուաներ Քրիստոնէական եկեղեցւոյ պաշտօնեայները :

Կարգ կ'ըսուի Քահանայութեան ւօթին աստիճանք , որք են Դռնապանութիւն , Դպրութիւն կամ Ընթերցողութիւն (որ և Սաղմոսասացք ·) Երգեցողութիւն , Ջահընկալութիւն , Վիսատարկաւագութիւն , Սարկաւագութիւն , Քահանայութիւն · իսկ Եպիսկոպոսութիւնն է լրումն Քահանայութեան , կամ գլխաւոր Քահանայութիւն · անոր համար Քահանայապետութիւն ալ կ'ըսուի · և է վերադասուչ ամենայն իրաց եկեղեցւոյ · ըստ որում հօտը ըս֊ իւրոյն անոր տեսչութեանը յանձնեալ է ի Ս· Հոգւոյն , հսկել հաւատոց և բարոյից նոցա · (Տէ՛· Ա· 7—9·) և առաջնորդել ի կեանն յաւիտենից՝ պատասխանատու ըլլալով առաջի Աստուծոյ անոնց բարւոք կամ չարի կացութեանց համար · (Եբր· ԺԳ· 17·) Որսոյն և Եպիսկոպոսը վերին դասուր է և խնամակալ հայր է֊ր ԼՒՏ֊ԿԵՆ ԴԷՊ ամենայն մասանցք : (Ա· Տէ՛· Գ· 1—5: Դ· 11—16: Ե:)

Ի հնումն Եպիսկոպոսք տէր էրէց ալ կ'անուանէին , (Ա· Տէ՛· Դ· 14: Բ· Յովհ· 1: Գ· Յովհ· 1·) ինչպէս որ Պետրոս էրէց֊կէս կ'անուանէ զքահանայս ,

(Ա· Պետ· Ե· 1·) զի Եպիսկոպոսունք (Առաքեալք) եւս էրիցանց հետ մէկտեղ ի միասին կը հովուեն հօտը և ո՛չ առանձին · էրիցունք խորհրդակից պաշտօնակից են եպիսկոպոսաց հօտը հովուելու մասին , և ըստ այսմ Եկեղեցին՝ հօտը անոնց ալ յանձնուած է , որ բարւոք տեսուչ վերակացու ըլլան Եկեղեցւոյ , կամաւ և յօժարութեամբ արածելով Հովուապետին հօտը : Սին իրի Պօղոս Առաքեալ Եփեսոսի երէցները ժողվելով ըսաւ անոնց · « Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ , յորում եղ զձեզ Հոգին սուրբ տեսուչս , հովուել զԺողովուրդ Տեառն , զոր ապրեցոյց արեամբ իւրով » (Գոր֊ Ի· 17· 28·) և Պետրոս առաքեալն էրիցանց ընդհանուր Եկեղեցւոյ դրելով կ'ըսէ · » Զերիցունս այսուհետեւ աղաչեմ՝ իրրեւ էրիցակից և վկայ չարչարանացն Քրիստոսի , որ և հանդերձեալ փառացն յայտնելոյ հաղորդ · արածեցէք որ ի ձեզ հօտ է Աստուծոյ · վերակացու լինել՝ ոչ իրրեւ ակամայ՝ այլ կամաւ ըստ Աստուծոյ » : » (Ա· Պետ· Ե· 1—2:)

Ըստ այսմ՝ եպիսկոպոսն և էրիցունք միեւնոյն հօտին հովիւներն են · էրիցունք ընդ ձեռամբ Եպիսկոպոսին , և Եպիսկոպոսն խորհրդովք և ձեռնտուութեամբք էրիցանց , և ո՛չ ինքնիշխանութեամբ՝ ինքնահրամանն տնտեսութեամբ · (Իգնատ· Ընդ· առ Եփես· ը· Մագնես· ը: Եկեղէս· Ընդ· 5·) « կարգեցին Առաքեալքն և եղին հաստատութեամբ , եթէ չէ իշխանութիւն քահանայապետի կամ էրիցու և ո՛ և իցէ Առաջնորդի Եկեղեցւոյ առանց իւրոց պաշտօնակցացն առնել պիրս ինչ Եկեղեցւոյ · բայց կամօք և միաբանութեամբ ամենեցուն արասցեն զոր ինչ կամիցեն · զի մի՛ լիցի տրտմութիւն և հերձուածք ի մէջ իւրեանց · զի ի միաբանութենէ ամենեցուն և քարոզութիւն հաւատարիմ լիցի , և հաւատն հաստատուն · որպէս Փրկիչն ասէ՝ թէ ուր երկու և եր-

րեք ժողովեալ են յանուն իմ՝ անդ եմ ես ի մէջ նոցա»։ (կաս. Ա–ժ. ի։)

Եպիսկոպոսունք ի վերայ երիցանց վերին դասուր են և ձեռնադրողք քահանայութեան. քահանայք քահանայութեան ձեռնադրութիւն չեն կըրնար ընել, մի չիք ուրեք ի Ս. Գիրս նշանակեալ. այլ առընթեր կալով եպիսկոպոսին ի ձեռնադրութեան սարկաւագաց. «Դուք ոտքերնին ընուիլեալը պէտ յօրհնելը և դնեն քահանայն ձեռս ի վերայ ընկանցն։ Եւ եպիսկոպոսն դնէ ըմբն ի վերայ գլխոյն և ասէ. Աստուածային և երկնաւոր շնորհ ևս. և ես դնեմ ձեռս ի վերայ ձեր ևս»։

Ի ձեռնադրութեան եպիսկոպոսը ձեռքերը խաչաձեւ՝ կամ աջը խաչիւ ընծայելոյն գլուխը դնելով և խորհրդոյն էական բանը «Աստուածային և երկնաւոր շնորհ ևս» և «Ես դնեմ զձեռս ի վերայ ձեր, և դուք ամենեքեան աղօթս արարէք ևս» ըրուցելով և միւս աղօթքները կարդալով, կը ցուցընէ թէ ինքը լոկ պաշտօնեայ և սպասաւոր է խորհրդոյն իբր գործիք Ս. Հոգւոյն. ինքը չէ տուիչ շնորհացն, այլ Աստուած՝ որ կոչէ, (եբր. է. 4.) հաստատէ, սրբէ և զօրացուցանէ զընծայեալն ի գործ պաշտամանն ի շինած մարմնոյն Քրիստոսի. (Ա. Տիմ. գ. 14։ Տիմ. Ա. 6.) ինչպէս որ Մաշտոցի հրահանգումն ալ կը ծանուցուի»։ Եւ եպիսկոպոսն դնէ ըմբն ի վերայ ընծայելոյն՝ որ ցուցանէ թէ՝ տուողն էշխանութեանց և շնորհաց Հոգին Սուրբ է. և եպիսկոպոսն պատասխանէ և ընդդէմ. որպէս խոստմանն յաղթելոյ առեալ ի Քրիստոսէ. ևս»։ (Մաշտոց ի կան. յեռանդր. քահանայի։) Ուստի քահանայութիւնն է Աստուծմէ՝ թէ՛ և ի ձեռն եպիսկոպոսին, և ո՛չ ի տուչութենէ մարդկան, ինչպէս կը սորվին Բողոքականքն երիցականք։

Իսկ կաթուղիկոսութիւնն է գլխաւոր եպիսկոպոսութիւն. անոր համար կ՚ըսուի նաեւ եպիսկոպոսապետ և ծայրագոյն Պատրիարք կամ մեծ Հայրապետ. որոյ խորհրդականք են եպիսկոպոսունք, և որ կ՚օրհնէ Օծութեան Ս. Միւռոնը, և կը ձեռնադրէ եպիսկոպոս, առընթեր ունելով գոնէ երկու եպիսկոպոս։ Կաթուղիկոսի օծութիւնն ալ կը կատարուի գոնէ երեք մեծ վիճակաւոր Արքեպիսկոպոսաց ձեռամբք. այլ ըստ կանոնաց՝ երկուսան եպիսկոպոսօք պէտք է ըլլայ։

Սրբազան կաթուղիկոսը Հայոց եկեղեցւոյ Նուիրապետութեան գլուխն է, որոյ յանձնեալ է Աստուծոյ բովանդակ Հայ եկեղեցին, որուն պարտաւոր է ամեն խնամք և հոգ տանել չէ թէ իւր անմիջական ինքնիշխան միաբեռ, այլ իւրեւ վերին վերակացու և Դէտ հաւատոյ հօտին Քրիստոսի, և հաւատարիմ աւանդապահ բանին Աստուծոյ վարդապետութեան և եկեղեցւոյ աւանդութեանն. որոց անարատ և անխախտ պահպանութեանը հսկելով ուղղափառ հաւատքն ու բարեպաշտութիւնը եւս առաւել ծաղկեցընելու, մոլութիւններն ու մոլորութիւնները խլելու քեցելու համար խորհրդակից ունի իրեն եպիսկոպոսաց ժողովը։ Իսկ եւս մեծամեծ իրողութեանց՝ նորոգ վերաբերեալ մոլորութեանց ղեղծմանց և այլոց կարեաց համար ընդհանուր եկեղեցական ժողովով կը գործէ, ըստ Քրիստոսի Սահմանադրութեան և Առաքելական սովորութեանց։

Կաթուղիկոսը կ՚ընտրուի ընդհանուր Ազգէն. ամեն առաջնորդութեանց վիճակներու թէ՛ եկեղեցականաց և թէ՛ ժողովրդականաց կողմէն։ Այլ եպիսկոպոսը կ՚ընտրուի վիճակին եկեղեցականաց և աշխարհականաց ընդհանուր ժողովքէն. և գլխաւոր Արքեպիսկոպոսին կամ Պատրիարքին ձեռքով յատուկ վկայականաւ և յանձնարարականաւ կը խրկուի

Արբապան կաթուղիկոսին 'ի ձեռնադրութիւն; բայց քահանայացուք իւրաքանչիւր թաղի եկեղեցականներէն ու ժողովրդականներէն կ'ընտրուին և կը ներկայացուին Առաջնորդ Եպիսկոպոսին (և ո՛չ այցելու կամ հիւր Եպիսկոպոսին,) որ մանր քննութեամբ երբ որ արժանաւոր դատէ իւր խորհրդակից ժողովքովը Քահանայութեան Արբապան կարգին՝ կը ձեռնադրէ հանդիսապէս 'ի ներկայութեան ժողովրդեան՝ (և ո՛չ առանձին կամ 'ի ծածուկ,) հրսկմամբ, պաշտամունքը, պահօք, աղօթիւք և ձեռնադրութեամբ. որուն արժանաւորութեան վկայելով ժողովուրդը՝ միաբանութեամբ աղօթակից կ'ըլլան արժանաւորելու համար ընծայելոյն առ այն Ս. կոչումն:

Առնք են այն պայմանները որովք հարապատ պաշտօնեայք Ս. Եկեղեցւոյ կ'որոշուին անհարապատ պաշտօնեայներէն:

Ա. Ա՛ռաջին կոչումն. «Չի ո՛չ եթէ որ ցանձն իւր ընծայեցուցանէ, նա է ընտրեալ, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ»: (Բ. Կոր. ժ. 18:) «Չի ո՛չ եթէ անձամբ ոք առնու պատիւ, այլ կոչեցեալն յԱստուծոյ՝ որպէս և Ահարոն»: (Եբր. ե. 4:) Որով մարդ 'ի Հոգւոյն Աստուծոյ չարժեալ և նորոգեալ 'ի վերուստի գործոց անտի իբր նոր արարած, կ'ուրանայ զաշխարհ և որ ինչ յաշխարհի. և բոլորապատուղ կը նուիրուի Աստուածային ազատաւորութեան՝ խոնարհութեամբ սրտի և հեզութեամբ, և օրըստօրէ կը ջանայ անվէր չնորհօք Ս. Հոգւոյն, առաւելով միշտ սրտի մաքրութեամբ և անարատ վարուք:

Բ. Հմտութիւն Ս. Գրոց, որ և այնուհետեւ իւր ուշանջենաւոր պարապմունքը պէտք է ըլլայ. «Մի'ս զիր ընթերցուածոց ամենայն աստուածոց, մի' անփոյթ առներ զնորհսդ որ 'ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ 'ի

ձեռնադրութենէ եպիսկոպոսութեան. յայդ խորհեաց' և 'ի դոյն կանխեաջիր»: (Ա. Տիմ. Դ. 13—16:) «Ամէն դու ո՛րդեակ իմ, զօրացի՛ր չնորհօքն՝ որ 'ի Քրիստոս Յիսուս. և զոր լուար յինէն բազում վկայիւք, զայն աւանդեացես հաւատարիմ մարդոց, որ բաւական իցեն և զայլս ուսուցանել»: (Բ. Տիմ. Բ. 1—2:) Եւ ահագին ոպառնալիք ևս կայ գիտութիւնը մերժող եկեղեցականին համար. «Դու զգիտութիւն մերժեցեր, կ'ըսէ Աստուած, մերժեցից և ես զքեզ զի մի' քահանայացիս ինձ»: (Ովսէ. Դ. 6:)

Գ. Հոգի Ա՛ստուածային, որով պաշտօնեայք սիրոյ ջանան զցայգ և զգերեկ անձամբիր ուսուցանել կամաւ և յօժարութեամբ, և հաւատալ ամենայն ուժիք Քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնները ամէն տեղ, (Բ. Կոր. Զ. 4: Ա. Թես. Բ: Գ: Ա. Տիմ. Գ. 2: Բ. Տիմ. Բ. 24 եւ.) հսկել հօտին արթնութեամբ, (Եբր. ժԳ. 17.) հովուել և չինել եկեղեցին խնամոտութեամբ, (Եփես. Գ. 11—16: Բ. Կոր. ԺԲ. 19.) և իրրեւ անտեսք հաւատարիմք Աստուածային խորհրդոց՝ պաշտպան ըլլալ հաւատոց, (Փիլիպ. Ա. 6—11.) ապաւորելով զայն ժողովրդեան սրտին մէջ. (Գործ. ԺԳ. 22: Ղ—ե. ԻԸ. 32.) և հակառակորդները կշտամբելով. (Տիտ. Ա. 9.) և վերջապէս օրինակ ըլլալ անձամբ հովուեցելոյ՝ որքութեամբ անձնուրացութեամբ և Աստուածպաշտութեամբ՝ 'ի փրկութիւն անձանց և ժողովրդեան: (Փիլիպ. Գ. 17: Բ. Թես. Գ. 9: Ա. Կոր. ԺԱ. 33: Եբր. ԺԳ. 17: Ա. Պետ. Ե. 3:)

Դ. Մխիթար ընդունակ ուսուցանել՝ որոշ հովուութիւն պէտք ընէ. և բուռն վնասութիւն դիմելոց ոչխարաց արտաքինէն առնելոյ. «Ամէն պարտ է նմա վկայութիւն բարի և յարտաքինոցն ունել. զի մի' 'ի նախատինս անկանիցի»: (Ա. Տիմ. Գ. 7:)

Ե. Զբաղասէր հոգւոյ հնութիւն հրաժարիլ անոր հաւատոց և գիտութեան, անոր վարուց և բարուց

որբութեան և անարատութեան. «Մի՛ երկբանս, մի՛ գինեախտս, մի՛ զօշաքաղս, այլ ունիցին զխորհուրդս հաւատոյն սուրբ մտօք: Ինքեանք նախ փորձեսցին, և ապա՝ ի պաշտօնն մատիցեն, զի անարատք իցեն»: (Ա. Տիմ. Գ. 8—10:)

Զ. Ձեռնադրութիւն եպիսկոպոսին: (Ա. Տիմ. Ե. 22: Գործ. ԺԳ. 22: Եբր. Զ. 2. եւն:)

Է. Կոչումը պիտոյ. մանկահասակ չըլլալ, որ տղայական յանձնապատասխանութեամբ պաշտօնն ստանձնելէն յետոյ՝ գեմասի պէս յաշխարհ չդառնայ: (Բ. Տիմ. Գ. 9:) Ամուսնաւոր քահանայք մանկունս եւս պարտին ունենալ հրահանգեալս Աստուածպաշտութեամբ. որ ուսեալ ըլլան կատարել և ղեկեղեցին. «Իրաւ՛ առնն իսկ բարւոք վերակացու լեալ լիցէ. որդեակս ունիցի՛ որ՝ ի հնազանդութեան կայցեն՝ ամենայն պարկեշտութեամբ...: Մի՛ մատաղատունկ, զի մի՛ հպարտացեալ՝ ի դատաստան սատանայի անկանիցի»: (Ա. Տիմ. Գ. 4—6:)

Ը. Եւս և մարմնական կատարելութիւն, որ առ խեղութեան կամ թիւրութեան ինչ ծագր չըլլայ պաշտօնը, ըստ որոյ և՝ ի հնումն արգիլեալ էր ապրատաւորաց՝ ի պաշտօն քահանայութեան մատչել: (Ղեւտ. ԻԱ. 17—23:) Այս վերջինը առաքելի եկեղեցւոյ բարեկարգութեան կանոնին կը վերաբերի:

Ընդհակառակն անհարազատ՝ անարժան պաշտօնէից նշաններն են ագխտութիւն Ս. Գրոց և անտեսութեան չնորհացն Աստուծոյ. (Ովս. Դ. 6: Գործ. ԻԳ. 27.) հին և ապականեալ մարդոյն գործքերը առհասարակ, ք՝ մարդահաճութիւն, ագահութիւն, արծաթասիրութիւն, խարդախութիւն և խարէութիւն, արբեցութիւն և աշխարհասիրութիւն, գահասիրութիւն՝ միշտ այլոց տիրելու ցանկութեամբ բորբոքեալ, անձնապարծութիւն, կռուարարութիւն, առելութիւն ընդդէմ ընկերին, անօրէնութիւն, անզգամութիւն, Աւետարանը խանգարել և Աւետարանչէն դուրս կամ աւելի բան քարոզել, սուտ՝ այլասիրաւ վարդապետութիւններ հնարել ու սովրեցընել եւն: (Ա՛ղ. իէ. 3: ձՂթ. 1—6: Ա՛ննդ. Զ. 3: Ղ՛ևտ. իԶ. 41: Ա՛ակ. ժբ. 8: ժ՛ղ Ը. 11: Ե՛ոյ. ՎԶ. 10—12: Եզեկ. իե. 15: Եբ՛ր. Զ. 14: Մի՛ք. Գ. 11: Ղ՛ակ. թ. 59—62: Յ՛ովհ. ժ. 12: Գործ. ի. 33: Բ. Կորնթ. Գ. 2—3: Գ՛ղտ. Ա. 6—10: Ա. Թես. Բ. 4: Ա. Տիմ. Ա. 4: Գ. 3—8: Զ. 20: Բ. Տիմ. Բ. Գ: Տի՛տ. Ա. 7—11: Ա. Պետ. Ե. 2—3: Բ. Պետ. Բ. 3:) — Եւ անոնք իսկ որք այս թերութիւններն ունենալով հանդերձ եկեղեցական պաշտամանց մէջ կը դտնուին, արդէն անիծեալ են Աստուծմէ և անկեալ՝ ի չնորհաց Ներին, և սոսկալի դատապարտութիւն մը կը մնայ անոնց պահուած: (Մի՛ք. Գ. 6—7: Եբ՛ր. Լ. 29—31: Գ՛ղտ. Ա. 8—9: Բ. Պետ. Բ. 1—3: Յ՛ուդ. իբ. 18—19:)

Առաքելոց ժամանակէն սկսեալ արգիլուած էր քահանայութեան կոչել կրկին ամուսնացեալները, ք՝ որոց կինը մեռնելէն ետքը՝ կամ կիներուն արձակելով ուրիշ կին առած էին ըստ Հրէից, և կամ՝ ի հեթանոսաց եկեալ ոք ըլլալով քանի մը կիներ միանդամայն ամուսին ունեցած էր: (Ա. Տիմ. Գ. 1—13:) Ձեռնադրութենէ առաջ ամուսնացեալ եղողը՝ յետոյ քահանայական ձեռնադրութեան կը կոչուէր, բայց յետ ձեռնադրութեան ամուսնանալու օրէնք չկար, և անոնք որ անժուժկալութեամբ կ՝ամուսնանային՝ ընդ աչխարհիկս և ընդ ապաչխարողս կը դասուէին ցօր մահուն, (Ա. Տիմ. Գ. 9:) ինչպէս է մինչեւ ցայժմ՝ ի Հայս:

Կարգի խոնարհագոյն չորս աչտիճանները որո՛յ և իցէ հասակի՝ եւս և մանկանց կը տրուէին. այլ սարկաւագութեան ձեռնադրութիւն մանաւանդ կուսակրօնից՝ երեսնամեայ հասակէն առաջ չէր

որուէր. և հինգ տարի ետքը կրնային քահանայ ձեռնադրուիլ, (իսկ ամուսնաւորները քանի մը տարի առաջ ալ կը ձեռնադրուէին,) ինչպէս նաեւ դո՛նէ տասն տարի քահանայութիւն ընելէ ետքը եպիսկոպոսական աշխատանին կրնային ուսաշիլ։

Եպիսկոպոսական աշխատանին համար սկիզբէն՝ ի վեր բովանդակ Կաթողիկէ Եկեղեցւոյ անսնօրինելի պայմանն եղած է անկնութիւնը. չէ՛ թէ բնաւ չը կարդուած ըլլալու էր Եպիսկոպոսութեան, այլ՝ Եպիսկոպոսութեան աշխատանին մէջ մնալն ըլլալու էր, որ է ըսել, թէ կին ունեցողներն ալ Եպիսկոպոսութեան աշխատանը կրնային ընդունել, հրաժարելով իրենց կիներունէն ի բոլորակ հաճութեամբ և համանութեամբ։ Չարք Եկեղեցւոյ առ հասարակ Առաքելոյն խօսքը թէ «պարտ է Եպիսկոպոսին անառարատ լինել, մի՛ կնոջ այր», (Ա. Տիմ. գ. 2.) ըստ քուն իմաստին առնելով կ'իմանան թէ՝ Առաքեալը իր անհրաժեշտ պայման եպիսկոպոսին՝ կին ունենալը չէ որ պարտ է կ'ըսէ, քանզի ինքն Պօղոս ալ՝ որ ասիկայ կ'ըսէ, ինքն կին չունէր, Յովհաննէս ալ չունէր, Առաքեալներուն չատերն ալ չունէին, որ եթէ ատ նանկ ըլլար՝ հարկաւ իրենք ալ պարտաւոր էին ուս նեննալ. այլ որովհետեւ առժամն հաւատացեալք հա՛մ ի հեթանոսաց էին և հա՛մ ի Հրէից, յորս կուսութեան օրէնք չկար, և առ ամենեսին՝ նոր խաւսինք կը հաստատէր կուսութիւնը, և ամուսնաւորաց ալ արձակ հաստարձակ օրէնք էր արձակել զկանայս և զայլս առնուլ, և ի հեթանոս սիրող օրէնք էր նաեւ բազմակնութիւնն ու հարճեր ուննեննալը, Առաքեալը իր անօրինելի պայման պարտ է կ'ըսէ Եպիսկոպոս ըլլալու անձին երկու կնոջ ամուսին եղած չըլլալը, ց՝ ո՛չ իբր կինն արձակած և ուրիշ երկրորդ կին առած ըլլալ, ո՛չ ալ իբր միանկ օրինաւոր կնոջ վրայ ուրիշ կիներ և հարճեր հաստնե-

գանայն ունեցած ըլլալ։ Ըստ այսմ և մերս Հայրապետք բազումք՝ Լուսաւորիչն Ս. Գրիգոր, որդիք և թոռունք նորին, և այլք, որք յառաջ քան զձեռնադրութիւնն կանայս և որդիս ունէին, Եպիսկոպոսական օծութիւնն ընդունելու համար հրաժարեցան ի տանց՝ հաճութեամբ և ամուսնոցն. զի Եպիսկոպոսութիւնը վերին տեսչութիւն ըլլալով Եկեղեցւոյ, և Եպիսկոպոսին հարկաւոր պարտքն ըլլալով անոր բոլոր հոգերն առանձնել և հոգալ, բովանդակ Եկեղեցւոյ Հարք պարտ և արժան համարած ու վճռած են Պօղոսի կորնթացւոց գրած խրատուց հետեւիլ և անհոգ մնալ ըստ տան կե։ (Ա. Կոր. է. 32—35։)

Ապա ուրեմն Եկեղեցւոյ սկզբնաւորութենէն՝ ամեն ժամանակ և ամեն Եկեղեցեաց մէջ կուսակրօն և կանանցմէ զատ քահանայք կային. կուսակրօնից պահուած ըլլալով քարոզութիւնը՝ որով կոչուեցան նոքա յատկապէս Լոգոփէք, այս է՝ ատենաբեր. և զի անպատեհ էր յոյժ և մեծ անպատշաճութիւններ ունէր որ ամուսնացեալ ոք լեռնէ լեռ, քաղքէ քաղաք, գաւառէ գաւառ քարոզութեան պատրուակ հետը կնիկներ ալջիկներ տղաքներ պտըտցընելու պարտաւորեալ ըլլալով. ասոր համար՝ կանանցմէ ալ խորհրդոց մատակարարութիւնը պահուած էր բաց ի ձեռնադրութենէ, որով և սոքա կոչուեցան յատկապէս Քահանայք. ց՝ Նոմէրոփորճոք։ — Եաքէն Արեւմտեայք խափան արգիլեցին Եկեղեցականաց ամուսնաւոր կեանքը. բայց Յոյնք և Հայք իրենց նախնի հրահանգը պահեցին ի զգուշաւոր բարեկարգութիւն Եկեղեցւոյ։

Ձեռնադրեալ հետեւեալ յօդուածը բաւական հնարդիտական տեղեկութիւններ պարունակելուն համար արժան կը համարինք քաղել հոս.

«Առաջին դարուց պատմութեանց մէջ յիշուած

եպիսկոպոսներէն չատերը երեւելի էին առաքինութեամբ. անոր համար Աղէքսանդր Սեւերոս կայսրը քրիստոնեայները օրինակ կը բերէ երկրին պաշտօնեաները ընտրելու պատուհասին համար. (Լամպրիդ. Ալէք.) վասն զի այնպիսիներէն՝ որոնց վարքը լաւագոյն նկարագրել՝ սրբութեամբ ընտրելադոյններն և առաքինութեան մէջ փորձ եղողները չատաջ կը մատուցանէին.... Վիճակաւորները եպիսկոպոսը կ'ընտրէր ժողովրդեան աղաչանքովը կամ հաւանութեամբը, բայց միշտ իւր երէցներուն խորհրդովը. զանոնք երիցանց խմատնագունից հետ անձամբ փորձելով թէ արդարեւ արժանի՞ էին այն աստիճանին, բայց ձեռնադրելիներուն կարգը չէին հարցընէր. ո՛չ միայն չսպասելով որ խնդրեն, այլ չատ անգամ իրենց կամաց հակառակ բռնի կամ ճարտարութեամբ կը ձեռնադրէին պիրենք. անանկ որ անոնցմէ ոմանք իրենց բոլոր կենաց մէջ չհամարձակեցան պաշտօնին վարել: Իսկ եպիսկոպոսին ընտրութիւնը գաւառին եպիսկոպոսները կ'ընէին ժողովրդեան առջեւ՝ վախճանեալ եպիսկոպոսին եկեղեցիին մէջ ժողվուելով. և կանոն էր որ ընտրողները երկու՝ երեքէն պակաս չըլլան, և որովհետեւ չատ եպիսկոպոսներով ժողովք դումարել դժուար էր այն ատենները, և միայն հալածանաց դադարման միջոցներուն կրնային, վանորոյ երբեմն եպիսկոպոսանիստ քաղաքները չատերը առանց հոգւոյ կը մնային երկար ատեններ: (Կեդր. Ընդ. կր: Կոն. Ա-ոտ. Ը: Դ: Ոռֆ. Ի Ղեոդ. Ձե. Ջ: Կոն. Նէկ. Տ-ր. Ժ: Գ:) Կարեւոր կը համարէին ընտրութիւնը ժողովրդեան առջեւ ընել, որպէս զի՝ անոնք ամենը միահամուռ վկայելով ընտրեալին արժանաւորութեանը, յօժարութեամբ սրտի հնազանդին անոր. քանզի սովորութիւն էր այն մարդիկներէն մէկն ընտրել որ նոյն

եկեղեցին մկրտած և երկար ատեն վարժուած էին եկեղեցւոյ հանդիսական պաշտամանց մէջ: Նախ պահք կը պահէին, աղօթք կ'ընէին, յետոյ ձեռնադրութիւնը կը կատարէին, որ չատ անգամ կիրակամտի գիշերները կ'ընէին, գիշերն՝ ի բուն հակումն ընելով և յետոյ օրհնութիւնը կատարելով, որուն կարեւորագոյն մասը սեպուհեցաւ ամեն ատեն ձեռաց դրութիւնը: Զկնի ձեռնադրութեան Ս. պատարագը կը մատուցանէին»: (Պրն. յոճ. 44:)

«Եկեղեցւոյ պէտքէն աւելի քահանայ կամ սարկաւագ չէր ձեռնադրէր եպիսկոպոսը, վասնորոյ և անոնց թիւը յոյժ չատ չէր.... Երիցանց թուոյն նայելով եպիսկոպոսաց թիւը աւելի չատ էր. վասն զի հաստատելոյ խնամքը գոնուած բոլոր քաղաքաց մէջ եպիսկոպոսներ ալ կային: Հրաման չկար որ մէկ գաւառի մէջ մկրտեալները ձեռնադրուէին ուրիշ գաւառի մէջ՝ ուր ծանօթ չէին անոնց վարքն ու բարքը: (Ժող. Նդ-էր. Խբ:) Իսկ մկրտութենէ առջի կեանքը չէր փնտռուէր.... Ընդհմտ օրինաց էր որ եպիսկոպոսէ մը ձեռնադրեալ ոք անհրաման երթար ուրիշ եպիսկոպոսի հրամանին տակ մնար, ընդունող եպիսկոպոսն ալ կը յանդիմանուէր իբրեւ գողնք ժառանգող»: (Կոն. Ա-ոտ. ԺԴ. Ժող. Նէկ:)

«Սակայն եպիսկոպոսաց այս իշխանութիւնը բոլորովին հեռի էր տիրապետութենէ և բռնաւորութենէ. սիրոյ պետութեան պէս բան մ'էր անոնցը. եկեղեցւոյ բոլոր վիճակաւորները մատնակից էին եպիսկոպոսին իշխանութեանը. մի մեծ բան մը չէր ըներ առանց անոնց մանաւանդ երիցանց խորհրդոյն, որք եկեղեցւոյ իբր ծերակոյտն էին: Անոնք այնպէս պատկառելի էին, և եպիսկոպոսներն ալ այնպէս հեզ էին, որ դժուարաւ կրնար մարդ

դուրսը ճանչնալ թէ եպիսկոպո՞սը որն է , երէցը որն է ։ Նա մանաւանդ երիցունք եպիսկոպոսաց վըրայ տեսակ մը իշխանութիւն ունէին , միշտ անոր վարդապետութեան և քարոզ տեսուչ ըլլալով ։ Բոլոր հասարակաց պաշտամանց առեն անոր քով կը կենային իբր պաշտօնեայք իշխանաց քով , կամ մանաւանդ իրենց ուսուցչին ետեւէն պտըտող աշակերտներու պէս ․ քանզի և անոնք անոր այնպէս յարած էին , ինչպէս Առաքեալք Քրիստոսի ։ Իսկ երբ որ եպիսկոպոսը համարձակէր Առաքելական աւանդութեանց դէմ բան մը ընելու կամ սովրեցընելու , չէին լռէր անոր աւագ երիցունք և սարկաւագունք , և սիրողաբար ազդարարութիւն կ'ընէին անոր ․ և երբ որ մտիկ չընէր՝ ուրիշ Հայրապետներու կը բողոքէին , և եպքը կ'ամբաստանէին զինքը Եկեղեցական ժողովքի ։ (Ա․ Պետ․ Ե․ Յ։ Ոսկ․ 'ի Մատթ․ Ի․ 25։ Կան․ Առաք․ Բ․ ԺԸ․ և Ը․ ԺԲ․ ։)

«Կղերիկոսներէն շատերը ճգնաւորական կեանք կը վարէին ընդակերութեամբ և չորակերութեամբ ստէպ պահելով և ուրիշ պէս պէս ճգնութիւններով՝ որչափ որ իրենց բազմաշխատ պաշտօնը կը ներէր ։ Բայց ամենէն աւելի մեծ պատուէր կար եպիսկոպոսաց քահանայից և սարկաւագաց վրայ՝ սուրբ վարք ունենալու ։ Իսկ չէ թէ ամուսնացեալք չէին բարձրանար նոյն աստիճանները , քանզի ինչպէս կարելի էր ամեն օր նոր 'ի նորոյ հաւատքի դարձող այն Հրէից և հեթանոսաց բազմութեան մէջ անանկ մարդիկներ գտնել որ մինչեւ կատարելութեան հասածնին սրբութիւն պահած ըլլան ․ ապաքէն հերիք էր անոնց մէջ մէկ կնկան էրիկ եղող գտնելն ալ , շատ կիներ առնելու և արձակելու ազատութիւն ունեցող Հրէից և Արեւելեայց մէջէն ։ (Ա․ Տիմ․ Գ․ 1։) Այլ երբոր ամուսնացեալ

մէկը եպիսկոպոսութեան կը մատուցանէին , այն օրէն ա՛լ իբրեւ քոյր ունէր նա իւր կինը ․ և այս օրէնքը ամեն առեն հաստատուն բռնեց Լատինացւոց եկեղեցին քահանայութեան և Սարկաւագութեան կարգին համար ալ ․ բայց պատուէր ունէին կարգաւորք կիներնին խնամելու , և օտարականաց պէս դուրս չթողելու , որք և երբեմն 'ի պատիւ արանց իւրեանց կը կոչուէին երիցուհիք ։ (Ժող․ Նիկիոյ․ Կան․ Լ․Գ։ Եղջ․ Սերէն․ —— Հերոն․ Ե։ Կան․ Առաք․ Զ։) . . . .

Բայց բովանդակ կաթուղիկէ Եկեղեցւոյ մէջ ձեռնադրութենէ ետքը կին առնելու հրաման չկար մէկու մը , որուն եթէ համարձակէր մէկը՝ պատուէն կը ձգէին և աշխարհականաց կարգը կը դասէին ։

. . . .

«Որչափ սիրելի էին Հովիւք և պաշտօնեայք առհասարակ իրենց գթասիրութեամբքն ու անձանձիր վաստակօքն , այնչափ ալ պատկառելի էին իրենց ուրիշ առաքինութիւններովը ։ Եպիսկոպոսը կ'արտորար միշտ և առաջին կ'ըլլար հասարակաց աղօթից բազմելու անխափան , Ս․ Գիրքերը մեկնելու , և ամեն կիւրակէ պատարագ մատուցանելու ։ . . . Ամեն ժամանակ ինքն և երիցունք իւր կը պարապէին զերախայս ուսուցանելու , հիւանդները մխիթարելու , ապաշխարողները քաջալերելու , և թշնամիները հաշտեցընելու ․ անոնք էին խաղաղարար ամեն վէճերու մէջ , և չէին հանդուրժեր որ Քրիստոնեայք ընդդէմ հրամանաց Պօղոսի՝ անհաւատից առջեւ դատուին ։ Վասն որոյ անոնք որ միանգամ մտիկ չէին ըներ Եպիսկոպոսին դատաստանին՝ կը նզովուէին իբրեւ անզեղջ և ստահակ մեղաւորներ ։ Այլ հազիւ ուրեմն վէճ կը ծագէր այն Քրիստոնէից մէջ որք իրենցը փնտռող չէին , և հեզ ու համբերող էին ։ Սովորաբար երկուշաբթի օրը դատ մտիկ կ'ընէին

Եպիսկոպոսք, որ եթէ դատախազք չհնազանդէին՝ առեն ըլլար հնարք գտնելու որ զանոնք զգօնութեան բերեն և արդար իրաւունքը ճանչցընեն մինչև կիւրակէ. քանզի պարտաւոր էին ամենեքեան ամեն կիւրակէ միտրան աղօթել և Ս. խորհրդոյն հաղորդուիլ: Եպիսկոպոսը երէցներուն հետ կը նստէր առեանը, տարիւաղները քովն առնելով, և դատախազք անոնց մէջտեղը ոտքի վրայ կը կենային: Երիցուն եւս խօսածները մտիկ ընելով՝ ո՛րչափ որ կրնար՝ կը ջանար որ մէնթրը շատ մի միտրան սիրով հաշտուին: Քրիստոնէութեան չհալրող քրիստոնէից դէմ եղած բողոքներն ալ նոյն ժողովին մէջ մտիկ կ՚ընէր: Եւ Եպիսկոպոսը ինքնին միայնակ չէր դատէր, այլ միտրան ընդ երիցունս իւր: (Կէոր. Ղազ. ԻԸ.) . . . Սովորութիւն ունէին ամենեքեան՝ քահանայից վերձեցած տաեններին անոնց տէջեը գեաղը կ՚ընդային ոտքերնին կը համրուրէին՝ անոնց մէջոյն օրհնութիւնն առնելու համար. և մեծ երանութիւն կը համարէին իրենց՝ թէ որ գո՛նէ տարիւաղ մը տուներնին ասպնջականել և իրենց սեղանակից ընել յաջողէին: Ի՛նչ և իցէ մեծ բանի մը ձեռք չէին զարներ տաեններին մինչեւ որ բոլոր հօտին առաջնորդն եղող միակ հովուին չը հարցընէին: (Իգնատ. Էֆես.) Այր Աստուծոյ և փոխանորդ Քրիստոսի կը համարէին զայն. անոնկ որ Եպիսկոպոսներն ու քահանայները անձերնին յարգելու և ուրիշներն արհամարհելու վտանգին դուռը հասեր էին: Նոյն վտանգն ունէին դարձեալ անոնք ալ որք մարդարէութեան և աքանչելագործութեան շնորհքն ունէին, որք դէռ եւս կը յաճախէին Եկեղեցւոջ: Ապաքէն այս մեծարանաց և արդիական սիրոյ մէջ հաստատուած էր հովուապետին բոլոր զօրութիւնը. (Ո-կիբ. յղ. Քոհան. Բ.) քանզի անոնք ժողովուրդը հնազանդեցնելու համար յորդորէին և ոչ թէ ստիպէին ուրիշ դէնք չունէին. անոնք չէին կրնար ուրիշ բանով բռնանալ՝ բայց եթէ՝ անոնց խղճմտանքը բաղխելով. վասն որոյ անոնք՝ որ առ մեծի ամբարշտութեան կը յանդգնէին անոնց նզովքներն ալ քամահել, քանզի ըստ աշխարհի վրէժխնդրութիւն մը չէր ըլլար. . . .

«Մեծ յարգ և պատիւ ունէին Եկեղեցականք. և թէպէտ աշխարհական աւագութիւններ չունէին Եպիսկոպոսունք, և տակաւին մարդոց պէս անչուք և անպատուական կեանք կը վարէին, այլ նոյն իսկ իշխաններէն ու թագաւորներէն կը մեծարուէին ու կը պատուրուէին: Ըսեր եմք ուրիշ տեղ թէ մինչ մեծ պատուով մեծարեց Կոստանդիանոս Ալիկոյ ժողովին Հայրերը. իսկ Մաքսիմիանոս ինքնակալը իւր սեղանն ընդունեց Ս. Մարտինոսը երէցներովը միկտեղ, և ինքնակալին տիկինը սպասաւորեց անոնց: (Ժոզ. Տուբէ. Բ. ա: Գ. իԲ. իԳ: Եւէբէ. ԺԸ: Աթանաս. ձկ: Գերոնդ. Զ: Ժոզ. Հոով. ա. Գուէր. Գ.)

«Այն ժամանակները սովորութիւն ունէին Հռոմայեցիք իրենց իշխաններուն զանազան պատուանուններ կու տային. անոնց ամեն մէկը իւր աստիճանին և աւագութեան համեմատ՝ մեծապատիւ, նշոյր, երեւելի, գերապայծառ կ՚անուանէին. (Հերոն. Ղկ. — Նեպոտ. Աթտիկ. Ֆրոնտ. Մարկ.) բայց Եպիսկոպոսները կը կոչէին տէրք կամ երանելի (1), յարելով նաեւ բարեպաշտ, երկիւղած, Աստուածատէր անուանները. և ասոնց նման յորջորջմունքներ, որք անանկ սեպհականուած էին Եպիսկոպո-

(1) Ինչպես նաև առ մեզ՝ Մեծ Վարպապետ, Պատուական Հայր, Երջանիկ Հայր, յետոյ ուրեմն՝ Երիցս երանելի Հայր, Սրբազան Հայր եւն:

ՅԱՒԵԼՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԴՐՈՑՄ

ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հայոց Եկեղեցւոյ Քահանայութիւնը կամ Քահանայական Ձեռնադրութիւնը Ս. Թադէոս և Ս. Բարդուղիմէոս Առաքեալներէն կ'իջնայ. ասոր տարակոյս չկայ: Ագաթեան Հ. Մկրտիչ վենետիկի միաբաններէն՝ այսպէս կը խոստովանի. «Իրաւամբք ճանաչի Եկեղեցի Հայաստանեայց աշակերտ հարազատ երկոցունց Ս. Առաքելոցս Բարդուղիմէոսի, որ ինն է յերկոտասանից, և Թադէոսի, որ էր յեօթանասնից (*), և Հայրապետութիւն Հայոց կոչի և է Աթոռ առաքելութիւն, ք՝ յաջորդութիւն աթոռոյ սրբոյն Բարդուղիմէոսի և Թադէոսի» (Է վրդ. պտըտ. Հատ. Ե. եր. 446:) Գանգի այս երկու Ս. Առաքելոց յաջորդութիւնը երկու հատուածովք Ի Հայս պահուած ըլլալով, մին յԵդեսիա, և միւսն Ի Կեսարիա կապադովկացւոց, (Անդ. Հատ. Ժ. եր. 443: և Հատ. Դ. եր. 18:) երբ Ս. Գրիգոր լուսաւորչով գՀայս՝ միաբան ընտրութեամբ բովանդակ Հայոց՝ Հովիւ ընտրուեցաւ Հայաստանեայց, «կամելով զսուրբն Գրիգոր (կ'ըսէ Ինճիճեան Հ. Ղուկաս,) Ի յաջորդութենէն Թադէոսի կացուցանել Հայրապետ և Հովիւ Ի Հայաստան՝ որպէս հարազատ ծիւղ երկանց Առաքելական քարոզութեան նորա, Ի կեսարիա առաքեցին զնա Ի ձեռնադրութիւն. զի ծանեան՝ թէ Սուրբն Թադէոս՝ նաեւ Ի կեսարիա էր քարոզեալ, և անդ եդեալ զիւր Աթոռն. ուր անխախտ մնալով յաջորդութեանն՝ եպիսկոպոսունք

(1) Նաեւ մեր Հայկազեան և Վարդապետաց եկեղեցական տոմար Տէր Հոյր, Ս. Հայր եւ:

ատց՝ որ նոյն անուամբք կը կոչուէին նաեւ իրենց դէմ եղած դատերու և տարաստանութեանց մէջ, ինչպէս Եւեսոյ Եմեսոյ Ժողովքին մէջ, և Գիոսկոր Քաղկեդոնին: Նոյն անուններով կու տային չարաչար Եպիսկոպոսաց ալ. և Օգոստինոս խիղճ չբրաւ կարքեդոնի մէջ ըրած տեղեկաբանութեան մէջ ամենասուրբ անուանելու Եմիրիտոսն ու Պետիլիանոսը՝ որք Դոնատոսի աղանդէն էին, որովհետեւ թշնամանել էր զանունք այս ձեւերուն չնայելը:

«Իսկ Պապ անուանակոչութիւնս որ կը նշանակէ հայր, մանաւանդ թէ հայր կոչումն աւելի խանդաղատական, հասարակաց անուն էր բոլոր Եպիսկոպոսաց, (Փանդըկ Ի Յունաց կոյսեր: Պապ. Ի վկոյսք. Ի Ժ. յոանվ.) որով և յայսօր կը կոչուին երիցունք Յունաց (1). և սկիզբէն անխտիր կը կոչուէին կաւառնէլիոս պապ, Կիպրիանոս պապ, Յուլիոս պապ, և Աթանաս պապ: Տէր ալ կը կոչուէին անոնք, և չորրորդ ու հինգերորդ դարուց մէջ Եպիսկոպոսաց դրուած բոլոր թուղթերը այս մակագիրն ունին. «Առ ամենասուրբ և ամենապատիւ և գերյարգոյ Տէր այս անուն Հայրապետ» եւ: (Ի կենցաղ Քրիստ. Մասն Բ. Յոդ. իթ. եր. 425—436: Մասն Գ. Յոդ. ԺԵ. եր. 509—512:)

կեսարիոյ էին յաջորդք Թադէոսի Առաքելոյն . . . : եւ այսպէս սուրբն Գրիգոր իրաւամբ կոչի յաջորդ Թադէոսի, և Աթոռ նորին՝ Աթոռ սրբոյն Թադէոսի եւս» : (Ի Հնախօս. Հայոս. Հատ. Գ. եր. 255—257) : վասն որոյ և ի Շարականն կ'երգէ Հայոց Եկեղեցին Լուսէն սրբոյն Գրիգորի. «Հաստանդորդ եղեր Հայրենի սեպհական հօտին վիճակեալ Թադէոսի Ս. Առաքելոյն . . . : Բարեւնէսոյն հրամանաւն ի վերուստ կոչեալ յԱռաքելական Աթոռ Տէր Գրիգորիոս . . . : » (կոն. Լուսաւորչի) եւ որովհետեւ Ս. Ղեւոնդիոս չատ մը եպիսկոպոսներու հետ մէկտեղ զՍ. Գրիգոր ձեռնադրած ատեն՝ դաշինք մ'ալ դրաւ, որ անոր յաջորդներն ալ կեսարիայէն առնուն քահանայապետական օծութիւնը, Ս. Լուսաւորչի յաջորդները կեսարիա կ'երթային ձեռնադրութեան՝ մինչեւ ի Մեծն Ներսէս, որ մեծ ժողովք մը գումարելով վերջ տուաւ սորա. զի Հայոց Եկեղեցին օրինաւոր քահանայութիւն և Հայրապետութիւն ունենալով իւր մէջ՝ ըստ օրինի քահանայութեան կրնար իւր Հայրապետն ինքնին ձեռնադրել ըստ այլոց Եկեղեցեաց. ուստի և այնուհետեւ քահանայապետք Հայոց ի քահանայապետաց Հայոց սկսան առնուլ ձեռնադրութիւն քահանայապետութեան :

Հայոց Եկեղեցին ի ծունաց ձեռնադրութիւն առնելէ դադրելուն համար՝ անոնց թշնամութիւնը գրգռեց իւր վրայ, որ խապռ անիրաւ էր, և իւր այս անիրաւութիւնը ծանուցուեցաւ իրեն. և առ ժամն լռեց . . . : Բայց պապական մոլեղնութիւնը որ թէ'եւ ուշ՝ բայց զօրութեամբ երեւան եկաւ, պատասխաններով գոհ եղող չէ նա. ամեն տրամաբանութիւն անզօր է անոր առջեւ. և մէկ եղանակաւ կը դատէ ամեն անոնք՝ որ կը յանդգնին բանաւոր պատասխան՝ տալ իւր անհիմն պահանջ-

մանց . . . : Պատրիարք ուրացան Հայ Եկեղեցւոյ անկախ կառավարութիւնը ըստ օրինակի մայր Եկեղեցւոյ. առաջնորդը՝ կ'ըսէին թէ Ս. Գրիգոր մեծին Տրդատայ հետ Հռոմէ երթալով Ս. Սեղբեստրոսէն կամ նեստորեանէն ընկալաւ կաթուղիկոսութիւնը : Եթէ Հայաստեայց անդրանկեայ պատուոյին մէկն ալ՝ Գաթըրմեան՝ եւս ըսաւ թէ Պապը ի՞նչ կարող էր Քրիստոսէ և Պետրոսէ յոլորապէս (՛ ՛ ՛) իրեն յանձնուած հօտին մէկ մասը ուրիշին յանձնել. ամենեւին պապը կաթուղիկոսին անկախութիւն տուած չէ. Լուսաւորիչ Հռոմի կուռքին ատքը պագեր է, յաջորդներն ալ այն կուռքը պաշտեցին, կամ պաշտելու էին : Ահա՛ մոլեգնութիւն մը որ ամեն տրամաբանութիւն պատուհասելու աստիճան կը կոխկռտէ . . . :

Մենք երկու խօսքով կ'ըսենք. Ս. Լուսաւորիչ Հռոմ չգնաց բնաւ. այն՝ որ Տիկիոս ժողովին երթալու հրաժարեցաւ՝ որ կը պատուհասուի, Տիեզերաց մայրաքաղաքը կ'երթա՞ր՝ որ ուխտ պահէ : Բայց ենթադրելով թէ գնաց, պապէն բան մը չառաւ բնաւ. զի ինչ որ պապէն առաւ կ'ըսեն պապանզը, արդէն ունէր Ս. Գրիգոր, և նոյնիսկ կը վարուէր : — Ս. Գրիգոր ի Կեսարիա ձեռնադրուելէն յետոյ ի Հայս դառնալուն՝ հարիւրաւոր եպիսկոպոսներ ձեռնադրեց, եկեղեցիներ հիմնեց, ժողովքներ ըրաւ, բարեկարգութեան օրէնքներ դրաւ, և առանք ամենը ըրաւ՝ դեռ Հռոմ չդացած՝ ըստ պապականաց. (ի Պատմ. Փիլիպ. Գաթըրճեան Հատ. Բ. եր. 471—472.) եւ պէտք է թէ որ Հռոմ գնաց և պապէն բան մը առաւ նէ՝ ինչ էր առածը. ինչ իշխանութիւն առաւ պապը Ս. Գրիգորէն որ անկից առաջ ունեցած և անով վարուած չէրնա : Կաթուղիկոսական օծութի՞ւն առաւ պապէն. (ո՞վ կը հաստատէ զայդ, ինչ ապացոյց կայ առոր.) Հապա ինչո՛ւ հանար

Գրիգորի յաջորդը՝ և յաջորդին յաջորդները մինչև
՝ի մեծն Ներսէս Հռոմէ չգային նոյն կաթուղիկո-
սական ձեռնադրութիւնն առնելու. ինչո՞ւ համար
պիտի իրենք ՝ի Հռոմէ առեալ կարծեցեալ իշխա-
նութեամբ չվարուեցան, և իրենց Հայ եպիսկո-
պոսներէն չձեռնադրուեցան, ու նորէն Կեսարիա
կ՚երթային Ս. Գևոնդի յաջորդներէն ձեռնադրու-
թիւն առնելու համար. միթէ Կեսարիոյ իշխանու-
թիւնը Հռոմին իշխանութենէն գե՞ր ՝ի վե՞ր էր, որ
Հռոմէն առածնին իբրեւ չառած նորէն Կեսարիայէն
կ՚երթային ուզելու. արդեօք պատը բնա՞ւ բան մը
չուտաւ Ս. Գրիգորին՝ թէ որ Հռոմ գնաց ատ. պի
ուտած ըլլար նէ՝ մեծագոյն իշխանութիւնն ունե-
նալով՝ փոքրագոյնը ձեռք բերելու համար ալ կե-
սարիա չպիտի երթային. արդեօք բնա՞ւ Հռոմ չը
գնաց Ս. Գրիգոր. ասիկայ է՛ն հաւանականագոյն իրո-
ղութիւնն է. պի եթէ Ս. Գրիգոր Հռոմ գնաց,
անշուշտ հետը քանի մը պաշտօնեաներ՝ եպիսկո-
պոսներ վարդապետներ պիտի բերէր ՝ի Հայս. ինչո՞ւ
չբերաւ. ինչո՞ւ Հռոմնայեցի եպիսկոպոս մը վար-
դապետ մըն ալ չմիաբեր վաստակակից այն Աս-
քելական մշակին, որ այնչափ կարօտութիւն՝ պէտք
ունէր Աղեսանդրի պաշտօնէից, մինչեւ երուսաղէմ
կեսարիա՝ Ասորիք՝ Գաղիրք և ուրիշ տեղեանք կը
գրէր արժանաւոր մշակներ կը փնտռէր քովը կը կան-
չէր, բնականի դէմ չէ՞ որ Ս. Գրիգոր Հռոմ գա-
ցած ըլլայ՝ Աղեսանդրի պաշտօնէից էն աւաս տեղը,
և հոնկէ մէկ հատ մըն ալ հետը Հայաստան բերած
ըլլայ. Մինչդեռ կեսարիա գնաց նէ՝ հոնկէ և Սե-
բաստիայէն չատ պաշտօնեաներ ժողվեց բերաւ
հետը. (տես ՝ի պ-տ. գիրս Գ-ղիք. Հատ. Բ. եր. 471.)
Ապա ուրեմն Հայոց կաթուղիկոսութիւնը ի՛նչ որ ունէին
ո՛չ յայտնի ապացոյք ունէին, այլ ՝ի նախորդաց իւր-
եանց ՝ի սրբոց Առաքելոցն Թադէոսէ և Բարդո-

ղիմէոսէ, որոց ժառանգական օրինակ որ յաջորդներն
ըլլալով՝ անոնց յաջորդութեան հետ անկախ իշխա-
նութիւնին ալ ժառանգեցին՝ ըստ օրինակի Աղե-
քսելական մայր եկեղեցեաց. և ի՛նչպէս որ պապե-
րէն բան մը չառին, բան մըն ալ չուզեցին անոնցմէ.
և ինչպէս որ իրենց նախնիքներէն առին իշխանու-
թիւնին անկախութեամբ և ազատութեամբ՝ այն-
պէս ալ պահեցին. և թէ՛ եւ երբէք երբէք հին ու
նոր Հռոմիները ուզեցին ընդ բռնաւ գերել Աիոզեի
այս անդրանիկ դուստրը, բայց անոնք բնա՛ւ մէկ
առեն չատրկացուցին Հայոց ազատ եկեղեցին. և
ազատ ինքնօրինութեամբ կատարեցին զնա մինչեւ
ցայսօր, Աառաւածային բանն միայն իրենց կանոն
ունենալով և Հարց վարդապետութիւն՝ առաջ-
նորդ:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՐԵԳԱՇՏՈՒԹԵԱՆ ԾԷՍՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ծէսք և արարողութիւնք՝ Աստուածպաշտութեան հարկաւոր հետեւանքն ըլլալով՝ Աստուածդիտութեան հետ մէկտեղ կրօնից արտաքին ծէսերն ու արարողութիւններն ալ երեւցան. մարդկութեան անդրանիկ գաւակները պատարագի պաշտաւնքն սկսան, անոնց որդիքն ու թոռունքն ալ բոլոր մարդկային ազգաց աւանդեցին։

Այս ծիսական արարողութիւնք հոգւոց փրկութեան թէ՛ներ կարեւոր և օգտակար լոյժ՝ այլ անհրաժեշտ հարկաւոր չըլլալով, Առաքելական մըշակք Ս. Եկեղեցւոյ ո՛չ այնչափ ջանք ցուցընցած են օրինադրել և միահերպ աւանդել դրովք առենայն Եկեղեցեաց, որով առենայն Եկեղեցիք հարկաւորապէս միաձեւութիւն առնելով՝ ըստ ծխից եւս չէին կանազանուէր ի միմեանց։ Այլ քանզի այս տարբերութիւնք չէին վնասեր Եկեղեցւոյ վարդապետութեան միութեանը, ըստ որում հաւատացեալց ջերմեռանդութեան հանդիսական ձեւերն և լրջէից յայտարար նշաններն ըլլալով, անոնց արարողական տարբեր հանդիսից առենուն ոգին միև նոյն էր, հիմն ու նպատակը նոյն Աստուածպաշտութիւնն էր. Առաքեալք միայն հարկաւորին նայելով՝ վարդապետութեան համար առեն ձիգ թափած են՝ փրկութեան վարդապետութիւնը ողջ բովանդակ գրով աւանդելու. արարողական մասը իրենց յաջորդաց թողուլ՝ որ իրենցմէ սեռաժնին Եկեղեցեաց աւանդեն և կանոնադրեն։ — Ասկէ ուղղակի կը հետեւի թէ ծէսք և սովորութիւնք անփոփոխելի անառնօրինելի չեն հաւատոյ վարդապետութեան պէս. և իրօք ալ կը տեսնենք որ՝ ինչպէս Ս. Եկեղեցւոյ ծէսք հանդիսից չատանդուեցան Եկեղեցւոյ՝ ըստ օրինակի վարդապետութեանց որ մի բովանդակ արուեցան սիրբէն, գի առնցմէ յառն մը միայն պահաս ըլլար նէ Եկեղեցին զուրկ կը դառնար փրկութենէ. և ինչպէս որ եղբէն քաթուղիկէ Եկեղեցւոյ մէջ այլեւայլ ժամանակներ ունան առ ունան տահմանադրեցան այն ծէսք առանդ, այնպէս նաեւ առօրինեցան առնցմէ մէկ քանին ուրեք ուրեք. յորս առեն ժամանակի մէջ միտ դրուելիքը միայն այս է որ Առաքելական և Հայրապետական աւանդից և տահմանաց և կամ ողջամիտ վարդապետութեան հակառակ յայտարար նշաններ չըլլան. և միայն հաւատացելոց ջերմեռանդութիւնը արծարծելու, զիրենք զղջման յորդորելու և առնց՝ հոգւով և ճշմարտութեամբ Աստուածպաշտութիւն դալ առաջնորդելու կնիքն ունենան։

Խօսեցանք արդէն Խորհրդոց մատակարարութեանց ծխից վրայօք։

Տօներու գալով, Եկեղեցւոյ անդրանիկ տօնն է Քրիստոսի Ս. Յարութեան տօնը, զոր Առաքեալք տահմանեցին Քրիստոսի Յարութենէն անմիջապէս եռքը՝ տօնել միաշաբաթու օրը, և ի պատիւ նորա շաբաթու հանդիսաը փոխեցին յօրն Միաշաբաթ, անուանելով զայն ի Յոյն լեզու Կիւրիակէ, ի Տէրունական. (Գործ. Ի. 7։ Ա. Կոր. ԺԶ. 2։ Յայտ. Ա. 20։) Յայսօր տօն Յարութեան կը կատարէ Հայոց Եկեղեցին կիւրակէ օրերը։ Ջատկի տօնն ալ կը կատարէին Քրիստոնեայք ընդ Հրէայս, պՅարութիւնն Տեառն տօնելով. (զոր ակնարկել կը կարծուի Պօղոսի ի բանն Ա. Կոր. Ե. 7—8։) Նոյնպէս և Պենտեկոստէից տօնը, յորում աւուր Եկեղեցին կատարելութիւն առաւ, և զոր կը տօնէին անտա-

բակոյս ընդ Հրէայս, զԻնչումն Հոգւոյն սուրբ եւ զտարեդարձ Քրիստոնէութեան։ Յայտնութեան եւ մկրտութեան սուրբ տօներն ալ Առաքելոց ժամանակին սկիզբն առած է, զոր Ծննդեան հետ միկտեղ կը տօնէին ի սկզբան ի վեցն յունուարի, զոր ետքէն երկուքի բաժնեցին այլ Ալեքսեղեցւոց, զծննդեան ի 25 դեկտեմբերի կատարելով որով ի մկրտութենէն։ այլ Հայք պահեցին ի՛նչպէս որ ընդունեցան Ս. Լուսաւորչէն։ (Ընդհանր. քէք հատոր. եր. 60։)

Եւ քանզի իսկ եւ իսկ հալածանաց հրդեհը բորբոքեցաւ ընդ ամենայն սահմանս, և ամեն տեղ Քրիստոնեայք գունդ գունդ մարտիրոսութեան կը տարուէին շատ մը չարչարանքներու փորձերը կրելնուն ետեւ, հաւատացեալք կը հետեւէին սոնոց ի տանջանս նոցին և ի կատարումն, քաջալերելով զանոնք ի նահատակութիւնն. և սպանելնուելնուն ետքը անոնց մարմինները և կամ նըշխարներնին ժողվելով՝ չխմիներու մէջ կ՛ամփոփէին պատուով, և յետոյ յատուկ յիշատակութեամբ սոնոց տարեդարձը կը կատարէին իրենց վիրաց վըրայ և կամ վկայարանաց մէջ, և յետոյ՝ Եկեղեցիս, յորոց սկիզբն առին սրբոց տօները. յորս նոցին նահատակութիւնները կը պատմէին և զիրար կը յորդորէին նմանող ըլլալ յաղթութեանց նոցին և պնդութեան հաւատոց։

Եկեղեցեաց և վկայարանաց շինութիւններէն առաջ Առաքեալք և ի Հրէից դարձող Քրիստոնեայք թէ՛ և հասարակաց աղօթից կ՛երթային տաճարը, (Գործ. Գ. 1։ ե. 25.) բայց միանգամայն իրաքանչիւր Քրիստոնէի տուն առանձինն ժողովարան էր, յորս կը ժողվուէին Քրիստոնէական տօները խմբելու համար, մանաւանդ կիւրակէ օրերը անպակաս, ի բեկանել հոց. (Հոովմ ԺԶ. 4։ Ա. կոր. ԺԶ. 19։ կող. Գ. 15։) Տան մէջ ընթրեաց յայսմ-

բադոյն սրահ մը կ՛ընտրէին, որ տեղւոյն բարձրութեանը համար վերնատուն կ՛ըսուէր. (Գործ. Ա. 13.) որնոր շատ մը ճրագներով լապտերներով զարդարուած կ՛ըլլար. (Ի. 8.) ատոր սկիզբն եղաւ՝ երկեղեցին ճրագներով զարդարելու սովորութեան, զոր և ի հնումն հրաւայած էր Աստուած առ Մովսիսէս։ (Ղեւտ. ԻԴ. 1—4։) Շատ անգամ ալ երկիւղիւ հալածանաց՝ քաղաքներէն դուրս ժայռերու խոռոչներու՝ այրերու և քարանձաւներու մէջ կը ժողովուէին, ուր միաբանական աղօթիւք զանձինս և զմիմեանս կը զօրացընէին և վասն աւետեան բացակայ քրիստոնէից կ՛աղօթէին, և քարոզութեամբ Ս. Գրոց կը մխիթարէին զիրար. (Ա. Տիմ. ե. 17.) և տաղմոսներ օրհնութիւններ և հոգեւոր երգեր երգելով՝ (եփես. ե. 13։ Գործ. բ. 47։ կող. Գ. 16.) սուրբ կամ սրբութեան համբուրիւ մէկզմէկ կ՛ողջունէին. (Հռ. ԺԶ. 16։ Ա. կոր. ԺԶ. 20.) և այս ամենը կ՛ընէին հալածանաց հանդերձ։ Եւ երբ ազատութեան շունչ շնչեց Եկեղեցին, յայտնի յայտնապէս սկսան ժողովուիլ խուռն բազմութեամբ հըրապարակական տեղերը, և շատ կանուխ սկսան Եկեղեցիներ կանգնել ամեն տեղ։ Հայոց եղեսիոքաղաքինը (որ իրր 30—37 յետ Քրիստոսի կառուցաւ) Քրիստոնեայ աշխարհին անդրանիկ Եկեղեցին կրնայ համարուիլ։

Կանուխէն սկսաւ նաեւ Եկեղեցին զարդարելը ո՛չ միայն ճրագներով, այլ նաեւ նկարներով. Քըրկական պատկերը առ Քրիստոսիս իսկ եղեսիոյ զարդն ու փառքն էր. և ընդ ամենայն տեղիս՝ Եկեղեցեաց որմերը լի էին նկարներով, որք կը ներկայացընէին Հին Կտակարանաց զանազան պատմութիւնները, մանաւանդ Նոր Կտակարանի պատմութիւններն ըստ երագ ծողները, ի Ննի տապանը, Աբրահամու պատարագը, կարմիր ծովէն անցքը, Յոշուանու ծոլի

ընկեցումը, Դանիէլի առիւծոց գալը ձգումիլ եւ (Տես՝ Հ–Ձ՝ Զ. Լ. եւն.) Նոյն պատճառ վրայ գարձեալ չատ տեղեր կը տեսնուին փրկչի պատկերները և անոր սքանչելիքները, հայրը չատացընելը, Ղազարոս յարուցանելը։ Եւսերիոսիկը վկայէ որ կոստանդիանոս Մեծոյ դիւցազնականները դնել տուաւ քովէ Հովսէին պատկերը և Դանիէլի՝ ի մէջ առիւծոց նկարը։ Այլեր եւս կը վկայէ ին (Տես՝ Գ. Խթ. Լ պատմ. Լ. ԺԸ.) հաւատացնալը առջի ժամանակներէն՝ ի վեր կը պահէին Ս. Գաղտի և Ս. Պետրոսի նկարեալ պատկերները և մանաւանդ փրկչինը. և ասանդուխտ էր առ նախնիս տալ իրենց բարեբարները պատուել անխտիան։ Ս. Օդոտինոս ալ կ'ըսէ թէ (Յհ. Եպտ. Ը. Դ.) իւր ժամանակները անոնց ճշգրիտ պատկերները չկին գըտնուէր, այլ ըստ կամս նկարնեը, ինչպէս և հիմայ։ Չամառօտ ըսելով, իւրաքանչիւր եկեղեցիք կը ներկայացնէին այն վկայներուն պատկերները որոց ոսկերք հանգուցեալ կին անոնց մէջ. . . . : Այս պատկերները առելի ապէտներուն համար կը նկատէին և եկեղեցեաց զարդերուն վրայ կը դնէին՝ ի ցոյց, զի անոնց գործերու տեղ կը ծառայէին (1).

(1) Փորձառական ճշմարտութիւն մ'է այս, որ պատկերները մեծ ներգործութիւն ունին մանկանց ուղղոց և անուսից մտաց, և գրեթէ առելի ուսուցանող են նոցա։ Մեք խոկ անձամբ իբր քսան տարուան շրջանի մը մէջ փորձով տեսանք և կը հաստատեմք, որ ուղղոց տրուած գասերը երբ պատկերի վրայ կ'ուանդուին, շատ և մանրամասն պարագայիք խոր կ'արմատանան անոնց մտաց մէջ, և ամեն անգամ որ տեսնեն այն պատկերը՝ տեղն ի տեղը կը յիշեն գասերնին իրը աչքերնուն առջեւ կատարուած իրողութիւններ. մինչդեռ գասագրքով ուանդուածները դժուարաւ կ'ըմբռնեն և շատերն ալ չին յաջողիր ուս այնր։ Ասոր համար է որ հիմայ ամեն ուսումն և պատմութիւն՝ ո՛րչափ որ կարելի է՝ պատկերներով ուանդելու դրութիւնը մտած է գրեթէ ամեն տեղ

Այսպէս կը գրէ Գրիգորիոս Քահանայապետը (Թղթ. Ա. ՚ի Թագ. Նիւ. Բ.) պատկերամարտից ազանդապետ Լեւոն կայսեր, զոր և մեք արդի պատկերամարտ հողգաբանաց կ'ուղղեմք. «Ամք և կանայք ՚ի գիրկս ունելով զայն ինչ մկրտեալ որդիս՝ ցուցանեն նոցա մատամբք, և յուշ առնեն մանկագունից հասակաւ և անհաւատից զվարս նոցա, և ընդոստուցեալ առ Աստուած ՚ի վեր համբառնան զմիտս նոցա»։ (Ցնծագին ՚ի կենցաղն. Բէնա. Մասն. Գ. ցօդ. Գ։)

Շատ կանուխ պատկերներէն ալ առաջ՝ յարդուքեան էր խաչին նշանը՝ իբր նշան Ցերուսաղէմի որով փրկեցաք, իբր նշան որով հաճեցաւ Աստուած գործել զփրկութիւն ազգի մարդկան, իբր նշան որով մարդիկ դիւաց ականքներէն խալսելով ՚ի չնորհս մտին Աստուծոյ. ուստի ամեն անգամ որ խաչին նշանը կը տեսնեն, զԳրիստոս ՚ի նմա բեւեռեալ նկատելով հոգւոյ աչօք՝ կը յարգեն և կը պատուեն զայն, ո՛չ թէ կռապաշտից պէս խաչին փայտը և կերպարանքը ինչպէս նաեւ պատկերներն անոնց կտաւն ու գոյները իրրեւ աստուած պաշտելով։ Ս. Ներսէս Շնորհալի այսպէս կ'ուսուցանէ. «Մեք և որ ըստ մեզ այսպէս ունիմք և քարոզեմք, թէ որպէս զԱստուածընկալն խաչ տեսանելով, ո՛չ երեւելի նիւթոյն, այլ աներեւութին Աստուծոյ որ ՚ի նմա՝ զերկրպագութիւն մատուցանեմք, այսպէս և փրկչական պատկերին՝ ո՛չ նիւթոյն և գեղոյն, այլ Քրիստոսի որ է պատկեր աներեւութին Աստուծոյ Հօր՝ երկիրպագանեմք նովաւ. . . . : Իսկ զմեռելիս ծառայիցն Աստուծոյ զպատկերս և զանուանս՝ որ են ծառայակիցք մեզ, պարտ է պատուել և

զի դպրոցներն ու վարժարանները։ Ասոր համար ուրեմն և եկեղեցեաց մէջ պատկերները մտած են, ուսուցանելու համար, և ո՛չ պաշտելու համար, ինչպես կը բարբանջեն քաղդ.

յարգել ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան, և գառաքինութեան նոցին զվարս ի տեսլենէ պատկերի իւրոյն, իւրաքանչիւր պատկերացն օրինակ առնուլ մեզ բարեաց, զմտաւ ածելով զպանազան ճգնութիւն նոցա՝ որ վասն ճշմարտութեանն. և որ անարգէ զնոսա, ո՛չ զնիւթ պատկերին հաճարեսցի անարգել, այլ զայն՝ յորոյ անուն պատկերն է նկարագրեալ, եթէ զՏառն և եթէ զծառայից նորա։ (Ընդհնր. յղ ա-ոնդօ-ընեանց. եր. 87—88։) Ի հնումն եւս Սողոմոնեան տաճարը արուաւենեաց՝ քերովբէներու քանդակներով, ձուլեալ եզներով զարդարուած էր. ի Սրբութիւնն Սրբութեանց խոկ՝ Տապանակին կափարիչը կար կրկին ոսկեձոյլ քերովբէներով հովանացեալ, բաց ի երկու հրեշտակայածոյլ ոսկեղէն քերովբէներէն որ Դաբիրը Սրբութիւն Սրբութեանցէն կը զատէր. (ելթ. իե. իզ. իէ. իզ։ բ. Մնաց. գ. գ։ եզեկ. խ. խա. եւ։) Ասոնց առջեւը միայնոյ Աստուծոյ երկրպագութիւն մատուցանելը ինչպէս որ օրինաւոր էր և կռապաշտութիւն չէր կրնար համարուիլ, այսպէս ալ ճշմարտին Աստուծոյ տաճարը ի Քրիստոնեայս զարդարեալ ըլլալով խաչերով և պատկերներով, անոնց առջեւ միայնոյ Աստուծոյ երկրպագութիւն մատուցանելը յոյժ օրինաւոր է և կարի քաջ հեռի ի կռապաշտութենէ. և չաղփատութիւն միայն է բողոքականաց զրպարտութիւնքն առ այս։

Ստէպ ծոմ և պահք ալ կը պահէին եկեղեցիք Առաքեալներէն ուսեալք. և յամախապոյն քան զամենայն Հրէայս, որք երկիցս միայն կը պահէին ի շաբաթու։ (Մտթ. բ. 18։ Ղ-ա. ժը. 12։) Քրիստոնեայք ըստ օրինակին Հրէից շաբաթը երկու օր ծոմ պահելէն զատ (Ոչ. ի՛ ի յիշատակ մատնութեան Քհսուսի և ուրբաթ ի յիշատակ մահու նորա.) կը պահէին նաեւ յառաջ քան զՋատիկն քառասնորդական

պահքը, իբր յատկապէս հրամայեալ ի փրկչէն Յիսուսէն. «Ցորժամ բարձցի ի նոցանէ փեսայն ապա պահեսցեն»։ (Մ-ոթ. թ. 15։) Այս հրամանակարգ ծոմերէն մին է կամ օրիշ մը՝ զոր Գործոց Առաքելոց պատմիչը կը յիշէ իբր ընդհանուր ծանուցեալ պահք. «Զոն ոյն ինչ եւս պահոյն անցանելոյ» ըսելով։ (Գործ. իէ. 9։) Ասոնցմէ զատ՝ եկեղեցին՝ ալ ունէն ամէն ծոմ կը հրամայէր արտաքոյ կարգի պարագայներու, նեզութեան ատեն եւս։ (Գործ. ժգ. 22։ բ. կրն. բ. 5։ ժՀ. 27։) — Կիւրակէ օր ծոմ պահելու ո՛չ երբէք հրաման եղած է. ետքերը ի սպաս արգիլեց եկեղեցին նաեւ անանց որ կամաւորապէս կ'ուզէին ծոմապահել ի պատճառս ուխտից և ջերմեռանդութեան նաեւ յաւուրս կիւրակէից, ի պատիւ Յարութեան փրկչին, յորում աւուր արժան է ամենայն Քրիստոնէի ուրախ լինել միշտակաւ փրկութեան իւրոյ, և ո՛չ ի սուգ նստիլ. և միայն մեծի պահոց կիրակիներուն և Յայտնութեան պահոց մէջ պատահած կիրակիին թոյլ տուաւ ի խորհուրդ տնօրինութեանց փրկչին։

Ծոմն է անսուաղութիւն ամենեւին և միանգամ միայն ճաշակել յաւուրն ի մուտս արեւու, միանգամայն գգուշանալ սննդարար և համեղ կերակուրներէն և ըմպելիներէն. և այս պատճառաւ ինչ որ խնայութիւն կ'ըլլայ ծախուց սովորականէն պակաս ուտելիք ապառնալով, այն աւելցած գումարը աղքատաց տալ ողորմութիւն, զոր կարող է ինքն աղքատ մարդն ալ ընելու։ — Նախնիք գրեթէ հացիւ լոկով և ջրով կը լուծէին. ինչպէս և Հայք ապիւ և հացիւ, որուն համար «ապահոյժ» անուանեցաւ ի մեզ քառասնորդական պահքը։

Եւ քանզի հիւանդներն ու տկարները ալ այս հրամանակարգ պահքերէն ազատ չէին համարիր ջանձինս, Պօղոս Առաքեալ անոնց իղձն ալ տնօրհ-

նելու համար հրամայեց որ անոնք ալ ծոմի տեղ սրբապահութիւն բռնեն. «Եւ որ հիւանդն է՝ բանջար կերիցէ» ըսելով. (Հռ. ԺԴ. 2.) աստի յայտնի է՝ կեղեցին սրբապահութեան օրինաց հիմն առած՝ երբ հարկ տեսաւ մարդկային տկարութեան օգնել, ուստի և սրբապահութիւնը օրինադրեց, չէ՛ թէ ծոմը վերցընելով, այլ իւրաքանչիւր քրիստոնէի ըղձին ու ջերմեռանդութեանը յանձնելով երկուքն ալ պաշտել ըստ տանելոյ կարողութեանն, և անոնց հետ կցելով իրը անտնօրինելի պայման աղքատաց ողորմութիւնը: Բայց Աւագ շաբթուն՝ գէթ չարչարանաց ոտնի օրերը հարկ է ծոմապահել որոց կարողքն են:

Հայոց եկեղեցին միայն Տէրունական հինգ տոներու և մէն մի ամսոց համար մէ յմէկ շաբաթ (առնելը տասնեւեօթին շաբաթք) պահք ունի. քառասնորդական պահքն ալ ամսոց պահքերուն կարգն ընկալով, բաց 'ի Աւագ շաբաթու պահոց՝ որ Տէրունական հինգ տոներու պահոց միւն է. նոյնպէս նաեւ համօրէն Քրիստոնէից հետ Դ. ի և ուրբաթ օրերն ալ կը պահէ 'ի յիշատակ մատնութեան և չարչարանաց Փրկչին: Սրբոց համար՝ զորս 'ի բարեխօսութիւն կը կոչէ և տօն կը կատարէ անոնց, ո՛չ պահք և ո՛չ կիրակի կը պահէ, ո՛չ ալ կիրակի օր սրբոց տօն կը կատարէ: Աստուածածնայ տօներու կիրակիները տէրունական են իրը կցուրդք Փրկչական տօնից. Լուսաւորչինն ալ տօն է Լուսաւորութեան ազգիս: Իսկ Ս. Սարգսի, Եղիական, Լուսաւորչի, Ս. Յակովբայ անուանեալ պահքերը՝ չէ՛ թէ այս յիշուած սրբոց համար սահմանուած են, այլ ամսոց պահքեր են, որոց շաբաթ օրերը այս սրբոց տօներն պատահելուն համար անոնց անուամբք կը յիշուին. և ասոր ապացոյց՝ երբ Տեառնընդառաջի տօնը Ս. Սարգսի շաբաթ օրուան

ինայ, Ս. Սարգսի տօնը յաջորդ Բ. ի օրուան կը տեղափոխուի. ուր եթէ պահքը Ս. Սարգիսին ըլլար՝ պահքն ալ մէկտեղ յաջորդ շաբթուան պէտք էր փոխուիլ, որ անանկ չըլլար:

ՄԱՄՆ ԶՈՐՐՈՐԴ

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԱՑՍ Է

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՑ, ԴԱՏԱՍՏԱՆ ՅԱՒԻՏԵՆՆԻՑ
ԵՒ ՎԵՐՋԻՆ ՎԻՃԱԿ ԵՐԱՆԵԼԵԱՑ
ԵՒ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՑ

«Գալոց է նովին հարձակումն և ժողով հզօր՝ զօրել ընդդէմ ազգաց և զերեսել, որոց ընդարձակութիւնն ո՛չ ջոյց ընդ ամս . . . ի յարուածն դեռելոց ի զօրութեան յաջոյ հոգւոյ և հարձակ, յարուցեալքն երկնից և յերկրէ յաջորդեալքն»։

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՑ

Յարուածքիւն մեռելոց ըսելով կ՚իմանանք թէ մեռեալ մարդկան մարմինները՝ ի վախճան աշխարհիս յարուածքիւն առնելով Աստուածային հրամանաւ՝ իրենց հոգիներուն հետ պիտի միանան վերստին, և ի դատաստան պիտի երթեն Արարչին առեանք՝ բան գործոց իւրեանց վարձք կամ պատիժ ընդունելու համար։ — Ինսուս Քրիստոս հաստատեց այս վարդապետութիւնը ընդդէմ Սադուկեցւոց որ չէին յարութիւն կը դաւանէին, յասէն, «Այլ զի յառնեն մեռեալք, և Մովսէս գուշակեաց ի մորենւոջն, որպէս ասէ զՏեառնէ Աստուծոյ Աբրահամու, և զԱստուծոյ Սահակայ, և զԱստուծոյ Յակովբայ. և

Աստուած չէ մեռելոց՝ այլ կենդանեաց. զի ամենքին նմա կենդանի են» (Ղ-ԿԱ. Ի. 37—38։) եւ այլուր. «Այս են կամք Հօր իմոյ որ առաքեացն զիս. զի զամենայն զոր ետ ինձ Հայր՝ ո՛չ կորուսից ՚ի նմանէ, այլ յարուցից զնա յաւուրն յետնում։ Այս են կամք Հօր իմոյ, զի ամենայն որ տեսանիցէ զորդի՝ եւ հաւատայցէ ՚ի նա, ընկալցի զկեանսն յաւիտենականս. և ես յարուցից զնա յաւուրն յետնում» (Ց-ՀԿ. Զ. 39—40 եւ։)

Մեռելոց յարութիւնը ուրիշ բան չէ, եթէ ո՛չ նախախնամութեան պէս Արարչագործութեան հետեւանքը, անոր վախճանն ու նպատակն ըլլալով. ասոր Արարչագործութիւնը դատանելնուս ետքը յարութիւնն ուրանալ անկարելի է։ Քանի ոչ ոք բանական աննպատակ կը գործէ. և յիմար ըլլալու է մարդ եզրակացրել ուզելու համար թէ Արարչութեան մեծ գործը առանց նպատակի կամ վախճանի մը համար տեղի ունեցեր է. մինչդեռ քալ կը տեսնենք որ տիեզերքը՝ բաղդովի կոյր դիպուածէ յառաջ եկած և կամ անբան անիմաստ արարչական պատճառէ մը ՚ի գոյ եկած չէ. ըստ որում իւր ամենէն դուշնաքեայ մասանց մէջ խորհրդոյ և իմաստութեան անջնջելի կնիքը դրոշմուած կայ կը կենայ. ուրեմն չկրնար ըլլալ որ մարդս վախճանի մը համար ստեղծուած չըլլայ. զի և դարձեալ ակն յայտնի կ՚երեւնայ որ տիեզերաց մէջ ամենայն ինչ մէկմէկ նպատակի և վախճանի համար եղած են և կան. և չկայ՝ մէկ բան մըն ալ չկայ՝ որ աւելորդ ու մանր աննպատակ եղած է ըսուի. ուստի բնութեան մէջ է՛ն աննշան է՛ն անկատար իրաց իսկ մէկմէկ նպատակի համար ստեղծուած ըլլալը քալ տեսնելով հանդերձ՝ այս արարածոց ամենէն կատարեալին՝ անմահ ոգւով օժտեալ մարդուն համար միայն նպատակի և վախճանի մը համար ստեղծուած չկ-

ըսելը՝ առողջ մտաց ծնունդ չկրնար ըլլալ։ Եւ որովհետեւ բուն իսկ Արարիչը կ՚ըսէ թէ Մարդը յաւիտենական կենաց վախճանի համար ստեղծած է, բնա՛ւ բանաւոր պատճառ մը չունինք թերեւսաւատել կրնալու համար մեռելոց յարութեան վարդապետութեան վրայ, որ մարդոյն յաւիտենականութեան ու վախճանին համար է. և ո՛չ իսկ բնական պատճառ ունինք զայս ուրանալ կրնալու։ Բնութեան մէջ մարմնոց յար վերածնութիւնը՝ մարմնոց յարութեան երեւելութիւնն է։

Իսկ մարմնոց ՚ի մանր մասնկուն լուծուած, եւս և այլ և այլ մարմնոց զանգուածոց մէջ խառնուած ըլլալը արգելք կամ դժուարութիւն մը չէ Արարչին՝ զանոնք գտնուած տեղերնուն ՚ի մի մարմին ժողվելու և վերակազմելու՝ ինչպէս որ ՚ի սկզբան կերտած կազմած էր զանոնք. զի և մասնկունք խառնեալք ընդ այլ և այլ մարմինս՝ ո՛չ ըստ բաղդին անոնց էութիւնը կը կազմեն, այլ իւրք վիճակութեամբ՝ մէկ ուրիշ լուծեալ մասնկի մը տեղը կը լեցընեն ուրիշ մարմնոյ մը մէջ՝ վայրիկ մը, երբ նոյն լուծեալ մասնիկն ալ ուրիշի մը՝ կամ նոյն իսկ լուծելոյն տեղը կը լեցընէ երբեմն՝ փոխարէն. և այսպէս՝ բիւրիցս փոփոխութեամբ՝ նոյնչափ մասնկունք այնչափ մարմնոց մէջ շրջելով՝ բնաւ մէկ մարմնոյ մը մասնկանց միոյն քանակը չեն եղծաներ. և քանի որ անեղծ կը մնան այն մասնկունք, դիւրաւ ալ կը ժողովուին Արարչին հրամանաւ ՚ի նոյն նախատիպ մարմինս ՚ի յարութեան մարմնոց։ — Օրինակ իմն. նարինջներէ հինուած քանի մը բուրգերու բոլոր նարինջները՝ կրնամք այն ամեն բուրգերուն մէջ իրարու հետ փոխանակելով շարունակ շրջեցընել՝ առանց բնաւ բուրգերուն ձեւերն ապրելու, և ուզած ատենիս դարձեալ՝ իւրաքանչիւր նարինջները կրնամք վերստին իրենց առջի տեղը դարձընել՝ ի-

թենց առաջին անգամ կազմած նախագաղափար բուրգը վերահաղորդելու համար։ Ապա ոչինչ ընդդէմ բանի է մեռելոց յարութեան վարդապետութիւնը, զոր բազուկք ՚ի հերեսիարխայց և անհաւատք կ՚ուրանան։

Ս. Գիրքը շատ յայտնի կը վարդապետէ մատր վրայ, և գրեթէ ամեն էջերուն մէջ, յորոց միայն Արդեն Պօղոսի առ Կորնթացիս գրած մէկ երկար հատուածը հոս կը քաղեմք, որ ընդդէմ Սադուկեցւոց խօսելով (որք չեղեալ ՚ի հայրենի հաւատոց՝ հոգւոց անմահութեան հետ մարմնոց յարութիւնն ալ կ՚ուրանային,) ամեն առարկութեանց ալ լուծին կը պատասխանէ։ «Ապա եթէ Քրիստոս քարոզի թէ ՚ի մեռելոց յարուցեալ է, զիա՞րդ ասեն ոմանք ՚ի ձէնջ՝ եթէ յարութիւն մեռելոց չկայ. եթէ յարութիւն մեռելոց չկայ, ապա և Քրիստոս չէ յարուցեալ։ . . . Այլ արդ՝ Քրիստոս յարուցեալ է ՚ի մեռելոց, առաջին պտուղն եղեցելոց. քանզի մարդով եղեւ մահ, և մարդով յարութիւն մեռելոց. որպէս Ադամաւն ամենեքեան կմեռանին, նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքեան կենդանասցին, իւրաքանչիւր յիւրում կարգի. նախ՝ Քրիստոս, և ապա Քրիստոսեանք ՚ի գալստեան նորա, և ապա կատարած . . . Ապա թէ ոչ՝ . . . ընդէ՞ր և մեք ճգնիմք յամենայն ժամ և հանապազ մեռանիմք. ՚ի պարծանս ձեր երդնում եղբարք, զոր ունիմ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր։ Եթէ վասն մարդոյ ՚ի գազանանարտի ելեալ էի Եփեսոս, զի՞նչ օգուտ էր ինձ. եթէ մեռեալք ոչ յառնեն. կերիցուք արբցուք քանզի վաղիւ մեռանիմք։ . . . Այլ ասիցէ՞ ոք, զիա՞րդ յառնեն մեռեալք, կամ որո՞վ մարմնով գայեն։ Անմի՛տ, դու զոր սերմանեան; ոչ կենդանանայ՝ եթէ ոչ մեռանիցի. և զոր սերմանեան, ոչ զնոյն մարմին որ ծնանելոցն իցէ՝ սերմանեան,

այլ հատ միրկ. եթէ ցորենոյ իցէ, և եթէ այլոց սերմանաց. և Աստուած տայ նմա մարմին՝ որպէս և կամի. և իւրաքանչիւր սերմանացն զիւր մարմին. . . ։ Նոյնպէս և յարութիւն մեռելոց, սերմանի ապականութեամբ՝ և յառնէ առանց ապականութեան. սերմանի անարգութեամբ՝ և յառնէ փառօք։ սերմանի տկարութեամբ՝ և յառնէ զօրութեամբ. սերմանի մարմին հնչաւոր՝ և յառնէ մարմին հոգեւոր. եթէ գոյ մարմին հնչաւոր, գոյ և հոգեւոր. ։ ։ Ամենեքեան ննջեսցուք, այլ ոչ եթէ ամենեքեան. նորոգեսցուք յանկարծակի յաղագս թօթափելոյ ՚ի փող յետին. քանզի փող հարկանի, և մեռեալք յարիցեն առանց ապականութեան, և մեք նորոգեսցուք։ Զի պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապականութիւն, մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն. . . ։»
(Ա. Կոր. ԺԵ՝ 8՝ եւս Մ-որ. ԻԲ. 31՝ Ղ-ի. Ի. 38՝ Ց-ՂՅ. ԺԱ. 24՝ Ա. Թես. Դ. 12—17՝ Ց-ՂՅ. ԺԲ. 25՝ Ս-ղմ. եւ ։)

Այնչափ բնական է այս վարդապետութիւնս, և նախնեաց մէջ յամենայն դար՝ այնպէս խորհրդատու հաստատութիւն ունէր, որ ՚ի սկզբանէ և այսր եղան այնչափ անշահ աւազիրնի մարդիկներ; եւս և մարտիրոսներ; խոստովանողներ; որք ՚ի կենցաղումս ամեն մահացուցմունս անձամբ անձին յանձն առնելէն զատ, ամեն չարալլուկ տանջանաց և մահուանց ալ տարին. որք յետին յիմարներ սիրտ ըլլային մահուան դիմելոցին՝ եթէ հաստատուն յոյս և հաստահիմն պատճառներ չունենային հոգւոց անմահութեան և մարմնոց յարութեան։ — Վարդապետք Ազգին և Եկեղեցւոյ յաղթանուահիին համար ՚ի մարտ ՚ի մահ դիմելով՝ ասկից կը պօռային. «Քաջութեամբ միայն մեռցուք. զանուն և զոգիս և եթ ժառանգեսցուք; վի կենդանի իցէ ՚ի մեզ Քրիստոս.

որուամ դիւրին է միւսանգամ նորոգել զմեզ ի հողոյ և զամենայն գյառաչագոյն պնդեցեալսն, և հաստուցանել ըստ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց» (եբէնէ· ակղնաքի գ։) «Ա՛յ սէգ հպարտ և ամբարտաւան, կը գոչէ որդին Շամուէնայ իւր դահճին՝ անօրինին Ագաղայ, դու զմեզ յայոց կենաց աշխարհիս կարճել հաստատես. իսկ այն որ աշխարհաց թագաւորն է՝ Թէպէտ և մեռանիմք մեք վասն օրինացն, ի կեանսն յաւիտենից ի միւսանգամ ծնընդեանն ժամանակի՝ կենաց ի կեանս դարձուցանէ . . . . Մեզ լա՛ւ է մի մոխիմք առաի ի մարդկանէ, և յուսոյ ակն ունիմք միւսանգամ ծննդեանն յարութեան մեռելոց, քան քեզ ի կենդանեսս» (Բ· Մ–Ի· է· 9· 14։)

Ա՛ս այս կարի քաջ ապացոյցք են ի հնոց հեթանոսաց Հնդկաց ճգնութիւնքն և Եգիպտական մումիայն, և ամենայն ազգաց հնոց և նորոց՝ մեռելոց մարմնոյ տարած խնամքները, անոյշ իւղերով և կնդրուկներով զանոնք խնկել զիւսելը, յուղարկաւորելը պօմիւք և արարողութեամբք, և անոնց ոսկերահաց տուած մեծ պգուշութիւնքն ու զգուշութիւնը, անոնց անուանց կնքուած երդումները, և անոնց յիշատակաց համար հոգացուած հոգւոց հացերը, խնճոյքներն ու պատարագները։ Իրաց առեալ ցուներն ու Հոռոմոց, որք մարմնոց յարութեան մեկին դաւանութիւն չունէնալումնին մէկտեղ՝ հոգւոց անմահութիւնը իրր անտարակուսելի՝ ամեն դարու մէջ պայծառ վարդապետութեամբ ուսուցին։

Ա՛յս մասին ուրիշ կարեւոր դիտելիքները հետեւեալ հնագիտական քաղուածին մէջ կը գտնուին։

«Քրիստոնեայք վկայից եռեւէն կ՚երթային մինչև հրապարակները և տանջանաց տեղերը, և այն տեղուանք ուր սպանելու կը տանէին զանոնք . . . . Բնա՛ւ ամենեւին չէին վախնար վկայից մարմնոց

երբ անոնք կը տանջուէին, և կոտաւոք և սպնգ օք անոնց վէրքերուն հոսած արիւնը ժողվելու մէջ առնելու, զորս յետոյ անոնց տապանները մէջ կը դնէին . . . . Մեծ ջանք կ՚ընէին ժողվելու անոնց մարմինները և անոնց մարմնոց մնացուածները. վասն զի շատ անգամ անոնց միայն ոսկորն ու մոխիրը կը մնար, ինչպէս երբոր կրակը ձգուէին կամ գազանաց առջեւ, յորմէ սովորութիւն եղաւ հեթանոսաց կոչել անոնց մարմինները։ (վ֊յ֊ք· Հ֊վ֊ք· ի փեդր· է։ վ֊յ֊ք· Ս· Տ֊ր֊ք· Ե֊ր֊ց ընդ նմա։) Ստակ չէին խնայեր անոնց մարմինները դահճաց ձեռքէն առնելու և պատուով գերեզմանի մէջ ամփոփելու համար, Թէպէտ և անով շատերը մահու կը մատնուէին. քիչ մարդիկ ալ չհնահատակուեցան անոր համար՝ որ վկայից մարմինները կը հարգուէին, խնամք կը տանէին անոնց անկենդան մարմնոց որ չանարգուին, անոնց ոսկորները կը փնտռէին և զանոնք կը թաղէին . . .

«Հաւատացելոց այն նշխարաց համար ունեցած խնամքները ալ աւելի դրդիռ կու տային հեթանոսաց սպանեալ վկայից մարմինները ցրուելու. որով կը կարծէին Թէ անոնց յարութեան յոյսը կը լմնար, ալ չէին կրնար անոնք յառնել. «Պարապ տեղը կը յուսաք՝ կ՚ըսէին, որ մարմիններնիդ կենդան մինչեւ այն օրը յորում զայն վերստին դգենուլ կը կարծէք, յուսալով որ ձեր խօսքերով զառանցեալ կանայք ունիք զնուաճ կը պահեն զանոնք մեծագին կերպասներու մէջ. հի՛մայ կը տեսնէք». և զայս ըսելով զանոնք գազանաց բերանը կը նետէին. տեսերասարտիկներուն կամ այլոց անօրինաց դիտմանց կը խառնէին. մեծամեծ քարեր կապելով անոնց ջուրը կը վռթէին. կ՚այրէին զանոնք և անոնց տաք մոխիրը հովին կու տային։ Բայց անոնց բոլոր ճիգերնին պարապն ելլելով այն սրբոց նշխարաց չատերը ան-

կոլուստ պահուեցան հաւատացեալց ջերմեռանդութեամբն կամ սքանչելիօք իսկ՝ զոր անանկ առեն կը գործէր Աստուած ։ կը պատուէին այն շիրիմները որոց մէջ կը դրուէին անոնց մարմինները . շատ տուրքեր բառնուեցան նահատակուեցան՝ երբ հակառակ կ'ընէին կամ կ'աղօթէին վկայից տապաններուն քով կամ անոնց տօները կը կատարէին . քանդի ինչպէս կը վկայէ Տերտուղիանոս և Ս. Ափրէմեանոս՝ ամեն տարի կը տօնախմբէին անոնց յիշատակը . վասն որոյ և խնամօք կը նշանակէին անոնց կատարման օրը ։ (Կիպր. Ընդ. Հէ) . . . . . .

«Իրենց աղքատին կենաց անհամեմատ՝ մեծամեծ ծախքեր կ'ընէին մեռելաթաղի , մեծ հոգ տանելով ննջեցելոց յուղարկաւորութեան համար , խիստ յայտնի վկայութիւն տալու համար վասն յարութեան մեռելոց ունեցած հաւատքնուն ։ Ցունաց կամ Հռոմոց պէս մեռելներնին չէին այրեր . առելի էին իրենց դարձեալ եգիպտացւոց աւելորդ խնամքն ու անապաշտութիւնը , որք դիակներնին զմռսելով տուներնին 'ի տեսիլ ամենեցուն կը պահէին մահիճներու վրայ ։ Այս սովորութեան դէմ մաքառեցաւ մեծն Աստուն , որով կը վարուէին դեռ եւս եգիպտացիք իւր օրերը ։ (Պոդմ. Ս. Անդրէ. Լա։)

«Քրիստոնեայք մեռելներնին հողին տակ կը թաղէին Հրէից պէս . բայց նախ կը լուային և կը զմռսէին զանոնք . և ինչպէս Տերտուղիանոս կ'ըսէ , հեթանոսք այնչափ խունկ իրենց պոհերնուն չէին գործածէր ո՛րչափ քրիստոնեայք մեռելոց համար կը գործածէին ։ (Պոդոթ. Ծր։ Պ-բան. յոճ 34։) Ապա բարակ կտաւներով և կերպասներով պատելով , երբեմն ալ ծանրագին պատմուճաններ ձգելով անոնց վրայ՝ երեք օր անթաղ կը պահէին , մեծ խնամօք հսկելով անոնց քով ազօթիւք ։ Երեք օրէն ետքը կը յուղարկաւորէին զանոնք 'ի գերեզման շատ մը

մոմերով և ջահերով , սաղմոսք և տաղիք գԱստուած օրհնելով և մեռելոց յարութեան հաւատքնին դաւանելով ։ (Կոն. Ա-օթ. Զ. Լ։ Պր-քնդ։) Աղօթք կ'ընէին անոնց համար . պատարագներ կ'ընէին , և ընթրիքներ կու տային աղքատաց՝ զոր Ագապ կը կոչէին(1) , ուրիշ ողորմութիւններ ալ ընելով ։ Տարին լմննալուն նորէն անոնց յիշատակը կը կատարէին , զոր նոյնպէս տարուէ տարի կը շարունակէին , և մինչեղեռնաւորապէս անոնց յիշատակութիւնը կը կատարէին Ս. պատարագին մէջ ։ . . . Անոնց մարմինները կոնակի վրայ կը պառկեցընէին՝ երեսնին արեւելք դարձուցած ։ (Տերտ-ղ. յղ. պ-կ. Գ։ Որ-թ. Ի ց-վբ. ձռ. Գ։ Կիպր. Ընդ. կԶ։) . . . . . Մեծ եռանդով կը փութայէին ամենքն ալ վկայից ոսկերաց մօտ թաղուելու , (Կոն. Ա-օթ. Զ. Գվ. Քեղքի.) և անոր համար ետքէն շատցան դամբարանները Եկեղեցեաց մէջ (2) . թէպէտ և մեռելները քաղաքներէն դուրս թաղելու սովորութիւնը խիստ երկար ատեն տեւեց ։ Որոց նշխարաց յարգութիւնը , եւս առաւել մեռելոց յարութեան հաւատքը՝ վերցուց 'ի քրիստոնէից այն երկիւղը որով ո՛չ միայն հեթանոսք՝ այլ նաեւ Իսրայէլացիք կ'երկնչէին մեռելոց մարմիններէն և գերեզմաններէն» ։ (Ճէրոմ. 'ի Հնոցաղ Քրիստ. Մատն Գ. ցօղ. ժԹ և ԻԸ։)

---

(1) Ինչպես 'ի մէջ Մատաղ կը կոչէին , որ կը տեւէ գեռ եւս , թէ'եւ ո՛չ յառաջութեամբ ըստ առաջնոցն ։

(2) Ի Հայս եւս կից էին 'ի սկզբանէ հետէ գերեզմանք Եկեղեցեաց , և ժամերգութեան առեն հոգեհանգստեան պաշտամունք հոն կը կատարուէին . ինչպես որ Տօնացոյցը կ'ակնարկէ ա՛ւ Իւտէն 'ի Էրէմտոս եւս ըսելով . վերջին ժամանակները ոգեպահիկ օրինաց հետացան գերեզմանք Եկեղեցեաց քակեցին ։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԴԱՏԱՍՏԱՆ ՅԱԽԻՏԵՆԻՑ

ԵՒ

ՎԵՐՋԻՆ՝ՎԻՃԱԿ ԵՐԱՆԵԼԵԱՑ ԵՒ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՑ

Հաստատիմն վարդապետութիւն է Ս. Գրոց, թէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս նովին մարմնովն որով վերացաւ յերկինս՝ դարձեալ պիտի գայ ի վախճան աշխարհիս ի յարութիւն մեռելոց, ամեն դարու մէջ կեցեալ բովանդակ մարդկային ազգը տիեզերական ատենիւ դատելով՝ իւրաքանչիւրոց վարձք և պատիժ ըստ գործոցն հատուցանելու համար: «Այս Յիսուս՝ որ վերացաւն ի մէնջ յերկինս, այնպէս եկեսցէ զոր օրինակ տեսիք զդա երթալ յերկինս», (Գոր. Ա. 11.) «հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց». (Յայտ. ԻԲ. 12.) «Զի դալոց է որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք, և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր»: (Մատթ. Ժ. 27.) Արդարները երկնից արքայութեան մէջ երանական Աստուածտեսութեամբ պիտի վարձատրէ, որք այնուհետեւ մինչեւ ի յաւիտեան իրրեւ հրեշտակները միշտ իսկ զԱստուած պիտի վայելեն ընդ հրեշտակս անպատում երանութեամբ. և մեղաւորները դժոխոց պիտի դատապարտէ, ուր սոսկալի տանջանօք պիտի տագնապին անվախճան ժամանակաւ ընդ յանցուցեալ հրեշտակս: «Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրովք՝ և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց. և ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք, և մեկնեսցէ զնոսա ի միմեանց, որպէս հովիւ ի մեկնէ

զոչիս յայծեաց. և կացուսցէ զոչիսն ընդ աջմէ իւրմէ և զայծիսն ի ձախմէ: Յայնժամ ասասցէ թագաւորն ցայնոսիկ՝ որք ընդ աջմէն իցեն. Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աշխարհի: . . . Յայնժամ ասասցէ ցայնոսիկ՝ որք ընդ ահեկէն իցեն. երթա՛յք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա: . . . Եւ երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս, և արդարքն ի կեանսն յաւիտենականս»: (Մատթ. ԻԵ. 32—46. ևև ևև ևև)

Քրիստոսի այս երկրորդ գալստեան ատենը յայտնի չէ. Աստուծոյ միայն գիտելի է ըստ ինքը. (Մարկ. ԺԳ. 32. Գործ. Ա. 7.) Այլ ի՛նչպէս էր նոյն ատենը յառաջ քան զքրհեղեղն, նոյնպէս՝ յորոնքիսն ևս, ասպենս խոհեմ՝ տեսնէ զնշանս ըստ ընդունելոյ անոր այցելութեան ակնկալութիւն չունեցած ատեններս, (Ղուկ. ԺԷ. 26—30. Ա. Կոր. ԺԵ. 32.) «Յանկարծակի՝ յաչան թօթափել» տեղի պիտի ունենայ. (Ա. Կոր. ԺԵ. 52.) և «Որպէս ատուրքն Նոյի, նոյնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ. զի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան զքրհեղեղն, ուտէին և ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին, մինչեւ յօրն յորում եմուտ Նոյ ի տապանն, և ո՛չ գիտացին՝ մինչեւ եկն քրհեղեղն և երարձ զամենեսեան. այնպէս եղիցի և գալուստն Որդւոյ մարդոյ»: (Մատթ. ԻԴ. 38—39.)

Թէ ի՛նչ վիճակ և ի՛նչ վարձք և հատուցումնք պիտի ունենան արդարք և մեղաւորք, երանելիք և դատապարտեալք, ասոնց վրայ որոշ նկարագրութիւն չեն ըներ Ս. Գիրք, ընդհակառակն մարդահնար սուտ կրօնից գրեանց, որք լիուլի ասոնց վրայ խօսելու կը նկրտին, և երանելեաց վարձք կը խառնանան մարդկային հեշտութեանց և մեղսալից

կէթ խոկ մովին յոգուդր, և պատրաստելոց կ'լինիցի
պատձառն մատղկացին խոչդ ուխտեանն վիճակ. Հիմակ
հնարել կրցած պատմիձներդ, և այն՝ շատերուն հա-
մար ապիսանելիկոց կերպով, ինչպէս են Քաւա-
րանի պատմիձք։ — Բայց Ս. Գիրք՝ անվերապրելի
կը դնեն վարձքն ալ պատմիձն ալ, որ երիկ ատենկ
չէլլար՝ տուա կ'էլլար, դի գերաշխարհիկ բանիկ ըս-
լալով անոնք՝ մատղկացին բարեաց ոչ քաջալերել
անհնար կ'էլլար, և եթէ նկատող ըլլէր ալ՝ անխ-
տանալի կ'էլլար մեզ։ Այսպէս Ս Գիրք տառեպա-
ծ ձևով իրեն խօսիլ են ի'նչ որ լսողք են հրա-
նգեալոց և պատրաստելոց վիճակիդ վրայ։

«Զոր ակն ո՛չ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի՛ սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեացդ իւրոց»։ (Ա. Կոր. Բ. 9։) Այսպէս կը խօսին Ս. Գիրք այդ պարագայիդ համար, որպ զի նկատողդ ալ պատրաստ ըլլայ։ — Ա. Սուրբ դէմ յանդիման պիտի տեսնեն Աստուծոյ երեսը, Քրիստոսի հետ պիտի ըլլան և յաւիտեան պիտի քաղաքացին ընդ երկն և ի նմանէ։ (Յովհ. ԺԷ. 24. Ե. 10։ Ց-ՂՀ. ԺԴ. 7։ ԺԱ. 22. եւն.) Ի. Գաւազական հրամայական սեմ տանջանքս վրայ պիտի նային Քրիստոսի հետ՝ բոլոր ատենդ կատարեալ հաստատ։ (Ղ-Ի. ԻԸ. 30։ Ա. Կոր. Զ. 2։) Գ. Երկնից մէջ անհամատեմատ ժառանգութիւն պիտի ընդունին Աստուծմէ. ժառանգակից պիտի ըլլան Քրիստոսի, անոր անեռական փառքերովը պիտի պսակուին, և միշտ ջնջնաւորապէս անչէջանելի լոյսի մէջ պիտի բնակին։ (Ց-Ի. Ա. 12։ Հ-ր. Ը. 17։ Ա. Պետ. Ա. 4. եւն.) Գ. Երկնային նշուլակի մէջ անորոշաւոր ուրախութիւնեան մի անհնարական կերպ պիտի վայելեն և առատութիւն պիտի ըլլան ի խորհուրդս աստուածութեան։ (Գ-ն. ԺԲ. 3։ ԵՓես. ԺԱ. 10։) և. Քրիստոսի մարմնոյն անուան փառաւորելոյ անեռական և հոգեւոր մար-

մին պղծելով Քրիստոսի նմանեալ հրեշտակներուս պէս
պիտի ըլլան։ (Ա. Ց-Ը. Գ. 2։ Մ-Թ. ԻԲ. 30։ Ա.
Կոր. Ժ-Բ. 42—44։ Փիլիպ. Գ. 21։) և. Ջ. Յիսուսիդ
Յառնութենէն անճառ և անպատում փառաց մեծ
ծանութիւնը՝ պիտի ունենան յաւիտենական Քրիստոսի
Աստուծոյ և Հայրդ չին յաւիտեան։ (Մ-Թ. ԻԵ. 21։
Բ. Կոր. Դ. 16—18։ Ս-Ը. 1Ջ. 11 եւն.)

Իսկ մեզ աստուածային վիճակիդ որ պիտի տեղեկանան զայրը աշխարհին մէջ՝ այսպէս կը հաստատեն Գիրք։ — Ա. Աշակերտութեան գրիչներն ի տես ունին Աստուծոյ, որ է'ն գաղտագոյնն է այն ոգեղենից կրնկիր մեզ բոլոր ազէ արձերէն, և անվճռական տանջանք հոգւով և մարմնով ի'ր գործոց։ (Մ-Թ. Ե. 20։ ԻԵ. 46. եւն.) Բ. կոչ մեզ Աստուծոյ անհայր են բարեհաճեան տակ, և մեռանիլ երկրորդ յաւիտենական տիրապետութիւն։ (Հ-ր. Բ. 8—9։ Ջ. 16. 21. 23։) Գ. բնական արտաքին խաւարը, որ յաւիտեան պիտի լան և ոդրան, և անհնար արդարիդ պիտի տանջուին։ (Մ-Թ. ԻԵ. 30։ Մ-Ի. Ը. 12։) Դ. Անհնարին 'ի բոլորովեալ հաւր անչէջ գեհենին և անդ տանջուիլ յաւիտեան յաւիտենից։ (Մ-Թ. Գ. 12։ Ց-Թ. ԺԴ. 10։) Ե. Բնականիդ բաժակ չար գաղանին և դևացն դժոխոց խառարբ աղջամուղջին մէջ, և յաւիտեան տանջուիլ առանց երբէք հանգիստ ունենալու։ (Մ-Թ. ԻԵ. 41։ Ց-Թ. Ի. 10։)

Քրիստոսի երկրորդ գալստեան յաւիտենից գատաստանի և յաւիտենական կենաց գործակցութիւնը այսպէս կը հաստատեն Ավետարանիչներ։ «Գալոց է նոքին մարգարէն և փառաւք Հօր գատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաս աստուածք և . . . 'ի յարութիւնն ձեռնդոյ, 'ի գատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարութիւն երկնից և 'ի կենաւն յաւիտենականս։ — Ինչպէս կ'երեւայ այս գատաստանեան

ձեւէն, Քրիստոսի երկրորդ գալստեան աւետիսը ընդունողներուն մեծ մասը չափազանց ընդարձակ գաղափարներ ունէին Աստուծոյ Թագաւորութեան մասին, որոնց համեմատ չէին կրնար հասկնալ Տէրոջ մահուան եւ յարութեան անհրաժեշտութիւնը։ Ասոնք կը սպասէին, որ Տէրը իսկոյն հաստատէ Իսրայէլի համար իր երկնաւոր Թագաւորութիւնը։ Ուստի Տէրոջ մահուան ատեն, երբ տեսան, որ Անիկա ձերբակալուեցաւ եւ խաչուեցաւ, ամբողջովին յուսահատեցան, եւ Տէրոջ յարութենէն յետոյ միայն հաւատացին, որ Անիկա Աստուծոյ Որդին է։ Ասոնք Տէրոջ մահուան ատեն ամբողջովին կորսնցուցին իրենց հաւատքը։ Ասոնց համար Տէրոջ մահը ամենամեծ փորձութիւնն էր

Յորելքն եթէ ձանձնէ դասել պետ է ըսելը : — Քրիստոսի վրացած Տան կուսանաց , Յորենի հետ խառն բուսած որոմանց , Ուռկանի մէջ խառն ժողովուած բարի բարի և խոտան ձկանց , Քանքարը չհնեցընող և քանքարաթագոյց Ծառայից ևս առակները (Մ—ր· ժԳ· ԻԵ·) քալ կը հաստատեն ասիկայ , որ վարձքն ու հատուցումը վերջին դատաստանին պիտի հրամայուի , և ո՛չ առաջ : Պօղոս Առաքեալ հաւատովք և արդուքեամբք վախճանեալ նահապետներն չատերը թուելէն ետքը անոնց համար կ՚ըսէ «Զի՞ եւս ընդ՞ալն ջահիլն , Աստուծոյ վասն մեր լաւագոյն հասարեալ՝ չէ մ՚առանց մեզ կատարեցան » : (Եբր· ԺԱ· 40·) Ո՞ւր թողուլք այն ալ որ յանցուցեալ չար հրեշտակներուն համար օրք մարմինն չունենալով և առանց մարմնոյ պատիժնին կրելու դատապարտեալ ըլլալով հանդերձ՝ անոնց անգամ պատիժը հասարակաց յարութեան դատաստանի օրուան պահուած է կ՚ըսէ Գիրքը · « Ի հրեշտականն յանցուցեալս Աստուած ո՛չ խնայեաց , այլ խաւարին կապանօք արկեալ ի տարտարոսն՝ եւ պահել ի դատաստան » : (Բ· Պետ· Բ· 4· Յուդ· 6·) Անոնց ամենուն վրայ կը յաւելու Գեարտա · « Գիտէ Տէր զԱստուածապաշտս փրկել ի փորձութենէ , և զանօրէնս պահել ի դատաստան առաքն դատապարտիլ . . . : Այժմ երկինք և երկիր նովին բանիւ գանձեալ են · հըր պահելէ յօդն դատաստանի , և կորստեան մարդկան . . . : Զի ի սոյն իսկ և ժամուցդ խոստացեալ է , զի դատեսցի լուսս մարդկան մարմնով » : (Յ· Պետ· Բ· 9· Գ· 7· Ա· Պետ· Դ· 6·)

Այսպէս հաւատացին և այսպէս ուսուցին նախնի Ս· Հարք , յորոց յանուանէ կը յիշուին Ս· Թէոփիլոս Անտիոքացի , Ս· Հայր՝ն Եկեղն , Նովատիանոս , Վիկտորինոս , Լակտանտիոս , Սեւերոս , Սալպիկիոս եւլ · ի մերոց եւս Ս· Ղուսաւորիչ , Շնորհալի , Յակոբ Ջղօն և այլք բազումք , որք կը վարդապետեն իբ՛ վարձքն ու հատուցմունքը հաստատուած յարութեան առեն՝ յաւիտենից զատաստանէն ետքը պիտի ըլլայ . և ոչիք վախճանելոց՝ յօթեւանս ինչ կամ ՚ի կացանս՝ զատարեն սպասեն հասարակաց յարութեան . ո՛չ խոտն ՚ի խոտեն արդարք և մեղաւորք ՚ի միում կայանի զատարելով . և ո՛չ իրենց վարձուց կամ հատուցմանց անդէտ անտեղեակ մնելով , այլ յանդատման խորոց ՚ի մարմնոյն իբրև երեւմամբ տեսանելով պպատրաստեալ վարձան և դհատուցմունեան . և ոչիք արդարոց երանելի յաւետ ուրախութեամբ՝ որպէս և մեղաւորաց ահաւոր անկնելոյնեանց պատիժն սոսկացեալք՝ մնան հասարակաց յարութեան : (Ս· Գ· Լսուսաւորչէ ՚ի յաճախ· եր· 172· 172· 192· 202—205 եւլ ·) « (Ոչիք արդարոց՝ կ՚ըսէ Ս· Գրիգոր·) ո՛ւր և են , ՚ի նորա տուրբ սիրոյն ՚ի գրի կան և ՚ի նորա կենդանի խնամեն վայելեն . նոյնպէս և մարմինքն ՚ի նորա գիրն անկեալ պահին ՚ի խնամոցն . . . : Ա՛յլ կայանք են նոցա որք արհամարհեցին զօրէնս նորա , . . . որք ծառանգելոց են զարտաքին խաւարն : . . . Ընդունին զհոգիսն յօթեւանս ըստ իւրաքանչիւր արժանաւորութեանն , բաժանեալ և որոշեալ զհանգիստն և զտեղի ըստ տեսչութեանն Աստուծոյ : . . . Ա՛ժենայն սպասնային յանցուցորաց՝ յորժ ՚ի արտմութեան ունին զհոգիս մեղաւորաց ՚ի կայանան , որ լսոն իւրաքանչիւր մեղացն բաժանեալ և որոշեալ ՚ի տմարական տեղիան , որպէս երեւմամբ տեսանեն իմանալիքն զհատուցումն արդար դատաստանին , զանչէք հուրն և զխաւարն արտաքին զայլ աչացն և զկրճել ատամանցն : Ա՛յնոքիք ահին արտմեալք և տխրեալք կան հոգիք մեղաւորացն զրնչ՚ ՚ի հասարակաց յարութիւն ՚ի Քրիստոս : . . . Սոյնպէս և մեղաւորաց հոգիքն են , որոց սպասնացաւ մահ յաղագս յանցանացն

որպէս 'ի թագաւորացն մահապարտք. որ միշտ կան և մնան իւրեանց տանջանացն և մահուն բազում տրտմութեամբ և դողութեամբ մինչեւ 'ի ժամն յորում առնուն զհատուցումն ըստ արժանեացն զանհամ տանջանացն զպատիժն և զպատուհասն, որ մարմնոյն և հոգւոյն ընդունին: Այլ զոր Աբաթեալն ասէ, և մեք զնոյնն ասեմք. զի Էրբոէամ-ղէոր ոչ ղէոր վրայ- ոտճ 'ի հատրակոց յարութիւնն: . . . Հոգի սուրբ բարի աւետեաց յուսոյն զուարճանայ քնդ հրեշտակս 'ի փառս ամենակալին. իբրեւ արդէն առեալ զառհաւատչեայ երանութիւնն երկնից արքայութեանն եւ եւ »: (Ց-ծ-Խ. 169. 171. 172. 177:)

Ոսկեբերան սուղ բանիւք կ'ըսէ. «Ցայտ իսկ է, թէ յետ ասոյ մեկնելոյն 'ի փեղէ ոչխ երթեալ դադարէն ոչխն, և չեն իշխան միւսանգամ այսրէն գառնալոյ. այլ ահոյին առաքն կան և ոչառին»: ('ի Դին. Մատթ. Հատ. բ. ճԻ. Գ. եր. 412:)

Ի Շարականս կ'երգեմք. «կատար մատուցին զանձինս իւրեանց քեզ պատարագ արեամբն իւրեանց. և ան առնին պսակ 'ի քէն Տէր: . . . Որ զդժոխս աւերեցեր և զդեւերեալսն փրկեցեր և զարգելեալսն վերածեր 'ի յոյս կենացն յաւիտենից . . . »: (կան. Մբաթէ. Դկ:) եւ եւ եւ:

Առաւօտեան ժամերգութեան վերջը 'ի տօնի Մարգարէից՝ Առաքելոց և Հայրապետաց «Որ ընտրեցեր» աղօթքին մէջ կ'ըսեմք. «Շնորհեա՛ մեզ Տէ՛ր ըստ օրինակի նոցա կեալ, և զվախճանն մեր կնքեա ուղղափառ խոստովանութեամբ 'ի ՅՈՅՍ կենացն յաւիտենից . . . »: (ժ-մ-ԹԷբ:)

Ներսէս Շնորհալին ալ եկեղեցւոյ մանկանց առնէն օր պրուցելու համար չինած աղօթքին մէջ այսպէս կը սովրեցընէ որ տղայք և մարդիկ աղօթեն. «Ո՛յս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ առեալ զոյս փառաց քոյ

'ի կոչման աւուրն. և հանգչիլ ՅՈՒՍՈՎ (1) ԲԱՐԵԱՑ յերեսաս արդարոց՝ ինչէս չէր ծեռի ֆլորեան էր»: ('ի Հատրվ Խոսովանիմ:)

Պատկանք և Բրոդեստանք Աւետարանական առակին Մեծատունն ու Ղազարոսը կը ցուցընեն մեզ, որոց համար առակը կ'ըսէ թէ՝ մեռանելնո'ւն պէս մեծատունը տանջանաց ենտնուեցաւ, և Ղազարոս Աբրահամու գոգը հանգեաւ: (Ղուկ. ԺԶ. 19—31:) Այլ այս առակ մըն է որուն նպատակն է ցուցընել յաւիտենական արդար հատուցումը, ու չէ թէ առանձնաւոր դատաստանի գոյութիւնը: Ղազարոսի համար ալ Աբրահամու գոգը հանգեաւ չըսէր, 'ի ֆոքն Աբրահամ կ'ըսէ, որ է ըսել հանգըստավայր մը, ուր և Աբրահամ հանգուցեալ էր. ուստի և Մեծատան տանջանաց տեղին ալ պէտք է իմանալը կեան ծրագրոց՝ որ հանգիստ ենչ չէ, որ տպտպ տանջանաց տոչխ անդիտութեամբ նեղութիւն հանգիստութեան ենչ մ'է: Այլ աւելին ըսեմք. առակին խօսքերուն և իմաստին թէ որ քիչ մը էեել միտ դնեմք՝ պատկան և բողոքական կարծեաց հակառակ՝ ուղղակի Ս. Լուսաւորչի աւանդած կեանի վարդապետութիւնը կը հաստատէ: Քանզի առակը կ'ըսէ թէ մեծատունն ալ Ղազարոս ալ մի'եւնոյն դիտիս ըսուած տեղն էին. մեծատունը դժոխքին մէջ աչուընները վերցուց՝ նոյն դիտիս մէջ հեռուն Աբրահամու գոգը նստած տեսաւ Ղազարոսը, միայն վիհով մը զատուած էր տեղերնին: Ուրեմն դիտիս ըսելով՝ առակը յաւիտենից տանջանավայրը

(1) Վիեննայի Վերապ. Մխիթարեանք 'ի նախնեաց առնդեալ ժամագրքերնին տպագրած առնններն այս «յուսով բարեացը» «լուսով բարեացն» փոխեր են՝ անտարակոյս աւանդապահ երկիւղածութեամբ, որպէս զի Ընորհալին իրենց ճշդութեանց գեմ գինուած չերեւայ: Բարեբաղդաբար Վիեննական Մխիթարեանք ուզած են զոյս իրենց ճամբովը

չգուշեներ, այլ՝ մեռելոց ոգւոց կայանը չարաց և բարեաց հատանգամայն առեալ։ Ըստ որում հինք՝ դժոխք ըսելով կ'իմանային աներեւոյթ աշխարհին մէջ տեղի մը, որ Շէօլ, Հադես ալ կ'ըսուէր. և կը համարէին թէ այն խորունկ և գետնին տակն է, ուր մարդոց հոգիները կ'երթան մարմիններնուն բաժնուելնուն պէս. ըստ դիցաբանութեան՝ Պլուտոնի իշխանութիւնն էր դժոխքը, յորում ոգւոց դատաստանը առնուելով՝ անպարտք եղիւսեան դաշտերը կը խրկուէին, և պարտաւորք՝ ի Տարտարոսն։ Թէ՛ Ս. գրոց և թէ՛ առաջին երեք դարուց հայրապետաց դրութեանց մէջ դժոխք բառը (Շէօլ կամ Հադես բառերու թարգմանութեանց իսկաւտով) յաւիտենից տանջանավայրը նշանակելու դործածուած չէ։ Ս. Գրոց մէջ՝ Թուոց. ԺԶ. 30. 33. Ցովբ Է. 9. Սաղմոս ՁԴ. 16. և Եսայի ԺԴ. 15 հատարներուն մէջ գործածուած դժոխք բառը բնագրին մէջ Շէօլ կամ Հադես դրուած է. Յամենի մէջ ալ ապանեալ դէպքերէն հոգիներուն համար ըսուած է թէ Հադեսը կ'երթան։ Ապա ուրեմն Ղազարոսի առակին մէջ յիշուած դժոխք բառն ալ ո՛չ թէ յաւիտենական տանջանաց տեղը նշանակելու դիտումով դործածուած է, այլ պարզ կեանք նշանակութեամբ, որ և միհով մը բաժանեալ կ'ըսուի արդոց կեանքերէն։ Հոգի ուրեմն և Դրախտոսի առակին միտքը այն չէ որ իմացվի թէ արդէն մեռեալք իրենց վարձքն ու հատուցմունքն առած են, այլ թէ՝ ոգիք արդար վիճակաւորութիւն պիտի ընդունին, Քանզի և դարձեալ արդէն բոլոր մարդկային ազգը ընդ դատապարտութեամբ էր, դեռ քաւութիւն եղած չէր Քրիստոսիս, երբ Քրիստոս այս առակը պրոցեց. ինչպէս կրնար Ղազարոս դատապարտութենէ ազատած և երկնից արքայութիւնը ժառանգած ըլլալ, մինչդեռ Քրիստոս խաչուած և

մեռած չէր. ուրեմն դժոխք և Քէհէնա անունները այս առակին մէջ արդոց և մեղաւորաց կեանքն կը նշանակեն։

Դարձեալ, Քրիստոսի՝ աջակողմեան աւազակին «Այսօր ընդ իս իցես ի դրախտին» խօսքը՝ (Ղուկ. ԻԳ. 43.) «Այսօր ինձի հետ արքայութիւնը պիտի ըլլաս» ըսել չէ՛, ինչպէս որ կ'ենթադրեն պապականք և բողոքողք։ Քրիստոս այն օրը արքայութիւն չգտաւ՛չ աւազակին հետ, ո՛չ ալ միւնակ, ինչպէս որ պապականն ալ բողոքականն ալ կը բռնադատուին խոստովանելու. «ի նմին աւուր հոգին Քրիստոսի բաժանեցաւ ի մարմնոյն, (կ'ըսէ Մխիթար Աբբայ), անբաժանելի Աստուածութեամբն և ի դժոխս առ ի ազատել զհոգիս արդոց, և ընդ հոգւոյն Քրիստոսի եղեւ նաեւ հոգի աւազակին։ . . . Բայց պիտելի է, դի թէ՛ հոգիք արդոց՝ որք ազատեցան և թէ՛ հոգի աւազակին՝ դեղեհանոցն էին անդ, ուր էր հոգին Քրիստոսի. իսկ հոգին Քրիստոսի՝ ի ժամէ աւանդման մինչեւ ի ժամն յարութեան էր ի Լիմպոն. ուրեմն նաեւ հոգիք արդոցն յայնս երիս աւուրս էին անդ»։ (ի Դին. Մոքթ. եր. 883—884։) — Բողոքականն ալ կ'ըսէ. «Քրիստոս երբ որ մեռաւ հոգին գնաց, և հոն կեցաւ իբր հոգին՝ ո՛րքան աւուն որ մարմինը գերեզմանին մէջ մնաց»։ (ի Բիւր. Աստուածաբ. Գր. Գ. յոդ. Ը. հատ. Ը։) Ապա ուրեմն Քրիստոս որ երդմամբ՝ «Ամէն ամէն ըսելով խոստացաւ աւազակին փրկութիւնը՝ «Այսօր ինձի հետ դրախտը պիտի ըլլաս» ըսելովը, ըսել ուզած չէղաւ թէ այսօր ինձի հետ արքայութեան ֆառւերը վայելելու պիտի երթաս, քանզի ինքն ալ այն օրը արքայութեան չգնաց. ո՛րչափ ատեն որ մարմինը գերեզմանին մէջ էր, հոգին ըստ պապականին՝ Լիմպոն էր, ըստ բողբոջականին՝ Ջաուէն էր, իսկ ըստ Ս. Գրոց և Եկեղեցւոյ՝ Քրիստոս

էր · (Ա· Պետ· Գ· 19·) աւազակն ալ այն օրը և հետեւեալ օրը Յիսուսի հետ ան նոյն բանտն էր · ուրեմն արքայութիւն չգնաց այն օրը աւազակը · ուրեմն դէպ ի ըսել Յիսուս՝ չէ թէ երկնից յաւիտենական երանավայրը կը խոստանար այն օրը աւազակը մտցընել, այլ մերկելոց ոգւոց կայանը, իբր դրախտին մերկութեան և արքայութեան երկնից՝ զոր կը խնդրէր նա ապագային համար, «Յիշե՛ա զիս Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քո» ըսելով · Քրիստոս արքայութեան երկնից նախադուռը՝ մերկելոց կայանը տարաւ այն օրը զաւազակն, և ո՛չ յարքայութիւնն երկնից, ապա ուրեմն ասիկայ ալ փաստ մը չէ՛ աւանձնական դատաստանի և վարձոց հատուցմանց յաւաջ քան գյարութիւնն մարմնոց ։

Վերջ տալու համար այս խնդրոյս՝ յաւաջ կը բերեմք մեր եկեղեցական կարգաւորութեանց ժամատաբութեանց մէջ մեռելոց ոգւոց համար շատ մը «յիշե՛ Տէր և -ղբրե՛» ներ պրուցելնիս, փո՛ւ ի քրյոնէն եաքի Ջճէնո՛ւիւն, Ա՛ղնդ և Ա՛տո՛ծ դէպ քարոզներուն մէջ «յիշե՛ գնոգիս ննջեցելոց մերոց և -յց -ը՛ ի քում պատեանդ» աղաղակելնիս, և Շարականաց մէջ շատ անգամ երգելնիս «Թագաւոր խաղաղութեան որ քաղցրութեամբ խրատես զքո զարարածս, յիշե՛ Տէր զհոգիս ննջեցելոցն ընդ սուրբս քո, և դասաւորեա ի յաջոյն կողմանն» ։ (կոն. հանգոյ։) Եթէ սրբոց ոգիք Աստուածատեսութեան երանութիւնը արդէն կը վայելեն, ինչ կը նշանակեն անոնց համար յիշե՛ Տէրները · տեսնուած բանին համար յիշէ կ'ըսուի՞. դէմ առ դէմ եթէ Աստուծոյ ներկայութիւնը կը վայելեն, ինչ կը նշանակեն անոնց համար աղաչել Աստուծոյ որ -յցե՛ն ընէ անոնց յերկրորդ գալուստն ։ — Ապա ուրեմն նախնիք եւս առանձնական դատաստան չէին

ուսուցանէր, ո՛չ ալ երկրորդ գալուստէն առաջ փոխարինութիւն ։

Այսու ամենայնիւ այս միջին կեանքը մտան հաւատոց չըլլալով՝ այս երկու կարծեաց ո՛րն ալ ընդունի ոք՝ հաւատոց մէջ մոլորած չըլլար · հերիք է որ ՚ի մտանց հաւատոյ դուռնի յաւիտենից կեանքը։ Այլ սլապը և իւր ժողովը յանդգնութիւն մ՛ալ առնելով վրան՝ կը նզովէ՝ այս մտին իրեն հետ չեղողները, և յայտնի է որ Ս· Գրոց Հոգիաշունչ վարդապետութիւնն ալ մէկտեղ կը նզովէ ։ Յայտնի իսկ է որ Ս· Գրքին վարդապետութիւնը նզովողը քանի՛ցս նզովեալ կ'ըլլայ · և Քրիստոնէից դէմ վայրապար և յանիրաւի արձակուած նզովքները՝ գլուխն ՚ի վեր ուղղահայեաց նետուած քարերու պէս արձակողին գլխուն կը դառնան կ'իյնան երիցս ուժգնութեամբ ։ Արժան է Բիւրմիլիանոս Եպիսկոպոսին՝ Հռովմայ Ստեփաննոս պապին զրուցածը կրկնել · «Գիտե՞ս, ի՞նչ հակառակութիւն և ի՞նչ վէճեր կը հանես բովանդակ աշխարհի Եկեղեցեաց դէմ. ի՞նչ ծանր մեղք կը գործես այնչափ հաւատացելոց միութենէն զատուելովդ · դու ինքզինքդ կ'ապաննես, մի՛ խաբուիր · գի ճշմարիտ հերձուածողն այն է՝ որ Եկեղեցւոյ միութիւնը կը մերժէ ։ Կարծած աւեղ թէ ուրիշները քեզմէ զատուած են, դուն անոնցմէ զատուած ես» ։ (Թղթ. -ա կիպրի։)

ԳԼՈՒԽ Լ·

ԲԱՐԵԽՕՍՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ

«Բայց ի՞նչպէս ուրեմն՝ կ'ըսեն պապականք, այն սուրբերը բարեխօսութիւն կ'ընեն մեզ համար Ա-

ննջեցին : Զի և որ սուրբքն 'ի նոսա իցեն՝ վճիռ հոգ ասցեն , վասն մեր հաստարակաց նոցա և մեր եղբարցն հոգալոյ» (՝է գիր. յ-ո-ի-էփ. ՝է բ-ան վ-ած հ-ք-ոց հ-ն-է-ն-ել-ոյ. եր. 53։)

Բողոքականք ալ բարեխօսութեան վարդապետութիւնը՝ ուրանան . Ս· Գրոց վարդապետութեան հակառակ է կ'ըսեն մահկանացու միջնորդ օք Աստուծոյ մօտենալ ուղելը · զի Աստուծոյ և մարդկան մէջ մի միայն միջնորդ Յիսուս Քրիստոս է : — Այլ ինչպէս որ ըսինք , սրբոց բարեխօսութիւնը՝ մեզ կենդանեացս համար աղօթք ընել է առ Աստուած , ինչպէս որ մեք կենդանիքս աղօթք կ'ընենք համօրէն հանգուցելոց և կենդանեաց համար : Արդ՝ թէ որ բողոքականը կ'ըսէ թէ ուրիշն մը աղօթքին դիմելը՝ Աստուծոյ և մարդուն մէջ տեղը ջրխոտոսէ զատ ուրիշ միջնորդ մը դնել է՝ Ս· Գրոց վարդապետութեան դէմ , ասիկայ ուղղակի Ս· Գրոց վարդապետութեան դէմ մաքառիլ է , և բարբանջել ըստ անհաւատից՝ թէ Ս· Գիրքն իւր մէջ հակասութիւններ ունի : — Քանզի՝ Ս· Գիրքը « Մի է Աստուած , և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս» (Ա· Տիմ· Բ· 5·) ըսելէն առաջ ալ եառն ալ կը հրամայէ անդադար աղօթք ընել ՝ի վերայ մարդկան , ՝ի վերայ աւետեան մարդկան , ՝ի վերայ միմեանց , վասն հաւօրէն աշխարհի եւ · (Բ· կոր· ժԴ· 9։ Եփես· Զ· 8· 18։ Բ· Թես· Ա· 11։ Յ-ի· Ե· 14—16 եւ :) « Եւ արդ՝ կ'ըսէ Պօղոս , աղաչեմ նախ քան զամենայն , առնել աղօթս , խնդրուածս , պաղատանս , գոհութիւնս վասն ամենայն մարդկան , մանաւանդ վասն թագաւորաց և ամենայն իշխանաց եւ» : (Ա· Տիմ· Բ· 1—2։) Այս ալ հերիք չէ , միջնորդ կը բռնէ Աբրահամը զհաւատացեալսն առ Աստուած , աղաչելով անոնց Յիսուսի Քրիստոսի և Ս· Հոգւոյն անուններովը որ իրեն համար աղօթք

առնեն , և բարեխօս կը կոչենք զանոնք առ Աստուած , եթէ Աստուածտեսութեան երանութեան մէջ չենն : — Ամենևին հակառորութիւն չկայ սրբոց՝ վասն մեր բարեխօսելու համար առ Աստուած՝ Աստուածտեսութեան երանութեան մէջ լինելու , զի ո՛չ այլ ինչ է հանգուցեալ սրբոց բարեխօսութիւնը , եթէ ո՛չ՝ միոխարինական աղօթք առ Աստուած վասն կենդանեաց՝ ՝ի միոխարինս որ կենդանիք եւս անոնց համար կ'աղօթեն առ Աստուած · ուստի ինչպէս որ կենդանի մարդոց առ Աստուած աղօթել կրնալու համար հարկաւոր չէ՝ Աստուծոյ երեւելի տեսանելի ներկայութիւնը , և մարդիկ կ'աղօթեն առ Աստուած առանց զԱստուած դէմ յանդիման տեսնելու , այսպէս ալ հանգուցեալ սուրբք կ'աղօթեն Աստուծոյ ՝ի կայանս երանելեաց՝ առանց զԱստուած դէմ յանդիման տեսնելու :

Կ'ըսեմք սրբոց բարեխօսութիւնը ուրիշ բան չէ՝ , բայց եթէ ըղձել վասն կենդանեաց · և ահա ՝ի վկայութիւն ասացելոցս մէջ կը բերեմք գա մէկ քանի տուներըը միայն այն չատ մը երդերէն զորս ՝ի Հարց սրբոց ուսեալ կ'երդեմք ՝ի Շարականն · « Աղերս-ս ասցա և բարեխօսութեամբ պարգեւեա՝ մեզ Քրիստոս մատն և բաժին ընդ հրեշտակսն ՝ի կաշուճն արքայութեան երկնից : Զորս ընտրեցեր յամենայն աղգաց երկրի լուսաւորել զոգիս մարդկան , — աղերս-ս սրբոց մարտիրոսաց խնայեա՝ ՝ի ժողովուրդս քո միայն մարդասէր : Փոխանակ արեանն Տեառն ձեր արիւնըդ հեղաւ յերկրի և հոտ անոյշ բուրեաց յաշխարհ · յոժանոսոր աղօ- յեր ոչխ-ջէ+ զանձինս ձեր : Զքեզ սիրողաց Որդի Աստուծոյ պատուելոյ զյիշատակս արժանի արա , Լ աղերս-ս սոց- աղբր-՝ Դէղ եւ եւ եւ » : (կ-ն· հ-ր-ց։) Մեծն Խոսրով եւս կ'ըսէ · « Յամենայն աղօթս մեր խնդրել պարտիմք վասն եղբարցն , որք հշմարիտ հաւատս ունէին և յուսով ՝ի Քրիստոս

ընեն. «Աղաչեմ զձեզ եղբարք՝ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և սիրով Հոգւոյն, պատերազմակից լինել ինձ յաղօթս վասն իմ առ Աստուած, զի ապրեցայց յապստամբացն որ՝ ի Հրէաստանի են, և պաշտօնն իմ որ յԵրուսաղէմ, ընդունելի լիցի սրբոցն. զի խնդութեամբ եկեալ առ ձեզ՝ ի կամս Աստուծոյ, հանգեայց ընդ ձեզ»: (Հռ. ԺԵ. 30—32: տե՛ս եւս Ա. Թես. Ե. 25: Բ. Թես. Գ. 1: Եփես. Զ. 18—19: Եբր. ԺԳ. 18: Փիլիպ. 22:) Ուրեմն թէ որ ճիգն ազնիւը ինդրելը Քրիստոսի միակ միջնորդութիւնն ուրանալ և Աստուծոյ ու մարդուն մէջտեղը ուրիշ միջնորդ դնել է, Ս. Գիրքը հակառակ իրեն կը խօսի, և ծայրէ՝ ի ծայր հակաստութիւններով լի է: Այլ ասանկ գրաբանութիւն մը Բողոքականին կ'իյնայ ընել:

Յիսուսի միակ միջնորդութիւնը՝ ինչպէս կ'ուսուցանեն Ս. Գիրք, մարդկային ազգը յաւիտենից դատապարտութենէն ազատելու համար իր անձը փրկանք տալ, Աստուծոյ և մարդուն մէջտեղի եղած ուխտին մարդոց կողմանէ խզուած ըլլալու մեծ անօրէնութեան փոխարէն, և այն ուխտը վերահին նորոգելու միջնորդ ըլլալ, անձամբ երաշխաւորելով անոր պահպանութեան, այս է ահա ղոր կը վարդապետեն Աստուածաւուռ Պատգամք: (Ա. Տիմ. Բ. 5—7: Եբր. Ը. 6—13: Թ. 11—28: ԺԲ. 24:) Իսկ այլոց համար աղօթք ընել՝ որ հաճի Աստուած անոնց չընորհքներ ընել, ասիկայ՝ մարդոց յաւիտենական դատապարտութենէն ազատութեան և նոր ուխտով մէջ գանոնք Աստուծոյ հետ նորէն կապելու միջնորդ ըլլալ չէ. հոմաձայնութեան խնամատարութիւն մ'է, որով կը խարդախեն բողոքողք. ո՛ւր Աստուած ինքնին կ'ըսէ Յովբայ բարեկամներուն. «Երթայք առ ծառայ իմ Յովբ, և . . . արասցէ աղօթս վասն ձեր: Զի թէ ո՛չ նմա ակն առեալ էր, և եթէ ո՛չ

վասն նորա էր, կորուսեալ էր իմ արդեօք զձեզ . . . Եւ արարին որպէս հրամայեաց նոցա Տէր, և ելոյծ զմեզս նոցա վասն Յովբայ»: (Յովբ. ԽԲ. 8—9:)

Իսկ հանգուցեալ սրբոց և հրեշտակաց աղօթից և բարեխօսութեանց համար միայն Ս. Գրոց վկայութիւնները մէջ կը բերեմք ընդդէմ բողոքողաց:

Ի սկզբնաւորութեան անդ եկեղեցւոյ՝ երբ մարդկային ազգը դեռ նոր կը քակէր իւր խանձարուրքը աշխարհիս մէջ, Աստուած ինքնին տեղեկացոյց մարդոյն՝ հանգուցեալ սրբոց առ Աստուած միջնորդելը վասն կենդանեաց՝ ի բարին և ի չարն. «Ասէ Տէր Աստուած ցկայէն . . . զի՞նչ գործեցեր զայդ. ձայն արեան եղբօր քո բղխէ առ ի յերկրէ»: (Ծննդ. Դ. 10.) որուն համար Պօղոս ալ երկիցս կ'ըսէ. «Հաւատովք լաւ պատարագս Հաբէլ քան զկայէն մատուցանէր Աստուծոյ, որով վկայեցաւ իսկ արդար լինել. զի՝ ի վերայ պատարագացն եղեւ վկայութիւն նմա յԱստուծոյ. զի թէպետ և մեռաւ՝ ի նմին, սակայն ՏԱԿԱՒԻՆ ԽՕՍԻ»: (Եբր. ԺԱ. 4: ԺԲ. 24:) Աբէլի մահուանէն՝ ի վեր չորս հազար այսչափ տարիներ անցեր էին երբ Մովսէսը այս տողերը կը գրէր Ս. Հոգւով, և կ'ըսէր թէ անիկայ ԽՕՍԻ՝ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԽՕՍԻ, այն՝ որուն համար Աստուած ալ վկայեց թէ կը բողոքէ եղբայրասպան եղբօր դէմ. որ է ըսել՝ հոգին Աբէլի կը բողոքէր:

Երբ Երեմիա՝ ժողովրդեան թշուառութեան համար կ'աղօթէր Աստուծոյ և կ'աղաչէր որ գթայ անոր և փրկէ զանիկայ, «Եւ ասէ ցիս Տէր (կ'ըսէ). եթէ կացցեն Մովսէս և Սամուէլ առաջի երեսաց իմոց, ո՛չ եղիցի անձն իմ ընդ նոսա». (Երեմ. ԺԵ. 1.) Մովսէս և Սամուէլ արդէն մեռեալ սուրբերէն ալ ինձի բարեխօսեն, մինիկ չպիտի ընեմ կ'ըսէ՝ անոնց անզգուշութեանը համար: (Անդ. Համար. 19:) Ուրեմն Մովսէս և Սամուէլ ընդորս և այլ հանգուցեալ

սուրբք կը բարեխօսեն վասն կենդանեաց · և եթէ կենդանիք արժանի ըլլան անոնց բարեխօսած չնորհաց՝ Տէրը պիտի ընդունի անոնց բարեխօսութիւնը ։

Յովբի փորձութեան առեն իրեն մխիթարութեան եկող երեք բարեկամներէն Եղիփազ Թեմանացի՝ յանդիմանելով զՅովբ իբրեւ ամբարիշտ և առ ամբարչտութեանն պատուհասեալ յԱստուծոյ , կ՚ըսէ իրեն · եթէ ամբարիշտ չես , սուրբ ես , և երկիւղած , հիմայ աղօթք ըրէ՛, սուրբերը կանչէ՛, հրեշտակներուն պօռա՛, նայինք ո՞վ պատասխան պիտի տայ քեզի , և ո՞վ օգնութեան պիտի դայ · « Արդ աղէ կարդա՛ · Թէ ոք տայցէ՞ քեզ ձայն · կամ թէ զոք ՚ի հրեշտակաց սրբոց տեսցե՞ս » · կամ ըստ Բողբաքեանց Թարգմանութեան · « Վիմա աղաղակէ · քեզի պատասխան տուող մը կա՞յ արդեօք , ու սուրբերէն որո՞ւն պիտի դարձընես քու երեսդ » ։ (Յովբ · Ե · 1։)

Դարձեալ սոյն Յովբայ պատմութեան մէջ գեղեցիկ նկարագիր մ՚է որ կ՚ընէ Հոգին՝ հրեշտակաց բարեաց բարեխօսութեան , և չարաց չարախօսութեան վրայ ըսելով · « Եկին հրեշտակք Ւ~Ր~Ի Աստուծոյ , եկն և սատանայ ՚ի մէջ նոցա ընդ նոսա Ւ~Ր~Ի Տ~Ր~Ն » ։ (Յ~Ք~ · Ա · 6։ Բ · 1։) Կ~Ր~Ի Աստուծոյ կը նշանակէ մահկանացուաց համար իսօսիլ Աստուծոյ , բարի կամ չար · որ իսօսքին կարգէն ալ կրնայ իմացուիլ , Թէ սատանան՝ պաշտեալու համար չէր որ եկաւ կեցաւ Աստուծոյ առջեւ, չարախօսելու համար եկեր էր · սատանան ըրաւ իւր չարախօսութիւնը Յովբին համար , և ինքնին իսկ անոր՝ Թոյլտուութեամբն Աստուծոյ ։ (Յ~Ք~ · Ա · Բ։)

Զաքարիա մարգարէն եռես ՚ի տեսլեան գիշերոյ որ հրեշտակը կը բարեխօսէր առ Աստուած , և

կ՚աղաչէր որ Երէից ուղղմելով դերութիւնին վերջացընէ · Աստուած ընդունեց անոր բարեխօսութիւնը · « Պատասխանի եառ հրեշտակն և ասէ · Տէ՛ր ամենակալ · մինչեւ ցե՞րբ ոչ ողորմեացիս ՚ի վեհայ Երուսաղէմ և քաղաքացն Յուդայ , զորս անիծս արարեր այս եօթանասունեւերորդ ամ ։ Եւ պատասխանի եառ Տէր Ամենակալ հրեշտակին՝ որ խօսէր ՚ի՝ բանս բարեաց և բանս մխիթարութեան » ։ (Զ~Ք~ · Ա · 12—13։)

Դանիէլ ՚ի դերութեան Բաբելոնի տեսած տեսլքին մէջ սովրեցաւ հրեշտակէն Թէ որչափ հրեշտակներ կը միջնորդեն կ՚օգնեն մարդոց վերկութեան , և ո՛րչափ չար հրեշտակներ կը հակառակին · « Եւ ասէ ցիս (հրեշտակն) . . . իշխան թագաւորութեանն Պարսից կայր հակառակ ինձ քսան և չի օր · և ահա Միքայէլ՝ մի յառաջին իշխանացն եկն օգնել ինձ · և Թողի զնա անդ ընդ իշխանի թագաւորութեանն Պարսից . . . ։ Եւ ասէ՝ եթէ գիտիցե՞ս վասն էր եկի առ քեզ · և արդ դառնամ անդրէն տալ պատերազմ ընդ իշխանին Պարսից · և ես երթայի՝ և իշխանն Յունաց գայր · բայց պատմեցից քեզ զի՞նչ կարգեալ է ՚ի Գիրս ճշմարտութեան , և ոչ ոք է ինձ օգնական այսոցիկ , բայց Միքայէլ իշխանն ձեր » ։ (Դ~ն~ · Ժ · 12—13։ 20—21։)

Սողոմոն յայտնապէս յայտնէ յանուանէ իւր հօրը Դաւթի անունը մէջ կը բերէ Աստուծոյ առջեւ , և պայն միջնորդ բռնելով անոր անուանը համար՝ ՚ի սէր Դաւթի՝ չնորհս կը խնդրէ Աստուծմէ , և Աստուած ալ կը կատարէ անոր խնդրուածքը · (Բ · Մնաց · Զ ·) ինչպէս նաեւ Մովսէս՝ Աբրահամու Իսահակայ և Յակովբայ անունները մէջ ձգելով , անոնց անուամբք՝ անոնց սիրոյն համար կ՚ըսէ՝ ժողովրդեան չնորհք ըրէ ։ (Բ · Օրէն · Թ · 27։)

Հրէից մէջ այնպէս հաստարակ և հանրածանօթ էր սրբոց բարեխօսութեան և միջնորդութեան ա-
ւանդութիւնը, որ մինչդեռ Յիսուս 'ի խաչին կախագին ցաւոց և տառապանաց մէջ «Էլի էլի լա-
մասաբաքթանի» գոչեց, հոն գտնուող Հրէայք կարծեցին թէ Յիսուս «Էլի Էլի» ըսելով Եղիան կը
կանչէ, Եղիայէն օգնութիւն կ'ուզէ. «Ոմանք 'ի
նոցանէ՝ որ չուրջն կային դնուվաւ՝ իբրեւ լուան,
ասէին՝ թէ Ելէ՛ա կ'ըլլայ. և ընթացեալ մի ոմն
եւից սպունգ մի քացախով, և հարեալ յեղէգան՝
տայր ըմպել նմա. և ասէ. Թոյլ տուր տեսցուք՝
է՞ն Ելէ՛ա Լը՛նել ը՛ր՛»: (Մ՛ր՛. ԺԵ. 34—36:)

Յիսուս Քրիստոս եւս՝ ո՛չ միայն Հրէից մէջ հա-
ստարակ եղած այս աւանդութիւնը չհերքեց, որ եթէ
մեղրական ըլլար՝ կը հերքէր անշուշտ, ինչպէս որ
անոնց ունեցած բոլոր մեղաւոր կարծիքներն ու մեղ-
բասիւռ աւանդութիւններն հերքեց իր այլ և այլ
քարոզութեանց մէջ, այլ նաեւ իր խօսքերովն ու
առակներովը եւս աւելի հաստատեց զայն: Անդամ
մը ըսաւ. «Զգո՛յշ լերուք մի՛ արհամարհիցէք զմի
'ի փոքրկանցս յայոցանէ. ասեմ ձեզ. զի հրեշտակք
նոցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ
որ յերկինս է»: (Մ՛տ՛. ԺՀ. 10:) Որ է ըսել հրեշ-
տակք այն փոքրկանց համար կը միջնորդեն Աստուծոյ
առջեւ, անոնց համար բարեխօսելով, և զանոնք
արհամարհողաց համար չարախօսելով: — Ուրիշ ան-
գամ մ'ալ ըսաւ. «Մի՛ համարիք եթէ ես չարախօս
ինչ իցեմ զձէնջ առ Հօր. զոյ որ չարախօս կայ
զձէնջ՝ Մովսէս, յոր դուքն յուսացեալ էք»: (Յովհ.
ե. 45:) — Յիսուսի պրուցած այդ եգիպտին առակը՝
յորում այդ եգիպտը անպտուղ թզենւոյն համար կը
բարեխօսէ այգեպանին որ տարի մը եւս խնայէ
անոր. (Ղ՛ւկ. ԺԳ. 6—9.) և Մեծատան ու Ղազա-
րոսի առակը, յորում մեծատունը դժոխոց մէջէն

Հոգի Աբրահամու կը բարեխօսէ իւր եղբարց փրկու-
թեան համար, (Ղ՛ւկ. ԺԶ. 27—31.) կը հաստատեն՝
թէ Ագեգործին պէս հաւատարիմ սրբոց միջնոր-
դութիւնն ու բարեխօսութիւնքն կ'ընդունուին, և
Մեծատան պէս դատապարտելոց բարեխօսութիւն-
ները չեն ընդունուիր:

Յովհաննէս Աւետարանիչ գաւառս կղզին տեսած
տեսիլքին մէջ տեսաւ որ Ս. Մարտիրոսք կը բողոքէին
Աստուծոյ արդարութեան և իրենց արեան վրէժը
կը պահանջէին. «Տեսի 'ի ներքոյ սեղանոյն՝ կ'ըսէ,
զհոգիս ամենայն մարդկան կնքեալ վասն բանին Ա-
ստուծոյ՝ և վասն վկայութեան նորա, զոր ունէին.
ոգք ասէին ձայնիւ մեծաւ. մինչեւ ցե՞րբ Տէր սուրբ
և ճշմարիտ՝ ո՛չ դատես և խնդրես զվրէժ արեան
մերոյ 'ի բնակչաց երկրի»: (Յայտ. Զ. 9—10:) Եւ
նախկին բանսարկուին սատանայի և նորին արբա-
նեկաց չարախօսելնուն համար ալ կ'ըսէ. «Եւ լուայ
ձայն մեծ յերկինից՝ որ ասէր. արդ եղեւ զօրութիւն
և փրկութիւն և արքայութիւն Աստուծոյ մերոյ,
և իշխանութիւն Օծելոյ նորա. զի անկաւ ընդ-
հօն եղբարց մերոց, որ ընդհանէր ընդդէմ առաջի Ա-
ստուծոյ զտիւ և զգիշեր»: (Յայտ. ԺՒ. 10:)

Ի վերջոյ Յովհաննէս կը յաւելու թէ երկինքի
սուրբերը և հրեշտակները Աստուծոյ Աթոռոյն առ-
ջեւ միջնորդութիւն կ'ընեն մարդոց համար, անոնց
աղօթքները անոյշ խունկերու պէս բուրվառներով
Աստուծոյ Ս. Սեղանին մատուցանելով. «Եւ յոր-
ժամ առ զգիրն, չորք կենդանիքն և քսան և չորք
երիցունքն անկանէին առաջի գառինն և ունէին
իւրաքանչիւր քնար և բուրվառ ոսկի լի խնկով, որ
է աղօթք սրբոցն: . . . Եւ այլ հրեշտակ եկն եկաց
առ սեղանն, և ունէր խնկանոց ոսկի. և առաւ
նմա խունկ բազում, զի մատուսցէ աղօթս սրբոց
'ի վերայ ոսկեզէն սեղանոյ առաջի աթոռոյն. և էլ

ձոսի ինկոյն՝ ազնէ պբեսն ՝ի յԵրուսղեմոյն առաջի Աստուծոյ » : (Յայտ. Ե. 8։ Ը. 3—4։)

Ահա այսչափ հաստատութիւն և բազմաթիւ վկայութիւն ունի ՝ի Ս. գրոց՝ սրբոց և հրեշտակաց բարեխօսութեան վարդապետութիւնն. և սոսկ հակառակ մէկ հատ մ՝ալ չունին ըղդքականք որ այս վարդապետութիւնն ուղղակի կամ անուղղակի հերքէ :

Բայց բողքոդը կ՝ատիպէ : Սուրբերը և հրեշտակները ՝ի բարեխօսութիւն կոչեմք նէ՝ կը լսե՞ն — Նախ առաջին, լսեն՝ կամ ոչ, ինչպէս որ մենք իրենց համար աղօթք կ՝ընեմք միշտ՝ անոնց Աստուծոյ չնորհացը կարօտ ըլլալնին գիտնալով, առանց ապաստելու որ մեզմէ խնդրեն, նոյնպէս և անոնք մեր բաղմապիսի կարիքը գիտնալով՝ փոխադարձ պիտի աղօթեն մեզ համար, առանց ապաստելու կամ գիտնալու որ իրենցմէ խնդրեմք : — ը. Այս ալ կ՝ըսեմք թէ քալ իսկ կ՝լսանան և կը լսեն : Հոգին երբ մարմինէն կը բաժնուի, անտարակուսելի է թէ գգայութիւնները կամ գդայական զօրութիւնները չկորանցընէր, մանաւանդ թէ՝ լրիւ կ՝ունենայ զանոնք. քանզի հոգին՝ գունաւոր ապակւով ծածկուած ճրագի մը պէս՝ չափաւորուած են իւր զօրութիւնները՝ մարմնոյն մէջ գոցուած առեն. երբ որ մարմինէն կը բաժնուի՝ իւր զօրութիւնները չափաւորող առարկաները վերցած կ՝ըլլայ վրայէն, որով մեր տեսնել չկրցածը լսել չկրցածը նա կը տեսնէ և կը լսէ. և ահա Ս. Գիրքն ալ ասանկ կ՝ըսէ, թէ երբ որ երկրի վրայ մեղաւոր մարդ մը դարձի կուգայ, մեծ ուրախութիւն կ՝ունենան երկինքի սուրբերն ու հրեշտակները՝ անտարակոյս գիտնալով և լսելով. «Այսպէս է ուրախութիւն յերկինս վասն մի՛ մեղաւորի որ ապաշխարիցէ . . . : Այնպէս՝ ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ » : (Ղ. Ժե. 7. 10։) — Ինչպէս ալ ըլլայ, հերիք է որ կը լսեն, կամ իրենք իրենցմէ՝ և կամ յԱստուծոյ՝ իրենց աղօթից պատասխան ըլլալով ևս :

ԳԼՈՒԽ Դ.

ԱՂՕԹՔ ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ

Վասն ննջեցելոց աղօթքն ու հոգեհանգըստեան պաշտօնը, մեռելոց համար ողորմութիւնն ու պատարագը՝ անոնց մեղի համար առ Աստուած միշտ բարեխօս ըլլալնուն փոխարէն երախտագիտական պարտք մ՝է, միանգամայն բովանդակ ընդհանուր եկեղեցւոյ համար աղօթք ընելու պարտականութեանը հետեւանքն է. (Ա. Թես. Ե. 16—25.) քանզի յաղթական և չքնաղագեղ եկեղեցիք միանգամայն առնելով եկեղեցւոյ բովանդակութիւնը կը կազմեն, և սոսնք երկուքը անխզելի հաղորդութեան մէջ են : (Եփես. Գ. 9—10։ Հ. ԺԳ. 9։)

Հին և նոր (Իսրայէլացւոց և Քրիստոնէից) եկեղեցւոց մէջ սկիզբէն ՝ի վեր անընդհատ կար ու կը մնար այս, և միշտ իսկ կը պահուէր : Հնութեայ գրքէն կ՝իմանամք որ Նոեմի զբոսո կ՝օրհնէր որ վաղ դէպքէդ՝ կենդանեաց ողորմութիւն կ՝ընէր. «Օրհնեա՛լ է նա ՝ի Տեառնէ, զի ո՛չ պակասեցոյց զգութ իւր ՝ի կենդանեաց և ՝ի մեռելոց » : (Ր. 20։) — Սողոմոն իւր հօրը Դաւթի համար կ՝աղօթէ Աստուծոյ. յիշէ զայն կ՝ըսէ քու ողորմութեամբդ. «Տէր Աստուած, մի՛ դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ (ս յինէն). յիշեա՛ ողորմութեամբ քո զԴաւիթ ծառայ քո » : (Ր. Մնաց. Զ. 42։)

Մակաբայեցւոց , Տովբիթի և Էկղեսիաստիկեայ գիրքերը՝ Պարսկանոն ալ ըլլան , 'ի նոցանէ իսկ 'ի Բողոքականաց վկայուած ստուգուած ըլլալով որ Քրիստոսէ առաջ գրուած են , (Մաղաքիա մարգարէէն մինչեւ 'ի Քրիստոս 400 տարուան միջոցին ,) այս գիրքերը կ'ըսեմ թէ'եւ հաւատոյ մաս չկրնան սահմանել իրենց հեղինակութեամբը , բայց կրնան ապացուցանել իրենց հզօր վկայութեամբք այս ինչ և այն ինչ վարդապետութիւնները թէ ի՞նչպէս կը պաշտէին նոյն ժամանակի և անկէ առջի աստեղի Հրէական Եկեղեցին : — Մակաբայեցւոց գիրքը ցուդա Մակաբէի համար կ'ըսէ , թէ « Քաջութեամբ խորհրդովք չորս սահեցաւ կրկին ժողովէր և ապր տանել յԵրուսաղէմ , մատուցանել պատարագս վասն մեղացն . կարի բարւոք իմաստութեամբ , զի վասն յարութեան մեռելոց խորհէր առնել զոր առնէր : Զի եթէ յարութեան ակն ոչ ունէր , անկելոցն 'ի պատերազմէն զուր տարապարտուց լինէր վասն մեռելոցն աղօթս մատուցանել : Այլ հայէր նա ուղիղ ննջեցելոցն դեղեցիկ պահեալ զնորհս պարգեւաց . արութեամբ քաջութեամբ վասն մեռելոցն զմտաւ ածէր այց լինել մեզացն թողութեան » : (Բ· Մակ· ԺԲ· 43—46 :) — Տովբիթ իւր Տուբի որդւոյն խրատ կու տար . « Ի հացէ քումմէ տացես քաղցելոց , 'ի հանդերձէ քումմէ մերկոց . և ամենայն որ յաւելուցուն քեզ՝ առնիցես ողորմութիւն . սիրեացես դու զհացն քո 'ի վերայ դերեզմանացն արդարոց , և մի' տացես զայն մեղաւորաց » : (Տ-վբ· Դ· 17—18:) — Ջնոյն և Էկղեսիաստիկէս խրատէ յասելն . « Ի մեռելոց մի' արդելցես զնորհս » : (Էկղե· Է· 37:)

Մեռելոց այս պաշտօնը Առաքելոց ժամանակն ալ կը պաշտուէր . և Գօրս Առաքեալ կը յիշէ զայն առանց հերքելու կամ հաստատելու , այլ իբրեւ

եկեղեցւոյ մէջ սիրոյ սովորութիւն մը մէջ կը բերէ . սակայն որովհետեւ մեռելոց յարութեան վարդապետութեան իրրեւ հաւաստիք՝ ապացոյց յառաջ կը կոչէ , չհերքելէն աւելի բան մ'ըրած կ'ըլլայ . հաստատելու պէս . « Ապա թէ ոչ , կ'ըսէ , զի՞նչ գործիցեն որ մկրտիցինն վասն մեռելոց , եթէ արդարեւ մեռեալք ո՛չ յառնիցեն . ընդէ՞ր իսկ բնաւ մկրտին վասն նոցա » : (Ա· Կոր· ԺԵ· 29:) Թէ ի՞նչ սրարողութիւն մը կ'իմացընէ Առաքեալը՝ վասն մեռելոց Գլուխ ըսելով , այն չեմք գիտեր . ի՛նչ ալ որ ըլլայ՝ այս ստոյգ է որ վասն մեռելոց գոյութիւն մը կը մատնէր — Աստուածը , և Առաքեալը զայն չհերքէր իրրեւ մոլորական . որով ընդ ամենայն դարս տեւեց մեռելոց պաշտօնը . (ինչպէս քալ կ'երեւնայ վերը այս Դ· Մասին Ա· Գրոց վերջերը դրուած Ֆէօրեայ վկայութենէն . յորում յայտնի կը տեսնուի եկեղեցւոյ ամեն ատեն մեռելոց տարած գութն ու խնամքը :) Ուրեմն ոչ նոր ինչ յետսաւուտ , ո՛չ մտացածին , ո՛չ ալ մոլորական էր այս . զի եթէ անանկ ըլլար՝ հարկաւ կը հերքէր Առաքեալը ան նոյն տեղը , ինչպէս որ նոյն նիւթին մէջ մէկ ուրիշ մոլորական սովորութիւններին (մեռելները անյոյս կոծելնին և անոնց համար 'ի սուգ թախծութեան տրտմելնին) մէջ բերելով կ'արդելու : (Ա· Թես· Դ· 12:)

Այս Գլխոյս սկիզբը ըսածնուս պէս՝ մեռելոց համար աղօթք ընելը երախտագիտական փոխադարձ պարտիք մը ըլլալով , որով ննջեցելոց համար կ'աղօթեմք ներել անոնց ներելոց , և անդիմադրելոմբ պատճառ և գոհանալ , և ո՛չ թէ մահու ըսէ դէպց կամ կամակոր յանցանոց , յայտնի է որ ասիկայ տարբեր է ամենեւին Քաւարանի մոլորութենէն , որ ընդդէմ է ամենայն մասամբք Ս· Գրոց վարդապետութեան . որ վեր 'ի վայր կը չքէ թէ' բարոյականը , քանի'

որ հանդերձեալ կենաց մէջ ալ փոխարինութիւն մաքրութիւն քաւութիւն կը քարոզէ, քանի՛ որ մեծատան միայն միշտ բաց կը թողու արքայութիւնը ո՛րչափ և մոլի ու անսանձ ըլլայ՝ մեծագանձ արուեստ և ողորմութեամբք ճաւարանի մէջ սրբուելու և Արքայութիւն երթալու շատ դիւրին ըլլալով իրեն և իր պարագայից, քանի՛ որ աղքատին համար հնարաւորութիւնը կը դոցէ երկինքը, եթէ միայն իր բոլոր կենաց մէջ չհդնի այս կեանքէն միւսը անբծութեամբ անցնելու. և թէ՝ Աստուծոյ արդարութիւնը կը յեղաշրջէ, քանի՛ որ հեթանոսներուն համար ճաւարան չըլլար, և միայն տգիտասէր խոզերու պէս գարշելեաց մէջ թաւալող և չուներու պէս փսխածնուն դարձող՝ (Բ. Պետ. Բ. 22.) զԲրիստոս կրկին՝ ի խաչ հանող՝ (Եբր. Զ. 6.) գործքով զԱստուած ուրացող՝ (Տիտ. Ա. 16.) և այլոց ոչ՝ Քրիստոնէից ալ աշխարհին Աստուծոյ ամենատուրբ անունը հայհոյել տուող՝ (Հռ. Բ. 20. Ա. Տիմ. Զ. 1.) հաւատացեալ անուն կրող սուտանուն քրիստոնէից համար մաքրութեան տեղի սահմանուած ըլլայ, մինչդեռ Գիրք առանց պատ՝ի պատ պօղելու՝ բաց յայտնի ըսած են, թէ փրկութեան օրը հինայ է. (Ա. Կոր. Զ. 1—2.) մեռնելէն ետքը փրկութիւն չը կայ, ապաշխարութիւն չկայ. . . .

Ապացոյց Հայաստանեայց Եկեղեցւոյ վասն ննջեցեալց աղօթքներն ու ողորմութիւնները ճաւարանի վարդապետութեան հակառակ և ան նոյն նպատակաւ չպաշտելուն՝ ասիկայ յառաջ կը բերեմք, որ Հայոց Եկեղեցին նոյնպէս աղօթք կ՚ընէ, պատ և ողորմութիւն կը հայցէ Աստուծմէ այն սուրբ ննջեցեալներուն համար ալ՝ որոց արդութիւնը՝ որոց փրկութիւնը անտարակուսելի է. մանաւանդ չատերուն ալ նախապահանջեալ է և յԱւետարանն վկայեալ՝ ծառարարը ի պատարագին կ՚աղօթէ. «Աստուա-

ծածնի Մարիամու, և Յովհաննու Մկրտչին, Ստեփաննոսի Նախավկային, և ամենայն սրբոց եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք». և Դպիրը բոլոր ժողովրդեան կողմէն կը գոչեն. «Ցիչեա՛ Տէր և ողորմեա». և այնուհետեւ Առաքելոց, Մարգարէից, Հայրապետաց և ամենայն սրբոց յիշատակութիւններն ու մաղթանքները կ՚ընդունին նոյնպէս. տարակոյս չկայ որ «անոնք միշտ հիմայ քաւարանն են» ըսող մը չկայ. և ասիկայ հերիք ապացոյց է որ մերս եկեղեցւոյ՝ ննջեցելոց համար աղօթելը չէ՛ թէ այն նպատակաւ է որ անոնք ի քաւարանի սրբուելով յԱրքայութիւն երկնից մուտ ունենան, այլ՝ ի կայանս անդ իւրեանց միխիթարեսցին՝ ներելով Աստուծոյ ներելեաց նոցին. զի այսպէս կը կնքէ մեղուցելոց համար Հայոց եկեղեցին. «Ապա թէ ընդ մեզ մնանեն մեղքն մեր ի դերեզմանս մեր, այնուհետեւ նախանձ հրոյն է որ ուտէ զհակառակորդս. և ո՛չ գտանել ուրուք արտասուաց թողութիւն». (Իգնատ. ի Դն. Ղահ. եր. 328—329.)

Ուրեմն՝ զվախճան բանիս՝ զամենայն ինչ լո՛ւր. յԱստուծոյ երկիր. և զպատուիրանս նորա պահեա՛. զի ա՛յս է մարդն ամենեւին. զի զամենայն արարածս ածցէ Աստուած ի դատաստան, յամենայնի անտես արարելոցն՝ եթէ բարի և եթէ չարս. (Ժողովող. ԺԲ. 13—14.)

ՎԵՐՋ

ՎՐԻՊԱԿ

ԵՐԵՍ	ՏՈՂ.	ՍԽԱԼ.	ՍՏԴԻՐ.
20	24	կոլոզեայ	կոլոզեայ
27	17	գերաստուածու- թիւնը	գերաստուածու- թիւնը
32	13	անդամ	անգամ
37	12	արդ-եանց	արդ-եաց
179	17	կրեպան	կրեսլան
203	2	ազատ	գատ
250—251		Գեւկալիոն	Դեւկալիան
263	25	Յեցիս	Յեցես
283	12	արգիլև	արգիլելու
323	8	գազոնապէս	գաղատապէս
346	10	կուզուի	կորզուի
461	1	վուխ-ով	բուխ-ով
462	5	իւրաքանչիւրովքն	երկաքանչիւրովքն
487	20	ուր	որ
526	15	Յանօրհնութիւնն տե՛ս յերես 527	

ՀԱՅԿ-СОРА
Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

2845

472

472

00269335

9013

ՀՀ Ազգային գրադարան

NL0026939